

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱԽԸՆԹԵՐ

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏԱՒՏ

Բ Ա Ն Բ Ե Ր  
Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն Ի

11

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 7 3

Խմբագրություն

Լ. ԿԱԳԻՅԱՆԻ, Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ, Օ. ԵԳԱՆՅԱՆԻ



Հ Ո Ռ Վ Ա Յ Ն Ե Ր

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ԿԱՐԵՆ ՅՈՒՂԲԱՇՅԱՆ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏԱՌԻԿԸ

Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ն ունեցել է վեց հրատարակութիւն (1793, 1873, 1891, 1904, 1907, 1933 թվականներին), ընդ որում 1873 թվականի տպագրութիւնը կատարվել է Ղ. Ալիշանի, իսկ 1904-ը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի ձեռքով<sup>1</sup>: Ղ. Ալիշանը անհրաժեշտ է նկատել զգուշացնել, որ «և ոչ միոյ յետ այնորիկ (իմա՛ 1793 թ. հրատարակութիւնից) հանդիպեալ մեր նորոյ օրինակի Պատմութեանս, հարկաւորիմք ըստ առաջնոյն կրկնել զտպագիրս զայս... սակաւ ուրեք ի յայտնի վրիպակսն՝ արարեալ ուղղութիւն և յերիս տրոհեալ Դրուագս զբովանդակ գիրսն...»: Եվ իրոք, հմուտ բանասերը նկատել և ուղղել է տասնյակ վրիպում-աղավաղումներ, իսկ Պատմութեան «Տեսիլն ս. Սահակայ» և նրա մեկնութեան հատվածը խորհրդարկ-կազմել է «ըստ հնագոյն օրինակաց, որ ի ճառքնտիրս գտանին»: Այս տպագրութիւնը 1891 թ. վերահրատարակվեց առանց խոշոր փոփոխութիւնների «Քանզի յետ նախընթաց (իմա 1873 թ.) տպագրութեան մատենիս ոչ յայտնեցաւ մեզ նոր ձեռագիր, ոչ ինչ և նոր ունիմք աւանդեալ...»: Միակ նորույթը այն էր, որ «արարաք տեղափոխութիւն զլիսոց կամ հատուածոց ինչ ի սկզբան Պատմութեանն, որ յէջս 7—14 երկրորդ տպագրին»: Այսպիսով, հիշյալ երեք տպագրութիւնները հենված են մեկ ձեռագրի վրա, հրատարակիչների ներմուծած սրբագրութիւնների հավելումով:

Նախորդների համեմատութեամբ խոշոր առաջընթաց կատարվեց շորրորդ տպագրութեամբ: Բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը մինչև այդ հանգամանորեն ուսումնասիրել է Փարպեցու Պատմութեան ձեռագրերն ու նրանց հարաբերակցութիւնը միմյանց և անգրանիկ տպագրին<sup>2</sup>, պարզել նրանց մայր օրինակը: Պակաս նախնական աշխատանք չէր կատարել և հրատարակութեան երկրորդ աշխատասիրողը՝ Ստ. Մալխասյանցը. նա մինչ տպագրութեան երևան գալը հրապարակել էր մի շարք արժեքավոր սրբագրութիւններ: Անվանի հա-

1ա. Ղազարայ Փարպեցոյ արարեալ Պատմութիւն, տպագրեալ յամի տեան 1793, ի վեներիկ:

բ. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Վենետիկ, 1873 [ի ձեռն Ղ. Ալիշանի]:

գ. Նույնը, Վենետիկ, 1891:

դ. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Մալխասյանց, Տիֆլիս, 1904:

ե. Նույնը, Թիֆլիս, 1907:

զ. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Վենետիկ, 1933 [ի ձեռն Հ. Գրիգոր Սարգսյանի]:

2 Ղազար Փարպեցու ձեռագրերը, «Արարատ», 1904, էջ 542—549, հմմտ. Նույնի՝ Խորհնացու Պատմութեան ուսումնասիրութիւն, «Արարատ», 1891, էջ 147—155:

յագետների տպագրությունը հենված էր, հիմնականում, էջմիածնի մատենադարանի երկու ձեռագրի վրա՝ № 611 և № 1688, որոնք այժմ գտնվում են Երեվանի Մատենադարանում և կրում են 2639 և 1891 թվահամարները<sup>3</sup>: Հրատարակիչները նկատի են առել նաև Ղ. Ալիշանի որոշ սրբագրումները, հրք ճիշտ չեն համարել իրենց երկու ձեռագրի տված ընթերցումը՝ մանավանդ Սահակի տեսիլի բաժնում: Գ. Տեր-Մկրտչյանի ուսումնասիրությամբ և 1904 թ. հիշյալ տպագրությամբ հաշագիտության մեջ պարզվեց էական մի հարց. Փարպեցու Պատմության անդրանիկ տպագրության հիմք-ձեռագիրը ընդօրինակված է էջմիածնի № 1688-ից (այժմ՝ № 1891), իսկ վերջինս էլ՝ նույն Մատենադարանի № 611-ից (այժմ՝ № 2639), որոշ հավելումներով ու լուսանցագիր սրբագրություններով: Ուրեմն, Փարպեցու Պատմության թվարկած բոլոր հրատարակությունների հիմքում ընկած է մեկ մայր օրինակ՝ իր երկու ընդօրինակությամբ (Վենետիկի անդրանիկ տպագրության ձեռագիր և Մատենադարանի այժմյան № 1891), իսկ այդ մայր օրինակը (№ 2639) գրված է 1672 թվականին (ճիշտը՝ մի քանի տարի անց), Բաղեշում Գրիգոր երեցի ձեռքով (ստացող՝ Վարդան եպս. Բաղիշեցի): 1904 թ. հրատարակության գրախոսության առիթով բանասեր Բ. Սարգսյանը կրկին անդրադարձավ առկա ձեռագրերի փոխառնությունը<sup>4</sup>: Նրա հողվածից պարզ դարձավ, որ Վենետիկում կա Փարպեցու Պատմության երեք ձեռագիր (№ 1206, 1088, 129), ընդօրինակված 1781 (№ 1088), 1782 (№ 1206) և 1784 (№ 129) թվականներին: Գրչագրերից երկուսը (№№ 1088 և 1206) գրված է Գևորգ Պալատեցի Տեր-Հովհաննիսյանի ձեռքով, իսկ երրորդը (№ 129) ընդօրինակված է հիշյալ № 1206-ից: Ընդ որում, ըստ Բ. Սարգսյանի ապացույցների, վերջինս էլ հենց հիմք է դարձել վենետիկյան անդրանիկ տպագրության: Վենետիկի № 1088 ձեռագիրը ընդօրինակված է էջմիածնում (1781 թ.), մինչև № 1206-ի ընդօրինակման տեղն ու մայր օրինակն անհայտ է, իսկ Բ. Սարգսյանի եզրակացությամբ այն կա՛մ № 1088-ից է արտագրված, կա՛մ «լաւ ևս՝ երկուքն ալ իրարմէ տարբեր գրչագրերէ ընդօրինակուած են»<sup>5</sup>: Այսպիսով, իրականությունն այն է, որ Փարպեցու Պատմության հնագույն օրինակը, գուցե և առ այսօր եղածների մայր օրինակը, 1672 թվականին ընդօրինակվածն է (Մատենադարան № 2639), որի հիմքում ընկած է եղել մի «հին արինակ», նորոգվելուց հետո էլ՝ պակասավոր<sup>6</sup>:

1904 թ. հրատարակության աշխատասիրողները իրենց կազմած բնագիրը վերջնական չեն համարել և գրել են. «Ընթերցողին մնում է հավատալ մեր հավաստիացմանը, մինչև որ լույս տեսնի Փարպեցու մի նոր ֆենադատական հրատարակություն...»<sup>7</sup>: Հիրավի, Բ. Սարգսյանի և Ն. Բյուզանդացու գրախոսություն-քննությունները ցույց տվին, որ այդ հրատարակությունը կամա թե ակամա՝ սխալաշատ է, Բյուզանդացու խոսքով «կատարեալ ուսումնասիրութիւնն կարող էր սրբագրել զայնոսիկ 400 անգամ, միտ զնելով մատենա-

3 Նոր հրատարակությանը նշանակալի նպաստ բերեց և Ն. Բյուզանդացու քննությունը (տե՛ս նրա՝ Ղազար Փարպեցու Պատմութեան հայոց Յառաջարան, փորձ կարգադրման յետևառաջ հատուածոցն և ցուցումն տեղեաց, յորս թուղթ անկեալ է ի սկզբնագիր օրինակէն, «Վումա», 1896, գիրք Բ, էջ 309—328):

4 Բ. Սարգսյան, Երկու խօսք Ղ. Փարպեցու նոր տպագրութեան առթիւ, «Բազմավէպ», 1905, էջ 52—62, 129—133:

5 Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 58:

6 Հիշատակարանը տե՛ս 1904 թ. հրատ. Առաջարանում, էջ Ծ:

7 Նույն տեղում, էջ է:

գրին լեզուին յատկութեանց եւ պատմութեան ընթացքին»<sup>8</sup>: Բայց միաժամանակ նկատելու է, որ «միտ գնելով» անհնար էր հարթել Առաջաբանի ու Ա. գրքի բացորոշ ետևառաջությունները, ակներև ընդհատումները և այլն: Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի հրատարակութիւնը կոչված էր խթանելու ապագա բնագրագիտական աշխատանքը: Եվ իրոք, 30-ական թվականներին այդ դժվարին գործն ստանձնեց հայագետ Գրիգոր Սարգսյանը: Սկզբնապես նա անհրաժեշտ համարեց «ազգիս գիտնոց» ծանոթացնել իր նախընտրած սկզբունքներին, իբրև նմուշ հրապարակելով Փարպեցու պատմության Յառաջաբանը<sup>9</sup>: Նրա ծանուցմամբ «մօտալուտ հրատարակութիւնս ամենուն կատարելութիւնները (խոսքը բանասերների ճշգրտումներին է վերաբերում) պիտի ամփոփէ իր մէջ, շանալով միշտ, կարելի եղածին շափ՝ ձեռագրաց հեղինակութիւնը վեր պահել, յարգելով միանգամայն՝ ուր հարկը կը պահանջէ, քաջաբիր բանասիրաց սրամիտ տեսութիւնները»<sup>10</sup>: Դատելով Յառաջաբանի բնագրից, գիտնականը իսկապես ծանր ու մանրախույզ աշխատանք է կատարել: 1933 թ. լույս տեսավ Փարպեցու Պատմության (ու Թղթի) նրա կազմած բնագիրը, սակայն առանց տարբերությունների ու ծանոթագրությունների, քանի որ «ի մեծագիր անդ տպագրին, ընդ հուպ՝ յընթացս տարույս երևելոյ, կարգեսցուք մանր գամենայն ի վայելս բանասիրաց և յարածուն փառս Հայրենեաց»<sup>11</sup>: Յավոք, սպասելի այդ հրատարակության որևէ օրինակ մեզ ծանոթ չէ:

Այս է, համառոտակի, Փարպեցու Պատմության ձեռագրերի ու հրատարակությունների վիճակն առ այսօր<sup>12</sup>: Դժվար է պատկերացնել՝ V դարի երկր մինչև 1672 թ. ձեռագրին հասնելը քանի տասնյակ ընդօրինակություններ է ունեցել և ինչպիսի ալլափոխություններով, աղավաղումներով ու «խմբագրում-սրբագրություններով» հասել մեզ: Ընդօրինակությունների միջոցին առաջացած ակամա վրիպումներն իսկ բավական էին, որպեսզի այսօրվա բանասիրությունը նախնական բնագիրը վերականգնելու մտահոգությունն ունենար: Մինչդեռ նույնիսկ էջակորուստներ կան: Այսօր, երբ հիմնականում հավաքված և գերակշիռ մասով նկարագրված են մեր գրչագիր մատյանները, Փարպեցու Պատմության XVII դարից հին և ամբողջական ձեռագիր հայտնաբերելու հույս գրեթե չկա: Ուստի մնում է մեկ ելք. ձեռագրական հավաքածոներում երևան բերել Պատմությունից բաղված հատվածներ (ցանկալի է՝ XVII դարին նախորդող շրջանից), պրպտել երբեմնի ամբողջական ձեռագրերից պոկված-պահպանված հատակոտորներ (պահպանակ կամ պատառիկ) և, դրբանք միմյանց ու առկա ձեռագրերին համեմատելով, բանասիրական քննության զուգորդմամբ քննել-վերականգնել բնագրի աղավաղված տեղիները: Փորձը ցույց է տալիս, որ այս ուղղությամբ թափված ջանքերը ապարդյուն չեն մնա: Հայագետ Նորայր Կպս. Պողարյանը «Ծրուսաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419 թվականին ընդօրինակված № 1 հսկայակերտ Ճառ-

8 Ն. Բյուզանդացի, Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ազաթանգեղոսի և Ղազարայ Փարպեցույ, «Յուշարձան», 1911, էջ 173:

9 Գրիգոր Սարգսյան, Փարպեցույն Յառաջաբանը յղկուած, «Բաղմավէպ», 1932, էջ 444—459:

10 Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 444:

11 Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց..., Վենետիկ 1939, էջ Բ:

12 1907 թվականի «Ղուկասյան մատենաշարով» եղած հրատարակությանը շանդրադարձանք, որովհետև այն վերատպությունն է 1904-ի՝ առանց ներածական մասի ու տարբերությունների:

ընտրի» երկրորդ հատորում (էջ 720բ—728բ) հանդիպեց Փարսեցու Պատմության մի ծավալուն հատվածի, որը «գրի առնված է Փարսեցիի ծանոթ առաջին ձեռագրեն երկու և կես դար առաջ»<sup>13</sup>; Հատվածի և 1904 թ. հրատարակության համապատասխան մասի (էջ 12—28) համադրությունը արգարե նշանակալի նպատակ է բերում Պատմության բնագրագիտական ուսումնասիրությունը, թեև նրանում «ճառընտիրներու գրիչներուն հատուկ սովորություն համաձայն կատարված են նաև զեղչումներ նշանակալի քանակությամբ»<sup>14</sup>: Մեր Մատենադարանի «Յուզակ ձեռագրացով» հայտնի դարձավ, որ այդ հավաքածուի № 4803 գրչագրում հատված կա «ի Պատմութենէն Հայոց Ղազարու Փարսեցու»<sup>15</sup>, գրված XVII դարում: Այս ուշագրավ տեղեկանքը առիթ դարձավ, որպեսզի մենք գրադվենք այդ ձեռագրի և մասնավորապես Փարսեցու Պատմությունից քաղված հատվածի ուսումնասիրությամբ: Պարզվեց, որ ձեռագրում եղածը (էջ 78ա—85ա) համապատասխանում է հիշյալ 1904 թ. տպագրության 18<sub>21</sub>—38<sub>26</sub> էջերին, որ մասամբ ընդգրկված է և ն. Պողարյանի հրատարակած քաղվածում (էջ 18—28): Պակաս կարևոր չէ դիտել, որ № 4803 ճառընտիրը ընդօրինակված է մատենագրության մեջ քաջ հայտնի Գրիգոր Մերենց Խլաթեցու ձեռքով (ապրել է 1349—1425 թվականներին)<sup>16</sup>, ուստի այն կատարելապես ժամանակակից է Երուսաղեմի վկայակոչված ճառընտրին, թերևս մեկ-երկու տասնամյակով էլ հին:

Այսպիսով, Փարսեցու Պատմության հատվածներ կան XIV—XV դարերի ձեռագրերում, որոնք երկու-երեք դարով կանխում են մեզ հայտնի ամբողջական գրչագրի ժամանակը (1672 թ.): Պակաս արդյունավոր չէ նաև այս երկի հնագույն երկաթագիր պատառիկներ պրպտելը: Բ. Սարգսյանը դեռ 1905 թ., հիշված գրախոսության առիթով, արձանագրել էր. «...Մեր ձեռագրատան մէջ կը գտնուին Ղազարայ Պատմութեան մագաղաթեայ երկաթագիր օրինակի մը պատառիկներ»<sup>17</sup>, որոնք, բանասերի կարծիքով, «մեծադիր, երկայուն և պատկանելի ձեռագրի մը» մեկ թերթն են կազմում, որ հետադայում կտրատել և «14 փոքրիկ էջերու» են վերածել՝ «Շնորհալույ (Յիսուս Որդիի) փոքրադիր օրինակի (ԺԲ) պահարաններ (=պահպանակներ) ձևացնելու համար»: Բ. Սարգսյանը պատառիկի ընթեռնելի տողերը համեմատել է 1904 թ. հրատարակության «48—54 երեսներու ինչ-ինչ հատուածոց հետ», հանդիպել նախընտրելի տարբերությունների և եզրակացրել, թե «այս ձեռագիրս ծանօթ եղածներէն շատ տարբեր և ինքնուրոյն խումբ մը կը կազմէր»<sup>18</sup>: Այդ խմբի բնույթն ու կշիռը պարզելու համար անհրաժեշտ է երևան բերել «երկաթագրիս ցիր ու ցան

13 Նորայր Եպ. Պողարյան, Նորագյուտ հատված Ղազար Փարսեցու «Հայոց պատմութեան», «Բանբեր Մատենադարանի», № 8 (1967), էջ 263—274:

14 Անդ:

15 Յուզակ ձեռագրաց, Ա, էջ 1290:

16 Մերենցի իսկագիր լինելու պարագան մեզ հավաստեց հայագետ Ա. Մաթևոսյանը, մատնացույց անելով գրչի հետևյալ հիշատակարանը. «Մուրը երրորդութիւն, անմահ աղաթիւր սրբոց քոց քահանայից ողորմեա՛ ստացաւ զի գրոցս պարոն Հնգուին և իւր ծնողացն՝ Յովանիսին և Աղութին և ամենայն արեան մերձաւորաց իւրեանց, ևս առաւել՝ ամենամեղ զձագրաւի Գրիգորի և ծնաւդաց իւրոց Մերին և Խոյանդին և ամենայն ասպականաց և ընթերցողացս և լսողացս, ամէն» (ձեռ. № 4803, էջ 192 Վբ):

17 Բ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 61:

18 Նույն տեղում, էջ 62: Ափսոսանքով պիտի նշել, որ երախտավոր հայագետը հրատարակել է միայն ընթեռնելի տողերի տարբերությունները (էջ 61—62), մինչդեռ պատառիկի, ժա-

եղած միւս մասերն ևս»: Այժմ պարզվում է, որ Փարպեցու Պատմության ցիրուցան եղած այլ պատահիկներ իրոք կան, որոնց ուսումնասիրությունը մեզ հուշում է պատմական այդ արժեքավոր երկի շատ ավելի հին, շատ ավելի նախնական ու անաղարտ բնագիր: Կրկնում ենք, միայն այս ճանապարհով կարող ենք սկզբունքներ, ելակետեր ու կովաններ մշակել սպասելիք բնական հրատարակության համար, եթե շենք ուզում սրբագործել միջնադարյան գրիչ-խմբագիրների կամա-ակամա միջամտությունները, դարերով կուտակված սխալանք-վրիպակները. «հին բնագրաց քննական հրատարակութիւնք կը պահանջուին», — գրել է Ն. Բյուզանդացին<sup>19</sup>:

ՄՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի հայկական հավաքածոյի Ա—82 ձեռագիրը մուտք է գործել 1916 թվականին՝ վանի հավաքածոյի կազմում<sup>20</sup>: Սկզբնապես քարտազրվել է իբրև Շարակնոց, մինչդեռ իրականում Մանրուսմունք է: Սկսվում է՝ Երգ տեառն ներսիսի ասացեալ՝ գիշերային սաշտամանց. Յիշեսցուք ի գիշերի զանուն քո, տէ՛ր... (թ. 1ա)<sup>21</sup>: Ձեռագիրն այժմ ունի 139 թերթ, բաղկացած է 12 պրակից, յուրաքանչյուրը 12 թերթ (7-րդ պրակն ունի 8 թերթ): Ձեռագրի առաջին թերթը կտրված է: Մեծություն՝ 12,5×10 սմ, գրություն՝ միասյուն, տողեր՝ 18—20, տողերը, ինչպես և աչ ու ձախ լուսանցները նշված են բարակ գծերով, նյութը՝ լավ որակի բարակ մագաղաթ, հազվադեպ նորոգումները՝ թղթով, գրչություն՝ բոլորգիր խազերով: Ունի ճոխ կիսախորաններ, լուսանցազարդեր, դարդագրեր և գլխատառեր: Ծաղկողը հաճախ է օգտվում ոսկուց: Կազմը՝ խնամքով պատրաստված, դրոշմազարդ, կաշեպատ տախտակ: Պահպանվել է գրչի երկու հիշատակարան.

ա. Զատացաւղ տեառն եղանակացս զսուրբ բարունապետն Եսայի և ըզգրիչս՝ զՊաղոս աղաշեմ յիշել ի տէր (էջ 16ա).

բ. Զատացաւղ եղանակիս զսուրբ և զերանաշնորհ բարունապետն Եսայի յիշեսցիք ի տէր (էջ 89ա)<sup>22</sup>:

Գրչության ժամանակ կարելի է համարել XIV դարը, ելակետ ունենալով մագաղաթի պատրաստման որակը, բոլորգրի ինքնատիպությունները, մանավանդ զարդագրերն ու լուսանցազարդերը: Այդ է հուշում և ձեռագրի ուղղա-

մանակի, գրչության, վիճակի և այլնի հետ կապված հարցերը մնում են անհայտ՝ գեթ նմանահանությունը հրապարակած շինելու պատճառով:

19 Ն. Բյուզանդացի, Քննութիւն Մալխասեանց հրատարակութեանց..., էջ 161:

20 Ձեռագրում կա ներդիր այսպիսի մի հասցե. «От Кавказского отдела Имп. Моск. Арх. Общества». Ինչպես երևում է, որոշ ժամանակ այդ ընկերության սեփականությունն է եղել:

21 Նույն խմբագրության Մանրուսմունքի նկարագրություն տե՛ս Հ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 499—500 (ձեռ. № 183):

22 Կան ետին շրջանի հիշատակագրություններ.

ա. «Չվերջին ստացող սուրբ գրոցս զԱտոմս Աղուրենց և զճնալսն իմ զԿարապետ և զԹութուխանկ և զեղբայրք իմ և զամենայն արևան մերձաւորքն իմ յիշեցէք ի Քրիստոս, և աստուած զմեզ յիշէ, ամէն» (էջ 139Դ):

բ. «Ով ||| եղբայր սիրուն,

Տեարակս ի ձեռդ հաստատուն.

Գու զաւրանաս ի սուրբ հոգոյն

ն. հասանես յաւարտ բարոյն» (էջ 139 Ե):

գ. «Յիշեցէք ի տէր զՄկրտիչն Թուրաւաղէն և աստուած ողորմի ասացէք, աստուած ձեզ սղորմեսցէ, ամէն» (էջ 139Վ):



գրությունը: Ամենայն հավանականությամբ հիշատակարանի «սուրբ և երանաշնորհ բարունապետ Եսային» նշանավոր Եսայի նշեցին է, քանի որ այդ շրջանում նման մեծարանքի արժանի մեկ ուրիշ Եսայի չգիտենք: Եթե այդ ճիշտ է, ապա ձեռագիրը գրված պետք է լինի մինչև 1338 թվականը (մինչև նշեցումաճը), Գլաձորում, նրա բարունապետության օրոք (1284—1338 թթ.): Ձեռագրի խնամյալ ու զարդարուն լինելը միանգամայն վայել է ստացողի անվանն ու գրչության դպրոցի հեղինակությանը: Եվ իրոք, Գլաձորից հայտնի նշանավոր գրիչներից մեկը եղել է Պողոս Կիլիկեցի կամ Ակնեբցի վարդապետը, Գ. Հովսեփյանի որակմամբ՝ «Շնորհալի գրիչ և մանրանկարիչ»<sup>23</sup>, որը «յաղագս փափագման իմաստասիրական արհեստից տարաշխարհիկ եղևալ ի կայս և ի կոյս արևու»<sup>24</sup>, բնակություն է հաստատում Գլաձորում: Հիշյալ փաստը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում և լրացուցիչ ուսումնասիրություն պահանջում ինչպես գրչագրի բովանդակության, նրա կիրառության, այնպես էլ մանրանկարչության ու գրչության արվեստի առումով<sup>25</sup>: Ահա այս ձեռագրում իրրև պահպանակ է գործածված Ղազար Փարպեցու Պատմությունից պոկված կամ պահպանված մեկ թերթ, որը միջին մասից կիսված է և երկու պահպանակ-պատառիկի վերածված, որոնցից յուրաքանչյուրը երկձալ կարվել է ձեռագրին՝ կազմելու ժամանակ: Սկզբի պահպանակի շափերն են  $19,3 \times 12,1$  սմ, վերևի աջ անկյունը երեք տողի սահմանում պոկված է, վերջինը՝  $15,8 \times 12,1$  սմ: Ուրեմն, թերթի սկզբնական շափը եղել է ավելի քան  $24,2 \times 19,3$  սմ: Գրությունը երկսյուն է, մագաղաթը՝ հաստ ու լավորակ, ժամանակի բնթացքում դեղնած: Տողերը նշված են ճնշումով, էջում՝ 21 տող: Գրված է սև թանաքով, տեղ-տեղ այժմ ներկաթափ է ու խունացած: Որոշ տառանիշեր ու բառեր ուշ շրջանում այլ թանաքով թարմացված են, որը սակայն չի խանգարում հնի տարրորոշմանը: Գրչությունը ուղղագիծ երկաթագիր է, միայն որոշ տառաձևեր մասամբ բոլորգծային են: Ժամանակ՝ X—XI դար:


Ստորև տալիս ենք պատառիկի վերծանությունը, թերթերի հաշորդականությունը նշելով հոսմեական թվանշանով, միաժամանակ այն համեմատության մեջ դնելով Փարպեցու Պատմության գիտական հրատարակության հետ (վերջինս իրրև բնդատողյա տարրնթերցում)<sup>26</sup>:

23 Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Խաղրակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 177:

24 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 99—100, հմմ. Լ. Խաչիկյան, Մատենագրական տեղեկությունները Գլաձորի համալսարանի մասին, ՊՔԸ, 1965, № 4, էջ 200:

25 Անհրաժեշտ է համադրել Պողոսի բնդօրինակությամբ հասած մյուս ձեռագրերի, ինչպես և նրանցում եղած մանրանկարների հետ:


26 Տողատակի սովորական փակագծում, գիտական բնագրի համեմատվող ձեռագրերի ցուցանիշների պահպանումով, անհրաժեշտ ենք համարել վկայակոչել այն բնթերցումները, որոնք մերձ են մեր պատառիկին, բայց հրատարակիչների կողմից նախընտրված չեն:



80<sub>27-32</sub>


II 1p / / / / 19ՆՈՅՆ ՈՒ-1  
 ՏԵԼ 3ԱՆԵՆԱՅՉ<sup>2</sup> ԵՒ ԱՊԱԿԱ-  
 ՆԵԼ ՈՉ ՊԱՏԿԱՌԷ՜<sup>3</sup>: ԱՐԴ<sup>4</sup>, ՅԱ-  
 ՄԵՆԱՅՆ ՆԻԹՍ ՀՈՒՐ, Ա-  
 5 ՊԱ ՈՒՐԵՄԵ՛ ԱՄԵՆԱՅՆ ՆԻԹ-  
 ԹՔ ՅԵՐԿՐԻՅ՝ ԱՍՏՈՒԱԾՔ: Ա-  
 ՊԱ ԹԵ՛ ԱՅԳՊԷՍ ԳԻՏԷՔ, ՈՐ-  
 ՊԷՍ ԵՒ ԷԳ ԻՍԿ ԵՒ ՏԵՍԱՆԷՔ<sup>7</sup>,  
 ԸՆԳԷ՛Ր ԿՈՒՐԱՑԵԱԼ ՄՏԱԻՔ  
 10 ԴՂԿԷՍ ՄԱՍՆ ՅԱՍՏՈՒԱԾՈ-  
 ՑՆ ՊԱՏՈՒԵԱԼ Ի ՇՔԵՂՈՒ-  
 ԹՂԵԱՆ ԳՈՐԾ ՄԱՏՈՒՑԱՆԷՔ<sup>8</sup>,

1 ուտեն 2 և անխնայ 3 և արականնի ոչ պատկառէ ] (2 ոչ պատկառէ) 4 արդ ] ոչ պակասէ  
 5 երկրի (2 յերկրի) 6 թէ 7 որպէս և Էդ իսկ և տեսանէք ] 8 յաստուածոցն պատուեալ ի շքեղու-




1 2ր [ՉԿԵՍՆ՝] ՇԱԽԵԱԼ ԹՇՆԱՄԱ-  
 [ՆԷՔ]: ՈՐՊԷՍ ՅԱԳԻՍՈՅ  
 15 [ԵՒ Ի] ԴՊԱՐԱՆՑ Ի ԿԻՍՈՑՆՑ Ա-  
 ՊԱՐԱՆՍ ԵՒ ՍԵՆԵԱԿՍ ԹԱ-  
 ԳԱԻՈՐԱՅ ԵՒ ԻՇԽԱՆԱՅ ՇԻ-  
 ՆԷՔ<sup>10</sup>, ԵՒ Ի ԿԻՍՈՑՆՍ՝ ՈՐՄ Ս-  
 ՆԱՏԱՆՑ ԵՒ ԴԱՇՏԱՆԱՏԱ-  
 20 [Ն]Ց ԿԱՐԳԵԱԼՔ ՅԱԻՐԻՆԻՆ<sup>12</sup>  
 [ / / / / / / / / ]

թիան զորժ մատցանէք] անուանէք աստուածք 9 ի կիսոցն] զկէսս 10 ապարանս եւ սենեակս  
 Քաղաւտրաց եւ իշխանաց շինէք] ապարանս շինէք 11 ի կիսոցն] զկէսս 12 որմ սնատանց եւ  
 դաշտանատանց կարգեալք յարինին] տունս դաշտանաց եւ ազտեղութեան շինէք:




- 1 2ա ԸՀԱՆԴԵՐՉՍ ՄԵԾԱՊԻ [ԱՅ-]  
 ԾԱՌՍ ՅԱԻՐԻՆԷՔ, [ԸՆԴ Ե-]  
 ՄԻՆ՝ ԽԱԻՂԱՄԱՆՍ [ԵԻ]  
 ԽԸԼՆԱՆՈՑՍ ԱՐԱՐԵ[ԱԼ ԿԱԶ-]  
 5 ՄԷՔԻ: ՀՐՈՎ՛ ԱՍՏՈ[ԻԱԾՈՑՆ]  
 ԶՈԶԽԱՐՍ ԵԻ ԶԱՐՉԱ[ՌՍ Ա-]  
 ՆՈՒԱՆԵԱԼՍ, Ի ԶԷՆԶ [ՊԱ-]  
 ՏՈՒԱԾՍՉ, ԽՈՐՈՎԷ[Ք ԵԻ Ե-]  
 ՓԷՔ. Ի ԶՐՈՑՑ ԿԻՍ[ՈՑՆ]<sup>4</sup>  
 10 ԶԴԱՇՏԱՆՍ ԵԻ ԶԹԱ[ՐԱԽՍ]  
 ՎԻՐԱԻՈՐԱՅ ԵԻ Զ[ԱՂԲՍ, Զ-]  
 ԱՐԻԻՆ ՈԶԽԱՐԱՅ Ա[ՌԱՆ-]<sup>5</sup>

1 հանդերձս մեծապայծառս յարիինէք, ընդ նմին՝ խաղամանս եւ խըլնանոցս արարեալ կազմէք] 2 զոչխարս եւ զարջառս անուանեալս, ի ձէնչ պատուածս] զարջառս եւ զոչխարս 3 ի շրոց] 4 կիսով 5 վիթաւորաց եւ զազրս, զարիին ոչխարաց առան-] եւ զազրս լուանայր, եւ



1 1ա [ / / / ] Ի ԸՆԳ ԳԻ-1  
ՆԻ ԸՄՊԷՔ ՅՈՏՍ [ՄԱՐԳԿ?-]  
15 ԱՆ ԵՒ ՈՉ ՍՈՍԿԱԼՅՔ ԵՒ<sup>1</sup>  
[ԶԱՐՀՈՒՐԻՔ] 6:  
ԵՒ ԶԻ ՄԻ<sup>7</sup> ԵՒՍ ՄԻ ԸՍՏ ՄԻՈՉ[Է]  
ՀԱՐԿԱՒՈՐԻՑԻՄՔ ԱՍԵԼ Ի ԵՒ<sup>1</sup>  
Ի ԿՂԱՄ ԹՈՒՆԸ ԶԱՆԶԳԱՅ  
20 ԱՊՇՈՒԹԻՒՆ ՅԻՄԱՐՍ<sup>8</sup>  
/ / / / / / / /

զկէսն առանձինն 6 յոսս մարդկան եւ ոչ սոսկաչք եւ զարհուրիք] և ոչ զարհուրիք և սոսկաչք  
7 մի] (2 և սոյ+մի) 8 զանզգաչ ապշուիին յիմարս] զանզգաչուիինդ ձեր:




8038—815

- II 2բ [ՎԱՐԳ]ԱՆ ԵՒ ՆՈՐԻՐՆԻ ՆՄԱ-1  
 [ՆԻՔՆ], ՈՐՔ, ՈՉ ԿԱՐԱՅՐԵՆ-  
 [ԱԼՔ Ա.]ՅՍՊԻՍԻ ԽԱԲԷՈՒԹ[Ե]-  
 [ԱՆ] ԴՄԱՌԱՅԵԼ, ԲՈՂՈ-  
 5 [ՔԵԻՆ] ՉԵՉ ՉԱՆԱՊԱՉԶ, ԹԻՆ<sup>13</sup>  
 [ՍՈՒՏ] ԵՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻԴԻ  
 [ՉԵՐ] ԵՒ ՄԱՐԴՈՅ՝ ԱՆՄՏ-  
 [ԱՅ Վ.]ԴԱՂԻՐԱՊԵՏՈՒԹԻԻՆՔ:  
 [ԵՒ ՉԼ]ՍԵԻՔ<sup>5</sup>, ՎԱՍՆ<sup>6</sup> ՉԻ ԲՈ-  
 10 [ՆՈՒԹ]ԻԻՆ<sup>7</sup> ՉԻՐԱԻՈՒՆՍ ՈՉ  
 [ՏԱ.]<sup>8</sup> ՃԱՆԱՉԵԼ, ՈՐՊԷՍ  
 [ԵՒ ԱՅ]ԺՄԴ ԻՍԿ ՉՃԱՆԱՉԻՔ<sup>19</sup>

1 նոցունց 2 հանապազոր 3 թէ 4 մարդոց] 5 չսէիք 6 վասն] 7 բոնութիւնք 8 տան 9 այժմոք






I 1p / / / / / / [ԽՈՍՏԱ.-]  
 ՅԵԱԼՔ<sup>10</sup> ՀԱՆՏՈՒԺԵԼ<sup>11</sup> [ԵՏՈ.-]  
 15 ԻՆ ԶԱՆՁԻՆՍ<sup>12</sup> Ի ՄԱՀ ԵՒ ՊԸ-  
 ՍԱԿԵՑԱՆ, ՈՐՈՑ ԳՈՐ-  
 ՄՈՑ<sup>13</sup> ԵՒ ՄԵՔ ՔՍ.ԶԱԼԵՐԻԶՔ  
 ԵԱՔ<sup>14</sup> ԵՒ ԶԱԻՐԱՑՈՒՅԻԶՔ՝  
 ՈՐՊԷՍ ԶԱՐԳԱՐ ՈՒՍՈՒՅԻ-  
 20 ԶՍ ԵՒ ԶՃՇՄԱՐԻՏ ՎԱՐԳԱ-  
 ՊԵՏՍ<sup>15</sup>:

[խկ շնանաչէք] այժմ 10 / / / / ցեալք] 11 հանդուրժեալք 12+ [իւրեանց 13 գործոց] 14 էաք 15  
 և զարացուցիչք՝ որպէս զարդար ուսուցիչս և զհշմարիտ վարդապետս] և սրդարև հշմարիտ  
 վարդապետը նոցա:






81<sup>7-13</sup>

II 1ա    / / / / / / / /  
 ԲԵՐԱՆ ԳՈՎԵՑԻՆ ԱՄԵ-  
 ՆԱՅՆ՝ ՍՈՒՐԲ ՔԱԶԱՆԱՅՔՆ  
 ՄԵԾԱԶԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՎ  
 5    ԵՒ ՈՒՐԱԽ ԵՂԵՆ՝  
 ԵՒ ԼՈՒԵԱԼ ԶՄԵԾԱԲԱՐԲԱՐՈՒ  
 ԳՈՎՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԵՒ  
 ԶԲԵՐԿՐՈՒՄՆ ԵՐԵՍԱՅ ՆՐՈՒ-  
 ՑԱ ՏԵՍԵԱԼ ԱՆԱԻՐԷՆ  
 10    ԻՇԽԱՆԻՆ՝ ՄԻՐԶՆԵՐՍԵԶ՝  
 ԵՒ ԱՅՂ՝ ԱՒԱԳԱՆԻՈՅՆ՝ ՈՐ ՆՐՍ-  
 ՏԵԻՆ՝ ԱՌԱՋԻ ՆՈՐԱ, Ի ՑԱ-

1 ամենայն] 2+յոյժ 3 իշխանին] 4 Միհրենբոսեհի 5 ալլ 6+Արեաղ 7 նստէին





I 2ա [ՍՈՒՄՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԳՐ-]  
 ԳՂՌԵԱԼՑՑ ԱՍԷ ՅՆՈ[ՍԱ. ՈԶ]  
 15 ՀՐԱՄԱՅԵՆ ՄԵԶ ԱԻՐ[ԷՆՔՆ]  
 ՄԵՐ ՅԱՍՆՈՒԼ ՈՒՄԵՔ [ՄԻ-]  
 ՆԶ ՉԵՒ ԻՆԶ ԼՈՒԵԱԼ ԻՑԷՑ Ի  
 ԲԵՐԱՆՈՅ ՆՈՐԱ: ԱՐԳ, ՈՐ-  
 ՊԷՍ<sup>10</sup> ԶՈՒԱՐԹԱՅԵԱԼՍ ԻՄ<sup>11</sup>  
 20 ՏԵՍԱՔ ԶԶԵԶ ԸՆԴ ԽԱ-  
 ԻՍՍ ԱՇԽԱՀԱԿՈՐՈՅՍ<sup>12</sup> ԿՈՐԲ<sup>1-13</sup>

8 գրգռեալ] եղեալ 9 իցէ] 10 սրտիս] 11 իմ] իմն 12 աշխարհակորուսիդ 13 կոր[ուսիդ]

Բնականաբար, առաջին հերթին մեզ զբաղեցնում է այն հարցը, թե առաջարկվող պատահիկը ի՞նչ էական ճշգրտում է կատարում, բնագրական ի՞նչ ազավազուծություններ է բացահայտում: Փորձենք այդպիսիք վկայակոչել մեկ առ մեկ.

1. «Որ զիւր զեղբայր և զծնող որպէս թշնամիս ծախէ, զի՞արդ նա զթշնամանիչս իւր և կամ զերկրպագուան գիտէ պատուել և կամ թշնամանել. և դարձեալ յորմէ ծնանին՝ զնոյն ուտեն և անխնայ: Ոչ պակասէ յամենայն նիւթս հուր...» (80<sup>25</sup>—28):

Այստեղ բնագրի ակններև խաթարում կա. Փարպեցու մոտ խոսվում է կրակի մասին, թվարկելով ու բացահայտելով նրա առաջացման ու «կորնշման» պարագաները, ուստի «ծնանին» և «ուտեն» հոգնակիությունը միանգամայն ավելորդ է, սխալ, մանավանդ որ՝ այդ նույն նախադասության մեջ կա «նա» ենթական (հուրը): Մեկ նախադասության սահմաններում, երբ խոսքը հրի հետ կապված գործողությունների մասին է, սպասելի չէր բայական դիմավոր և անդեմ ձևերի զուգահեռ գործածություն (պատուել և կամ թշնամանել... զնոյն ուտեն (resp. ուտէ): Ավելի բնականոն կլիներ այս դեպքում ևս ունենալ «ուտել»: Ի վերջո, ամեննին անհասկանալի է «և անխնայ»-ն. նման որակումից հետո բայական շարունակություն էր անհրաժեշտ, փաստորեն արտահայտությունը մնում է կիսավարտ, թեև հրատարակիչները վերջակետ են դրել<sup>27</sup>: Հաջորդ նախադասության սկիզբը ևս կասկած է հարուցում. նախ՝ շարադասական առումով նախընտրելի կլիներ ունենալ ոչ թե «Ոչ պակասէ յամենայն նիւթս հուր...», այլ «Յամենայն նիւթս հուր ոչ պակասէ» կամ թեկուզ՝ «Յամենայն նիւթս ոչ պակասէ հուր», ապա՝ բնոգծված «ոչ պակասէ»-ն փաստորեն նախադասության ընդհանուր և հիմնական խմաստին որևէ բան չի ավելացնում: Գրաբարյան բնագրերի հմուտ ընթերցողը «Յամենայն նիւթս հուր» կարդալով էլ հասկանում է, որ խոսքը նյութերի՝ հուր առաջացնելու ընդունակության մասին է, հետևաբար՝ ամեն նյութի մեջ հուր լինելու: Փարպեցին նախորդ հատվածում արդեն ասում է, թե «կրակ ի բազում նիւթոց լինի»:

Մեր պատահիկը ճշգրտում է վերևում թվարկած ազավազումներն ու կասկածելի տեղիները. այստեղ «ուտեն»-ի փխ. ունենք «ուտել», բացակայում է «և»-ը, որով դառնում է «ուտել անխնայ», իսկ «ոչ պակասէ»-ի փխ. «ոչ պատկասէ», որ նախադասության շարունակությունն է և ոչ հաջորդի սկիզբը: Քանի որ «պատկասէ» եղակի է, ուրեմն եզակի է դառնում նաև «ծնանին» (ծնանի): Պարզվում է, որ «ուտեն և անխնայ»-ի «և»-ը ոչ թե ավելորդ է, այլ «և ապականել»-ի տեղահան եղած մնացուկը: Ինչ վերաբերում է «ոչ պակասէ»-ին, ապա խաթարված կոնտեքստում «ոչ պատկասէ»-ն զրշական հիմքի վրա գիտակցվել է իբրև «ոչ պակասէ»: Այսպիսով, Փարպեցու ընդամենը մեկ նախադասություն կազմող հատվածում առկա է մի քանի ազավազում՝ մեկը մյուսին հեցած: Պատահիկը ճշգրտում է այդ ամենը: Այսուհետև պետք է կարդալ. «...և դարձեալ, յորմէ ծնանի՝ զնոյն ուտել յանխնայ և ապականել ոչ պատկասէ: Արդ, յամենայն նիւթս հուր...»:

27 Տողառակին գրելով «Թերևս ուղղելի զնոյն ուտէ ևս անխնայ»:

2. «...ապա ուրեմն ամենայն նիւթք երկրի աստուածք. ապա թէ այդպէս գիտէք, ընդէ՞ր կուրացեալ մտօք զկէս մասն անուանէք աստուածք, և զկէսն յաղտեղի գործ ծախեալ թշնամանէք...» (80<sup>28-31</sup>):

Ի տարբերութիւն նախորդ հատվածի, այստեղ քերականական, ոճական կամ այլ խաթարում գրեթե չի նկատվում, ուստի առանց հին և հավաստի աղբյուր ունենալու կարելի չէ միջամտել: Միակ ակներև սրբագրելիքը «երկրի»-ն է: Խոսքը ոչ թե երկրի նյութերի, այլ՝ երկրում եղած նյութերի (առարկաների) մասին է, ուստի պետք է լինել «չերկրի», ինչպես որ կա գիտական հրատարակության հիմք ձեռագրում, բայց հրատարակիչները շփտես ինչու նախընտրելի չեն համարել: Նորահայտ պատառիկը ևս հավաստում է տողատակ իջեցված «չերկրի» ձևի նախնականութիւնը: Շարունակութիւն մեջ հակաճառողը թույլ է տալիս եզրակացութիւն այնպիսի ուղղագծութիւն, որ դժվար չէր լինի միտումնավորութեամբ բացատրել. եթե բոլոր նյութերի (առարկաների, իրերի) մեջ հուր կա, ապա դրանք բոլորը աստվածներ են, իսկ եթե այդպես է՝ ինչո՞ւ են կես մասը միայն համարում, իսկ կեսը՝ «յաղտեղի գործ ծախեալ թշնամանէք»: Պատառիկում նման ուղղագծութիւն չկա, և հակաճառութիւնն ավելի պատճառաբանված է. «զկէս մասն յաստուծոյ պատուեալ՝ ի շքեղութեան գործ մատուցանէք, զկէսն՝ ծախեալ թշնամանէք»: Սակայն պատառիկի տարբերութիւնը միայն վկայակոչվածով չի ավարտվում: Հարցումով ժխտման անցնելուց առաջ (ընդէ՞ր) այստեղ կա մի ուշագրավ տող՝ «որպէս և էդ իսկ և տեսանէք», որով ակնարկվում է, թե ոչ միայն դուք այդպես եք ճանաչում («այդպէս գիտէք»), այլ, ըստ ձեր պնդման, իրականում այդպես էլ կա ու տեսնում եք: Ծարտասանական արվեստի մասնագետները հավանաբար այստեղ նախընտրելի եղանակ կտեսնեն:

Ի վերջո, մեկ դիտողութիւն ևս. գիտական բնագրի հրատարակիչները վկայակոչվող հատվածի երկրորդ «աստուածք» բառը համարել են կասկածելի ուղղագրական ձև ունեցող (գրել են աստղանիշով): Պատառիկի ուսումնասիրութիւնից պարզվում է, որ սկզբնական բնագրում եղել է «յաստուածոցն» և որ նախագասութիւն այդ մասը հետագայում խմբագրվել է:

3. «...որպէս յաղիսոց և ի քարանց զկէսս ապարանս շինէք, և զկէսս տունս դաշտանաց և աղտեղութեան շինէք» (80<sup>31-32</sup>):

Նախ դիտենք, որ Փարպեցու մոտ շարունակվում է հարցում-բանավեճը, իսկ այդ նշանակում է, թե «որպէս»-ի վրա հարցական նշան պետք է դրվի: Կարծում ենք, որ «կէս»-ի հոգնակի հայցականը (զկէսս) լրիվ չի բացահայտում հեղինակի միտքը. հարկավ ավելի ճիշտ կլինել ասել «քարերի կեսից ապարանք եք շինում», քան «քարերի կեսը ապարանք եք շինում»: Պատառիկում գտնում ենք նախընտրելի համարված ձևը՝ «ի կիսոցն»: Շարունակութիւն մեջ ևս տարբերութիւն կա. գիտական բնագրի «ապարանս շինէք»-ի փոխարեն պատառիկը տալիս է առավել բնագրի մի արտահայտութիւն. «ապարանս և սենեակս թագաւորաց և իշխանաց շինէք»: Այստեղ կարելի է վիճել, թե որն է նախնական, թեև նրանց միջև իմաստային էական տարբերութիւն չկա. պատառիկում մասնավորեցումն ընդգծված է: Ներկա դեպքում էլ մենք նախընտրութիւնը տալիս ենք նորահայտին, որովհետև տրամաբանական է են-

թաղրել, թե գիտական հրատարակության հիմք ձեռագրի բնօրինակողը վրիպել է և բաց թողել երկայուն ձեռագրի մեկ տող՝ ե՛ի ՍԵՆՆԵՄԿՍ ԹԱԳԱԻՈՐԱՅ ԵՒ ԻՇԽԱՆԱՅ: Նախադասության շարունակության մեջ ևս նկատելի տարբերություն կա. «և զկէսս տունս դաշտանաց և աղտեղութեան շինէք»-ի փոխարեն այստեղ կարդում ենք. «Եւ ի կիսոցն՝ որմ սնատանց և դաշտանատանց կարգեալք յարինին»: «Զկէսս» և «ի կիսոցն»-ի միջև եղած տարբերության մասին արդեն խոսվեց, դառնալով շարունակությանը՝ կարող ենք վստահությամբ ասել, որ նախընտրելին պատահիկի ընթերցումն է: Քանի որ խոսքը աղյուսի ու քարի մասին է, հարկավ, ճիշտ կլինենք «որմ» ընթերցումը, մանավանդ որ՝ հաջորդ բառերը տերմիններ են (սնատուն, դաշտանատուն): Ի վերջո, նախնական համարելու մեկ կովան ևս կա. Փարպեցու լեզվին և ոճին խորթ է բառական կրկնությունը նախադասության մի հատվածում, իսկ գիտական բնագրում այդ անհարիրությունը կա (ապարանս շինէք... և... տուն... աղտեղութեան շինէք), մինչդեռ նոր բնագրում, առկա է կատարելապես հոմանիշ ուրիշ բառ՝ կարգել, յարինել (կարգեալք յարինին):

#### 4. «և յարժաթոյ զկէսս ըմպելիս կազմէք, և զկէսս անօթս աղտեղութեան կազմէք» (80<sup>32-33</sup>):

Ափսոսանքով պետք է նշել, որ պատահիկում մեկ տող կտրված ընկած է, ուստի դժվարանում ենք ասել, թե վկայակոչված այս նախադասության սկզբի բառերը (և յարժաթոյ զկէսս) արդյո՞ք նույնությամբ են եղել այնտեղ: Դատելով նախորդ օրինակից, գիտական բնագրի «զկէսս»-ի փոխարեն «ի կիսոցն» պիտի ունենայինք: Կարևոր է հետևյալ պարագան. ինչպես ասվեց, նույն նախադասության մեջ բառական կրկնությունը Փարպեցու ոճին առանձնահատուկ չէ, մինչդեռ այստեղ նորից ունենք «ըմպելիս կազմէք» և «անօթս... կազմէք»: Պատահիկը ճշտում է ոճական այդ խաթարումը, մի դեպքում տալով «յարինէք», մյուսում՝ «կազմէք», որ և նախընտրելի է: «Ըմպելիք» բառի փոխարեն (ըմպակ, բաժակ) պատահիկը տալիս է «հանդերձք մեծապայծառք», ուր «հանդերձ» նշանակում է արժաթից պատրաստված «սպասք, զարդ»<sup>28</sup>, այն էլ՝ մեծապայծառ: Նախադասության երկրորդ կեսի «անօթս աղտեղութեան» արտահայտության դիմաց պատահիկը տալիս է նրանց իրական անվանումը՝ «խաղամանս և խրլնանոցս արարեալ կազմէք»: Դժվար չէ կոահել, որ Փարպեցու պատմության հետագա խմբագիրները աշխատել են խուսափել նման տհաճ մասնավորեցումից. ի դեպ, շնք կարող հակառակը պնդել, որովհետև «խաղաման» և «խրլնանոց» բառերը մեր մատենագրության մեջ սովորական և տարածուն գործածություն չունեն, հետևաբար ուշ շրջանի արտագրություն չեն կարող լինել:

Եթե առաջարկվող սրբագրություն-փոփոխությունները արտացոլենք գիտական տեքստում, ապա կունենանք. «Եւ [ի միոյն] աբժաթոյ քանդեճս մեծապայծառս յարինէք, ընդ նմին՝ խաղամանս և խրլնանոցս արարեալ կազմէք»:

Նկատենք, որ վերականգնման մեջ մեկ հիմնական պայմանականություն կա՝ ի միոյն: Նախադասության երկրորդ կեսի «զկէսս»-ը պատահիկում չկա,

<sup>28</sup> Տե՛ս նշՔ, II, 41:

ուրեմն այն շկար և սկզբում, ապա «[ընդ ն]մին»-ի գոյությունը փաստում է, որ խոսքը նույն արժաթից պատրաստելու մասին է և ոչ՝ կիսից այս, կիսից՝ այլն լինելու, թեև բուն միտքը մնում է նույնը:

5. «Հրով՝ աստուածոցն զարջառս և զոշխարս խորովէք և եփէք» (80<sup>33-34</sup>):

Պատառիկը այս նախադասության մեջ ավելացնում է՝ «անուանեալս, ի ձէնջ պատուածս»: Նկատելու է, որ ավելացվողը ևրկաթագիր մեկ տող կարող էր կազմել, ուստի, համանաբար, վրիպմամբ բաց է թողվել: Նման դեպքեր շատ են հայտնի, ընդ որում տողը վերաբերում է «արջառ»-ին (զարջառ անուանեալս, ի ձէնջ պատուածս):

6. «և ջրով՝ զդաշտանս և զթարախս և զաղբս լուանայք, և զկէսն առանձինն և կամ խառնեալ ընդ գինի՝ ըմպէք, և ոչ զարհուրիք և սուկայք» (80<sup>34-36</sup>):

Սույն հատվածում ևս խաթարում կա, սկզբում խոսում է ջրի մասին ընդհանրապես և ապա՝ կեսի, մինչդեռ համարնույթ նախորդ վկայակոչություններից գիտենք, որ Փարպեցին վիճելիքը ակներև դարձնելու համար նախընտրում է ասել՝ կեսից այս եք անում, կեսից՝ այն: Այստեղ ևս նման հարցադրում էր սպասվում: Նորահայտ պատառիկը լիովին հաստատում է սրբագրելիքը՝ «ի ջրոց կիսոցն»: Սակայն շարունակության մեջ ինքը պատառիկն է խաթարված, ավելի ճիշտ՝ ընդօրինակելիս բաց է թողած մեկ տող, ուր պարտադիր պետք է լիներ «լուանայք» ստորոգյալը և «ի կիսոցն» հարաբերողը: Առայժմ անբացատրելի է մնում «արին ոշխարաց ա[...]

» տողը. եթե ենթադրենք, որ նախորդ տողի վերջում «զ» նախդիր է եղել, ապա պարզապես շարունակվում է թվարկումը (զդաշտան..., զարին ոշխարաց), իսկ եթե ոչ՝ ապա այդ տողը կապվելու է «խառնեալ ընդ գինի ըմպէք» արտահայտությունը: Մենք հակված ենք դեպի առաջին ենթադրությունը և տողիմաստի վերականգնումը համարում ենք քննելի: Պատառիկի ընձեռած մյուս տարրնթերցումները սկզբունքային չեն, իսկ ետևառաջությունների առկայությունը իմաստային փոփոխություն չի բերում: Թեևական ենք համարում և «յոտս [մարդկ]ան» վերականգնումը (մարդկանց առա՞ջ, ներկայություն՞մբ), ուստի վաղաժամ է այն գիտական տեքստ մտցնել: Ակներև է, սակայն, որ նախադասության այդ մասում էլ որոշակի տարրնթերցումներ են եղել:

Այսպիսով, վկայակոչված հատվածում ընդամենը մեկ-երկու սրբագրում-լրացում է կատարվում:

7. «Եւ զի՞ ևս մի ըստ միոջէ հարկաւորիցիմք ասել և կամ թուել զանգալուրիսն ձեռ» (80<sup>36-37</sup>):

Գիտական բնագրի հրատարակիչները, ընդունելով Ն. Բյուզանդացու առաջարկած ոճական սրբագրությունը՝ «Եւ զի՞ ևս մի ըստ միոջէ»<sup>29</sup>, ձեռագրերի «ևս զի մի ևս մի ըստ միոջէ» ընթերցումը տողատակ են իջեցրել: Պատառիկը

29 Ն. Բյուզանդացի, Հայկական բառարանություն, Կ. Պոլիս, 1880, էջ 82:

լիապես նույնական է ձեռագրերի հետ: Հավաստիանալու համար, թե տարրերակներին որն է ճիշտ, պետք է պարզել նախադասության բնույթը, եթե այն հարցական է, ապա ճիշտը Բյուզանդացու առաջարկած ուղղումն է «եւ զի՛ ևս...», բայց նույնքան և ավելի տեղին է հրամայական-արգելական ոճի կիրառումն այստեղ՝ «եւ զի մի՛ ևս մի բստ միտչէ» (իմա՛ և որպեսզի մեկ առ մեկ հարկադրված չլինենք պատմել): Եվ իրոք, Փարպեցին կտրուկ եղանակով վկայակոչում է Վարդանին ու Վարդանանց, որոնք հրաժարվել են այդ խաբեությանը ծառայելուց: Նման ընկալման դեպքում բնագիրը սրբագրելու անհրաժեշտությունը վերանում է, մանավանդ որ պատահիկը ևս հաստատում է այդ: Ի դեպ, հրատարակիչները ուշադրություն չեն դարձրել, որ Բյուզանդացին օգտվել է այն ձեռագրից, ուր «զի» չի եղել, ուստի նրա գոյությունը ենթադրող գիտնականը անհրաժեշտ է համարել «զի» սրբագրել այնտեղ առկա «մի»-ն: Երբ ձեռագրում «զի» կար, սրբագրելիք այլևս ոչինչ չէր մնում, մանավանդ որ ն. Բյուզանդացին բավական թեական է հարցադրում: Փաստորեն նրա առաջարկությունը ճիշտ է, բայց ոչ փոխանակ «մի»-ի: 1904 թ. հրատարակության «զանգագայութիւնը»-ի դիմաց պատահիկն ունի «զանգագայ ապշութիւն յիմարս», որ հետաքրքիր է իբրև տարբերացանության փաստ, թեև բստ իմաստի նույնական:

8. «զոր արթուն և քաջ նահատակն Վարդան և նոցունց նմանիքն, որք ոչ կարացեալք այսպիսի խաբէութեան ծառայել՝ բողոքէին ձեզ հանապազօր, թէ սուտ են պաշտամունքդ ձեր և անմտաց վարդապետութիւնք և շսէիք» (80<sup>37</sup>—81<sup>2</sup>):

Նախապես դիտենք, որ «զոր արթուն և քաջ նահատակն» հատվածը պատահիկում չի ներկայացված՝ տողի անկման հետևանքով: Թյուրիմացություն պետք է համարել «նոցունց» բառի գոյությունը, որովհետև մինչև այդ վկայակոչված է «արթուն և քաջ նահատակն Վարդան», իսկ խոսքը նրա նմանների մասին է և ոչ՝ նրանց նմանների: Պատահիկը պահպանել է ճիշտ ու նախնական ընթերցումը՝ «նորին»: Նախընտրելի ենք համարում նաև պատահիկի «հանապազ»-ը, թեև դրանով բուն տեքստը որևէ իմաստային փոփոխության չի ենթարկվում (հանապազօր):

Ըստ պատահիկի, «անմտաց»-ից առաջ պետք է դրվի «մարդոց» (մարդոց անմտաց), որ միտքն ավելի պարզ է դարձնում:

9. «զի բռնութիւնք՝ զիրաւունս ոչ տան ճանաչել, որպէս և այժմ»(81<sup>2</sup>—3):

Նախ արձանագրենք, որ «զի»-ի փոխարեն պատահիկում ունենք «վասն զի», իսկ ապա, դատելով ողջ շարագրանքից, «բռնութիւնք» հոգնակի ձևի անհրաժեշտություն չկա, քանի որ առհասարակ բռնության է վերաբերում, այդ պատճառով էլ պատահիկի «բռնութիւն» եզակին ավելի տեղին ու նախընտրելի է: Հարկ չկա բացատրելու, որ ինքնին կվերանայվի և «տան»-ը, դառնալով «տա», ինչպես որ կա պատահիկում: Ի դեպ, վերջինիս մեջ բնագիրն ավելի որոշակի ու ավարտուն է. գիտական հրատարակության «որպէս և այժմ»-ի դիմաց այստեղ կարդում ենք. «որպէս և այժմդ իսկ շճանաչէք»: Վերջին բառը կրկնություն համարել չենք կարող, քանի որ արդեն դիմավոր ձևն է գործած-

ված, իսկ հատվածի բուն նպատակն էլ այդ է՝ այժմ էլ եք բռնություն գործադրում, ուստի իրավունք չեք հանաչում: Մասնակի սրբազրումներով, բերված հատվածը կլինի. «Վասն զի բռնութիւն զիրաւունս ոչ տա հանաչել, որպէս և այժմդ իսկ շհանաչէք»:

10. «Յաղագս որոյ ոչ հանդուրժեալք՝ ևտուն զանձինս իւրեանց ի մահ և պատկեցան, որոց և մեք քաջալերիչք էաք և արդարև ճշմարիտ վարդապետք նոցա» (Տ13-5):

Թեև պատառիկի առաջին տողը չի պահպանվել, այնուամենայնիվ, կարող ենք ասել, որ այնտեղ որոշ տարբերություններ կան է. այդ որոշակի երևում է «-ցեալք» բառակեանքից, որ ամբողջության մեջ պիտի լիներ «խոստացեալք», իսկ նման պարագայում միանգամայն հասկանալի է «հանդուրժել» (գրված է հանտուժել) անորոշ ձևի գործածությունը: Որևէ սկզբունքային բան չենք տեսնում «իւրեանց»-ի լինել-չլինելու մեջ: Իբրև շատ ավելի վաղ շրջանի ձեռագրի բնթերցում բառիս չլինելը կարելի է նախնական համարել: Նույնը չի կարելի ասել շարունակության մասին. «որոց և մեք քաջալերիչք էաք»-ը բավական անորոշ է, մինչդեռ հեղինակի խոսքը նրանց գործի (= շհանդուրժելու, նահատակության) մասին է, ինչպես որ գտնում ենք պատառիկում՝ «որոց գործոց և մեք քաջալերիչք էաք և զարացուցիչք»: Եթե հիշենք, որ այս խոսքերն ասողը «ամենասուրբ երէց Ղևոնդն» է, ապա հասկանալի կդառնա և «զարացուցիչք» լինելը, ինչպիսիք իսկապես էին Ղևոնդն ու Ղևոնդյանք: Շարունակության մեջ բնագրային խաթարում է տեղի ունեցել: Փարպեցու խոսքը ոչ թե «արդարև ճշմարիտ վարդապետք» լինելուն է վերաբերում, այլ «արդար ուսուցիչք և ճշմարիտ վարդապետք» հանդիսանալուն, ինչպես և կա նորահայտ պատառիկում: Խաթարումն առաջացել է շատ սովորական ճանապարհով. բնօրինակողը վրիպմամբ բաց է թողել «ուսուցիչք»-ը և ակամայից ստացել «արդարև» (արդար + եւ): Հետագա բնօրինակությունների ժամանակ այլևս սճական հարթեցում է տեղի ունեցել, որը և հասցրել է զիտական հրատարակությունում առկա ձևին: Հարկավ, անհրաժեշտ է սրբագրել հատվածը:

11. «Եւ ասացեալ զայս ամենայն սրբոյ առն աստուծոյ Ղևոնդի՝ որպէս բնդ մի բերան գովեցին սուրբ քահանայքն մեծաձայն բարբառով և ուրախ եղեն յոյժ» (Տ16-8):

Հայտնի է, որ վաղ միջնադարյան բնագրերի հետագա փոփոխության պատճառներից մեկը լուսանցագրությունների ներառումն է բնագրի մեջ: Ներկա դեպքում գործ ունենք հենց այդպիսի բացորոշ լուսանցագրության հետ՝ «զայս ամենայն սրբոյն առն աստուծոյ Ղևոնդի», գրված՝ Ղևոնդ երեցի խոսքի վերջը շեշտած լինելու համար: Պատառիկը գերծ է այդ բնդմիջարկությունից, և շպահպանված մեկ տողում կարող էր տեղավորվել միայն «Եւ ասացեալ, որպէս բնդ մի»: Այս տողի առկայությունը պարզորոշ է դառնում հաջորդ տողի սկսվածքից՝ բերան գովեցին..., իբրև «բնդ մի բերան»-ի շարունակության:

Հաջորդ լրացում-ճշգրտումը սոսկ բառական է և ոչ էական. «սուրբ քահանայքն»-ի փոխարեն պատառիկը տալիս է «ամենայն սուրբ քահանայքն», «ուրախ եղեն յոյժ»-ի փոխարեն՝ «ուրախ եղեն»: Սրանք ապացուցելի ճշգրտ-

տումներ չեն, քանի որ որևէ երանգ չեն փոխում, բայց որովհետև դանում ենք գիտական հրատարակության հիմք ձևազրից շուրջ 600—700 տարի առաջ գրված պատառիկում՝ ընդունելի ու նկատելի են:

12. «Եւ լուեալ զմեծաբարբառ զովութիւն սրբոցն, և զբերկրումն երեսաց նոցա տեսեալ անօրէն Միհրներսեսի և այլ աւագանւոյն Արեաց, որ նստէին առաջին նորա՝ ի ցասումն բարկութեան եղեալ, ասէ ցնոսա» (818—11):

Սույն հատվածում էական փոփոխությունների անհրաժեշտությունը չկա, իսկ պատառիկի ունեցած տարբերությունները աննշան են. այստեղ հրատարակության «անօրէն Միհրներսեսի» դիմաց առկա է «անաւրէն իշխանին Միհրներսես» (գրված է՝ Միհրներսես), որ առումով ավելի հարազատ է շարունակությանը՝ «աւագանւոյն»: Փարպեցին այդպիսի արտահայտություններ ուրիշ հատվածներում էլ ունի, այսպես՝ «Եւ լուեալ... հազարապետին Արեաց Միհրներսեսի, և զամենայն զրանն աւագանւոյն...» (էջ 79 22—24):

էական չէ նաև «արեաց» բառի գոյություն-չգոյությունը. պատառիկը այն շունի: Կարծում ենք, որ ելնելով Փարպեցու մասնավորեցման սկզբունքից, կարելի է համարել բնագրային, իսկ շարունակությունը պատառիկում՝ երբեմնի գրչական վրիպման արդյունք:

Միակ համեմատարար կարևոր տարբերությունը «գրգռեալ» թե «եղեալ» բառերի մեջ է. ո՞րն է ճիշտ՝ «ի ցասումն բարկութեան եղեալ», թե՞ «ի ցասումն բարկութեան գրգռեալ»: Դատելով երկախոսությունների՝ նախորդ հատվածների գոյության փաստից՝ նախընտրելին «գրգռեալ»-ն է, քանի որ մինչ այդ բառերի մեջ է. ո՞րն է ճիշտ՝ «ի ցասումն բարկութեան եղեալ», թե՞ «ի ցասումն մեջ»:

Ուրեմն, քիչ թե շատ կարևոր առաջարկելիք փոփոխությունը բերված հատվածում «իշխանին» բառի մուծումն է բնագիր և «եղեալ»-ի փոխարինումը «գրգռեալ»-ով:

13. «Ոչ հրամայեն մեզ օրէնքն մեր ցասնուլ ումեք, մինչ չե ինչ լուեալ ի բերանոյ նորա. այդ՝ զուարթացեալս իմն տեսաք զձեզ ընդ խօսս աշխարհակորուսիդ այդորիկ...» (81 11—13):

Վկայակոչված հատվածի միտքը միանգամայն հասկանալի է, սակայն, կարծում ենք, «մինչ չե ինչ լուեալ ի բերանոյ նորա»-ն ավելի հստակ ու մեկին կլիներ, եթե «լուեալ»-ից հետո ունենայինք «իցէ». զրանով և՛ քերականորեն, և՛ իմաստային առումով բնագիրը պարզ կհնչեր: Բարեբախտաբար պատառիկը այդ ընթերցումն ունի, որը և պետք է մուծվի բնագիր: Սակայն նույնը չենք կարող ասել հաջորդ տարբերության մասին: Միհրներսեսը Ղևոնդ երեցին հարցնում-հանդիմանում է, թե «ընդ խօսս աշխարհակորուսիդ» ձեզ «զուարթացեալ իմն տեսաք», որ նշանակում է՝ մի տեսակ զվարթացած, գրեթե զվարթացած, նույնիսկ (անգամ) զվարթացած: Ըստ բնագրի «իմն»-ի գործածությունը միանգամայն տեղին է, իսկ պատառիկի «զուարթացեալս իմն»-ը (իմա՛նս զվարթացեալս)՝ ակներև սխալ, քանի որ ստորոգյալը հոգնակի է (տեսաք), ուրեմն այդպես ընկալելու համար «մեր» պիտի ունենայինք:



Համեմատարար էական այլընթերցում ունենք (ճիշտը՝ պիտի ունենայինք) «աշխարհակորուսիդ» բառից հետո: Այստեղ կարգում ենք. «ընդ խառն աշխարհակորոյս կոր...», որ պիտի շարունակվեր «կործանումի այգորիկ»: Քն ի՛նչ նորութիւն կրեբեր հիշյալ շարունակութիւնը՝ դժվար է ասել: Գատկով «աշխարհակորուսիդ» և «աշխա[ր]հակորոյս» բառերի վերջավորութիւնն տարբերութիւնից, կարելի է ենթադրել, որ պատահակի տեքստում մի փոքր ավելի նկարագրական արտահայտութիւն է եղել:

Այսպիսով, հիշյալ ճշգրտումները ի մի բերելով՝ կարելի է Փարպեցու պատմութիւնն հատվածը սրբագրել այսպես.

«...և դարձեալ, յորմէ ծնանի՝ զնոյն ուտել անխնայ և ապականել ոչ պատկանէ: Արդ, յամենայն նիւթս հուր, ապա ուրեմն՝ ամենայն նիւթք յերկրի աստուածք. ապա թէ այգպէս գիտէք, որպէս և էդ իսկ և տեսանէք, ընդէ՞ր կուրացեալ մտաւր զկէս մասն յաստուծոցն պատուեալ ի շքեղութեան գործ մատուցանէք, զկէսն՝ ծախեալ թշնամանէք: Որպէ՞ս յաղիւսոց և ի քարանց ի կիսոցն ապարանս և սենեակս թաղաւորաց շինէք, և ի կիսոցն՝ որմ սնատանց և դաշտանատանց կարգեալք յարինին: Որպե՞ս ի միոյն արծաթոյ (?) հանդերձս մեծապայծառս յարինէք, ընդ նմին՝ խաղամանս և խնանոցս արարեալ կազմէք: Հրով՝ աստուածոցն զոշխարս և զարջառ անուանեալս, ի ձէնչ պատուածս խորովէք և եփէք, ի շրոց կիսոցն՝ զգաշտանս և զթարախս վիրաւորաց և զաղբս լուանայք և զկէսն՝ առանձինն և կամ խառնեալ ընդ գինի, ըմպէք յոտս մարդկան (?), և ոչ սոսկայք և զարհուրիք:

Եւ զի մի՛ ևս մի բատ միոջէ հարկաւորիցիմք ասել և կամ թուել դանդաջ ապշութիւն յիմարս, զոր արթուն և քաջ նահատակն Վարդան և նորին նմանիքն, որք՝ ոչ կարացեալք այսպիսի խաբէութեան ծառայել, բողբէին ձեզ հանապազ, թէ՛ սուտ են պաշտամունքդ ձեր և մարդոց անմտաց վարդապետութիւնը: Եւ շլտէիք, վասն զի բռնութիւն զիրաւունս ոչ տա ճանաչել, որպէս և այժմդ իսկ շճանաչէք: Յաղագս որոյ ոչ խոստացեալք հանդուրժել՝ ետուն զանձինս ի մահ և պսակեցան, որոց գործոց և մեր քաջալերիչք էաք և զաւրացուցիչք՝ որպէս զարդար ուսուցիչս և զճշմարիտ վարդապետս:

Եւ ասացեալ՝ որպէս ընդ մի բերան, գովեցին ամենայն սուրբ քահանայքն մեծաձայն բարբառով և ուրախ եղեն: Եւ լուեալ զմեծաբարբառ գովութիւն սրբոցն և զբերկրումն երեսաց նոցա տեսեալ անարէն իշխանին Միհրնեբսեհ և այլ աւագանւոյն Արեաց, որ նստէին առաջի նորա՝ ի ցասումն բարկութեան զրգոսեալ, ասէ ցնոսա. «Ոչ հրամայեն ձեզ արէնքն մեր ցասնուլ ումեք, մինչ չե ինչ լուեալ իցէ ի բերանոյ նորա: Արդ՝ զուարթացեալս իմն տեսաք զձեզ ընդ խառն աշխարհակորոյս կործանումիդ այգորիկ...»:

Հին պատահիկների ուսումնասիրությունը ուշադրով է նաև հայոց լեզվի պատմության առումով: Այստեղ ակնկալելի են բառագանձային նորություններ, բերականական ինքնատիպություններ, վաղ շրջանի բարբառայնություններ և այլն: Պարզվում է, որ Փարպեցու Պատմության այս ոչ մեծածավալ պատահիկը նշանակալի հետաքրքրություն է ներկայացնում և նշված խնդրի առնչությունը: Ուսումնասիրությունն այստեղ քացահայտեց այնպիսի նոր բառեր կամ

բառարարություններ, որոնք արձանագրված չեն մեր առավել հեղինակավոր բառարաններում: Ստորև վկայակոչենք այդ բառերը:

**Սևառուն.** ՆՀԲ-ը և Մալխասյանցը շունեն, բառիս գոյությունն առաջին անգամ է արձանագրվում: Դատելով գործածության տեղից՝ որոշակի իմաստ ունեցող տերմին է (ի կիսոցն որմ սևառանց և...): Փոխարինում է Փարպեցու գիտական հրատարակության մեջ եղած «տուն աղտեղութեան» հասկացողությանը: Դիտելու է, որ «աղտեղութիւն» բառը գործածական է այլևայլ իմաստով՝ աղտ, աղտեղություն, արատ, աղբ, անսրբություն, պղծություն (ՆՀԲ, I, 45): Սակայն չենք կարող այս նշանակություններից որևէ մեկը գիտել իբրև «սին» բառի լիարժեք հոմանիշ, որ նշանակում է՝ սնտախ, ունայն, թափուր, զուր, դատարկ, նանիր: Թերևս կարելի է ենթադրել, թե «սնատուն» ասելով ինչ-որ պաշտամունքային կառույց, տեղի նկատի ունի, որին գերադասում է «սին» հորջորջել: Բայց նման ենթադրությունը տեքստից չի բխում. այստեղ «սնատունն» ու «ղաշտանատունը», երկուսն էլ իբրև «աղտեղության տուն», հակադրված են «ապարանքներին» ու թագավորաց կամ իշխանաց «սենյակներին», որոնք նույն քարով են կառուցվում: Ուրեմն՝ խոսքը կոնկրետ նշանակություն ունեցող հաստատության, տերմինի մասին է: Քանի որ Պարսկաստանում «ղաշտանատներ» իրոք կային, ուրեմն եղել են նաև «սնատներ»: Նախապես մենք նույնիսկ հակված էինք կարծելու, թե գործ ունենք ոչ թե «սին», այլ «սեն» բառի հետ, որ մեկ անգամ գործածված է մեր մատենագրության մեջ և նույնանում է վրացերեն ՆԵԾՕ-ին (ախտ. հիվանդություն իմաստով)<sup>30</sup>: Իհարկե, շատ հարմար կլինեին «սնատունը», հասկանալ իբրև «ախտատուն», «հիվանդատուն», «բորոտանոց» և այլն, բայց ինչպե՞ս կարող էր հայերենում «սեն»-ը «սն» դառնալ, ինչ վրացերենում բնականոն է (հմտ. Նճեյլո): Կարծում ենք, որ բառս ղեռ կարոտ է իմաստի ճշտման:

**Դաշտանատուն.** Վերոհիշյալ բառարանները այսպիսի բառ չգիտեն, թեև նրա բաղադրիչները առանձին-առանձին քաջ հայտնի են. ՆՀԲ-ում (I, 595) և այլուր վկայակոչված է և Փարպեցու բնագիրը, ուր այս բառը հանդիպում է երկու անգամ: Ի տարբերություն նախորդի, այս բառի իմաստը շատ որոշակի է, և նորը ոչ թե բառիմաստն է, այլ ինքը բառարարությունը (գիտ. հրատ. մեջ ունեինք՝ տուն դաշտանաց, պատահիկում՝ դաշտանատուն)<sup>31</sup>:

**Խաղաման.** Նախորդի նման բաղադրիչներով հայտնի բառ է, իսկ բառարարումը՝ անծանոթ բառարանագիրներին: «Խաղ»-ը (խօղ) նույն «խօխ», «խուխ» բառն է (բարբառներում՝ «խորխ»): «Խաղ»-ը բառիս ոչ հաճախագեպ գործածվող ձևն է, դրանով իսկ ուշագրավ<sup>32</sup>: Ինչպես արդեն նշել

<sup>30</sup> ქართლის ცხოვრების ძველი სომხური თარგმანი, თბ., 1955, გვ. 218, հմտ. Հ. Անատյան, ՀԱԲ, VI, 182: Այստեղ տրված ստուգաբանությունը (տալ-ֆերտ) համոզիչ չէ (այդ մասին գրում է ինքը Հ. Աճառյանը, տե՛ս նրա՝ Հայոց լեզվի պատմություն, II, Երևան, 1951, էջ 225), հմտ. Ի. Արուլան, Քարթլիս ցխովրերայի կամ վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, «Գիտ. նյութերի ժողովածու», № 1, 1941, էջ 39:

<sup>31</sup> Հ. Աճառյանը «տուն դաշտանաց»-ը բացատրում է իբրև «արտաբնոց» (ՀԱԲ, II, 412), որ համոզիչ չէ:

<sup>32</sup> Հմտ. Նորայր Բյուզանդացի, Հայկական բառարանութիւն, էջ 76 (№ 72):

ենք, «խաղաման» ունեցող նախադասությունը Փարպեցու հրատարակության մեջ չկա, իսկ քանի որ այլուստ հայտնի չէ, ապա առ այսօր հայտնի գործածության միակ դեպքն է: Գծրախտաբար, մենք հնարավորություն չունենք ճշտելու, թե ամանիս գոյությունը հայտնի է պահլավերենին կամ հնագիտությանը, իսկապե՞ս խաղ||խուխ-ը ծագում է պրսկ. *خوگ*-ից<sup>33</sup>: Խ(ը)լնանոց. Գործածված է «խաղաման»-ի հետ նույն նախադասության մեջ. իբրև հավասարապես աղտեղի, անարժան աման: Առաջին կեսը «խլնիր» կամ «խլինք» բառն է, եզական ձևը՝ խլին: Բառարաններին «խ(ը)լնանոց» բառն անծանոթ է. «ը» գաղտնավանկի բացումը պայմանավորված է այլ ձայնավորների շարժությամբ և ոչ տողագարծով կամ գրչության հետ կապված այլ պարագայով:

Այսպիսով, վկայակոչված շորս բառն էլ անծանոթ է մեր բառարանագրությանը և նորույթ լեզվի բառազանձում, կամ, ինչպես լեզվաբանական գրականության մեջ է ասվում՝ նորագյուտ բառ:

Այժմ անդրադառնանք բարբառային ձևերի գործածության փաստին: Վաղ շրջանի պատառիկներում, հասկանալի պատճառով, այդպիսիք քիչ են սպասելի, բայց այնուամենայնիվ՝ կան: Արդեն նշել ենք, որ հրապարակի վրա եղած «Յաղագս որոյ ոչ հանդուրժեալք՝ ետուն չանձինս իրեանց ի մահ...» (ՏԼՅ—Կ) նախադասությունը մեր պատառիկում այլ խմբագրությամբ է ներկայացված՝ «[Յաղագս որոյ ոչ խոստա]ցեալք հանաուծել՝ ետուն զանձինս ի մահ...» (I, 1): Թե ինչում է կայանում շարադրական տարբերությունը՝ վերևում նշվեց: Այստեղ ուշադրավր «հանաուծել» ձևն է: Բառս վկայված է V դարի հուշարձաններով՝ իբրև «հանդուրժել»<sup>34</sup>, իսկ Փարպեցու պատառիկում, գրավոր մատենագրության մեջ առաջին անգամ, հանդես է գալիս *դ>տ* խլացմամբ և «ը»-ի անկմամբ՝ հանաուծել: Արդ, ինչպե՞ս բացատրել այս փոփոխությունը: Կարող է լինել երկու մեկնաբանություն. բառի ստուգաբանությունը տակավին վերջնականապես ճշգրտված չէ, իսկ ենթադրությունների մեջ կա և այսպիսին՝ «հան մասնիկով դուրժ <դուրժ = սանս. դուրժ «հանդարտիլ, խաղաղիլ» բառից»<sup>35</sup>: Եթե այս վարկածը հաստատվեր, ապա «հանաուծել» ձևը կարելի էր գիտել իբրև առավել հնագույն (արխայիզմ), զուգահեռներ փնտրելով միայն *դ>տ* խլացման համար: Սակայն, մեր համոզմամբ, այստեղ կարող է առաջադրվել և նրկրորդ հավանական վարկած. «կ» ճյուղի բարբառների որոշ խոսվածքներում (Ախալքալաքի) այսօր էլ «հանաուծել» են ասում, ուր օրինաչափ է ինչպես *դ>տ*, այնպես էլ *ը>* — հնչյունափոխությունը: Մեր մատենագրության պատմության մեջ և վիմագիր արձանագրություններում բարբառային ձևերի օգտագործման բազմաթիվ օրինակներ են հայտնի, որոնց ն. Մառք вульгарная форма էր կոչում: Զարմանալու ոչինչ չկա, եթե խորհենք, որ Փարպեցու հնագույն պատառիկում ավանդված ենք գտնում հենց բարբառային հնչումը: Այս նույն տեքստում առկա է և մեկ այլ բառի ինքնատիպ գրություն՝ աշխահակոռոյս-ի փոխարեն աշխահակոռոյս: Իհարկե, դյուրին կլիներ այն ընդունել իբրև գրչի սովորա-

33 Հմմտ. Հ. Անտոյան, ՀԱԲ, 111, 654:

34 Վկայակոչությունները տե՛ս նՃԲ, 11, 45:

35 Տե՛ս Հ. Անտոյան, ՀԱԲ, 117, 125:

կան վրիպում, դրանով իսկ՝ հարցը սպառված համարել: Բայց տակավին քննելի է, թե նորից բարբառային գրություն հետ գործ շունե՞նք, քանի որ այս օրինակը եզակի չէ: Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» ձեռագրում ևս բազմիցս հանդիպում ենք «աշխահ» գրություն<sup>36</sup>, որ կրկնված են գտնում նաև Փիլոն Հերբայեցու «Ճառք»-ում<sup>37</sup>: Ընդ որում, երկու հեղինակի հայերեն թարգմանության ձեռագրերում էլ գրություն այս ձևը պատահական չէ, քանի որ երբեմն նույն էջում ունենք «աշխարհ» և «աշխահ», ավելին՝ Փիլոնի «Կեանք իմաստնոց» ճառի գրիչը նախապես գրել է «աշխարհ», իսկ հետո դարձրել «աշխահ», հրատարակիչների խոսքով «քերելով զնախ գրեալ Ե տառ» (էջ 33, ծան. 1): Նման գրություն հատուկ է «Ճառքի» համեմատվող ձեռագրերից մեկին (տե՛ս էջ 143, ծան. 4):

Ուրեմն, կարելի է վստահ ասել, որ մեր պատասխիկի «աշխահակորոյս»-ը պատահական չէ և իր զուգահեռն ունի այլ ձեռագրերում: Իսկ քանի որ այդ ձեռագրերը տարբեր ժամանակների ու գրիչների արտագրանք են, ապա բառիս այս ինքնատիպ գրությունը բացատրելի է միայն պատմական Հայաստանի որոշ գավառների բարբառային ինքնատիպությամբ: Դժբախտաբար, հիշյալ երեք անկախ ազդյունների ձեռագրի գրչության վայրի մասին քիչ գիտենք, այլապես հարցը ինքնին կմասնավորանար, պարզելով թե՛ որ բարբառին հատուկ լինելը, թե՛, մանավանդ, պատասխիկիս որտեղ գրվելու պարագան: Նկատառելի է միայն, որ Կուզի «Հակաճառության» ձեռագիրը (այժմ՝ Մատենադարան, № 1958) X—XI դարի մագաղաթյա հնագույն գրչագրերից է: Այստեղից բխում է, որ լեզվական իրողությունը գրաված է վաղ շրջանի ձեռագրերում և որ, նաև ըստ գրչության, մեր պատասխիկն ու «Հակաճառության» ձեռագիրը իրար ժամանակակից են:

Ի վերջո, պատասխիկներ ուսումնասիրելիս անհրաժեշտ է անգրագանալ ն կետադրությանն ու տրոհության նշաններին, քանի որ այդ ամենը կարող է օգտակար լինել գրչության ժամանակի հետ կապված հարցեր արծարծելիս<sup>38</sup>: Փարպեցու պատմության այս ոչ մեծ պատասխիկը հարուստ է և կետադրության նշաններով: Ընդամենը մեկ թերթում գործածված են այնքան նշաններ, որքան երբեմն դժվար է լինում գտնել հին ձեռագրի մի պրակի մեջ: Պարբերության վերջում մեկ անգամ գործածված է երկու կետանոց վերջակետ, գրված վերջին տառից մեկ տառաշափ հետո և տողի վերին եզրին հավասար. «...ե՛ի ՁՃՇՄԱՐԻՏ ՎԱԴԱՊԵՏՍ: (I 1բ): Նույն գիրքով հանդիպում է և միջակետի գործածություն (ՊԸՄԱԿԵՅԱՆ., I 1բ): Սակայն կան և այլ դեպքեր. մեկ կետը գրվում է նաև տողի ստորին եզրին (Ի ՅԱՄՈՒՄԵՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ԳՐԴԸՌԵԱԼ. I 2ա) կամ՝ բուն տողամիջում (ՅԱՄԵՆԱՅՆ ՆԻԹՍ ՂՈՒԲ., ԱՅԳՊԷՍ ԳԻՏԷՔ. II 1բ, ԽԱԻՂԱՄԱՆՍ. ՎԻՐԱԻՈՐԱՅ. II 2ա, ԽԱԲԷՌԻԹԵԱՆ ԾԱՌԱՅԵԼ. ԵՆ ՉԼՍԷԻՔ. II 2բ), բնո՞րում նախավերջին օրինակի դեպքում միջակետը քառակուսի տեսք շունի, այլ՝ կլոր կետ: Պատասխիկում երեք անգամ ստորակետ է հանդի-

36 Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեփսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վարդապետի և Երուանդ վարդապետի, էջմիածին, 1908, էջ 216<sub>4</sub>, 297<sub>10</sub>, 300<sub>3</sub> և այլն (հմմտ. Չ. Անադյան, ՀԱԲ, I, 396):

37 Փիլոնի Հերբայեցոյ ճառք..., Վենետիկ, 1892, էջ 33, 143: Հմմտ. Չ. Անադյան, անդ:

38 Միջնադարյան կետադրությանը վերաբերող նախնական հաղորդում, տե՛ս Չ. Մխիթարյան, Կետադրական նշանները հայերենում, Չ. Ա., 1971, № 4—6, էջ 190—206:

պում (ՅԱՄՆՈՒԼ ՈՒՄԵՔ [ՄԻ]/ՆԶ, I 2ա, ԱՄԵՆԱՅՆ ՆԻԻԹՔ, II 1բ, ՆՄԱ/ [ՆԻՔՆ], ՈՐՔ II 2բ):

Առողանություն նշանի գործածության հանդիպում ենք մեկ անգամ, որ երկու տառի տարածություն ծածկող նշան է, դատելով տեղից՝ շեշտի կամ բացականչականի նշանակությամբ, աշից ձախ վայրընթաց թերություն (ՆԻ ԶԻ/ՄԻ ԵԻՍ ՄԻ ԸՍՏ ՄԻՈՂԷ I 1ա):

Այս նշանների համադրությունը այլ պատասխիկներում ու հին ձևագրերում հանդիպող նշանների հետ նկատելիորեն կոդնի նրանց գործածության պատմությունն ուսումնասիրելուն, մանավանդ երբ նկատի առնվեն հայոց հին բերականների աշխատություններով ավանդված սահմանումներն ու բնութագրումները:

П. М. МУРАДЯН, К. Н. ЮЗБАШЯН

## НОВООТКРЫТЫЙ ФРАГМЕНТ «ИСТОРИИ» ЛАЗАРА ПАРБЕЦИ

(Р е з ю м е)

Настоящий фрагмент «Истории» Лазара Парбеци сохранился в виде защитных листов рукописи А-82 Института востоковедения АН СССР в Ленинграде. Рукопись датируется XIV в. (до 1338 г.), защитные листы — X—XI вв. Текст Лазара Парбеци написан на пергамене, письмо — прямоугольный еркатагир. Отрывок соответствует стр. 80 33—37, 38—81 5, 7—13 издания 1904 г. Статья содержит публикацию фрагмента, анализ разночтений и реконструкцию текста в пределах данного отрывка.

Новооткрытый фрагмент позволяет внести существенные коррективы в имеющийся текст, содержит слова, не учтенные в глоссариях, и диалектизмы. Фрагмент изобилует знаками пунктуации.

P. M. MOURADIAN, K. N. YOUZBACHIAN

## LE FRAGMENT DERNIÈREMENT DÉCOUVERT DE L'„HISTOIRE“ DE LAZARE PARBETSI

(R é s u m é)

Le présent fragment de l'Histoire de Lazare Parbetsi a été conservé sous forme de feuille de garde du manuscrit A-82 de l'Institut d'Orientalisme de l'Académie des Sciences de l'URSS à Léningrad. Le manuscrit date du X<sup>IV</sup>e siècle (avant 1338), pages de garde du X<sup>e</sup>—XI<sup>e</sup> siècles. Le texte de Lazare Parbetsi est écrit sur du parchemin, écriture: erkataguir rectangulaire. Le fragment correspond aux pages 80 33—37, 38 et 81 5, 7—13 de l'édition de 1904. L'article comporte la publication du fragment, l'analyse des variantes et la reconstitution du texte dans les limites du fragment en question.

Ce nouveau fragment permet d'apporter d'importants correctifs au texte existant, il comporte des mots non cités dans les glossaires et des formes dialectales. Les signes de ponctuation y abondent.

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

«ՅԱՂԱԳՍ ԽՐԱՏՈՒ ՄԱՆԿԱՆՑ» ԳՐՎԱԾՔԸ  
ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ XI դարը հիրավի համարվում է զարգացման մի նոր շրջանի սկիզբ: Հենց այս ժամանակ է, որ շուրջ երեքհարյուրամյա տեղատվությունից հետո սկսվում է տեսական մտքի հարաճուն մակրնթացությունը: Իր դարի այնպիսի ոգին արտահայտելով, այն ձգտում է գործուն դեր խաղալ հասարակական կյանքում և, դասական շրջանի ժառանգությունն օգտագործելով, պատասխան տալ ժամանակի հուզող հարցերին: Սուր ևն դասակարգային բախումները և հակասական է դարի ոգին: Մավալուն վանական շինարարությունը և կրոնական, ճգնավորական տրամադրությունների խորացումը զուգորդվում են աշխարհիկ ոգու աշխուժացման, ինչպես և իշխող իրավակարգի ու պաշտոնական գաղափարախոսության հանդեպ ժխտական դիրք բռնած աղանդավորության հետ:

Շատ չեն այդ դարում ստեղծված երկերը և սակավաթիվ են հեղինակները, որոնք առաջ են տանում իմաստասիրական միտքը, բայց նշանակալից են նրանց աշխատությունները, որպես զարգացած ավատատիրական հասարակության կենսական խնդիրները բարձրացնող երկեր: Այս շրջանի փիլիսոփայական միտքը, պետք է ասել, ըստ բովանդակության բավարար չափով ուսումնասիրված չէ: Այն հայտնի է միայն ամենաընդհանուր գծերով: Մի շարք երկեր էլ չեն ենթարկվել բանասիրական քննադատության, որը հնարավորություն պիտի տա վերջնական խոսք ասելու նրանց պատմական արժեքի, հեղինակային պատկանելիության և այլ հարցերի վերաբերյալ:

Նման երկերի թվին է պատկանում այդ ժամանակաշրջանում ստեղծված «Յաղագս խրատու մանկանց» ուշագրավ իմաստասիրական գրվածքը, որը հասել է մեզ միայն մեկ ընդօրինակությամբ<sup>1</sup>: Այն գիտական շրջանառության մեջ դրեց պրոֆ. Ա. Աբրահամյանը, 1956 թ. հրատարակելով բնագիրը XI—XII դարերի անվանի գիտնական Հովհաննես Սարկավազի երկերի հատորում<sup>2</sup>: Տվյալ հրատարակությունից հետո էլ Հովհաննես Սարկավազի հայացքների գնահատմանը անդրադարձած փիլիսոփայության պատմաբանները առանց դուշն ինչ կասկածի օգտագործեցին այն Սարկավազի աշխարհայացքի լուսարանման համար<sup>3</sup>:

1 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 5619, էջ 119ա—133ա:

2 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 306—315:

3 Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Հովհաննես Իմաստասերի փիլիսոփայական հայացքները, «Պատմա-բանասիրական Հանդես», Երևան, 1958, № 3, էջ 188—200: Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Երևան, 1958, էջ 90:

Սակայն, իրո՞ք դա Հովհաննես Իմաստասեր Սարկավազի գրչին պատկանող երկ է: Այդ կասկածն առաջ է գալիս, երբ ընթերցողը խորանում է տվյալ բնագրի մեջ, շնայած որ նրա վերնագիրն առաջին հայացքից կասկածի տեղիք չի տալիս: «Յովհաննես քահ[անայ]ի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախօսութեամբ», այս է երկի լրիվ վերնագիրը<sup>4</sup>:

Հովհաննես Սարկավազի փիլիսոփայական հայացքներն ուսումնասիրելիս մեզ անհրաժեշտ եղավ գտնել նրա հայտնի միտքը փորձի նշանակության մասին: Սարկավազի բնագրերի հրատարակիչն իր գրքի ռուսերեն և անգլերեն ամփոփումների մեջ հայտարարում է, որ բոլոր հետազոտողները հենվել են Ղ. Ալիշանի կողմից արված մեջբերման վրա, որը ցավոք սրտի չի մատնանշել աղբյուրը, իսկ ինքը «իր ուսումնասիրության մեջ ցույց է տալիս այդ աղբյուրը: Վերջին աշխատությունը, որը ղետեղված է մենագրության մեջ, — շարունակում է հրատարակիչը, — Հովհաննես Իմաստասերի մանկավարժական-փիլիսոփայական երկն է, գրված աշակերտների համար»<sup>5</sup>, այսինքն «Յաղագս խրատու մանկանց» բնագիրն է:

Տեքստի մանրագնին հետազոտությունը ցույց է տալիս, որ այս պնդումն անհիմն է: Այնտեղ չկա և ոչ մի արտահայտություն փորձի, ոչ որպես գիտության ճշմարտացիության շափանիչի, ոչ էլ ճանաչման պրոցեսում նրա խաղացած դերի մասին: Սակայն բնագրի ուսումնասիրումը հանգեցնում է ընթերցողին մի բոլորովին անսպասելի արդյունքի: Այն կասկած է առաջ բերում առհասարակ նրա՝ Սարկավազի գրչին պատկանելու վերաբերյալ:

«Յաղագս խրատու մանկանց» երկի ոճը, լեզուն, օգտագործված բառամթերքը զգաստացնում են ընթերցողին: Այն գրված է հունարանություններով առատ, խրթին մի լեզվով, որը հատուկ չէ Սարկավազին: Բացի այդ, բնագրի մի շարք տեղերում զգացվում է անսքող կիրք, հազիվ զսպված զայրույթի պոսթիկումներ, որոնք տարօրինակ են «մանկավարժական-փիլիսոփայական» գրվածքի համար:

Ո՞րն է «Յաղագս խրատու մանկանց» երկի ստեղծման հիմնական նպատակը:

Բնագրի հետազոտումը նախ և առաջ ցույց է տալիս, որ հեղինակը հույժ անհանգստացած է ինչ-որ հակառակորդների գործունեությամբ և ձգտում է հավատացյալներին՝ եկեղեցու «մանուկներին», և ոչ թե աշակերտ-երեխաներին հեռու պահել այն մարդկանցից, որոնք «աղավաղում են» բարքերը, պղտորում են միամիտ հավատացյալների միտքը: Այդ «շարիքը», ըստ հեղինակի, առաջ է բերում «այրումն մտաց անհնարին բոցով և տանջանալք ոչ թէ թեթևագույնք ինչ քան զգեհենին հրոյ. անտի և ձիք իզամուլք մարդիկ իրաքանչիւր որ ի կին ընկերի իւրոյ վրնջելով ամաշեմ զանամաթութիւն այնպիսի աշաց և զլպրշութիւն յանդգնութիւն հաւասարապէս ի մէջ բանիւ ածել և յանդիման կացուցանել»<sup>6</sup>: Այդ մարդիկ ահավոր վտանգ են ներկայացնում եկեղեցու համար որպես «ամենայն բարեաց իսկականաց ամաշութիւն և բովանդակ զեղխութեան և անարէն վարուց սկիզբն և կատարած»<sup>7</sup>:

<sup>4</sup> Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5619, էջ 119ա:

<sup>5</sup> Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 355 (ոուս. ամփոփում) և էջ 360 (անգլ. ամփոփում):

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 310, տող 83—87:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 315, տող 10—11:

Արդյո՞ք մի «մանկավարժական» գործում մանուկների դաստիարակության ու կրթության հարցերով մտահոգված հեղինակը պետք է նման խայթող և հայհոյական ածականներով ու մեղադրանքներով սպառնար իր գեռատի ունկնդիրներին: Ինչո՞ւմն է բանը: Ո՞րն է այս գործի ստեղծման իսկական դրդապատճառը: Գուցե ինչ-որ աղանդավորների դեմ է գրված տվյալ երկը, կամ, ավելի ճիշտ, նրանց ազդեցության տակ ընկած մարդկանց դարձի բերելու, «ճիշտ» ուղու վրա դնելու մտահոգությունն է հարկադրել հեղինակին գրել այս գործը, ստիպելով նրան մի կողմից սպառնալ, հանդիմանել, բացահայտել թաքնված վտանգը, իսկ մյուս կողմից ցույց տալ «փրկության» ճանապարհը, հույս ներշնչել նրանց, որ անկեղծ զղջումով և ապաշխարությամբ կարելի է քավել մեղքը, լուսավորել միտքը սուրբ գրքով և աստվածաբանական գիտության մեջ: Նա հորդորում է ունկնդրին. «քաջակրթապէս զերկոսին ախորժեմ մակստանալ քեզ՝ որ ինչ վարուց նախ, և ապա զտեսականին՝ ըստ կարողութեան աստուածային և բարձրագոյն ուսմունս գիտելով»<sup>8</sup>:

Մի քանի տող հետո նա եզրակացնում է. «ուրեմն անբանութիւն յանգիտութենէ, զտիրապէս շարութիւնն ի ներքս ածեալ ձևացուցանէ փոխադարձակի ի ժանգատեսիլն դիմաւորութիւն զկերպարանս անձին, վասն որոյ ասասցի և յոյժ դիպողապէս, մանաւանդ եթէ ըստ ճշմարտութեան, կոապաշտութեան վարդապետ»<sup>9</sup>, և այլն: Այնուհետև հուսադրում է. «Այլ իմաստութիւն նախալուծարութեան սկիզբն է երկիւղ Տեառն, որպէս Դաւիթ և Սողոմոն ուսուցանեն, որով խորշի ամենայն ոք ի շարէ և գնալով ի ճանապարհս Տեառն երանեսցին»<sup>10</sup>:

Պարզ է, որ հեղինակը ոչ թե նպատակ է ունեցել գրելու մի մանկավարժական գործ, այլ մի փիլիսոփայական-բարոյագիտական թուղթ, որով նա խրատում է իշխող բարոյական նորմերից և, հավանաբար, պաշտոնական դավանանքից շեղվող, «բարձրագոյն ուսմունքը» աղավաղող մարդկանց:

Արդ, միառժամանակ թողնելով տվյալ բնագրի բովանդակության ու բնույթի հետ կապված հարցերը, քննենք նրա լեզվա-ոճական առանձնահատկությունները, որից հետո առաջ կքաշենք մեր ենթադրությունը նրա հեղինակի մասին:

«Յաղագս խրատու մանկանց» Սարկավագին վերագրված երկն ուսումնասիրելիս, ինչպես նշեցինք, ընթերցողին զարմացնում է հունարանությունների առատությունը: Բերենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը: Հեղինակն օգտագործում է այսպիսի բառեր և դարձվածքներ.

«շարապնդեմ», «մակստացական», «մակստանամ», «տրամակայեմ», «տրամադրեմ», «յարաբարդութիւն», «ստորակայ», «բացատուեալ», «գիւրահուպ», «գիւրաթուելի», «գծոխաշարժագոյն», «միջակաձև»,

«պատահեցէ որում և ոչ բնաւ իսկ ունի մակն»,

«ունակացելոց ի նմա հակառակացն գժաւորութեանց»,

«որակութեանց ճաշակականաց գոլով զգայութիւն ի ներքս մտելոց և տրտաբերական»,

<sup>8</sup> Նույն տեղում, տող 86—88:

<sup>9</sup> Նույն տեղում, տող 3—7:

<sup>10</sup> Նույն տեղում, տող 12—14:



«եռանդն շուրջ զսրտին արեան»,  
 «ուսուցելումն զարութիւն անուանել իշխեցելով»,  
 «հոտոցն զգայարանի բնգմիջեցելոց»,  
 «որ մակստացականն է... ունակապէս տրամադրեսցի»,  
 «բստ որում քաջակրթապէս զերկոսին ախորժեմ մակստանալ քեզ»

և այլն:

Ի նրված օրինակները խոսում են այն մասին, որ «Յաղագս խրատու մանկանց» երկն իր լեզվա-ոճական առանձնահատկություններով անհարիր է Հովհաննես Սարկավազի գրելաձևին: Սարկավազը գրում է պարզ, դյուրամատչելի լեզվով, խուսափում է խրթնաբանություններից և հունարան դարձվածքներից: Բավական է համեմատել նրա «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ», «Բանք վասն հինգհարիւրից», «Յաղագս անկիւնաւոր թուոց», «Բան իմաստութեան առ ձագն, որ կոչի սարեկ», «Յաղագս եղանակաց և տօնից», «Յաղագս քահանայութեան և քահանայից» և այլ աշխատությունները մեզ հետաքրքրող բնագրի հետ, որպեսզի համոզվենք, որ այդ համադրումը չի խոսում Սարկավազի հեղինակության օգտին:

Ղ. Ալիշանը և Հ. Ոսկյանը, որոնք առանձին զբաղվել են Հովհաննես Սարկավազի կյանքի և գրավոր ժառանգության հարցերով, նրա լեզվա-ոճական առանձնահատկությունները քննելիս նույնպես նշում են, որ Սարկավազը գրում է սահուն, գեղեցիկ ոճով, երբեմն օգտագործում է հոետորական սեթևեթ դարձվածքներ, սակայն իր միտքը շարադրում է միշտ պարզ, առանց հունարանությունների և մութ ու խրթին նախադասությունների: Նա ունի «բարակամիտ բմբռնումն և վարպետ բացատրություն, լեզու արվեստավոր, բայց հստակ և հայկաբան»<sup>11</sup>, — ասում է Ղ. Ալիշանը: Նույն կարծիքն է պաշտպանում և Հ. Ոսկյանը, որը հատկապես նշում է, թե Սարկավազի ոճի համար շատ բնութագրական է նրա «Յաղագս քահանայութեան» հայտնի քարոզը<sup>12</sup>, որն իր լեզվով շափազանց հեռու է «Յաղագս խրատու մանկանց» բնագրից:

Լեզվա-ոճական այս ակնբախ տարբերությունը մտածել է տալիս, որ գուցե հրատարակիչը իզուր է հավատ բնծայել վերնագրում «Յովհաննու քահ(անայ)ի» անվան հիշատակությանը, որովհետև մեկ բնօրինակությամբ մեզ հասած բնագիրը կարող է ունենալ որոշ թերություններ ինչպես բուն տեքստում, այնպես և խորագրում:

Ո՞վ է այդ «Յովհաննէսը»: Գուցե այդ անվան տակ պետք է որոնել մի ա՞յլ հեղինակի, որը, ի միջի այլոց, բացի վերը նշված հունարանություններից, սիրում է օգտագործել նաև նամակային ժանրին հատուկ արտահայտություններ, ինչպես, օրինակ. «ոչ այժմ կամիմ, այլ քեզ թողուլ իմանալ և խորհել», «հրաժարելով յերկարութենէ բանին», «թուի ինձ», «որպէս վարկանիմ», «աւելորդ ինչ ոչ վարկանիմ», «նշանակեցաւ վերագոյն սուղ մի», և այլն:

«Յաղագս խրատու մանկանց» երկում օգտագործված նման արտահայտությունները, նրա հունարան լեզուն և մանավանդ բովանդակությունը ամե-

11 Ղ. Ալիշան, Հուշիկը հայրենյաց Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 279:

12 Հ. Ոսկյան, Մատենագրական բնություններ, Ա-Հովհաննես Սարկավազ, Վիեննա, 1926, էջ 30, 61, 62—63: Քարոզի բնագիրը աե՛ս «Սոփերը հայկականք», հ. Գ, Վենետիկ, 1853:

նից շատ հիշեցնում են XI դարի խոշորագույն գիտնական, մտածող և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի նամակները, նրա թղթերի բարդ ոճն ու բովանդակությունը, անտիկ և քրիստոնեական հեղինակներին առատորեն մեջբերելու հակումը, ինչպես և տողերի արանքում թաքնված ու հաճախ բացահայտորեն դրսևորվող կրքոտությունը:

Այս սովյալները հուշում են, որ «Յովհաննու քահանայի» անվան տակ կարող է թաքնված լինել Գրիգոր Մագիստրոսի բազմաթիվ թղթակիցներից մեկը, որին նա ուղղել է իր նամակ-երկը, ըստ սովորության վերնագրելով այն:

Նախ, սկսենք վերնագրից: «Յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախօսութեամբ» խորագրի երկրորդ կեսը՝ «սուղ ինչ բնախօսութեամբ» ձևը Մագիստրոսի նամակներում հաճախ հանդիպող արտահայտություններից է, ինչպես, օրինակ, «սուղ ինչ իմաստասիրել»<sup>13</sup>, «սուղ ինչ ըստ մերում սովորական մակացութեան»<sup>14</sup>, «սուղ ինչ մասնատր»<sup>15</sup>, «ելանել սուղ ինչ ի մերում տրամաբանութեան»<sup>16</sup>, «սուղ ինչ իմաստասիրել պղատոնական... մանկանց վարժման առ այնուսիկ, որ հակամիտաբար հեղնիչք լինին»<sup>17</sup> և այլն: Այս արտահայտությունները բնորոշ են Մագիստրոսին, որպես իր թղթակիցներին դիմելու, նրանց որևէ բան հաղորդելու ձև: Ըստ որում Մագիստրոսն արդարացնում է իր այդ հաճախ օգտագործվող արտահայտությունը, գրելով խրթին, սակայն սեղմ, հատու նախադասություններով: Իր նամակներից մեկում նա ինքը շեշտում է այդ հանգամանքը, ասելով՝ «սիրելի է ինձ միշտ կարճառօտ հատանել»<sup>18</sup>:

«Յաղագս խրատու մանկանց» բնագրի հեղինակը նույնպես գիտակցաբար խուսափում է երկարաբանություններից և, ինչպես ինքն է նշում՝ «հրաժարելով յերկարութենէ բանին»<sup>19</sup>, ձգտում է «կարճառօտ հատանել» իր հիմնական ասելիքը:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից հայտնի է, որ նա շատ է սիրում տարբեր առիթներով բառացի կամ սեփական խոսքերով շարադրել Պլատոնի, Արիստոտելի և Դավիթ Անհաղթի մտքերը: Նույնը մենք տեսնում ենք նաև «Յաղագս խրատու մանկանց» բնագրում: Մագիստրոսը, մարդկային հոգու հատկությունները նշելիս, իր երկու նամակներում խոսում է հոգու «յոթնամանակագոյն և յարտևողագոյն» վիճակների ու հատկությունների մասին<sup>20</sup>: Արիստոտելի «Ստորոգություններից» վերցված այս միտքը շարադրում է նաև «Յաղագս խրատու մանկանց» երկի հեղինակը. «ունակութիւն տևողագոյն և յոթնամանակագոյն գոլ սահմանեցաւ» — գրում է նա: — Եւ այդպիսիք են մակացութիւնք և առաքինութիւնք, զի մակացութիւն թուի, ասէ, յարտևողացն գոլ և զժոխաշարժիչն»<sup>21</sup>:

13 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս բնծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապօլ, 1910, էջ 45:

14 Նույն տեղում, էջ 147:

15 Նույն տեղում, էջ 73:

16 Նույն տեղում, էջ 71:

17 Նույն տեղում, էջ 20:

18 Նույն տեղում, էջ 3:

19 Հովհաննես Իմաստասիրի մատենագրությունը, էջ 313, տող 11—12:

20 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 68, 76:

21 Հովհաննես Իմաստասիրի մատենագրությունը, էջ 314, տող 48—51:

Մագիստրոսի սիրելի և բազմիցս օգտագործվող արտահայտություններից մեկը՝ «եռանդն շուրջ զսրտիւ արեանն»<sup>22</sup>, որը նա վերցրել է Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքից», տեսնում ենք նաև «Յաղագս խրատու մանկանց» բնագրում<sup>23</sup>: Հեղինակն այնուհետև շարադրում է համարյա բառացի Դավիթ Անհաղթի միտքը բարեպաշտ և ողջախոհ լինելու, ցանկությունները հաղթահարելու մասին<sup>24</sup>, իսկ հետո, նույնպես հետևելով Դավթին, շեշտում, որ արդար մարդը, եթե ընտրության հարց լինի, պիտի գերադասի զրկանք կրելը ուրիշին զրկանքներ պատճառելուց<sup>25</sup>:

Ինչ վերաբերում է Պլատոնին, ապա պետք է ասել, որ Մագիստրոսը, որպես նորալատոնական փիլիսոփայության ուժեղ ազդեցության տակ գտնվող իմաստասեր, չի թաքցնում իր՝ պաշտամունքի հասնող հարգանքը նրա նկատմամբ: «Հրաշալին Պղատոն», «սրանշելին Պղատոն», այսպիսի ածականներով է օժտում նա իր սիրելի իմաստասերին, որի գործերը նա ոչ միայն բաշ գիտե, այլև ցանկացել է մի քանիսը թարգմանել հայերեն: Պլատոնի անվան բազմաթիվ հիշատակություններից բացի, իր նամակներում Մագիստրոսը հանդամանորեն շարադրում է նրա հայացքները և բազմաթիվ առիթներով կրկնում նրա մտքերը:

«Յաղագս խրատու մանկանց» երկի հեղինակը նույնպես քրիստոնեական գունավորում ունեցող նորալատոնականության հետևորդ է և, բացի հայ նորալատոնական Դավթի հայացքներից, առիթը բաց չի թողնում Պլատոնին հիշատակելու ու նրա գաղափարները շարադրելու համար<sup>26</sup>:

Գրիգոր Մագիստրոսն իր փայլուն հելլենական կրթությունը զուգորդում էր խորը աստվածաբանական գիտելիքների հետ: Նա նույնքան աստվածաբան էր, ինչքան և փիլիսոփա-գիտնական: Այդ հանդամանքը շատ ճիշտ նշել է Մ. Օրմանյանը, ասելով Մագիստրոսի մասին հետևյալը. «Կատարյալ աստվածաբան մը և կրոնքի նախանձախնդիր պաշտպան մը, ինչպես իրմե մնացած գրությունց ամեն մի տողը կհաստատե: Պետք չէ ուրեմն զարմանալ երբոր տեսնենք զինքն կրոնական ձեռնարկումներու զլուխը նույնչափ եռանդով, որչափ հայրապետ մը կրնար ունենալ»<sup>27</sup>:

«Յաղագս խրատու մանկանց» բնագրի հեղինակը լիովին արդարացնում է այդ գնահատականը, ցուցաբերելով իրեն որպես «կրոնքի նախանձախնդիր պաշտպան»: Ինչպես «հայրապետ մը», նա խրատում է եկեղեցու «մանուկներին» և ցույց տալիս այն վտանգը, որ սպառնում է «ճիշտ» ճանապարհից շեղվողներին: Ընդ որում այդ նա անում է և՛ զուտ փիլիսոփայական հիմնավորումների, և՛ աստվածաշնչի հեղինակության օգնությամբ, իսկևիսկ այն-

22 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 48, 71, 74 ևն:

23 Հ. Իմաստ. մատեն., էջ 312, տող 82:

24 Տե՛ս նույն տեղում, տող 86—90: Հմմտ. Դավիթ Անյաղբ. Սահմանք իմաստասիրութեան, հրատ. Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 62 և 88:

25 Հրապարակված տեքստն ազճատված է՝ «բարիոր է զրկել բան եթէ (չ)զրկել» (տե՛ս Հ. Իմաստ. մատեն., էջ 312): Հրատարակիչը չի ուղղել այն և ստացվել է մի անհեթեթ բան: Պետք է լինի՝ «բարիոր է զրկիլ բան եթէ զրկել», ինչպես որ Դավթի մոտ է՝ «իսկ եթէ գէպ լինիցի ընտրել, ընտրել զզրկիլն առաւել քան եթէ զզրկելն» (Դավիթ Անյաղբ. Սահմանք իմաստասիրութեան, էջ 96):

26 Տե՛ս Հ. Իմաստ. մատեն., էջ 313:

27 Մ. Օրմանյան, Ազգայագատում, Բեյրութ, 1959, էջ 1246:

պես, ինչպես այդ սովոր է անել քաջահմուտ հելլենասեր գիտնական, բայց ազանդահալած իշխան և «կատարյալ աստվածարան» Գրիգոր Մազիսարոսը:

Վերջինս, բացի հին հունական փիլիսոփաներից, առատորեն օգտագործելով սուրբ գիրքը, այստեղ ևս ունի իր նախասիրությունը: Այդ աշխարհական փիլիսոփայի, իշխան-աստվածարանի սրտին շատ մոտ է սաղմոսերգու Դավիթը՝ իր իմաստուն, կյանքի անդունդը և բարձունքը լավ գիտցող բանաստեղծ-թագավորը: «Սաղմոսականք մեծին Դավթայ գերագոյն քան զբոլոր մարդարէիցն դասու»<sup>28</sup>, «հայեցայ ի բանս Դավթայ, որ սիրելին է ինձ»<sup>29</sup> և այլ նման արտահայտություններով Մազիսարոսն ինքը կարծես պատճառարանում է իր նամակներում Դավթի սաղմոսներից քաղված մեջբերումների առատությունը և նրա անվան հաճախակի հիշատակումը:

«Յաղագս խրատու մանկանց» բնագրի հեղինակը նույնպես ավելի շատ տեղ է հատկացնում Դավթին, քան մյուս մարգարեներին և երկար հորդորում եկեղեցու «մանուկներին» նրա օրինակով ամեն գիշեր լվանալ իրենց անկողինը զղջման արտասուքով<sup>30</sup>: Բնագրի վերջում հեղինակը նորից հիշում է Դավթին և հիշեցնում նրա խոսքերը հեղ լինելու, «տկարութեամբ զօրանալու» մասին<sup>31</sup>: Այդ երկու մտքերը, ի թիվս Դավթից քաղված բազմաթիվ խոսքերի, մի քանի անգամ հանդիպում ենք նաև Մազիսարոսի նամակներում<sup>32</sup>:

Հետաքրքիր է համեմատել «Յաղագս խրատու մանկանց» բնագրում և Մազիսարոսի նամակներից մեկում արտահայտված այն մտքերը, որոնք վերաբերում են ուսման նշանակությունը, ինչպես և այն բովանդակությունը, որ հեղինակները գնում են տվյալ հասկացության մեջ:

#### «Յաղագս խրատու մանկանց»

#### Գր. Մազիսարոսի քղբերը

Քաջագէտ և բարեվայելուչ առաւել մանկական բուսոյ է ժամանակ:

...նախախնամական հրամանի անսալով Աստուծոյ: Իսկ մարդ վայրենամտեալ յանուսումնութենէ առաւել քան երէ ի շարտրամաղբութենէ և յունակութենէ: (էջ 308 և 309):

Եթէ լինի և ոչ երկիւղին Աստուծոյ ի մանկական տխն վարժի. կարծեմ եթէ ոչինչ օգտէ, բանգի շար ախտ անձին հանդիպի ի վատթար հրահանգից և յանուսումնութենէ և ի շար ունակութենէ: (էջ 69):

Մտքերի և արտահայտությունների համընկնումներն ու նմանությունը ակներև են: Երկու դեպքում էլ ուսումն ու իմաստությունը դիտվում են որպես աստվածային պատվիրանների գիտություն, որոնց հիմքերը երկյուղի հեամիասին պետք է արմատավորեն ամենահարմար ժամանակին՝ մանուկ հասակում:

Մազիսարոսի նամակների և «Յաղագս խրատու մանկանց» բնագրի միջև բացի լեզվա-ոճական ու զաղափարական զուգադիպումներից, կան նաև այլ կետեր, կապված հեղինակին ժամանակակից մարդկանց ու իրադրության հետ:

<sup>28</sup> Գր. Մազիսա. թղթ., էջ 54:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>30</sup> Հ. Իմաստ. մատեն., էջ 310—311, տող 4—19:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 315, տող 13 և 18:

<sup>32</sup> Տե՛ս Գր. Մազիսա. թղթ., էջ 56—57, 127, 149 ևն:

Այդ առումով առաջին հերթին նշելի է Գրիգոր Մազիստրոսի մի նամակը, որն իր բովանդակությամբ, մեր կարծիքով, լույս է սփռում «Յաղագս իրատու մանկանց» երկի ստեղծման հանգամանքների վրա: Դա Մազիստրոսի թղթերի ժողովածուի ժԳ նամակն է<sup>33</sup>, ուղղված Սյունյաց արքեպիսկոպոս Հովհաննեսին ի պատասխան նրա գրության: Մազիստրոսի մտերիմ բարեկամ և համախոհ Հովհաննեսը երկար տարիներ (1006—1056 թթ.) գլխավորել է Սյունյաց թեմը: Մազիստրոսի նամակներից իմանում ենք, որ նա խորը հարգանք ու սեր է տածել Հովհաննեսի նկատմամբ: «Յիմոյ լուսածուիդ», «հայր իմ և աէր, սնուցիչ և վարդապետ», «ողջ լեր, փոխան Յիսուսի», «հովիտ քաջ», այսպիսի բառեր է շաղկում Մազիստրոսը նրա հասցեին:

Հովհաննեսին ուղղված նամակից երևում է, որ Սյունիքում տեղի են ունեցել ինչ-որ վտանգավոր իրադարձություններ, որոնց մասին Հովհաննեսը տեղեկացրել է Մազիստրոսին հատուկ նամակով և խորհուրդ ու օգնություն խնդրել նրանից: «Ծանեայ ոչ թէ միայն զգծագրեալս,—պատասխանում է նրան Մազիստրոսը,—այլ և զոր ոչն կամեցար յայտնել զազեա տարակուսանաց քոց և զոր ինչ կրես ի բազմաց և կորստական արանց նիրեալ և յոմանց յուղեցեալ և յոմանց ըղձալով և փափագմամբ զվայրաքարշումն մերոյ մանկանց մտազիրութեամբ զառ ի շար կոյս... և զտեղ խոկումն խարդաւանող խուզման առ ի մեղկումն և ի կենցաղականս անկենցաղ կենցաղաւարութեան քարշումն»<sup>34</sup>:

Այս ինչ «բազմաց և կորստական արանց» մասին է խոսքը, որոնք քաշում են եկեղեցու «մանկանց» «զառ ի շար կոյս» և «ի մեղկումն»:

Հովհաննես Եպիսկոպոսին գրած նամակից երևում է, որ Սյունիքի դեպքերը ինչ-որ կապ ունեն եկեղեցու համար վտանգավոր շարժման հետ: Այդ պատճառով է, որ Մազիստրոսը խոսում է «բազմաց և կորստական արանց» մասին, որոնք «կորստական վարժմամբ արմատաւի խլեցեան աւերեալ և տապալեալ զայսպիսի արձան հաւատոյ»<sup>35</sup>, որ այդ «զառ ի շար կոյս» քարշող «երկակենցաղ զազանները» պարզապես քրիստոնեության թշնամիներ են<sup>36</sup>:

Մենք համաձայն չենք Մազիստրոսի թղթերի հրատարակիչ Կ. Կոստանյանցի հետ, որն այս նամակը գնահատելիս ասում է, թե «ժԳ թուղթն հանդես է բերում մի ինչ-որ բնտանեկան գծաություն»<sup>37</sup>: Այս նամակից հստակ երևում է, որ Մազիստրոսը «բնտանեկան գծաությանը» չէ, որ անհրաժեշտ է համարում միջամտել, նա հույս էլ չունի ուղղելու «կորստական արանց» և «երկակենցաղ զազաններին»: Նրան հետաքրքրում է հոտը, եկեղեցու «մանուկները», որոնք անուսումն ու անփորձ լինելով «ոչ ուրեմն զզան, խափանեալք ի զգայութենէ, զչար վարդապետութեանն նոցա խրատ»<sup>38</sup>:

Ինչպես տեսնում ենք, խոսքն այստեղ «շար վարդապետութեան» մասին է և ոչ թե ինչ-որ բնտանեկան գծաության: Նման գծաությանը միջամտող անձնավորությունը չէր կարող գծավողների մի կողմը որակել այնպիսի ա-

33 Տե՛ս Գր. Մազիստ. թղթ., էջ 46—48:

34 Նույն տեղում, էջ 46 (ընդգծումներն իմն են.—Ս. Ա.)

35 Նույն տեղում, էջ 46:

36 Նույն տեղում, էջ 47:

37 Նույն տեղում, ծանոթագրություններ, էջ 292:

38 Նույն տեղում, էջ 46—47:

ծականներով, որոնք նա, իշխող դասակարգի ներկայացուցիչն ու գաղափարախոսը, սովորաբար օգտագործում է թոնդրակեցիների և թուլալեցիների հասցեին:

Նույն նամակում Մազիստրոսը մեղադրում է ոմն տեր Գրիգորի, որի անգործության ու թուլության պատճառով «չար վարդապետությունը» վտանգավոր ծավալ է ստացել: Բանը հասել է այնտեղ, որ թեմի առաջնորդ, եպիսկոպոս Հովհաննեսը ստիպված է եղել նամակով տեղեկացնել իր մտերիմ Մազիստրոսին Սյունիքում ստեղծված իրադրության մասին: Մազիստրոսը չի հապաղել պատասխանելու նրան սույն կարճ նամակով (թուղթ ԺԳ) և մի այլ, ըստ երևույթին, ընդարձակ գրություն: «Գրեալ էմք առ տէր Գրիգոր, — ասում է Մազիստրոսը, — և առ եպիսկոպոսդ, զորոյ զհաւասար զբոյլ ի քիկանէ տառիդ ընրեցցիս. և զԳրիգորոյն կարի խստագոյն և առանց երկպառակութեան: Յուսամք, երէ լսեն. և եթէ ոչ, զու զտեղի կալցիս յեպիսկոպոսարանիդ և մի ուրեք այլ այսր անդր կամ սպառնալիօք կամ ումեկօք, մինչև եկեսցէ պատասխանի զբոյլ»<sup>39</sup>:

Մազիստրոսի այս երկրորդ, դրեթե միաժամանակ գրված նամակը, որի մասին նա ուղղակի ակնարկում է, կարծում ենք, հենց մեզ հետաքրքրող «Յաղագս խրատու մանկանց» բնագիրն է, որը, ամենայն հավանականությամբ, պետք է ունեցած լիներ այսպիսի վերնագիր՝ «[Պատասխանի գրոյն] Յովհաննու քահանայապետի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախօսութեամբ»: Այստեղ ըստ էության ընդարձակորեն քննարկված են այն հարցերը, որոնք նա համառոտակի շոշափել է ԺԳ նամակում («զվայրաբարշում մերոյդ մանկանց մտադիւրութեամբ զառ ի շար կոյս»):

Համեմատենք նույն Հովհաննեսին՝ Մազիստրոսի կողմից գրված նամակների վերնագրերը մեր առաջարկածի հետ: Օրինակ, ԺԱ նամակի վերնագիրն է՝ «Պատասխանի թղթոյն Յովհաննիսի Սյունյաց արքեպիսկոպոսի յաղագս Վահրամայ հօրեղբօր իւրոյ կատարման մարտիրոսութեամբ»<sup>40</sup>, կամ ԺԲ նամակի վերնագիրը՝ «Առ արքեպիսկոպոսն վասն ձկանց սուղ ինչ իմաստասիրել»<sup>41</sup>:

Կարծում ենք, որ վերնագրի մեր առաջարկած ձևը ժամանակի ընթացքում աղճատվել է գրիչների կողմից. առջևից բնկել է երկու բառ («պատասխանի գրոյն»), իսկ «քահանայապետի» բառը (որը եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի հոմանիշն է), կրճատվելով կամ սխալ հասկանալով, հետագայում հասկացվել է որպես «քահանայի», և վերնագրի սկզբի մասից պահպանված «Յովհաննու քահի» բառերը փաստորեն միակ հիմքն են դարձել «Յաղագս խրատու մանկանց» բնագիրը Հովհաննես Սարկավազին վերագրելու համար:

«Յաղագս խրատու մանկանց» գրվածքը մի ընդարձակ նամակ է, և այն, մեր կարծիքով, որոշակի լույս է սփռում Մազիստրոսի և Սյունյաց արքեպիսկոպոս Հովհաննեսի նամակագրության, հատկապես Մազիստրոսի ԺԳ և ԺԴ նամակների վրա: ԺԳ նամակը և «Յաղագս խրատու մանկանց» խորագիրը կրող թուղթը, կարծում ենք, գրված պետք է լինեն միաժամանակ՝ ԺԴ նամա-

39 Նույն տեղում, էջ 47—48 (ընդգծումներն իմն են—Ս. Ս.):

40 Նույն տեղում, էջ 36:

41 Նույն տեղում, էջ 45:

կից առաջ: Այդ երեք նամակները կապված են իրար հետ և գրվել են ի պատասխան Սյունյաց քահանայապետ Հովհաննեսի նամակին՝ Սյունիքում տեղի ունեցած ազանդավորական, ըստ երևույթին, թոնդրակյան խլրատումների առիթով:

Իր առաջին (ԺԳ) նամակում Մազիստրոսը խորհուրդ է տալիս քահանայապետին առաջժամ շգիմել այլ միջոցների և շհեռանալ եպիսկոպոսարանից. «մինչև եկեսցէ պատասխանի գրոյդ», որպեսզի նա՝ Հովհաննեսը, ստանալով Մազիստրոսի ընդարձակ նամակ-խրատը և հրապարակելով այն, տեսնի նրա ազդեցությունը մուրրյալների վրա, հետևի դեպքերի հետագա ընթացքին և տեղեկացնի Մազիստրոսին դրանց մասին: Մազիստրոսը հայտնում է նրան իր հասցեն՝ «մեր առժամանակս այսր եմք ի Տարօն աշխարհիս Մամիկոնէից»<sup>42</sup>:

Եվ ահա Մազիստրոսի՝ Հովհաննես եպիսկոպոսին ուղղած հաշորդ (ԺԳ) նամակից իմանում ենք, որ Սյունիքում ստեղծված վտանգավոր իրադրությունը փոխվել է. «ապա մինչ կայի կարկառեալ արիւնեռանդն յուզեալ, եկն եհասքոյդ հրեշտակ և, արտաքոյ խոկման մեր ախտից, զմեզ շիջոյց համոզեալ»<sup>43</sup>: Կարծում ենք, որ Հովհաննեսն իր նամակով տեղեկացնում է Մազիստրոսին նրա խրատ-ուղերձի մասին, որը սրոշակի ազդեցություն է ունեցել թեմի վրա ու կասեցրել ազանդավորական շարժման ծավալումը:

Այդ տեսակետից հասկանալի է դառնում, թե ինչու «Յաղագս խրատու մանկանց» թղթում շոշափված են նաև դավանաբանություն հետ առնչվող փիլիսոփայական խնդիրներ և գաղափարական հերքումն է արված թոնդրակյան շարժման այն հոսանքի, որն ինքը Մազիստրոսը նույնացնում է մանիքեցիների հետ<sup>44</sup>: Այդ հոսանքը, ինչպես հայտնի է, ընդունում էր նյութի՝ աստծո հետ հավասար հավերժ գոյությունը, և այդ դուալիստական փիլիսոփայական սկզբունքի վրա խարսխում իր դավանաբանությունը: Մազիստրոսը սլայքարում է հենց այդ գրույթի դեմ, հերքելով միաժամանակ հին բնափիլիսոփաներին, որոնցից ազանդավորները որդեգրել էին դուալիստական այդ սկզբունքը: «Եւ զի՞նչ հաւասարութիւն է արարչի և արարածոյ», — վրդովված բացականչում է նա «Յաղագս խրատու մանկանց» իր նամակում (էջ 307): Ըստ նրա, դա անհեթեթություն է, որովհետև նյութը, ամբողջ աշխարհը ստեղծված է աստծո բարի կամքով: «Զի թէպէտ և ասեմք ի նիւթոյ զամենայն տեսակագործիլ առ աստուծոյ, (բայց) ոչ ի յարակայէ և յանեղէ, ըստ փիլիսոփայիցն, որպեսզի գոլ յաւիտենից զնիւթն աստուծոյ, այլ առ ի նմանէ նախագոյանալ զնիւթն ի ճահաւորութիւն ընդունել տեսակ խոստովանիմք, որ և զտեսական շնորհեաց» (էջ 306): Մինչ այդ «նիւթ գոյական ոչ էր, իսկ անմարմինն ոչ ինչ է, քանզի և ոչ նիւթ յայտ է արած գոլ աստուծոյ նախ քան զտեսակագործիլն» (էջ 307):

Իդեալիստական մոնիզմի գիրքերից հերքելով թոնդրակեցիների դուալիզմը, Մազիստրոսը շեշտում է, որ պետք է ամեն մարդու մեջ «զօրութեամբ» առկա բանականությունը ինչքան հնարավոր է շուտ արթնացնել «ուամամբ և երկասիրութեամբք առաքինագործել և լինել կատարելամիտ» (էջ 307): Այդ

42 Գր. Մազիստ. թղ., ԺԳ, էջ 48:

43 Նույն տեղում, ԺԳ:

44 Տե՛ս նույն տեղում, էջ, 159, 164 և 168:

անհրաժեշտ է անել, որպեսզի հավատացյալների մտքերը չպղտորվեն թյուր գաղափարներով, որպեսզի նյութը չիշխի հոգու վրա, որովհետև հակառակ դեպքում «մարմին բնացեալ հաղթահարէ զգայութիւնս, և զգայութիւնք ապստամբեալ հարստահարեն զմիտս, և ախտք արտաքս ըստ սահմանն մուլեղնաբար ելանելով ի զգայութենէ՝ գիտեն զբովանդակ անզգամութիւն շահեալ» (էջ 309):

Նա շարադրում է մարդկային հոգու հատկությունների մասին Արիստոտելի, Պլատոնի, Ջենոնի և Դավիթ Անհաղթի ուսմունքները՝ ցույց տալու համար, թե ինչպես ուսման միջոցով պետք է արթնացնել մարդու միտքը և ճիշտ ուղղություն տալ նրան: Այդ բոլորից հետո, կարծես դիմելով ինչ-որ կենդանի հակառակորդների, նա ուղղակի ամբաստանում է. «յանուսումնութեանն անգիտութենէ անհունք են մոլորութիւն և անբոյժ հիւանդ դժնդակութիւն [զոր] բերեք յաշխարհ ամենայն, քանզի զոր ինչ և արասցէ որ ի շարեաց կամ անուանագործեսցէ նորոգապէս, զնա գտանիցէ արմատ և սկիզբն բոլորեցուն» (էջ 315): Այնուհետև հեղինակը, եզրափակելով իր՝ մոլորված «մանկանց» ուղղված խրատը, հարում է սպանիչ ածականների մի այնպիսի շարան, որը աղանդավորների երեսին շարտում էին իշխողները. «կոապաշտութեան վարդապետ, գիշութեան և պղծութեան առաջնորդ, սպանութեան դաստիարակ, ազահութեան ստորակա, որովայնի ծառայեցուցիչ, ստորութեան և նենգութեան հայր, և պարզաբար ասել՝ ամենայն բարեաց իսկականաց ամայութիւն և բովանդակ զեղխութիւն, և անօրէն վարուց սկիզբն և կատարած» (էջ 315): Այսպես կարող էին խոսել պաշտոնական եկեղեցու դեմ ըմբոստացած աղանդավորների կամ նրանց ազդեցութեան տակ ընկած մարդկանց հետ:

Պատահական չէ, որ Մագիստրոսը եկեղեցու մոլորված «մանուկների» հարցին կրկին անդրադառնում է թոնդրակեցիների դեմ գրված իր հայտնի նամակում: Նա ասում է, որ «սովորեալ են գայլք այդ (իմա՝ թոնդրակեցիները—Ս. Ա.) հանդերձի ոչխարաց զողանալ մանկունս»<sup>45</sup>: Դատափետելով աղանդավորներին, նա պահանջում է, որ նրանք ձեռք բաշեն միամիտ հավատացյալներից: «Չարեացդ առաջնորդք և մուխրդ, ի բաց կացէք յանմեղաց մանկանցդ, և զօքա եկեալ խոստովանեսցին զյանցանս իրեանց»<sup>46</sup>:

Նույն բանն է ասում Մագիստրոսը նաև «Յաղագս խրատու մանկանց» նամակում, լրիվ շփակելով մոլորվածների առջև եկեղեցու դոճերը. «Յինքեանս եկեալ, զղջանան, դառնան, յոգիս ապաշաւեն, ոռոգանին աղբերք արտասուաց, քէպէտ և անդրէն ընդ կրունկ դառնալ գիտեն, ոչ հնար լինել գործեցելումն յանգործութիւն, որպէս թէ շնացելոյ կոյս լինել կամ սպանողի՝ ոչ սպանող»<sup>47</sup>: Սակայն կրկին փրկության հույս է տալիս նրանց, ասելով որ հարկավոր է զղջալ այնպես, ինչպես այդ անում էր իր սիրելի Դավիթ մարգարեն, որը «զազար և հանգիստ երբէք ոչ անոյր լինել խոստովան և ապաշխարել իբրև զմահապարտ ոխ»<sup>48</sup>:

Այս համեմատությունը ևս ցույց է տալիս, որ «Յաղագս խրատու ման-

45 Գր. Մագիստրոսի թղթերը, էջ 153:

46 Նույն տեղում, էջ 166:

47 Հ. Իմաստ. մատեն., էջ 310, տող 96—100:

48 Նույն տեղում, էջ 311, տող 13—14 (ընդգծումներն իմն են—Ս. Ա.):



կանց» նամակը գրված է աղանդավորների դեմ և ոչ թե «ինչ-որ բնատանեկան դժառնության» առիթով:

Բերված համեմատություններն ու փաստերը վկայում են, որ «Յովհաննու քահանայի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախօսութեամբ» խորագրով գիտական շրջանառության մեջ գրված բնագիրը Գրիգոր Մագիստրոսի նամակներից մեկն է: «Յովհաննու քահանայի» անվան տակ պետք է որոնել Գրիգոր Մագիստրոսի բազմաթիվ թղթակիցներից մեկին, որին նա ուղղել է իր խրատ-նամակը, ըստ սովորության վերնագրելով այն: Գ. Մագիստրոսը հղել է այն Սյունյաց քահանայապետ, արքեպիսկոպոս Հովհաննեսին՝ նրա թեմում տեղի ունեցած աղանդավորական խլրտումների կապակցությամբ: Նամակի լրիվ վերնագիրը պետք է լիներ «Պատասխանի գրոյն Յովհաննու Բահանայապետի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախօսութեամբ»:

Այսպիսով, մենք փաստորեն գործ ունենք Գ. Մագիստրոսի մինչ այժմ անհայտ մնացած նամակի հետ, որը նոր լույս է սփռում XI դարի կեսերին Սյունիքում տեղի ունեցած զեպքերի վրա և միաժամանակ լրացնում է մեր պատկերացումները աղանդավոր փրկիստիա, գրող և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու աշխարհայացքի մասին:

С. С. АРЕВШАТЯН

## ТРУД «О НАЗИДАНИИ ОТРОКОВ» И ВОПРОС О ЕГО АВТОРЕ

### (Резюме)

В сборнике сочинений видного ученого и мыслителя XI—XII вв. Иоанна Саркавага Имастасера (Ереван, 1956) впервые был опубликован труд «О назидании отроков», сохранившийся в единственной рукописи (Матенадаран, № 5619, стр. 119а—133а). Его издатель, проф. А. Абрамян, на основе упоминаемого в заглавии имени «священника Ованнеса» (Иоанна) безоговорочно приписал данный труд перу Иоанна Саркавага.

На основе анализа содержания данного произведения, его стиля и лексики автор статьи приходит к выводу, что оно принадлежит перу известного ученого и политического деятеля XI в. Григора Магистроса. Иоанн не автор, а адресат — архиепископ Сюнийский (1006—1056 гг.), который обратился за помощью к Магистросу в связи с опасным для церкви, по-видимому, еретическим движением. Труд «О назидании отроков» является одним из многочисленных писем Г. Магистроса, в которых автор в свойственной ему эпистолярной форме рассматривает различные философские и церковно-догматические вопросы. Выясняется, что данное письмо-назидание сыграло свою роль, утихомирив распри в Сюнийской епархии. Это подтверждается другими письмами Магистроса к тому же Ованнесу, опубликованными К. Костанянцем («Послания Григора Магистроса», Александрополь, 1910, письма XIII и XIV).

Остававшееся до сих пор неизвестным пространное послание Магис-

троса «О назидании отроков» проливает новый свет на события, имевшие место в Сюнике в середине XI в. и восполняет наши представления о мировоззрении самого Григора Магистроса.

S. S. AREVCHATIAN

L'OUVRAGE „SUR L'EDIFICATION DES ADOLESCENTS“ ET  
SON AUTEUR

(Résumé)

L'ouvrage „Sur l'édification des adolescents“, conservé dans un unique manuscrit (Maténadaran, № 5619, p. 119a—133a), a été publié pour la première fois dans le recueil des oeuvres de l'éminent savant et penseur du XI—XII siècles Yohan Sarkavag Imastasser (Erevan, 1956). Son éditeur, le prof. A. Abrahamian, a attribué sans réserve cette oeuvre à la plume de Yohan Sarkavag (Jean Diacre) en se basant sur le nom du „prêtre Hovhannes“ (Yohan) cité dans le titre.

L'analyse du contenu, du style et de la lexique de cet ouvrage permet à l'auteur de l'article de conclure qu'il appartient à la plume de Grigor Maguistros (Grégoire le Magistre), savant célèbre et homme politique du XI siècle. Hovhannes (Yohan) n'est pas l'auteur, mais le destinataire—l'archevêque de Siounie (1006—1056)—qui s'était adressé à Maguistros pour solliciter son aide contre un mouvement hérétique apparemment dangereux pour l'Eglise. L'oeuvre „Sur l'édification des adolescents“ est l'une des nombreuses épîtres de Grigor Maguistros, dans lesquelles l'auteur examine divers problèmes philosophiques, ecclésiastiques et dogmatiques, dans le style épistolaire qui lui est propre. Il apparaît que la lettre édifiante en question a eu le résultat désiré en apaisant les différents dans le diocèse de Siounie. Ceci est confirmé par les autres lettres de Maguistros adressées au même Hovhannes, publiées par K. Kostaniantz (Les Epîtres de Grégoire le Magistre, Alexandropol, 1910, épîtres XIII et XIV).

La longue lettre „Sur l'édification des adolescents“, inconnue jusqu'à présent, éclaire d'un jour nouveau les événements qui ont eu lieu en Siounie vers le milieu du XI siècle et complète nos notions sur les conceptions de Grigor Maguistros lui-même.

В. А. АРУТЮНОВА-ФИДАНЯН

«ИВЕР» В ВИЗАНТИЙСКИХ ИСТОЧНИКАХ XI в.

В исследованиях византинистов часто встречается утверждение о произвольности этниконов в источниках, освещающих историю империи. Действительно, многие кочевые народы, появившиеся у западных границ Византии (печенеги, узы, половцы), носят традиционное название «скифов», хотя подлинные скифы давно уже сошли с арены истории. Под именем «франков» подвизаются в византийском мире представители самых разных народов Западной Европы. Турки-сельджуки именуются «персами». Армянские авторы называли турок-сельджуков и «персами» и «татчиками». Последнее наименование, сначала прилагаемое только к арабам, позже стало обозначать все народы мусульманского вероисповедания. Даже из этих беглых замечаний видно, что византийские авторы, сохраняя традиционные этниконы<sup>1</sup>, исходили из территориальной или вероисповедной близости народов, обозначаемых одним и тем же названием. И, по-видимому, скорее можно говорить о многозначности этниконов у византийских авторов.

Этнимон «ивер», являющийся предметом исследования в настоящей статье, был особенно многозначен в XI в. Пренебрежение этой многозначностью приводило и приводит к досадным ошибкам в современной историографии.

В греческих источниках XI в. упоминаются три разных Иверии: Западная Иверия — Испания, Иверия — Грузия и Иверия — фема Византийской империи.

Нет необходимости приводить примеры, подтверждающие, что «ивер» из Западной Иверии — испанец, а «ивер» из Грузии — грузин<sup>2</sup>.

Один пассаж «Истории» Михаила Атталиата являет собой весьма своеобразное отражение представлений средневековых византийцев о Западной и Восточной Ивериях и связи между ними. На западном море, — пишет Атталиат, — лежит земля Иверия, называемая также Испанией, которую населяли люди доблестные и храбрые. Римляне, воевавшие с ними, с великим трудом подчинили их себе. Константин Великий «вывез оттуда — из Западной Иверии — немалую часть жите-

<sup>1</sup> Традиционные или библейские названия народов подчеркивали также эрудицию автора.

<sup>2</sup> См., например, об иверах (грузинах) в составе войск Фомы Славянина Georgius Cedrenus Ioannis Skylitzes op. Bonnae, 1838—1839, II, 78, 11—12.

лей и поселил их на Востоке в областях Ассирии, и эта земля получила название Иверии. Прежде ведь эту землю населяли ассирийцы, потом мидяне, затем долгое время армяне и нет никого, кто помнил бы об иверах в более раннее время в древней истории»<sup>3</sup>. Интересно свидетельство Иоанна Цеца об «ивере» как этническом понятии. Иоанн Цец пишет, что «иверы, абасги и аланы составляют единое племя, внутри которого иверам принадлежит «первенство» (Ἰβήρας καὶ Ἀβασγοὶ καὶ Ἀλανοὶ ἐν γένος, οἱ Ἰβήρας, Πρωτεύοντες)<sup>4</sup>.

Гораздо сложнее обстоит дело с ивером — уроженцем фемы Иверия. Этот вопрос требует специального рассмотрения.

Фема Иверия — это административный округ Византийской империи, образованный в царствование Василия II (976—1025) из земель, полученных империей в наследство от последнего тайкского династа Давида Куропалата.

Для того, чтобы выяснить, что понимали византийцы XI в. под словом «ивер» — «уроженец фемы Иверия», — необходимо определить территориальные границы фемы и ее этнический состав. Вопрос о территориальном составе фемы и времени ее существования рассмотрен мною в статье «Из истории северо-восточных пограничных областей Византийской империи в XI в.»<sup>5</sup>, поэтому я приведу здесь только основные выводы статьи.

Сопоставление сведений армянских, греческих и грузинских источников позволяет утверждать, что:

1. Фема Иверия просуществовала с 1001 по 1072/74 г.

2. С 1001 по 1045 г. в фему Иверия входили: Южный Тайк, Карин, Басен, Халтой-арич с Клисурями, Чормайри, Мардали, Харк и Апахуник.

В 1045 г. к этим областям было присоединено Ширакское царство с Ани, который стал столицей фемы.

В 40—50-х годах XI в. в состав фемы вошла Кларджия, а в 1065 г. — земли Карсских Багратидов.

Под натиском турок-сельджуков территория фемы сокращается, и к 1072—1074 гг. она состояла только из Карса, Карина и Южного Тайка.

Каков же был этнический состав фемы Иверия? Карин, Басен, Халтой-арич с Клисурями, Чормайри, Мардали, Харк, Апахуник, Ширакское царство и владения Карсских Багратидов — земли центральной Армении, разумеется, были заселены армянами. Что же касается Кларджии и Тайка, то их население в этот период уже не было однородным. Среди местного армянского населения широко распространя-

<sup>3</sup> Michaelis Attaliothae Historia, Bonnae, 1853, p. 222.

<sup>4</sup> P. Gautier, La curieuse ascendance de Jean Tzetzès, „Revue des études byzantines“, XXVIII, 1970, p. 207. Его информация, безусловно, достоверна, поскольку он, по его собственным словам, происходит „от абасгского корня“ (ibidem., p. 212).

<sup>5</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1:

ется халкидонитство грузинской ориентации и одновременно начинает проникать грузинский элемент<sup>6</sup>.

Византийские авторы XI в., современники образования и существования фемы Иверия (Скилица, Кедрин, Атталиат), часто упоминают Иверию, но чрезвычайно редко их Иверия — это территория Грузинского царства.

Для Атталиата Грузия — это чаще всего Абасгия<sup>7</sup>.

Для того, чтобы выяснить, что понимал Михаил Атталиат под «Иверией», рассмотрим все случаи упоминания Иверии в «Истории» Атталиата.

Византийский хронист рассказывает о нашествии гунов-эфталитов (тюрок-сельджуков), которые «пошли на запад, приблизившись к пределам Иверии (τοὺς Ἰβηρικοὺς ὁρίους) и захватив какую смогли территорию, взяли в плен ромейского правителя по имени Лихуд, облеченного (περιεζωσμένον) властью над Сирией. И постоянными ежегодными набегами этот народ причинил немалый урон ромейской земле. Ромей, поставленные в крепостях и оказавшие им (сельджукам, — В. А.) сопротивление, униженные отступали»<sup>8</sup>. «Поэтому они, грабя городки и села, разрушая большие города и опустошая земли, быстро овладели всей Иверией. Это произошло из-за прежней скупости императора. В Иверии прежде находилось воинственное войско, которое получало опсоний из государственной казны. Император лишил их этого содержания и, сокрушив эту силу, не только погубил своих соратников, но даже усилил врагов и сделал их непобедимыми»<sup>9</sup>.

Далее Атталиат рассказывает, что по приказу императора Константина IX Мономаха (1042—1055) «в пределах Иверии» было собрано войско, которое должно было выступить против сельджуков под начальством князя Липарита<sup>10</sup>.

Как мы видим, во всех трех отрывках речь идет об Иверии, находящейся в Византийской империи. Эта область подчиняется ромейским правителям, в ее крепостях стоят гарнизоны под управлением ромеев, местные военные силы получают содержание из имперской казны и могут быть распущены или вновь собраны по приказу императора ромеев. Совершенно очевидно, что эта Иверия — фема Византийской империи.

Атталиат пишет, что вследствие набегов тюрок-сельджуков и пренебрежения воинскими делами со стороны правительства Византии «счастливая земля Иверии была совершенно разграблена и опустошена и

<sup>6</sup> *Георгий Мерчул*, Житие св. Григория Хандзгийского, грузинский текст, Введение, издание, перевод Н. Марра, СПб., 1911, стр. XVI—XVII, см. также о содействии Багратидов распространению халкидонитского вероисповедания (стр. 92 (1—4), 96 (50—54), (106—107). Ср. *Р. М. Бартиян*, Критические заметки о завещании Евстафия Воилы (1059), Византийский Временник, т. XIX, стр. 32; *Н. Я. Марр*, Дневник поездки в Шавшню и Кларджию, СПб., 1911, стр. 100.

<sup>7</sup> *Michaelis Attaliothae Historia*, Bonnae, 1853, 231, 17, 235, 11, 14, 18.

<sup>8</sup> *Att.*, 44, 7—15.

<sup>9</sup> *Ibidem*, 18—23.

<sup>10</sup> *Ibidem*, 45, 2—9.

той же страшной участи подверглись и находящиеся рядом с нею области Месопотамия и Халдия, Мелитена и Колония и земли, лежащие по р. Евфрату»<sup>11</sup>. В этом отрывке Атталиат перечисляет византийские фемы, ставшие ареной набегов сельджуков, и на первое место ставит Иверию, поскольку в силу своего географического положения эта область первой принимала на себя удары кочевников. Атталиат отмечает, что город Ани был «великой крепостью» (μεγίστην χάρακον), которая «служила нам защитой от варваров, стремившихся вторгнуться в Иверскую область» (ἐς τὴν Ἰβηρικὴν)<sup>12</sup>. Э. Хонигман, перечисляя основные укрепленные пункты, защищавшие восточные границы Византийской империи после образования фем Васпуракан, Тарон и Иверия, называет «крепости Васпуракана на берегу оз. Ван, Манцикерт, укрепленные города Тайка и крепость Ани»<sup>13</sup>.

Размышляя над причинами победоносного движения сельджуков, Атталиат приходит к выводу, что «такое нашествие язычников и истребление народов, подвластных ромеям, было следствием божьего гнева против еретиков, населяющих Иверию и Месопотамию и распространившихся до Ликанда и Мелитены: армяне, иудеи, исповедующие несторианскую и акефалическую ересь»<sup>14</sup>. В этом пассаже речь идет вновь об Иверии, подвластной ромеям и упоминаемой наряду с другими византийскими фемами.

Рассказывая о походе Романа IV Диогена (1068—1071), Атталиат упоминает среди фем, по которым он проходил, и область τῶν Ἰβηρικῶν<sup>15</sup>. После поражения под Манцикертом Роман некоторое время находился в Феодосополе, «затем он решил идти в ромейскую землю» и в числе других областей прошел и через иверийские земли<sup>16</sup>. Имеется в виду, несомненно, фема Иверия, поскольку речь идет об Иверии в «ромейской земле».

Из десяти упоминаний Иверии в «Истории» Михаил Атталиат восемь раз имеет в виду византийскую фему, один раз Грузию и один раз Испанию<sup>17</sup>.

У Скилицы Иверия упоминается гораздо чаще. При Романе Лакапине, «в столицу прибыл из Иверии ивер Куропалат. Он был принят с блеском и почестями»<sup>18</sup>. Под Иверией здесь, по-видимому, подразумеваются владения иверских Багратидов<sup>19</sup>, но какие именно—неизвестно. Скилица рассказывает, что, узнав о смерти Давида Куропалата, Василий II отправился в Иверию, чтобы завладеть его землями. «Прибыв

<sup>11</sup> Ibidem, 78, 9—16.

<sup>12</sup> Ibidem, 80, 5—10.

<sup>13</sup> E. Hönigmann, Die Ostgrenze des byzantinischen Reiches, Bruxelles, 1961, p. 178.

<sup>14</sup> Att., 96, 22—23—97, 1—5.

<sup>15</sup> Ibidem, 147, 16—17.

<sup>16</sup> Ibidem, 166, 13—21.

<sup>17</sup> Ibidem, 222, 3—17, см. выше, стр. 46—47.

<sup>18</sup> Skylitz.-Cedren., II, 300, 12—13.

<sup>19</sup> См. выше.

туда и устроив данное ему наследство, и заставив Георгия, архонта внутренней Иверии, управлять собственными землями и не нападать на чужие, (Василий) заключил с ним договор и, взяв в заложники его сына, отправился в Сирию, имея с собой и первых по роду в своей (κατ' αὐτοῦ) Иверии, среди которых самые знатные были братья Пакуриан, Февдат и Ферс, которых он возвел в сан патрикиев»<sup>20</sup>. Земли, полученные Василием II от Давида Куропалата и вошедшие во вновь организованную фему, названы «Иверией» или «его (т. е. Василия II) Иверией». Владения грузинского царя именуется здесь «внутренней Иверией».

В ходе борьбы за наследство Давида Куропалата Панкратий (Баграт), владыка Абасгии, сильно теснил катепана Иверии Иасита<sup>21</sup>. Когда Византия предприняла захват Ширакского царства, то вести войну против Ани было поручено «весту Михаилу Иаситу, который был архонтом Иверии»<sup>22</sup>. После Михаила Иасита дукой Иверии стал Кекавмен<sup>23</sup>. Патрикий Лев Торник почти в то же время был стратигом в Иверии<sup>24</sup>. Позже он поднял мятеж и, чтобы противостоять Торнику, император Константин X Дука «послал в Иверию к Константину гонца... с царской грамотой, приказывающей оставить все... и как можно скорее прибыть с войском к царю»<sup>25</sup>. В этих пассажах рассказывается об области, где сидит наместник империи, следовательно, речь идет о феме Иверия.

В 1048—1049 гг. турки-сельджуки опустошали восточные провинции ромеев. По свидетельству Скилицы, вест Аарон, правитель Васпуракана, и Катакалон Кекавмен, правитель Ани и Иверии, разошлись во мнениях относительно места сражения. Кекавмен полагал встретить врага за пределами империи, но победило мнение Аарона, который предложил, чтобы все войска укрепились на равнине Иверии, называемой местными жителями Осуртру<sup>26</sup>. Поскольку Скилица говорит об Иверии «в пределах Византийской империи», то речь идет, разумеется, о феме Иверия и понятно стремление Кекавмена уберечь свою фему. В ответ на обращение Катакалона и Аарона о помощи император повелел им ждать войска князя Липарита. Однако и соединенным силам трех полководцев не удалось остановить сельджуков. Сельджуки разграбили Васпуракан и Иверию<sup>27</sup>. Липарит попал в плен. После четырехлетнего мира в 1054—1055 г. султан Тогрул-бек вторгся вновь в

<sup>20</sup> Skylitz.-Cedren, II, 447, 13—23. Ниже Скилица вновь упоминает об организации этой фемы (Skylitz.-Cedren, II, 557, 2—5).

<sup>21</sup> Skylitz.-Cedren, II, 519, 5—6.

<sup>22</sup> Ibidem, 557, 23—558, 1—3.

<sup>23</sup> Ibidem, 560, 20. Ср. также 574, 3—4.

<sup>24</sup> Ibidem, 561, 16—19. См. В. А. Арутюнова-Фиданиян, Византийские правители фемы Иверия, Вестник общ. наук АН Арм. ССР, 1973, № 2, стр. 70—72.

<sup>25</sup> Skylitz.-Cedren., II, 562, 7—10.

<sup>26</sup> Ibidem, II, 575, 15—16, 576, 1—4.

<sup>27</sup> Ibidem, 576, 9—22.

пределы империи. Скилица отмечает, что вся Иверия, т. е. фема Иверия, была заполнена укрепленными крепостями, в которых укрылись жители<sup>28</sup>.

Византийское правительство намеревалось послать для борьбы с сельджуками «в Иверию» печенегов. Это предприятие не увенчалось успехом, печенеги вернулись на Балканы<sup>29</sup>. В этом контексте речь идет, разумеется, о феме Иверия, поскольку Византия беспокоилась об обороне собственных областей.

Скилица рассказывает, что сельджуки осадили Карс и захватили весь город, кроме акрополя, затем все их войско вступило в Иверию. Находясь в Иверии, султан Тогрул-бек опустошал ее огнем и грабежом. Император поэтому, спешно отозвав Михаила Аколуфа с Запада, посылает его в Иверию. Михаил, собрав «рассеянных по Халдии и Иверии франков и варягов», воспрепятствовал дальнейшему продвижению султана<sup>30</sup>. Речь идет об областях, где расквартированы наемные отряды империи, т. е. Иверия здесь опять-таки — фема Византии.

Նիկեփոր Փոկասի հաջորդ՝ նույնպես հայազգի Հովհաննես Չմշկիկ (969—976 թթ.) կայսեր կարգադրությամբ կազմվում է Սուրբ Լեոն առաջին կանոնադրությունը (Տիպիկոն), որը և հաստատվում է կայսեր կողմից 971 թ.:

Դեռևս սբ. Աթանասիոսի ժամանակ Աթոնի վանքը աչքի էր ընկնում իր անդամների էթնիկական խաչտարղետությամբ: Բացի հույներից, այստեղ կային հույներին դավանակից վրացիներ և վրացազավան հայեր (հայ-քաղկեդոնիկներ): Վերջիններս աղբյուրներում պարզապես վրացիներ են կոչվում<sup>1</sup> (Վթղբեշ): Կային նաև Իտալիայից եկած լատիններ:

<sup>1</sup> Н. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах. Отдельный оттиск из „Византийского Временника“, том XII, 1905, стр. 40.

X դարի վերջում, դեռևս սբ. Աթանասիոսի կենդանության օրոք, հիմնադրվում է Իվիրոն վանքը, որի առաջին անդամներից մեկն է դառնում Հովհաննես-Քոռնիկը<sup>2</sup>, ինչպես և նրա եղբայր Վարազվաշեն<sup>3</sup>:

Այնուհետև Աթոնում կառուցվում են բազմաթիվ վանքեր, որոնցից նշանավոր է Վատոպեղիոնի վանքը: Ահա Աթոն լեռան բազմաթիվ վանքերից ամենանշանավոր դերը խաղացել են վերոհիշյալ երեքը՝ Լավրան, Իվիրոնը և Վատոպեղիոնը, որոնցից յուրաքանչյուրը պաշտոնապես կոչվել է «Մեծագույն վանք» (μεγίστη μονή):

Հայ միջնադարի պատմությամբ զբաղվող մասնագետի համար, անտարակույս, կարևոր է իմանալ, թե ինչպիսի դեր են խաղացել հայերը Աթոնում: Այդ մասին աղբյուրները, զժրախտաբար, շատ քիչ նյութ են մատակարարում և պատահական չէ, որ ուսումնասիրողները հիմնականում բավարարվել են Չորավանեկի վերոհիշյալ սրդիների՝ Վարազվաշեի և Հովհաննես-Քոռնիկի խաղացած դերի ուսումնասիրությամբ<sup>4</sup>: Պետք է ասել, սակայն, որ կողմնակի տվյալները մեզ իրավունք տալիս էին այդ ուղղությամբ փնտրտուքներ կատարելու:

\* \* \*

Դարերի ընթացքում Աթոնի վանքերում կուտակվել են հսկայական քանակությամբ ձեռագիր մատյաններ, որոնց ուսումնասիրության գործով զբաղվել և զբաղվում են բազմաթիվ մասնագետներ: Լավրայի վանքի մատենադարանում, օրինակ, պահվում է շուրջ 2500 ձեռագիր մատյան, Վատոպեղիոնում՝ 1200, Իվիրոնում՝ 1500: Աթոնի բոլոր վանքերում միասին վերցրած կա շուրջ 12.000 ձեռագիր: Բացի ձեռագիր մատյաններից, այնտեղ պահվում են անգնահատելի արժեք ներկայացնող հսկայական քանակությամբ կալսերական, պատրիարքական հրովարտական, կարգադրություններ, անտեսական փաստաթղթեր և այլն:

Լավրայի վանքի մի հունարեն փաստաթուղթ իր ոչ հունարեն մի քանի

<sup>2</sup> Կարինի մոտ պահպանվել է խաչքարի վրա գրված նրա հայերեն վիմագիր արձանագրությունը, որտեղ գրված է. «(Յ)անուն Աստուծոյ եւ Յովանէ... որդի Չորավանեկի կանգնեցի զխաչս զայս ի ժամանակին Վասիլէ (կարգա՛ Վասիլ և) Կոստանդին...»: Առաջին անգամ հրատարակել է Ն. Սարգսյանը: Տե՛ս նրա Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 79: Արձանագրության ճշգրտված ընթերցումը տվել է Ն. Ակիևյանը: Տե՛ս նրա Քոռնիկյանց ճյուղագրությունը: Մատենագրական հետազոտություններ, հտ. Գ, Վիեննա, 1938, էջ 62: Նաև՝ N. Adontz, Tornik le Moine, In Etudes Arméno-Byzantines, Lisbonne, 1965, p. 309. Հովհաննես-Քոռնիկը Աթոնի վանքին նվիրել է իր կարգադրությամբ 977-ին և 981-ին գրված երկու վրացերեն ձեռագիր մատյաններ:

<sup>3</sup> Անիում պահպանվել է Վարազվաշեի հայերեն վիմագիր արձանագրությունը, որտեղ գրված է. «Յանուն Աստուծոյ եւ Յովանէ Վարազվաշէ որդի Չորավանիկի կանգնեցի զխաչս»: Տե՛ս Ն. Ակիևյան, նշ. աշխ., էջ 66:

<sup>4</sup> Ն. Ակիևյան, նշ. աշխ.: նաև՝ P. Peeters, Un colophon géorgien de Tornik le Moine, Analecta Bollandiana, t. L, fasc. 3-4. Ավելի հանդամանալից՝ N. Adontz, Tornik le Moine, pp. 297-318.

բառերով ահա պատճառ դարձավ սույն հողվածի հանդես գալուն<sup>5</sup>: Փաստաթուղթը կազմված է մագաղաթի վրա (433×405 մմ.) աշխարհի արարչագործության 6543 թվականի (մ. թ. 1035 թ.) ապրիլին Լավրայի առաջնորդ (պոռտոս) Թեոկտիստոսի կողմից և մի կարգադրություն է, որի համաձայն վանական և քահանա Վասիլիոսը նշանակվում է սբ. Նիկողայոս վանքի վանահայր: Նրա տեղակալ է նշանակվում ոմն Գերասիմոս, որը, Վասիլիոսի հայեցողությամբ կարող է հաջորդել վերջինիս, բայց եթե Վասիլիոսը գտնի, որ Գերասիմոսը դրան արժանի չէ, ապա իրեն հաջորդ կարող է նշանակել մեկ ուրիշի: Փաստաթղթի տակ ստորագրել են Լավրայի առաջնորդ (պոռտոս) Թեոկտիստոսը և այլ վանքերի 24 ներկայացուցիչներ:

Առաջնորդը, պարզ է, ստորագրել է առաջինը. + ΘΕΟΚΤΗΣΤΟΣ, բայց իր հունարեն ստորագրության անմիջապես տակը նպատակահարմար է գտել գրել հայերեն. «Իմ ձեռքս գրեցի Թեոկտիստոս +»: Ե՛վ ստորագրության տեղը (առաջնորդի հունարեն ստորագրության անմիջապես տակը), և՛ անունների համընկնելը, մեր կարծիքով, որևէ կասկած չի թողնում, որ ΘΕΟΚΤΗΣΤΟΣ-ը հայ է: Ստորագրությունից հետո փոքր խաչ է գրված, ինչպես և Թեոկտիստոսի հունարեն ստորագրությունից առաջ:

+ ΘΕΟΚΤΗΣΤΟΣ ΑΓΓ  
 Ի Կարչի ԾՕԻՅՈՒՐ ԽՏԵՆՈՒՔ ՍՉԷՆԻՍՏՈՒՆԳԿՍԻՏ

Թեոկտիստոսի վերոհիշյալ հայերեն ստորագրության մեջ հետաքրքրական է «աւ» երկբարբառի «ո»-ով փոխարինելը («ձեռքս» փխ. «ձեռաւքս»), «ք» տառի գրության ձևը և անվան վերջին 3 տառերի սղված գրությունը:

Քանի որ Աթոնում ընդհանրապես և Մեծ Լավրայում մասնավորապես հայ-միաբնակների առկայության մասին խոսք չի եղել չի կարող, ապա պիտի ենթադրել, որ Թեոկտիստոսը հայ-քաղկեդոնիկ էր՝ «վրացի», ինչպես այն ժամանակ անվանում էին վրացադավան հայերին<sup>6</sup>:

Լավրային 1035 թ. փաստաթուղթը վկայում է, որ վրացադավան հայերը լայն գործունեություն էին ծավալել ոչ միայն Իվիրոն վանքում (այդ մասին մենք արդեն գիտեինք), այլ հենց Մեծ Լավրայում, այն էլ նրա հիմնադրումից ընդամենը 70 տարի անց:

<sup>5</sup> Խորին շնորհակալություն ենք հայտնում ակադեմիկոս Paul Lemerle-ին (Collège de France, Փարիզ) խնդրո առարկա փաստաթղթի լուսանկարը մեզ տրամադրելու համար: Փաստաթուղթը վերջերս հրատարակվել է „Archives de l'Athos“ ժառանգաբար 5-րդ հատորում (փաստաթուղթ № 29), „Actes de Lavra I, Des origines à 1204, par P. Lemerle, N. Svoronos, A. Guillou, avec la collaboration de D. Papachryssanthou, Paris, 1970, Փաստաթղթի ֆոտոպատճենը հրատարակված է նույն հատորին կցված սլյուծում (№ XXIII):

<sup>6</sup> Այդ իմաստով բացառված չէ, որ Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունից առաջ հանդիպող Γεώργιος 6 \*ԴՊՐ ստորագրության տեղը նույնպես վրացադավան հայ է եղել:



Մեծ Լավրացում 1035 թ. հազվագյուտ փաստաթղթի ստորին մասի լուսանկար պատճենը

Խնդրո առարկա փաստաթղթի լույսի տակ հաստատվում և իմաստ են ստանում դրանից մտա կես դար հետո կազմված Գրիգոր Բաղուրյանի Պետրիցոսի վանքի կանոնագրության (Տիպիկոնի) վերջում գրված խոսքերը, թե այդ կանոնագրությունն «ստորագրվեց իմ կողմից»<sup>7</sup> Արևմուտքի մեծ դոմեստիկոս, սեկստոս Գրիգոր Բաղուրյանի՝ հ ա յ ե ր ե ն տ առ եր ով<sup>8</sup>» (ὁ πεγράφη παρ' ἐμοῦ τε αὐτοῦ τοῦ σαβαστοῦ Γρηγορίου καὶ μεγάλου δομestικου τῆς δόσεως τοῦ Πακουριανοῦ διὰ ἀρμενικῶν γραμμάτων):

«Իմ ձեռքս գրեցի Քեոկտիստոս»: Մրանք առաջին հայերեն բառերն են, որ հայտնաբերվում են Աթոնում: Պիտի հուսալ, որ դրանք վերջինը չեն լինի: Հետախուզումներն այդ ուղղությամբ նոր փաստեր պիտի հանդես բերեն, որոնք պիտի հարստացնեն մեր գիտելիքները Աթոնում հայ-քաղկեդոնիկների խաղաղած դերի մասին:

Р. М. БАРТИКЯН

## АРМЯНСКАЯ ПОДПИСЬ ПРОТА ВЕЛИКОЙ ЛАВРЫ ФЕОКТИСТА

(К вопросу о деятельности армян-халкедонитов на Афоне)

(Р е з ю м е)

Сведения о деятельности армян-халкедонитов (Ованнеса и Варзаче Торникянов) в Афонском монастыре Ивирон общеизвестны. Но один, пока что единственный в своем роде, важный документ, написанный на греческом языке и датированный 6543 г. от сотворения мира (1035 г.), свидетельствует о деятельности армян также в Великой Лавре. Под этим документом стоят 24 подписи монахов, первая из которых принадлежит проту Феоктисту, который, подписавшись по-гречески, счел необходимым подписаться и по-армянски: «Իմ ձեռքս գրեցի Քեոկտիստոս» (т. е. «Собственноручно подписал: Феоктист»).

В свете этой находки вновь подтверждается подлинность армянской подписи и другого видного деятеля—Григория Пакуриана, основателя Петриционского монастыря в Филиппополе, особо отмечающего, что он подписался под греческим текстом его устава (типика) по-армянски (διὰ ἀρμενικῶν γραμμάτων—„армянскими письменами“).

<sup>7</sup> Մի քիչ հետո Գրիգոր Բաղուրյանը այդ խոսքերն արտահայտել է «սույն ձեռքս ձեռքս գրեցի» («ձեռքս ստորագրեցի») բառերով, այսինքն այնպես, ինչպես Քեոկտիստոսը:

<sup>8</sup> Տե՛ս «Сведения византийских писателей о Грузии», том V, греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчишвили, Тбилиси, 1963, стр. 252.

H. M. BARTIKIAN

LA SIGNATURE ARMÉNIENNE DU PRÔTOS DE LA GRANDE  
LAVRA THÉOKTISTOS

(Sur la question de l'activité des arméniens-chalcédoniens à Athos)

(Résumé)

Les données concernant les arméniens-chalcédoniens (Hovhannes et Varazvatché Thornikian) dans le monastère Ivron d'Athos sont bien connues. Cependant un document fort important, unique en son genre jusqu'à présent, écrit en grec en l'an 6543 de la création du monde (1035) témoigne de l'activité des arméniens également dans le monastère de la Grande Lavra. Ce document a été signé par 24 moines et la première de ces signatures appartient au prôtos<sup>m</sup> Théoktistos qui, après avoir signé en grec, a trouvé nécessaire de signer également en arménien: «Եմ ձեռքս գրեցի թեոկտիստոս» («J'ai signé de ma propre main: Théoktistos»). Cette découverte confirme l'authenticité de la signature arménienne d'une autre personnalité éminente Grigor Bakourian (Grégoire Pakourianos), fondateur du monastère de Petritzos à Philippopolis, qui note en particulier qu'il a signé le texte grec du typikon du monastère en arménien (διὰ ἀρμενικῶν γραμμάτων—«en caractères arméniens»).

ԽՈՍՐՈՎ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՎՐԱՑԵՐԵՆ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1

Արքայազն Վախթանգը իր Օրինագրքի սկզբում (հոդվ. 2), որը նրա կազմած Հավաքի քաղկացուցիչ մասն է, գրում է. «Վրաստանի թագավորները շատ անգամ մեծապես բարձրացած են եղել ու կառավարել են ըստ իրենց կամքի, սակայն շատ անգամ էլ, ժամանակների ու հանգամանքների փոփոխման հետևանքով, այնպես են անզորացել (ընկել), որ միայն թագավոր անուն է մնացել, որովհետև հարկավորը չեն կարողացել անել, դատել ու կառավարել են այնպես, ինչպես կամեցել են հպատակները<sup>1</sup>: Սրա ակնհայտից էս ինքս էլ եմ, և տարիքով ինձնից ավագ շատ ուրիշները կան և նրանք էլ այսօրինակ ժամանակներ շատ են տեսել»: Վրաց թագավորների այս վիճակի պատճառները իմանալու և դրանից դուրս գալու ձգտմամբ Վախթանգի ձեռնարկած միջոցառումների, մասնավորապես Օրինաց հավաքի ստեղծման միտումներն ու նշանակությունը գնահատելու համար, անհրաժեշտ է գեթ հպանցիկ ձևով ժանոթանալ Վրաստանի քաղաքական դրությամբն ու սոցիալ-տնտեսական հարաբերություններին քննվող դարաշրջանում:

Գևորգի III-ի վերջին տարիների ու թամարի թագավորության ժամանակ ապրած թեև կարճատև, բայց նշանակալի քաղաքական վերելքից հետո Վրաստանի քաղաքական զարգացման կորագիծը, որոշ ելևէջներով, անընդհատ անկում է ապրում: Մոնղոլական ավերիչ արշավանքներն ու ծանր տիրապետությունը՝ հարկային դաժան քաղաքականությամբ, դրան հաջորդած թուրք-թաթարական պարբերական մահասփյուռ արշավանքները, լրացնելով իրար, բայթայել էին երկրի տնտեսությունը, ավեր ու անմարդաբնակ դարձրել բազմաթիվ շեն ու բարգավաճ քաղաքներ ու գյուղեր. մոնղոլներն ու թուրք-թաթարները արել էին նաև վատթարագույնը՝ գերեվարել ու ոչնչացրել էին երկրի բնակչության զգալի մասը: Այս բոլորը «այնպես էին բայթայել երկրի կենսական ուժերը, որ նա դարերի ընթացքում այլևս չէր կարող դուրս գալ թշվառ վիճակից»<sup>2</sup>:

<sup>1</sup> Հոդվածիս մեջ Վախթանգի «Օրինաց հավաքի» ու նրա մեջ մտնող միավորների («Մովսիսական օրենքներ», «Հայկական օրենքներ» և այլն) խորագրերը տրվում են գլխատառով, առանց շակերտների:

<sup>2</sup>ա Բնագրում. «Իտղուրց ցմատ եղոմցծուտ, ունոց շխամարտեղցծուտ ևա շրոցցծուտ»:

<sup>2</sup> Տե՛ս Н. А. Берძენишвили, В. Д. Дондуа, М. К. Думбадзе, Г. А. Меликушвили, Ш. А. Месхиа, История Грузии, т. 1, Тбилиси, 1962, էջ 264—266: Վրաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակի վերաբերյալ սույն և հետագա շարադրանքի համար տե՛ս նաև Н. Берძენишвили, Очерк из истории развития феодальных отно-

Նույնպիսին էր նաև՝ Վրաստանի ներքին քաղաքական իրավիճակը: Դեռևս Գեորգի III-ի ժամանակ խիստ զգացնել տվող ֆեոդալական կենտրոնախույս մղումները<sup>3</sup>, երկրի տնտեսական ընդհանուր անկման, թագավորական իշխանության թուլացման և, մանավանդ, օտար տիրապետությունների ու թշնամիների արշավանքների հետևանքով աշխուժանալու համար ավելի բարենպաստ պայմաններ գտնելով, այնպես էին զարգացել ու խորացել, որ XVI դարի սկզբին Վրաստանը վերջնականապես բաժանվեց մի քանի առանձին և հաճախ թշնամական քաղաքական միավորների՝ Քարթլիի, Կախեթի ու Լանքեթի թագավորությունների և Սամցխեի իշխանության: Հետագայում էլ շարունակվում ու ավելի ևս խորանում է Վրաստանի քաղաքական կոտորակումը ֆեոդալական տիրույթների՝ գրեթե անկախ թագավորական իշխանությունից, իսկ XVII դարի 20-ական թվականներին Օսմանյան Թուրքիան և Իրանը Վրաստանը բաժանեցին իրենց միջև. Արևմտյան Վրաստանը Սամցխեի իշխանությամբ անցավ Թուրքիային, Արևելյան Վրաստանը՝ Քարթլի-Կախեթը՝ Իրանին<sup>4</sup>: Հետ այնու Վրաստանի թագավորները նշանակվում էին տիրոջ կողմից ու նրանց պաշտոնյաներն էին: Այս վիճակն է արձանագրում Վախթանգը, երբ իր Ցրենսգրքի 2-րդ հոդվածում գրում է, թե Վրաստանի թագավորները այնպես են անզորացել, որ միայն թագավոր անունն է մնացել: Երկրի ընդհանուր շահերի համար անհրաժեշտ, մասնավորապես թագավորական իշխանությունը ուժեղացնելու, ներքին միջոցառումների ժամանակ ևս թագավորները հաճախ հանդիպում էին թավաղների ուժեղ դիմադրությանն ու խափանիչ գործողություններին, և հենց այդ պատճառով է, որ Վախթանգը գրում է, թե թագավորները շեն կարողանում անել հարկավորը, դատում ու կառավարում են այնպես, ինչպես կամենում են հպատակները, այսինքն՝ թավաղները: Քաղաքական այս բարդություններին ավելանում էր ևս մեկը, դասակարգային հարաբերությունների լարվածությունը: Շինականության գրությունը չափազանց ծանր էր. շահագործումը ինքնին ծանր լինելով՝ ավելի

шенный в Грузии (XIII - XVI вв.), *Նույնի՝* ფეოდალური ურთიერთობიდან XV საუკუნეში *Նույնի՝* XVIII ს. საქართველოს ისტორიიდან, *Նույնի՝* საქართველო XVIII, საუკუნეში *Ի ვლ* 6. ბერძენი შვილი, საქართველოს ისტორიის საკითხები, წიგნი II, თბილისი, 1965, 6. ბერძენი შვილი, ვ. დონდუა, მ. დუმბაძე, გ. მელიქიშვილი, შ. მესხია, პ. რატიანი, საქართველოს ისტორია, ტ. I, თბილისი, 1958, ვ. დონდუა, ვახტანგ VI-ის დროინდელი საქართველოს პოლიტიკური ისტორიიდან (1712—1745), მიმომნილველი, ტ. III, 1953, დ. გვრიტიშვილი, ქართველი ხალხის ბრძოლის ისტორიიდან სპარს დამპყრობლების წინააღმდეგ XVIII ს. პირველ ნახევარში, მიმომნილველი, ტ. III, ივ. სურგულაძე, საქართველოს სახელმწიფოსა და სამართლის ისტორიისათვის, ტ. I, ქართლის სახელმწიფოებრივი წყობილება გვიანფეოდალურ პერიოდში, თბილისი, 1952, 4. *Մարտիրոսյան, Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը սպասարկական պայքարում (XVIII դ. 20-ական թվականներ)*, Երևան, 1971:

3 Նույն տեղում, էջ 193—195: Տե՛ս նաև Պատմության նահանգյն Միսական, արարեալ Մտեփաննոս Ծրբեկեան արքեպիսկոպոսի Միսնայ, Քիֆլիս, 1910, էջ 383 և հոգ. Մեծին Վարդանայ Բաճրբեղեցույ Պատմության տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 170—171. Գարեգին Ա. կարդիկու, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 471—474. Վ. Հակոբյան, Գավթի Քորայրեցու հիշատակարանը, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1952, № 8, էջ 113 և հոգ. Լ. Մելիք-Քեզ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 10 և հոգ.:

4 Նույն տեղում, էջ 268:

5 Նույն տեղում, էջ 305:



ևս ծանրացել ու խորացել էր: Դա պայմանավորված էր լրացուցիչ երկու հանդամանքով. ավանդաբար գանձվող հարկերին ու տուրքերին ավելացել էին տիրապետող պետություններին վճարվող հարկերը, և երկրորդ՝ թշնամիների (թուրք-պարսիկների) պարբերական ավերիչ ու մահաբեր արշավանքների, գերեվարությունների և միջֆեոդալական կոռիվների հետևանքով զգալիորեն պակասել էր բնակչության, առավելապես աշխատունակ և արտադրող մասի թիվը, այդ պատճառով հարկերի սրա բաժինը ևս դրվում էր մնացած մասի վրա: Այդ ամենի հետևանքով դասակարգային հարաբերությունները վրաստանում շափազանց սրված էին: Վրաց իշխող խավերը գտել էին գյուղացիների դժգոհությունն ու քմբոստությունը ճնշելու մի վայրենի ձև ևս՝ գյուղացիների վաճառքը օտար առևտրականներին՝ առավելապես թուրքերին: Ստրկավաճառությունը զբաղվում էին «մթավարները, թավաղները, եպիսկոպոսները, իսկ երբեմն նաև՝ գյուղացիների ավազակային խմբերը»: Ստրկավաճառությունը, «որ հատկապես տարածված էր Արևմտյան Վրաստանում, XVII դարից ընդգրկում է համարյա ամբողջ Վրաստանը՝ ամառացնելով գյուղերը, գրկելով դրանք բնակչության ամենալավ, առավել աշխատունակ մասից»<sup>6</sup>: Այդպիսին էր Վրաստանի դրությունը, որի ականատեսն էր, իր իսկ վկայություններ, Վախթանգը:

Սակայն բննարկվող ժամանակաշրջանի Վրաստանը քնութադրվում է ոչ միայն ֆեոդալական մասնատվածություններով, տնտեսական, քաղաքական անդորություններ ու պետականության անկման ցայտուն երևույթներով, այլև այն մեծ ճիգերով, որ դործադրում էին երկրի առաջադեմ խավերը՝ կանխելու տնտեսական-քաղաքական վերջնական փլուզումը: Դրանց մեջ առանձնանում է, ամենից առաջ, ինքը՝ արքայազն, ապա թագավոր Վախթանգ VI-ը:

1676 թ. շահը Քարթլիի կառավարիչ նշանակեց Գեորգի XI-ին: Վերջինս փորձեց դուրս գալ իրանական ենթակայությունից, սակայն գրկվեց զահեից (1688 թ.): 1703 թ. Գեորգիին շահը նորից նշանակեց Քարթլիի կառավարիչ-թագավոր, բայց շուղարկեց Վրաստան, այլ պահեց իր մոտ Իրանում, իսկ Քարթլիում նրա տեղապահ-կառավարիչ կարգվեց Գեորգիի կեան եղբոր որդի Վախթանգը, որի տեղապահությունը տևեց ութ տարի (1703—1711 թթ.)<sup>7</sup>: Այս տարիներին արքայազն Վախթանգը զգալի գործ կատարեց Քարթլիում գյուղատնտեսությունը, արհեստագործությունն ու առևտուրը աշխուժացնելու, գյուղացիների ծանր դրությունը ինչ-որ շափով թեթևացնելու, թավաղներին որոշ շափով սանձահարելու բնագավառում, դիմեց ռազմա-քաղաքական այլևայլ քայլերի: Վախթանգը ծավալեց նաև աշխույժ կուլտուր-լուսավորչա-

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 322:

<sup>7</sup> Գեորգի XI-ը 1709 թ. զոհվեց պարսկա-աֆղանական պատերազմում. Քարթլիի զահե անցավ նրա կեան եղբոր որդի Քելխոսրովին, որը 1711 թ. դարձյալ զոհվեց նույն պատերազմում: Քարթլիի զահե ստանալու համար 1712 թ. արքունի դուռը գնաց Վախթանգը՝ նախորդի եղբայրը: Իրանը վաղուց հետև կարգ էր հաստատել, որի համաձայն վրաց թագի թեկնածուները կարող էին ծառանգել զահե, եթե հրաժարվեին բրիտանիությունից և ընդունեին մահմեդականություն: Սպառնում Վախթանգը հրաժարվեց մահմեդականությունը ընդունելուց: Այս առիթով Վախթանգի դեմ դուրս եկան նրա թշնամիները թե՛ Իրանում և թե՛ Վրաստանում, մանավանդ նրա եղբայրներ Սիմոնն ու Եսեկ. վերջինս մահմեդական էր և զահե անցավ նրան: 1719 թ. Վախթանգը ընդունեց մահմեդականություն, ստացավ Քարթլիի թագը և 1719 թ. վերադարձավ Վրաստան: Քաղաքական ծանր կացության պատճառով 1724 թ. Վախթանգ VI-ը թողեց Վրաստանը և իր մերձավորներով տեղափոխվեց Ռուսաստան: Մեռավ Աստրախանում, 1737 թ.:

կան գործունեություն՝ «իմաստուն արանց» խմբով, որի կազմակերպիչն ու պլանավորն էր: Վախժանյանը եղբայրական վրաց ժողովրդի մեծ լուսավորիչներից է, վրաց լեզվի ու մշակույթի երախտաշատ գործիչներից մեկը, որը կորստից փրկեց հոգևոր շատ արժեքներ. նա Վրաստանում առաջին տպարանի հիմնադիրն է<sup>8</sup> (1709 թ.) և «Ընձենավորի» առաջին հրատարակիչը (1712 թ.): Վախժանյանը թագավոր էր ու զիտնական, օրենսգետ էր ու օրենսդիր: Վրաց ֆեոդալական խավի առաջավոր մասի վրա հենված, Վախժանյանը իր բոլոր միջոցառումներով ձգտում էր նպաստել երկրի կուլտուր-տնտեսական զարգացմանը, սահմանափակել թավաղների քաղաքական իրավունքները, կարգավորել պետական, վարչական, քրեական ու քաղաքացիական հարաբերությունների բնագավառը, և այդ բոլորը մի նպատակով՝ ամրապնդել մայրամուտ ապրող պետականությունը, ուժեղացնել թագավորական իշխանությունը և հասնել Վրաստանի միավորմանը մի թագավորության մեջ: Այս նպատակների իրականացմանը նպաստելու միտումով Վախժանյանի ձեռնարկած միջոցառումներից մեկն էլ Օրինաց հավաքի ստեղծումն էր, որով, ի մասնավորի, պետք է կարգ ու կանոն հաստատվեր ավատական ինքնիրավչության մեջ, օրինականություն սահմանվեր դատական կամայականության առօրյայում, շրջանակների մեջ առնվեր պաշտոնեության անձնընթաց վարվելակերպը և այլն, որովհետև Վախժանյանի ժամանակ Վրաստանում «դատում ու կարգավորում էին (ვადავებდენ) իրենց իմացությամբ ու ինքնազուխ, ոմանք՝ ազգակցությամբ, ոմանք՝ բարեկամությամբ, ոմանք՝ վախով (შოհოდვდით), ոմանք՝ շվախենալով աստծուց և ոմանք՝ կաշառքով. ինչպես կամենում էին, դատում էին»<sup>9</sup>:

Օրենսդրական իր նախատեսումները Վախժանյանը իրականացրեց ընդարձակ ծրագրով ու մեծ լայնախոհությամբ: Նա ոչ միայն իր Օրենսգրքերը ստեղծեց, այլև կազմեց Օրինաց հավաք<sup>10</sup>, որի մեջ, իր Օրենսգրքից բացի, մտցրեց նաև նախորդ դարաշրջաններում ստեղծված վրաց օրենքները՝ Գեորգի Պալժառափայլի, Բեքայի ու Աղբուղայի և այլն: Վախժանյանը իր Հավաքի բաղկացուցիչ մաս դարձրեց նաև այլ ժողովուրդների, մասնավորապես՝ Հայկական օրենքները:

<sup>8</sup> Տե՛ս յճ. Մ ա ռ ա Մ օ ժ ց, პირველი სტამბა საქართველოში, თბილისი, 1955.

<sup>9</sup> Վախժանյանի Օրենսգրքի առաջարանը:

<sup>10</sup> Իրերի բերումով Վախժանյանի Օրինաց հավաքը հրատարակվել է նախ ուսերեն թարգմանությամբ և 135 տարի հետո միայն բնագրի լեզվով: Երբ 1801 թ. Վրաստանը միացավ Ռուսական կայսրությանը, նրան թույլատրվեց քաղաքացիական գործերով ղեկավարվել տեղի սովորույթով և Վախժանյանի Օրենսգրքով: Գործնական այս պահանջը բավարարելու համար, Ռուսական կառավարության առաջարկով Վախժանյանի Հավաքը թարգմանվեց ռուսերեն: Կառավարող Սենատը 1828 թ. Պետերբուրգում հրատարակվեց «Сборник законов грузинского царя Вахтанга VI»: Այս բնագիրը հրատարակվեց նաև երկրորդ անգամ 1887 թ. Քիֆլիտում, Ա. Ֆրենկելի և Գ. Բաբրաձեի ջանքերով «Сборник законов грузинского царя Вахтанга VI» վերնագրով:

Ինչպես նշում է խմբագիրը՝ Գ. Բաբրաձեն, այս հրատարակության մեջ «բնագրի պաշտոնական բնույթը թողել ենք անփոփոխ», սակայն փոխել են Դատաստանագրքերի հերթականությունը և «Քանի որ վրացիներն բնագրի տարբեր ձևագրերի հետ պաշտոնական բնագրի համեմատության ժամանակ ռուսերեն թարգմանության որոշ հոգվածներում ի հայտ եկան սխալներ, ուստի յուրաքանչյուրի վերաբերյալ ծանոթագրության մեջ նշել ենք վրացիներն բնագրի համապատասխան հոգվածի իսկական իմաստը, իսկ բաց թողնված կամ բնագրից նշանակալիորեն շեղված հատվածները թարգմանեցինք ի նոր...» (էջ XII): Չնայած այդ օգտակար ու զնահա-





հետևում է<sup>16</sup>, որ Հայկական, Հունական ու Մովսիսական օրենքները թարգմանվել են ու հրատարակվել 1709—1711 թթ. ժամանակամիջոցում: Նորագույն ուսումնասիրությունները, սակայն, ավելի են ճշտել Հավաքի ստեղծման թվականը, որով, ուրեմն, փոխվում են նաև հայոց օրենքների թարգմանության ժամանակի վերաբերյալ փառնավաղյան տվյալները: Այս տեսակետից ուշագրության արժանի են, ամենից առաջ, Հավաքի և Վախթանգի Օրենսդրքի առաջաբան-վերջաբանները, որոնք մանրամասն քննարկել է Ք. Ենուքիձեն: Վերջինս, հենվելով նաև նախորդ ուսումնասիրությունների վրա, ցույց է տվել, որ ամբողջ Հավաքի Առաջաբանը գրվել է մինչ 1709 թ. ապրիլը, որովհետև Առաջաբանում Գեորգի XI-ը կենդանի է հիշվում, իսկ նա, ինչպես հայտնի է զտհվել է 1709 թ. ապրիլին<sup>17</sup>: Հավաքի Առաջաբանի թվականը կարևոր է դառնում այն պատճառով, որ, ինչպես հաստատվել է, Առաջաբանը գրվել է այն ժամանակ, երբ ամբողջ Հավաքը արդեն գրված ավարտված էր<sup>18</sup>: Հետևապես, 1709 թ. Հավաքը պատրաստ էր, ուստի Հայկական օրենքների թարգմանության ժամանակի համար որպես terminus post quem non նշելի է 1709 թ.: Ակնհայտ է նաև, որ Հայկական օրենքների թարգմանությունը չէր կարող տեղի ունենալ 1703 թ. առաջ: Այսպիսով, Հայկական օրենքները թարգմանվել են վրացերեն 1703—1709 թթ. ժամանակահատվածում:

Վախթանգի Հավաքը գիտական լայն շրջաններին ծանոթ էր առավելապես Ա. Ֆրենկելի և Գ. Բաբրաձեի հրատարակությամբ: Ըստ այսմ, Հավաքում նրա բաղկացուցիչ մասերը ունեն հետևյալ հաջորդականությունը. վրացական օրենքներ՝ ա) Վախթանգի օրենքները, բ) Գեորգիի օրենքները, գ) Աղբուղայի օրենքները, դ) Կաթողիկոսների օրենքները, օտարերկրյա օրենքներ՝ ե) Մովսիսական օրենքներ, զ) Հունական օրենքներ, է) Հայկական օրենքներ: Օրենքներ գրված ուսական կառավարության ժամանակ՝ սովորութիւն կրավունքը՝ օրինականացված: Իրականում սակայն Հավաքի միավորների համակարգը բոլորովին այլ է. կամայական այդ տեղաշարժը կատարել են հրատարակիչները, ինչպես նշում են նաև իրենք<sup>19</sup>: Մինչդեռ Հավաքի գրչագրերում, և՛ այն ձևագրում, որ Փարիզում տեսել է Վ. Բաստամյանը<sup>20</sup> և՛ ՎՍՍՀ պետ. թանգարանի ձևագրաց բաժնի գրագիտության տարածման րնկերության ֆոնդի S-3683 ձևագրում, որը Վախթանգի օրինակն է եղել և որի

<sup>16</sup> «Վախթանգ թագավորի «Օրինաց հավաքի» ինձ մտտ եղած ձևագրերից մեկում, այն է՝ արքայազն Փառնավազի ձևագրում, «Հայկական օրենքների» սկզբում կա հետևյալ նշումը. «Թարգմանված են վրացերեն ուղղակի հայերենից Վախթանգ VI-ի ժամանակ և հրատարակվել են նրա կողմից, երբ նա 1709 և 1711 թթ. արքայազն էր ու Քարթլիի կառավարիչը»: Այդ ձևագրում նույնպիսի նշումներ կան նաև «Մովսիսական օրենքների» և «Հունական օրենքների» վերաբերյալ» — տե՛ս «Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, էջ 230, ծանոթագրություն 1:

<sup>17</sup> ვახტანგ VI, სამართლის წიგნი, ტექსტი გამოსაცემად დაამზადა, გამოკვლევა და ტერმინთა საძიებელი დაუროთო თინა ენუქიძემ, თბილისი 1955, էջ 11—12:

<sup>18</sup> նույն տեղում, էջ 12:

<sup>19</sup> «Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, էջ XI.

<sup>20</sup> Տե՛ս Մխիթար Գոշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, Յառաջաբանութիւն, էջ 104—105:



են, երբեմն փոփոխած, երբեմն երկու հոդվածը միացրած, և երբեմն միայն մի բանի տող վերցրած, ինչպես զորօրինակ Առաջին մասի երրորդ ընդարձակ կաշնոնից թարգմանված է միայն մի և կես տող...»<sup>25</sup>:

Այս բոլորը ճիշտ է, բայց մասամբ, որովհետև բնագրի հոդվածների ըստ էության փոփոխություններից բոլորը չէ, որ պատկանում են արքայազն Վախթանգի օրենսդրական խմբին կամ թարգմանչին: Բացի դրանից, թարգմանչին են վերագրել մի փոփոխություն ևս, ըստ որում շատ արմատական, որը բնավ նրանք չէ և դալիս է հայերեն բնագրից: Այսպես, Հ. Տեր-Հովհաննիսյանի տվյալների հիման վրա Հավաքի ուսերեն երկրորդ հրատարակությունն իրականացնողները գրում են. «Վրացերեն թարգմանությունը նշանակալիորեն շեղվում է հայերեն բնագրից. նրանում եկեղեցական ու քաղաքական օրենքների հերթականության համակարգը, որ Գոշի գործում կազմված է երեք մասից և դրանց բուն համարակալումը փոփոխված են ու խառնրված...»<sup>26</sup>: Հավաքի բնագրի հրատարակիչը՝ Ի. Գուլիձեն, նշելով, որ Մխիթարի Գատաստանագիրքը կազմված է երեք մասից՝ նախադրություն, եկեղեցական կանոններ և աշխարհական օրենքներ, նույնպես գրում է. «Վրացերեն

կան դատաստանագրքի հայկական խմբագրության թարգմանությունն է, և բերել է հոդվածների համեմատական աղյուսակը, համադրելով Հավաքի Հայկական օրենքների առաջին մասը Ասորա-հոմեական դատաստանագրքի հայկական խմբագրության հոդվածներին ըստ Կ. Բրունսի ու է. Չախաուի (Syrisch—römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert, Leipzig, 1880, հայերեն խմբագրությունը՝ էջ 95—141, կա նույնի սպակետիս վերահրատարակությունը՝ Leipzig, 1961) հրատարակության (նույն տեղում, էջ 89—91): Մի ժամանակ, նույնիսկ Վ. Բաստամյանցի հրատարակությունից հետո էլ, գլխավորապես Վախթանգի Հավաքի հիման վրա, Ասորա-հոմեական դատաստանագիրքը Հայոց Գատաստանագրքի հետ միասին համարվել է մի ամբողջություն և հեղինակված Մխիթարից, այդ պատճառով Մխիթար Գոշի Գատաստանագիրքը համարվել է կազմված «հիմնականում թեոդոսի ու Հուսարինիանոսի օրենքների հիման վրա» («Энциклопедический словарь Ф. Брокгауза и И. Ефрона», т. 10, СПб, 1892, էջ 650—651, т. 39, СПб, 1897, էջ 39. «Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, էջ 230, ծանոթագր. 2):

<sup>25</sup> Մխիթարայ Գոշի Գատաստանագիրք հայոց, Յառաջաբանություն, էջ 105—106: Վ. Բաստամյանցը բերել է նաև հայերեն բնագրի ու վրացերեն թարգմանության հոդվածների համադրական տախտակը (նույն տեղում, էջ 106—107, ծանոթագրություն № 62): Վ. Բաստամյանցի այս տեղեկությունն է, որ մասն է գիտական շրջանառության մեջ և դրանով էլ գրեթե սպառվում են Հայոց դատաստանագրքի վրացերեն խմբագրության վերաբերյալ գիտելիքները հայագիտության և վրացագիտության մեջ: Ոչ Հ. Տեր-Հովհաննիսյանը (Ա. Ֆրենկելի կողմից թիֆլիսում հրատարակվող «Юридическое обозрение» շաբաթական հանդեսի աշխատակիցն էր ու կրդվյալ հավատարմատար. տե՛ս Կ. Թեր-Պոանիսյան, Армянские законы в Сборнике царя Вахтанга, «Юридическое обозрение», 1886, № 291, էջ 177—179), ոչ Լևոն Մեկերսեթ-Քեզը (სამართალი სომხური, ქართული ვერსია..., ტფილისი, 1927), որոնք հատկապես գրադվել են Մխիթար Գոշի Գատաստանագրքի վրացերեն խմբագրությանը և ոչ էլ Ի. Գուլիձեն (ქართული სამართლის ძეგლები, ტ. I, თბილისი, 1963), որ հրատարակել է Վախթանգի Հավաքը, ոչինչ չեն ավելացնում, իսկ մյուսները, մասնավորապես նրանք, որ գրադվել են XVIII դարում հայ-վրացական մշակութային հարաբերություններով, միայն կրկնում են նախորդներին:

<sup>26</sup> «Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, էջ 231, ծանոթագր. 2:





նր ունի նախադրությունը և բուն Դատաստանագիրքը՝ կազմված 251 հոդվածներից, որոնք հաջորդում են իրար թվական շարքի սովորական հերթականությամբ: Այսպես է նաև Գ խմբագրությունը: Բ խմբագրության կառուցվածքն է. նախադրություն և բուն Դատաստանագիրքը՝ բաժանված երկու մասի՝ եկեղեցական կանոններ—1—124 հոդված և աշխարհական օրենքներ—1—130 հոդված<sup>29</sup>: Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հայանի է միակ հրատարակությամբ<sup>30</sup> և դրա ուսուցիչն է թարգմանությունը<sup>31</sup>: Վ. Բաստամյանցի հրատարակած բնագիրը պատկանում է Բ խմբագրության: Քանի որ շրջանառության մեջ եղած Դատաստանագիրքը ներկայացնում է Բ խմբագրությունը (մասերի բաժանված), այդ պատճառով Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը միշտ համեմատվել է հենց այդ խմբագրության հետ, և բնական է, որ ուսումնասիրողները արձանագրել են, թե վրացերենում բնագրի հոդվածները տեղաշարժվել են և ստեղծվել է նոր, բնագրից տարբեր համակարգի պատրանք: Տրամաբանության ոչ մի կանոն չի խախտվել և եզրակացությունը լիովին համապատասխանում է նախադրյալ-ելակետին: Սակայն ճիշտ չի եղել հենց ելակետը: Համեմատությունները մի կողմից Մխիթար Գոշի Դատաստանագրքի Ա, Բ ու Գ խմբագրությունների և մյուս կողմից՝ նույն Դատաստանագրքի վրացերեն թարգմանության, ցույց տվեցին, որ վրացերենում Մխիթար Գոշի Դատաստանագրքի համակարգը (հոդվածների հերթականությունը) ճշտորեն համապատասխանում է ԱԳ խմբագրությունների համակարգին: Համեմատենք, նշելով մինչ այդ, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն թարգմանության և հայերեն բնագրի (հասկանալի է Բ խմբագրության) հոդվածների համեմատական տախտակ կազմել են Վ. Բաստամյանցը<sup>32</sup>, Հ. Տեր-Հովհաննիսյանը<sup>33</sup>, Յ. Կարստը<sup>34</sup>, ևսն Մելիքսեթ-

<sup>29</sup> Այդ հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս Խ. Թորոսյանի «Հետևյալ հոդվածներում, «Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի» («Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, № 6), «Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձևագրերն ու խմբագրությունները» («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1), «Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ կապված մի քանի հարցերի մասին» («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4): Նշենք նաև, որ նախադրությունն ու մյուս օրենքները իրարից անշատելի ճիշտ չէ, որովհետև նախադրությունը Դատաստանագրքի բաղկացուցիչ, օրգանական մասն է, այդ երկուսը միասին են կազմում Դատաստանագիրքը, ուստի այդպես գրել ու դրում ենք միայն պայմանականորեն, միայն ու միայն խոսքի հարմարության համար:

<sup>30</sup> Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, իրաւարանական հետազոտութիւնը... Վարչաշաղատ, 1880:

<sup>31</sup> «Армянский судебник Мхитара Гоша», перевод с древнеармянского А. А. Паповяна, редакция, вступительная статья и примечания Б. М. Арутюняна, Ереван, 1954.

<sup>32</sup> Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, Վարչաշաղատ, 1880, Յառաջարանութիւն, էջ 106—107, ծանոթագրութիւն 68: Բազմաթիվ վրիպակներով տպագրված և սխալաշատ ազդու սակ է. պատճառը թերևս այն է, որ Դատաստանագրքի տպագրությունը կատարվել է աշխատասիրողի մահվանից հետո. տե՛ս Յառաջարանութիւն, էջ 27, ծանոթագրութիւն տպարանի. էջ 287, ծանոթագրութիւն սրբագրիչի. «Փորձ», 1881, № 4, էջ 62, ծանոթագրութիւն 2. «Юридическое обозрение», 1884, т. XI, № 187, էջ 213—217:

<sup>33</sup> «Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, էջ 350—351: Աղբյուր աղյուսակ է. վրիպակ՝ շարս դեպքում՝ 170=1, 2, փխ. II, 2. 171=1, 3 փխ II, 3. 395=1, 128 փխ II, 128. 401=1, 132 փխ II, 132 (130):

<sup>34</sup> J. Karst, Grundriß der Geschichte des armenischen Rechtes, I, Sonderabdruck

ბეგრ<sup>35</sup> ლ ბ. ზილიძენ<sup>36</sup>: აქლესენენერ ზახ, ერ ԱԳ ჯამრეგრიბიონენერი გჳათ-  
 ლან რნაგირე უათრասთელ ენერ ზრათარაკიბიანი. ოგაქლიმ ენერ მერ უათ-  
 რასთად რნაგერიგ:

ქრეგ. ქმრეგ.	ԱԳ ქმრეგ.	Բ խմրեգր.		ქრეგ. ქմრეგ.	ԱԳ ქմრეგ.	Բ խմրեգր.		ქრეგ. ქմრეგ.	ԱԳ ქմრეგ.	Բ խմրեգր.	
		Ա մաս	Բ մաս			Ա մաս	Բ մաս			Ա մաս	Բ մաս
151	1	1		174	24		6	197	48	32	
152	2		1	175	25		7	198	47	31	
153	3	2		176	26		8	199	49		17
154	4	3		177	27		9	200	50		18
155	5	4		178	28	19		201	51	33	
156	6	5		179	29	20		202	52		19
157	7	6		180	30	21		203	53	34	
158	8	7		181	31		10	204	54		20
159	9	8		182	32		11	205	55		21
160	10	9		183	33		12	206	56		22
161	11	10		184	34		13	207	57		23
162	12	11		185	35		14	208	58		24
163	13	12		186	36	22		209	59		25
164	14	13		187	37		15	210	60		26
165	15	14		188	38		16	211	61		27
166	16	15		189	39	23		212	62		28
167	17	16		190	40	24		213	63		29
168	18	17		191	41	25		214	64		30
169	19	18		192	42	26		215	65		31
170	20		2	193	43	27		216	66		32
171	21		3	194	44	28		217	67		33
172	22		4	195	45	29		218	68		34
173	23		5	196	46	30		219	69		35

aus der Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, XIX Band, Stuttgart, 1906,  
 էջ 44—46: Յ. Կարտեր թեև հայերենի նման գիտեր շահ վրացերենը, բայց անձամբ չի համե-  
 մատել հայերեն ու վրացերեն բնագրերը, այլ համեմատական տախտակը նույնությամբ ընդօրի-  
 նակել է Վ. Բաստամյանցից, իր կողմից ավելացնելով եւ մի անճշտություն՝ վրաց. 186 = հայ. 1,  
 12 փխ. 1, 22, ինչպես է Վ. Բաստամյանցի աղյուսակում: Այս երկու աղյուսակներն էլ անօգտա-  
 գործելի են:

<sup>35</sup> სამართალი სომხური, ქართული ვერსია... გამოცეა ლეონ მელიქსეთ-ბეგმა, ტფილისი,  
 1927, էջ 240—245: *ძიგყ აղყოსაჲ ჲ, ძრქიჲლენერ ჲლან:*

<sup>36</sup> ქართული სამართლის ძეგლები, ტ. 1, თბილისი, 1963, էჯ 559—560: *ძიგყ აղყოსაჲ ჲ.*  
*ძრქიჲლჲ ჲრქი Პსეყიჲ. 202=I, 19 փխ. II, 19. 373=II, 112 փխ. I 112: Այს აղყოსაჲლენერ*  
*ჲ მერ ჲაჲმადი მრქს ჲჲაბ Პსა ჲიბიან თარქერქიბიონენერქ მასინ՝ რქ ჲსათი:*

1	2	3	4	1	2	3	4	1	2	3	4
220	70		36	262	112		70	305	155		91
221	71		37	263	113		71	306	156	65	
	72		38	264	114		72	307	157	66	
222	73		39	265	115		73	308	158	67	
223	74		40	266	116		74	309	159	68	
224	75	35		267	117		75	310	160	69	
225	76		41	268	118		76	311	161	70	
226	77		42	269	119		77	312	162	71	
227	78		43	270	120		78	313	163	72	
228	79		44	271	121		79	314	164	73	
229	80		45	272	122	43		315	165	74	
230	80		45	273	123		80	316	166	75	
231	81	36		274	124		81	317	167	76	
232	82		46	275	125		82		168	77	
233	83		47	276	126		83	318	169	78	
234	84		48	277	127		84	319	(169)	(78)	
235	85		49	278	128		85	320	170	79	
236	86		50	279	129		86	321	171	80	
237	87	37		280	130		87	322	172	81	
238	88	38		281	131		88	323	173	82	
239	89		51	282	132		89	324	174		92
240	90		52	283	133	44		325	175		93
241	91		53	284	134	45		326	176	83	
242	92	39		285	135	46		327	177	84	
243	93		54	286	136	47		328	178		94
244	94		55	287	137	48		329	179		95
245	95		56	288	138	49		330	180		96
246	95		57	289	139	50		331	181		97
247	97		58	290	140	51		332	182		98
248	98		59	291	141	52		333	183		99
249	99		60	292	142	53		334	184	85	
250	100		61	293	143	54		335	185		100
251	101		62	294	144	55		336	186		101
252	102		63	295	145	56		337	187	86	
253	103		64	296	146	57		338	188	87	
254	104		65	297	147	58		339	189	88	
255	105	40		298	148	59		340	190	89	
256	106	41		299	149	60		341	191	90	
257	107		66	300	150	61		342	192	91	
258	108		67	301	151	62		343	193	92	
259	109		68	302	152	63		344	194		102
260	110	42		303	153	64		345	195	93	
261	111		69	304	154		90	346	196	94	



Արքայազն Վախթան-  
դի Հավաք օրինաց  
Հայկական օրենքներ  
Հոդված 162

Երբ որ տեսնի կինը  
իւր ամուսնուն ան-  
կարգ վարվող տղայի  
հետ, կամ անասունի,  
կամ թաթարի ու ան-  
հավատի և կամ մար-  
դասպան լինի, այս  
մեղքերի վրա կարող  
է կինը թողնել ամուս-  
նուն, այլ ամուսին  
առնել:

Այնպիսի մարդը ինչ  
ունեցվածքի տէր լի-  
նի, վերցնեն (խլեն)  
կեսը և նրա կնոջը  
տան, և ունեցվածքի  
տասներորդը գատա-  
վորինն է: Ապա թե  
կինը կամենա և շրա-  
ժանվի, ինքը գիտի:

Մխիթար Գոշի  
Գատաստանագիրք  
Գ խմբագրություն  
Հոդված 12

Յորժամ կինն տեսա-  
նէ զայր իւր յարուա-  
գիտութեան, կամ յա-  
նասնապղծութեան,  
կամ թէ ընդ անօրինի  
պղծի կամ պղծեսցէ,  
կամ ի մարդասպա-  
նութեան, յայս սրտ-  
ճառանացս ի վերայ  
իշխան է կինն թողուլ  
զայր իւր և լիցի առն  
այլում, և զկէս ըն-  
չից առն առցէ կինն:  
ապա եթէ կամեսցի  
կինն՝ թողուլ և ոչ:

Մխիթար Գոշի  
Գատաստանագիրք ԱԲ  
խմբագրություն Հոդ-  
ված 12 (=Բ, 1, 11)

Յորժամ կին զան  
զչար ախտ գիտացէ  
զարուագիտութեան, և  
կամ զանասնագիտու-  
թեան, և կամ ընդ  
այլազգիս պղծիցի,  
իշխան լիցի ելանել.  
ապա եթէ զղջացեալ՝  
զհայր խոստովանու-  
թեանն հաւատացուս-  
ցէ և նովա՝ զկինն,  
մի ելցէ: Բայց զա-  
պաշխարութիւն և զ-  
միշոց սահմանին  
մեկնելոյն ի կնոջն  
ցուցցէ հայր խոստո-  
վանութեան և այն-  
պէս խրատեալ զմիա-  
րանութիւնն հաստա-  
տիցէ: Իսկ եթէ մի  
անգամ և երկիցս  
զայս արասցէ և ի  
նոյն կացցէ ախտ, ել-  
ցէ իրաւամբք գա-  
տաստանի, զկէս ըն-  
չիցն տանելով յառնէն:

Ինչպես տեսնում ենք, վրացերենը թարգմանությունն է Գ խմբագրության և ոչ ԱԲ-ի<sup>37</sup>:

თ ა ვ ი ა ს ს ა მ ო ც დ ა ს ა მ ი

Շոկոլադեի ցինցինդազին սիմպլեզարիտ գայրիլույնը և Շոկոլադեի Պե-  
րտոս կեմարի, և մոլուկը, և Բինապիրցելի ռոմ գալիցա կեմարի, և տի  
մաս կալես Շոկոլադեի ար Պեքերտոս, — ուսից շնդա Պեքերտոս և լուսի գուլեսատիս.  
կարտեցա մեղրեղ և լար միլլեքիս. արաղ ժալադ, նեքիտ շնդա մոքը:

37 Հավաքի 1887 թ. ուսերեն հրատարակության (էջ 273) տողատակում «У Мхитаря Гоша» բացատրությամբ բերված է սույն հոդվածը Հ. Տեր-Հովհաննիսյանի ուսերեն թարգմանությամբ բառ վ. Բաստամյանցի (Բ խմբագրություն) հրատարակության: Գրանիդ կամեցել են շուրջ տալ, թե թարգմանիչ-խմբագիրը որքան է փոխել բուն մխիթարյան հոդվածը: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, վրաց թարգմանիչ-խմբագիրը այդպիսի բան չի արել: Բուն մխիթարյան հոդվածը նրանից դեռ շատ առաջ փոխել է հայ խմբագիրը, իսկ վրաց խմբագիրը, հավանաբար սեղի պրակտիկայից ելնելով, ավելացրել է միայն «և ունեցվածքի տասներորդը գատավորինն է»:

Հայկական օրենքներ  
հոդված 163

Այր և կին եթե ատելությամբ բաժանված լինեն, և կինը ամուսին առնի և սա մեռնի, և առաջին ամուսինը, որ թողել էր, թե այս մարդը կին առած չլինի, նորից պետք է միանա վասն սիրո առ Աստված. երկրորդ պսակ ոչ հասանի: Ոչ թե բռնությամբ, այլ կամոք պետք է կատարվի:

Գ խմբագրություն  
հոդված 13

Այր և կին, եթե ատելութեամբ զիրար թողցեն, և պատահի մեռանել զոր էառն, և այն, զոր թողեալն էր, անայր կայր, պարտ է առնուլ զայն, քանզի այլ պսակ ոչ հասանի նոցա. այլ ոչ բռնութեամբ, այլ կամոք վասն Աստուծոյ:

ԱԲ խմբագրություն  
հոդված 13 (=Բ, I, 12)

Եթէ կին ատելութեամբ յառնէն մեկնեացի և այլում լիցի, և պատահի մեռանել զոր էառն, և հարկատրաբար յառաջինն դարձցի, իբր զի շիցէ առեալ այրն այլ կին, կալցէ զնա զղջացեալ, զոր շէր արժան լինել առն այլում և ոչ եղիւ, թէպէտեւ իշխան է շառնուլ, զի ի կնոջէն իցէ պատճառն մեկնելոյ, սակայն շահելոյ աղադաւ զոգի նորա՝ առցէ: Սոյնպէս թէ առն պատահի առնուլ այլ կին, և մեռցի զոր էառն և զղջացեալ դարձցի յառաջինն, իբր զի այլում շիցէ լեալ կին, առցէ, և հաւանեացի նմա կին յաղագս զղջմանն և ապաշխարութեանն արինակի երկուցն:

Իսկ եթէ զկնի մեկնելոյն ի միմեանց այրն կին առցէ և կինն՝ այր, և մեռանիցի կին առն և այր կնոջն զոր առին, և զի այլ պսակ ոչ է նոցա, հարկատրեալք դառնան առ միմեանս, որ պատճառ մեկնելոյն եղեւ՝ զապաշխարութիւն նմատալով՝ միատրեացին:

Եւ եթէ այր կնոջն մեռանիցի և կին առն կենդանի իցէ, և կինն

իցէ պատճառ մեկնելոյն, եւ հարկաւորաբար զղջացեալ զայրն խնդրէ, չէ արժան առնուլ զնա առնն ըստ իրաւանց, մանաւանդ թէ մանկունք իցեն, եւ այլ այր ոչ հասանիցէ կնոջն, ապա եթէ հասանիցէ՝ իշխան լիցի այր զհարկիւ զղջացեալ կինն առնուլ եւ կամ ոչ: Նմանապէս եթէ կին առն մեռանիցի<sup>38</sup>

Ակնհայտ է, որ վրացերենը թարգմանությունն է հայերեն բնագրի Գ խմբագրության: Բերենք մի օրինակ ևս՝ «Յաղագս շինականաց» հոշակավոր հոդվածը, որը, իրավա-քաղաքական մտքի պատմության համար իր բացառիկ արժեքից բացի, նաև շատ կարևոր աղբյուր է սոցիալ-տնտեսական իրականության վերաբերյալ լուրջ եզրակացությունների:

თავი ასსამოცდათერთმეტი

აზატია დამბადებელისაგან კაცთაგანი ბუნება, მაგრამ პატრონელობა ამისა ნდომებითა იქმნა მიწისა და წყლისა. და ვისაც არა აქუს მიწა და წყალი, ის კაცი აზატია, სადაც უნდა წავიდეს. არ არის სამართალი ხელმწიფეთაგან და თავადთაგან ძალიდ დაჭერა და დაყენება ერთ ადგილს, ვინდა და არა იქ იყო.

Աբխալագն Վախրանգի  
Հավաք

Մխիթար Գոշի Դատաստանագիրք

Հայկական օրենքներ  
հոդված 171

Գ խմբագրություն  
հոդված 21

ԱԲ խմբագրություն  
հոդվ. 21 (=Բ, II, 3)

Ազատ է Աբարչից մարդկային բնությունը<sup>39</sup>, սակայն սրա նորությունը<sup>40</sup> եղավ

Ազատ չԱբարչէն եղև մարդկային բնութիւնըս, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ որք ոչ ունի

Ազատ չԱբարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատ-

<sup>38</sup> Հայկական օրենքների 163-րդ հոդվածի համար Հավաքի ուսերեն հրատարակության (էջ 274) ծանոթագրության մեջ բերված է այս հոդվածը ըստ Վ. Բասաթամյանցի՝ Բ խմբագրության, որով դարձյալ ցույց է տրվում, թե հոդվածի համառոտում-խմբագրումը կատարել է վրաց թարգմանիչը: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, վրացերենը հարազատ թարգմանությունն է հոդվածի արդեն կրճատված-խմբագրված հայերեն տարբերակի՝ Գ խմբագրության:

<sup>39</sup> Պետք է հասկանալ՝ ազատ է ստեղծվել արարչի կողմից:

<sup>40</sup> Յատրոնեմոժա — սարկություն, նորություն, կախվածություն, ծառայություն, հատակություն:

հողի ու ջրի կարիքից: Եվ ով շունի հող ու ջուր, այն մարդը ազատ է, ուր ուզում է թող գնա, ոչ է իրավունք թաղալորներին և իշխաններին ուժով բռնել և կեցցնել նրան մի տեղ, (ասելով) ուզում ես թե ոչ, այնտեղ մնա:

ցին ջուր և հող, ազատ է ուր և կամեսցի գնասցէ և բնակեսցէ, և ոչ է իրաւունք թաղաւորաց և իշխանաց բռնադատել զոք կենալ ի գեղ մի կամ ի մի երկիր:

շաճ կարծեմ դատաստան. զի թողեալ զտէրունիսն ազատ է ուր և կամեսցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ որ ի տերանցն և բռնադատէ զգնացեալսն անզրէն դառնալ, զկնի մահուան հարն ազատ են որդիքն ծնեալ այլուր և ոչ անդ:

Տեսնում ենք դարձյալ, որ վրացերենը հարազատ թարգմանությունն է հայերեն բնագրի Գ խմբագրության և ոչ ԱԲ-ի: Օրինակների թիվը կարելի է շարունակել, բայց այսքանն էլ, թվում է, բավական է:

Սակայն շպետք է տպավորություն ստեղծվի, թե վրացերեն խմբագրության տարբերությունները հայերեն այն բնագրից, որի հետ ցարդ համեմատվել է վրացերենը, սահմանափակվում են միայն այն տարբերություններով, որ առկա են հայերեն բնագրի Գ և Բ (Ա) խմբագրությունների միջև: Վերը բերված օրինակներով, իսկ նման օրինակների թիվը քիչ չէ, կամենում ենք միայն ցույց տալ, որ Մխիթար Գոշի Գատաստանագրքի վրացերեն թարգմանության մեջ նշված տարբերություն-փոփոխությունները ամբողջովին չէ, որ վերագրելի են, ինչպես արված է ցարդ, թարգմանիչ-խմբագրին. դրանց զգալի մասը գալիս է Մխիթար Գոշի Գատաստանագրքի այն բնագրից, որը թարգմանվել է վրացերենի, այն է՝ Գ խմբագրությունից: Ուստի, Մխիթար Գոշի Գատաստանագիրք—վրացերեն թարգմանություն (խմբագրություն) հարաբերության հարցը նախկին ձևով, որ ունենք՝ վրացերեն թարգմանություն—Բ խմբագրություն տեսքը, փոխվում և, նույնիսկ, վերանում է, ստանալով նոր տեսք՝ վրացերեն թարգմանություն—Մխիթար Գոշի Գատաստանագրքի Գ խմբագրություն:

Արդ, ինչպե՞ս է հարաբերում Մխիթար Գոշի Գատաստանագրքի վրացերեն թարգմանությունը հայերեն այն բնագրին (Գ խմբագրություն), որից թարգմանվել է: Սկզբից ևեթ նշենք, որ Գ խմբագրության համեմատությամբ ևս վրացերենը բնագրի ստուգազույն-հարազատ թարգմանությունը չէ: Հողվածների մեծագույն մասը ենթարկվել է այս կամ այն փոփոխության. սրղվել է առավելագույն, բնդարձակվել՝ ոչ հաճախ, հողվածները միացվել կամ կոտորակվել են՝ հազվադեպ: Հողվածների մեծագույն մասի իրավական բովանդակությունը պահպանվել է, սակավ բացառություններով: Իսկ բովանդակության մանր փոփոխություններ կան համարյա բոլոր հողվածներում: Վրաց իրավունքի պատմության համար առավել ուշագրավ են այս փոփոխությունները, որովհետև դրանք պայմանավորված են վրաց իրականությամբ և հանդիսանում են դրա ուղղակի արտացոլումը, միաժամանակ երբեմն դառնալով վրաց իրավունքի պատմության այս կամ այն հարցի վերաբերյալ միակ աղբյուրը: Այդ փոփոխություն-հավելումներից գոնե մեկը ուշագրավ է





გულწმინდა და გუნებაკეთილი, და საბრალოდ მქონებელი, რადგან იყოს გამორჩეული კაცი.

და ამისთანა აკურთხონ ბძანებითა ლ' თისათა თორმეტთა თავთა უფროსთა ებისკოპოზთა. და მასუკან ყოველთა თაყუანისცენ და დამორჩილდენ ბძანებასა და რიგსა მისსა. და ნუვინ შეიქნების და ვერცავის შეუძლია სიცოცხლეში შეცილება მისი.

**შარყმანოიქიონი.** «*სქს კაჭიოქიკოსე ქაქანანაქი, სრე ამეოღე იანხე-ქადჰე სრე აქიოქინს ლ' მანალო ლ' (აქიოქინ):* *ყანჯსნ სრელო კამ სრეჰ ჟარი-ქიჯ (ქარეგაყსთ) ლ' აყათქიქი ი. ზრამანოქ (კათარსნ ძხარ)—*ქს აყათაზი, *ორ ჟარიქიჯსრეჰ (ქარეგაყსთსრეჰ) კამ აქაგ ხაქსიკოაიოსნსრეჰ კამ აქაგ მსორიკოქიანსრეჰ მსკე სრე აჯაქსრთე ქინს—*სრანე ძხიქიქი აქსთე ლ' *ენგიონსი ზაღორგიქიონი:*

*შაკაჯსნ ორ ზრამაიომ ლ' ორსნჰე სრელო კამ სრეჰ ქკაიქიქი ზასათაქიქი (იოსთი) აქსთე ლ', ორ მსკე კათარსი სრე ქრე კარგნ ი. ძხარ—*მარეგარსნსრეჰ *ი. ათარეკაქსნსრეჰ ნმანოქიამჰ ჟარსენიორ ლ' სეჰს ნა ლ' ლ' ზიგსორ გორძსრეჰ სრარქიჯ—*იოსთი ზაღორგსნ (სრან) *ესთ ქასთაქიქი ათარეკაქსნსრეჰ ლ' ესთ ჯნორსი მარეგარსნსრეჰ:*

*ღნაქი გორძსრეჰ კიჯიღ ლ' ნა, ჯათსრე მსე საქსაყსა ენთრეკაქ მსკე, ჰრ მასინ ჯმთაძსიქი ამჰრართაქანსსრეჰს კარეჰი რსოღ, ჰრსნეჰ სოქორაძსნსრეჰ ქარეჰიქი ათაქსი, ეღჯაგეოქსნსრეჰს ესთ არძანქიქი ათაჯქსარანჰ თქიღ ჰრ ზრამანოქ ლ' ერანსეჰ ზსთი ჯიჯთ ჯანაყარსი ქრე ენოღ<sup>43</sup>: სქ მარეგინ, ორ ენთრეკაქ ლ' ი. მარეგარსნსრეჰს არძანსი ლ' ათარეკაქსნსრეჰს ქიქსარქინოღ, კაჭიოქიკოსე-აყათრქარეჰს (ქიღ) ზიღინ ზანძსნსნ მარეგარსნსრეჰ ი. ათარეკაქსნსრეჰ კარეჰიქი ზაქარეჰსნსრეჰს რიჯორ ლ' ენთრეკაქ აქაგ-აქაგ ხაქსიკოაიოსნსრეჰ, მსორიკოქიანსრეჰ, ქარეგაყსთსრეჰ, ლ' კათარსნსრეჰ კარეჰი:*

*სქ ქს ოჰ სრანსეჰ სეოქქად ი. კააქქად მნა, ლ' ნა კთაქ არაძ ქინს, იამ კთაქად ქინს არძაქსი ი. ქიღოქიქიონ თაქ, ნა ლ' აქსთე ლ' სრე ზრამანოქ ქიღოქიქიონ თაქ: შაკაჯსნ სქს კთაქად ექინს, ოჯ ოჰ ექი კარეჰი ქიღოქიქიონ თაქ: სქ სქს ოჰ თექთიქიამჰ ი. ანორქინოქიამჰ კამსნა, ათანე სრე ზრამანსი, კააქქადსნსრეჰს არძაქსი ლ' ქიღოქიქიონ თაქ, ნა ლ' აჯს კააქქადსნსრეჰ ზსთ კააქქად ი. სეოქქად ეათნა:*

*შაკაჯსნ სრე ზიღინ ზანძსნსნ, ეიქ ოქქა აყათჯაძ ძხანსე ზსთი (აქი) ანსნ: სქ ეიქ ოქსე ზსთი ზაქარეჰსნსრეჰს სორე ათარეკაქსნსრეჰს სეჰეჰეგომ რიჯორ ქარეგაყსთსრეჰ, რიჯორ ხაქსიკოაიოსნსრეჰ, რიჯორ მსნაქიჯაგნსრეჰ, რიჯორ ანა-აყათაქანსნსრეჰ ლ' მინჯს 12 ორ ძიღოქიქი ანსნ ლ' ენთრსნსრეჰს აქრ არძანაქიქი ი. ექთაქ ამსნაქსნსრეჰს ერთე, ჰმასათონ ი. ზეგ, მარეგარსნსრეჰს ი. ჟარსნამჰოქიქი ლ' ოღორმად აღჟათაყ, ორ ქინს აქრ ენთრეკაქ:*

*სქ აჯსაქსიქი მარეგინ ოძსნსრეჰს ზრამანოქ თასსრელო ექსაქიქი*

<sup>43</sup> მნაგრომ აქი ზათქადე ექიქარ ზასქანაქი ლ', ეა სრელო ლ' ქსიოღ სრანსეჰ, ორ ლ. *შს-ქრესქ-ქსნს* (სამართალი სომეზი, ქართული ვერსიი..., ლ' 44) ი. *ქ. ზიქსნს* (ქართული სამართლის ძეგლები, ტ. 1, ლ' 269) *თარეჰიქი ძსიქ სნ საქსაყსთიქიონსრეჰს ანჯათსიქიქი ო. კსათარქიქი: აქი აყათაქიქი სეოქქად ზათქადიქი მსკ-სრელო საქსაყსთიქიონსრეჰს არქად ლ' ენგიონსორ რიქანეკოქიქიამჰ:*

ևպիսկուպոսները<sup>44</sup>: Եվ դրանից հետո բոլորը պատիվ տան ու ենթարկվեն նրա հրամանին ու խրատին: Եվ ոչ ոք այլևս չի կարող ամբողջ կյանքի ընթացքում հակառակել նրան»:

Վախժանյի Հավաքում Հայկական օրենքները սկսվում են մի փոքրիկ (ըստ Ի. Գոլիձեի հրատարակության 16 տողանոց) մուտք-առաջարանով՝ Պեսազալի (չեսափալի), որից հետո՝ Ասորա-հռոմեական Գատատանագրքին է իր առաջարանով: Առաջին առաջարանն ուրեմն, դիտվել է որպես ընդհանուր առաջարան ամբողջ Հայկական օրենքների, թե՛ Ասորա-հռոմեական և թե՛ Մխիթար Գոշի Գատատանագրքերի համար: Հավաքի հրատարակիչը՝ Ի. Գոլիձեն գրում է, թե այդ «առաջարանը Վախժանյի կողիֆիկացիոն հանձնաժողովին է պատկանում»<sup>45</sup>: Դրա պատճառն այն է, որ համեմատությունը կատարվել է Բ խմբագրության հետ: Մինչդեռ հանձնաժողովին պատկանում է այդ առաջարանի միայն 1—2 տողը. 3—12 տողերը Նախագրության վերջին գլուխն է՝ «Յաղագս թէ յորոց գրոց հաւաքեմք...» ըստ Գ խմբագրության, իսկ 12—16 տողերը Նախագրության Ա գլխից է ըստ մեր կողմից հրատարակության պատրաստած Գ խմբագրության ԽՄԿՀՃՇ ձևագրերի: Համեմատենք.

### Պ Ե Տ Ա Յ Ա Լ Ի

Եսե Միցնի արև ճիճիս սոմբեոիսա սամարտլիս Միցնոա Յեճան ցաճմոտարցմանեբուլի ճա ԵՄոճեբիս սախեճաճ Միցնի սամարտլիսա.

տյ Եկիտխաճո ճա ՄեճԿոբա ցինճաո. տյ ճոմլիս Միցնիսացան Մեցցեյրեբոյա, մոցախսենեբո, անյ ճոմլիս ցարոտ Մեցյրիբեո: Յիրցել ճիցի ճ տիսա, ճոմ միսճա ճ տն մոսցս Յիրցելճմնիլիսա ճա մեորիս ճիցիսացան, ճա սխճատա տաճոցաճան, ճա Մմինճիս սախարեբիսաճան, ճա Կոցելոտ Մմինճաոտ Մերիլոտաճան, ճցելոտա ճաճախալոտաճան, ճամեոտյ ճցեն ասրց Մեցիճեղիոտ ճա ճաճցերոտ.

արատյ ճցեն ամաս մոցախսենեբո, տյ նյրցին նյրաս Մեմաճեբոո, անց ցեբցեՄեբիոտ տճյեն, Կոցելոտա ճիրստա ճա մճոճճնեոտա փիլասոփոստա, ճոմց, տյ ճամ ամաՄի նաճլեբի Եճոցնոտ, Մեյմաճեոտ ճա ցաասրլլեոտ.

ճրիսճիանո ճրճեճնո, մճաճաճցենո, մարճո ճցենս տաճս ար ցիցեմեբո, ճցեն ամիս մեճի ցեր Մեցիճեղիոտ. ճա ամասճա մոցախսենեբո, ճոմ Յոցնի ցարնի ճցեն ճաճյոճրախճցեն, ճոմց արա անյոտ սամարտալիո ճա Միցնի սամարտլիսաո, ճա մրաճալնի ԵճԿցիան: ճցեն ցճաճյսո, ճա Եմատ արա անյոտո. ամաս Եսցեոնի ԵճԿցիան, ճոմց արա անյոտ ճոճնա ճա արճ Մաշյուտխաճո Մերիլի ճցելի, ճա արճա անալի, ճա ԵճԿցիան յճոճճնարոբիոտ, ճա ցյոճրախճցեն ճյոճաճ.

<sup>44</sup> Թուսերեն հրատարակության մեջ այս հատվածը թարգմանված է. «...и посвятить его в сан католикоса, по глаголу Божию, двенадцати главным епископам» («Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, էջ 262).

<sup>45</sup> «Պեսազալի ցանճանցիս սաճոճճիփաճո կոմիսիաս Եճյոճցնիս» — ճարտղլի սամարտլիս ճցցլլեբի, ճ. 1, էջ 225, ճանոթաղբ. Յ. 1. Մխիթարի-Թեղբ կա գրոճ է, որ ճա ճկա հայերեն ընաղբոճ — սամարտալի սոմբոթրի, ճարտղլի ցերսիա, էջ 245:

Հայկական օրենքներ

Առաջարան

Տող 1—12

Այս գիրքը թարգմանված է Մեծ Հայքի դատաստանական գրքերից և անունով կոչվում է Գիրք դատաստանի:

Թէ հարցներ ու գիտենալ ուզենաք, թե որ գրքերից են հավաքվել՝ բացատրենք, և կամ որ ազգերից հավաքեցինք. առաջին՝ օրենքն Աստրժո, որ ալեց Աստված Մովսեսին ի սկզբանե, և Երկրորդ օրենքներից և այլ գլուխներից, և սուրբ Ավետարանից, և բոլոր սուրբ գրություններից՝ հներից ու նորերից, զի այսպես կարողացանք ու գրեցինք:

Եվ մենք ոչ թե այն ենք ասում, որ ոչ որ ոչինչ չավելացնի, այլ խնդրում ենք ձեզանից՝ բոլոր արժանավոր ու գիտուն փիլիսոփաներից, որ եթե սրանում որևէ թերություն գտնեք, ավելացրեք ու լրացրեք:

Քրիստոնյա իմաստուններ, բարոզիչներ (վարդապետներ—Խ. Թ.), միայն մեզ չենք վերագրում, մենք սրանից ավել չկարողացանք:

Տող 12—16

Եվ այս էլ ասենք, որ որոշ ազգեր կհանդիմանեն մեզ, որ իբր շունենք դատաստան և գիրք դատաստանի և շատերը կասեն՝ մենք ունենք և նորանք շունեն: Այս բանը կասեն այնպիսիները, ովքեր անգետ են և ոչ կարգացել են ոչ հին և ոչ էլ նոր գրությունները, և կասեն անգիտությամբ ու կհանդիմանեն անհիմն:

Մխիթար Գոշի Դատաստանագիրք

Գ խմբագրություն

Նախագրութիւն, գլխ. Ժ

Յազագս թէ յորոց գրոց հաւաքեմք և գրեմք զգիրս դատաստանիս և կամ յոր ազգաց հաւաքեցաւ: Յիշատակարան սակաւութիւն:

Հավաքեցաք յառաջ յօրինացն Աստուծոյ որ ետ Մովսէսի. առաջին՝ յմլից, յԵրկրորդ օրինացն և յայլոց գրլխոցն, երկրորդ՝ ի կանոնաց սուրբ հարցն և յԱւետարանէն, երրորդ՝ յամենայն սուրբ տառից ի հնոց և ի նորոց:

Եւ արդ, թէպէտև համարձակեցաք մեք և գրեցաք զգիրս, սակայն եթէ հանդիպի որ իմաստուն և թիւրութիւն գտցէ ի սմա, աղաչեմ զի լցցէ զպակասն, բանդի ամենայն գիրք ոչ եթէ ի միում ժամանակի գրեալ են, այլ յայլեայլ ժամանակս: Զսոյն և այս սկիզբն եղև իմաստանոց, յազագս զմեզ յիշելոյ ի բարիս:

Նախագրութիւն, գլխ. Ա

Հանդերձեալ եմք գրել զգիրս դատաստանաց, յառաջ գրեմք զպատասխանիս այնոցիկ, որ բանբասեն զմեզ, եթէ չկա դատաստանք ի Հայք, զի յոլովք ի մէնջ պատուեն զայլազգիս, թէ դատաստանի գիր ունին ու մեք չունիմք: Եւ այս անյարմար մարդոց բանք են, որ ոչ գիրք են կարգացեալ և ոչ ուսեալ...

Ամփոփելով հայերեն բնագրի համեմատությամբ վրացերեն թարգմա-  
 լության բոլոր փոփոխություն-տարբերությունները, դրանք կարելի է դաս-  
 դասել հիմնականում մի քանի խմբի, որոնց թվարկման հերթականությունը  
 սույն հոդվածում, բնականաբար, պայմանական է:

1. Հայերեն բնագրի համապատասխան մասը կա վրացերենում, բայց  
 փոփոխված է տեղի պայմաններին կամ բարգմանիչ-խմբագիրների իրավա-  
 գիտակցության համապատասխան:

Հայերենը՝ Գ խմբը<sup>46</sup>. հոդված Բ

....եւ եթէ շինիցէ (թագավորը—ե. Թ.) քաղաք կամ բերդ, և թէ աշխար-  
 հագիր անիցէ, և թէ դահեկան կամ դրամ հատանիցէ, ինճնիշխան կամ օժ  
 առացէ, ըստ օրինաց դատաստանի...

Վրացերենը՝ հոդված 152

... და თუ ხელმწიფემ ააშენოს ცი-  
 ხე-ქალაქი და ან ასწეროს ქუეყანა, და  
 ან მოაჭრევინოს ფლური ან თეთრი,  
 უნდა უფროსთა და თავადთა  
 ვეზირობითა და კითხვით  
 ქნას რიგისა სამარლისათა...<sup>47</sup>

...եւ եթէ թագավորը շինի բերդ-քա-  
 ղաք, կամ թե աշխարհագիր անի, և  
 կամ ոսկի կամ արծաթ դրամ հատի,  
 պետք է մեծամեծների ու քավաղների  
 հետ խորհրդակցելով ու նրանց հարց-  
 նելով անի, ըստ օրինաց դատաստա-  
 նի...

Հայերենը՝ հոդված է

....եւ ծածկեցաւ խարէութեամբ ծնողաց կնոջն, ի տունս իւրեանց առցեն  
 մինչև բժշկեսցի....

Վրացերենը՝ հոդված 157

...და ქალის დედ-მამას დაუმაღავს,  
 დედაკაცი იგი უნდა მამამ და დედამ  
 მისმან წაიყვანოს თავის სახლში. ამ-  
 დენი უნდა გაისარჯონ დედ-მანანი,  
 თუ ხატითა თუ ეჭიმითა, რომე კირო-  
*վաճառքը թագավորի հրամանով կարգավորվի, կամ քաղաքի պաշտոնյաների՝ ըստ հրամանի թագավորի: Թե՛ քաղաքում, թե՛ գյուղում, ამենուր նախկին (հին) ձևով պահեն չափը, կշիռը և լիարը<sup>117</sup> և գրանցով չափեն... Ով գողանա չափի ու կշռի մեջ, մեկի փոխարեն չորսը վերցնեն և վատ մարդու նշան դնեն, որ ուրիշը տեսնի և ալկա շանի...*

*Առևտրի մեջ ով խարի անգետի ու խեղճի, ինչպես գողի՝ այնպես պետք է մեկի փոխարեն չորսը վերցնեն:*

#### Հոդված 181

ყოველს ქუეყანას, ქალაქსა და სოფელსა, სადაც ოქროს ქანი გამოჩნდეს, მისი გამოსავლი ხელმწიფისა არის, და სადაც ვერცხლი გამოჩნდეს, დედოფლისა არის.

თუ სათავადოში გამოჩნდეს, აგრევე ოქრო ხელმწიფისა არის და ვერცხლი — დედოფლისა. და თუ ნება იყოს ხელმწიფისა, მას თავადსაც ერთი რამ წილი დაუდვას, და თუ არადა, ბძანება ხელმწიფისა გათავდეს.

სპილენძი, კალა და რკინა, და სხვა ამისთანა რაგინდარა თავადისა არის...<sup>118</sup>.

<sup>115</sup> დავით ბაგრატიონი... მიმოხილვა, էქ 293, ას'ა ნასს էქ 61, ჩამ. სამართალი, էქ 40.

<sup>116</sup> ქართული სამართლის ძეგლები, ტ. I, էქ 373—374.

<sup>117</sup> *ჩხაგრი* — საწყვო, სასწორი, ადლი და ლიტრა:

*Աთაჯისը՝ սაბღათ—հედიქი և სორიან მარამხსნისი* ჯაქ է, *ხერიორე*՝ აცი—არქინ, *მხარი*:

<sup>118</sup> დავით ბაგრატიონი... მიმოხილვა, էქ 226. *ასსა ნასს* էქ 62, ჩამ. სამართალი... էქ 67. *ძანიჭაგრ*. 263. ქართულის სჯულით და სხვათა ქვეყნის კანონით რაცა მადანი გამოჩნდეს, ხელმწიფისაა და მამულის პატრონს ცოტა მიეცემა რამე ან იქ განწესდება ზედამხედველად, რომ ერგოს რამე.

<sup>119</sup> ქართული სამართლის ძეგლები, ტ. I, էქ 289.

Ամեն երկրում, քաղաքում և գյուղում, ուր ոսկու հանք բացվի, գրա հանույթը թագավորինն է, իսկ որտեղ արծաթ բացվի՝ թագուհունն է:

Թե թավաղի երկրում բացվի, նույնպես ոսկին թագավորինն է և արծաթը՝ թագուհուն: Եվ թե կամք լինի թագավորին՝ տա որևէ մաս թավաղին, ապա թե ոչ՝ թագավորի հրամանը կատարվի:

Պղինձ, կլայեկ և երկաթ և սրանց նման այլ ինչ որ է, թավաղինն է:

Թեև նյութը հնարավորություն է տալիս շարունակելու համադրությունը, սակայն թվում է գրա հարկը շկա<sup>120</sup>, որովհետև եզրակացության էությունը չի փոխվում: Արքայազն Դավթի գործերը, ինչպես ակնարկեցինք վերը, արտահայտում են Վրաստանում գործող իրավունքը XVIII դարի երկրորդ կեսից մինչև դարավերջը բնկած ժամանակահատվածում, մասնավորապես Վրաստանի Ռուսաստանին միանալու նախօրյակին: Այդ գործերում գտնում ենք մի շարք հողվածներ նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքից, որով դարձյալ հաստատվում է, որ վերջինս Վրաստանում գործող օրենքներից էր նաև նշված ժամանակահատվածում: Արքայազն Դավթի ակնկալությամբ, իր կազմած Օրենսգիրքը պետք է գործեր ինքնուրույն Վրաստանում, և ապա, գրա ուսական տարբերակի ձևով, Ռուսաստանին միացած Վրաստանում, այլ կերպ՝ արքայազն Դավթի ու նրա հոր՝ Գեորգի թագավորի կամքով Մխիթար Գոշի Դատաստանագիրքը (հարկավ ոչ ամբողջությամբ) ևս համարվել է Վրաստանում գործադրելի օրենքներից մեկը: Վերը բերված (ու շքերված նաև) փաստերը թույլ են տալիս անելու հետևյալ բնդհանուր եզրակացությունը. Մխիթար Գոշի Դատաստանագիրքը վրացերեն խմբագրությամբ գործող օրենք է, եղել Վրաստանում թարգմանության ժամանակից սկսած մինչև Վրաստանի Ռուսաստանին միանալը:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի այնպիսի արմատական գոյություն ու ազդեցության փաստը Վրաստանում, հարկավ, դժվար կլինի բացատրել միայն XVIII դարի իրողությամբ և ենթադրել է տալիս պատմական շատ ավելի մեծ խորք, որտեղից գալիս են երկու բախտակից ու եզրայրական ժողովուրդների սերտ հարաբերությունները: Այս և պատմական մի շարք այլ փաստերի հիման վրա ակադ. Ի. Զավախիշվիլին, որին միանում է նաև ակադ. Ի. Գուլիձեն, իրավացիորեն եզրակացնում են, որ Մխիթար Գոշի Դատաստա-

120 Բերված, ինչպես և մի շարք այլ օրինակներ ևս տե՛ս Վ. Վ. Գուլիձեի և Ս. Գուլիձեի «Վրացական պատմություն», Երևան, 1959, էջ 61—65, բայց որում Ա. Ռոզդվայի բերածներին կարող ենք ավելացնել այլ հողվածներ ևս, որոնք արքայազն Դավթի վերջին է Մխիթար Գոշի Դատաստանագրքից: Արքայազն Դավթի այս գործերը, որոնք հեղինակի անձի ու դրաված գիրքի պատճառով նաև, միանգամայն արժանահավատ ու վստահելի ազդյուր են, բան Մ. Կեկելիայի բերած վճիռ-դատավճիռները, որովհետև բնարված են ինչ-որ չափով միակողմանիորեն և բանակն էլ չափազանց սահմանափակ է, մի անգամ ևս հերքում են Մ. Կեկելիայի տեսակետը:





ществленного искажения смысла статей последнего. Этот перевод не может быть рекомендован для использования в научных целях.

Отметим также, что грузинская редакция «Судебника» Мхитара Гоша применялась в Грузии в качестве одного из общегрузинских законов. Она оказала определенное влияние как на Уложение царя Вахтанга, так и на последующее грузинское законодательство.

Кн. А. THOROSSIAN

## LA RÉDACTION GÉORGIENNE DU CODE DE LOIS ARMÉNIEN DE MKHITAR GOCH

(Résumé)

Le prince héritier géorgien, futur Vakhtang VI, étant gouverneur de Kartli, entre les années 1703—1709, rédigea son Recueil de lois auquel il joignit, au nombre d'autres lois étrangères, la traduction géorgienne du Code de lois de Mkhitar Goch.

D'après le point de vue admis dans la littérature la traduction géorgienne de ce Code diffère considérablement de l'original arménien par son contenu et par sa forme. Ce point de vue reflète partiellement l'état réel des choses, mais en somme il ne correspond pas à la réalité. Jusqu'à présent la traduction géorgienne était comparée au texte arménien connu d'après une édition unique réalisée en 1880 par V. Bastamiantz. Cependant les recherches des dernières années ont montré que le Code de Mkhitar Goch nous est parvenu en trois rédactions (A, B, C), celle éditée par V. Bastamiantz (B) étant un remaniement postérieur de la rédaction initiale de l'auteur. Les rédactions A et C diffèrent de la rédaction B autant que la rédaction géorgienne.

La collation de la rédaction géorgienne avec les trois rédactions arméniennes du Code de Mkhitar Goch a montré que c'est la rédaction C de l'original arménien qui a été traduite en géorgien. Le traducteur n'a introduit aucun changement dans le système de l'original. Quant aux modifications essentielles, toutes celles attribuées jusqu'à présent au traducteur-rédacteur ne lui appartiennent pas. La majorité de ces modifications, constatées lors de la collation avec la rédaction B, existent dans la rédaction C. Cependant, même comparée à la rédaction C, la variante géorgienne n'est pas la traduction exacte et adéquate de l'original arménien. Lors de la traduction certains articles du texte arménien ont subi des modifications déterminées en fonction des conditions de lieu et de temps et de la conscience du droit du traducteur-rédacteur. Outre cela, il y a des cas d'abréviation et d'extension des articles ou de morcellement d'un article en plusieurs.

Il faut noter que la traduction russe, éditée en 1828, réalisée d'après la rédaction géorgienne et quelque peu corrigée par la suite, diffère

considérablement non seulement de l'original arménien mais aussi du texte géorgien. Les cas d'altérations importantes du sens des articles de ce dernier sont fréquents. Cette traduction ne peut être utilisée dans des buts scientifiques.

Notons également que la rédaction géorgienne du Code de Mkhit'ar Goch a été en vigueur en Géorgie en tant que loi géorgienne. Elle a eu une influence déterminée aussi bien sur le Code du roi Vakhtang que sur la suivante législation géorgienne.

ԼԵՎՈՆ ԽԱԶԻԿՅԱՆ

ԱՐՏԱԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԾՈՐԾՈՐԻ ԴՊՐՈՑԸ

Պատմական Հայաստանի վասպուրական նահանգի Արտազ գավառը, որ հնում կոչվել է Շափարշավան գավառ, իսկ միջնադարում՝ Մակու կամ Առաքելոց երկիր, կարևոր դեր է կատարել հայոց տնտեսական, քաղաքական և եկեղեցական պատմության մեջ: Հնագույն ժամանակներից ի վեր այդ շրջանով է անցել Փոքր Ասիան Հայաստանի, Ատրպատականի և Իրանի հետ շաղկապող մայրուղին. Արշակ Բ արքան այստեղ է կառուցել Արշակավան քաղաքը, փորձելով այն դարձնել թագավորական իշխանության հենարանը՝ կենտրոնախույս ուժերի դեմ մղած իր պայքարում. այստեղ է գտնվում Ավարայրի դաշտն ու Տղմուտ դեպը, տեղանուններ, որ հավերհ կենդանի են հայ ժողովրդի հիշողության մեջ՝ շաղկապված լինելով 451 թվականին Պարսից զերազանց ուժերի դեմ հայրենիքի ազատության համար մաքառած հերոսների փառքին: Նույն այս բնաշխարհի հետ են աղերսվում նաև հայ եկեղեցու առաքելական սկզբնավորության մասին հյուսված հնարույր ավանդությունները և այլն:

Չնայած վերոհիշյալ հանդամանքներին, Արտազի պատմությունը հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել, առաջին հերթին պատմական սկզբնաղբյուրների աղքատիկ լինելու հետևանքով:

XIII դարի կեսերին ճոխացված ու գունազարգված վկայաբանական երկրի մեջ Արտազի մասին առկա տվյալներից կարելի է հետևցնել, որ այդ գավառը մեր թվարկության առաջին դարերին պատկանել է Արշակունիներին, մաս կազմելով արքունի տան՝ Ոստանի: Մի այլ վարկածով այն եղել է Ամատունյաց նախարարների բնօրրանը<sup>1</sup>: Թերևս ի նպաստ այս կարծիքի Թովմա Արծրունի պատմիչը վկայում է, որ IX դարի վերջերին Ամատունյաց տան եպիսկոպոս Գրիգորը իր աթոռը փոխադրել է Արտազ գավառի այն վայրը, ուր Թադևոս առաքյալի գերեզմանն է նշվել. «նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդողական գաւառի»<sup>2</sup>:

Այլ տեղեկություններ չկան, ուստի սկզբնաղբյուրները հնարավորություն չեն բնձնում հետևելու Հայոց հնամենի այս բնաշխարհի կապակցված պատմությանը. ի՞նչ անցուղարձեր են տեղի ունեցել այստեղ, ո՞վ է իշխել, ո՞ւմ ենթարկվել և այլն:

<sup>1</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб. 1908, էջ 304, 321.

<sup>2</sup> Թովմայի վարդապետի Արժուհայ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 259:

Այսպես՝ մինչև 1247 թվականը, հրք Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221—1267) հատուկ կոնդակով Քաղնոս առաքյալի անվամբ սրբազորոված այս վայրը դառնում է Հայոց եկեղեցու նորաստեղծ մի թեմի կենտրոն, Առաքելոց աթոռի առաջնորդությունը ժառանգած գերդաստանի հոգևոր և աշխարհիկ գործիչներին հաջողվում է Արտազի շրջանը դարձնել իրենց տիրույթը. այսպիսով, դարավոր ընդմիջումից հետո, այստեղ վերահաստատվում է հայկական իշխանությունը, որ գոյատևում է շուրջ մեկուկես հարյուրամյակ (մինչև 1426 թվականը), զգալի դեր կատարելով օտար լծի տակ կեղերվող ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքում:

Մեր այս հոգվածով փորձելու ենք համախմբել մեզ մատչելի ցաքուցրիվ աղյուսները, որոնք նպաստում են մոնղոլական տիրապետության ժանր տարիներին ստեղծված հայկական այս իշխանության պատմությունն ուսումնասիրելու գործին: Մեր նպատակի իրագործման ճանապարհին հաղթաճարվելու են դժվարություններ, կապված ինչպես անհրաժեշտ նյութի պակասի, այնպես էլ ժամանակաշրջանի քաղաքական պայմաններին առնչվող մի շարք հարցերի ոչ բավարար մշակված լինելու հետ: Ըստ այդմ հարկադրված ենք Լոբել երբեմն բուն նյութից զգալի շեղումներ կատարել՝ քննարկվող ժամանակաշրջանի պատմության կնճառոտ հարցերը լուսարանելու նպատակով:

Շարադրանքը բաժանել ենք երկու մասի՝ առաջինը նվիրելով Արտազի հայկական իշխանության պատմությանը, երկրորդը՝ նրա մշակութային կենտրոն Սորժորի վանքին:

## I

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱՋԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

(XIII—XV դարեր)

1. Հայ-մոնղոլական հարաբերությունները XIII դարի կեսերին.—Երբ մոնղոլներն սկսեցին իրենց աշխարհավեր արշավանքները և քայլ առ քայլ առաջ շարժվելով նվաճեցին Միջին Ասիայի, Ռուսաստանի ու Մերձավոր Արևելքի բարեբեր երկրամասերը, նրանց զավանանքի և առաջխաղացման քաղաքական դրդապատճառների մասին ծայր առան ու սփռվեցին անըստույգ, մտացածին լուրեր: Ասում էին, որ իբր այս նոր աշխարհակալները «մոզք են և քրիստոնեայր հաւատով, և նշանագործք. և եկեալ են ի վրէժխընդրութիւն քրիստոնէից, որ ի բռնութենէն տաճկաց: Եւ ասէին, թէ ունին եկեղեցի վրանեայ և խաշ սքանչելագործ» և այլն<sup>3</sup>:

Մահմեդական իշխողների բռնություններին ենթակա քրիստոնյա ժողովուրդների լայն շրջաններում, ինչպես նաև արևմտաեվրոպական մի շարք երկրներում, ուր խաչակրաց նոր արշավանքների ծրագրեր էին մշակվում, մոնղոլների մասին այս «սուտ համբավը» (Վ. Գանձակեցի) պարարտ հող պահանջով՝ տարածվում էր անարգել: Մոնղոլներին համարում էին այն ժողովուրդը, որոնց թագավոր-մոզքերը երկնառաք պատգամով Արևելքից Բեթղե-

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 202:

հեմ էին եկել նորածին աստվածորդուն՝ Հիսուս Քրիստոսին երկրպագելու<sup>4</sup>։ Կրկին շրջանառության մեջ էր գրվել մեկզարյա հնություն ունեցող լեզենդը Հեռավոր արևելքում Հովհաննես երեցի կողմից հիմնադրված քրիստոնյա հզոր պետության մասին։ Ինչպես իրավացիորեն նշել են ուսումնասիրողները, այս լեզենդի հիմքում ընկած էր այն իրողությունը, որ ասորի նեստորականների ծավալուն միսիոներական գործունեությունը շոշափելի արդյունք էր տվել կենտրոնական Ասիայում ստեղծված Կարակիտայների պետության (Իալասագուն մայրաքաղաքով) սահմաններում։ Այս նորելուկ պետության հիմնադիր Ելույ Գաշին (մ.հ. 1143 թ.) հենվում էր նեստորականների վրա, իսկ նրա որդին, որ քրիստոնեական Իլյա անունն էր ստացել, թագավորելով 1151—1161 թթ., կարողացավ պահպանել իր հոր ստեղծած ընդարձակածավալ պետության քաղաքական կշիռն ու հեղինակությունը. հայր և որդի այս դուրխանների գործունեության շուրջ արևմտյան երկրներում տարածված լուրերի հիման վրա հյուսվեցին հեռավոր արևելքում գոյություն ունեցող քրիստոնեական մեծ մի պետության մասին շրջանառության մեջ գրված առասպելները<sup>5</sup>։

Անհրաժեշտ է այստեղ ավելացնել, որ հեռավոր արևելյան այդ երկրամասերում սիրիացի նեստորականների հետ միասին, մանավանդ XIII դարի կեսերին, եռանդուն գործունեություն էին ծավալել նաև հայոց եկեղեցու պաշտոնյաները, որոնց գերը սովերի տակ է մնացել։ Մոնղոլ տիրակալների արքունիքներում հայ միսիոներների և քաղաքական գործիչների կատարած դերը բացահայտելու համար հատուկ ու մանրակրկիտ ուսումնասիրություն պետք է կատարել, որ դուրս է մեր նպատակներից։ Հարկ է նշել, սակայն, որ XIII դարի 40—50-ական թվականներին, երբ մոնղոլական հորդանների հետագա արշավանքների ուղիներն էին կանխորոշվում, հատկապես աշխույժ գործունեություն ծավալեցին հայ դիվանագետներն ու քարոզիչները, անպարտելի համարվող նոր աշխարհակալների գործությունը հայ ժողովրդի, մասնավորապես Կիլիկյան հայկական թագավորության առջև ծառայած քաղաքական խնդիրներին ի նպաստ օգտագործելու հույսով։

Գույուկ խանի (1240—1248) մահվանից հետո բովանդակ կայսրության փաստական տիրակալ դարձած Բաթու խանի մերձավոր խորհրդականների շարքում կային փորձառու հայ գործիչներ. թարգմանի պաշտոն վարող և այլ ծառայություններ կատարող այդ հայերը առիթ չէին կորցնում սրելու մոն-

<sup>4</sup> Մեծահամբավ հայ մանրանկարիչ Քորոս Ռուսինը, Կոստանդին կաթողիկոսի պատվերով 1260 թ. Հոտմկլայում նկարազարդած իր ավետարանի «Մուսնոյ տեառն» տերունական նկարում, Քրիստոսին երկրպագող և նվերներ մատուցող երեք մոզերի կողքին նկարել է հինգ այլ կարմրազգեստ ու մոնղոլատիպ դեմքեր, օժտելով նրանց «թաթարն երեկ այսար» (այսօր եկավ թաթարը) բացատրականով (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 251, էջ 14բ)։ Սրանով մեր մանրանկարիչը, խախտելով սուրբ գրքի պատկերազրույցի ավանդական ձևերը, քաղաքական երանգ է տվել կաթողիկոսի պատվերով նկարազարդվող փառաշուք այդ ավետարանին։ Մոնղոլներին դասելով Քրիստոսի ավետարանով սրբազորված ժողովուրդների շարքը, նա ընդառաջել է նոր այդ աշխարհակալների հետ համագործակցության և բարեկամության դաշինք կնքած Կիլիկյան հայկական թագավորության իշխող շերտերի նկրտումներին։

<sup>5</sup> Л. Н. Гумилев, Поиски вымышленного царства (легенда о государстве пресвитера Иоанна\*), М., 1970, էջ 128 և հետ.։

դրվելիք և մահամեղակա՞ն աշխարհի հակամարտությունները<sup>6</sup>: Բաթուի ժառանգ Սարթախին նույնպես շրջապատում էին «հայ հոգևորականներ, որոնք գիտեին թյուրքերեն և արաբերեն»<sup>7</sup>: Սրանց մասին տեղեկություններ կան նաև հայկական աղբյուրներում. Կ. Գանձակեցին, օրինակ, հայտնում է, որ Բաթու խանի մոտ գտնվում էին բազմաթիվ հայ «վարդապետք և եպիսկոպոսու՞նք և երիցունք», որոնցից Մարկոս վարդապետը, Գրիգոր եպիսկոպոսը, Մխիթարը և Բարսեղ քահանան (հատկապես վերջինս)՝ բաղաբաղական կարևոր դեր էին կատարում<sup>8</sup>:

Հեթում թագավորի՝ Մանգու խանի մոտ այցելելուց մի քանի ամիս առաջ Ղարաղորում էր եկել և մեծ խանի հորդայում բարձր դիրք զբաղել Երուսաղեմի սուրբ Հակոբյանց վանքի կամ Պաղեստինի մի այլ վանական հաստատության միաբան Սարգիս ճգնավորը: Այս խորագետ ու ճարպիկ գործիչը աստվածաբանական գիտելիքներ չունեցող ու հազիվ գրագետ մեկը լինելով, խոսում էր արևելյան ու եվրոպական մի շարք լեզուներով: Մեծ խանի վրանից ոչ հեռու նա կանգնեցրել էր խաչակիր զաղաթով մի վրան-մատուռ, զարդարել այն զեղեցիկ սպասներով և խանի ու նրա մերձավորների շրջանում անարգել քարոզում էր քրիստոնեություն: Եթե մեծ խանը քրիստոնեություն ընդունի, համոզում էր նա, ողջ աշխարհը, նաև ֆրանկները՝ պապի գլխավորությամբ, կենթարկվեն նրան, ընդունելով մոնղոլների գերիշխանությունը<sup>9</sup>:

Սարգիս ճգնավորը պարտադեմ հող նախապատրաստեց Կիլիկյան Հայաստանի գահակալ Հեթում թագավորի համար, որը հրավիրված էր Ղարաղորում, բանակցելու մեծ խանի հետ:

Հեթումը բարեկամական կապերի մեջ էր Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Թ-ի հետ, որն այդ ժամանակ գտնվում էր Սիրիայում, պատերազմելով էյուբյանների դեմ: Քրիստոնյա այս գահակալները, անտարակույս, միասնական ծրագիր էին մշակել մոնղոլների հետ բանակցություններ վարելու նախօրեին: 1254 թ. գարնանը դուրս գալով Սիս մայրաքաղաքից ու ծպտյալ անցնելով Իկոնիայի սուլթանությանը պատկանող շրջաններով, Հեթումը հասավ Հայաստան և կանգ առավ Արագածոտնի տեր Քուրդ Վաչուտյանի իշխանանիստ Վարդենիս գյուղում: Այստեղ նա տեսակցություն ունեցավ մի շարք հայ իշխանների ու եկեղեցական բարձրաստիճան գործիչների հետ: Վարդենիս եկավ նաև Հակոբ վարդապետը, որ ուղարկվել էր Տրապիզոնի կայսեր մոտ,

<sup>6</sup> «Путешествия в восточные страны Плато Карпини и Рубрука», редакция, вступительная статья и примечания Н. П. Шастиной, М., 1957, էջ 136:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>8</sup> Կ. Գանձակեցի, էջ 366:

<sup>9</sup> «Путешествия в восточные страны», էջ 138: Այս գործի մասին մանրամասն տեղեկություններ գրանցած Ռուբրուկը ամենուրեք նրան կոչում է «հայ կրոնավոր», մի քանի անգամ հայտնում, որ նա եկել է Երուսաղեմի սուրբ երկրից և վերադառնալու է իր եկած վայրը՝ «Սուրբ Հակոբ», այսինքն Երուսաղեմի Հայոց գլխավոր վանքը (և ո՛չ Իսպանիայի Հյուսիս-արևմտյան ծայրամասում գտնվող Ս. Հակոբ Կոմպոստելլա վանքի շրջանը, ինչպես ենթադրել է անգլիստիկոս Ռուբրուկի ուսերեն թարգմանչուհի-ժանոթագրողը): Չնայած այս բոլորին, որոշ ուսումնասիրողներ, հավատ ընծայելով Ռուբրուկի «Ուղեգրության» հրապարակողներից մեկի մտքած գլխակարգությանը և ինքնահնար խորագրերին (32-րդ դրուխն, օրինակ, խորագրված է այսպես. «Քրիստոնեական մատուռի և Սարգիս անուկով նեստորական կեղծ վանականի հետ հանդիպելու մասին»), այս նշանավոր հայ գործիչն նեստորական ասորի են համարել, արհամարհելով Ռուբրուկի տասնյակ պարզ ու մեկին պընդումները Սարգիս հայ լինելու մասին:

դավանաբանական և քաղաքական հարցերի շուրջ բանակցելու հանձնարարություններ: Անհրաժեշտ նախապատրաստություններն ավարտելով, թագավորն անցավ Բաթուի և Սարթախի մոտ, որտեղ հաստատվել էին կասպից ծովից հյուսիս՝ Վոլգա գետի ափերին: Այստեղից մեկնեց Ղարադորում՝ Մանգու մեծ խանի արքունիքը, ուր մնաց 50 օր և, հաջողությամբ ավարտելով իր առաքելությունը, վերադարձի ուղին բռնեց: Հեթումին առաջնորդեցին այնպիսի ճանապարհով, որ նա տեսակցություն ունենա Մանգու խանի եղբայր Հուլադուի հետ: Իլխանության ապագա հիմնադիրը իր հորդայով շարժվում էր արևմուտք՝ ստանձնելու նվաճված Իրանի և Անդրկովկասի կառավարություններ, նոր նվաճումներ կատարելու Մերձավոր արևելքում և Փոքր Ասիայում:

Հեթումի բանակցությունները պսակվեցին հաջողությամբ. այդ մասին մանրամասն տեղեկություններ է գրանցել նրա եղբորորդի Հեթում պատմիչը՝ 1307 թ. ֆրանսերեն լեզվով թելադրած իր «Պատմության» էջերում (պահպանվել է ֆրանսերեն ու լատիներեն խմբագրություններով ու բազմիցս հրատարակվել է Եվրոպայում): Ուսումնասիրողները իրավամբ նշել են, որ Հեթում պատմիչը իր երկը ստեղծելով 1254 թ. բանակցություններից կես դար հետո, ժամանակի պահանջներից ելնելով, կարող է շափաղանցրած լինել հայ-մոնղոլական բանակցությունների արդյունքը, իր թագավոր հորեղբորը քրիստոնյա աշխարհին ներկայացնելով որպես մոնղոլների ահուկի ուղի մական ուժը ի նպաստ խաշակիր պետությունների օգտագործելու վաղեմի ծրագրերի իրականացման գծով մեծ հաջողություններ արձանագրած քաղաքական գործիչ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, բնաբար ու զգուշորեն պետք է օգտագործել Հեթումի «Պատմության» մեջ ամբարված արժեքավոր տվյալները: Սակայն բավարար հիմքեր չկան մեր պատմիչին անարժանահավատ սրակելու, ինչպես հակված են որոշ ուսումնասիրողներ<sup>10</sup>: Պետք չէ մոռանալ մանավանդ այն հանգամանքը, որ արքայազարմ պատմիչն իր տեղեկությունները քաղել է իրադարձությունների զլխավոր դերակատար Հեթում թագավորից<sup>11</sup>:

Արդ, ի մի բերելով Հեթում պատմիչի և այլ սկզբնաղբյուրների տվյալները, կիլիկյան հայ գահակալի և Մանգու մեծ խանի բանակցությունների կարևոր արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ վեց կետերով.

1. Մոնղոլները համաձայն են քրիստոնյա գառնալ, սակայն այդ պետք է կատարվի յուրաքանչյուրի բարի կամքով, «քանի որ հավատքը բռնադատություն չի հանդուրժում»:

10 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Գրվազներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 174—175:

11 Ա. Գալստյանը «Հեթումի «Պատմություն թագապաշտ» գրքի բնութագրման հարցի շուրջ» հոդվածում (Տեղեկագիր, 1958, № 9, էջ 63—72) փորձում է համոզել, որ Հեթում պատմիչի գրանցած տեղեկությունների սկզբնաղբյուրը Սմբատ սպարապետն է, որն, իբր, բնկերակեցել է իր թագավոր եղբորը՝ նրա Ղարադորում կատարած ճանապարհորդության ընթացքում և այլն: Այս հայտարարությունները անհիմն են ու անընդունելի: Տեղին է, սակայն, նշել, որ Ա. Գալստյանը հայ-մոնղոլական քաղաքական կապերի ուսումնասիրության գծով զղալի աշխատանք է կատարել, պարզել է շատ թյուրիմացություններ ու ճիշտ գնահատել 1254 թ. բանակցությունների արդյունքը: Տե՛ս նրա «Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից» աշխատությունը (Անինական, 1945) և «Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները» հոդվածը («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 91—106):

2. Քրիստոնյաների և մոնղոլների միջև կայուն խաղաղություն և հարատև բարեկամություն կլինի, եթե քրիստոնյաները շխախտեն այն:

3. Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ու եկեղեցու պաշտոնյաները ազատ են լինելու ամեն տեսակ հարկերից:

4. Մեծ խանի կամ նրա եղբայր Հուլաղուի գլխավորությամբ մոնղոլներն ազատագրելու են քրիստոնյաների սուրբ երկիրը՝ Պաղեստինը:

5. Բաղդատը պետք է գրավվի և խալիֆայությունը վերացվի:

6. Բոլոր այն շրջանները, որ բռնադրավել են Կիլիկյան թագավորությունից սելջուկները կամ այլ թշնամիներ՝ պետք է վերագարծվին: Կիլիկիային են կցվելու նաև այն տարածությունները, որոնք կնվաճի հայոց թագավորը մահմեդականների դեմ մղվելիք պատերազմների ընթացքում<sup>12</sup>:

Այս կետերի մեջ անհավատալի ոչինչ չկա: Մոնղոլ ավազանու ուժեղ մի խմբակցություն իրոք հակված էր քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու. մի շարք նշանավոր պետական գործիչներ, եթե չէին էլ դարձել քրիստոնյա, ոչ միայն չէին հերքում այդ մասին տարածվող լուրերը, այլ իրենք էին նպաստում դրանց շրջապատույթին<sup>13</sup>: Այդ հանգամանքը նպաստավոր դիրք էր ապահովում նրանց համար ինչպես Մերձավոր արևելքում, այնպես էլ եվրոպական մայր-ցամաքում նոր նվաճումներ ձեռնարկելու նախօրեին:

Քրիստոնեական վանքերի ու եկեղեցիների և, ընդհանրապես, բոլոր դավանանքների սրբատեղիների ու պաշտոնեության նկատմամբ մոնղոլները հովանավորող քաղաքականություն էին որդեգրել մինչև Մանգու խանի և Հեթումի բանակցությունները<sup>14</sup>: Ուստի ճշմարտացի ու ստույգ պետք է համարել Հեթում պատմիչի և ժամանակակից մյուս հեղինակների հավաստիացումն այն մասին, որ եկեղեցին ու կղերականությունը ապահարկ է ճանաչվել Մանգու խանի կողմից. «Ետ և գիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս», — գրել է Հեթում թագավորի վերագարծին Վարդենիս գյուղում նրա հետ տեսակցած ու նրա զրույցներին ունկնդիր դարձած Կիրակոս պատմագիրը<sup>15</sup>:

<sup>12</sup> „Recueil des historiens des Croisades. Documents arméniens“, t. II, էջ 164—165: Հայ-մոնղոլական բանակցությունների արդյունքի մասին հատվածների ուսուերեն թարգմանությունը տե՛ս Գ. Գ. Микаелян, История киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 310—312:

<sup>13</sup> 1240-ական թվականների վերջերին, օրինակ, Կիպրոսում գտնվող Լյուդովիկոս IX թագավորի մոտ եկան մոնղոլ ղեկավարներ՝ հայտնելով, թե մեծ խանը քրիստոնեություն է ընդունել ու մեծապես համակրում է քրիստոնյաներին (Գ. Микаелян, նշվ. աշխ., էջ 314): Բաթու խանի Սարթախ որդու քրիստոնյա լինելու մասին լուրեր էին շրջում ամենուրեք. «Սնալ քրիստոնեայ դայեկօք, և ի շափ հասեալ հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ յասորոցն» — հայտնում է Կ. Գանձակեցին (էջ 358):

<sup>14</sup> Ասորի մեծանուն վաճառական Թարան-Աթան, օրինակ, բազմաթիվ եկեղեցիներ էր կառուցել մոնղոլական տիրապետության տակ գտնվող այնպիսի վայրերում, ուր մինչ այդ «ոչ իշխելին անուանել զՔրիստոս»: Խիստ ուշագրավ են Կ. Գանձակեցու հաղորդած տեղեկությունները Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու խանի և Սարթախի կրոնական հաստատությունների նկատմամբ որդեգրած քաղաքականության մասին. «Սա (Սարթախը), — գրում է Գանձակեցին, — բազում դիրութիւն արար եկեղեցոյ և քրիստոնէից, և կամաւ հօր իւրոյ զրեաց զիր ազատութեան քրիստոնէից և եկեղեցեաց, և առաքեաց կողմանս սպառնալիս և մահ, եթէ ոք հարկ առնու յեկեղեցոյ, կամ ի նորին պաշտօնէից, զինչ ազգ և իցեն, այլ և ի տաճկաց մզբիթացն և ի նորին սպասատրաց» (Կ. Գանձակեցի, էջ 358):

<sup>15</sup> Կ. Գանձակեցի, էջ 367:



Հայ-մոնղոլական համաձայնության մյուս նախատեսումները (նախկինում Կիլիկյան թագավորության պատկանող շրջանների վերադարձման, Բաղդատի գրավման, Պաղեստինի ազատագրման մասին) քայլ առ քայլ սկսեցին իրագործվել այն բանից հետո, երբ Հուլաղու խանը հաստատվեց Իրանում և Անդրկովկասում ու ծնկի բերեց հաշիշյաններին: 1257 թ. Հեթում թագավորի զինական օժանդակությամբ մոնղոլները պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը և հասան մինչև Միջերկրական ու Սև ծովերը: Նույն թվականին սկսվեց նաև մեծ արշավանք դեպի Միջագետք՝ Բաղդատի խալիֆի դեմ. մոնղոլական բանակի կազմում կռվում էին նաև հայ ֆեոդալների՝ Զաբարիայի, Պառչ Խաղբակյանի, Սևադա Խաչենցու, Թադիադին Կյուրիկյանի և այլոց զորախմբերը: 1258 թ. փետրվարի 4-ին Բաղդատն ընկավ: 1259 թ. Հուլաղուի հրամանատարությամբ գործող մոնղոլական բանակն արշավեց Ասորիք, ուր իշխում էր էյուբյան մելիք Սալահեդդին Յուսուֆը: Հեթում թագավորը միացավ մոնղոլներին: Հալեպը գրավվեց այդ թվականի վերջերին, ապա հնազանդվեցին Դամասկոսն ու Սիրիական մյուս քաղաքները:

Հուլաղուն և Հեթումը պետք է այնուհետև արշավեին Պաղեստին և գրավեին Երուսաղեմը, բայց իր եղբայր Մանգու խանի մահվան լուրն ստանալով խանը ետ դարձավ, Ասորիքում թողնելով իր զորքի մի մասը Քիթբուդայի հրամանատարության ներքո: Մոնղոլական ջլատված ուժերն սկսեցին ծրագրված արշավանքը դեպի Պաղեստին, բայց այլևս անկարող եղան հաջող մարտեր մղել: Եգիպտոսի սուլթան Կուտուզը (ազ-Մուզաֆֆար Սայֆ ադ-դին Կուտուզ, 1259—1260) պարտության մատնեց Քիթբուդային, վերստին նվաճելով Սիրիան: Մեծ կորուստներ տվեցին նաև մոնղոլների զաշնակից հայ զորախմբերը<sup>16</sup>:

Ինչպես տեսնում ենք քաղաքական դեպքերի թուուցիկ այս թվարկումից, մոնղոլների և Կիլիկյան հայկական թագավորության միջև Հեթումի և Մանգու խանի բանակցություններից հետո, իրոք, մշակվել էր քաղաքական սերտ համագործակցություն: Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում նոր նվաճումներ կատարելու իրենց ծրագրերի իրականացման համար մոնղոլները զաշնակիցների պետք ունեին, և մոնղոլական տիրապետության տակ ընկած կամ գերիշխանությունը ճանաչած հայ իշխանների մի մասը, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, քաղաքական ու տնտեսական իրենց ակնկալություններն ունենալով, զաշնակցում էին մոնղոլներին:

XIII դարի կեսերի քաղաքական կացության համառոտ այս նկարագիրը, ինչպես կտեսնենք ստորև, նպաստելու է Արտադի հայկական իշխանության սկզբնավորման պայմանների ուսումնասիրությանը: Բուն նյութին անցնելուց առաջ անհրաժեշտ է, սակայն, համառոտ մի ակնարկով անդրադառնալ նաև նույն այս տարիներին Հայոց եկեղեցու առջև ծառայած քաղաքական ու գաղափարական խնդիրներին:

2. Հայոց եկեղեցին XIII դարի կեսերին.— Կիլիկյան հայկական թագավորությունը ամենասերտ տնտեսական ու քաղաքական կապերի մեջ էր եվրոպական երկրների և Մերձավոր արևելքում ստեղծված խաշակիր իշխանու-

<sup>16</sup> Այս դեպքերին, սկզբնաղբյուրների վկայակոչմամբ, մանրամասն անդրադարձել է ակադ. Հ. Մանանդյանը (Տե՛ս Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր III, Երևան, 1952, էջ 232—236):

թյունների հետ: Այդ երկրի տնտեսական բարգավաճ վիճակն իսկ առաջին հերթին պայմանավորված էր միջազգային տարանցիկ առևտրով, որի կարեւոր հանգուցակետերը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Կիլիկյան նավահանգիստներն էին: Կիլիկիայի հայ ավատատերերն ու մեծահարուստ վաճառականները, տնտեսական սերտ համագործակցության մեջ լինելով «Ֆոանկների» հետ, իրենց նիստուկացով և կենցաղով զգալապես հեռացել էին հայրենական ավանդներից, հագնվում ու պնդվում էին եվրոպացիների նման, խնամիական կապեր հաստատում խաչակիրների հետ՝ իրենց կյանքն ու կենցաղը հարմարեցնելով միջնադարյան Եվրոպայի շափանիշներին:

Կիլիկյան հայկական պետության շահերը եվրոպական երկրների հետ շաղկապած հասարակական շերտերը՝ ազգային դիմահեղման ընթացքի մեջ մտած խոշոր ավատատերերն ու մեծատուն վաճառականները, ընդառաջ գնալով կաթոլիկ եկեղեցու արևելք առաքվող պաշտոնյաների օրավուր՝ ծավալվող քարոզչությանը, պատրաստ էին նաև դավանաբանական գիշումներ կատարելու գնով սերտ միություն ստեղծել հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև: Հռոմկլրլայում հաստատված Ամենայն հայոց կաթողիկոսությունը XIII դարի կեսերին դեռևս ի զորու էր հակահարված տալու Վատիկանի գործակալներին և պաշտպանելու իր դիրքերը որպես ինքնագլուխ (ավտոկեֆալ) եկեղեցի:

1246 թվականին Հռոմի պապը, հատուկ պատվիրակի միջոցով, մի դրություն էր հղել Հեթում Ա. Թազավորին, որով Հայոց եկեղեցու ղափանանքը հերձվածոդական համարելով, կաթոլիկ եկեղեցու գիրկն էր հրավիրում «մուրթյալ» հայերին: Հռոմի եկեղեցին հիմնադրել է Պետրոս առաքյալը՝ Քրիստոսի սիրեցյալ աշակերտը («վճմն հաւատոյ»), ուստի բոլոր եկեղեցիները պարտավորված են ճանաչելու նրա հաջորդը համարվող պապի գերիշխանությունը. «Հռոմի աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ և արձակելոյ, և ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք» — գրված էր այնտեղ:

Հեթում Թազավորը, ինչպես և սպասելի էր, այդ մասին իրազեկ է դարձնում Կոստանդին կաթողիկոս Բարձրբերդցուն և ստանում նրանից մի ուշադրավ պատասխան, որը շարադրվել էր այդ ժամանակ Հռոմկլրլայում գրտնրվող Վարդան Արևելցու գործակցությամբ<sup>17</sup>:

17 Այդ պատասխան գրության ընդարձակ խորագիրն է. «Թուղթ Կոստանդնայ կաթողիկոսի Հայոց, զոր գրեաց առ Հեթում Թազավորն ի յաստուածապահ զղեկէս՝ ի հայրապետական աթոռոյս Հռոմկլաէս, ի մայրաքաղաքն Միս. պատասխանի թղթին, որ ի պապէն Հռոմայ բերաւ առ Թազավորն Հայոց Հեթում, ի ձեռն լիկաթին որ կոչէր Տիմանչ, ի թուխս Հայոց ի ՈՂԵ (1246), ի ձեռն արդինական վարդապետին Վարդանայ, յարմար իրիս» (Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 503—509):

Մ. Օրմանյանը (Ազգապատում, § 1129) այս գրության թվականը առաջարկում է սրբագրել ՈՂԷ (1248): Այդ թերևս հաստատվում է պապի վերահիշյալ գրությամբ, որ շարադրված է 1246-ին ու թարգմանված հայերեն 1247-ին: Ուշադրավ այդ գրությունը «Գիր դաւանութեան հռոմայեցոց ի Հայս՝ վասն բխման հողուն սրբոյն» խորագրով, պահպանվել է Մաշտոցի անվան մատենադարանի № 248 ձեռագրում: Բանասիրական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես գրության հիշատակարանը, որ տալիս ենք ստորև.

«...Արդ ևս Ֆրա Տիմանչ սպանօլ, որ եմ ըստ կարգի Ֆրա մնուրաց կաթոլիկէ առաքելական աթոռոյն ի Հայր, վկայեմ առաջի ամենակալին աստուծոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս, որ կարողութեամբ սուրբ հօրն և պապուն արդելեալ եմ ի ներքս ի բանադրանաց զամենեսեան զայնոսիկ զգրօղսն, զկարդացողսն, զունողսն և որք օրի-

«Հնգետասան սխալ և անընդունակ բան» գտնելով պապի գրության մեջ, կաթողիկոսն իր պատասխանով վճռականորեն մերժում է Պետրոս առաքյալի հաջորդի հիմնադրի պահանջները, հայտարարելով, որ Քրիստոսի բոլոր 12 աշակերտները համահավասար պատիվ և իշխանություն են ունեցել: Այս գրությունը պաշտոնական մի վավերագիր չէ, անշուշտ, այլ հայ եկեղեցու դահակալի մտերմական մի նամակը երիտասարդ թագավորին, սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Մ. Օրմանյանը, «մտերմական գրվածներ ավելի զորավոր են յուրաքանչյուրին ներքին համոզումը իմանալու համար, քան պաշտոնական գրություններ»<sup>18</sup>:

Առաքյալների համապատվության թեզը պաշտպանելով, Հայոց եկեղեցու վարիչները կաթոլիկ եկեղեցու հիմնադիր հռչակված Պետրոս և Պողոս առաքյալների դիմաց պարզում էին երկու այլ առաքյալների՝ Բարթուղիմեոսին և Քաղեոսին, որոնք, իբր, քարոզչական իրենց շրջագայություններն ավարտել ու իրենց վախճանը գտել էին Հայաստանի Արտազ գավառում, հիմնաքարը դնելով Հայաստանյայց եկեղեցու: Այս մասին տակավին V դարում հորինվել էին որոշ գրույցներ, բայց «հայոց առաքյալների» նահատակության պատմությունները ճոխացվեցին հենց Կոստանդին կաթողիկոսի աթոռակալության այս տարիներին, որոշակի տեղ մատնանշելով նրանց շիրիմների համար: Ուշագրավ է, որ պաշտոնական գրությունների մեջ, կաթողիկոսական իր տիտղոսից անմիջապես հետո («Մառայ Քրիստոսի և շնորհօք նորին կաթողիկոս Հայոց»), Բարձրբերզցին շեշտում էր Հայոց եկեղեցու «ընդ իշխանութեամբ գուազանի սրբոց առաքելոցն Քաթեդոսի և Բարթուղիմեոսի» լինելու պարագան:

Եվ ահա, պապի վերոհիշյալ գրության ստացման և պատասխանը պատրաստելու օրերին, Կոստանդին կաթողիկոսը հատուկ մտահոգության առարկա է դարձնում Քաղեոս առաքյալի վանքի վերաշինության հարցը, այն դարձնելով Հայաստանյայց եկեղեցու նորաստեղծ մի թեմի կենտրոն, որի հոգևոր իշխանության սահմանները տարածվելու էին շրջակա գավառների վրա, իրենց մեջ առնելով նաև Իրանում և Անդրկովկասում հաստատված մոնղոլ տիրակալների վարչա-քաղաքական կենտրոն Ատրպատականը՝ Մարաղա և Քավրիզ քաղաքներով<sup>19</sup>:

Կոստանդին կաթողիկոսն ու Հեթում թագավորը, վերոհիշյալ նկատառումներից բացի, հաշվի էին առնելու անշուշտ և այն հանգամանքը, որ Կիլիկյան հայկական թագավորության դաշնակից մոնղոլների վարչա-քաղաքական կենտրոնում ստեղծելով եկեղեցական նոր թեմ, իրենց մշտական ներ-

նակեն դալս թուխտս դաւանութեան հաւատոյ, որ յառաջմէն մինչև ի վերջն ոչ յաւելցուցանեն և ոչ պակասեցուցանեն, և ոչ փոխեն բնաւ ի բանիցս աչսոցիկ. և եթէ որ յանդգնի յիրացս և յառաջէ անել՝ եզիցի ձևոն տեառն ի նա: Գրեցաւ թուխթս այս ի թուականութեան լատինացոց յամս որ է ի մարմնանալ տեառն մերոյ ՈՄԽԶ, յամս նոյեմբերի և ի շորրորդ ամի եպիսկոպոսութեան տեառն պապոն, որ է շորրորդ Ըննիցունց (իմա՛ Ինովկենտիոս—Լ. Խ.): Եւ թարգմանեցաւ ի թուխ Հայոց ՈւՂ (1247), յամս կաթողիկոսութեան Հայոց տեառն Կոստանդնայ և թագաւորին Հեթմոյ և հօր նորին աւագ պարոն Կոստանդնի» (ձեռ. № 248, էջ 196բ):

18 «Ազգապատում», Բ հատ., Ա գիրք, Պէյրութ, 1960, էջ 1643 (§ 1120):

19 Հուլիզու խանի (1256—1265) ժամանակ մայրաքաղաքը Մարաղան էր, իսկ Արաղա խանը (1265—1282) իշխանության կենտրոնը փոխադրեց Քավրիզ (A. A. Али-заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, էջ 265):

կայացուցիչն էին ունենալու այնտեղ՝ հանձինս թեմական առաջնորդ եպիսկոպոսի:

Արտազի կամ Առաքելոց երկրի նորաստեղծ թեմի առաջնորդը, ստանձնելով իր պաշտոնը, կամա թե ակամա շփումներ ու բախումներ էր ունենալու հարևան շրջանների, մասնավորապես Սյունիքի ու Վասպուրականի հոգեվոր առաջնորդների հետ: Սրանք, բոս մեծի մասին լինելով կրոնավորի սրեմ հագած ավատատերեր, գործում էին ի շահ իրենց գերզաստանների, եկեղեցական կարվածատիրության ցուցանակների տակ ապահովելով բանագրաման վտանգից իրենց կարվածքների մի մասը: Ի տարբերություն հին ու պատմական անցյալ ունեցող թեմերի իշխանաշուք առաջնորդների, Արտազի եպիսկոպոսը նորաստեղծ իր թեմի դիրքը, հեղինակությունն ու անտեսական կշիռը բարձրացնելու համար հենվելու էր, հիմնականում, Ամենայն հայոց կաթողիկոսության և նրան զորավիգ կանգնած Կիլիկյան հայկական թագավորության վրա, հանդիսանալով նրանց մշակած քաղաքականության ջատագովր Մեծ Հայրում:

3. Արտազի թեմի հիմնադրումը և Թաղեոս առաքյալի վանքի վերաշինումը. — Թաղեոս առաքյալի անվան եպիսկոպոսանիստ վանքի վերաշինման մասին տեղեկություններ պահպանած կարևոր սկզբնաղբյուրը Կ. Գանձակեցու «Պատմությունն» է: Նրա վկայությամբ վանքն ավերված է եղել «ի թուրքաց և ի հինիցն վրաց»<sup>20</sup> շատ ժամանակ առաջ («քանզի յոլով ժամանակս անբնակ էր ի մարդոյ և ամայի»<sup>21</sup>): Վանքի վերաշինությունն աշխատանքները ղեկավարել է նշանավոր դիտնական և եկեղեցական գործիչ Հովհաննես Վանականի աշակերտներից Հովսեփ վարդապետը, որն այդ ժամանակ, իր Կիրակոս ու Վարդան դասընկերների հետ միասին, մեծ հեղինակություն վայելող եկեղեցական էր:

Կոստանդին կաթողիկոսը 1247 թվականին, հատուկ կոնդակով, որոշեց Թաղեոս առաքյալի նորաստեղծ թեմի սահմանները և հորդորեց վանքի վերաշինման նպատակին հատկացնել «ոսկի հոլով»: Հովսեփ վարդապետը, նյութական ու բարոյական օժանդակություն ստանալով, դիմում է Անապուրակնուփն կոչվող մոնղոլ ցեղապետին, որի գերզաստանի ամառային կայանքը գտնվում էր վանքի շրջակայքում, և նրանից թույլտվություն ստանալով վերաշինում է եկեղեցին, կառուցում զավիթ և այլ շինություններ, մեծ միաբանություն ստեղծում («շինեաց զվանսն և ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս»): Ուշագրավ է Կ. Գանձակեցու և այն խոսքը, որ «զօրքն թաթար ոչ էին թշնամի խաշի և եկեղեցւոյ, այլ և յոյժ պատուէին և բնծայս մատուցանէին, քանզի նախանձ հակառակութեան առ նոսա ոչ գտանիր»<sup>22</sup>:

Ե՛րբ ավարտվեցին շինարարական այս աշխատանքները, ստույգ շփտենք, կարելի է ենթադրել, որ 50-ական թթ. վերջերին: Չգիտենք նաև որքան է ապրել Արտազեցի կոչված Հովսեփ վարդապետը և երբ կնքել իր մահկանացուն: Նրան հաջորդել է Տիրացու եպիսկոպոսը, որ աշակերտել է Վարդան

<sup>20</sup> Վրաց գորբերի այս կողմերը կատարած արշավանքի մասին խոսք կա նաև XIV դ. վրաց անանուն ժամանակագրի մոտ. նրա տվյալներով Շահնշահ և Ավագ Զարարյանները շուրջ 30 հազար զորքով անցել են Արաքսը և հաջող մարտեր մղել թուրքերի դեմ Վաղարշակերտի և Ելաթի կողմերում: Հավանաբար մի զորախումբ էլ մտել է Արտազի շրջան, հալածելով թուրքերին (տե՛ս Վրաց ժամանակագրություն (1207—1318), Երևան, 1971, էջ 91):

<sup>21</sup> Կ. Գանձակեցի, էջ 311:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 312:

Արևելացուն<sup>23</sup>: Սա պաշտոնի վրա էր արդեն 1285 թվականին, երբ նրա մոտ իջևանեց և հյուրընկալվեց Կիլիկիայի Լեոն Գ թագավորը (1270—1289) Արդուն խանի արքունիքն այցելելու ճանապարհին: Այս եպիսկոպոսի Տիրացու անունը ենթադրել է տալիս, որ նա մանուկ հասակից ընտրված է եղել ու դաստիարակվել որպես Թագևոս առաքյալի թեմի եպիսկոպոսացու: Միջին դարերում Հայաստանի եկեղեցական թեմերի ու նշանավոր վանական հաստատությունների առաջնորդական պաշտոնը, գրեթե ամենուրեք, ժառանգական բնույթ էր ստացել և փոխանցվում էր առաջնորդի մերձավոր ազգականներից մեկին (մեծ մասամբ՝ եղբոր որդուն), որը պաշտոնի էր կոչվում իր տարեց հորեղբոր կենդանության օրոք, և փոխարինում նրան՝ մահվանից հետո: Ամենայն հավանականությամբ այդպես է եղել նաև տվյալ դեպքում, և Հովսեփ Արտագեցուն հաջորդել է Տիրացու եպիսկոպոսը՝ մերձավոր ազգականի հանգամանքով:

Տիրացու եպիսկոպոսը շարունակել է իր նախորդի գործունեությունը Արտագի նորաստեղծ թեմի տնտեսական ու դադափարական հիմքերն ամրապնդելու, նրա հոգևոր իշխանության տակ գտնվող վանական հաստատությունների շինության և կալվածքներով օժտելու գծով: 1289 թ. ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում հետաքրքրական տվյալներ են գրանցված այն մասին, որ «ի ձեռն... մեծ գիտապետիս տէր Տիրացուի», «սքանչելի հրաշխիք» հայանարելվել են Սուքիասյանց սրբերի նշխարները, շենացվել է Կողբա վանքը՝ վերստանալով նախկինում իրեն պատկանած կալվածքները. «Գանձագին արարեալ ազատեաց զբազմամեայ ծառայեալքս յայլազգեաց, եւ զհնացեալ եւ զամայացեալ հայրենիք եւ զվիճակ, որ յառաջ լեալ էր»<sup>24</sup>:

«Գանձագին արարեալ» — այսինքն հնչյուն զրամ վճարելով էին ընդարձակում իրենց կալվածքները Թագևոս առաքյալի նորաստեղծ թեմի առաջնորդները, ըստ երևույթին նյութական օժանդակություն ստանալով նաև Կիլիկիայի հոգևոր և աշխարհիկ ավատատերերից:

Տիրացու եպիսկոպոսը 1293 թ. շարադրված մի հիշատակարանի մեջ մեծարված է «գերահռչակ և արժանապատի եպիսկոպոս» խոսքերով, ասված է, որ նա փայլում է «իբրև զչահ վառեալ ի մէջ զիշերի», լինելով «նաւահանգիստ վառնդելոց և ծարաւելոց, շնորհաբ սուրբ առաքելոյն [Թագէտսի]»<sup>25</sup>:

Այս հիշատակարանն ուշադրավ է իր հարուստ բովանդակությամբ: Հեղինակը՝ Թորոս Գրազարեցին, ընկերակցությամբ Թովմաս եպիսկոպոսի, եկել

23 Տիրացուն 1266 թվականին Խոր-Վիրապում ընդօրինակել է իր ուսուցչի «Սաղմոսաց մեկնություն»-ը, իրեն կոչելով «անարժան աշակերտ... նորուն (Վարդանայ)»: (Ս. Տեր-Ավետիսյան, Յուդեական հայերեն ձեռագրաց նոր Ջուղայի, Վիեննա, 1970, էջ 551):

24 Ս. Տեր-Ավետիսյան, էջ 256:

25 Այս հիշատակարանը, որ ձեռագրից անշատ պահվում է Մաշտոցյան մատենադարանի պատասխիկների ֆոնդում (պատասխիկ № 919), պահվել է անցյալում Գողթան գավառի Ս. Թովմաս առաքյալի վանքի մի ձեռագրից, որ այժմ պահվում է Լենինգրադի էրմիտաժում (V 3—835 համարի տակ): Հիշատակարանը տպագրվել է բազմիցս. տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», выпуск XXIX. Тифлис, 1901, [А. И. Туманов], Арм. древние рукописи монастыря св. Фомы էջ 11, «Ազգագրական հանդես», XII, 1905, Ե. Լալայան, Գողթն գավառ, Ձեռագիրներ, էջ 155—156, Մ. Վ. Մախոյան, Նկարագրություն և իշխատակարանը ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոյ վանոց, «Արարատ», 1911, էջ 223—224, Զ. Ոսկյան, Վասպուրականի—Վանի վանքերը, Բ, էջ 470—471 և այլն:

է Մեծ Հայք, 1292 թ. գրավված ու ավերված Հռոմկլայի փոխարեն մի նոր վայրում կաթողիկոսական աթոռ հաստատելու և նոր գահակալ ընտրելու նպատակով Արևելյան Հայաստանի նշանավոր հոգևոր ու աշխարհիկ տերերին Կիլիկիա հրավիրելու հանձնարարությունը: Նա հայտնում է, որ Հեթում թագավորը, «բոլոր ուխտին եկեղեցույ և իշխանաւք հանդերձ» որոշել է «շնորհել բերդամուր և երկիր առատ սուրբ աթոռոյ ևուսաւորչին՝ առ ի հաստատել վերատին»: Այսպիսով պարզվում է, որ Եգիպտացիների կողմից գերեվարված Ստեփանոս Հռոմկլայեցի կաթողիկոսի մահվանից անմիջապես հետո Կիլիկիայում ժողով է գումարվել կաթողիկոսական աթոռի վերահաստատման օրակարգով:

XIII դարի վերջերին ծանր վիճակ էր ստեղծվել Կիլիկյան հայկական թագավորության համար: Հյուսիսից և հարավ-արևմուտքից արշավող թշնամիներն ասպատակում էին երկիրը, գերում ու թալանում. մոնղոլները, արդեն հակված մահմեդականության կողմը, այլևս շահ չունեին շարունակելու իրենց վաղեմի բարեկամությունը Կիլիկյան հայ իշխանության հետ. թուլացած ու միայնակ մնացած երկիրն այլևս անկարող էր տակալ գործը թշնամիների հարձակումներին: Հեթում Բ թագավորը, եվրոպական երկրներից ուղղման օգնություն ստանալու սին հույներ փայփայելով, կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը պաշտոնապես ընդունելու քաղաքականություն էր վարում: Հենց 1293 թ. նա հոգևոր կոչում էր ընդունել, դառնալով Ֆրանցիսկյան միաբանության անդամ՝ Հովհաննես կրոնավոր անունով<sup>26</sup>: Նույն քաղաքականության շատագուց էր նաև կաթողիկոսական գահի թեկնածու Գրիգոր Անավարդեցին, որը հակված էր հրաժարվելու հայ եկեղեցու դարավոր ավանդություններից, ծառայագրվելու կաթոլիկ եկեղեցու հովվապետին, հավատ ընծայելով խաչակրաց նոր արշավանքներ կազմակերպելու ձրի խոստումներին:

Հեթում թագավորն ու իր կուսակիցները պետք ունեին Մեծ Հայքի ամենախոշոր ու հեղինակավոր թեմական առաջնորդների, մասնավորապես Արտազի, Տաթևի, Հաղբատի ու Բջնիի եպիսկոպոսների աջակցությանը՝ իրենց ծրագրերն իրականացնելու ճանաչարհին<sup>27</sup>: Նրանց հետ բանակցելու նպա-

<sup>26</sup> Այս անունն ընտրվել էր ի պատիվ Ֆրանցիսկյան միաբանության նշանավոր գործիչ Հովանի (Հովհաննես) Մանտեկորվինոյի, որը Կիլիկիայում եղած տարիներին դարձել էր հայոց թագավորի մանրիմ խորհրդատուն («После Марко Поло, путешествия западных чужеземцев в страны трех Индий», перевод с латинского и старонитальянского языков, введение и примечания Я. М. Света, М., 1968, էջ 70—71):

<sup>27</sup> Մ. Չամչյանի (Գ, 37), Ղ. Ալիշանի (Շնորհալի..., 57), Մ. Յրմանյանի (Ազգապատում, § 930) և այլոց կարծիքով 1114 թ. Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կողմից Քեսոնի Կարմիր վանքում գումարված ժողովը հաստատել է կարգ, որի համաձայն կաթողիկոսական ընտրությունը վավերական է ճանաչվելու Մեծ Հայքի չորս գլխավոր աթոռների՝ Բջնիի, Հաղբատի, Տաթևի և Արտազի հովանության ղեկավարում: Այդ տարածված կարծիքը հիմնադրել է ու սխալ: 1114 թ. Արտազի աթոռ գոյություն չի ունեցել, իսկ Բջնին, XII դարում հայոց եկեղեցու նվիրատվության առումով, աննշան մի վայր է եղել: Կաթողիկոսական ընտրության վերահիշյալ կարգը, մեծ հովանակամությամբ, հաստատվել է հենց 1293 թ. խնդրո առարկա ժողովում, որը գումարվել էր Հռոմկլայի անկումից հետո՝ կաթողիկոսական աթոռի համար նոր նստավայր որոշելու և նոր կաթողիկոսի ընտրությունը նախապատրաստելու նպատակով: Այս թյուրիմացությունը, բոտ երևույթին, ծագել է Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսին Գրիգոր Գ. Պահլավունի (Փոքր Վկայասեր) կաթողիկոսի (1113—1166) հետ շփոթելու հետևանքով: (Անավարդեցին և,

աակով էր Հայաստան ուղարկվել թովմաս եպիսկոպոսի գլխավորած պատվիրակությունը, որը հանձնարարություն էր ստացել, առաջին հերթին, ներկայանալ Արտազի աթոռակալ տեր Տիրացուն<sup>28</sup>: Թագավորն ու կաթողիկոսացուն, անձամբ ճանաչելով այդ եկեղեցականին, գիտեին հավանաբար, որ նա լատինամետ քաղաքականության համակիրներից է: Ուշագրավ է և այն փաստը, որ հենց այս տարիներին Հեթում թագավորի պահանջով փորձ է կատարվում վերացնելու Աղթամարի կաթողիկոսության վրա 1114 թ. զբրված բանադրանքը, նաև Վասպուրականի հայ մեծամեծների համակրանքը շահելու մտահոգությամբ<sup>29</sup>:

1295 թ. աշնան ամիսներին մոնղոլական իշխանությունը փոթորկվել էր դահակալական արյունահեղ կոիվներով: Իշխանությունը զբաղված Բայզուի դեմ զահի հավակնորդ Ղազանը՝ Արղուն խանի որդին՝ ուղարկեց իր զորահրամանատար Նովրուզին, որը Նախիջևանում, 1295 թ. հոկտեմբերի 4-ին պարտության մասնեց ու սպանել տվեց Բայզուն<sup>30</sup>: Նովրուզ ամիրի և Սադրադին Սահիպ գիվանի նախաձեռնությամբ մոնղոլական զորամասերն սկսեցին անլուր հալածանքներ քրիստոնյա հպատակների նկատմամբ: Նախիջևանի, Արտազի և Մարաղայի շրջաններում ոչնչացվեցին մեծ թվով եկեղեցիներ և «բազում վիշտս և անհնարին աղետս հասուցին քրիստոնեից ընդ ամենայն տեղիս»<sup>31</sup>: Բարերախտաբար այս խժոժությունները երկար շտեկեցին. Նովրուզը շուտով, իր մերձավորների հետ միասին, կասկածվելով դավաճանության մեջ՝ մահապատժի ենթարկվեց: Ղազան խանը, ընդառաջելով իրեն այցի եկած Հեթում Բ թագավորին, հրաման արձակեց զազարեցնել բնություններն ու ավերածությունները, այդ բանի մեջ մեղադրելով մահվան դատապարտված Նովրուզին:

Արտազի Ս. Թաղեի վանքը մեծապես տուժեց Նովրուզի զորքերից. Տիրացու եպիսկոպոսը անասելի տանջանքների ենթարկվեց ու կողոպտվեց: Ատ. Օրբելյանն այդ մասին գրում է. «Ըմբռնեցին և դեպիսկոպոսն Առաքելոց զտէր Տիրացուն, և ազգի ազգի անարգանօք ձաղեցին, և առին զամենայն ինչս նորա. բայց ի վանքն նորա, որ էր շիրիմ սուրբ առաքելոյն Քաղէոսի, քանդեցին զշինուածս տանցն, անրեցին, կողոպտեցին և իսպառ կործանեցին»<sup>32</sup>: Նույն դեպքերի մասին տեղեկություններ է գրանցել նաև մի հիշատակագիր. «Ի թվին ՉեՉ (1297) էր աշխարհակալ Ղազանն, և եպիսկոպոս Սիւնեաց՝ Ստեփանոս Տարսայճի որդի, և եպիսկոպոս Քաղէոսի առաքելոյ՝ Տիրա-

որ Գրիգոր Գ-ի նման «վկայասեր» էր, հունական ու լատինական վարքերի թարգմանություններով ճոխացրել է հայկական Հայտնավորքը):

<sup>28</sup> Հիշատակարանում այդ մասին գրված է. «Եւ մեզ հրամայեալ ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն յառաջագոյն զալ ի սուրբ առաքելոյն Քաղէոսի, առ գերահռչակ և արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացու, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս Քաղէոսի առաքելոյ» (Մատենադարան, պատասիկ N 919):

<sup>29</sup> Հեթում թագավորին հասցեագրած իր մտերմական նամակի մեջ Գր. Անավարդեցին գրում է. «Աղթամարն օրհնել ետուր» (Կղեմէս Գալաեոս, Միաբանութիւն..., Ա, 1690, էջ 439), Մ. Չամչյանը հայտնում է, որ Անավարդեցին «բազում սէր եցոյց յայնմհեալ առ նոյն աթոռ» (Չամչյան, Գ, էջ 289), ուստի պետք է կարծել, որ վասպուրականցիները այդ տարիներին իրոք նպաստել էին Հոտմի եկեղեցուն մերձենալու ծրագրերի իրականացմանը:

<sup>30</sup> A. A. Auu-3aժe. Նշված աշխ., էջ, 280—282:

<sup>31</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 472—473: «Մանր ժամանակագրություններ», հատ. II, Երևան, 1956, էջ 150:

<sup>32</sup> Ատ. Օրբելյան, էջ 473:

ցու, որ բազում նեղութիւնս կրեալ յանօրինաց, յաւերել տանց և շինուածոց վանից ի շարագլխէն նաւուզայ»<sup>33</sup>:

Սրանք են Տիրացու եպիսկոպոսի մասին պահպանված ստույգ վկայութիւնները:

Ս. Թաղեի վանքի հարավ-արևմտյան սյան պատվանդանը շիրմաքարի դեր է կատարել նշանավոր մի անձնավորութիւնի. անցյալ դարավերջին այդ պատվանդանի վրա կարդացվել է «Թվ. Չեէ (այսինքն՝ 1298 թ.) այս է հանգիստ|||» եղծված արձանագրութիւնը<sup>34</sup>: Կարծում ենք, որ այստեղ ամփոփված են հենց Տիրացուի մասունքները, ուստի նա իր մահկանացուն կրեցել է նովրուզի կողմից խոշտանգվելուց ընդամենը 2—3 տարի հետո՝ 1298 թվականին:

Տիրացու եպիսկոպոսին հաջորդել է անվանի եկեղեցական գործիչ, Արտազի հայկական իշխանութիւնի փաստական հիմնադիր Զաքարիա եպիսկոպոսը, որ հայտնի է պատմութիւնի մեջ Մործորեցի մականունով: Սրա եռանդուն գործունեութիւնն անդրադառնալուց առաջ պետք է պարզել մի թյուրբիմացութիւն:

Հեթում թագավորին ուղղած իր նշանավոր նամակի մեջ, որի գրութիւն տարեթիվը ստույգ որոշված չէ, Գրիգոր Անավարզեցի յատինամու կաթողիկոսը հիշատակում է Մեծ Հայքի նշանավոր այն եկեղեցական գործիչներին, որոնց վերջին երեք տարիներին ընթացքում տեղյակ է դարձրել (հարկավ՝ իր նվիրակների միջոցով) կաթողիկ եկեղեցու հետ մերձենալու նպատակով դավանաբանական զիջումներ կատարելու իր ծրագրերի մասին: Նա գրում է. «Եւ յառաջ դայս ասեմք զոր ի դէպ է, որ մեր հայերուն Արևելցոյ մեծերուն զիրքս գիտացուցել եմք և կեցուցել: Առաջինն Օրպելին, որ է Սիւնեաց արհիեպիսկոպոս, որպէս հոգևոր իշխան գուլով, նոյնպէս և մարմնաւոր, և իւր ընդերացն ցուցար զգիրքսն և հաստատեցար այս տարի. և յանցեալ տարին՝ ալէ Յոհաննէսի Առաբելոց եպիսկոպոսի, և ի միւս այլ ամին Բջնեցուն և Վարագեցեաց»<sup>35</sup>:

Մ. Զամչյանի կարծիքով այս գրութիւնը շարագրված պետք է լինի 1294 թվականին: Ըստ այդմ այստեղ Առաբելոց եպիսկոպոս կոչված ալէր Հովհաննէսը՝ նույնանալու է Տիրացու եպիսկոպոսի հետ<sup>36</sup>: 1294 թվականը, սակայն, անհավանական է, քանի որ թղթի գրութիւն ժամանակ Սյունյաց եպիսկոպոս է հիշվում Հովհաննէս Օրբելը՝ 1303 թ. վախճանված Ստեփանոս Օրբելյանի հաջորդը: Ուստի ճիշտ պետք է համարել Մ. Օրմանյանին, որ նա-

33 Երուսաղեմ, ձեռ. № 1428, էջ 168:

34 Խ[աչիկ] Վ[արդապետ Գաղյան], Համառոտ նկարագիր Շավարշան-Արտազ գավառի Ս. Թաղեոս առաքելո վանքի («Արարատ», 1898, էջ 91):

35 «Թուղթ տեսն Գրիգորի կաթողիկոսի, զոր գրեաց առ կրօնաւոր թագաւորն Հեթում, հայր արքային հայոց Առնի» խորագրով այս մեծաբժեք գրութիւնն ամբողջապէս հրատարակված է Կղեմէս Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ» աշխատութիւնի մեջ (տե՛ս առաջին հատոր, Հոտմ, 1650, էջ 441):

36 Թաղմաթիվ են օրինակները, երբ որեւէ մականուն, հաճախ գործածվելով, բռնել է նշանավոր պատմական դեմքերի անվանց տեղ: Հիշենք թեկուզ Հովհաննէս Սարկավազին, որ միշտ նադարում հայտնի էր առավել Սարկավազ վարդապետ անունով, կամ էլ Հովհաննէս Վանակահին, որը ճանաչված էր որպէս Վանական վարդապետ: Հովհաննէս Տիրացու եպիսկոպոսն էլ, զերոհիշյալների պէս, կարող էր ավելի ծանոթ լինել իր Տիրացու մականունով:



մակի շարադրման ժամանակը հարմար է գտնում «գոնև մինչև 1304 հետաձգել»<sup>37</sup>:

Այս դեպքում մնում է երկու ենթադրություն անել:

Գրիգոր Անավարզեցին իր նամակի մեր կողմից վկայակոչված հատվածում խոսում է Սյունիքի, ինչպես նաև Բջնիի եպիսկոպոսների մասին, որոնցից մեկի միայն մականունն է նշում (Օրպել), իսկ մյուսի անունն էլ չի տալիս: Հայտնի է, որ այդ երկու բարձրաստիճան եկեղեցականներն էլ Հովհաննես են կոչվել<sup>38</sup>: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ նամակը շարադրելիս Անավարզեցին, թերևս, շփոթվել է ու գրչի վրիպումով Հովհաննես անունը Բջնիի կամ Սյունիքի եպիսկոպոսներին հատկացնելու փոխարեն, տվել է Առաքելոց աթոռի եպիսկոպոսին: Բացառված չպետք է համարել և այն վարկածը, որ Տիրացու եպիսկոպոսից հետո ու Զաքարիա Մործորեցուց առաջ Արտազի եպիսկոպոս է եղել իրոք ոմն Հովհաննես, այդ դեպքում պետք է արձանագրել, որ նա՝ շատ կարճ պաշտոնավարելով՝ շոշափելի հետք չի թողել պատմության մեջ:

4. Պարոնեք Զաքարիա Մործորեցին և իր զերդաստանը.— ժամանակակիցների կողմից «էքսարխոս Հայոց» կոչված<sup>39</sup> և գերադրական տիտղոսներով մեծարված<sup>40</sup> Զաքարիա արքեպիսկոպոսը որդին էր պարոն Մանվելի: Այս իշխանավորի մասին սկզբնաղբյուրները ժլատ են. անտարակույս նա եղել է Տիրացու եպիսկոպոսի մերձավոր ազգականներից մեկը (հավանաբար եղբայրը), և մեծ գեր կատարել Արտազի հայկական իշխանության տրնտեսական ու քաղաքական դիրքերն ամրապնդելու գործում: Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Օրբելը Զաքարիային հասցեագրած իր մի նամակում գրում է. «Դու գիտես, որ մեր հարքն ամենեքին մի էին լեալ քստ մարմնոյ բարեկամութեան և հոգևորի»<sup>41</sup>: Ուշագրավ այս տողերն իրավունք են տալիս եզրակացնելու, որ նամակի գրությունից առնվազն մի քանի տասնամյակ առաջ (չուրչ XIII դարի 70—80-ական թվականներին) Առաքելոց աթոռին եպիսկոպոսներ պարզևող զերդաստանը ամրապնդել էր ավատատիրական իր իրավունքներն Արտազի շրջանում, և «ըստ մարմնոյ» ազգակցական կապեր հաստատել Սյունյաց Օրբելյանների հետ:

Պարոն Մանվելը, Զաքարիայից բացի, ունեցել է ևս շորս որդի՝ Պետրոս, Սարգիս, Խոթլուբուղա և Արղութ (վերջին անվան վերծանությունը կասկածելի է): 1315 թ. Ս. Թագեի վանքում շարադրված մի հիշատակարանում գրիչ Ռստակեսը, որպես Արտազի շրջանի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներ

37 Մ. Օրմանյան, § 1207, 1222:

38 Հովհաննես Օրբելի մասին տե՛ս մեր «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան չյուղը» հոդվածը («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 190), իսկ Բջնիի եպիսկոպոս տեր Հովհաննեսը հիշատակված է 1302 թ. որպես «տէր Յովհաննէս, որ ունիւր զվերատեսութիւն այցելականն դիտման քահանայականն դասու կատարելապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի» («ԺԴ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 5):

39 Այսպես է կոչված նա Հովհան Օրբելի կողմից: «Մէջոչիւս յոյն եկեղեցոյ մէջ կը նշանակէր պատիւ մ' ընդ մէջ պատրիարքութեան և մետրապոլիտութեան» (Վ. Հացուճի, Կարևոր խնդիրներ հայ եկեղեցոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 309):

40 Իր կուսակիցները նրան մեծարում են «լուսատորիչ տանս Արևելեան», «ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի» և բազմաթիվ նման արտահայտություններով, որոնց կհանդիպենք հետագա էջերում:

41 Այս նամակին անդրադառնալու ենք ստորև:

հիշատակում է և՛ Զաքարիա Եպիսկոպոսի, և՛ նրա Եղբայր պարոն Պետրոսի անունները՝ այսպես. «...յառաջնորդութեան այսմ նահանգիս և աստուածախնամ Արտազ գաւառիս սուրբ և առաքելաշնորհ արհիական գլխոյն, տիեզերալոյս և աշխարհածաւալ, բարիախորհ և վերադիտող, պարիսպ ամրութեան հանուրց եկեղեցեաց և բերդ հաստատուն քահանայից և ամենայն բրիստոնէից տէր Զաքարիայի, և պարոն Եղբայր նորին Պետրոսի, և գաւազաց սորին»<sup>42</sup>:

Զաքարիա Եպիսկոպոսն ու պարոն Պետրոսը, իրենց ձեռքում կենտրոնացրած լինելով Արտազի շրջանի հոգևոր ու աշխարհիկ իշխանութիւնը<sup>43</sup>, եռանդուն գործունեութիւն են ծավալում իրենց գերդաստանի տնտեսական և քաղաքական դիրքերն ամրապնդելու ուղղութեամբ:


Նյութական մեծ միջոցներ ծախսելով, նրանք պաշտպանական կառույցներով ամրապնդում են իրենց գերդաստանի նստավայրը՝ Մակվի քերդը, կարգի են բերում միջազգային նշանակութիւն ունեցող կարավանային ճանապարհի իրենց իշխանութեան սահմաններով անցնող հատվածը, կառուցում փառահեռ կամուրջներ (տե՛ս նկար 1) և այլ շինութիւններ, հիմնադրում վանական նոր հաստատութիւններ և այլն: Ժամանակակից հայ և օտարազգի սկզբնաղբյուրներում կան արժեքավոր վկայութիւններ Զաքարիայի և նրա Եղբայրների գործունեութեան այս կողմը լուսարանելու համար:

Մակվի անառիկ բերդի դիրքն ու պաշտպանական ամրութիւնները զարմանք են պատճառել շատերին: Նշանավոր պատմագիր Համգուլյա Ղազվիբեին (ծնվ. 1281 թ.), «Նուզհաթ-ուլ-կուլար» (Սրտերի վայելք) պատմա-աշխարհագրական աշխատութեան մեջ, որ շարադրված է Արտազի հայկական իշխանութեան ծաղկման ժամանակաշրջանում, հայտնում է, որ «Մակուն բերդ է մի քարածայռի ճեղքվածքում և մի գյուղ այդ բերդի ստորոտում, այնպես որ այդ լեռը մինչև օրվա կեսն այդ գյուղն իր ստվերի տակ է պահում. և

<sup>42</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3778, էջ 464ա—464բ (Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 114—115, Ն. Մառ. Տուցակ ձեռագրաց վանուց Սեանայ, Մոսկվա, 1892, էջ 20—21):

<sup>43</sup> Շրջանի աշխարհագրական սահմանները ճշգրիտ որոշելու տվյալներ չկան: Մակվի խանութիւնը, որ ստեղծվել է XVII դարում՝ Արտազի հայկական իշխանութեան տարածքի վրա, վարչականորեն բաժանված է եղել հետևյալ 18 մահալների. Կալա-Պարասի (Բերդադաշտ), Ավաջուղ, Կարա-կոյուն, Չայխարա, Չայ-բասար, Բարաջուղ, Ալանդ, Ջալալիյան և Միլանյան յուրտեր, Քաչարատ (Քչո՛ւտ—Լ. Խ.), Արազ-բանարի, Չալդրան, Սոկմանարադ, Քամաշալար, Գոշ-բանդլարը, Խոշար, Շարուր և Մուշ ( տե՛ս Ի. Ի. Исхаги, Исторический очерк макинскогo ханства, автореферат, Баку, 1966, էջ 16): Սրանց մեջ կենտրոնական դիրք է գրավել Բերդադաշտը: Արտազի հայկական հուշարձանների վրա դեռևս պահպանված արձանագրութիւնների հետագա ուսումնասիրութեան ճանապարհով թերևս երևան բերվեն նոր տվյալներ հայկական իշխանութեան ծայրային սահմանները որոշելու. պետք է ենթադրել, որ դրանք (այդ սահմանները) XIII—XIV դարերի ընթացքում կայուն չեն եղել: Հակված ենք ենթադրելու, որ Լանկ-Քամուրի արշավանքների շրջանում հայ ազատատերերի իշխանութիւնը պարփակված էր Բերդադաշտի տարածքով, ուր կային շուրջ երեք տասնյակ գյուղեր: Լանկ-Քամուրը, երկրորդ անգամ հայտնվելով այդ կողմերում և իշխանազուն Սորղամիշին պատանդ վերցնելով, պարտադրել է Նուրադին իշխանին ըստ հարկի Քամուրյանների արամադրութեան տակ զննել 20 այրուծի: Մակվի ողջ շրջանի համար այդ թիվը փոքր է: Հայտնի է, որ Մակվի խանը XIX դարի կեսերին պարտավորված է եղել պատերազմ դուրս բերել «հարյուր այրուծի և մի վաշտ հետիլտան] զինվորներ» (Ա. Քոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտներ, Բ. մաս, Թիֆլիս, 1882, էջ 6):

«մահրասխան», որ քրիստոնյա հոգևորականների (քեշիշների) մեծն է՝ այդտեղ է բնակվում»<sup>44</sup> Խիստ ուշագրավ է, որ պաշտոնական շրջաններում, որոնց ներկայացուցիչն էր Ղազվիինին, Մակվի հոգևոր առաջնորդ «մահրասխան», այսինքն՝ Չարարիա եպիսկոպոսը, ճանաչված էր որպես հայ հոգևորականության պարագլուխ:



Նկ. 1. Մակվի կամուրջը:

Մակվի բերդի մասին շատ ավելի մանրամասն ու հետաքրքրական տեղեկություններ է գրանցել Ռուի Գոնսալես դե Կլավիխոն՝ Սպանիայի Հենրիկոս Գ թագավորի դեսպանը, որ XV դարի սկզբներին, Լանկ-Քամուրի արքունիք մեկնելու ճանապարհին, հյուրընկալվել է այստեղ և գրի անցկացրել իր տպավորությունները. «Ամբոցը, — գրում է նա Մակվի մասին, — կանգնած է բարձր լեռան ստորոտում գտնվող հովտի մի անկյունում, իսկ քաղաքը կառուցված է ավելի բարձր՝ նրա լանջին. հենց քաղաքից ներքև, նույն այդ լանջի վրա բարձրանում է ամուր պարիսպը՝ ներքին աշտարակներով: Այդ պարսպից այն կողմ կային տներ, որ մարդիկ էին բնակվում, իսկ նրանից անդին՝ նույնպես ապրում էին մարդիկ և լանջը շարունակվում էր ավելի վեր: Այստեղ այժմ կառուցված է մի այլ պարիսպ՝ աշտարակներով և բարձր մարտկոցներով, որ երկարում է ու միանում առաջին պարսպին: Այս երկրորդ պարսպի մուտքը ժայռի մեջ փորված սանդուխներով էր, իսկ մուտքի վրա ի պաշտպանություն նրա կար մի մեծ աշտարակ: Այդ երկրորդ պարսպից այն կողմ, ժայռի վրա տներ էին կառուցված, որոնց միջամասերում՝ աշտարակներ, ինչպես և տներ, ուր իշխանն էր բնակվում, և այստեղ էին պահում

<sup>44</sup> Լամդուլուլլա Ղազվիինի. Նուզհաթ-ուլ-կուլար, բնական բնագիր, Թեհրան, 1336 (1958), էջ 102: Այս տեղեկությունը շնորհակալությամբ ստացել ենք իրանագետ Հ. Փափազյանից:

բնակիչներն իրենց բոլոր պաշարները: Քարաժայռը, որի վրա կառուցված էին այդ տները, շարունակվում էր շատ ավելի վեր, քան տներն ու պարիսպներն էին: Եվ ժայռի բարձունքները կարկառի նման ծածկում են ամրոցը, պարիսպներն ու տները, թերված լինելով նրանց վրա երկնքի նման: Երբ անձրև է տեղում ջուրն երկնքից չի հասնում ամրոցին, որովհետև քարաժայռերն ամրողջովին ծածկում են այն. այսպիսով ամրոցը կառուցված է այնպես, որ նրա վրա կարելի չէ հարձակվել ոչ ցամաքից, ոչ էլ նույնիսկ երկնքից»<sup>44</sup>:

Ուշագրավ է նաև Մակվի բերդի էվլիյա Չելեպիի (XVII դար) նկարագրությունը. ըստ նրա՝ բերդը «կառուցված է բարձր և սեպ ժայռի մը վրա, պատվանդանը նեղ և բարակ է և կաշտարակ է դեպի երկինք, ամեն կողմն անառիկ ըլլալով: Միայն մեկ դուռ կա, որուն վրա կրնաս բարձրանալ ժայռին մեջ փորված մինարեի նման փոքր սանդուխով: Շարժական կամուրջը, որ գետին վրայն կ'երկարի դեպի բերդը, ամեն երեկո կը բարձրացվի, և այդպես բերդը բոլորովին կառանձնանա»<sup>45</sup>:

Արտազի հայ իշխանները մեկ դարից ավելի, ապավինելով բերդի ամրություններին և հմտորեն կազմակերպելով պաշտպանությունը, դիմադրավեցին մեկը մյուսին հաջորդող նվաճողներին, հակահարված տալով նույնիսկ Լանկ-Քամուրի անհաղթահարելի զորաբանակներին<sup>46</sup>:

Չաքարիա եպիսկոպոսի և նրա պայազատ եղբայրների համատեղ ջանքերը, ինչպես նշեցինք վերը, նշանակալից եղան նաև Արտազի շրջանով անցնող ճանապարհների բարեկարգման գործում: Անցյալ դարի 80-ական թվականներին զրանցված տեղեկությունների համաձայն Մակու գետի վրա Չաքարիան ու պարոն Պետրոսը սրբատաշ քարերով կառուցել են շորս կամարակապ կամուրջներ, որոնց վրա կարդացվել են 1318—1328 թթ. արձանա-

44 Рюи Гонзалес де Клавихо. Дневник путешествия к двору Тимура в Самарканд, в 1403—1406 гг., пер. И. И. Срезневского, СПб, 1881, էջ 158—162: Հմմ. Հով. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Ա, ԺԳ—ԺԶ դար, Երևան, 1932, էջ 113—116 (այս թարգմանությունը անփույթ է կատարված):

45 Հ. Միքայել Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 312 (թրգմ. Հ. Քյուրդյանի): Մակվի բերդի մասին հետաքրքրական տեղեկություններ կան նաև հայ ուղեգիրների և տեղագիրների աշխատություններում (տե՛ս օրինակ, Ն. Զեանգյան, Ատրպատական, Քիֆլիս, էջ 13—14):

46 Բնական ու արհեստական հզոր ամրություններով պաշտպանված այս բերդը, որ միջնադարյան հայկական ռազմավարական արհեստի մի փայլուն կոթող է եղել, քարուքանդ ավերվել է 1642 թվականին Շահ-Աբրահամ-ի հրամանով, 3 տարի զրանից առաջ Քուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված հաշտության պայմանագրի թելադրությամբ: Այդ մասին լեռան վրա փորագրված է պարսկերեն չափածո մի արձանագրություն, որ մեջ է բերել ու թարգմանել Մ. Մինորսկին իր «Древности Маку, путевые заметки», (Петроград, 1916) աշխատության մեջ: Արձանագրության առաջին տողը՝ این قلعه قاپان بود Մինորսկին թարգմանել է այսպես. «Эта крепость, бывшая крепостью вепря», قاپان բառը վերձանելով որպես «կարան» (վայրի խող): Այս թարգմանությունը անհամոզիչ է. ըստ երևույթին այդ բառը հայերեն «կապան» բառն է, որ նշանակում է «կիրճ, որի ամենանեղ տեղում ամուր դուռ է շինած՝ ճանապարհն ըստ կամի կապելու կամ բանալու համար» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատոր երկրորդ, Երևան, 1944, էջ 239): Մակվի բերդը իրոք մի կապան էր, բնկած ռազմական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհի վրա և պաշտպանված հզոր ամրություններով:

դրություններ<sup>47</sup>: Այդ կամուրջներից միայն մեկի մասին ունենք բավարար տեղեկություններ. կառուցված է Մակվից 2 կմ հեռավորության վրա. ունեցել է 7 փառահեղ կամարներ, որոնցից պահպանվել են կենտրոնի մեծ-կիսակոր կամարը և մեկ կողմի 3 գմբեթաձև կամարները (տե՛ս լուսանկարը): Կառուցողական բնդարձակ արձանագրությունը (տե՛ս նկար 2), որի բնագիրը հայտնի դարձավ բանասիրությանը միայն վերջերս, լրացուցիչ տեղեկություններ է պարունակում Արտադի իշխանական գերդաստանի պայազատների, մասնավորապես պարոն Պետրոսի և նրա հարազատների մասին: Պարզվում է, որ նա ունեցել է Սանասար և Մանկասար անունով որդիներ. արձանագրության մեջ հիշատակված են նաև նրա յոթիկներ, (Քամսի կամ Քամթի անունով) և 4 եղբայրները՝ Զարարիան, Սարգիսը, Խուֆյուրուղան և Արղութը<sup>48</sup>:



Նկ. 2. Մակվի կամուրջի արձանագրությունը

Կամուրջներից բացի, նշանավոր է եղել նաև Կապի կոշվող կիրճը, որ Ս. Քաղեի վանքի և Մակվի միջնամասում բացել է Զարարիա եպիսկոպոսը՝

47 Ա. Թոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1882, էջ 56: Հեղինակը հայտնում է, որ այդ արձանագրությունները փորագրված են «Հայոց 967—978 թվականներին», հաստատապես շփոթելով 9 (700) և 2 (900) թվանշանները: Այդ կամուրջները, անսարակույս, կառուցված պետք է լինեն 24է (767—1318)—22է (777—1328) թվականներին (2 և 2 թվերի շփոթության բազմաթիվ օրինակներ կան մեր բանասիրական գրականության մեջ):

48 Լ. Գ. Մինասյան, Հնագրայան մի կամուրջ Ատրպատականում («Հանդես ամսօրեայ», 1968, 4—6, էջ 243—246):

Արձանագրությունն սկզբից թերի է պակասում է առնվազն կառուցման թվականը և «յառաջնորդութեան» կամ «ի վերադիտողութեան» բառը). պահպանված մասը վերծանվում է այսպես. «[Ի թվ. ]]] յառաջնորդութեան] Ս. աթոռոյս Քաղէոսի տէր Զարարոյ, եւ Պետրոս որդի պրն Մանուկայ շին[եցի] էջս զայս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ծնողաց իմոց և ամուսնոյ իմոյ Քամսէ, և եղբարց իմոց Սարգիս, և Խուֆյուրուղին և Արղութի (այս անվան վերծանությունը կասկածելի է), և որդոց իմոց Սանասարին և Մանկասարին, զոր տէր աստուած

«Քուանքշի լեռան շխթայածայուր պատանելով»։ Ճանապարհաշինական այս վիթխարի աշխատանքի մասին հանդիպակաց ժայռի վրա փորագրված է արձանագրություն, որից վերծանվել են ՉԿԷ (1318) թվականը և «իշխանութեամբ տէր Զաքարին» բառերը<sup>49</sup>։

Զաքարիա եպիսկոպոսի գործունեությունն արգասավոր է եղել նաև վանական հաստատությունների կառուցման ու վերաշինման ասպարեզներում։ Նրա անվան հետ է առնչվում, հատկապես, Մործորի վանքի հիմնադրումը, որն ավարտված պետք է լինի 1314 թվականից մի քանի տարի առաջ։ Նորակառույց այս վանքի անունով Մործորեցի մականունը ստացած Զաքարիա եպիսկոպոսը, իր կուսակից, անվանի մատենագիր Հովհան Մործորեցու համագործակցությամբ, այստեղ բարձրագույն դպրոց է բացել և նյութական սլայմաններ ստեղծել գիտա-մանկավարժական աշխատանքների ծավալման համար<sup>50</sup>։

1319 թ. կենտրոնական Հայաստանում երկրաշարժ է լինում, տուժում է հատկապես Արտազի շրջանը։ Մի ժամանակագիր այդ մասին գրում է. «ՉԿԷ (1319) թվին եղև շարժ յԱրևելս և զՔաղէոս առաքելոյն վանքն և զԵկեղեցին կործանեաց, և զտունս փլոյց և շ. (75) ոգի եսպան, զոր զարձեալ վերստին շինեաց զԵկեղեցին և վանքն տէր Զաքարէ»<sup>51</sup>։ Շինարարական այդ մեծ աշխատանքներն ավարտվել են երկրաշարժից տասը տարի հետո՝ 1329 թվականին, ու պսակվել Զաքարիա եպիսկոպոսի և նրա մերձավորների մասին կարևոր տեղեկություններ պարունակող մի արձանագրությամբ (տաճարի և արձանագրության լուսանկարները տե՛ս նկ. 3 և նկ. 4)։ Արձանագրությունը փորագրված է վանքի հյուսիսային որմի վրա, երկաթագիր խոշոր տառերով և վերծանվում է այսպես.

«Այս տաճար լուսակերտ և երկնանման առկայացեալ հաստատագոյն հիմամբք ի վերայ աստուածարնակ շիրմի սուրբ առաքելոյս Քաղէոսի, որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն էառ ի շարժէ։ Իսկ ևս

վայելել տացէ մինչև ի կատարած աշխարհի. շինապքն և աշխատողքն յիշեալ եղիցին, ամէն։ ԶԱկոր վդպետս (իմա՛ վարդապետս, այսինքն՝ կառուցող վարպետը—Լ. Խ.) յաղաւթս յիշեցէք»։

Ստանալով պր. Մինասյանից այս արձանագրության լուսանկարը (որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը), ճշգրտել ենք «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրված վերծանությունը։

<sup>49</sup> Ս. Հաչկունի, Պարսկահայր (Յղթակցություն) («Արարատ», 1896, էջ 587—588)։ Վերոհիշյալ կամուրջների և այս կիրճի արձանագրությունները, ինչպես նաև Մակվի շրջանի հայկական մյուս հուշարձանները արժանի են ավելի հանդամանալից ուսումնասիրության։ Այժմ, երբ Ս. Քաղեի վանքը վերանորոգվել ու զարձել է իրանահայերի սիրված ուխտատեղին, ավելի լայն ննարավորություններ են ստեղծվել պատմական Արտազի հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանների գիտական ուսումնասիրության համար։ Համոզված ենք, որ տևական աշխատանքով, վանքերի ու Եկեղեցիների կիսակործան պատերի ու տապանաքարերի վրայից հնարավոր կլինի վերծանել աննկատ մնացած բազմաթիվ արձանագրություններ, որոնք նոր լույս կսփռեն Արտազի պատմության և այդ երկրամասի հայ տերերի գործունեության վրա։

<sup>50</sup> Մործորի վանքի հիմնադրման հանգամանքներին և այստեղ ստեղծված բարձրագույն դպրոցի գործունեությանը հանգամանորեն անդրադառնալու ենք վերջում՝ հատուկ պարբերությամբ։

<sup>51</sup> Սամուելի Բահանայի Անեցոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 157։

նուստ սպասաւոր նմին Ջաքարիայ կախկոպոս, որդի պարոն Մանվէլայ, կարողութեամբն աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութեան առաւել քան զառաջինն, ի ժամանակի սաստիկ նեղութեան եւ հալածանաց բրիստոնէից, որ եւ բազում եկեղեցիք քակտին, վասն որոյ արձանագրեցար զյիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին այն եւ անարիւն զենման զառինն աստուծոյ հանդերձ ծնողօք եւ զարմիք, եւ զաշորդն մեր աղբար որդին զտէր Տիրացուն, այլ եւ զհարազատ եղբայրս մեր զՊետրոս եւ զՍարգիս, որք քստ կարողութեան նպաստաւորք եղեն բնշիւք: Կատարումն թվ. 229 (1329)»<sup>52</sup>:

Վանքի շրջափակում, անշուշտ, կառուցված են եղել նաև կացարաններ և տնտեսական նշանակություն ունեցող օժանդակ այլ շինություններ. XVII դարից տեղեկություն է պահպանվել Կառնուտի կոչվող ջրմուղի մասին, որ «յառաջ ժամանակս բերեալ էր Ջաքարիա կախկոպոսն՝ պարոն էմանուէլի որդի»<sup>53</sup>:

Բերդերի, վանական հաստատությունների, ճանապարհների, կամուրջների և այլ շինությունների<sup>54</sup> կառուցման մեծածախ աշխատանքներն ի կատար ածելու համար, մանավանդ բրիստոնյաների նկատմամբ ծավալված հալածանքների տարիներին, պետք էր ունենալ մեծ հեղինակություն՝ իլխանության բարձրաստիճան պաշտոնեության շրջանում և նյութական լայն հնարավորություններ: Արտազի կախկոպոսն ու նրա եղբայրները օժտված էին և՛ մեկով, և՛ մյուսով:

Արտազի հայ ավատատերերի գերդաստանի մասին ժամանակակից սկզբնաղբյուրներում կան նաև այլ ակնարկներ: Նշանավոր մատենագիր Հովհան Սործորեցին, օրինակ, իր քարոզներից մեկի բնծայակալն-վերջաբա-

52 Չեսթի տակ ունենք այս արձանագրության հաջող լուսանկարը (տե՛ս նկար 4) և տարբեր անձանց կողմից կատարված հետևյալ շորս վերձանումները. 1. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 340, էջ 122բ—123ա, 2. Յովն. Շահխարունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, էջմիածին, 1842, 3. Խաչիկ վ. Գաղեան, Շաւարշան—Արտազ զաւառի սուրբ Քաղէսո առաքելոյ վանքը («Արարատ», 1898, էջ 89), 4. Լ. Մինասյան, Իրանի հայկական վանքերը, Քեհերան, 1971, էջ 12 (արձանագրությունը տպագրված է նաև օրիշների կողմից):

53 1679 թ. մի հիշատակարանում Քաղեոս առաքյալի վանքի վանահայր Իսահակ վարդապետ Մակվեցին հայտնում է, որ «քակտեալ և անբեալ» այդ ջրմուղը «կրկին նորոգեցաւ և յորդարուիս աղբիրն բերեալ ածաւ ի մէջ վանիցս և զեղջս» (Մատենադարան, ձեռ. № 808, էջ 489ա, նակ՝ Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոսշյանք Հայոց պատմության մեջ, Բ հրատարակություն, Անթիլիաս, 1969, էջ 283):

54 Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպես նաև նրանից առաջ ու հետո, Մակվի շրջանում ստեղծված աշխարհիկ և հոգևոր շինությունների մեծաքանակ լինելու մասին վկայություններ կան հայ և օտարազգի ուղեգիրների աշխատություններում: Ա. Քոխմախյանն, օրինակ, ասում է, որ «Մակուայ, Ավաջուղի, Գարայնիի բոլոր թաթարաբնակ գյուղերումը եկեղեցիներ կան, բոլորն էլ ալեբրված: Լեռներում, գետերի ափերին կառուցած են վանքեր, մատուռներ: Իսկ խաչարձաններ, խաչեր այնքան բազմաթիվ են, որոնք թեև թաթարները անհետացնելու մտք խորտակում, փշրում են, բայց եթե մինչև հավիտյան էլ շարունակեին, հայոց բրիստոնեական կնիքը այդ աշխարհի վրայից չէին կարող կղծել» (Մասիս լեռների հյուսիսային ստորոտները, էջ 52):

Նշանավոր արևելագետ Վ. Մինորսկին Մակվի շրջանի տարբեր վայրերում տեսել ու նկարագրել է մի քանի հայկական վանքեր ու եկեղեցիներ, հիշատակել, որ Մակվի բերդածայի վրա փորագրված են խաչեր ու արձանագրություններ և այլն:

նում, մեծարանքի խոսքեր շոռայելով Զաքարիա եպիսկոպոսի հասցեին, անդրադառնում է նաև նրա մերձավորներին՝ գրելով. «Եւ որք ընդ սովաւ կարգեալ են իշխանութիւնք և ի դարմից սորին շառաւիղեալք բարեպաշտ պարոնայք, պօրութիւն բարձրելոյն հովանի լիցի նոցա»<sup>55</sup>:

Այս տողերով ևս աներկբայելի է դառնում Զաքարիա եպիսկոպոսի դերը Աբտաղի հայ ավատատերերի ընտանիքում. նրանց քաղաքական կշիռն ու տնտեսական բարգավաճ վիճակը խարսխված էր Առաքելոց աթոռի հեղինակութեան և Հայաստանյայց եկեղեցու կազմակերպութեան մեջ նրա գրաված դիրքի վրա: Նկատի առնելով հենց այս հանգամանքը, ստորև վերլուծելու ենք կարևոր այն տվյալները, որոնք լույս են սփռում XIV դարի առաջին տասնամյակներին հայ եկեղեցու պառակտյալ վիճակի և Կիլիկիայի ու կենտրոնական Հայաստանի հոգևոր և աշխարհիկ պետերի քաղաքական ու դադափարական հակադիր դիրքորոշման վրա, բացահայտելով մասնավորապես Աբտաղի աթոռի և նրա իշխանազուն եպիսկոպոսի դիրքն ու դերը այդ լարված պայքարում:

5. Աբտաղի արոտը դավանաբանական պայքարի հորձանքում.— Կիլիկյան Հայաստանի բարձրաստիճան հոգևորականության ամենաազդեցիկ ներկայացուցիչները՝ հանձինս Գրիգոր Անավարզեցի (1293—1307) և Կոստանդին Կեսարացի (1307—1322) կաթողիկոսների, կաթուղի եկեղեցու գերիշխանությունն ընդունելը նախապայման էին համարում հայկական թագավորության գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ նկատվող և եվրոպական խաչակիր երկրների կողմից շարունակ խոստացվող ռազմական օգնությունն ստանալու: Եկեղեցու վեհապետերը, կուսակից ունենալով Կիլիկիայի հայ ավատատերերի գերակշիռ մասին, եռանդուն քայլերի էին դիմում իրենց քաղաքականության դեմ և՛ Կիլիկիայում, և՛, մանավանդ, Մեծ Հայքում կազմակերպված հուժկու դիմադրությունը հաղթահարելու համար: Դավանաբանական շղարշի տակ կատաղի պայքար էր մղվում հայ ժողովրդի քաղաքական բաղձանքների իրականացման երկու հակադիր ուղիների վրա կանգնած ու սոցիալ-քաղաքական տարբեր դիմորոշում ունեցող խմբակցությունների միջև: Եվ եթե արքայանիստ Սիս քաղաքում կայան գտած Հայոց կաթողիկոսները՝ լատինասեր քաղաքականության ջատագովներն էին, ազգային եկեղեցու ավանդույթներին հավատարիմ կուսակցության պարագլուխները՝ Սյունյաց եպիսկոպոսներն էին. սրանք, որ սիրում էին պճնվել «պոստօֆրոնդէս Հայոց Մեծաց և մետրոպոլիտ Սիսական նահանգի» բարձրագոյ տիտղոսներով, հենվում էին Սյունյաց Օրբելյանների և Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր մյուս ավատատերերի միասնական ուժի վրա, որոնք, գիտակցելով հեռավոր եվրոպայից օգնություն ակնկալելու անիրական լինելը, Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը մայր հայրենիք տեղափոխելու ծրագրեր էին մշակում, գրտնելով, որ դարերով սրբազործված ազգային ավանդություններն ինքնին՝ դադափարական հզոր ազդակ են ժողովրդի ինքնագիտակցության և գոյատևման համար: «Հաւան ևմք մեք ընդ մեր հարսն ի դժօխս իջանել, եւ ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել»— այս էր նրանց կարգախոսը, որ այսքան գեղեցիկ ու դիպուկ ձևակերպել էր Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը:

55 Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 1003, էջ 68:



Արտազի թեմի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը, ընթանալով իր նախորդ Տիրացու եպիսկոպոսի նախագծած ուղիով, հռոմեական եկեղեցուն մերձենալու քաղաքականության ջերմ կողմնակիցն ու ջատագովն էր Մեծ Հայքում. «Տէրս Զաքարիա զինքն նուստ և հնազանդ ունի և հրամանակատար յաշորդին Պետրոսի» (այսինքն՝ Հռոմի պապին), այսպես է գրում նրա մասին իր կուսակիցներից մեկը<sup>56</sup>:

Այս հաստատվում է ժամանակակիցների բազմաթիվ վկայություններով. ֆրանցիսկյան միաբանության անդամ դարձած մի հայ կրոնավոր՝ Դանիել Թավրիզեցին, լատիններեն լեզվով շարադրված դավանաբանական իր գրվածքի մեջ հայտնում է, որ «Հռոմեական եկեղեցու հետ միավորված ժամանակակից հայերը ընդունում են սուրբ հոգու բխումն ինչպես հորից, այնպես էլ սրղուց. ես համոզված եմ, որ այդ հենց այդպես է, քանի որ անձամբ տեսել եմ մի քանիսի, այսինքն՝ տեր Թադավորի, տեր կաթողիկոսի և Մեծ Հայքում տեր Զաքարիայի, ինչպես և Հռոմի եկեղեցու հետ միավորված մի քանի այլ անձանց մոտ»<sup>57</sup>:

Հայ եկեղեցու առաքելական հիմնադրության մասին գոյություն ունեցող ավանդությունների, կաթողիկոսյանը հարած հայերի և, մասնավորապես, Զաքարիա եպիսկոպոսի մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է գրանցել Դոմինիկյան կրոնավոր ժուրղեն դե Սևերակը, որ Հնդկաստան ուղևորվելու ճանապարհին՝ 1320 թ. ձմռանը եղել էր Հայաստանում: Նրա ուղեգրության Արտազի շրջանին և Ս. Թադեի վանքին վերաբերող հատվածը մեջ ենք բերում ստորև ամբողջությամբ, շնայած այն պարունակում է նաև մեր նյութին անմիջապես շանջվող տեղիներ. «[Արարատ] լեռան վրա,—գրում է նա,—կանգնած է մի տուն, որն ինչպես պատմում են, կառուցել է ինքը՝ Նոյր, իր տապանը թողնելուց հետո: Ասում են նաև, որ լեռան վրա ինչ-որ տեղ պահպանվել է Նոյի տնկած խաղողի որթը, որի գինուց Նոյն արբեց: Իսկ Նոյի որթատունկի հատիկներն այնքան հսկայական են, որ մարդիկ իրենց աչքին չեն հավատում: Այս բոլորի մասին ես իմացա մեր մի կաթողիկ արքեպիսկոպոսից՝ մեծ և ուժեղ վեհապետից: Նա իշխում է այս կողմերում և ըստ ամենայնի արժանի է վստահության»<sup>58</sup>: Իսկ ես, շնայած եղել եմ այստեղ (հավատացեք իմ խոսքերին), բայց ոչ ամռանը, այլ ձմռանը:

Այս Մեծ Հայքը շատ է տառապել. այստեղ նահատակությամբ իրենց վախճանն են գտել երեք առաքյալներ՝ Բարթուղիմեոսը, Սիմեոնն ու Հուդան<sup>59</sup>:

56 Երուսաղեմի մասենագրան, ձեռ. № 789, էջ 149:

57 Տե՛ս Դանիել Թավրիզեցու «Հայերին վերադրված մուսուլմանների կապակցությամբ եղբայր Դանիելի պատասխանը» խորագրով լատիններեն աշխատությունը՝ հետևյալ հրատարակության մեջ. «Recueil des Historiens des Croisades. Documents arméniens», t. II, Paris, 1906, էջ 561:

58 Ինչպես կտեսնենք ստորև, խոսքը Զաքարիա Սործորեցու մասին է, ուստի ժուրղեն դե Սևերակի գրանցած տեղեկությունների սկզբնաղբյուրը նա է՝ Առաքելուց աթոռի եպիսկոպոսը:

59 Բարթուղիմեոսը համարվում է Քրիստոսի 12 աշակերտներից մեկը, որ ըստ ավանդության քարոզել է Խորասանում, Պարսկաստանում և Հնդկաստանում, բայց ի վերջո հաստատվել է Հայաստանում ու նահատակվել Սանատրուկ քաղաքի կողմից: Սիմեոնը կամ Շմավոնը նույնպես 12 առաքելական առաքյալներից է համարվում. քարոզել է, իբր, Եգիպտոսում, Լիբիայում և Մավրիտանիայում. ոմանք նրան նահատակված են համարում Բրիտանիայում, ուրիշներ՝ Երուսաղեմում, իսկ հայկական միջնադարյան ավանդությամբ՝ Հուդա-Թադեոսի հետքերով մեկնել է Հայաստան և վկայական իր վախճանը գտել Ռշտունյաց դավառում: Հուդան

Էս տեսել եմ այն զնգանք ուր տանջվել են Սիմոնն ու Հուզան և աղբյուրները, որոնք առաքելական գավազանի հարվածով ժայթքել են կենսատու ժայռից: Ութ, տասը, տասնյոթ անգամ գավազանը դիպել է քարին, և այժմ այդտեղ հենց այդքան աղբյուրներ կան, իսկ նրանցից ոչ հեռու կառուցված է մեծ ու գեղեցիկ մի եկեղեցի:

Այս Մեծ Հայքում նահատակվել է մի հիանալի կույս Սանդուխտ<sup>60</sup> անունով և նա արքայադուստր է եղել: Այստեղ (Մեծ Հայքում) են նետել վիրապի մեջ՝ առյուծի և վիշնպի բերանը՝ հայերին կաթոլիկական հավատքի բերող սուրբ Գրիգորին. և այդ տեղի է ունեցել, երբ Հայաստանում թագավորում էր Տրդատը, սուրբ Սեղբեստրոսի և կայսր Կոստանդինոսի ժամանակներում: Նույն այս Հայաստանում է մորթվել երանելի Հակոբ վկան<sup>61</sup>:

Այս նահանգում (այսինքն՝ Հայաստանում) մեծ մասամբ բնակվում են հերձվածող հայեր. քարոզիչ և կրտսեր եղբայրները<sup>62</sup> կաթոլիկության են դարձի բերել այս հերձվածողներից<sup>63</sup> ճիշտ շորս հազար, թերևս նույնիսկ ավելի անձանց. և այս բացարձակ ճշմարտություն է:

Եվ իրոք, մի մեծ արքեպիսկոպոս՝ տեր Զաքարիան, իր ողջ հոտի հետ միասին, բնդունել է մեր կրոնը: Ապավինելով տիրոջ ողորմածությանը մենք հուսով ենք, որ բոլոր (հերձվածողները) շուտով դարձի կբերվեն, եթե այդ գործին ձեռնամուխ լինեն արժանավոր եղբայրներ:

...Այս Հայաստանը երկայնությամբ ձգվում է Սեբաստիայից մինչև Օրոգի (իմա՝ Մուղանի) հարթավայրը, իսկ լայնությամբ՝ Պարխար լեռից մինչև Թավրիզ: Պարխարից Թավրիզ քսաներեք օրվա ճանապարհ է, Սեբաստիայից Մուղան՝ քառասուն օրվա»<sup>64</sup>:

Ժուրղենի հաղորդած տեղեկությունները կարևոր են նաև իշխանության վարչական կենտրոններում և այլ հայաբնակ վայրերում կաթոլիկ դավանանք բնդունած բնակչության թիվը պարզելու համար. «Այստեղ,— գրում է նա Թավրիզի մասին,— մենք (իմա՝ կաթոլիկները) ունենք բավականին գեղեցիկ մի եկեղեցի՝ հազարի շուրջ հավատացյալներով. նախկինում նրանք հերձվածողներ էին, իսկ այժմ դարձի են եկել մեր հավատքի: Գրեթե նույնքան նորադարձներ կան Ուրում (իմա՝ Հեր կամ Խոյ)... այս քաղաքը հարուստ է և գտնվում է Թավրիզից երկօրյա հեռավորության վրա. ճիշտ այդպես հինգ-

կամ Քաղեոսը համարվում է Քրիստոսի 70 աշակերտներից մեկը՝ Քովմա առաքյալի եղբայրը. ըստ ավանդության բժշկել ու բրիստոնեական հավատքի է բերել Եղեսիայի հայ թագավոր Արգարին, նահատակվել է Սանատրուկ թագավորի կողմից, արքայադուստր Սանդուխտի հետ միասին (տե՛ս Մ. Ավգերյան, Ծաղիկ վարուց սրբոց, Վենետիկ, 1800, էջ 52, 106—107, 227—228):

Զաքարիա Մորժորեցին իրեն համարում էր հիմնականում Քաղեոս առաքյալի հաջորդ, սակայն ըստ հարկի պճնվում էր նաև Բարթոլոմեոսի և Սիմոնի հեղինակությամբ, կոչվելով առաքելոց եպիսկոպոս:

60 Սանդուխտ անձնանունը թյուրքիմացարար արտածելով հայերեն սանդուխտ (աստիճան) բառից եվրոպացի ուղեգիրը տվել է այդ բառի լատիներեն թարգմանությունը՝ Scala:

61 Խոսքը հավանաբար Հակոբիկ Պարսկի մասին է (տե՛ս Ծաղիկ վարուց սրբոց, էջ 188—189):

62 Քարոզիչ եղբայր էին կոչվում Գոմինիկյան միաբանության անդամները, իսկ կրտսեր եղբայր (նաև՝ միևնոր)՝ ֆրանցիսկյանները:

63 Կաթոլիկ այս կրոնավորը հերձվածող է անվանում բոլոր ոչ կաթոլիկ բրիստոնյաններին, ավյալ ղեպրում լուսավորչազգական հայերին:

64 „После Марко Поло...“, էջ 137—138:

հարյուր կամ վեցհարյուր (կաթուղիկներ) են հաշվվում Սուլթանիայում... այն-տեղ ևս մենք ունենք շատ գեղեցիկ մի եկեղեցի»<sup>65</sup>։

Մերձավոր Արևելյան երկրներում կաթուղիկ եկեղեցու ծավալած քարոզչական աշխատանքի հիմնական ծանրությունը մինչև 1318 թ. ընկած էր ֆրանցիսկյան միաբանության անդամների ուսերին։ Նրանք առաջին հերթին հայտնվում ու հենակետեր էին ստեղծում միջազգային տարանցիկ առևտրի հիմնական մայրուղիների վրա գտնվող այն վայրերում, որոնք նշանակալից էին կատարում որպես ապրանքափոխություն կենտրոններ և կարավանային երթևեկի կանգառներ։ Ըստ այդմ էլ՝ նրանց հարում էին հասարակական այն շերտերը, որոնք ներդրաւված լինելով միջազգային առևտրի ոլորտի մեջ, անմիջական շահ ունեին եվրոպական երկրների հետ տնտեսական և քաղաքական կապերի հետագա ամրապնդումից։ Ինչպես նշել ենք արդեն, ֆրանցիսկյան միաբանության քարոզիչ անդամները XIII դարի վերջերին և XIV-ի սկզբներին իրենց ազդեցության տակ էին առել Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր ավատատերերից շատերին և, առաջ շարժվելով դեպի արևելք, քաջ առ քաջ ներթափանցում և հենակետեր էին ստեղծում պատմական Հայաստանի առևտրա-արհեստագործական նշանավոր կենտրոններում և Անդրկովկասի ու Իրանի հայաշատ քաղաքներում։ Գեոևս 1302 թ. Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Թրքելյանը, իր «Հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց» վիճարանական գրվածքի մեջ դառնություն անդրադառնում էր լատինական եկեղեցու ազդեցության տարածման երևույթին. «Կիլիկիաբոլոր,—գրում էր նա,—որ տեղի էր մեր պարծանաց, յայս (իմա՛ լատինական եկեղեցու դավանանքով) վարակեալ կայ. և զլիաւոր քաղաքք որ ի Հոռոմք՝ ի սոյն մոլորեալ են. և եհաս մինչև առ մեզ, զի քարոզի այս յայտնապէս ի Թաղաւորական քաղաքն ի Տփլիս, և ի հին տունն Բազրատունեաց յԱնի՝ որ ի Շիրակ, նաև ի Քավրէժ շահաստան, և յայլ բազում տեղիս»<sup>66</sup>։

Ժուրղենը, ինչպես տեսանք քիչ առաջ, Թրքելյանի այս ցանկը լրացնում է Հեր և Սուլթանիա քաղաքների անուններով, որոշակի տեղեկացնելով, որ կաթուղիկ եկեղեցին հետևորդներ է ձեռք բերում այդ վայրերում ոչ թե մահմեդականներին բրիստոնյա դարձնելով, այլ «հերձվածող» բրիստոնյաներին, այսինքն հայերին՝ «գարձի բերելով»։

Լատինական եկեղեցուն մերձենալու քաղաքականության վարիչները, Կիլիկիայում՝ Թաղաւորն ու կաթողիկոսը, Մեծ Հայքում՝ Արտազի եպիսկոպոսը, դավանաբանական և ծիսական տարբերությունները վերացնելու իրենց պահանջը հիմնավորում էին տեսական այն գրույթով, որ, իբր, Հայոց եկեղեցին ի սկզբանե անտի (Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած), կաթուղիկ եկեղեցու մասն է կազմել, ուստի, հետագայում առաջացած տարբերությունները վերացնելով, եկեղեցին վերականգնում է իր անաղարտ վիճակը։ Սակայն ընդունելով Հոռոմի պապի գերիշխանությունը, լատինամետ հայ գործիչները հեռու էին այն մտքից, թե այդ քայլով ոտք են դնում ինքնալուծարքի ճանապարհի վրա։

65 Նույն տեղում, էջ 164։

66 Տեառն Ստեփաննոսի նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկարնակաց, շարադրեալ ի թուին Հայոց ՉՄԱ, Կ. Պոլիս, 1756, էջ 42—43 (հմմ. նաև՝ Մատենադարան, ձեռ. № 573, էջ 63ա—63բ)։

Այլ վիճակ ստեղծվեց Հայաստանում 1318 թվականից հետո, երբ Հովհաննես ԻԲ պապի (1316—1334) հատուկ կոնդակով ֆրանցիսկյան և դոմինիկյան միաբանությունների միջև քարոզչական գործունեության շրջանների նոր բաժանում կատարվեց: Վաշխառու պապի կամակատարները դարձած դոմինիկյան կրոնավորները, ի տրիտուր իրենց ծառայությունների, որպես քարոզչության ասպարեզ ստացան Ասիական արևելքի այն երկրները, որոնցով անցնում էին միջազգային առևտրի ամենաբանուկ ճանապարհները: Այդ կոնդակով հիմնադրվեց մի նոր արքեպիսկոպոսություն՝ Սուլթանիա կենտրոնով, որի անձայրածիր սահմանները որոշվում էին այսպես. «Արարիո (իմա՛ Արարատ) լեռից սկսած դեպի Արևելք, ներառյալ Պարսկական Թաթարիայի մեծ պետություն... ողջ կայսրությունը... ինչպես և Դոխիի ու Խաչուրի թագավորությունը (այսինքն՝ Միջին Ասիական երկրները) և նրանց ենթակա բոլոր շրջանները: Այս արքեպիսկոպոսությանն են ենթարկվում նաև Հրնդկաստանն ու Եթովպիան, իսկ արքեպիսկոպոսն ինքը այսուհետև նստելու է Սուլթանիա քաղաքում, քանի որ այդ արժանավայել ու մեծ բնակավայր է»<sup>67</sup>:

Սուլթանիայի արքեպիսկոպոս է նշանակվում դոմինիկյան միաբանության անդամ Ֆրանկո Պերուչացին, որն իր ենթակայության տակ ուներ վեց եպիսկոպոսություններ, որոնցից երեքը՝ Ատրպատականի Թավրիզ, Մարաղա և Գեհարական քաղաքներում<sup>68</sup>:

Դոմինիկյան այս քարոզիչները սկզբնական շրջանում համազործակցում էին ֆրանցիսկյանների հետ, հաշվի առնելով, որ նրանք այդ վայրերում ստեղծել էին արդեն որոշ հենակետեր, կառուցել եկեղեցիներ և հետևորդներ շահել: Դոմինիկյաններն սկզբից զգույշ էին նաև հայոց եկեղեցու պաշտոնեության հետ իրենց հարաբերություններում, խուսափելով իրենց թշնամական դիրքը բացահայտելուց:

Սակայն քիչ անց, ամրապնդելով իրենց դիրքերը նախիջևանի գավառում<sup>69</sup> և իրենց ազդեցությունը տարածելով ֆրանցիսկյանների ստեղծած լատինադավան համայնքների վրա, նրանք անսքող պայքարի դրոշ են պարզում հայոց եկեղեցու դեմ: «Իրենց գլխավոր զենքն էր, — գրել է նրանց մասին հայոց եկեղեցու պատմության նշանավոր հետախույզ Մ. Օրմանյանը, — շարք մը պիտակ հեղինակություններով և իմաստակ պատճառաբանություններով խիղճերը վրդովել, Հայոց եկեղեցվուն մեջ պաշտված խորհուրդները անվավեր ու շեղյալ նկատել, և հավատացելոց մկրտության և պաշտոնից ձեռնադրության վրա կասկածներ հարուցանելով, կրկնամկրտություններ և կրկնաձեռնադրություններ ընել, հայ եկեղեցիներու և սրբություններու նվիրականությունը ուրանալ և անարգել, և պարզապես հայադավանները անհավատներու հավասարել»<sup>70</sup>:

<sup>67</sup> G. Golubovich, Biblioteca bio-bibliografica della Terra Santa e dell' Oriente Francese, t. II, էջ 570 և հտ., օգտվել ենք M. Ջ. Շեմ-ի «После Марко Поло» աշխատության միջնորդությամբ:

<sup>68</sup> Marcus Antonius v. d. Oudenrijn. Linguae Haicanae Scriptores, Bern, 1960, էջ 19—20:

<sup>69</sup> Այստեղ կաթոլիկ գավառանք է ընդունում Երնջակի շրջանի Քոնա, Ապարաներ, Սալիթաղ, Ապրակունիս, Խոշկաշեն և Ջահուկի շրջանի Ջահուկ և Շահապոնս գյուղերի հայ բնակչության մեծ մասը:

<sup>70</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, § 1350:

Արտազի շրջանի հայ ավատատերերի գերդաստանը, սպարոնտեր Զաբարիա եպիսկոպոսի գլխավորությամբ, փորձում է ի շահ իր նպատակների օգտագործել Հայաստանի և Ատրպատականի հարևան շրջաններում խարխսի նետած կաթուղիկ քարոզիչների գաղափարական ազդեցությունն ու կշիռը: Ստեղծված պայմաններում Մեծ Հայքի աշխարհիկ ու եկեղեցական գործիչները, ի պաշտպանություն ազգային եկեղեցու գաղափարական և կազմակերպչական դիրքերի, հակամիջոցների պետք է դիմեին: Այսպիսով, Հայաստանում սկսվում է դավանաբանական լարված պայքարի մի շրջան, որ տևում է տասնամյակներ, ունենալով մակրնթացության և տեղատվության իր փուլերը: Մեզ, բնականաբար, հետաքրքրելու են այդ պայքարի այն դրվագները, որոնք առնչվում են Արտազի շրջանին և Քաղեոս առաքյալի վիճակին:

Այս առումով ուշադրավ են հատկապես Սյունյաց մետրոպոլիտ Հովհան-Օրբելի (հիշատակված է որպես եպիսկոպոս 1302—1323 թթ.) դույզ նամակները, մեկն ուղղված կաթողիկոսին, մյուսը՝ Զաբարիա Մործորեցուն: Բանասիրության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել այդ գրությունների շարադրման ժամանակի մասին. Մ. Զամչյանը գրված է համարում 1305-ին՝ կապելով Գրիգոր Անավարդեցու հետ, Մ. Օրմանյանը գրեթե համամիտ է նրան, իսկ Գ. Հովսեփյանը, գրության հնագույն եզրը 1314-ը համարելով, ավելի հավանական է գտնում 1317—1318 թվականները:

Նամակներից պարզվում է, որ կաթողիկոսը Արևելյան Հայաստան է ուղարկել Գրիգոր անունով իր նվիրակին, պատվիրելով նրան մեռոն բաշխել միայն թեմական այն առաջնորդներին, ովքեր հանձն կանեն ջրախառն գինով պատարագ մատուցել և Քրիստոսի ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ին կատարել: Հայոց եկեղեցու պատմության XIV դարի առաջին տասնամյակների կարևոր իրադարձությունների լույսի տակ դժվար չէ հանգել այն եզրակացության, որ այդպիսի վճռական պահանջով կաթողիկոսը կարող էր հանդես գալ միայն Սսի (1307 թ.) կամ Աղանայի (1317 թ.) եկեղեցական ժողովներից հետո, հենվելով հենց այդ ժողովների խիստ կասկածելի իրավական ուժ ունեցող որոշումների վրա: Հարցի մանրակրկիտ քննությունը մեր նպատակից դուրս համարելով, մենք ևս այդ նամակների գրության ամենահավանական տարեթիվ համարում ենք 1317—1318 թվականները<sup>71</sup>:

Արդ՝ կաթողիկոսին հասցեագրված իր նամակում Սյունյաց մետրոպոլիտը հայտնում է, որ արտահայտելով իր վիճակի իշխանների, ազատների, հոգևորականության ու ժողովրդի միասնական կամքը, նա հրաժարվում է կատարել կաթողիկոսի պահանջը, և մնալով ազգային եկեղեցու ավանդական

71 Այսպես ենք կարծում հաշվի առնելով նաև Հովհան-Օրբելի Զաբարիա Մործորեցուն ուղղած նամակի մի հատվածը, ուր խոսք կա այն մասին, որ Արտազի եպիսկոպոսը պարծենալիս է եղել ինչպես իր, այնպես էլ իր շուրջ համախմբված անձանց գիտության վրա («...թէ զու այնպէս գիտուն եղար՝ որպէս կարծես զքեզ կամ զքոյրդ՝ որպէս պարծես հանապազ և խրոխտացեալ ևս առաջի իշխանաց»): Պարզ է, որ Զաբարիան այդպիսի դիրք կարող էր բռնել 1314-ից հետո միայն, երբ արդեն հիմնադրել էր Մործորի վանքը՝ բարձրագույն իր դպրոցով, իրեն կուսակիցը դարձրել Հովհաննես Երզնկացի—Մործորցի վարդապետին և այլն: Որ այս նամակների շարադրման ժամանակ Երզնկացին արդեն հաստատվել էր Մործորի վանքում ու դարձել Զաբարիայի մերձավոր գործակիցը, պարզ երևում է Մ. Զամչյանի ձեռքի տակ եղած և օգտագործած նյութերից (տե՛ս «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 306—308):

գիրքերի վրա, իրեն ազատ է համարում այսուհետև վարելու ինքնուրույն քաղաքականություն<sup>72</sup>:

Հովհան-Օրբելի Զաքարիա Մործորեցուն հասցեագրած նամակից պարզվում է, որ վերջինս ոչ միայն հաճույքով կատարել է կաթողիկոսի պահանջը՝ պատարագի խորհրդին ջուր խառնելով և դեկտեմբերի 25-ին Քրիստոսի ծննդյան տոնը կատարելով, այլև ընդառաջ է գնացել կաթոլիկ եկեղեցուն բազմաթիվ այլ հարցերում ևս (տարվա ընթացքում պահքի 50 օր է հաստատել, արգելել է աշխարհիկ քահանաների ամուսնությունը և այլն): «Ի հակառակաց կողմն դարձուցէր զքեզ, — մեղադրում է նրան Հ. Օրբելը, — և երդամբ շափ քակես զեկեղեցի աստուծոյ, և զհնազանդեալքս ի հոգևոր զխոյն օծես, երբեմն իշխանաբար սաստելով, երբեմն զիրս և խօսս շարախօսութեան զմէնջ առ հոգևոր տէրն առաքելով, և ի նմանէ մեզ սաստ և սպառնալիս տաս բերել» և այլն<sup>73</sup>:

Մ. Զամչյանի ձեռքի տակ եղել են նաև այլ թղթակցություններ. Զաքարիայի պատասխան-նամակը Հովհան Օրբելին, վերջինիս երկրորդ գրությունը և այլն: Գրանց տվյալներով Արտագի եպիսկոպոսը կաթոլիկ եկեղեցուն ընդառաջ գնալու իր գործելակերպը փորձում է արդարացնել տեսական այն դրույթով, որ «Օրէնք աստուծոյ զամենեսեան միաւորէ ընդ Քրիստոսի, իսկ օրէնք սատանայի՝ բաժանէ ի նմանէ, զի մի է տէր, մի հաւատ, մի օրէնք, և զլուխ օրինացն՝ սէր, և մի եկեղեցի՝ ժառանգ սիրոյ նորա, յորմէ արտաքսեալ որ ոչ ունի բնաւին փրկութիւն»: Ինչպես հրեաները հնում ունեցել են մի քահանայապետ, այնպես էլ քրիստոնյաները՝ պետք է մեկ հոտ լինեն՝ մեկ հովիվ ունենալով, դաս առնելով հրեաների պատմությունից. «Որչափ ժամանակ հրեայքն ի մի տաճար երկրպագէին և մի թագաւոր ունէին, աստուած ընդ նոսա էր, իսկ յորժամ բաժանեցան՝ յաւար և յափշտակութիւն մատնեցան. որպէս և այժմ քրիստոնեայք՝ տուեալ եղեն կոխան հեթանոսաց» — գրում է նա<sup>74</sup>:

Սաի և Ադանայի ժողովների որոշումները Մեծ Հայքի թեմերին պարտադրելու մտահոգությամբ կաթողիկոսն ու իր գործակիցները եռանդուն քայլերի են դիմում. գրվում են հորդորական նամակներ՝ հասցեագրված ոչ միայն վիճակավոր առաջնորդներին, այլև անվանի ու հեղինակավոր գիտնական-վարդապետներին: Պահպանվել են այդպիսի մի քանի նամակների Եսայի Նչեցու շարագրած պատասխան-գրությունները: Գլաձորի համալսարանի մեծ բարունապետը, իր և իր կուսակիցների անունից («ես և հաւանողքն ինձ» — գրում է նա) հայտնում է, որ քրիստոնեական եկեղեցիների միաբանությունը իրոք աստվածահաճո մի գործ է և սատանան է, որ «ատելութեամբ զմեզ առ իրեարս զրգոէ և բաժանէ, զի դիւրաւ հաղթեսցէ»: Բայց իրատես լինելով, նա գտնում է, որ քանի դեռ չեն ստեղծվել եկեղեցիների միավորման համար անհրաժեշտ պայմաններ, ամեն մի եկեղեցի, առաջնորդվելով «հին սովորութիւն քաղցր է իւրաքանչիւր ումեք» սկզբունքով, պարտավոր է հավատարիմ մնալ անցյալից ժառանգած և ազգային երանգ ստացած ավանդություններին, միաժամանակ հարգելով մյուսների օրենքներն ու սովորույթները:

72 «Ճոռաբաղ», 1860, էջ 43: Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 8245, էջ 182:

73 «Ճոռաբաղ», 1860, էջ 56: Հմմտ. ձեռ. № 8245, էջ 183:

74 Մ. Զամչեանց, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 306—308:

Նշեցի բարունապետը կիլիկեցիների կողմից «սուրբ» հռչակված ժողովը (ամենայն հավանականությամբ խոսքն Ադանայի ժողովի մասին է)՝ «սուտ ժողով» է կոչում, ելնելով այն իրողությունից, որ՝ նախ, ժողովին մասնակցել են սակավաթիվ պատգամավորներ (այն էլ միայն կիլիկիայի ներքին թեմերից), և ապա, շատերը հենց տեղում հակառակել են ու «դեռ տակաւին ևս հակառակին»՝ մերժելով ժողովի վնասակար որոշումները. իմաստասեր վարդապետը իր միտքն եզրափակում է այսպես. «Իբր, որ ի սահմանելն իւրում հակառակութիւն կրէ՝ յայտ է թէ ոչ է ճշմարիտ, այլ սուտ»<sup>75</sup>: Ի վերջո Եսայի Նշեցին հայտնում է, որ ինքը և իր կուսակիցները պատրաստ են նույնիսկ իրենց կյանքը զոհարելու, բայց չեն շեղվելու երբեք նախնիներից ժառանգած ու դարերով սրբազործված ավանդություններից<sup>76</sup>:

Մեծ Հայքի քաղաքական ու եկեղեցական գործիչները չեն սահմանափակվում լոկալ գաղափարական պայքար մղելով, ի պաշտպանություն իրենց սկզբունքների գրվածքներ շարագրելով ու բանավիճելով: Շուտով գործարար քայլեր են կատարվում Զարբիա Մործորեցու լատինամետ գործունեության

75 Ուշագրավ այս գրությունը, որ պահպանվել է Մաշտոցի անվան մատենադարանի № 9622 ձեռագրում (էջ 734—753), խորագրված է այսպես. «Քուղթ Եսայեայ վարդապետին, պատասխանի թղթոյ Ստոյ կաթողիկոսին և թագաւորին»: Գրության ստույգ տարեթիվը հայտնի չէ, բայց գրված պետք է լինի նույն այս տարիներին՝ XIV դարի 10-ական թթ. վերջերին:

Հարկ է նշել այստեղ, որ շնայած Եսայի Նշեցի բարունապետի անունը Գլաձորի համալսարանի անշուքությամբ վերջերս շատ է հորովվում, բայց նրա կյանքի ու գիտական գործունեության գրվածքները գիտական ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել: Աշխարհով մեկ ցրված հայերեն ձեռագրերի մեջ նրա անունով կան շուրջ երկու տասնյակ աշխատություններ՝ մեկնություն, ճառ, նամակ, շրջաբերական գրություն և այլն, որոնց մեծագույն մասը ոչ միայն չի հրատարակված, այլ և չի գնահատված մասնագետների կողմից: 2. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» Բ հատորում (Երևան, 1944, էջ 128) թվարկված են Նշեցու 12 աշխատությունները. առանց հատուկ քննություն կատարելու այդ ցանկը կարող ենք լրացնել հետևյալ գործերով. (1) «Քուղթ վասն կարգաց եկեղեցոյ և ժամուց, զոր արարեալ է Եսայի վարդապետի ի խնդրոյ վարդապետաց Սիւնեաց և առաջնորդաց վանորէից, աստուածասէր կրօնաւորաց» (Մատենադարան, ձեռ. № 5154, էջ 259ա—261ա). (2) «Երիցս երանեալ քաղմերջանիկ վարդապետին Եսայեայ, արարեալ ի խնդրոյ Ստեփանոս վարդապետի Թեղեկեցոյ, Յաղագս եկեղեցոյ խորհրդեան» (ձեռ. № 9622, էջ 754—772). (3) Շրջաբերական թուղթ, որով հորդորում է հավատացյալներին ողորմություն տալ Տարոնի սուրբ Կարապետի վանքի նվիրակին (ձեռ. № 848, էջ 100ա—106բ) և վերջապես, (4) Կաթողիկոսին և թագավորին հասցեագրված այս նամակը, որից բաղվածքներ ենք կատարում և որը առիթ տվեց անդրադառնալու Եսայի Նշեցու գրական ժառանգությանը:

76 Մ. Չամչյանը, 2. Շահխաթունյանցը, Ղ. Ալիշանը և այլ բանասերներ, հենվելով Սամվել Անեցու շարունակողներից մեկի հաղորդած տվյալի վրա (Սամվել, էջ 155), նույնացրել են նոստանդին Կատուկեցի (Պրոնգործ) և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսներին, գտնելով, որ Հելթում թագավորի կողմից 1289-ին դահլեզեց արված վեհապետը՝ երկրորդ անգամ կաթողիկոս է դարձել 1307-ին: Մ. Յոթանյանը, հանգամանորեն քննարկելով այս կաթողիկոսների մասին առկա տվյալները, հանգել է այն եզրակացություն, որ դրանք տարբեր անձնավորություններ են (տե՛ս «Ազգագալաում», §§ 1169, 1245): Եսայի Նշեցու այս թղթի մեջ կա մի հատված, որ թերևս ննարավորություն է քննադատում վերանայելու Յոթանյանի ուսումնասիրության արդյունքները: Նշեցու գրության մեջ կան նաև մեջբերումներ կիլիկեցիների իրեն հղած նամակից. «Այլ և պատուով.— ասէ,— բնկալարուք զհրամանս սուրբ հօրս՝ իբրև ճշմարիտ» խոսքերի կապակցությամբ Նշեցին գրում է. «Թէ սուրբ հայր էր բնղէ՛ր բնկեցիք յաթոռոյն և շար ի վերայ եղիք»: Գծվար չէ կասել, որ աթոռագուրկ արված և կրկին «սուրբ հայր» դարձած անձը, որի հրամաններին պարտավոր էին ենթարկվել Մեծ Հայքի հոգևորականները՝ պետք է կաթողիկոսը լիներ, իսկ այդպիսին Կոստանդին Կատուկեցին կարող էր լինել, որի կրկին կաթողիկոս դառնալու մասին, ինչպես ասացինք, կան ձեռագրական վկայություններ:

արգյունքները խափանելու և նրա իրավասությունները սահմանափակելու ուղղությամբ: Առաքելոց աթոռի հոգևոր իշխանությունը, ինչպես ասել ենք արդեն, դուրս էր գալիս պատմական Արտազ գավառի սահմաններից՝ ընդգրկելով Պարսկահայքի և Ատրպատականի հայաբնակ մի շարք շրջաններ, ներառյալ Քավրիզ ու Մարաղա քաղաքները<sup>77</sup>: Այս վիճակը, սակայն, երկար չի տևում. շուրջ 1321 թվականին, Մեծ Հայքի բարձրաստիճան հոգևորականության ու ֆեոդալների համատեղ ջանքերով, Քավրիզում թեմական առաջնորդ է կարգվում Զաքարիա Մործորեցուց կախում շունեցուց և նրա որդեգրած քաղաքականության հակառակորդ Մատթեոս կախկոպոսը, որին մեծարում են «սրբազան քառապետ և վերատեսուչ առաքելական աթոռոյ» տիտղոսով<sup>78</sup>, հակադրելով Առաքելոց թեմի լատինադավան առաջնորդին:

Այս Մատթեոսին Եսայի Նշեցին «մեր յոյժ սիրեցեալ որդի» է կոչում<sup>79</sup> և նրան հասցեագրած իր ուշադրավ թղթի մեջ խորհուրդ է տալիս մերժել ու հալածել ֆոանկ և կաթոլիկ դարձած հայ այն վարդապետներին, որոնք թշնամական գիրք են գրավել Հայոց եկեղեցու նկատմամբ ու հայերին իրենց հավատքից հանելու նպատակ ունեն. «Դարձեալ լսեցաք,—գրում է նա,—թէ սուտ վարդապետեր ի ֆոանկաց յազգէ և այլք ի Հայոց՝ ծագեր, եկեալ են առ ձեզ, և զՀայոց բրիտանէութիւնս հայհոյեալ՝ նախատեն զեկեղեցի, և զառաջնորդս ուրանալ տուեալ, բազում հակառակութիւնս յեկեղեցիս ձգեն: Զայնպիսի հերձուածողսն մի ընդունիցիք ի տունս ձեր, և մի ողջոյն տայք նոցա, և մի առնոյք ողջոյն ի նոցանէ, զի ուրացողք են, այլ եղիցին ձեզ իբրև զհեթանոսս և զմաքսաւորս»<sup>80</sup>:

Մատթեոս կախկոպոսը պաշտոնավարում է երկար. 1335 թվականից պահպանվել է շափածո մի հիշատակարան, գրված ոմն Գրիգոր երեցի կողմից, որի մեջ գրվատանքի ջերմ խոսքերի է արժանանում եռանդուն այս գործիչը: Նա, որ կարողանում էր «որպէս արծիւ սլանալով առ թագաւոր և ընդ

77 Այդ երևում է ստորև վկայակոչվող երկու հիշատակարաններից, որոնք գրված են Զաքարիա կախկոպոսի իշխանությունը ճանաչող գավառակիցների կողմից 1. Տեր Տիրացու կախկոպոսը՝ Զաքարիայի հաջորդն ու եղբորորդին, 1342 թ. հիշատակված է որպես առաջնորդ Քավրիզ քաղաքի և շրջակայքի («...ի յառաջնորդութեան աստուածապահ նահանգիս Քավրիժու քաղաքիս տէր Տիրացուի կախկոպոսի», «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 331): 2. Մարաղայում 1361 թ. ընդօրինակված Աստվածաշնչի հիշատակարանում որպես հոգևոր առաջնորդ գործյալ հիշատակված են Արտազի կախկոպոսները. «...ի հայրապետութեան աթոռակալաց առաքելոյն Քաղէոսի տէր Տիրացուի և Զաքարիայի» (Նոր Զուղա, ձեռ. № 336):

78 Մատթեոս կախկոպոսի մասին անդրանիկ վկայությունը գտնում ենք Եսայի Նշեցու ծանոթ թղթի մեջ, որն ըստ Գ. Լավսեփյանի՝ գրված պետք է լինի կամ 1321 թվականին կամ քիչ առաջ (տե՛ս «Շաղրակյանը կամ Պոսչյանը Հայոց պատմության մեջ», Բ հրատարակություն, Անթիլիաս, 1969, էջ 286—288):

79 Որոշ ուսումնասիրությունների մեջ ասվում է, թե, իբր, Եսայի Նշեցու զլիսավորած Գլաձորյան համալսարանն ավարտել ու վարդապետական գավառան են ստացել 360 անիձնք: Այդ թիվը, սակայն, խիստ շափազանցված է ու չի հիմնավորվում հին աղբյուրներով: Մխիթարիչ Ապարանեցու «Գիրք ուղղափառաց»-ի մեջ այդ մասին կա ուշադրավ տվյալ. «Մեծ վարդապետ Հայոց Եսայի, որ էր ի Գալլիձորն... տուեալ է դաւազան իշխանութեան վարդապետելոյ զձ և կէ (167) անձանց» (M. Oudenberg, նշվ. աշխ., էջ 216): Հավանաբար դրանցից մեկն էր Առաքելոց թեմի առաջնորդ դարձած Մատթեոս կախկոպոսը:

80 «Ճաթաղ», 1860—1861, էջ 210: Լմմա. Մատենադարան, ձեռ. № 2776, էջ 248ա, № 8245, էջ 170:



իշխան» հոգալ իր վիճակի հայ բնակչության կարիքները, հաջող պայքար է մղում նաև կաթոլիկ քարոզիչների ու նրանց դավանանքն ընդունած հայ գործիչների դեմ.

«Տէրն ոչ արար ընդ մեր մեղացն,  
Աստուածութեան կամք բազցրացան,  
Յարույց կրկին կանկնող բնութեանս  
Ըստ առաջին Մաթէոսեան,  
Լուսաւորիչ սուրբ հաւատոյս  
Որպէս Գրիգոր Պարթևական,  
Որ զշարժեալ թիւն (իմա՛ թոյնն) մահաբեր  
Իժիցն արար փախրստական,  
Քաղկեդոնի շար ||| անդելով.  
Զնեստոր առնէր թշուառական»<sup>81</sup>

Այս Մատթեոսին հաջորդած պետք է լինի Արտագի արքեպիսկոպոս և Ս. Քաղեի վանահայր կոչված Մեսրոպ վարդապետը: 1335 թ. նա հիշատակված է որպես անվանի բարունապետ, որի մոտ ուսանելու էին գալիս աշակերտներ նույնիսկ Կիլիկյան Հայաստանից և այլ վայրերից: Սա եպիսկոպոս է եղել 1335 թվականից տարիներ հետո<sup>82</sup>, 1359 թ. բնաբովել է կաթողիկոս և աշխույժ գործունեություն ծավալել կաթոլիկ եկեղեցուն արված զիջումներն ի շիք դարձնելու, Հայոց եկեղեցու ազգային դիմապատկերն անազարտ պահելու ուղղությամբ: Սրա ջանքերով 1361 թ. Սսում գումարվել է եկեղեցական ժողով, որն անվավեր ճանաչելով Սսի և Ազանաչի ժողովների որոշումները, իսպառ մերժել է կաթոլիկական նորամույժ ծեսերը<sup>83</sup>. «Եբարձ զշուրն ի սուրբ խորհրդոյն և հերքեաց զախթարմայութիւնն, որ մուծեալ էր ի Հայս ի Կոստանդին հերձուածողէն և յՕշին թագաւորէն»—ասում է սրա մասին Սիմեոն Երևանցին<sup>84</sup>:

81 Մատենադարան, ձեռ. N 2776, էջ 262ա:

82 Մեսրոպ բարունապետի ջանքերով Ս. Քաղեի վանքում ստեղծված դպրոցի մասին կարեւոր տվյալներ է հաղորդել Հովհան անունով Սսեցի մի երիտասարդ, որ «սակս ուսման» Կիլիկիայից Մեծ Հայք էր եկել, սովորել Գլաձորում, ապա հաստատվել Ս. Քաղեի վանքում, դառնալով Մեսրոպի աշակերտը: Ենթենա Շնորհալու «Մեկնութիւն Մատթէի աւետարանին» աշխատության իր ընդօրինակության հիշատակարանում Հովհանը գրել է. «Այլ և ես թարմատարս Յոհան աշակերտ բանի յաշխարհէն Կիլիկեցոց, ծնեալ և սնեալ ի մայրաքաղաքն Սիս, եկի յաշխարհս Արեւելից՝ տարաշխարհիկ շրջելով սակս ուսման, որ և ուսայ գորն որ յնամեձէն ես այնայ և է գոր ի մերոյս բարունապետէ Մեսրոպայ, առ ոտս սորա դեգերելով և վարժելով, և տեսի ի մեր լսարանիս դայս լուսաւոր և թուրվանդայ մեկնիչս, և ստացա զսայ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց և ուսուցչաց: Արդ գրեցաւ սա ի թվականիս 927 (1335), ի յաշխարհիս Արտագ կոչեցեալ, ի հայրապետութեան տեսան Յակոբայ... և յեպիսկոպոսութեան Արտագու և սուրբ առաքելոյն Քաղէոսի տէր Զարարիայի» (Երուսաղեմ, ձեռ. N 1428):

Թերևս նույն այս գրչի մեկ ուրիշ հիշատակարանն է տպագրված Գ. Զարպհանալյանի «Պատմ. հայ դպրութեան» աշխատության Բ հատորի մեջ (Վենետիկ, 1878, էջ 193—194). այնտեղ ասված է. «Եղեալ թափառական տարագնաց ընթացիւք ի կոյս կողմանց արևու, և զկայ ասեալ զազարեցի յԱրտագ... զեգերեալ առ ոտս աստուածախօս սուրբ բարունոյս Մեսրոպի»:

83 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1322:

84 Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 17:

Որոշ տվյալներ թույլ են տալիս հանգելու այն եզրակացության, որ Մեսրոպ վարդապետի Արտազի եպիսկոպոս եղած տարիներին, հավանաբար Ջաբարիա եպիսկոպոսի մահվանից հետո՝ Ս. Թադեի վանքը դուրս է բերվել Արտազի հայ ավատատերերի իրավասությունից, դառնալով ազգային եկեղեցու ավանդություններին հավատարիմ եպիսկոպոսի աթոռանիստ: Արտազի կաթողիկոսյան հարած եպիսկոպոսները՝ Ջաբարիա Ծործորեցու հաջորդները՝ ստիպված տեղի են տվել, ամփոփվելով Մակվի բերդում և Ծործորի վանքում:

Ստույգ տվյալներ չեն պահպանվել պարզելու, թե Մեսրոպ վարդապետից հետո ո՞վ է գրավել Արտազի եպիսկոպոսությունն ու Ս. Թադեի վանքի վանահայրությունը, գիտենք սակայն, որ 1397 թ. այդ պաշտոնում եղել է Պետրոս անունով մի եպիսկոպոս, որ քահանա է ձեռնադրել էջմիածնի ապագա կաթողիկոս Կիրակոս Վիրապեցուն<sup>85</sup>: Այնուհետև տեղեկություն ունենք 1426 թվականից, երբ Գրիգոր Մակվեցի Ջալալբեկյանը, ներկայանալով որպես «աթոռակալ սրբոյն Թադէոսի», տեղեկություններ է գրանցում Իսքանդար Կարա-կոյունլուի կողմից Մակվի բերդի գրավման և Արտազի հայկական իշխանության վերացման մասին<sup>86</sup>:

\* \* \*

Ջաբարիա եպիսկոպոսը Արտազի հայկական իշխանության սահմաններում 1313—1321 թթ. ընթացքում շարադրված հիշատակարանների մեջ<sup>87</sup> մեծարված է որպես եկեղեցական այդ թեմի և Ս. Թադեի վանքի միահեծան առաջնորդ<sup>88</sup>, իսկ 1329 թ. շինարարական ընդարձակ արձանագրության մեջ, ինչպես տեսանք վերը, Ջաբարիան գրանցել է տվել նաև իր փոխանորդ կարգված Տիրացու եպիսկոպոսի անունը, որ եղել է նրա եղբորորդին («Եւ զաջորդն՝ մեր աղբար որդին՝ զտէր Տիրացուն»)՝<sup>89</sup>: XIV դարի 30—40-ական թվական-

<sup>85</sup> Այս տեղեկությունը քաղված է Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանից», որի տպագրում Պետրոս անվան փոխարեն, հավանաբար վրիպակով, Պողոս է գրված: Մատենադարանի մեր համեմատած 12 ձեռագրերը, առանց բացառության, այս եպիսկոպոսին Պետրոս են կոչում:

<sup>86</sup> Անտեղյակ լինելով Արտազի աթոռի եպիսկոպոսություն և Ս. Թադեի վանքի առաջնորդության զույգ պաշտոնների շուրջ XIV դարի ընթացքում հայ եկեղեցու ավանդություններին հավատարիմ և կաթողիկ եկեղեցու դավանանքն ընդունած հակընդդեմ խմբավորումների միջև ծավալված պայքարի զրգանքներին, սլատմագիտական աշխատություններում շփոթել են միմյանց «Թադեոս առաքյալի աթոռակալ» կոչված անձնավորություններին, ապարդյուն փորձեր կատարելով միասնական մի շղթայի մեջ առնելու Ջաբարիային ու նրա հաջորդներին՝ մի կողմից և Մատթեոսին ու նրա հաջորդներին՝ մյուս կողմից:

<sup>87</sup> Պահպանվել են հիշատակարաններ 1313, 1315, 1318 և 1321 թվականներից, որոնք տպագրված կամ հիշատակված են հետևյալ աշխատությունների մեջ. Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հատոր Հինգերորդ, Երուսաղեմ, 1971, էջ 96—97, «ԺՆ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 114—115, Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2104, էջ 164բ, Վ. Հաջունի, Կարևոր խնդիրներ հայ եկեղեցվո պատմությանը, Վենետիկ, 1927, էջ 310:

<sup>88</sup> 1313 թ. Թավրիզում ընդօրինակված Սարգիսզբբի մեջ հիշատակված է նաև ոմն տեր Հակոբ «Յաթոռակալութիւն Բ աթոռոցն Թադէոսի և Բարդղղիմէոսի տէր Ջաբարիա և տէր Յակոբի» (Ն. Պողարյան, նշվ. աշխ., էջ 96—97): Այս Հակոբը, սակայն, Ջաբարիային ենթակա մի կղերական է, հավանաբար Սալմաստի առաջնորդ Հակոբ եպիսկոպոսը, որ հիշատակված է և նաև Կ. Գալանոսի կողմից՝ որպես Ադանայի ժողովի մասնակից:

<sup>89</sup> XIV դարի 40-ական թթ. սկզբներին կաթողիկոսների կողմից հայ եկեղեցու վրա բարդված 117 «ճոխությունների ցանկում» կա նաև մի կետ (103-րդ), որով հայերը մեղադրվում են բազմակնություն և կատամար ներողամիտ լինելու մեջ: Համառոտելով այդ գրության հիմնական

ների մի շարք հիշատակարաններում, իր մեծանուն հորեղբոր հետ միասին հիշատակվում է նաև այս Տիրացու եպիսկոպոսը, որ ժամանակակիցների կողմից «հեզ և մարդասեր» մակդիրն է ստացել<sup>90</sup>:

Զաքարիայի մահվան թվականը անհայտ է մնում. իր մահկանացուն կնքած պետք է լինի 1340-ական թվականների վերջերին, անտարակույս 1350-ից առաջ, քանի որ այդ թվականի մի հիշատակարանից պարզվում է, որ նա այլևս գոյություն չունի («զհանկուցեալն ի Քրիստոս») և նրան հաջորդել է իր ժառանգ տեր Տիրացուն, «որ է այլը բար]եխորհ և իմաստուն, յոյժ անուանի և ամենեցուն մեծամեծաց սիրելի»<sup>91</sup>:

Մինչև Տիրացու եպիսկոպոսի ու նրան հաջորդող Արտազի հայ հոգևոր ու աշխարհիկ տերերի գործունեությանն անդրադառնալը, անհրաժեշտություն է զգացվում հակիրճ մի ամփոփումով փակել Զաքարիա եպիսկոպոսին նվիրված այս գրվազը:

Գրեթե մի ամբողջ հիսնամյակ իշխելով որպես Առաքելոց թեմի եպիսկոպոս և Արտազի շրջանի ավատատեր դարձած հայ գերդաստանի նահապետ՝ պարոնտեր Զաքարիա Ծործորեցին զգալի դեր է կատարել Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքում: Ընդառաջելով Կիլիկյան Հայաստանի արքունի տան անդամների ու բարձրաստիճան հոգևորականության լատինամուլ քաղաքականությանը, նա դարձել է նրանց ձայնափողը Մեծ Հայքում, պայքարելով Հայոց եկեղեցու ինքնուրույն գոյությունը ամրապնդել ցանկացող և ազգային ավանդություններին հավատարիմ մնացած քաղաքական ու եկեղեցական գործիչների դեմ: Իր գործունեության առաջին երեք տասնամյակների ընթացքում նա հաջողություններ է ունեցել: Հավատ բնծայելով եվրոպական երկրներից քաղաքական ու ազգամական օգնություն ստանալու սին ու պատիր խոստումներին, Արտազի շրջանի և շրջակա նահանգների քաղաքային բնակչության որոշ խավեր (մասնավորապես եվրոպական երկրների հետ տնտեսական կապեր ունեցող և քարավանային առևտրի մեջ ներգրավված վաճառականներ ու արհեստավորներ), բնգունել են կաթոլիկ դավանանք և ճանաչել Արտազի արքեպիսկոպոսին՝ որպես իրենց հոգևոր առաջնորդ: Զաքարիա Ծործորեցին, իր գերդաստանի իշխանազուն անդամների գործակցությամբ, թերևս նաև Կիլիկիայից ու եվրոպական երկրներից նյութական օժանդակություն ստանալով, Արտազի շրջանում ծավալել է շինարարական աշխույժ գործունեություն: Կառուցել է Ծործորի վանքը, ստեղծելով այնտեղ վանական դպրոց և մշակութային աշխատանքների համար նպաստավոր պայհաններ<sup>92</sup>, վերաշինել է Ս. Թադևի երկրաշարժից գրեթե հիմնահատակ կոր-

մասերը Մ. Սրմանյանն այսպես է ձևակերպում մեզ հետաքրքրող հատվածը. «Հայերը... ապօրեն զավակները իբր օրինավոր ժառանգ կրնդունին, և մինչև իսկ այնպիսիները եպիսկոպոսության կը բարձրացնեն. և օրինակ կը բերեն Զաքարիայի եղբոր ապօրեն զավակը, որ հորեղբոր տեղը եպիսկոպոս ձեռնադրվեցավ» («Ազգապատում», § 1305):

Եթե այս վերաբերում է Զաքարիա Ծործորեցուն, ապա պետք է հեռանցնել, որ 1329 թ. նրա հետ միասին Արտազի եպիսկոպոս կոչված տեր Տիրացուն, Զաքարիայի եղբայրներից մեկի (հավանաբար՝ պարոն Պետրոսի) ապօրեն զավակն է եղել:

90 Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 227, 282 և Քեյիչյան, Յուզյակ, էջ 579:

91 «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 385:

92 Զաքարիա եպիսկոպոսն անձամբ զբաղվել է մատենագրական աշխատանքներով, որպես մեկենաս դարկ ավել ինքնուրույն ու թարգմանական երկերի ստեղծման, ձեռագրերի քաղմացման աշխատանքներին: Նրա գործունեության այս բնագավառին անդրադառնալու ենք Ծործորի վանքին նվիրված գրվազի մեջ:

ժանված վանքը և այլ վանքեր ու եկեղեցիներ, բարեկարգել Արտազի շրջանով անցնող միջազգային նշանակություն ունեցող ճանապարհը՝ կառուցելով գեղեցիկ կամուրջներ և այլն:

1320-ական թվականներին, երբ կաթողիկ քարոզիչների քայքայիչ աշխատանքը նոր թափ է ստանում Հայաստանում, ազգային եկեղեցու ինքնուրույն գոյության անհրաժեշտությունը դիտակցող հայրենասեր գործիչները, Եսայի Նշեցի բարունապետի գաղափարական ղեկավարությամբ, հակադրոհի են անցնում: Շուտով Ջաբարիա եպիսկոպոսի իրավասությունից դուրս է բերվում իշխանության մայրաքաղաքն ու ողջ Ատրպատականը. Թավրիզում ստեղծվում է Արտազի թեմին հակադրվող, Թաղեսու առաքյալի անունը իրեն վերապահող եկեղեցական նոր թեմ, կաթողիկոսության ակնհայտ թշնամի Մատթեոս եպիսկոպոսի աթոռակալությամբ: 1340-ական թվականներին Առաքելոց եպիսկոպոսի հոգևոր իշխանությունից դուրս է բերվում նաև Ս. Թաղեի վանքը. Արտազի կաթողիկ դարձած տերերը ավելի են սեղմում իրենց գործունեության շրջանակները՝ տեղի տալով ազգային եկեղեցու սկզբունքներին հավատարիմ կուսակցության գրոհներին: Եվ այսպես, Արտազի եպիսկոպոս Ջաբարիա Մործորեցու հաշորդներին ժառանգություն է մնում բզկտված եկեղեցական մի թեմ, որ սահմանափակվում է Մակվի բերդի և Մործորի վանքի անձուկ շրջանակներով: Սրանց հոգևոր առաջնորդությունը՝ Մակվի իշխանության սահմաններից դուրս ճանաչում են միայն Ատրպատականի հայաբնակ շրջանների կաթողիկ դավանանք բնդունած հայ բնտանիքները:

6. Արտազի իշխանությունը Ջաբարիա եպիսկոպոսից հետո.— Ջաբարիայի հաջորդ Տիրացու եպիսկոպոսը, որին պատշաճ է Տիրացու Բ անունը տալ (տարբերակելու համար XIII դերչերին ապրած նույնանուն գործչից), աթուռակալել է իր հորեղբոր հետ միասին արդեն 1329 թվականից. Ջաբարիայի մահվանից հետո, մի քանի տարի միայնակ վարել է Արտազի և Ատրպատականի մյուս հայաբնակ շրջանների հայ կաթողիկների առաջնորդի պաշտոնը. 1350 թ. շարադրված մի հիշատակարանի գրիչ մաղթում է սրան իշխել երկար տարիներ «ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ և շահ լուսատու լինել բանիւ և գործով նուազեալ ազգիս մերոյ, հանդերձ հարազատ եղբար[ը]ք իւրովք, այլ և նախնեօք հարց և հաւուց և ամենայն արեան մերձաւորօք՝ կենդանեօք և հանգուցելովք»<sup>93</sup>: 1361 թվականից տեղեկություն ունենք, որ Տիրացու Բ եպիսկոպոսը իր մերձավոր ազգականներից մեկին՝ Ջաբարիա անունով՝ կարգել է իրեն փոխանորդ<sup>94</sup>: Համբավավոր իր նախորդի անունը ժառանգած այս Ջաբարիա եպիսկոպոսը հիշատակվում է նաև 1392 թ. շարադրված երկու հիշատակարաններում՝ որպես Թաղեսու առաքյալի վիճակի հայրապետ<sup>95</sup> և Արտազի գավառի պարոնտեր: Ֆրա Մխիթարիչը Սաղմոսի

93 «ԺԲ դարի հիշատակարաններ», էջ 385:

94 Այս տեղեկությունը գտնում ենք Մարաղայում մի կաթողիկ հայի բնգորինակած Աստվածաշնչի հիշատակարանի մեջ, ուր ասված է. «Գրեցաւ աստուածաշունչս... ի քաղաքիս Մարաղա, ի մարդեղութեան Քրիստոսի ՌՅԿԱ (1361) և ի թվ. Հայոց ՊԺ, ի թագաւորութեան սուլթան Վախսին և ի հայրապետութեան աթոռակալաց առաքելոյն Թաղեսուի տէր Տիրացուի և տէր Ջաբարիայի» (հիշատակարանը բաղել ենք Մ. Տեր-Մովսիսյանի կազմած հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակից):

95 Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 310:

մեկնությունն այդ թվականին ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ «Շտապով գրեցի դա ի գաւառս Արտազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր Զաքարիայի մեծ կրանաւորի»<sup>96</sup>: Սրանից պարզվում է, որ Տիրացու Բ եպիսկոպոսը վաղուց արդեն հեռացել էր կյանքից, ասպարեզը թողնելով իր հաջորդ Զաքարիա Բ եպիսկոպոսին:

Պատմական այս ժամանակաշրջանում գոյություն ունեցող հայ փոքրաթիվ և ուժասպառ հայ ավատատերերը պատվարում էին իրենց տիրույթները վանական (վակֆային) հողատիրության ցուցանակով: Պետական ատյանների առջև ավելի հաճախ ներկայանում էր ավատատեր գերդաստանի հոգևորականի սրեմ հագած ներկայացուցիչը, հանդիսանալով վանական հաստատություններին վակֆ արված կալվածքների պաշտոնական տնօրենը, սակայն ավելի հաճախ տվյալ գերդաստանին պատկանող կալվածքների տնտեսական գործերի տնօրինությունն իրագործում էր նույն գերդաստանի աշխարհական տանուտեր-իշխանը:

Զաքարիա Բ եպիսկոպոսի աթոռակալության տարիներին, մասնավորապես XV դարի սկզբներին, Արտազի շրջանի հայկական իշխանության տիրակալը՝ պարոն Նուրադինն էր: Ֆրա Մխիթարիչի ընդօրինակած վերոհիշյալ ձեռագրի մեջ 1406 թ. գրանցված մի հիշատակարանում այս իշխանի մասին կարգում ենք. «Ի գաւառս Արտազու, ի գիւղս որ կոչի Մակու, առ պարոնութեան պարոն Նուրադինի»<sup>97</sup>:

Արտազի հայկական իշխանության վիճակի, պարոն Նուրադինի ու նրա որդիների, Մակվի բերդի անառիկ ամրությունների և հարակից հարցերի մասին բացառիկ հետաքրքրություն ունեցող տվյալներ է հաղորդում Սպանիայի Հենրիկոս Գ թագավորի դեսպան, մեզ ծանոթ Ռուի Գոնսալես գե Կլավիխոն, որ 1403—1406 թթ. անցել է Հայաստանով և ուշագրավ տեղեկություններ գրանցել իր տեսածի ու լսածի մասին՝ «Մեծ Թամերլանի պատմություն» (Historia del gran Tamerlan) խորագիրը կրող ճանապարհորդական իր նոթերի մեջ: Այս աշխատության 78-րդ հատվածն ամբողջապես նվիրված է Մակվի հայկական իշխանության պատմությանը և ժամանակակից վիճակի նկարագրությանը:

Ստորև մեջ ենք բերում այդ հատվածը՝ գրեթե ամբողջությամբ (բաց թողնելով Մակվի բերդի գեղեցիկ նկարագրությունը, որի մասին խոսք է եղել նախորդ էջերում).

«Կիրակի, հունիսի 1-ին (1404 թ.)՝ երեկոյան ժամերգության պահին նրանք (այսինքն՝ ինքր՝ Կլավիխոն և իր շքախմբի անդամները—Լ. Խ.) հասան մի ամրոց, որ Մակու էր կոչվում և այդ ամրոցը պատկանում էր Նուրադին անունով մի կաթոլիկ քրիստոնյայի, և (ամրոցի) բոլոր բնակիչները նույնպես կաթոլիկ քրիստոնյաներ էին, թեև ծագումով հայ էին և իրենց լեզուն էլ հայերենն էր, սակայն նրանք գիտեին և թաթարերեն և պարսկերեն: Այդ վայրում կար սուրբ Դամինիկի եղբայրների մի վանք»<sup>98</sup>: Ամրոցը կանգնած է բարձր

96 «Փն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 61:

97 Նույն տեղում, էջ 61:

98 Խոսքն, անշուշտ, Մործորի վանքի մասին է, որ XIV դարի առաջին հիսնամյակում ֆրանցիսկյան միաբանության ազդեցության տակ էր գտնվում, բայց հետագայում՝ Նախիջևանի շրջանում դամինիկյանների հաստատվելուց հետո, ամբողջապես ընկավ նրանց ազդեցության տակ:

լեռան ստորոտում գտնվող հովտի մի անկյունում...<sup>99</sup>։ Ամրոցի ներսից սկիզբ է առնում մի հորդ աղբյուր, որի ջրից օգտվում է ժողովուրդն ու ջրում բազմաթիվ պարտեզները<sup>100</sup>։ Ամրոցի ստորոտում տարածված է շատ գեղեցիկ մի հովիտ, որի միջով անցնում է գետը, այն ծածկված է որթատունկերով ու մշակված արտերով։

Քամուրբեկը հարձակվել է այս ամրոցի վրա, բայց չի կարողացել գրավել, ուստի սլայմանագիր է կնքել տեղի իշխանի հետ, որի համաձայն նա պարտավորվել է ըստ պահանջի տրամադրել նրան (Քամուրին) քսան հեծյալ։ Արանից ոչ շատ ժամանակ անց Քամուրբեկը զորքով անցնելիս է եղել նրա (Մակվի) մոտով, ամրոցի իշխանը կանչել է շուրջ քսան տարեկան իր որդուն, հանձնել նրան երեք լավ թամբած ձիեր, որպեսզի նա տանի դրանք Քամուրբեկին նվեր։ Երբ Քամուրբեկը հասնում է ամրոցի ստորոտը, իշխանի որդին դուրս է գալիս և իր հոր անունից առաջարկում (նվեր ընդունել) այդ ձիերը։ Նա ընդունում է և հրամայում, որ այդ ամրոցին պատկանող հողերին իր զորքը պետք չէ որևէ վնաս հասցնի։ Այնուհետև Քամուրբեկն ասում է, քանի որ այս ամրոցի իշխանն ունի այսպիսի մեծ որդի, պատշաճ չէ նրան իր մոտ պահի, և նրան (որդուն) տանում է իր հետ։ Հետագայում նա նրան հանձնում է Օմար-Միրզա կոչվող իր թոռանը, որպեսզի նա ապրի նրա մոտ, քանի որ նա (Օմար-Միրզան) Պարսկաստանի և այդ երկրի կառավարիչն էր։ Եվ այժմ էլ նա ապրում է նրա մոտ և ծառայում այդ թագավորի զորքերում։ Այդ թագավորը բռնի ստիպել է ամրոցի իշխանի որդուն դառնալ մահմեդական (մավր), տվել է նրան Սորդաթմիշ անունը և դարձրել իր թիկնապահը։ Եվ չնայած նա այսպիսով մահմեդական է դարձել, սակայն իր կամքով չէ մահմեդական և մահմեդական չէ իր վարվեցողությամբ։

Գեսպանները լավ ընդունելություն գտան այդ ամրոցի իշխանի կողմից, որին շատ հաճելի էր նրանց քրիստոնյա լինելը։ Նա հյուրամեծար ընդունեց նրանց ու պատմեց, որ մի երկու շաբաթ դրանից առաջ Քամուրբեկի դարմիկ Յասան Միրաշան<sup>101</sup>, որ նրա մերձավորներից էր, մարդ էր ուղարկել պահանջելու, որ նա ընդունի իրեն ամրոցում, որովհետև ցանկություն ունի այնտեղ պահելու իրեն պատկանող ինչ-որ գանձ։ Նա պատասխանել է, որ չի ընդունի նրան, բայց եթե նա ունի պաշտպանություն կարոտ գանձ, ապա թող հանձնի իրեն, և ինքը լավ կպահպանի, դրանից հետո նա այդ մասին այլևս սկնարկ չի արել։

Գեսպանորդներն այդտեղ (Մակվում) մնացին իրենց եկած օրը։ Հետագայում, Պարսից թագավորի բանակատեղում նրանք հանդիպեցին այդ ամրոցի իշխանի որդուն և զրույց ունեցան նրա հետ։ Այդ (Նուրադին) իշխանն ու-

<sup>99</sup> Ինչպես ասացինք վերը՝ բաց ենք թողնում Մակվի ամրոցի նկարագրությունը, որ տրված է վերը (տե՛ս էջ 141)։ Մակվի այս նկարագրությունը «История Азербайджана» գրքում (Том I, Баку, 1958, էջ 215), անգիտությամբ ազրբեջանական ամրոցի նկարագրություն է համարվել, ըստ այդմ հայ իշխան Նուրադինը՝ ազրբեջանցի ֆեոդալ ներկայացվելով։

<sup>100</sup> Այս աղբյուրը սկիզբ է առնում ժայռի մեջ եղող մի մեծ (շուրջ 180 մետր երկարություն և 45 մետր լայնություն ունեցող) բարայրից, որը բնական պահեստի դեր է կատարել բերդի բնակիչների համար, իսկ հետագայում, քաղաքական հանցագործների համար բանտարգելության ապահով վայր դարձել։ Քարայրի արդի վիճակը նկարագրված է Վ. Մինորսկու կողմից («Древности Маку», էջ 4—5)։

<sup>101</sup> Հ. Հակոբյանի թարգմանության մեջ այս անունը տառադարձված է «Ջահան Շահ Միրզա» ձևով, որ, իհարկե, ճիշտ չէ։ Հավանաբար պետք է կարդալ՝ Հասան-Միրանշահ։

ներ սրանից երիտասարդ մի այլ որդի ևս. և նա դեսպանորդներին ասաց, որ այդ որդին գիտնական է, լավատեղյակ իր լեզվին, և եթե կամոքն աստծո նրանք վերադառնան, ապա նա նրանց հետ (Եվրոպա) կճանապարհի իր այդ որդուն, որպեսզի նրանք տանեն նրան (Սպանիայի) թագավորի մոտ, որպեսզի թագավորի հանձնարարությամբ պապը նրան այս երկրի եպիսկոպոս ձեռնադրի: Հիրավի շատ զարմանալի է, որ այդ ամբողջ գոյատևում է բրիտանոնյաններից այդքան հեռու, ամեն կողմից շրջապատված լինելով մահմեդականներով<sup>102</sup>:

Հարմանալի է նաև, որ նրանք լինելով հայ՝ դառնում են կաթոլիկ, դրանով գոհացում տալով աստծուն»<sup>103</sup>:

Կլավիխոյի «Ուղեգրության» ընդարձակ այս հատվածը հնարավորություն է ընձեռում պարզելու Արտազի հայկական իշխանության վիճակն սկսած XIV դարի 80-ական թվականներից: Լանկ-Քամուրի արշավանքի մասին տեղեկությունը, անշուշտ, վերաբերում է 1386—1387 թվականներին, նրբ կաղ աշխարհակալի զորաբանակները, Քավրիզը գրավելուց հետո սկսեցին իրենց ասպատակությունները Ատրպատականի և Հայաստանի բարեբեր շրջաններում: Հայկական շատ բնակավայրեր ուժեղ դիմադրություն ցույց տվեցին. Կողբ գյուղի բնակիչները, քաջարի տանուտեր Մարտիրոսի շլխավորությամբ, դիմադրեցին Լանկ-Քամուրին «մեծաւ պատերազմաւ և սրտապինդ գորութեամբ»<sup>104</sup>: Դիմադրություն կազմակերպեցին նաև Սուրմարի բերդաքաղաքի, Պոռչյանների իշխանանիստ Շահապոնք ամրոցի, Բջնիի, Երևանի և շատ այլ վայրերի բնակիչները: Կլավիխոյի շարադրանքից պարզվում է, որ Մակվի բերդը պաշարելուց հետո, երբ ակնհայտ է դառնում նրա անառիկ լինելը, Քամուրը գերադասում է համաձայնության գալ Նուրադին իշխանի հետ, ճանաչել նրա իշխանությունն Արտազի շրջանի վրա, պայմանով, որ ըստ պահանջի իրեն տրամադրվի 20 հեծյալից բաղկացած մի ջոկատ: «Սրանից ոչ շատ ժամանակ անց»,—ինչպես ասում է Կլավիխոն,—Լանկ-Քամուրը կրկին հայտնվում է այս կողմերում և իր մոտ պատանդ վերցնում Արտազի իշխանի երիտասարդ որդուն՝ Սորղաթմիշին: Այս դեպքը կատարված պետք է լինի

102 Տեղին է այստեղ մեջ բերել նաև Հանս Շիլտբերգերի վկայությունը Մակվի հայ կաթոլիկների մասին, որ վերաբերում է գրեթե նույն ժամանակներին: Շիլտբերգերը, գերի ընկնելով մահմեդականների ձեռքը, XIV դարի վերջերին և XV-ի սկզբներին շրջել է Մերձավոր Արևելքի երկրներում, Հայաստանում և Իրանում, առիթ է ունեցել շփվելու հայերի հետ, նույնիսկ սովորել է հայերեն և կարևոր տվյալներ գրանցել մեր ժողովրդի սովորությունների ու հավատքի մասին: «Կա նաև մի քաղաք,—գրում է նա,—ընկած մի լեռան վրա և կոչված Մակու. այստեղ հոռմեական դավանանքի մի եպիսկոպոսություն կա. նրա քահանաները պատկանում են դոմինիկյան միաբանությանը, բայց կրթում ու խոսում են միայն հայերեն լեզվով» (Hans Schiltbergers Reisebuch... Tübingen, 1885, էջ 58; շվեդ. նաև՝ Путешествия Ивана Шильтбергера по Европе, Азии и Африке, с 1394 по 1427 год., пер. с немецкого и снабдил примечаниями Ф. Брун, Одесса, 1866, էջ 49): Շիլտբերգերի ուսերեն թարգմանիչ Ֆ. Բրուներ հայերին վերաբերող էջերի թարգմանության ու ծանոթագրության ժամանակ դիմել է Գարբիել Այվազովսկու օգնությանը. վերջինս, անտեղյակ սկզբնաղբյուրների մեջ առկա տվյալներին, վճռականորեն հայտարարել է, որ Մակվում կաթոլիկ դավանանքի հայերի մասին տեղեկությունները սխալ են: Ֆ. Բրուներ, սակայն, հենվելով Կլավիխոյի վրա հավատ է ընծայել ճշմարտապատում Շիլտբերգերին:

103 Рюи Гонзалес де Клавихо, նշվ. աշխ., էջ 158—162:

104 Պատմություն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Քովմա վարդապետի Մեծորեցոյ, Փարիզ, 1860, էջ 18:

աշխարհակալ բռնավորի ձեռնարկած երրորդ մեծ արշավանքի սկզբներին՝ 1399 թվականին, երբ նրա զորքերը մտնելով Անդրկովկաս, մինչև հաջորդ տարվա ամռան ամիսները ավերում, գերում ու կողոպտում էին Վրաստանի և հյուսիսային Հայաստանի շրջանները:

Գառնալով Ատրպատականի տիրակալ կարգված Միրզա-Օմարի թիկնապահ, հայ իշխանազուն Սորղաթմիշը ստիպված է լինում առերես ընդունել մահամեղականություն: Այս մասին տեղեկություն է հաղորդել նաև Թ. Մեծոփեցին՝ ասելով, որ քրիստոնյաների նկատմամբ թշնամական դիրք գրաված թամուրյան այս ամիրզադան «յառաջին ամի իշխանութեան իւրոյ երեք (իմա՛ շորս—կ. Խ.) իշխան յազգէս մերմէ, որք իբրև զՃիս մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն»<sup>105</sup>: Այդ իշխաններն էին՝ Որոտանի տեր Բուրթել Օրբելյանը՝ իր Մմբատ եղբոր հետ միասին, Եղեգիսի տեր Գորգուն Օրբելյանը, Ազցք գյուղի տեր Ազիտանը և Մակվի տեր Սորղաթմիշը<sup>106</sup>:

Սրանց հաջողվում է քրիստոնյա ապրելու արտոնություն ստանալ թամուրյանների պարտությունից հետո՝ 1408 թվականին, երբ Հայաստանում հաստատվում են Ջելաիրյանները, դաշնակից ունենալով Կարա-կոյունլու թուրքմենական ցեղի առաջնորդներին: «Նւ մարդիկ,—հայանում է այդ մասին Թ. Մեծոփեցին,—որք յաւուրս շաղաթային ի հաւատոյ ուրացեալք էին, եկին ի հաւատս՝ Բուրթէլն Որոտնայ, Տարսայիճ՝ Եղեգեաց, Սուրղաթմիշ՝ Մակուայն, Ազիտան՝ Ազցից»<sup>107</sup>:

Թ. Մեծոփեցին Սորղաթմիշին ճանաչում է որպես «տէր Մակուայ»: Ե՛րբ է նուրադինը մահացել և ե՛րբ իշխանությունն անցել Սորղաթմիշին, ճշգրիտ սրոշելու հնար չունենք. կարելի է ենթադրել, որ այդ տեղի է ունեցել շուրջ 1408—1410 թթ. հետո. երբ Մեծ Հայքի կենտրոնական նահանգների վրա իր տիրապետությունը հաստատեց Կարա-Յուսուֆ Կարա-կոյունլուն, Մակվում իշխում էր արդեն Սորղաթմիշը: Կարելի է հավանական համարել և այն ենթադրությունը, որ Արտազի վերջին այս իշխանի գործունեության տարիներին՝ նրա հետ միասին, որպես նույն շրջանի հողևոր առաջնորդ, իշխում էր նրա կրտսեր եղբայրը՝ անանուն այն իշխանազուներ, որին նուրադինը ցանկանում էր ուղարկել պապի մոտ Արտազի եպիսկոպոս ձեռնադրելու համար<sup>108</sup>:

Կարա-Յուսուֆի մահվանից հետո իշխանության գլուխ անցած Իսրանդար Կարա-կոյունլուն 1422—1427 թթ. եռանդուն քայլերի է դիմում իր պետության սահմաններում գտնվող կիսանկախ ամիրությունների վերացման,

105 Թ. Մեծոփեցի, էջ 67—68:

106 Թ. Մեծոփեցին ասում է. «...և գալին Մակուայ հանին ի սուս և յերկարնակ աղթարմայութենէն» (այսինքն՝ կաթոլիկ դավանանքից հանելով՝ դարձրին մահամեղական): Այս իշխանի անունը՝ «Սորղաթմիշ Մակուայն»՝ Մեծոփեցին նշում է մի այլ տեղ, երբ խոսում է բանի ուրացված վերոհիշյալ իշխանների կրկին քրիստոնյա դառնալու մասին (տե՛ս ստորև):

107 Թ. Մեծոփեցի, էջ 73 (հմմտ. նաև Լ. Խաչիկյան, Մյունխաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, «Բանբեր Մատենագարանի», № 9, 1969, էջ 180—182):

108 Տեսանք, որ Արտազի նախկին եպիսկոպոսները՝ փոխմիտին կոչվում էին Տիրացու (Ա), Զարարիս (Ա), Տիրացու (Բ), Զարարիս (Բ): Ելնելով այս փաստից անանուն այս պարունակներն կարելի է կոչել Տիրացու Գ: Հենց այստեղ նշենք, որ Զարարիս Սործարեցուց կամ, թերևս, Տիրացու Բ-ից հետո Արտազի եպիսկոպոս դարձած լատինազավան այս եպիսկոպոսները, ինչպես պարզ երևում է Կլավիխոյի վերոհիշյալ ավյալներից, ձեռնադրվում էին Հոսի եկեղեցու վեհապետից, իրենց բոլոր կապերը խղած լինելով Հայոց եկեղեցուց:



այլազգի ֆեոդալներին պատկանող տիրույթների բռնագրավման ուղղությամբ: Նա վճռական մարտեր է մղում հատկապես Բաղեշում, Խլաթում, Ոստանում, Վանում, Խիզանում և այլ վայրերում ինքնավար իշխանություններ ստեղծած քուրդ ամիրների դեմ, որոնք հաճախ հանդես էին գալիս թշնամիների բանակում և դժկամությամբ էին ենթարկվում կենտրոնական իշխանության հրահանգներին: Այս պայքարի ընթացքում՝ 1426 թ. վերջ է տրվում նաև Արտազի իշխանությանը, որ գոյատևել էր շուրջ մեկուկես դար, կարևոր դեր կատարելով հայ բնաշխարհի քաղաքական ու մշակութային կյանքում:

Ապավինելով բերդի անառիկ նկատվող ամրություններին Մակվի հայ իշխանները, անտարակույս, ուժեղ դիմադրություն պետք է կազմակերպած լինեին. այդ մասին, սակայն, տեղեկություններ չեն պահպանվել:

Մակվի բերդի գրավման և Արտազի իշխանության վերացման մասին անդրանիկ վկայությունը գրանցել է Ս. Քաղեոս առաքյալի վանքի առաջնորդ Գրիգոր Մակվեցի Զալալբեգյանը, որ հետագայում հաստատվեց էջմիածնի վանքում և դարձավ Ամենայն Հայոց կաթողիկոս: Երուսաղեմի մատենադարանի № 1582 ձեռագրի 342-րդ էջի վրա նա գրել է.

«Ի յայսմ ամի թուականի՝  
Յութ հարիւր ու եաթանասնի,  
Հընկից թուից ևս աւելի (1426 թ.)՝  
Յարեաւ հողմն մրրկի,  
Սքանդար անուն յազգէ թուրքի  
էառ զղղեակն վանայ,  
Նաև զՄակուա և զնվանա»<sup>109</sup>:

Երկու տարի հետո, նույն ձեռագրի մեջ գրանցած ընդարձակ հիշատակարանում, Ս. Քաղեի առաջնորդ եպիսկոպոսը ավելի հանգամանորեն է անդրադարձել Մակվի անկման և Արտազի հայկական իշխանության բարձման դեպքերին, անսքող բացահայտելով իր թշնամական դիրքը Մակվի «աղթարմա» (այսինքն դավանափոխ եղած—կաթոլիկ դարձած) տերերի նկատմամբ, որոնք Ս. Քաղեի վանքից տարել էին իրենց միջոցներով կառուցել տված դուռը (հավանաբար՝ գեղեցիկ մի հորինվածք), մեծ զանգակը, ժամատան գերանները և շարժական այլ իրեր. լինելով Արտազի շրջանի իշխաններ, նրանք միաժամանակ թույլ չէին տալիս վերաշինել վանքը, և այլ դժվարություններ էին հարուցում ազգային եկեղեցու ավանդություններին հավատարիմ մնացած եկեղեցականների առջև և այլն: Նկատի ունենալով Գր. Մակվեցու այս հիշատակարանի կարևորությունը՝ ստորև մեջ ենք բերում գրեթե ամբողջությամբ.

«Արդ՝ եղև զրութիւն սորա ի թվականութեանս Հայոց Մեծաց ի ՊՂԷ (1428), ի մայրաքաղաքի որ այժմ Դավրէժ կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարին, զի անդ սկսայ ևս փոքր ինչ գրեցի, և ևկեալ առ ոտս սուրբ առաքելոյս Քաղէոսի աւարտեցի՝ ի սոյն ամի, որում էառ Ըսքանդար անուն ոմն բռնաւոր, որդի Ղարա-Ուսուֆին, զանառիկ զղեակն Մակուա, և գերկարնակ ուրացող ազգն ախթարմայից տարազիր և տարաշխարհիկ արար ի վերա երկրի, և կատարեցաւ բանն տեառն, զի զշարքն շարեաւ կոլոյս, և զայգին ետ այլոց մշակաց:

<sup>109</sup> Նուայր եպս. Պողաբյան, Մայր ցուցակ սրբոց Յակոբեանց, հատոր հինգերորդ, Երուսաղեմ, 1971, էջ 368:

Որ եւ ես նուաստից նուաստս, եւ տրուպս ամենայնի Գրիգոր անձն եղկելի՛ գծող սմին, ի վաղուց հետէ փափաքէի շինութեան առաքելական սուրբ աթոռոյս մերոյ, եւ ոչ տային թոյլ նախասացեալ ներհակքն բնակիչքն Մակվայ, որ եւ կրկին վայ եկն ի վերայ նոցայ եւ երարձ զիշխանութիւն նոցա ի յԱրտազ գաւառէ, եւ ետ շխ Բայազիթ ոմն այլազգոյ, եւ որ յառաջասացեալ շարքն բարձեալ էին ի դրանէ սուրբ առաքելոյս եւ տարեալ թասպութեամբ եւ նախանձու, սա դարձեալ ի տեղի իւր երեւ մեծաւ յօժարութեամբ եւ հնազանդութեան սիրով՝ զդուռն եկեղեցոյս, եւ զմեծ զանկակն, եւ զգերան ժամատանս, եւ այլ ամենայն կերպիւ անխաթ եւ ողորմութիւն, զոր ի մարդապաշտ անիծեալ յազգէն յայն ոչ տեսար ամենեւին, զոր սա արար. որ եւ ըստ հնազանդութեան իւրոյ զհատ[ուց]ումն ի մարմնաւորս առցէ՛ զառողջութիւն եւ զտաւաթ»<sup>110</sup>:

Հազիվ թե հնարավոր լինի շարախինդ այս տողերը հասարակական կարծիքի բնորոշ արձագանք համարել. Ս. Քաղեի վանքի առաջնորդը, ինչպես ասացինք, ուներ նաև անձնական հաշիվներ Մակվի «ախթարմա» տերերի հետ:

Արտազի հայկական իշխանության անկման տխուր փաստին անդրադարձել են նաև այլ ժամանակակիցներ, և հատկապես՝ աղթամարցի բազմաշխատ գրիչ Քումա Մինասենցը իր ընդարձակ հիշատակարաններից մեկում, որ իրավամբ ճանաչված է որպես ժամանակագրություն. «Իսկ ի յՊՀԶ (1427) թվին,—գրել է նա,— էառ նոյն Սքանդարն զանառիկ բերթն Մակուայ ի ձեռաց բրիստո[նէից]... և անմխիթար կրս[կիծ ե]հասս բոլոր ազգացս բրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռս բրիստոնէից, և այն ես առաւ ի մէնջ»<sup>111</sup>:

Խորը կսկիծով են շաղախված այս տողերը. հայրենասեր գործիչը ողորմ է կենտրոնական Հայաստանում իր գոյությունը պահպանած հայկական վերջին այս իշխանության բռնադրավումը օտար տիրակալների կողմից, հավատքի ու դավանանքի հարցերը մեկ կողմ նետելով:

Սորդաթմիշը Արտազի իշխանական գերզաստանի վերջին ներկայացուցիչն է, որ հիշատակված է սկզբնաղբյուրներում: Մակվի բերդի անկումը և կաթոլիկ հայ տերերի իշխանության բարձումը տեղի է ունեցել, հավանաբար, հենց Սորդաթմիշի օրոք: Մեծ հավանականությամբ սրա ազգականներն ու հաջորդները որպես գյուղատեր-կալվածատերեր, շարունակել են իրենց գոյությունը պատմա-աշխարհագրական այդ միջավայրում նաև հետագա մեկ-երկու դարերի ընթացքում: Այդ բնաշխարհի հայկական հուշարձանների, մանավանդ վիմական արձանագրությունների մանրակրկիտ ուսումնասիրությամբ կարող են ի հայտ բերվել Արտազի հայ ավատատերերի նոր անուններ, ինչպես և նոր տվյալներ արդեն հայտնի անձնավորությունների մասին: Այդ աշխատանքը թողնելով մեր հաջորդներին, ստորև փորձելու ենք տոհմաբանական մի ծառ կազմել՝ ներառնելով նրա մեջ Արտազի հողերը և աշխարհիկ տերերի ընտանիքին պատկանող ու մեզ հայտնի բոլոր անձանց անուններ:

110 Ն. Պողարյան, նշվ. աշխ., էջ 368: Հմմտ. նաև «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 353 (այս հրատարակությունը, որ կատարված է Մ. Տեր-Մովսիսյանի ընդօրինակությունից, ունի սխալ ընթերցումներ ու բացթողումներ):

111 «Ժն դարի հիշատակարաններ», մասն Ա, էջ 376:

բը. խորհում ենք, որ այն կարող է իր նպաստը բերել որպես շարադրված նյութի հակիրճ ամփոփում (տե՛ս հաջորդ՝ 166 էջը)<sup>112</sup>:

1426 թվականից հետո Մակվի նշանավոր բերդը դառնում է Կարա-կոյունլու թուրքմենների կարևորագույն ամրություններից մեկը: Ջհանշահ փաղիշահի (1437—1467) անհնազանդ որդիներից Հասան-Ալին երկար տարիներ արգելափակված էր անմատչելի այս բերդում: Իր հոր սպանությունից հետո, նա, որ «ի Մակու էր ի զրնդան», ազատ է արձակվում և պատրաստվում դիմագրավելու Աղ-կոյունլու Ռուզն-Հասանի հաղթականորեն առաջ շարժվող զորքերին, սակայն պարտություն է կրում և նրանով էլ վերջ է տրվում Կարա-կոյունլուների տիրապետությանը Իրանում և Անդրկովկասում: Արտագի շրջանում բնակություն հաստատած Կարա-կոյունլու թուրքմենները այսօր էլ ամենաբազմամարդ էթնիկական տարրն են Իրանի հյուսիս-արևմտյան սահմանազուխը դարձած այդ շրջանի: Նրանց միջավայրում շատ տարածված է Ալի-Իլահի աղանդը, որ ինքնատիպ մի խառնուրդ է մահմեդականության, բրիստոնեության և հեթանոսական հավատալիքների<sup>113</sup>:

Արտագի շրջանում իրենց գոյությունը երկար պահպանեցին նաև կաթոլիկ դավանանք բնդունած հայերը, կենտրոն ունենալով Մործորի սուրբ Աստվածածնի վանքը և Կեծուկ գյուղը, որի ճիշտ վայրը որոշելու համար նյութեր չունենք<sup>114</sup>: 1654 թվականին կազմված մի վիճակագրության մեջ տվյալ է

112 Տոհմածառը բաժանել ենք երկու մայր ճյուղերի, ձախակողմյանը հատկացնելով գերդաստանի հոգևոր տերերին, աջակողմյանը՝ աշխարհիկ իշխաններին: Ենթադրյալ առնչությունները՝ կետագծերով են ցույց տրված: Յուրաքանչյուր անվան կից դրված են տվյալ անձնավորության մասին հայտնի ծայրային րվակաճանրեր:

Հոգևոր տերերին հատկացված ճյուղին առընթեր՝ ձախ կողմից, տրված է ս. Քաղևոս առաքյալի թեմի հայազգայն եպիսկոպոսների ցանկը:


113 Ըստ որոշ տվյալների կարելի է ենթադրել, որ Կարա-կոյունլուների իշխող դինաստիայի անդամներից ոմանք եղել են կրոնական այս վարդապետության հետևորդներ: Իսբանդարի և Ջհանշահի գործունեության մեջ դիտված են դրվագներ, որ անբացատրելի պետք է մնային, եթե նրանց ուղղադավան մահմեդական համարները: Առավել շափով նույնը կարելի է ասել Հասան-Ալու մասին, որը նորոգել է Արճեշի հայկական եկեղեցիներից մեկի գմբեթը, Մակվում կառուցել է Ս. Վարդան անունով եկեղեցի և այլն:

Ալի-Իլահի աղանդի մասին առաջին գիտական խոսքն ասել է Ա. Քոխմախյանը, որ XIX դարի 80-ական թթ. սկզբներին եղել է Մակվի շրջանում և մի բանի օր ապրել աղանդավորների գյուղերում: Ըստ նրա պատմածի՝ տարին մի բանի անգամ նրանք կատարում են սրբազան կրակը լուցանելու արարողություն՝ երկսեռ բազմություն: Տարին մեկ անգամ, շելխի ձեռքով, մատաղի (ազապի) արարողություն է կատարվում. միսը բաժանում են բոլոր մեծահասակներին, սկոբները (առանց չարղելու)՝ թաղում են: Ուխտ են կատարում սոսի ծառերին, մոմ են վառում, խունկ ծխում, մատաղ անում իրենց ուխտատեղերում, որ «Ղարա-օղլան», այսինքն՝ Փուխ-մանուկ են կոչվում: Չնայած արտաբնական իրենց ձևացնում են մահմեդական, բայց ոչ ծոմ են պահում, ոչ նամազ անում: Գինի և օղի զործածում են՝ առանց բաշխելու: Երբ նրանց հարցնում են, թե Ալին ինչու են ասածո որդի դավանում, նրանք պատասխանում են. «Նրան, որին դուք Քրիստոս եք անվանում, միևնույն է որին մենք Ալի ենք ասում, զանազանությունը անվան մեջ է միայն. մեր և ձեր (հայերի) միջև եղած տարբերությունը՝ սոխի կճեպի շափ է» (Ա. Քոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտները, Բ մասն, Քիֆլիս, 1882, էջ 33—38):

Այս աղանդավորների մասին գրել են նաև Իրան այցելած եվրոպացի ու ռուս արևելագետներ (տե՛ս օրինակ, В. Минорский, Материалы для изучения персидской секты „Люди истины“ или Али-Илахи, часть I, М., 1911).

114 Մործորի վանքից շուրջ 2 կմ հյուսիս գտնվում է Բարոն գյուղը, որ այսպես է կոչվել, հավանաբար, պարոնապատական կալվածք լինելով: Գուցե այդտեղ են պատասպարվել Մակվի տերերը 1426 թվականից հետո, զրկվելով իրենց իշխանանիստ բերդից: Կարելի է ենթադրել նաև, որ Կեծուկը հենց այս Բարոն կոչված գյուղի հին անունն է:

ԱՐՏԱՁԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ՏԵՐԵՐԻ ԳԵՐԳԱՍՏԱՆԸ  
(ձյուզագրոսյան փորձ)



եղել այս գյուղում բնակվող 9 տուն (50 շունչ) կաթուղիկների մասին<sup>115</sup>։ Այստեղից էր Գրիգոր Մործորեցի կոչված վարդապետը, որ 1672 թ. գտնվում էր Վենետիկում, ուր զբաղված էր նախիջևանի կաթուղիկ վանքերի շահի դրված գրամագլխի տոկոսներն ստանալու գործով. 1675—1676 թթ. վերագարձած լինելով Մործորի վանք, նա ընդօրինակել է մի քարոզչիրք, կատարել է նաև թարգմանություններ՝ իտալերենից հայերեն, գրել տաղեր և կրոնական այլ գրվածքներ<sup>116</sup>։

Արտագի շրջանի հայ-կաթուղիկները, կտրված լինելով ազգային կենսատու ավանդություններից, նախիջևանի շրջանի իրենց զավանակիցների հետ միասն խզեցին իրենց կապերը մայր ժողովրդից և ընդունեցին մահմեդականություն։

Փրձենք պարզել այս իրողության ժամանակը։

1732 թ. շարադրած իր «Դրախտ ցանկալի» գրվածքի մեջ Ղազար Ջահկեցին կաթուղիկ հայերի կրոնափոխության մասին խոսում է՝ որպես տարիներ առաջ կատարված փաստ. «նմանապէս և յերկրին նախջուանայ ախթրմայից զեղորայքն,— գրում է նա,— բազումք դարձան ի կրօնս պարսից, որպէս Սալիթաղ և Քոնայ... և Կէծուկ՝ սորա ամենեքեան. իսկ Ապրակունիս և Շահրունիս և Խոշկաշէն և Ապարաներ, որ է եպիսկոպոսարան իւրեանց՝ սոցա մեծ մասն։ Բայց ի զեօղաբաղաբին Ճահկայ եղեալ ախթարմայքն ոչ դարձան ի կրօնս պարսից վասն ազգիս միարնակաց, որ զետեղեալք եմք ի միջի նոցա»<sup>117</sup>։ Ըստ այսմ կրոնափոխությունը տեղի է ունեցել 1732-ից տասնամյակներ առաջ։

1691 թ. Երնջակի շրջանի Նորաշեն գյուղում շարադրված մի հիշատակարանի մեջ ասվում է, որ արդեն 7 տարի է ինչ պարսից շահի զորավարներից մեկը, «իբրև զաւաղ ծովու» զորքի գլուխ անցած, ասպատակություններ է կատարում, ավերում և ավարում է Գանձակից սկսած՝ մինչև Գողթան գավառն ընկած շրջանները։ Հիշատակագիրը այդ դեպքերի հետ է առնչում նաև շատ «սուտ քրիստոնյաների» (իմա՝ կաթուղիկ հայերի) մահմեդականություն ընդունելը. «Բազում սուտ քրիստոնեայք զսուրբ և զճշմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին... և միարանեցան ընդ պարսից» — գրում է նա<sup>118</sup>։

Այս տեղեկությունների համադրումով հանգում ենք այն եզրակացության, որ Արտագի և նախիջևանի հայ կաթուղիկների զանգվածային հավատափոխությունը տեղի է ունեցել 1691 թվականից մի քանի տարի առաջ, եզրափակիչ արարք հանդիսանալով Մակվի և Քոնայի հոգևոր և աշխարհիկ տերերի միջավայրում XIV դարի առաջին տասնամյակներին սկիզբ առած հռոմեական եկեղեցու հետ միարանելու անհնոատես շարժման։

115 Հ. Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հատոր երկրորդ, Վենետիկ, 1907, էջ 386։

116 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942, էջ 628, «Յուցակ ձևագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հատոր Ա, էջ 1207, հատոր Բ, էջ 499։

117 Ղազար Ճահկեցի, Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 333—334։

118 Գ. Չաւպիանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 614—615։

## II

## ԱՐՏԱԶԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԾՈՐԾՈՐԻ ՎԱՆՔԸ

1. Ծործորի վանքի տեղագրությունը.—Արտազի հայկական իշխանության մշակութային կենտրոնը Ծործորի վանքն է եղել, որ հիմնադրվել է Զաքարիա եպիսկոպոսի կողմից և ծաղկել XIV դարի առաջին հիսնամյակում, հանդիսանալով գրական ու թարգմանչական գործունեության աշխույժ միջավայր:

Ծործորի ս. Աստվածածնի վանքի մասին հնագույն վկայությունը 1314 թվականից է, և կապվում է Հովհան Երզնկացի վարդապետի գրական-մանկավարժական գործունեության հետ. հաստատվելով նորաստեղծ այդ վանքում, նա Ծործորեցի մականունն է ընդունել, և իր «Յովաննէս Երզնկացի» անունը ճոխացրել՝ «որ այժմ կոչիմ Ծործորեցի» վերադիր բանաձևով: Վանական այս համալիրի ճշգրիտ վայրն առ այսօր չի որոշված և, նույնիսկ, այն կարծիքն է գերիշխում, որ Ծործորի վանքը՝ նույն Ս. Թաղեի վանքն է, սխալմամբ տարանջատված<sup>1</sup>:

Այս տեսակետն անհիմն է և անընդունելի: Ս. Թաղեի վանքում ընդօրինակված ձեռագրերի մեջ վանական այդ հաստատությունը հիշատակվում է այսպիսի բանաձևերով. «Ի գաւառիս կոչեցելումն Արտազ... ի հռչակաւոր ուխտս, ի յաթոսս և ի հանգիստս սուրբ առաքելոյս Թաղէոսի, ընդ հովանեաւ ամենազաւր աշոյն Յիսուսի, առ ոսս սուրբ և աստուածային արեամբ ներկեալ նշանիս՝ սուրբ գեղարդեանս և սուրբ կուսին Սանդխտոյ, և այլ բազմահաւաք սրբոցս»<sup>2</sup>, կամ. «Ի գաւառս որ կոչի Արտազ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Թաղէոսի և աստուածամուխ սուրբ գեղարդեանս»<sup>3</sup>: Ինչպես տեսնում ենք, Ս. Թաղեի վանքի սրբությունների շարքում աստվածամոր անունն իսկ չկա, մինչդեռ Ծործորի վանքի կապակցությամբ ամենուրեք հիշատակվում է միայն Աստվածածինը, ակնարկ անգամ չլինելով Թաղեոս առաքյալի և Սանդխտ կույսի մասունքների, աստվածամուխ գեղարդի և «բազ-

<sup>1</sup> Զ. Ոսկյանը, հատուկ անդրադառնալով այս խնդրին, գրում է. «Զ. Ինճիճյան և Զ. Էփրեկյան երկու զանազան վանքեր կը համարին (հմմտ. «Ատորագրութիւն», էջ 205, Ինաշխարհիկ բառարան, Բ, էջ 251), Զ. Զամչյան կը գրէ իր Պատմութեան ցանկին մեջ (էջ 155)՝ «Ծործորու վանք, այն է ուխտ սուրբ Աստուածածնի ի վիճակ Թաղէի յԱրտազ գաւառի» (հմմտ. և Պամ. 9, էջ 271): Զ. Զարբհանեւյան (Պամ. հայ դպրութեան, էջ 757) և Զ. Պոտուրյան (Բազմավէպ, 1906, էջ 257) կը համարին միեւնոյն վանքը, ինչպես նաև Զ. Ալիշան (Յուշիկը հայրենեաց, Բ, էջ 472)»: Զ. Ոսկյանը բաղվածքներ է անում մի շարք հիշատակարաններից, որոնց մեջ գրչության վայրը մատնանշվում է այսպես. «Ի վիճակ սուրբ առաքելոյն Թաղէոսի, ի վանս Ծործորու կոչեցեալ՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի»: Այս բանաձևը անկողմնակալ ընթերցողի համար երկու տարբեր վանքերի գոյությունը հաստատող մի փաստ է. Ոսկյանը, սակայն, հակառակ եզրակացության է հանգել. «Այս վկայություններու և տեղիքներու վրա հենելով,—գրում է նա,—հովանական կը թվի թե Ս. Թաղեի և Ծործորու վանքերը միեւնոյն վանքերն են... գուցե անոր եկեղեցիներն մին նախապես կոչված է Ս. Աստվածածին և մյուսը Ս. Թաղեոս և կամ նախապես թեմը Թաղեոսի վիճակ և վանքը Ս. Աստվածածին անվանված. և ապա քանի որ առաջնորդարանը մեկ հաս էր, կերված է՝ Ս. Թաղեոսի վանք՝ անունով» (նշվ. աշխտ., էջ 467—468):

<sup>2</sup> Մատենադարան, ձեռ. № 3778, էջ 464ա:

<sup>3</sup> «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 227:

մահաւար» այլ սրբությունների մասին: Ըստ այդմ աներկբայելի է երկու տարրեր վանքերի գոյությունը:

Ս. Թաղեի վանքը գտնվում է Մակու քաղաքից շուրջ 20 կմ հարավ, Ղարաբիլիսա գյուղի մոտակայքում: Վանքը կանգուն է առ այսօր, ունենալով XVII դարում և XIX դարի սկզբներին կառուցված հավելյալ շենքեր. ուխտագնացության սիրված վայր հանդիսանալով փրանահայության համար՝ մասնակի վերանորոգություններով ամրացվել և շենացվել է վերջին տարիներս<sup>4</sup>:

Մործորի վանքի տեղը որոշելու համար բացառիկ նշանակություն ունի Մակվի շրջանի մասին առկա տեղագրական գրվածքներից ամենակարևորը՝ Ա. Թոխմախյանի «Մասիս լեռների հարավային ստորոտները» աշխատությունը: Այստեղ գրանցված խիստ արժեքավոր տվյալների հիման վրա, օգտագործելով նաև տեղագրական ու քարտեզագրական այլ նյութեր, հնարավոր է լինում պարզել, որ Մործորի վանքը գտնվում է Ակի կոշվող ձորի բերանում, ուր միախառնվում են երեք գետակներ՝ սկիզբ տալով Զենգիմար կոշվող գետին, որ նույնանուն կիրճով հարավից հյուսիս հոսելով, Օղակ գյուղի մոտ թափվում է Մակու-շայ գետը<sup>5</sup>: Հայերի կողմից Զենգիմերա Ասպարածին (նաև Ասպարազին), իսկ տեղացի մահմեդականների կողմից Մայրամ-նանա կոչված այդ վանքը, որի ավերակների ուսումնասիրությունը տեղում ուշադրավ նյութեր կարող է պարզել հայ բանասիրությանը, անտարակույս նույն այն վանական հաստատությունն է, որ հայտնի է միջնադարյան հայկական աղբյուրներում Մործորի վանք անունով<sup>6</sup>:

Հանդիսանալով Արտագի հայկական իշխանության մշակութային կենտրոնը, Մործորի վանքը ծաղկում է ապրել XIV դարի առաջին հիսնամյակում, իր անվան հետ հավերժ շաղկապելով Զաքարիա եպիսկոպոսի և նրա մերձավոր խորհրդական ու կուսակից, նշանավոր գիտնական ու մանկավարժ Հովհաննես Մործորեցու անունները: Ստորև, առանձին հատվածներով անդրա-


<sup>4</sup> Documenti di Architettura Armena 4, S. Tadei vank, Milano, 1971.

<sup>5</sup> Ա. Թոխմախյանը գրում է. «Այս աշխարհի ամենամեծ գետը Մագու գետն է, որ ստորում է Մագուա դաշտը. նորա... երրորդ ամենամեծ ճյուղը բաժանվում է երեք գլխավոր սկիզբների. առաջինը՝ Սարիդայիր, սկսվում է Շավարշ[ան] լեռների հյուսիս-արևելյան կողմերից և ոտնոտում է Թայգարարա հովիտը, երկրորդը՝ Կուսանաց գետը, իջնում է Ավջուղի հարավային սահմաններից և քերելով Արշակավան քաղաքի ավերակները, Հարամյու ձորումը միանում է Սարիդայիրի հետ: Երրորդը բղխում է Սանատրուկ և Սահար լեռներից, անցնում է Թաղես առաքելոս վանքի տակից: Այս երեք ճյուղերը Ասպարածին վանքի ավերակների մոտ խառնվում են իրար և կազմում Զինգյումեր գետը, որ Ակի ժայռոտ և դժվարակոխ ձորից անցնելով հարավից դեպի հյուսիս՝ Օղակ գյուղի մոտ խառնվում է վերահիշյալ ճյուղերի հետ և շրջելով ընթացքը դեպի արևելք, մտնում է Մագուա ձորը» (Մասիս լեռների հարավային ստորոտները, մասն Ա. Թիֆլիս, 1882, էջ 34):

Այս շրջանի պատմական աշխարհագրության մասին արժեքավոր տվյալներ կան նաև Շ. Օ. Աղարեկյանի «К вопросу о месте аварайрского сражения» հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 91—114):

<sup>6</sup> Մործորի վանքի շատ անհաջող լուսանկարը աղագրված է Վ. Մինորսկու վերահիշյալ «Древности Маку» աշխատության մեջ (էջ 11). հրատարակում ենք դրա հիման վրա կատարված ճշգրիտ գծանկարը (տե՛ս նկ. 5): Վանքի մասին Մինորսկու մոտ կարգում ենք. «В Бебеджике у самого входа Зенгимар в глубокую и непроходимую щель, по которой река выбегает на макинскую долину (выше города Маку), находятся развалины часовни из тесаного камня, известной у мусульман под названием Марьям-пене, т. е. «мать Мария» (նույն տեղում, էջ 11—12):

դառնալու ենք նրանց գործունեությանը, հանդամանորեն ներկայացնելով հատկապես Հովհան Ծործորեցու գիտական աշխատանքի արդյունքները:



Նկ. 3. Քաղկես առաքյալի վանքի 1329 թ. կառուցված եկեղեցին (առջևի շենքը)

2. Զաքարիա Եպիսկոպոս Ծործորեցի՝ մեկենաս ու մատենագիր.— Ամեն մի բարձրաստիճան եկեղեցական պաշտոնյա, մանավանդ տասնամյակներ աթոռակալած և դադափարական թեժ պայքար մղած մեկը, իր կյանքի ընթացքում պարտավորված է լինում պաշտոնական բազմաթիվ ու բազմատեսակ գրություններ առաքել իր ժամանակի հոգևոր և աշխարհիկ տերերին, վերադաս և ստորադաս պաշտոնյաների ու այլ անձանց: Այդպիսի գրությունների հեղինակները, սովորաբար, տեղ շեն գրավում մատենագրության պատմության մեջ: Այլ է Առաքելոց թեմի նշանավոր առաջնորդ Զաքարիա Եպիսկոպոսի պարագան: Նրա նամակներից մեկը՝ հասցեագրված Հովհան Ծորեղին, որ տպագրված է գրեթե ամբողջությամբ<sup>7</sup>, հեղինակի ճարտար ընդդիմախոս լինելու մասին առատ վկայություններ է պարունակում. նա ոչ միայն պաշտպանում է իր որդեգրած գիրքը դավանաբանական պայքարում, այլև

7 Մ. Զամչյանց, Պատմություն Հայոց, Գ, էջ 306—308:



հակահարձակման անցնում, մեղադրելով Սյունյաց մետրոպոլիտին անհնազանդության և մեծամտության մեջ: Ժողովրդական բառ ու բանով և երգիծանքի հնարանքներով Ջաքարիան համեմտում է իր գրության տարբեր մասերը, ներկայանալով ընթերցողին որպես բնածին տաղանդով օժտված մի անձնավորություն: Ըստ տեղեկությունների նա շարադրել է և այլ նամակներ՝ ուղղված կաթողիկոսին ու այլ գործիչներին:

Մործորի վանքի հիմնադիրը, վերահիշյալ նամակներից բացի, հեղինակել է նաև այլ երկեր, որոնցից կարևորները կամ դեռևս չեն հայտնաբերվել, կամ էլ տեղ են գրավելու հայ մատենագրության ավաղելի կորուստների ցանկում:

Մ. Չամչյանն իսկ գիտեր, որ Ջաքարիան գրել է ինչ-որ պատմություն՝ «Ի վերայ կարգի վարդապետացն Հայոց» և այլ երկեր:

Հավանաբար նույն այս «Պատմությունն» ի նկատի ուներ լեհահայ գործիչ Վարդան Հունանյանը 1703 թվականից հետո եվրոպացիներին հղած իր մի նամակում, Նզր կաթողիկոսի հրավիրած ժողովի մասին խոսելիս: Նա մերժում է այն կարծիքը, թե Մաթուսաղան գիտնականագույնն է եղել այդ ժողովի 195 մասնակիցներից. նրանց մեջ եղել են Արտադի արքեպիսկոպոս Տիրատուրի, Հաղբատի արքեպիսկոպոս Վահանի նման նշանավոր մարդիկ: Իրպես աղբյուր այդ վկայությունների Հունանյանը ձեռագրի լուսանցքի վրա նշել է. «Ջաքարիայ Մործորեցի, Յաղագս ժողովոց, գլ. Թ.»<sup>8</sup>: Այս նույն աղբյուրի մասին հպանցիկ տեղեկություն ունի նաև լեհահայ մի այլ գործիչ՝ Ստեփանոս Ռոշկան<sup>9</sup>:

Ջաքարիա Մործորեցու պատմական ինչ-որ գրվածքի հեղինակ լինելու մասին լուր է ունեցել նաև Հովհաննես Շահխաթունյանցը. 1847 թ. ապրիլի 25-ին ներսես Աշտարակեցուն հղած իր մի գրության մեջ նա խնդրում է Աստրախան ուղարկվող Մատթևոս եպիսկոպոսին հանձնարարել նաև հետևյալը. «Ի գնալ նորա անդ հասու լիցի գրատան եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի անդ յԱստրախան, և զամենայն առեալ ի տումար ըստ ամբողջութեան մատենիցն և ըստ հատուածոց հեղինակութեանց պարունակելոց ի նոսին, յորս, որպէս լսիմս, գտանի և պատմութիւն ի Ջաքարիայէ Մործորեցւոյ, որ անգիտ է ամենևին ցարդ»<sup>10</sup>:

Ջաքարիայի պատմագրական գործունեության մասին այս տվյալները տարբերվում են միմյանցից. ըստ Չամչյանի նրա գրվածքը եղել է «Ի վերայ կարգի վարդապետացն Հայոց», ըստ Հունանյանի նա գրել է. «Յաղագս ժողովոց» խորագրով մի աշխատություն, իսկ Շահխաթունյանցի տվյալներով՝ ուղղակի «Պատմություն»: Հակված ենք կարծելու, որ տարբեր անվանումներով հիշատակվածը՝ միևնույն պատմագրական երկն է, որի մեջ, ամենայն հավանականությամբ, մանրամասն տեղեկություններ են եղել հատկապես Հայոց եկեղեցական ժողովների մասին: Այդ գրվածքն առ այսօր չի հայտնաբերված, բայց որոնումները պետք է շարունակել. բացառված չէ, որ աշխարհով մեկ սփռված հայերեն ձեռագրերից որևէ մեկում, զուցե առանց հեղինա-

8 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 115, 2. Տաշչյան, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 114 (մեղ հետաքրքրող վկայությունը գրանցված է Վիեննայի մատենադարանի № 12 ձեռագրի 52ա էջի վրա):

9 Լ. Տաշչյան, նույն տեղում, էջ 681.

10 Ա. Սեդրակյան, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 174—175.

կի անվան հիշատակության, թաքնված է Չաքարիա Մործորեցու գրչի այդ արգասիքը՝ նոր տվյալներ պարունակելով հայոց եկեղեցու պատմությանը և Արտազի հայկական իշխանությանն առնչվող անցուդարձերի մասին:

Չաքարիայի պատմագրական աշխատանքների հետ աղերսվում են նաև Արտազի և Կապաղովկիայի աթոռների առաքելական ծագման ու հաջորդականության մասին հյուսված ցանկերը: Արտազի թեմի առաքելական սկզբնավորության մասին վաղ միջնադարում կյանքի կոչված հնարույր ավանդությունների վերարժարժումն ու գունազարդումը նոր շուք էր տալու և հեղինակություն բերելու Մակվի հայ տերերի գերդաստանին: Գրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Ս. Թադեի վանքի վերաշինումից անմիջապես հետո Չաքարիա պարոնտերը շրջանառության մեջ է դնում «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» կոչված մի գրություն, որի անսրող նպատակն է անընդմեջ հաջորդականության կարծեցյալ շղթայով հարաբերության մեջ մտնել Գրիգոր Լուսավորչի և Քրիստոսի աշակերտ Թադեոս առաքյալի հետ:

Չաքարիա եպիսկոպոսը իր այս հորինվածքին պատմական ստույգ գրության տեսք տալու մտահոգությամբ հայտնում է, որ ձեռքի տակ ունեցել է Հայոց ՂԸ (այսինքն՝ մեր թվարկության 650) թվականին Մաղարթա վանքի սպասավոր ոմն Հովհաննեսի գրած մի հիշատակարան: Ուշադիր քննությունը բերում է այն համոզման, որ ցանկի մեջ թվարկված անուններն ըստ մեծի մասին հորինված են նոր ժամանակներում՝ Չաքարիայի գործակցությամբ: Ուշագրավ են այն տողերը, որ Չաքարիայի հավաստումով պատկանում են, իբր, Մաղարթա վանքի վերոհիշյալ վանականին. «Բայց ի սոցանէ շկարացաք գտանել, — ասէ հաւարդն յիշատակագրութեանս, — թէ ոչք և զո ոք կարգեալ եղև տեսուչ այսմ վիճակիս յաղագս կործանման և աւերման քաղաքիս և վանացս ի ձեռս բռնաւորաց և շարժից»:

Դժվար չէ այս տողերը շաղկապել XIII դարի վերջերին մոնղոլ զորավար Նովրուզի կատարած խժոժությունների և 1319 թ. մեծ երկրաշարժի թարմ հիշատակների հետ, քննարկվող գրվածքի հորինման պատիվը շնորհելով Չաքարիա Մործորեցուն: Ըստ այդմ նրան պետք է վերադրել նաև «Յաջորդութիւն սուրբ առաքելոյն Թադէոսի ի Կեսարիայ Կապաղովկացոց վիճակի» կոչված ցանկի վերախմբագրման աշխատանքը: Այս ցանկը ևս, նախորդի նման, կյանքի է կոչվել Թադեոս առաքյալի վիճակի հեղինակությունը ժամանակակիցների աչքում բարձրացնելու նպատակով: Կեսարիայի եպիսկոպոսական հինավուրց աթոռը վաղուց ի վեր գոյություն չունի: Արտազի հայ եպիսկոպոսը, իրեն հռչակելով Թադեոս առաքյալի հաջորդ, այս ցանկի թելադրությամբ փորձում էր սփռել նաև Կապաղովկիայի հին եկեղեցու վեհապետների՝ Ղևոնդի, Բարսեղ Կեսարացու և մյուս նշանավոր գործիչների փառավոր անուններով<sup>11</sup>:

11 Այս ցանկերն առաջին անգամ հրատարակվել են «Արարատ» ամսագրի մեջ (1868 թ., էջ 102—104), ապա արտատպվել բազմիցս (տե՛ս օրինակ, «Հանդէս ամսօրեայ», 1941, էջ 44, Սամուել Անեցու ժամանակագրության հավելված, էջ 279—281 և այլն): Վ. Հացունին իր «Կարևոր խնդիրներ հայ եկեղեցվո պատմութենէն» մեր կողմից վկայակոչված աշխատության մեջ, վերլուծելով վերոհիշյալ տվյալները, հանգել է ընդունելի այն եզրակացության, որ «Մործորեցվույն ցուցակին թի հին գրուցատրութենէ» և «գործակցութեամբ հոգւոյն» հավաքված անվանք՝ կրնային նպաստել յուր աթոռին փառաց, բայց ոչ և հայ եկեղեցվո պատմության» (էջ 102):

Զաքարիա եպիսկոպոսն ունեցել է նաև այլ գրվածքներ, մասնավորապես ինչ-որ կանոնադրություն, որի մասին ակնարկներ կան Հովհան Թրբելի մեզ ծանոթ մեղադրական թղթի մեջ: Սյունյաց մետրոպոլիտն այստեղ նախատում է Արտագի եպիսկոպոսին Հայոց եկեղեցու ավանդություններն արհամարհելու, կաթոլիկ եկեղեցուն դավանաբանական զիջումներ կատարելու մեջ՝ վկայակոչելով վերջինիս գրած կանոնները: Պարզվում է նաև, որ Մործորեցու այդ կանոններն ըստ էության եղել են եկեղեցական արարողությունների ու ծեսերի փոփոխման մասին հրահանգներ, որոնք ընդառաջել են կաթոլիկ եկեղեցու պահանջներին<sup>12</sup>:

Մեծ է Զաքարիա եպիսկոպոսի դերը որպես մեկենաս. նրա նախաձեռնությամբ և օժանդակությամբ գրվել ու թարգմանվել են աստվածաբանական երկեր և մեկնություններ (դրանց մասին խոսք կլինի ստորև), ընդօրինակվել են արժեքավոր ձեռագրեր և այլն<sup>13</sup>:

3. Հովհաննես Երզնկացի—Մործորեցի.—Միջնադարյան հայ մատենագիրները քաջ տեղյակ էին, որ XIII—XIV դարերում ապրել ու ստեղծագործել են երզնկացի երկու Հովհաննեսներ՝ Պլուզը և Մործորեցին: Հայ մեկնիչների մի ցանկի մեջ, օրինակ, գրված է. «Զքերականն բազումք (մեկնեցին), բայց յետոյ Յոհաննէս վարդապետն Երզնկացին, յետ նորա՝ Սասիին, յետ նորա՝ Յոհաննէս Մործորեցին»<sup>14</sup>, իսկ Ղ. Զահեցին ոչ միայն տարանջատում է նույնանուն այդ երզնկացիներին, այլև համառոտակի ներկայացնում դրանցից յուրաքանչյուրի գրական վաստակը, վերջինիս մասին գրելով. «Յոհաննէս Մործորեցին, այր քաջուսումն և մտապերճ: Սա մեկնեաց զաւետարանն Մատթէոսի պարզ և զհւրահաս ոճով, և մեկնեաց զքերականութիւնն»<sup>15</sup>:

Մ. Զամչյանն էր հավանաբար առաջինը, որ հաներազմի միաձուլելով նույնանուն այդ գործիչներին, կյանքի կոչեց անգո մի մատենագիր՝ Հովհաննես

Յավայի է, սակայն, որ աղբյուրների գիտական քննություն կատարելու անհրաժեշտության մասին զեղեցիկ դատողություններ կատարող բանասերը դառնում է ծայրահեղ դյուրահավատ, երբ խոսքը վերաբերում է կաթոլիկ եկեղեցու առաքելական սկզբնավորության մասին գոյություն ունեցող ավանդություններին:

<sup>12</sup> Մեջ ենք բերում Հովհան Թրբելի նամակի համապատասխան հատվածը. «Զգիտացաք թէ ինչ պատճառաւ դու ի մէջ բաժանեցար. թէ զհոգևոր տիրոջ հրամանքն պատճառես. նա ի բեզնէ չուր միայն խնդրեց ի խորհուրդն առնուլ և ի ղեկտեմքերի Ին. (25) զծնունդն առնել. դու զպահոց լուծումն յ՞ւտ ուսար, և զառաքելական կանոնաց շրտմն կամ հեթանոսաբար զանխրտիր շաղղակերութիւնդ... և ի հաւատոյն ուրացութիւն յո՞ր Քրիստոսէ ուսար, կամ ղեկեղեցիս հայաստանեայց ուրանայ և յո՞ւով նախատանօք նախատել, կամ զտարոյն բոլոր պահքն ի Ս. (50) օր բերելալ, որպէս քա զԵւայ կանոնս ևր, կամ զամուսնութիւն աշխարհի բահանայի՝ բանալ, և զոչ արժանիսն քահանայազորութեան ի գործ սուրբ խորհրդոյն ածել, դու զքո խորհրդովդ զբեզ ի միջոյ բո եղբարցս և ի բո դիխոյն և յամենայն եկեղեցոյ որոշեցեր՝ ուրիշ առանձին կանոնադրութեամբք» («Ճոթարդ», 1860, էջ 55, ձեռ. № 8245, էջ 183):

<sup>13</sup> Ներսես Տարոնացի վարդապետը 1332 թ. գրած իր հիշատակարանում հայտնում է, որ իր պատվերով ընդօրինակվող Աստվածաշնչի գրության համար ծախսվել է 1350 դրամ, որից 500-ը իրեն անփոխադարձ տվել է Զաքարիա եպիսկոպոսը. «ևս ես,—գրում է նա,—յայնժամ յարեայ անտի և զնացի ի սուրբ առաքելայն Քաղէոս՝ առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս, և նա Լա ինձ Ծ. (500) դր[ամ]» («ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 246):

<sup>14</sup> Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր Ա, Երևան, 1959, էջ LXI:

<sup>15</sup> «Քիրք աստուածաբանական, որ կոչի Գրախո ցանկայի, շարագրելալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ճահեցոյ», Կ. Պոլիս, 1775, էջ 638 (հմմտ. Հ. Անասյան, Եղվաշխ., էջ XLVI):

Երզնկացի—Պլուզ—Մործորեցի և առհարկ մակդիրներով, որ ապրել է, իբր, շուրջ մեկ դար, կյանքի վերջին տասնամյակներում հրաժարվել գաղափարական իր սկզբունքներից ու կնքել իր մահկանացուն որպես կաթոլիկ եկեղեցու սպասավոր<sup>16</sup>։ Այսպես են պատկերացրել Հովհաննես Երզնկացու կյանքն ու գործունեությունը և Գ. Զարպհանալյանը և Ղ. Ալիշանը և նրանց հետևող բուրբ բանասերները՝ մինչև վերջին տարիներս, երբ միացյալ շանքերով լուծվեց այդ թյուրիմացությունը՝ Պլուզ և Մործորեցի կոչված Հովհաննեսների կրկին տարանջատումով<sup>17</sup>։

Հովհաննես Պլուզ Երզնկացու մասին գրվել են արդեն լուրջ ուսումնասիրություններ, որոնց մեջ տրվել է բազմապատակ այդ մատենագրի երկերի գրեթե ամբողջական ցանկը, հրատարակվել են նրա շափածո ստեղծագործությունների մեծ մասը և այլ գործեր։

Անհամեմատ քիչ աշխատանք է կատարված Մործորեցի Հովհաննեսի կենսագրության և գիտա-մանկավարժական գործունեության կարևոր գրվազների բացահայտման ուղղությամբ։ Ա. Սրապյանը, ուսումնասիրելով XIV դարի հիշատակարանների հրատարակված ժողովածուն, նշել է, որ նրա կենսագրության հնագույն տվյալը 1302 թվականից է և որ նա Մործորեցի մականունն է բնդունել 1314-ից հետո<sup>18</sup>։ Հ. Քյուրդյանը վենետիկի Մխիթարյանց մատենադարանի № 2019 ձեռագրում գտել է «Խոստովանութիւն գաղտնեաց», «Խրատք ոգեշահք վասն զղջման և արտասուաց» և այլ խորագրերով մի քանի շափածո գործեր, որոնց հեղինակն է ոմն Հովհաննես Երզնկացի՝ «որոյ գիւղն Պարկանց կոչի»։ Նույն ձեռագրի մեջ գտնվում են նաև նույն Հովհաննեսի խնդրանքով Գևորգ վարդապետի գրած ինչ-որ մեկնություններ։ Այս Գևորգին նույնացնելով նշանավոր Գևորգ Սկևռացու հետ (մհ. 1301 թ.), Քյուրդյանը ենթադրել է, որ Պարկանցի Հովհաննեսն էլ ոչ այլ ոք է, քան ինքը՝ Մործորեցի Հովհաննեսը, որ մինչև Արտազում հաստատվելը, իր ծննդավայր գյուղի անունով կոչվել է Պարկանցի<sup>19</sup>։

Հարկ է նշել, որ փաստական ոչ մի հիմք չունենք ի հաստատություն այս նույնացումների։ Մործորեցին մինչև Արտազի համանուն վանք տեղափոխվելը գրել է մի շարք հիշատակարաններ, որոնցից և ոչ մեկում իրեն Պարկանցի չի կոչել, իսկ մի հիշատակարանում, ինչպես կտեսնենք ստորև, ասված է ուղղակի, որ նա «էր ի հոշակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ»։ Անբնդունելի է նաև Գևորգ վարդապետին Սկևռացու հետ նույնացնելը, որը Երզնկայի կողմերում երբեք չի գործել<sup>20</sup>։ Կարծում ենք, ուստի, որ վերոհիշյալ ձեռագրի մեջ հիշատակված վարդապետը՝ նշանավոր Գևորգ Երզնկացին է (մհ. 1416 թ.)՝ Հովհան Որոտնեցու աշակերտն ու Գր. Տաթևացու դասընկերը, որ XIV դարի վեր-

16 Մ. Զամչյանց, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, էջ 271—274։

17 Այս հարցի շուրջ ժամանակագրական կարգով արտահայտվել են Լ. Խաչիկյանը, Հ. Քյուրդյանը, Ա. Սրապյանը և է. Բաղդասարյանը։ Մանրամասնությունները տեսնել է. Բաղդասարյանի «Նոր տվյալներ Հովհաննես Երզնկացու (Պլուզի) մասին» հոդվածի մեջ («Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 2, էջ 131—140)։

18 Արմենուհի Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 31—32։

19 Հ. Քյուրդյան, Հովհաննես Երզնկացի-Մործորեցի (Նորագյուտ նյութեր Ս. Ղազարու մեկ նոր ձեռագրին), «Բազմալէպ», 1954, էջ 242—245։

20 Է. Բաղդասարյան, Գևորգ Սկևռացու «Վարքը» («Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 399—434)։

չերին Երզնկայի մոտ գտնվող Կապոսի վանքում դպրոց էր հիմնադրել և իր շուրջ համախմբել ուսման կարոտ մի տասնյակ աշակերտների: Հավանաբար սրանցից մեկն էր սխալմամբ Հովհաննես Մործորեցու հետ նույնացված Հովհաննես Պարկանցին<sup>21</sup>:

Հովհաննես Երզնկացին, իր իսկ վկայությամբ, եղել է «երջանիկ վարժապետ» Եսայի Նշեցու աշակերտը: Գլաձորի համալսարանում սովորելու տարիներին ընդօրինակել է մի քանի ձեռագիր, բոլորն էր իմաստասիրական ուղագրավ նյութերի ժողովածուներ: 1298 թվականին «ի գաւառիս Վայոց ձոր, ի վանս Գլաձոր» արտագրել է Մ. Խորենացու խմբագրած ճարտասանական գիտելիքների ձեռնարկը՝ «Պիտոյից գիրքը», որի հիշատակարանում իրեն կոչում է «յոզնամեղ ծառայ... աշակերտ բանի»<sup>22</sup>: Չորս տարի հետո՝ 1302 թ., նույն վայրում («ի սուրբ և ի գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ է երկրորդ Ա.թէնս») Հովհաննեսն ընդօրինակել է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» աշխատության մի մասը. հաջորդ մասի գրիչ Մկրտիչը իր գործընկերոջը ներկայացնում է ոչ որպես «բանի աշակերտ», այլ «սպասաւոր... բանի մերձ ի կատարելութիւն», այսինքն վարդապետական աստիճան ստանալու նախադրանք կանգնած մի անձնավորություն<sup>23</sup>: Մեկ տարի անց Հովհաննես Երզնկացին հիշատակվում է արդեն որպես վարդապետ. նրա աշակերտներից մեկը, որի անունը ցավոք անհայտ է մնում, նրա պատվերով ընդօրինակում է քերականագիտական, բնագիտական և իմաստասիրական արժեքավոր հոգվածների մի ժողովածու, որի հիշատակարանում գրվատում է իր ուսուցչին, ընդգրծելով գրչության արվեստի մեջ նրա քաջավարժ լինելը<sup>24</sup>: Հաջորդ տեղեկությունը մեր գործի մասին ստանում ենք 1306 թ. Գլաձորի վանքում իր իսկ ընդօրինակած ձեռագրի շափածո և արձակ հիշատակարաններից: Չեռագիրը պարունակում է ուղագրավ և հազվագյուտ բնագրեր՝ Ստեփանոս Սյունեցու և Նանա վարդապետի գրած «Յովհաննու աւետարանի մեկնութիւն»-ները, Անդրեաս Կապադովկացու «Մեկնութիւն յայտնութեանն Յովհաննու» աշխատությունը և այլ հետաքրքրական բնագրեր: «Դարձեալ,— գրում է Հովհաննես վարդապետն իր աշխատանքի մասին,— յիշեսցիք ի Քրիստոս և զիս՝ զտարժանեալ մեղսաներկ ոգիս՝ զնուաստ Յովհաննէս] Եզրնկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափաք սորին, գրեցի իմով իսկ տխնզժ մատամբս ի մխիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ, և ի վարժ կրթութեան երկա-

21 Նորայր եպս. Պողարյանը վերջերս հրատարակած իր «Հայ գրողներ» արձեռագրոր աշխատության մեջ (Երուսաղեմ, 1971, էջ 406) տալիս է այդ աշակերտների ցանկը՝ «Աբրահամ արեղա, Արիստակես Սերաստացի, Ավետիք կրոնավոր, Հակոբ վրդ. Ղրիմեցի, և Հովհաննես արեղա Երզնկացի»: Այս Հովհաննեսին նույնացնելով Պարկանցի Հովհաննեսի հետ, լրացնում ենք Նորայր եպիսկոպոսի ցանկը Խաչատուր կրոնավորի անունով. Սրանք բոլորն էլ վարժ ու ժիր գրիչներ են եղել:

22 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 100 (այս ձեռագիրը Ղ. Փիրղամելյանի հավաքած հիշատակարանների ժողովածուն է):

23 «Բայց առաջին սկիզբն գրութեան սորա,— գրում է նա,— եղև... ձեռամբ ուրումն սրբազան քահանայի՝ առն իմաստնոյ և ճարտարի, որ էր ամենայն աստուածաշունչ կտակարանաւորն վարժեալ՝ սպասաւոր զոլով բանի մերձ ի կատարելութիւն՝ Յովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր քաղաքին Եզրնկայ կոչեցեալ» (Մատենադարան, ձեռ. № 6558, էջ 637բ, հմմտ. «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 5—6):

24 Մատենադարան, ձեռ. № 598, էջ 213բ (հմմտ. ԺՂ դարի հիշատակարաններ, էջ 17—18):

սէր անձին բանասիրի, և ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ ամենայն նախնեաց»<sup>25</sup>:

Հավանաբար հենց այս տարիներին «ի դառն գաղափարաց ստուգեալ», այսինքն վերծանելով դժվարընթեռնելի ձեռագրեր ու սրբագրելով աղավաղված տեղերը, Հովհաննէս Երզնկացին ընդօրինակել է ևս մի ձեռագիր, որը պարունակում է Վահրամ Բարունու փիլիսոփայական երկերը, Գր. Նարեկացու «Ողբերգութեան մատեանի», Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց գրքի», Գրիգոր Նյուսացու և Աստվածաբանի աշխատությունների լուծմունքներ և այլ հետաքրքրական նյութեր<sup>26</sup>:

Սրանք են Հովհաննէս Երզնկացու նախածործորյան շրջանի մասին առկա տեղեկությունները: Դրանց համադրումով պարզվում է, որ նա, ծնվել է շուրջ 1270-ական թթ. Երզնկա քաղաքում, XIII դարի վերջին տարիներին սովորել է Գլաձորում. վարդապետական դավազան է ստացել 1302—1303 թթ. ու դարձել նշանավոր ուսումնական այդ հաստատության ուսուցիչ, Եսայի քարունապետի օգնականներից մեկը, այդ պաշտոնում մնալով, հավանաբար, մինչև Մործորի վանք տեղափոխվելը:

Գլաձորում սովորելու և աշխատելու տարիներին Հովհաննէսն ընդօրինակել է մի շարք ձեռագրեր. դրանցից առնվազն չորսը հասել են մեզ ու վկայում են գրչի լայն հետաքրքրությունների մասին: Նա, մասնավորապես, ուշադրություն է դարձնում գիտական և իմաստասիրական ծանրակշիռ աշխատությունների վրա, որոնց վերծանման և ընդօրինակման համար ջանքեր չի խնայում:

Որոշակի տվյալներ չունենք պարզելու, թե երբ և ինչ պարագաներում է Հովհաննէս Երզնկացին Սյունիքից Աբտաղ փոխադրվել և հաստատվել Մործորի վանքում, բայց գիտենք, որ այդ տեղի է ունեցել 1314 թվականից առաջ: Հենց այդ թվականին «Ճանճին խուղ» կոչված ինչ-որ վայրում Խաչիկ անունով մի գրիչ ընդօրինակել է իմաստասիրական ու մեկնողական նյութերի հարուստ մի ժողովածու, որի մեջ տեղ է հատկացրել նաև մեր Հովհաննէսի երեք քարոզներին, դրանցից առաջինի խորագրում՝ Երզնկացի կոչմանն առնթեր՝ գնելով նաև «որ և Մործորեցի» որոշիչը<sup>27</sup>:

Մործորյան շրջանի առաջին տարիները գիտական վաստակի առումով Հովհաննէսի համար բեղմնավոր շեն եղել: Մեր վարդապետի կյանքում, ինչպես կտեսնենք ստորև, դարձակետային նշանակություն է ունեցել 1316 թվա-

25 Մատենադարան, ձեռ. № 2520, էջ 344ա, շափածո հիշատակարանը գտնվում է ձեռագրի 143բ էջում (հմմտ. «Ժ դարի հիշատակարաններ», էջ 43—44):

26 Մատենադարան, ձեռ. № 59: Տե՛ս «Ժ դարի հիշատակարաններ», էջ 649:

27 Հովհաննէս Երզնկացու կյանքի ծործորյան շրջանի մասին լրացուցիչ տվյալներ ձեռք բերելու ակնկալությամբ ուշադիր ընկնցինք Մաշտոցի անվան մատենադարանի №№ 626, 627 և 4234 ձեռագրերը և պարզեցինք, որ դրանք ստեղծվել են XIV դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում, նույն Խաչիկ գրչի ջանքերով: Այդ ձեռագրերից միայն № 627-ի մեջ է նշված «Ճանճին խուղ» այլուստ անհայտ տեղանունը, որ թվում է, թե ինչ-որ բնակավայրի անուն չէ, այլ հայտնի մի վանքի շրջափակում գտնվող մի նեղ խցի (խուղ՝ նշանակում է հյուղ, խուց, խցիկ) դավեշտական հորշորջում: № 626 ձեռագրի հիշատակագրությունների մեջ Խաչիկ գրիչը տալիս է իր (էջ 94ա) և ձեռագրի պատվիրատու Վարդանի անունը, կոչելով նրան «սրբազան և երջանիկ, սուրբ և ընտրեալ եպիսկոպոս տէր Վարդան» (էջ 28ա): Նույնացնելով այս Վարդանին 1315 թ. Ս. Քաղեի վանքում հիշվող Վարդանի հետ, որ պատվիրատուն է Մատենադարանի № 3778 ձեռագրի (սրա խնդրանքով Հովհաննէս Մործորեցին 1316 թ. շարագրել իր

կանք. նրա շուրջ համախմբվել են, ինչպես ինքն է ասում, «բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան», և նա, իրագործելով ուսումնական իր ծրագիրը և գոհացում տալով ուսումնասեր աշակերտների հարցասիրությանը, շարագրել է իր աշխատությունները՝ գիտական մեկնություններ, քարոզներ և այլ գործեր:

Ստորև, որոշ հերթականությամբ, ներկայացնում ենք Հովհաննես Մործորեցու մեզ հայտնի բոլոր աշխատությունները, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով յուրաքանչյուրի բովանդակության, գրության հանգամանքների, գիտական ու ճանաչողական նշանակության և հարակից հարցերի մասին:

### ա. Համառօտ տեսութիւն ֆերականի

Ամբողջական խորագիրն է «Նուաստ վարդապետի Յոհանիսի Եզրնկայեցոյ, որ և Մործորեցի, արարեալ համառօտ տեսութիւն քերականի»<sup>28</sup>:

Գրության հանգամանքների մասին ակնարկներ կան աշխատության սկզբում զետեղված փոքրիկ հիշատակագրության մեջ<sup>29</sup> և ընծայական-վերջաբանում. այստեղ, հավանաբար դիմելով պատվիրատու Վարդանին, հեղինակը գրում է. «Յորմէ տեղեկացեալ քո ներհուն հմտութեամբ ի սակաւ աշխատութենէս բարձօղղ արուեստիս՝ մի անճաշակ և զմերս թողցես փափագ, այլ յիշմամբ բարոյն ի տէր և զմեզ մասնաւորեցես յագեցումն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է օրհնեալ ընդ հօր և արարչակից հոգոյն իւրոյ, որպէս էրն ի սկզբանէ և այժմ և յանբաւ յաւիտեանս»<sup>30</sup>:

Քերականության այդ դասագրքի հիմքում դրված է Հովհաննես Պլուզի համահավաք «Մեկնութիւն քերականի»-ն, որ աղբյուր է հանդիսացել նաև Եսայի Նչեցու, Առաքել Սյունեցու և այլ քերականագետների համար: Նյութի ընդգրկման առումով հետևելով իր մեծանուն հայրենակցին, Մործորեցի դարձած վարդապետը տարբերվում է հունարան հայերենով շարագրվող նախկին քերականագետներից իր պարզ լեզվով ու հստակ ձևակերպումներով. «Եթե նույնիսկ,— գրում է այդ կապակցությամբ Լ. Խաչերյանը,— առանձին նախադասությունների բառային կազմը նրա (իմա՛ Մործորեցու) մոտ հիմնականում նույնն է լինում Երզնկացու (իմա՛ Պլուզի) համեմատությամբ, ասպաղրանց շարադասությունը ամբողջությամբ փոփոխության է ենթարկվում համապատասխանեցվելով ժամանակի լեզվամտածողությանը»<sup>31</sup>:

«Մեկնութիւն Դանիէլի» աշխատությունը), կարծում ենք, որ Խաչիկ գրիչն աշխատել է հենց Ս. Քաղեի վանքում: Այսպիսով «Ճանճին խոլ», կոչվածը մի նոր գրչավայրի անուն չէ, այլ Արտագի նշանավոր այդ վանքի խցերից մեկի ծաղրական հորոքումը: Մործորի վանքում հաստատված Հովհաննես Երզնկացին, բնականաբար սերտ կապերի մեջ է եղել մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ս. Քաղեի վանքում աշխատող գրչի մշակների հետ, արդեն 1314 թ. ճանաչված լինելով նրանց կողմից որպէս «տիեզերայոյս վարդապետ» և ստացած լինելով Մործորեցի մականունը:

28 Օգտագործել ենք Մատենադարանի № 7037 (էջ 12ա—75ա) ձեռագիրը: Քերականությունն սկսվում է այսպես. «Միշտ բաղձանք բանին բնատրեալ է ի յոգիս բանականաց արարչական գրութեամբ, յորմէ զարթուցեալ յօժարիմք ի բնութիւն սորին, որոյ գունն և մուտ է քերականութեանս արհեստս...»:

29 Հիշատակագրությունն այս է. «...և զնուաստ աշխատողս Յոհ[աննէս] յաղաթս յիշեալ: Հստացող սորա զՎարդան և զձնողսն իւր յիշեցէք ի Քրիստոս» (ձեռ. № 7037, էջ 11բ):

30 Ձեռ. № 7037, էջ 75ա:

31 Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 28 և հետ.:

Այս երկի գիտական արժանիքների գնահատությունը թողնելով լեզվաբաններին, նշենք այստեղ, որ Հովհաննես Ծործորեցին մեծ ճիգ է գործադրել Դիոնիսիոս Թրակացու և նրա հայ մեկնիչների ժամանակավրեպ դատողություններից ձերբազատվելու և ժամանակի գիտական պատկերացումներին համապատասխան և ուսումնական նպատակների համար դյուրմատչելի մի ձևնարկ ստեղծելու համար:

Աշխատությունն արժեքավոր է նաև հեղինակի փիլիսոփայական հայացքների ուսումնասիրության առումով: Մասնավորի (անհատի) և ընդհանուրի (տեսակի) հարաբերակցության հարցը քննության նյութ դարձնելով, մեր հեղինակը մերժում է Պլատոնի իդեալիստական տեսակետը, պաշտպան կանգնելով Արիստոտելին. «Յայսմ տեղուշ,— գրում է նա,— արուեստաւորս (իմա՛ Դիոնիսիոս Թրակացին) Արիստոտէլի կարծեացն հետեի, որ զանհատն պատուական և առաջին գոյացութիւն վարկանի, քան զտեսակն, թէպէտ Պլատոն զառասականն<sup>32</sup> ասաց առաջին, իբր թէ՛ տեսակաց սմանց տիրական զաղափարեալս ըստ ժամանակի: Բայց Արիստոտէլ զիսկն ասելով, թէ տեսաննն հաստատուն է քան զլուրն, որպէս զարեզակն ոչ ոք կարէ ժխտել, որ է անհատ, իսկ զաներեկի ինչ՝ բազումք, վասն որոյ և սա նախադասեաց առասականին»<sup>33</sup>:

«Համառօտ տեսութիւն քերականին» աշխատության մեջ ուշագրավ տրվյալներ կան հաստատապես պնդելու, որ Հովհաննես Ծործորեցի վարդապետը քաջ լեզվագետ է եղել, տիրապետել է հունարեն, լատիներեն, թերևս նաև պարսկերեն լեզուներին<sup>34</sup>:

#### բ. Մեկնութիւն Մատթէի աւետարանին

Հեղինակային ընդարձակ խորագիրն՝ այսպես է. «Լրումն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ յաւետարանին որ ըստ Մատթէի, հաւարեալ նուստ վարդապետի Յոհաննու Եզնկայեցոյ, որ և ասի Ծործորեցի»:

Տեղին է նշել, որ Գ. Ջահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (Երևան, 1954) աշխատության մեջ Ծործորեցու քերականության մասին խոսք չկա: Հեղինակը, հետևելով արդեն հաղթահարված ավանդույթին, մի անձնավորություն է համարել Հովհաննես Պլուզ և Հովհաննես Ծործորեցի գործիչներին, ըստ այդմ էլ բավարարվել է միայն Պլուզի քերականական հայացքների վերլուծությամբ:

<sup>32</sup> Քիչ հետո տալիս է «առասական» տերմինի բացատրությունը. «Եւ առասական է որ զհասարակաց էութիւն ցուցանել, որզոն՝ մարդ, ձի»:

<sup>33</sup> Ձեռ. № 7037, էջ 45ա:

<sup>34</sup> Պարսկերենի իմացության մասին տվյալը Քրոշակի չէ. անդրադառնալով հարաբար բավերին, Ծործորեցին ասում է, որ այդպիսիք շատ կան «ի պարսից և ի մերս լեզու, որպէս նիւ-կոսրով, Ջուան-կոսրով, Վարադ-Տրդատ, և մերս Անոն, Քաշ-Անոն, Քաշ-Վարդան և այլ սոյնպիսիք» (ձեռ. № 7037, էջ 42ա): Հունարեն և լատիներեն լեզուների իմացության մասին աներկրայելի փաստեր ենք գտնում աշխատության բառերի սեռերին նվիրված բաժնում. «Սէրք,— կարգում ենք այնտեղ,— ոչ ի գոյութենէ վերակոչին, զի ոչ գրնութիւնս յայտնեն, այլ զձայնի նշանակս, որք ի յունին և ի հոռմայեցին լիով է և յատուկ անուն արական և իգական և չկր-բին, զի որք յանուանց սկզբունս ունին զով, որպէս ասելն ով այիովս ապօստօրս (ὁ ἀπίστος ἀπόστολος), որ լսի սուրբ առաքեալք՝ արական է, իսկ ասելն իա՛ իա օղօղօս (հավանաբար՝ ἡ ὁσολός— գերան)՝ իգական է, իսկ սօ քսօլա (հավանաբար τὸ ξυλό(ν) — փայտ) չէզոր է, զի անուն որ ի սկիզբն սօ ունի՝ չէզոր է. այսպէս և ի վախճանս անուանց յորում պատահին՝ զնոյն վախճանս ունին Իսկ հոռմայեցոյն ևս յատուկ. բանզի անուն պատահական, որ ունիցի յանզի իբրում զօս՝ արական է, և որ ունի զայ՝ իգական է, իսկ զօմ՝ չէզոր է. այսպէս ալպուս, ալպայ, ալպումս (ձեռ. № 7037, էջ 38բ):



Ներսես Շնորհալին, մինչև կաթողիկոսանալը, սկսել էր մեկնել Մատթեոսի ավետարանը, հասնելով մինչև V գլխի 17-րդ համարը. կարևոր այդ աշխատանքն ինչ-ինչ պատճառներով անկատար էր մնացել. որոշ փորձեր կատարվել էին շարունակությունը լրացնելու, բայց անհաջող: Նկատի ունենալով այդ և ընդառաջելով Ծործորի վանքում իր շուրջ համախմբված աշակերտներին, Հովհաննես Երզնկացին 1316 թ. լրացնում է այդ թերին, իր կատարածի մասին գրելով ընդարձակ հիշատակարան, որի կարևոր մասը մեջ ենք բերում ստորև. «...Ես՝ նուսսոս ի Քրիստոս և յետինն յորդիս Սիոնի՝ ապիկար ոգիս Յոհաննէս Եզնկայեցի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի Վանս Ծործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, այլ և ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան, յորոց յորդորմանէ և ի փափաքելի խնդրոյ եղեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոյն ավետարանին Մատթէի, ընդ զթերի նորին ըստ կարողութեան իմում»<sup>35</sup>:


Ղ. Ալիշանի հեղինակավոր կարծիքով՝ Շնորհալու թերին լրացնողը մեծատաղանդ բանաստեղծի «անուշ գրչէն հեռու շի մնար», այսինքն՝ կարողացել է ստեղծել համահավասար մակարդակի աշխատություն<sup>36</sup>, իսկ Ներսես Եեր-Ներսեսյանի վկայությամբ՝ նա «հմուտ է աստվածաբանական և բարոյական հարցերու»<sup>37</sup>. Ի լրումն կարող ենք ավելացնել, որ Մատթեոսի մեկնության Ծործորեցու բաժինը, կյանքի տարբեր բնազավառներից քաղված հետաքրքրական օրինակներ պարունակելով, օգտակար նյութ է բնձնուում պատմաբաններին՝ ուսումնասիրելու ժամանակի սոցիալ-տնտեսական այլազան երևույթները: Մի առիթով նա հայտնում է, որ «գոն յաշխարհի ըստ քաղաքի-քաղաքի սովորութիւն՝ տալ զարծաթն ի սեղանաւորս շահի», մի այլ առիթով արձանագրում, որ շատերը տրտնջում են և, նույնիսկ, մեղադրում արարչին՝ տեսնելով կյանքում սոցիալական անարդարություններ, տեղեկություն է հաղորդում վարձկան հնձվորներին տրվող աշխատավարձի և կերակուրի մասին, լլկիչ ու հալածիչ համարում օտարերկրյա բռնակալներին, որոնք «կեղեքեն զկեանս մեր զառնութեամբ և ապա ի հայրենեաց մերոց արտալածեալ վարեն» և այլն: Այստեղ կարելի է գտնել նաև անսպասելի բնազավառների մասին ուշադրավ տվյալներ, որոնցից է, օրինակ, մրգերի բարձրորակ տեսակներ ստանալու եղանակի նկարագրությունը, անշուշտ քաղված հայ այգեգործների կենցաղից. «Թողում ասել և զայն, — գրում է նա, — թէ և զանբան բնութիւն տնկոց կարեն մարդիկ ի հաւանութիւն ածել, որպէս զթթութիւն նոան քաղցրացուցանեն և կամ զգառնութիւն նշի անուշացուցանեն ի ձեռն արուեստին, զի զբեկնի եպերկես փայտ վարսեալ ուռամբ յարմատս ասացեալ տնկոցդ՝ փոփոխեն զբնութիւն»<sup>38</sup>:

35 Ամբողջը տե՛ս Ղ. Ալիշան, Հայագատում, Բ, էջ 512—513, 2. Տաշյան, Մայր ցուցակ, էջ 338, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 124—125 և այլն:

36 Ղ. Ալիշան, Հայագատում, Ա, էջ 120:

37 «Բազմավէպ», 1960, էջ 115:

38 Մեկնութիւն սուրբ ավետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ մինչև ի համարն 17 հինգերորդ գլխոյն, և անտի աւարտեալ յերանկրոյն Յոհաննու Երզնկացոյ, որ և կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825, էջ 536, 422 390, 129 և 178 (էջերը մատնացույց են արված ըստ վերոհիշյալ օրինակների հերթականության):



Նկ. 4 Իսրայելի արքայի կառուցողական արձանագրությունը

Մինչ «Մեկնութիւն Մատթէի աւետարանին» աշխատության մասին մեր ասելիքն ավարտելը անհրաժեշտ է անդրադառնալ Ներսես Տեր-Ներսեսյանի «Պատարագ վասն ննջեցելոց» հոդվածին, որի 12-րդ բաժինն ամբողջապես նվիրված է Հովհաննես Մործորեցու դավանաբանական հայացքների վերլուծությանը: Հարգելի բանասերը իրավամբ նշում է, որ խնդրո առարկա աշխատության Կ. Պոլսի տպագրության մեջ կատարվել են աղճատումներ՝ կոծկելու համար հեղինակի կաթոլիկ եկեղեցու դավանանքին հարած լինելը, բայց ինքն էլ շեղվում է ճշմարտությունից, երբ Մործորեցուն ներկայացնում է որպես հայոց եկեղեցու դավանաբանական սկզբունքների շատագույ՜ն<sup>39</sup>: Նա հաշվի չի առնում, որ Արտագ տեղափոխվելուց և Զաբարիա եպիսկոպոսի կուսակիցը դառնալուց հետո՝ այսինքն դոմինիկյան քարոզիչների Հայաստան ներթափանցելուց շուրջ մեկ տասնամյակ առաջ, Հովհաննես վարդապետն արդեն ծառայագրվել էր ունիթորական շարժմանը, ձայնափողը դառնալով կաթոլիկ եկեղեցու:

#### գ. Մեկնութիւն մարգարէութեանն Դանիէլի

Այս մեկնության մատենադարանյան բնագիրը (ձեռ. № 1187, էջ 305ա—379բ)՝ սկզբից և միջին մասերից թերի է<sup>40</sup>, բայց վերջում ունի ընդարձակ հիշատակարան. գրության հանգամանքների մասին տվյալներ կան նաև աշխատության միջին մասերում, նեւի գալստյան և աշխարհի կործանման կանխագուշակումների կապակցությամբ արված դատողություններից հետո: Ըստ այդ տվյալների շարադրված է 1316 թվականին. Մործորի վանքում, վարդան վարդապետի խնդրանքով<sup>41</sup>, նախորդ մեկնիչների՝ Հիպոզիտի, Նփրեմի և վարդան Արեւելցու աշխատությունների քննական օգտագործման ճանապարհով (ինչպես ինքն է ասում՝ «յղկեալ ըստ շափու տարազու մտաց մերոց»):

Միջնադարյան ընթերցողի համար այս մեկնությունը զգալի հետաքրքրություն էր ներկայացնում, մանավանդ իր այն մասերով, որոնց մեջ տեղեկություններ կան գրանցված Հին Արեւելքի պատմության և առասպելաբանության մասին՝ ի լրումն Հին կտակարանի մեջ առկա պատմությունների:

Աքեմենյան Իրանի մասին, օրինակ, ի թիվս այլ տվյալների ասված է նաև հետևյալը. «Յեա Կիրոսի յարեալ Դարեհ, ապա Արտաշէս Ուշեղ, ապա Արտաշէս Քսերքսէս, և շորրորդն մեծասցի (՝) յետինն Դարեհ, որ յարեալ ի վերայ թագաւորութեանցն Յունաց, զոր սպան Աղեքսանդր՝ որդի Փիլիպոսի, և երարձ զթագաւորութիւնն Պարսից, որ տեւաց ամս Մլ. (230)<sup>42</sup>: Բայց զիտել պարտ է, զի նշանաւորսն ասաց Դ. թագաւոր, ապա թէ ոչ՝ շորերտասան թագաւոր նստան Կիրոսի և վերջին Դարեհի աթոռն Պարսից, որ զօրածողով եղև ի վերայ Աղեքսանդրի»<sup>43</sup>:

39 «Բազմավէպ», 1960, էջ 114—124.

40 Այդպես թերի է նաև Նրուսաղեմյան օրինակը՝ ձեռ. № 207, էջ 363ա—446ա (տե՛ս Մայր ցուցակ, Ա, էջ 584—585):

41 Նորայր եպս. Պողարյանը այս վարդան վարդապետին, որ, ինչպես ասացինք, պատվիրատուն է եղել նաև «Համառօտ տեսութիւն քերականի» աշխատության, հնարավոր է համարում նույնացնել վարդան Բարձրբերդցու հետ (տե՛ս «Հայ գրողներ», էջ 35): Հազիվ թե ճիշտ լինի այս ենթադրությունը:

42 Մի այլ տեղ, այս նույն տվյալը հաղորդելուց հետո, ասում է, որ «այլք Մեծ (243) ամ կալեալ ասեն Պարսից թագաւորութիւնն»:

43 Ձեռ. № 1187, էջ 364—365ա:

Մործորեցին մի երկու տեղ փորձ է կատարում Հին Արևելքի պատմության առանձին գրվագների մասին Աստվածաշնչի և թարգմանական պատմական երկերի մեջ առկա տվյալները շաղկապելու Հայոց Հին պատմության իրեն հայտնի տվյալների հետ: Բեյի մասին խոսելիս, օրինակ, նա անհրաժեշտ է համարում հիշեցնել, որ Հայոց նախահայր Հայկն է նետահարել ու սպանել նրան և այլն:

Ասացինք, որ այս մեկնության գրության հանգամանքների մասին կարևոր տեղեկություններ կան հեղինակային հիշատակարանի և շարադրանքի մեջ: Նախ ծանոթանանք գլխավոր հիշատակարանին.

«Ընդ որում և մեզ լիցի մասն անարժանի անձինս սակաւ ինչ վաստակողի ի բանս սրբոյս՝ նուաստ Յոհանիսի Եզրնկեցւոյ, որ և Մործորեցի կոչեցելոյ, վայելել ի փառս շնորհեաց նորա, հանդերձ կրկին ծնողօք, ի գթութեանն հօր ամենակալին և յաւեժախաղաց պարգև որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ և յուխս սիրոյ մարդասէր հոգւոյն աստուծոյ, որում վայել է փառք անեղբրական և պատիւ վայելչական և գոհութիւն անվախճան այժմ և միշտ:

Եղև աշխատութիւնս մեր ի նպաստաւորութենէ հոգւոյն սրբոյ և սրբոց հարցն մերոց վարդապետացն առաջնորդաց՝ Հիպոդիտեայ, Եփրեմի և Վարդան վարդապետի և այլոց, ի թիվս Հայոց ԶԿԵ<sup>44</sup> (1316) և ի մարդեղութենէ ամաց Յիսուսի Քրիստոսի ՌՅ. և ԺԶ ամին, զրեալ և յղկեալ ըստ շափու տարազու մտաց մերոց, և կշիռ առ բանին եղեալ զմեկնութիւնն ի դաւառս հոշակաւոր Արտաղ կոչեցեալ, ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս Մործորու կոչեցեալ, ձեռամբ նուաստ սպասաւորի Յոհանիսի Եզրնկեցւոյ, ի խնդրոյ եղբօր մերոյ բանի աշակերտելոյ Վարդան կոչեցեալ վարդապետի, և յիշատակ ինձ՝ անարժանիս հոգւոյ և մարմնոյ, այլ և ձեզ մասն եղիցի ընդ յիշման յիշեցելոյս անմոռաց յիշումն արարչին, որում փառք յաւիտեանս, ամէն»<sup>45</sup>:

Հիշատակարանի բնույթ ունեն նաև նեոի գալստյան ժամանակի կապակցութեամբ արված դատողություններին հաջորդող ստորև մեջբերվող տողերը. «...Եւ դարձեալ, ոչ զնեոինն ժամանակ թուէ աստ, քանզի դայն ի վեր անդ ասաց, այլ թուէ յառաջին գալստենէն տեառն այսչափ ամ, յորում կարապետք նեոինն ըստ վարդապետութեանն և առաքելոցն հալածեն և շարշարեն, վշտացուցանելով զեկեղեցի, կեղեքելով զկեանս քրիստոնէից հոգեպէս և մարմնապէս, որպէս տեսանեմք այսօր: Իսկ ի լրմանց ամաց նախ քան զգալ նեոինն անդորրանայ եկեղեցի և խաղաղանայ առ ժամանակ մի, և բարձցի գայթակղութիւնք, և այլասեռիցն կրօնք և հերձուածողաց խափանեացի, և աւետարանն պայծառանայ ընդ ամենայն տիեզերս, և եկեղեցի բարձրանայ, և ապա յետոյ երևի նեոն, և լիցի լրումն աշխարհի:

Արդ՝ ի զրելս մեր զմեկնութիւն թուոյս էր թիւն տեառն ըստ մեզ մարդեղութեանն ՌՅ. և ԺԶ. ամ. և յորժամ այս հասանէ յերեսուն և հինկն, զի է պակաս ԺԹ. ամ, կատարին ասացեալ երանութիւնքս ի մարգարէէս ի վերայ համբերողաց: Եւ դու եթէ ժամանեացես ի թիւն յայն և տեսցես զբարութիւնն

<sup>44</sup> Ձեռագրում, ընդօրինակողի վրիպումով, գրված է ԶԿԷ (1318). ուղղում ենք փրկչական թվականի, մյուս հիշատակարանում առկա տվյալի, ինչպես նաև Գ. Զարպհանալյանի (Պատմութիւն հայ. դպր., էջ 765) հիման վրա:

<sup>45</sup> Ձեռ. № 1187, էջ 379բ:

եկեղեցու՝ չիշեսցես և զնուստս Յոհան Եզնկեցի, որ և Մործորեցի, զի ես ալսպէս զթիւս զայս մտածեցի, և եթէ ոչ լիցի այս, բնկալ զառաջին ասացեալն ի սրբոցն, որ վասն աւուրց նեոհնն, և զմեզ ազատ ի պարսաւանաց արասցես»<sup>46</sup>:

#### դ. Քարոզներ

Միջնադարյան բարձրագույն դպրոցների ծրագրերի մեջ հատուկ նշանակություն էր տրվում այն գիտելիքներին, որոնք անհրաժեշտ էին նկատվում կրոնա-քարոյախոսական ու խրատական բովանդակությամբ քարոզներ հյուսելու համար: Վարդապետացու ուսանողը, մինչև գավազան ստանալն ու ինքնուրույն գործունեության ասպարեզ մտնելը, հրապարակավ պետք է ցույց տար իր ձեռք բերած գիտելիքներն ու շնորհքը, հավուր պատշաճի քարոզ կարգալով՝ աստվածաշնչից բաղված որևէ բնաբանի շուրջ կամ եկեղեցական որևէ տոնի կապակցությամբ:

Ըստ ձևի և բովանդակության կուռ և գեղեցիկ քարոզներ շարադրելու հմտությունը անհրաժեշտ նախապայման էր համարվում Գլաձորյան համալսարանի շրջանավարտների համար: Գրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ պահպանվել են այդ ուսումնական հաստատության կամարների տակ ստեղծված՝ ավարտուն քարոզներ կամ քարոզների նախաբան ու վերջաբաններ պարունակող մի քանի ձեռագիր ժողովածուներ: Գրանց մանրակրկիտ ուսումնասիրությամբ հնարավոր է լինելու ավելի հանգամանորեն բացահայտել միջնադարյան Հայաստանի ուսումնական կենտրոնների կազմակերպչական սկզբունքների, ուսանողներին հրամցվող գիտելիքների, ուսուցման եղանակների հետ առնչվող խնդիրները<sup>47</sup>:

Հովհաննես Երզնկացին, լինելով Գլաձորյան համալսարանի շրջանավարտ ու դասախոս, չէր կարող այս կամ այն շափով շոնչվել քարոզչական աշխատանքին: Եվ իրոք, աշխարհասփյուռ հայերեն ձեռագրերի էջերում պահպանվել են և՛ առանձին՝ հատուկեմա քարոզներ, և՛ մի շարք քարոզներից բաղկացած փնջեր՝ մեր հեղինակի անունով: Ձեռքի տակ շունենալով քարոզչական այդ նյութերի ամբողջական բնագրերը, հնարավորություն չունենք այսօր հանգամանալից խոսք ասելու նրանց բոլորի բովանդակության ու պատմա-գիտական նշանակության մասին: Բավարար տվյալներ չկան նույնիսկ որոշելու քարոզներից շատերի շարադրման ժամանակը, պարզելու, թե որոնք են դրանցից հնագույնները, երբ և ում կողմից են շարադասվել կողք-կողքի՝ փոքր ու մեծ խմբերի գոյացման հիմք հանդիսանալով և այլն: Ըստ այդմ Հովհաննես Մործորեցու գրավոր ժառանգության այս բնագավառի համակողմանի ուսումնասիրությունը վաղաժամ համարելով, փորձելու ենք սոսկ խրմբավորել առկա նյութը:

Հովհաննես վարդապետի Մործորի վանքում հաստատվելու ժամանակը որոշելիս անդրադարձել ենք արդեն Մատենադարանի № 627 ձեռագրին, որի

46 Նույն տեղում, էջ 373ա—373բ:

47 Այս առումով որոշ բան արդեն արված է (տե՛ս մեր «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական առենախոսությունները» հոդվածը, տպագրված Երևանի Պետ. համալսարանի գիտական աշխատությունների XXIII հատորում, 1946, էջ 423—450), սակայն ձեռագրական նորահայտ նյութերը հնարավորություն են ընձեռում հաջողությամբ շարունակելու և խորացնելու ձեռք բերված արդյունքները:



Նկ. 5. Մործորի վանքի ավերակները

մեջ ընդօրինակված է Մործորեցու երեք քարոզներից բաղկացած մի փունջ-դրանցից առաջինը վերնագրված է այսպես. «Յոհաննիսի եզնկաեցո, որ և Մործորեցի տիեզերալոյս վարդապետի ասացեալ» (սկսւում է «Յարարչական բանէ անեղական յուսոյն հաստատեալ գոյացան բոլոր և մասնաւոր արարածք...» բառերով). քարոզն ամբողջական չէ. ձեռագրերի մեջ հաճախակի հանդիպող քարոզից նախերգանքների կամ Գլաձորյան համալսարանի սաների ավարտաձևների ընծայական մասի տպագրութիւնն է թողնում:

Երկրորդ քարոզը՝ «Յոհաննիսի Մործորեցո հոգացեալ գրանես» խորագրով (սկսում է «Վստահացեալ յուսո քաջութեամբ...» բառերով)՝ պահպանվել է անվթար: Հակառակ այն բանի, որ խորագրի մեջ հնդինակն արդեն Մործորեցի է կոչված, բովանդակութիւնից պարզվում է, որ շարագրված է ուսանողութեան տարիներին: Վերջաբանում կան տողեր՝ ուղղված այնպիսի ունկնդիրների, որոնք գիտութեամբ կատարչալ են, մտքով՝ լուսափայլ. նրանցից հնդինակը ներողամտութիւնն է հայցում<sup>48</sup>: Ըստ այդմ՝ այս քարոզը շարագրված

<sup>48</sup> Երևի մեր,—գրում է նա,— ըստ մերում տկար զօրութեան սուղ ինչ պատճառ տվաք բանիս, վստահանալով առաջի կատարելոցդ, և զկատարեալն տեսութիւն՝ հոգին շնորհաց՝ բաց է առաջի լուսափայլ մտացո ձերոց: Եւ մեր ի լրման բանիս զօրհնեալն ամենայնի բանական սեռից անլսելի ձայնի բարեբանեացուք, և անծախելի շնորհաց նորին, հանդերձ երկրպագութեամբ, զոհութիւն մատուցուք, խնդրելով՝ խաղաղութիւն պարգևեա ամենայն աշխարհիս (ձեռ. № 627, էջ 37ա):

պետք է լինի Գլաձորյան համալսարանում, որպես ավարտաճառ: Զգալի հետաքրքրություն է ներկայացնում գիտական բովանդակություն ունեցող հատվածներով. օգտակար տվյալներ է պարունակում միջնադարյան բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող առարկաների բնույթն ու տարողությունը որոշելու համար: Մասնավորապես ուշագրավ է քարոզիայն հատվածը, որ նվիրված է մարդկային հոգու բնական ու ստացական կարողությունների բացահայտմանը. «Արդ,—ասված է այնտեղ,— բնական զօրությունը չերկուս բաժանին՝ ի գիտնականս և ի կենդանականս. և են այսոքիկ՝ տրամախոհությունը, միտք, կարծիք, երևակաությունս, զգաություն, կամք, ընտրողություն, յօժարություն, բարկություն, ցանկություն...: Իսկ ստացական զօրությունը հոգոյն այն իսկ է՝ յորժամ զխորհուրդս աճեցուցանելով ի բնին ելցէ ուսման և կամ առաքինութեան, և ստացի իմաստասիրություն, որ է գիտություն էականս, և զտրամաբանական հանճարս: Եւ սորօք են մասունք ուսմանց՝ զքերականություն ասեմ, զճարտասանություն, զաստեղաբաշխություն, զերաժշտականություն, զերկրաչափություն, զթվականություն և զայլսն, որ տեսակք են տեսականին: Եմանապէս և զգործնականին մասունք՝ զօրէնսդրություն և զգատողությունն, և կամ ըստ այլոց՝ զտնտեսություն, զբարոյականություն և զքաղաքականությունն, և կամ զես բարձրագոյնն՝ զանախտություն վարուց, զարդարություն, զողջախոհություն, զպարզմտություն, զհեղություն, զչափաւորություն» և այլն<sup>49</sup>:

Քարոզի մեջ կան նաև հեթանոսական հավատալիքների և տիեզերագիտական պատկերացումների (մասնավորապես՝ Արամազդի մանկունք կոչվող երկնային մարմինների) մասին հետաքրքրական տեղեկություններ:

Երրորդ քարոզը, որ N 627 ձևագրում կրում է «Նուրին Յովհանէս վարդապետի ասացեալ ի փոխումն սուրբ կուսին և ի ծնունդն» խորագիրը, միջնադարյան ձևագրերում հանդիպում է նաև առանձին ընդօրինակություններով<sup>50</sup>: Այն տեղ է գրավել նաև Մործորեցու քարոզների ժողովածուի մեջ, որին անդրադառնալու ենք քիչ հետո:

Մրանցից բացի տեղեկություն ունենք մեր հեղինակի «միայնակ» ընդօրինակված երկու այլ քարոզների մասին ևս: Մեկի միայն խորագիրն է հայտնի. «Ս. Յօհաննոյ երգն [կացոյ], զոր մականուն Մօրծորեցի յորչորչի. մեկնուրին անտառանի Մարկոսի ի Ե. կիրակէին աղուհացիցն, վասն մահու և կատարածի աշխարհի, ի բանն որ ասէ. Արբուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու գող գայցէ» (սկսվում է «Նախախնամությունն աստուծոյ և բարերարությունն յամենայն ժամ յայտնի...» բառերով)<sup>51</sup>: Մյուսի մասին տեղեկություն ենք բաղում Ղ. Ալիշանի «Հուշիկը հայրենեաց Հայոց» աշխատությունից. վերնագրված է այսպես. «Յովհաննէս վարդապետի Մօրծորեցոյն աբաբեալ ի բանէն Եսայեայ, որ ասէ. Հոգի տեսոն ի վերայ իմ». վերջաբանի մեջ, գոհա-

49 Ձեռ. N 627, էջ 35ա:

50 Դրանցից են, օրինակ, հետևյալ ձևագրերը. N 734 (էջ 67ա—89բ), N 2178 (էջ 361ա—370բ) և N 5933 (էջ 65ա—82բ): Մրանցում հեղինակի անունը չի հիշատակված: Վերջին (N 5933) ձևագրի մեջ քարոզը վերնագրված է այսպես. «Յաղագս արարչագործութեանն աստուծոյ և լուսաւորացոյ, որ ի շորեքշաբթի արարան, և փոխման տիրամօրն, և վասն մերո հոյոս բաժանման»:

51 Յուցակ հայերէն ձևագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հատ. Բ, «Անտոնյան հավաքածո», Վիեննա, 1971, էջ 116:

բանական խոսքեր ուղեղով ասածուն, հեղինակն անվանի մի գործչի և իր անձի մասին ուշադրավ ակնարկներ է անում. «Եւ ի մտաւորն ծնունդ և ի բանին ծնողութիւն և յերկունս մտաւոր աշխատութեանցն արժանացայ տկար և ցաւագին մարմնով. և ի մէջ ծփան ալեաց ծովածուփ աշխարհիս և տրտմարեր կրից կենցաղոյս, առաջնորդեաց ինձ հոգին և էառ առ սոս բարիոր նաւուղելի և իմաստուն կատարողապետի»<sup>52</sup>: Ըստ Ալիշանի՝ այս խոսքերը վերաբերում են Գլաձորի բարունապետ Եսայի Նշեցուն, ուստի քարոզը շարադրված է Հովհաննեսի ուսանող եղած տարիներին: Կարծում ենք, սակայն, որ մեջ բերված տողերը վերաբերվում են Արտազի վեհաշուք եպիսկոպոսին. կատարողապետ բառը, որ քահանայապետ-եպիսկոպոս է նշանակում, սրատշաճ է գալիս Զարարիա Մործորեցուն, որն նախուղղի<sup>53</sup> դեր ստանձնելով՝ փորձում էր Հայոց եկեղեցին առաջնորդել հոսմեական եկեղեցու հետ համաձուլելու ազգազավ ճանապարհով: Իր մարմնի «տկար և ցաւագին» լինելու մասին հեղինակի ակնարկը նույնպէս խոսում է հօգուտ այն ենթադրութեան, որ այս քարոզը հորինված է Հովհաննեսի կողմից Մործորի վանքում հաստատվելուց տարիներ հետո:

Տարբեր ժամանակներում, այլևայլ առիթներով Հովհաննես Մործորեցու շարադրած քարոզներից առնվազն 15-ը, համախմբվել են մի ժողովածուի մեջ նրա երախտավոր աշակերտներից մեկի կողմից, որը մեծարել է իր ուսուցչին «աղբիւր իմաստից», «այր կորովամիտ» հորշորջումներով և օժտել ծողովածուն «Երանաշնորհ և բազմիմաստ բարունապետի Յովհաննու Մործորեցույ կորովարիբ մտացն տեսութիւն» խորագրով:

Քարոզների այդ ժողովածուից հայտնի է երկու բնօրինակություն. մեկը Երուսաղեմի մատենադարանի № 1003 ձեռագիրը, մյուսը՝ Վիեննայի № 646-ը<sup>54</sup>:

Ն. Պողարյանն ու Գ. Զարպհանալյանը Մործորեցուն են վերագրում իրենց ձեռքի տակ եղած ձեռագրերի մեջ առկա քարոզներից 20-ը, ըստ Հ. Ոսկյանի նկարագրության՝ մեր հեղինակին են պատկանում նրա անվան տակ շարահարված քարոզներից 15-ը: Այս խնդիրը կարոտ է հատուկ ուսումնասիրության: Ըստ երևույթին ճշգրիտ է դուրս գալու վերջին կարծիքը, քանի որ Զարպհանալյանն ինքը, թվարկելով իր ձեռքի տակ եղած ձեռագրի մեջ եղող 20 քարոզները, ժՁ քարոզի կապակցությամբ նշում է, որ սրա սկզբնավորությունը նույնն է «ընդ շորեքտասաներորդ ճառին», իսկ ժէ քարոզի առթիվ

52 Ղ. Ալիշան, Հուշիկք հայրենեաց Հայոց, Ա. սպազորութեան, Վենետիկ, 1869, էջ 479, Բ տպագր. 1921, էջ 420—421:

53 Այսպէս («Նաւուղիդ» ձեով) ենք սրբագրում քարոզից մեջ բերված հատվածի «Նաւուղելի» աղճատված բառը, նրան տալով «ղեկն իր ձեռն առած նավապետ» իմաստը:

54 Այդ ձեռագրերը նկարագրված են Նորայր Եպո. Պողարյանի (Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատոր չորրորդ, Երուսաղեմ, 1969, էջ 4—6) և Հ. Համազասպ Ոսկյանի («Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», հատ Բ, Վիեննա, 1963, էջ 130) կողմից: Քարոզների այդ ժողովածուն ծանոթ է եղել նաև Գ. Զարպհանալյանին (տե՛ս «Պատմութիւն հայ դպրութեան», Վենետիկ, 1897, էջ 762—763). չգիտենք, սակայն, նա ձեռքի տակ ունեցել է վերոհիշյալ ձեռագրերից որևէ մեկի նկարագրութեամբ, թե՛ այդպիսի մի ձեռագիր էլ պահում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում:

1966 թվականին Երուսաղեմում ուսումնասիրել ենք № 1003 ձեռագիրը, որոշ բաղվածքներ կատարել առանձին քարոզներից, բայց նրանց հեղինակային պատկանելության հարցն այն ժամանակ մեր տեսողաշտից դուրս է եղել:



ուսում, որ «յոմանց ի գրչագրաց՝ Տիրատուր վարդապետի կը տրուի այս ճառ»:

Քարոզգրքի առաջին միավորի խորագիրն է. «Բանն որ առ Յովք. Զինչ երկիր իցէ յորում լոյսն ազանիցի»: Ասել ենք արդեն, որ այս քարոզը շրջանառութեան մեջ է եղել նաև որպէս առանձին միավոր, ինչպէս և Մործորեցուն պատկանող երկու այլ քարոզների հետ շղթայված շարքով: Հինգերորդ քարոզի վերջում պահպանվել է հեղինակի բնծայական-վերջաբանը, հասցեագրված «Երջանիկ լուսաւորիչ տանս Արևելեան», «ջահ անշիջանելի» կոչված նշանավոր մի գործչի, որի ջանքերով նրա գերդաստանի պայազատները մեծ դիրքի են հասել և այլն: Մործորեցին մաղթում է, որ նա և նրա մերձավորները՝ «անսասան կենօք, հոգեկան և մարմնական ճոխութեամբ յղփացեալ՝ ժառանգեսցեն զսեփական հայրենիքս մինչ ի խորին ծերութիւն»: Այս խոսքն, անտարակույս, ուղղված է Զաքարիա եպիսկոպոսին ու Արտագի ավատատեր հայ գերդաստանի իշխանաշուք անդամներին<sup>55</sup>:

Այս հիշատակարանի առկայութիւնն իսկ ընդհանուր շարքի մեջ մտած ու հինգերորդ տեղը գրաված քարոզի վերջում ամրապնդում է մեր եզրակացութիւնը՝ Մործորեցու քարոզների ժողովածուի առանձին միավորների տարբեր առիթով ու տարբեր ժամանակներում գրված լինելու և հետագայում, ուրիշ մեկի կողմից, մի կազմի տակ համախմբվելու մասին: Այս կարծիքն ավելի է ամրապնդվում ԺԲ համարը կրող քարոզի ուսումնասիրությամբ (Վիեննայի ձեռագրում սրան համապատասխանում է ԺԳ քարոզը): Սրա վերջում եղող հիշատակարանից պարզվում է, որ նրա հեղինակը Մործորեցու աշակերաններից մեկն է, ամենայն հավանականությամբ հենց այն աշակերտը,

<sup>55</sup> Ստորև մեջ ենք բերում այդ վերջաբան-հիշատակարանը առանց կրճատումների, հաշվի առնելով նրա մեջ գրանցված ավյալների ու ակնարկների օգտակարութիւնը Արտագի հայ ավատատերերի, մասնավորապէս Զաքարիա Մործորեցու գործունեութեան ուսումնասիրման համար. «...նոցին և մեզ մասնաւորեցէ թագաւորն փառաց եկեալ յաշխարհ՝ արքայութեանն իւրոյ հաղորդս լինել, և զընտիր վիճակ ազգիս Հայկայ գրահանայութիւն և գթագատրութիւն պահեսցէ, և թէ ինչ ի շարէն, որուն ընդ բարիօք սերմանցն իցէ մշակեալ յանգաստանս եկեղեցոյ՝ արմատարի խլիսցէ: Է լոյսն ճշմարիտ Քրիստոս, որ լուսաւորէ զամենայն մարդ, որ զալոց է յաշխարհ, լուսաւորեցէ զաշս սրտից մերոց և ընդ ծագման լուսոյ առաւօտուս ծագեցէ Քրիստոս զգով անճառելի խնամոց յարարածս իւր, և ընդ զգալի լուսոյս տարածման արեղակն արդարութեան Քրիստոս ծաւալեցէ զյոյս հոգեօք գիտութեանն իւրոյ յամենայն ազգս քրիստոնէից, և լուսաւորեալս բանին ճշմարտութեան զերջանիկ լուսաւորիչ տանս արևելեան, լոյսն մշտնջենաւոր պահեսցէ զսա ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի, և զյապտեր հոգւոյ սորա պայծառացուցէ օրրօտօրէ հայել ի խորս անճառ գիտութեան նորա, և ամենայն ներհակք սորա՝ երևելիք և անբերելոյթ՝ տապալեցին ի ներքոյ ստից սորա, և դիցէ զսա իրրև զվէմ անդամանդեայ պարսպին հաւատոյ, զի ամենայն որ որ հարցի ընդ սա՝ փշրեցի, և յոյր վերայ անկցի՝ հօսեցէ զնա: Եւ որք սովաւ կարգեալ են իշխանութիւնք և ի զարմից սորին շառախղեալք բարեպաշտ պարսնայք՝ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի նոցա յես և ի մուսս, և եղիցին կարօղ յամենայն գործս քաջութեան, և անսասան կենօք, հոգեկան և մարմնական ճոխութեամբ յղփացեալք ժառանգեսցեն զսեփական հայրենիքս մինչ ի խորին ծերութիւն, տեսանելով զորդիս և զորդիս որդոց մինչ յերիս և շորս ազգս, որպէս զի մի պակասեսցէ ճիտ օրհնութեան և զաւակ բարեպաշտութեան ի տանէն յայսմանէ՝ մինչ ի զալուստ երկնաւոր թագաւորին Քրիստոսի» (Նրուսաղեմ, ձեռ. N° 1003, էջ 68):

Քարոզի միջին մասերում ևս կան Զաքարիային հասցեագրված մեծարանքի խոսքեր. գրանցից է, օրինակ, հետևյալը. «նոյնպէս և դու ըստ անարգամեծար շնաշխարհիկ բոյին ճոխութեանդ, ընդունելով զմերս ի գահութիւն անկարօտին փառաց վերացուցես: Եւ արդ՝ օն առեալ զազօթս քո՝ մխեսցուք ի բնութիւն» (նույն ձեռագիր, էջ 57):

որին հանձնարարված է եղել տարբեր ձեռագրերի մեջ ընդօրինակված քարոզչական նյութերի համախմբումով և խմբագրությամբ ստեղծել իր ուսուցչի քարոզների մի փունջ: Անունն անհայտ խմբագիր-աշակերտը սրանց մեջ ազուցել է նաև իր հեղինակած մի քարոզը, որի վերջում փառքի գովք է հյուսել իր ուսուցչի մասին, հայտնելով, որ նա՝ բարունապետ Հովհաննեսը «յայսմ իրակերտութեան գործոյ եղև նպաստ և առիթ՝ յորդորական բանիւք քաջալերս տալով»<sup>56</sup>:

Այս նախարանից հետո մեջ ենք բերում այստեղ Հովհաննես Մործորեցու քարոզգրքի ամբողջական ցանկը, հիշեցնելով՝ նախ, որ նրա մեջ կան նաև ուրիշ հեղինակների պատկանող միավորներ (հատկապես վերջին մասերում), և որ Մործորեցու ոչ բոլոր քարոզներն են տեղ գտել այս ժողովածուի մեջ:

Երանաշնորհ և բազմիմաստ բարունապետի Յովհաննես Մործորեցույ կողմարիք մտացն տեսութիւն.

- ա. Բանն որ առ Յովք. «Զինչ երկիր իցէ յորում լոյսն ազանիցի».— Եթէ որ իմաստուն խորհրդով ներակրթել զինքն կամիցի...
- բ. «Մի երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն».— Թէպէտ և ըմբոն ուրեմն էր մեզ աստանօր...
- գ. «Կապեսցէ գորթոյ զյաւանակ իւր».— Յաղագս խորհրդոյ լուսափայլ տօնիս...
- դ. «Տէր զլուր քո լուայ և երկեայ».— Զոր օրինակ մշակ որ հմուտ, որ երկրագործութեան արուեստին իցէ հրահանգեալ...
- ե. «Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի».— Աստուածն բան հրամայէ ուրեք յիւրում վարդապետութեանն...
- զ. «Այլ մեզէն եղեալ ականատես նորա մեծութեանն».— Թէպէտ հրաման ի տեառնէ ընկալար ոչ հոգալ յորժամ յատեան կոչիցիմք...
- է. «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ».— Յիրաւի ի սկիզբն նախադրութեան բանիս եպերեցայ ի գերահրաշ և ի հոգիահրաւէր ժողովոյդ...
- ը. «Լուր Իսրայէլ, տէր աստուած մեր տէր մի է».— Վստահացեալ յուսոյ քաջութեամբ...<sup>57</sup>:
- թ. «Որպէս ջուր ցուրտ՝ ծարաւելոյ անձին ախորժելի է».— Ի հոգին սուրբ:— Բոնադատիմ ահա և յոյժ վարանիմ յերկաքանչիւր կողմանց...
- ժ. «Ժամանակ ծնանելոյ և ժամանակ մեռանելոյ».— Բանական բնութիւնք արարածոց յերկուս մասունս բաժանեալ են...
- ժա. «Առ քեզ, տէր, համբարձի զաչս իմ».— Եւ ո՞րպէս համբառնայ անձն առ աստուած...
- ժբ. «Ահաւանիկ ես առաքեմ զհրեշտակ իմ».— Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք...
- ժգ. «Ես իմաստութիւն բնակեցայ ի խորագիտութեան».— Յարարչական բանէ անեղական լուսոյն հաստատեալ գոյացան...

56 Նորայր Եպս. Պողաբեան, Մայր ցուցակ..., հատոր չորրորդ, էջ 5:

57 Վիեննայի ձեռագրում այս քարոզից հետո՝ 9-րդ համարի տակ՝ ընդօրինակված է Երուսաղեմի ձեռագրից բացակայող հետևյալ քարոզը. «Խորհուրդն, որ ծածկեալն էր յախտեանց. Խորհ[եալ] զբարիս առ[նել և] մարդկան».— Բարի առնելն յերեք տեղ է՝ ի խորհուրդն, ի բերանն, ի գործն... (2. Ոսկյան, Ցուցակ..., էջ 130):

- ժգ. «Զի՞ բարի և զինչ վայելուչ զի բնակեն»,—Հրամայէ տէր ի սրբում  
աւետարանին, թէ որ խնդրէ ի քէն՝ տուր...
- ժե. «Ահա ասիկ ես ամից զժառայ իմ զժագումն».—Յարեւելեաց աստի  
ոչինչ քղձալի գոյ քան զսիրելեացն կատարել քաղձանս...
- ժզ. «Փոքր էի ես յեղբարս իմ».—Յերիս բաժանի բանական բնութեանս  
սեւք...
- ժէ. «Զխորհուրդ արքաչի ծածկել բարուք է».—Եթէ որ ի մարդկային բնու-  
թենէ մարբեցաւ...
- ժը. «Եւ ահա չորս կտոր ելանէին».—Բազում ինչ առնեմք զոր ոչ կարեմք...
- ժթ. «Երդուաւ տէր Դաւթի ճշմարտութեամբ».—Որպէս յաստեղս արեգակն և  
ի կենդանիս դիմալն...
- ի. «Ի քէն է, տէր, աղբիւր կենաց».—Ի կառոյ բանիս հայելով երիս խորհուրդս  
ժանուցանի մեզ...<sup>58</sup>:

Այս քարոզներից հինգերորդի մեջ Մործորեցին, պատասխանելով «զի՞նչ է առակ» հարցին, հայանում է, որ սուրբ գրքի մեջ առակ բառն օրինակ բառի իմաստով է գործածված. «Իբր թէ օրինակաւ յայտնի կացուցանել զբանին իմաստ յորժամ լսողքն անկատարք իցեն, որպէս առնեն կատարեալ վարժապետք ծանրալուր ծանօթից»<sup>59</sup>: Ղեկավարվելով այս սկզբունքով, Մործորեցի վարդապետը, ինչպես իր քարոզներում, այնպես էլ մյուս աշխատությունների մեջ, հաճախ է կիրառում կյանքի տարրեր բնագավառներից քաղված հանրամատչելի օրինակներով «ծանրալուր» մտքեր բացահայտելու եղանակը: Այլև այլ առիթներով նա անդրադառնում է վարձկաններին, շեշտելով այն հանգամանքը, որ նրանք աշխատում են վարձ ստանալու համար միայն. «Քանզի մարդկան սովորութիւն է,—գրում է նա,—որքան ոչ են ընկալեալ զվարձս վաստակոցն՝ արագ են ի փոյթն, իսկ յորժամ ընդունին՝ ծուլանալով կասին ի գործոյն»<sup>60</sup>: Մեկ ուրիշ քարոզի մեջ ասում է, որ «Վարձկանն զբովանդակ զգործս տեսն կատարելով և ոչ զմիով իւր անցանէ ի գործեացն, ապա վարձուցն արժանացի»<sup>61</sup>: Քանիցս նա անդրադառնում է ծառա և ազատ մարդկանց դոյալիճակի տարրերով: «Զոր օրինակ,— գրում է մի առիթով,— ի տան իշխանի առ որդիս սիրելի և առ ծառայս է տեսանել զանազանութիւն»։ Երկուսն էլ հլու հպատակ են իրենց հոր կամ տիրոջ հրամանին, բայց նրանց հնազանդության հիմքում ընկած են միանգամայն տարրեր գործոնների. ծառա «ըստ առաջի ախորժակաց», այսինքն իր ազատ վիճակի քաղցր հուշերը փայտիայելով, միշտ տենչում է ազատագրվել ստրկական կապանքներից. նա ենթարկվում է տիրոջ կամքին՝ տանջանքի երկյուղից. «Ոչ ի սիրոյ սպասաւորեալ յորդորի, բայց... պակուցեալ յերկիւղէ տանջանացն՝ ամենայն հրամանին պատկառ կայ հնազանդութեամբ»<sup>62</sup>: Մի այլ առիթով գրում է. «Զոր օրինակ ծառայ ապստամբ հեռացեալ ի տեսնէ իւրմէ, կցորդ լեալ զողոց և աւա-

<sup>58</sup> Այս ցանկն արտագրել ենք Գ. Զարպհանայանի վերոհիշյալ աշխատությունից, սրբագրելով ու ճշտելով մյուս աղբյուրներով (տե՛ս 54-րդ ծանոթագրությունը):

<sup>59</sup> Երուսաղեմ, ձեռ. № 1003, էջ 60:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>61</sup> Մատենադարան, ձեռ. № 627, էջ 36ա:

<sup>62</sup> Երուսաղեմ, ձեռ. № 1003, էջ 23:

դակաց և զժառանգութիւնս տեառն իւրոյ գերեալ՝ ի ծառայութիւն վտարէ յաշխարհ հեռի» և այլն<sup>63</sup>։ Ավելի ուշագրաւ է ծառաների և ազատ մարդկանց իրավական վիճակի մասին Մործորեցու մի դատողութիւնը. «Թէ իշխանի ուրուք ծառայ հարուստ իցէ և այլ որ ազատ և աղքատ, ոչ կարէ նախագահ լինել ծառայն ազատին։ Նոյնպէս և նախագորութիւնն իրր ազատ իմն նախագասեցաւ մակբայիս, իսկ սա վասն փարթամութեանն՝ զկնի»<sup>64</sup>։

Ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառների, դասակարգերի, նրանց փոխհարաբերութիւնների ու պայքարի և հարակից հարցերի մասին Հովհաննես Մործորեցու բարոզների մեջ առկա մեծաքանակ ու կարևոր տվյալները բարձրացնում են նրանց ճանաչողական արժեքը, նպաստելով միջնադարյան պատմութեան մթին ծալքերի լուսարանման գործին։

### Ե. Չափածո ստեղծագործություններ

Գլաձորյան համալսարանի սաների ընդօրինակած ձեռագրերից շատերի մեջ կան չափածո հիշատակարաններ<sup>65</sup>. սրանից կարելի է հետևցնել, որ միջնադարյան Հայաստանի ուսումնական բարձրագույն հաստատութիւնների ուսանողները ծանոթացել են նաև չափածո գրվածքներ շարահարկու տարրական հնարանքներին։ Չափ ու հանգի մասին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերած, տնակապ տառերով որևէ անուն կամ բառ հոգելու եղանակներին ծանոթացած երիտասարդները գրանով, իհարկե, բանաստեղծ չէին դառնում, բայց ավարտելով Համալսարանը և գործունեութեան ասպարեզ մտնելով, քստ անհրաժեշտութեան՝ առավել կամ նվազ հաջողութեամբ՝ շարադրում էին չափածո հիշատակարաններ, ողբեր ու զանձեր։

Ոտանավոր գրվածքներ էր հորինում նաև Հովհաննես Երզնկացին։ Գեոևա Գլաձորում գտնված տարիներին նա չափածո մի հիշատակարան էր հյուսել 1306 թ. ընդօրինակած իր ձեռագրի մեջ, գովերգելով ուսումնական այդ հաստատութիւնը, բացահայտելով իր աշխատանքի հետ կապված զժվարութիւնները։

Տալիս ենք ստորև 26 տողից բաղկացած այդ հիշատակարանը.

Կարգիս և զանձն իմ եղկելի  
 Եւ մեղսաներկ արհեստ գրչի,  
 Զոր և մատամբ ծրագրեցի  
 Ես՝ Յոհ[աննէս] աղքատ ողի,  
 Տառապանօք թանձրագունի,  
 Կարօտութեամբ անպատմելի.  
 Սակայն փափաք յոյժ տենչալի  
 Եւ ախորժանք անքննելի,  
 Զիս յորդորեաց ցայս գործ իրի՝  
 Զսա շարել ի քարախիսի:  
 Զի յայս տեղիքս յորում էի

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 65։

<sup>64</sup> Այս նախագատութիւնը քաղված է Հովհ. Մործորեցու «Համառօտ տեսութիւն քերականիս աշխատութիւնից (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7037, էջ 63ա)։

<sup>65</sup> Տե՛ս օրինակ, Մխիթար, Սահիմանօս, Վարդան և Եգեկիել գրիչների հիշատակարանները («ԺԳ դարի հիշատակարաններ», էջ 103—104, 745, 165, 300, 302 և այլն)։

էր դպրութիւն հրաշալի,  
 Եւ ես կարօտ այսմ տառի,  
 Զի յիւր տեղին սա հասանի՝  
 Շտապեցա յաւէտ կարի,  
 Բայց իւր տեղոջն ոչ հասուցի,  
 Զի եկն եհաս սա ի կարգի  
 Ընթեանելոյ ի հանդիսի.  
 Տակաւ կիսով շափ է թերի,  
 Հանգէտ գոլով սա աւարտի:  
 Զոր աղաշեմք, որք հանդիպի  
 Աստուածախօս այս մատենի,  
 Յիշման գոլով զմեզ արժանի  
 Զենման գառինըն առաջի,  
 Եւ մաղթանք աղերսալի  
 Խոշորութեանս ներելի<sup>66</sup>:

Հիշատակարանը, ինչպես տեսնում ենք, շարադրված է կանոնավոր շափածոյով և զուրկ չէ բանաստեղծական ներշնչումից: Ուստի բնական է ենթադրել, որ սրան նախորդել ու հաջորդել են շափածո այլ ստեղծագործություններ: Եվ եթե ավելի վաղ շրջանի նմուշներ չեն պահպանվել, հետագա տարիների ստեղծագործություններից հայտնի են մի քանիսը: Գրանցից մեկը հասել է մեզ՝ մուտք գործելով XV դարի սկզբներին ստեղծված «Գանձարան» կոչվող ժողովածուի տարբեր խմբագրությունների մեջ, կոչվելով մերթ գանձ, մերթ երգ կամ քարոզ, առնչվելով ծննդյան երկրորդ կամ երրորդ օրերին և ջրօրհանին. բաղկացած է 12 տներից, որոնց սկզբնատառերով հողվում են «Յոհաննիսի երգ» բառերը<sup>67</sup>: Իր կառուցվածքով նմանվում է ավելի շարականատիպ ստեղծագործությունների, ձայնագրված է հայկական հին խազերով, ուստի հորինվել է որպես երգ, վկայություն տալով նաև հեղինակի երաժշտական գիտելիքների մասին: Տարբեր խորագրերից նախնական կարելի է համարել «Երգ ջրօրհանաց»-ը, որ պահպանվել է № 5951 ձեռագրում (էջ 42ա—44ա):

Սկսվում է այսպես.

Յամենայն ժամ արհնեմք զարհնեալ փրկելիչդ էմանուէլ՝  
 ծնեալդ ի կուսէն,  
 Եւ վերբասին ծընընդեամբ մկրրակցար այսար ի Յորդանան  
 ի Մրկրըչէն,  
 Նորին բարեխաւսութեամբ բնգալ զաղաշանս քոց պաշտանէից,  
 աղաշեմք:

<sup>66</sup> «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 43—44:

<sup>67</sup> Պահպանվել է բազմաթիվ ձեռագրերում, որոնցից մի մասի խորագրերից բացակայում է հեղինակ Հովհաննես Մործորեցու անունը: Հեղինակի մասն վկայություն պահպանել են Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 474, 5899, 5951, 6489 և այլ ձեռագրերը, ինչպես նաև Զմմատի վանքի № 510 ձեռագիրը (տե՛ս «Ցուցակ», հատ. Բ, էջ 108):

Որ սրբեցեր ըզջուրսըն Յորդանանու՝ սրբբիշղ աշխարհի,  
Տալով ըզկրնիք նորոգման որոց Սիովնի,  
Տուր մաքրութիւն սուրբ եկեղեցոյ և ազատութիւն քում  
ժողովրդեանս, աղաչեմք...<sup>68</sup>:

Հայ եկեղեցու երկու հակառակորդ խմբակցութիւնների միջև ծավալված դաշափարական գոտեմարտերի արձագանքները և մեր հեղինակի դիրքավորումն այդ պայքարում արտացոլված ենք գտնում երգի 9-րդ տան մեջ, ուր նա, շատագուր լինելով լատինական եկեղեցու հետ միաբանելու քաղաքականութեան, աղաչում է աստծուն զորավիգ լինել քրիստոնեական եկեղեցիներին համախմբան ու միավորման շարժմանը: Նա գրում է.

Ի խաղբից թրշնամոյն պարըսպեալ ամբացոյ սուրբ եկեղեցի,  
Եւ յանուն քո ժողովելոցս շնորհեա գրաւութիւն յանցանաց  
և թողութիւն մեղաց՝ միածին որդի աստուծոյ.  
Ահա յիշեա և ևս առաւել բամեա ըզցրուեալսն ի մի  
միաբանութիւն հաւատոյ, յուսոյ և սիրոյ, աղաչեմք<sup>69</sup>:

Հովհաննես Ծործորեցին հատուկ ակնածանք է ունեցել ներսես Շնորհալու գրական ժառանգութեան նկատմամբ: 1316 թ. լրացնելով Մատթեոսի ավետարանի Շնորհալու մեկնությունը և հյուսելով այդ մասին հիշատակարան, նա մեծարում է իր սիրելի հեղինակին, կոչելով նրան «գերապատիւ և գերահռչակ հայր», «երկրորդ լուսաւորիչ սուրբ եկեղեցոյ, և «կորովամիտ և համեղարան կաթողիկոս»<sup>70</sup>:

«Կորովամիտ և համեղարան» Շնորհալու ստեղծագործություններից մի քանիսը, և՛ իրենց բովանդակությամբ և՛ ձևով, խորապես ներգործել են Ծործորեցու վրա, և նա նրանց նմանողությամբ ստեղծել է նոր գործեր: Շնորհալին, օրինակ, Սողոմոն իմաստունի, նրան վերագրված Առակաց գրքի Ժ («Որդի իմաստուն...») և ԻԵ («Փառք աստուծոյ...») գլուխների, ինչպես նաև ժողովողի ու Երգ-երգոցի մասին գրել է բանաստեղծություններ<sup>71</sup>: Դրանց նմանողությամբ Առակաց գրքի Թ («Իմաստութիւն...») գլխի մասին մի բանաստեղծություն էլ գրել է մեր հեղինակը, որ տրվում է ստորև.

Նուստ Յոհանիսի Ծործորեցոյ  
Իմաստութիւն գլխոյն

Յիմաստութիւն կենաց վերին  
Շարժեա և զիմ սիրա բստորին.  
Որում ըզձամ տարիմամբ կրկին  
Դըպիր լինել Սողոմոնին.

68 Մատենադարան, ձեռ. № 5899, էջ 56բ:

69 Ձեռ. № 5899, էջ 58բ, № 474, էջ 33ա—33բ:

70 «Թ դարի հիշատակարաններ», էջ 124:

71 Տե՛ս Տեանն ներսեսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի բանք շափաւ, Բ սոցագրություն, վեներաբլ, 1928, էջ 380—395:

Հեղցես և յիս առատ զհոգին,  
 Արփիաւոր զիմաստ բանին,  
 Առնուլ զտիպ, որ աստ քերին  
 Առակաւոր խորոց խրթին,  
 Նմանել տոհմի Իսրայէլին,  
 Որ այս պարզև վայելեցին.  
 Եկեղեցոյ սուրբ ժողովին,  
 Առնել և զիս հաղորդ նոցին,  
 Սրբել սիրով յաղտից զմարմին,  
 Այլ և զհոգիս իմ անմարմին՝  
 Ի փառս քո սուրբ տաճարին,  
 Երգել զերիս սուրբ սրովքէին.  
 Էիդ լուսոյ հօրդ երկնային,  
 Այլ և որդոյ քում միածնին  
 Բրդխման հոգոյդ ի մի բնութիւն  
 Եւ կատարեալ երբեակ անձին,  
 Այժմ և յանցեալն, ապագային  
 Տալ արհնութիւն զյաւիտենին,  
 Նման իննեակ դասուց յերկին  
 Որք են սկսեալ ՚ւ ոչ դադարին<sup>72</sup>:

Ներսես Շնորհալին ունի երեք ստեղծագործություն՝ նվիրված հայոց այրուքների տառերին, որով փորձում է նորավարժ մանկանց սրտերում բորբոքել սեր հանդեպ եկեղեցին, ուսումն ու գիտությունը.

- Այրն անբսկիզբն ասէ զաստուած,  
 Անեղ բնութիւն՝ ոչ արարած...
- Այրն աստուծոյ զքեզ մերձակայ  
 Խրատ լինել, թէ հաւատա...
- Այրն առաջին ըզքեզ, տրդայ,  
 Հանէ յիմաստըն գերակայ...

Ահա սրանք են միջնադարյան Հայաստանում շատ տարածված այդ գեղեցիկ ստեղծագործությունների սկզբնատողերը<sup>73</sup>:

Հովհաննես Մործորեցին սրանց նմանողությամբ հորինել է իր «այրբենականը», որի մեջ նույնպես կենտրոնական տեղ է գրավում խրատը, հնազանդության քարոզը, ուսման գովքը: Այս բանաստեղծության վերջում, դարձյալ Շնորհալու հետևողությամբ, գրված է շափածո հորդորակ-հիշատակարան՝ «Յոհանիսի բան» տնակապ բառերով, որից հետո ընդօրինակված է Թ. Սաղմոսի մասին գրված մեզ արդեն ծանոթ բանաստեղծությունը, և ապա՝ այս եզրափակիչ նախադասությունը. — «Տունք ԻԳ (23), այրուքենիւ, ՄԹ (59) ընդ ամենայն, ՉԶԳ»<sup>74</sup>: Եվ իրոք, շափածո հորդորակը՝ Սաղմոսի գովքի հետ միասին, պարունակում է 23 երկտող տուն, բուն «այրբենականը»՝ 36 քառատող տուն, ընդամենն՝ իսկապես 59 տուն: Վերջում գրված ՉԶԳ-ը, անտարա-

72 Մատենադարան, ձեռ. № 2407, էջ 201ա—201բ, № 2079, էջ 143բ: Երկյակ տողերի սկզբնատառերով հոգվում են «Յոհանեսի է բան» բառերը:

73 Ն. Շնորհալի, Բանք շափաւ, էջ 335—245, 351—367, 369—379:

74 Ձեռ. № 2079, էջ 143բ:

կույս, միմյանց կից գրված շափածո գրությունների հորինման թվականն է՝ 1324 թ., որը Մործորեցու ձեռքով գրված ու մեզ հայտնի ամենավերջին տարեթիվն է:

Ստորև, բնդհանուրի մասին գաղափար տալու համար, մեջ ենք բերում ուշագրավ այդ բանաստեղծության բուն մասից մի քանի քառյակ, իսկ հորդորակ-հիշատակարանն՝ ամբողջությամբ:

Յոհաննէս վարդապետի Մործորեցոյ  
ոգեալ ի շափ մերոյին տառից՝  
ոտանաւոր ձեռով

Այբն՝

Արարած գրեզ ասէ  
Մահկանացու ի բնութենէ,  
Մերկ ես եկեալ ի յարզանդէ,  
Մերկ դառնալոց ես յաշխարհէ:

Բենն՝

Բանալ տա քեզ դաշքս հոգւոյ  
Բնաւ շքսիրել զկամբս մարմնոյ,  
Զի մի բողոք բառնաս յետոյ  
Զունայնութեան զհետ երթալոյ....

Կենն՝

Կատարած քեզ և յագումն,  
Կաթն իմաստից առ ի յարբումն,  
Այլ և կենաց կրցորդ զուսումն,  
Զի մի յետոյ գաս ի զղջումն....

Շայն՝

Շուրջ պատեսցես ուսման գրոց,  
Որ զմիտս առնէ զինչ բով հալոց,  
Մաքրագործէ ի յարբունուց,  
Եւ արասցէ հաղորդ վերնոց....

Զեն՝

Զանիւ ստիցէ ըզքեզ ի խրատ,  
Զի դիտութիւն առցես առատ,  
Եւ մի մնասցես յուսմանց աղքատ,  
Զի տայցես վրէժ և դատ...

(Յորդորակ)

Յորդորական ձայնիւ գոչեմ,  
Նախ եկելոցրդ բողոքեմ,  
Որ գրեցի զբանբս պատմեմ՝  
Ես Յոհաննէս ձեզ ծառայ եմ.

Հեռի եղէք, ահա ասեմ,  
Յախտից մարմնոյ, զձեզ աղաչեմ:  
Ահա եհաս արբն գրրեմ  
Եւ ծամ մահու, որ ծամանեմ,



Նեղիմ տապով, զոր այժմ երկնեմ,  
 Չունիմ ջուսպ, պատասխանեմ,  
 Ի գատաստան ես մտանեմ  
 Եւ չիմ մեղացն յոյժ ամաշեմ,  
 Սրբոցըն փառս, զոր տեսանեմ,  
 Վիշտ տանջանօք զանձս կոծեմ.  
 Ի մեղական մարդ, զայս գիտեմ,  
 Բնութեան նոցին հաւասար եմ,  
 Բայց ի գործոցն յոյժ հեռի եմ,  
 Ձներհակ նոցին, և մրտածեմ,  
 Այս ինձ կրկին / / / գործեմ  
 Ձի զլան այլոց ուսուցանեմ,  
 Նման յեսանի՝ զայլրս սրեմ,  
 Ի սրոյ բանին զիս յոյժ բթեմ<sup>75</sup>:

Հովհաննես Մործորեցու շափածո ստեղծագործությունների մեջ հատուկ տեղ են զբաղում հանելուկները, որոնց անդրադառնում ենք առանձին պարբերությամբ:

#### գ. Հանելուկներ

Ներսես Շնորհալու՝ ժողովրդական բառ ու բանով համեմված, դյուրալուր և հետաքրքրաշարժ հանելուկները սիրված ստեղծագործություններ են եղել և լայն տարածում գտել ամենուրեք: Նրանց նմանողությամբ միջնադարում ստեղծվել են հանելուկների նոր շարքեր, որոնք, ընդօրինակվելով հետագայում Շնորհալու հանելուկներին առնթեր՝ ձուլվել են նրանց հետ, զրկվելով իրենց հեղինակացույց խորագրերից<sup>76</sup>: Շնորհալուց հետո հանելուկներ են ստեղծել Հովհաննես Պլուզը, Գևորգ Երզնկացին, Գրիգոր Մերենց Խլաթեցին<sup>77</sup>, Հովհաննես Մործորեցին և ուրիշներ: Մործորեցու հանելուկների մեղ հայտնի միակ ընդօրինակությունը պահպանվել է մեր մատենադարանի № 7035 ձեռագրի մեջ, բաղկացած լինելով 20 միավորից: Նկատի ունենալով դրանց բանասիրական արժեքն ու ճանաչողական նշանակությունը՝ ստորև հրատարակում ենք ամբողջությամբ.

<sup>75</sup> Ձեռ. № 2079, էջ 142ա—143բ:

<sup>76</sup> Հաստատապես ն. Շնորհալուն են պատկանում շուրջ 120—140 հանելուկներ (տե՛ս «Բանք շափառ», էջ 609—639, ձեռ. № 7035, էջ 117ա—130ա և այլ ձեռագրեր): Կան, սակայն, բազմաթիվ ձեռագրեր (օրինակ № 2079, էջ 278բ—283բ), որոնցում հանելուկները բազմացել են ի հաշիվ այլ հեղինակների նմանատիպ ստեղծագործությունների: Ն. Շնորհալու հանելուկներն արժանի են մանրակրկիտ ձեռագրագիտական ուսումնասիրության, որով պարզվելու են այդ ուշագրավ ժանրի ստեղծման ու զարգացման ընթացքի հետ կապված լուսարանության կարող շատ խնդիրներ:

<sup>77</sup> Այս երեք նշանավոր մատենագիրների հորինած հանելուկների մասին տեղեկություն ենք բաղում Տրդատ վարդապետ Պալյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիոն և Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց ի Մաղնիսա (Չմիւռնիոյ վիճակ), Չմիւռնիա, 1897» աշխատությունից (ձեռքի տակ ունեցել ենք նույնի հատվածաբար տպագրությունը «Արևելեան մամուլ» պարբերականի մեջ՝ 1897 թ., էջ 140—142): Այստեղ նկարագրված է 1526 թ. Աղթամարում ընդօրինակված մի ժողովածու, որի մեջ եղել են 6 հանելուկ Հովհաննես Պլուզից, 5 հանելուկ՝ Գևորգ Երզնկացուց և 16 հանելուկ՝ Գրիգոր Մերենցից: Տ. Պալյանը յուրաքանչյուրից մեկական օրինակ նմուշ է բերել:

Յոհան վարդապետի Մործորեցույ  
արարեալ հանելուկս

1. Տեսի արուեստ մի գարմազան,  
Զի նշտրակով զերկիր բանան,  
Հանեն արիւն անդի զինչ թան  
Եւ զիր գրեն կայսերական: (Քարն)
2. Եկ և տես այլ սոսկալի,  
Զի յատոցով երկիր բըրի,  
Ելնէ կենդան ՚ւ ոչ կենդանի,  
Առնէ կարմիր գգոյն սպիտակի: (Որդն)
3. Ի սուլտանին մեծ քարխանայն  
Կայր մին ուսթայ խիստ աննման,  
Առանց հորի և մաքորայն  
Գործէր բարակ գործ անխաբան: (Սանդ)
4. Զերդ աղեղան լար է բարակ,  
Հանց հնաւոր զերդ աղուսեակ,  
Ի յամէն շորս եղանակ  
Նա նորանա զերդ արծուակ: (Աւձ)
5. Ըստ արարչին մեծ սահմանի,  
Նա բուրգն և հիմն է աշխարհի,  
Աստուածայշէն տանն է տեղի,  
Մարդկան ոտից անկոխելի: (Մասիս)
6. Ազի ունի զինչ առիւծու,  
Կնճիթն է սուր զերդ աղուեսու,  
Խաւարասէր է որպէս բու  
Եւ ձայն ածէ որպէս հաւու: (Մուկն)
7. Քան ըզշուն ինքն է վազան,  
Սիւներն երկայն՝ զինչ զպարան,  
է թևատ արլալ նրման,  
Կամ հաւասար ըզտու կոզոան: (Մաքի)
8. Ի կարուակէ հանճարեղին  
Կարեալ կապա դանմաշելին,  
Զնիւթն ի քարէ կակղացուցին,  
Ասեղն՝ սալն է դարբընին: (Զրեհ)
9. Ի յերկու կողմանց է ծուռ,  
Կուշտն կապած խիստ և կուռ,  
Թէ կորովի է որ և փուռ,  
Յրուէ զոսկերս մարդկան զերդ բուռ: (Աղեղն)
10. Զինչ խեչեփառ ոտուի ունի,  
Ընդ որ երթայ՝ հետն երևի,

- Նա ի մազէ կամուրջն անցնի,  
Թէ և թընդայ՝ հող շթափի: (Մկրատ)
11. Ոչ է մարդ և ոչ կընիկ,  
Բայց բոքասուն գերդ առեծիկ,  
Թէ պիտենայ՝ քեզ է թախտիկ,  
Եւ թէ կամիս՝ լինի սայլիկ: (Ջորի)
12. Է գովելի կտրիճ աղեկ,  
Անուն կոչին իւր դարասէկ,  
Ձինչ ըզսե անէ զրնմէկ մէկ (°),  
Լծուի և գայ յուս և ի թէկ: (Մըջիմն)
13. Ղարասէկիս կայր շէկ եղբայր  
Ձինչ թուխարիկ ձի որնվար (°),  
Որ գոլորշաք ցաւին յերկար,  
Նա հարմութիւն գիտէ ճարտար: (Մեղու)
14. Ի յերկու սալի միջի,  
Ինքն բնակէ զինչ ի փորի,  
Եւ թէ մահու տա[ս] ըմպելի,  
Նա խոտ ո[ւ]տէ ու շմեռանի: (Կրա)
15. Անուն անեղն ասել ի Գրոց,  
Բայց ինքն վառի որպէս զբոց,  
Անճառ փայլին աննէ գունոց  
Եւ հաշտութեան նըշան ամպոց: (Միածան)
16. Ի հրոյ ունի նա զգոյութիւն  
Վառէ և զհուր ներգործութիւն  
Խոբի ցաւղնոյ յինքն միութիւն,  
Բայց ոչ այրէ նա քան զընութիւն: (Մ[իրանի°] ծով)
17. Մանուկ մի կայր խիստ հրաշատես,  
Անիւ սայլի և հուր ի ներս,  
Չորս կենդանի լծեալ ետես  
Եւ մարդ յաթոռն՝ նըման քեզ: (Եզեկիէլ)
18. Ձինչ պողոսիկ գերան ի ցից,  
Կառաց լծեալ զիմաց շորից,  
Նա վերանայր յերկինս երկնից  
Բազմեալն աստուած էր ամենից: (Կառքն)
19. Էին հրեշտակք աթոռ եղեալ,  
Մին ըզշորից երես առեալ,  
Նըման կառանց յաւորդ թռեալ՝  
Յերուսաղէմ ի յօթ իջեալ: (Այլ)<sup>78</sup>
20. Էր ինքն բոլոր գերդ արեգակ,  
Ունէր սոնակ խաշատեսակ,

<sup>78</sup> «Այլ» ասելով նկատի ունի նախորդ (18-րդ) հանելուկի պատասխանը՝ «Կառք: Եզեկիէլի կառքի մասին է նաև վերջին հանելուկը»:

Անի սայլի համաքատակ  
 և կենդանիս քառադիդակ<sup>79</sup>:

Այս հանելուկներից մի քանիսը հետագայում վերագրվել են ներսես Շնորհալուն և, նույնիսկ, հրատարակվել նրա անունով<sup>80</sup>, բայց հաստատապես պատկանում են Հովհաննես Մործորեցու գրչին: Այս ապացուցվում է նաև այն իրողությամբ, որ № 7035 ձեռագրի մեջ Մործորեցու հանելուկներին նախորդում է Շնորհալու շարքը, բաղկացած շուրջ 140 միավորից. ձեռագիրն ընդօրինակող գրչին քաջ հայտնի է եղել և՛ Շնորհալու և՛ Մործորեցու վաստակը նույնատիպ այս ստեղծագործությունների հորինման մեջ:

Մործորեցի բանաստեղծի շափածոն, վկայելով հեղինակի շնորհքի ու հմտության մասին, մտածել է տալիս, որ նա ստեղծագործած պետք է լինի նաև այլ գործեր: Եվ կարելի է հուսալ, որ գիտական շրջանառության մեջ շարժված հայերեն ձեռագրերից որևէ մեկի ծալքերից առաջիկայում՝ լույս աշխարհ են քերվելու մեր հեղինակի բանաստեղծություններից ուրիշ նմուշներ ևս:

է. Գիրք խորհրդոց եկեղեցոյ

Կաթուղիկ եկեղեցու նշանավոր գաղափարախոս Պետրոս Լոմբարդացու (մհ. 1164 թ.) «Վկայութիւնք» (Sententiarum) կոչվող քառահատոր աշխատությունը մինչև ակնհայտացի դարաշրջանը տարածված էր ողջ Եվրոպայում և ճանաչված որպես կաթուղիկ դավանանքի համապարփակ ուղեցույց: Այդ աշխատության մասին գրվել են տասնյակ մեկնություններ, որոնց մեջ ուրույն տեղ է գրավում Թովմա Արվինացու համառոտ վերլուծությունը՝ «Գիրք խորհրդոց» (Liber Sacramentorum) խորագրով<sup>81</sup>:

Արևելյան երկրներում, մասնավորապես հայկական միջավայրում կաթուղիկ եկեղեցու ազդեցությունը տարածել ցանկացող գործիչները, բնականաբար, ձեռքի տակ պետք է ունենային դյուրալուր ոճով շարադրված համապարփակ մի ձեռնարկ՝ կաթուղիցիդմի հիմնական սկզբունքների մասին խոսել և բարոզել կարենալու համար: Եվ ահա՝ համանման աշխատություններից լավագույնն է ճանաչվում Թովմա Արվինացու վերոհիշյալ «Liber Sacramentorum» հատորը: Հովհաննես Մործորեցին, լատիներեն իմանալով և կաթուղիկ դավանանքին հարած լինելով, հարմարագույն անձն է նկատվել այդ գրվածքի թարգմանությունն իրագործելու: Եվ այդ պատասխանատու աշխատանքը հաջողությամբ նա ի կատար է ածել Հովհաննես ԻԲ պապի կարգադրությամբ («հրամանաւ պապին Հոռմա»), Զաքարիա Կախկոպոսի հոգածությամբ և Մարաղայում բուն գրած Բարթուղիմեոս ֆռանկ Կախկոպոսի օժանդակությամբ՝ 1321 թվականին, անկյունաքարը դնելով հայ ունիթորական գրականության:

Հաջորդ տասնամյակների ընթացքում, ինչպես Մործորի վանքում, այնպես էլ՝ ավելի մեծ ծավալով՝ Քոնստանդուպոլիսում և հայ ունիթորների մյուս կենտրոն-

79 Ձեռ. № 7035, էջ 130ա—132ա:

80 Այս հարցի հանգամանալից բնությունը դուրս համարելով մեր նպատակից, մասնաճշում ենք № 2079 ձեռագիրը (էջ 282բ) և Հակոբ Մեղապարտի «Տաղարանը» (Վենետիկ, 1513, էջ 52—53), որոնցում գետեղված ն. Շնորհալու հանելուկների շարքի մեջ տեղ են գտել նաև Լ. Մործորեցու հանելուկներից առանձին միավորներ:

81 Միջնադարյան հայկական ձեռագրերում կոչված է «Գիրք խորհրդոց եկեղեցոյ» կամ «Յազագս եւթն խորհրդոց եկեղեցոյ»:

ներում, Հովհան և Հակոբ Քոնեցիներին, Բարթուղիմեոս Մարաղացու, Պետրոս Արագոնացու և բազմաթիվ այլ հայ ու օտարազգի քարոզիչների ջանքերով ստեղծվում է հայ-կաթոլիկական ինքնատիպ մի գրականություն. ծիսական մատյաններից բացի հայերեն լեզվով շարադրվում կամ լատիներենից թարգմանվում են փիլիսոփայական մեկնություններ, քերականագիտական երկեր, դատաստանագիրք, քարոզգիրք և բազմաթիվ այլ աշխատություններ, որոնց գիտական ուսումնասիրությունը դեռևս չի կատարված<sup>82</sup>:

«Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկի թարգմանության վերջում Հովհաննես Մործորեցին թողել է բնգարձակ հիշատակարան գրքի արժանիքների և իր կատարած աշխատանքի մասին, որ բազմիցս հրապարակվել է հայագիտական աշխատություններում<sup>83</sup>: Զմմառի վանքի մատենադարանի «Անտոնյան հավաքածու» շարքի մեջ պահվում է աշխատության մի ընդօրինակություն (ձեռ. № 105), որ կարող է Մործորեցու ինքնագիրը լինել<sup>84</sup>:

### ը. Այլ գրվածքներ

Վերոհիշյալ աշխատություններից բացի, Հովհաննես Մործորեցին, անշուշտ, գրել է նաև այլ գործեր, որոնց մասին միջնադարյան աղբյուրներում կան ակնարկներ և ստուգման կարոտ վկայություններ:

Այսպես՝ Ամրդուլու վանքի «Վարդապետական գրեանց» ցուցակի մեջ, որ կազմել է Վարդան Բաղիշեցին XVII դարի վերջերին, ՃԻԶ (126-րդ) համարը կրող ձեռագիրը նկարագրված է այսպես. «Ա. Գիրք Յովհաննու Երզնկացւոյ Պլզոյ ասացեալ ժամանակագրութիւնք և բազում նախերգանք և ասացուածք վարդապետաց. մանաւանդ բազում ասացուածք երկարք միւս Յովհաննու Երզնկացւոյն արարեալ, ոչ Պլզոյն, այլ Յովհաննու Մործորեցւոյն»<sup>85</sup>:

«Բազում ասացուածք երկարք» արտահայտության տակ ի՞նչ պետք է հասկանալ, Մործորեցու քարոզները, մեկնողական գրվածքները, թե՛ մեզ չհասած որևէ այլ աշխատություն. դժվար է պատասխան տալ այս հարցերին:

Երուսաղեմի մատենադարանի № 1171 ձեռագրում (էջ 335—339) ընդօրինակված է «Յոհանէս Մործորեցւոյ ընդդէմ սուրբ պատարագին» խորագրով մի բնագիր, որ սկսվում է «Տէր ամենակալ, աստուած հզօր, արարիչ ամենայնի...» բառերով<sup>86</sup>: Սրա բովանդակության մասին ավելի բան չգիտենք:

82 Ունիթորական գրականության ցանկը, կարևոր պարզաբանումներով տվել է Markus Antonius v. d. Oudenrijn-ը՝ իր „Linguae Haicanae Scriptores“ (Bern 1960)) մեծարժեք աշխատության մեջ. այդ գրականության գիտական ուսումնասիրությունը, սակայն, դեռ չի կատարված:

83 Տե՛ս օրինակ, Գ. Զարպհանալյան, Մատենադարան թարգմ. նախնեաց, էջ 274—275, 2. Տաշյան, Մայր ցուցակ, էջ 777, «Թարգմալէպ», 1906, էջ 257, «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 173—174, M. A. v. d. Oudenrijn, էջ 182—183 և այլն:

84 Նոր Զուղայի հայերեն № 614 ձեռագրի մեջ (85ա—91բ) ընդօրինակված է «Նուստ վարդապետի Յոհանու Երզնկացոյ, որ և Մործորեցի թարգմանեալ զխորհուրդ պսակին ի լատին լեզուլ ի հայ բարբառ» խորագրով մի փոքրիկ բնագիր (Տե՛ս Լ. Մինասյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան Վանաց թանգարանի, հտ. ք, Վիեննա, 1972, էջ 91): «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» աշխատության և ձեռագրական այս հատվածի բաղդատումից հետո միայն հնարավոր կլինի որոշել ուրույն մի աշխատություն՝ է սա, թե՛ Քովմա Աբվինացու վերոհիշյալ գործի մի բաժնի առանձնակի ընդօրինակություն:

85 «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամրդուլու՝ համարով անչինչ յիշատակ գրեալ իմօքս ձեռամբ Վարդանայ վարդապետի» («Արարատ», 1903, էջ 187):

86 Ն. Պողարյան, Մայր ցուցակ, Գ, էջ 270:

Մեր մատենադարանի № 3522 ձեռագրում (էջ 171բ—186ա) գտնում ենք Զարբրիա Եպիսկոպոսի Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Ծորելին ուղղած պատասխան-նամակի մի ընդօրինակությունը՝ այսպիսի ուշագրավ խորագրով. «Թուղթ և պատասխանի առարկութեանցն ընդդէմ հակառակորդաց, արարեալ մեծի և իմաստնոյն Յոհանու Մործորեցոյն»: Հովհաննեսի անունն այստեղ կարող է բացատրվել գրչագրական վրիպակով, իսկ եթե այն գալիս է նախագաղափար օրինակից, ապա պետք է ենթադրել, որ Հովհաննես Մործորեցին գործոն մասնակցություն է ունեցել Առաքելոց թեմի առաջնորդ Զարբրիա Եպիսկոպոսի ստորագրած գրությունների շարադրման ու հարգարման աշխատանքներին:

Մործորեցու անունը թյուրիմացաբար առնչվել է նաև Մխիթար Գոշի առակներին: Մեր մատենադարանի № 2189 ձեռագրի մեջ ընդօրինակված են Գոշի ՃԿԱ—ՃՂ առակները, ինքնուրույն համարակալությամբ (Ա—ԻԸ)՝ «Առակք ստեղծականք պիտանիք առնուլ ի զրուցատրութիւնս և յասացուածս, արարեալ Յոհանու Մործորեցո» խորագրով, վերջում ունենալով այսպիսի հիշատակագրություն. «...և զվերջացեալս ի բարեաց գործոց՝ զտարտամ գրիչս զՅոհ[աննէս] ծանոթ բանի և տեղեաւ Եղնկացի, իսկ այժմ Մործորեցի, աղաչեմ շնորհաւ ի բարիս զիս և զիման ամենայն, ի Բվականիս փրկչին ՌՅԺԶ (1316)»<sup>87</sup>:

Ակադեմիկոս Ն. Մառք, մանրակրկիտ ուսումնասիրելով այս ձեռագիրն ու հիշատակագրությունը, հանգել է այն ճիշտ եզրակացության, որ սխալմունքով պետք է բացատրել վերոհիշյալ խորագրի մեջ Մործորեցու անվան ներմուծումը: Նա, 1316 թվականին սոսկ ընդօրինակել է Մխիթար Գոշի առակների վերջին բաժինը՝ շնչելով հեղինակի անունը: Տարիներ հետո (1394-ից առաջ) Գրիգոր անունով մեկը, տարատեսակ նյութերի հետաքրքրական մի ժողովածու կազմելով, Հովհաննես Մործորեցու ձեռագրից արտագրել է նաև այդ առակները, բայց սխալ մեկնաբանելով Մործորեցու հիշատակագրությունը, իրեն այլուստ անծանոթ առակների հեղինակ է համարել գաղափար հանդիսացող ձեռագրի գրիչ Մործորեցուն<sup>88</sup>:

Այսպիսով ժխտվում է Հովհաննես Մործորեցու մասնակցությունը միջնադարյան հայկական առակների ստեղծման աշխատանքներին, բայց բացահայտվում է, որ նա 1316 թ. երբ Մործորի վանքում ծավալել էր գիտամանկավարժական եռանդուն գործունեություն, ժամանակ է գտել շարունակելու ձեռագրերի բազմացման իր համար սովորական աշխատանքը՝ այս անգամ ընդօրինակման նյութ դարձնելով Մխիթար Գոշի առակների «Առակք ստեղծականք» բաժինը<sup>89</sup>:

<sup>87</sup> Մառապետի անվան Մատենադարան, ձեռ. № 2189, էջ 424ա—434ա: Նույնը, ուղղագրական աննշան տարբերություններով, գտնում ենք նաև Երուսաղեմյան № 1376 ձեռագրում (էջ 497—524):

<sup>88</sup> Н. Я. Марр. Сборники притч Вардана, часть 1, СПб, 1899, էջ 73—74: Ն. Մառի եզրակացությունն ըստ ամենայնի ճիշտ է. պետք է ավելացնել միայն, որ մեր մատենադարանի № 2189 (նախկին 2238) ձեռագրի նյութերի համախմբողն ու գրիչը ինքը՝ Գրիգոր Տաթևացին է: Ըստ այդմ՝ բովանդակալից այդ ժողովածուն Թանկագին մի մասունք է, արժանի հատուկ ուշագրության:

<sup>89</sup> Հմմտ. Մխիթար Գոշ, Առակներ, տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը էմ. Պիլագյանի, Երևան, 1951, էջ 119—133:

Պետք չէ տարակուսել, որ դեռևս շուտամնասիրված հայերեն ձեռագրի միջից հայտնաբերվելու են Հովհաննես Մործորեցու ստեղծագործություններին առնչվող նոր նյութեր, ամբողջացնելով մեր գիտելիքները նրա կյանքի ու վաստակի մասին:

\* \* \*

Հովհաննես Երզնկացին մշտական բնակություն հաստատեց Մործորում՝ նորակառույց այդ վանքին կից բարձրագույն դպրոց ստեղծվելու կապակցությամբ: Նրա աշխատությունների մեծագույն մասը՝ Քերականի մեկնությունը, Մատթեոսի և Դանիելի մեկնությունները և այլն, շարադրված են հենց ուսուցողական նպատակներով, իր շուրջ համախմբված բանասեր անձանց և դրոց աշակերտների հորդորներով: 1318 թ. Մործորի վանքում շարադրած իր մի հիշատակարանում Մխիթար գրիչը, ժամանակի նշանավոր անձանց՝ Հայոց Թագավորի, կաթողիկոսի, Արտազի Լպիսկոպոսի անուններից անմիջապես հետո, արձանագրում է Հովհաննես Մործորեցու անունը, մեծարելով նրան «վարժապետ և ուսուցիչ» տիտղոսով<sup>90</sup>: Մործորեցու աշակերտներից մեկ ուրիշը, որի անունը չի պահպանվել, բայց արժանի է հիշատակության, որպես խմբագիր իր ուսուցչի քարոզներից կազմված ժողովածուի, վերը հիշատակված ԺԲ քարոզի բնծայական-հիշատակարանի մեջ իր բարունապետին համահավասար է համարում Հովհան Ոսկերեբանին և Գրիգոր Աստվածաբանին, հատկապես շեշտելով նրա հայրական խնամքն իր աշակերտների նկատմամբ<sup>91</sup>:

Մործորի բարձրագույն դպրոցն ավարտած և վարդապետական գավազան ստացած անձնավորություններից հայտնի է Իսրայել բարունին<sup>92</sup>, որ հի-

<sup>90</sup> «Յորժամ գծագրեցաւ մատենսս զայս,—գրված է այդ հիշատակարանում,—Յուական Հայոց ՉՃԿԷ (1318) էր, և թագաւոր Օշին, և կաթողիկոս տէր Կոստանդին, և բնակութիւնս Մործորու վանք, և տեղոյս առաջնորդ տէր Զարարիայ, և վարժապետ և ուսուցիչ Յոհաննէս՝ ստացող գրոցս, և անուն գծողիս Մխիթար» (ձեռ. № 2104, էջ 164բ):

<sup>91</sup> Այս գեղեցիկ ներբողյանը, որ պարունակում է Հովհաննես Մործորեցու մասին կենսագրական և բնութագրական տեղիներ, մեջ ենք բերում ստորև գրեթե ամբողջությամբ.

«Բեր այժմ ի մէջ անցուր զազրեւրն իմաստից՝ դայրն կորովամիա՝ զշքեղացեալն զանազան իմաստիք բանականութեանն արդասեօք, զերկրորդն Ոսկերեբան, և կամ համարժակեցայց ասել Աստուածաբան, զհայրն մեր հոգեւոր, զբարունապետն Յոհան: Որ զի թէպէտ եղեալ ոմանք և փայլեալք ի վերայ երկրի, և են, և լինին, որք համբաւեալ հոչակին ի խումբս աստուածեղէն տառից, սակալն ոմն այսու և ոմն այնու շնորհացն պայծառութեամբ յարզին ըստ առաքելոյ, և ըստ այնմ և զգովութեանն տարան մրցանակ, և կամ տանին: Իսկ նա զբովանդակն ընկալաւ իմաստ, և բոլորին եղև ընդունակ հանճարոյ: Քանզի թէպէտ մասն էր ինքն բոլորին, սակալն զհանուրցն և զմասանցն ստացաւ գիտութիւն, և ի ձեռն վարժից կրթութեան, և բնական շնորհացն աշտգութեան, նաև առաքինի և հեղ վարուցն պարկեշտութեան: Եթէ ըստ մտացն տեսողութեան և ծննդական գոյոյն ի գիտս հնարից դարձուածոց բանից՝ արագ էր բան զամենեսնան, և թէ ըստ առատ և յորդարուլիս բանին քղխողութեան, և համեղ և ախորժ ի շահ օգտութեան ի յուր լսողաց՝ ամենեցուն էր նա ըղձալի: Զորս զամենեսնան ի բաց թողեալ իրբև զյայտնիս, զմին միայն եւեթ յիշեցից, զգով հայրական խնամոցն, որ առ մեզ, զի սնոյց և վարժեաց զմեզ յոգնաբեղուն խրատութեամբ, իբրև: զորզի սիրելի, և կամ զճշմարտագոյնն ասել՝ ի վեր քան զբնական սիրոյն ցուցակութիւն, վասն զի կրկնակի տածմանն եցոյց առ իս օրինակ, մանաւանդ յայսմ իրակերտութեան զործոյ եղև նպաստ և առիթ՝ յորդորական բանիք քաջալերս տալով» (Ձերուսաղեմ, ձեռ. № 1003, էջ 119, հմմտ. Ն. Պողարչյան, Մայր ցուցակ, Գ, էջ 5):

<sup>92</sup> Մեսրոպ վրդ. Քելիշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 579:

շատակված է նաև Հովհան Քոնեցու հետ միասին «Ֆոանդաց դաւանութիւն» ընդունած 12 վարդապետների շարքում, իր հայրենակից Առաքել վարդապետի ընկերակցութեամբ («Առաքել և Իսրայէլ վարդապետք՝ ի դաւանէն Արտագու»)՝<sup>93</sup>։ Սրանք ևս Մործորեցու աշակերտներից են։ Ուրիշ տեղեկութիւններ մեր բարունապետի մանկավարժական աշխատանքի և սնուցած աշակերտների մասին չենք գտել։

Հովհաննես Մործորեցու գործունեութեանը վերաբերող բոլոր վկայութիւններն ամփոփելու համար նշենք այստեղ, որ նա, Չաքարիա եպիսկոպոսի հետ միասին, մասնակցել է 1317 թ. Ադանա քաղաքում գումարված եկեղեցական ժողովի աշխատանքներին. այդ մասին սկզբնաղբյուրներում կան ուղղակի վկայութիւններ<sup>94</sup>։ Բանասեր Հ. Քյուրդյանը չի հավատում դրանց արժանահավատութեանը՝ նշելով, որ 1317 թվականին Մործորեցին գտնվում էր Արտագում, զբաղված լինելով գրական աշխատանքներով<sup>95</sup>։ Այս պնդումը, սակայն, հիմնադրուկ է. Հովհաննես վարդապետի 1316 և 1318 ու հետագա թվականներին Մործորի վանքում լինելը վկայված է սկզբնաղբյուրներով, մինչդեռ 1317-ի մասին ոչ մի տեղեկութիւն չունենք։ Ուստի հարկ չկա տարակուսելու, որ նա, Չաքարիա եպիսկոպոսի հետ միասին, մեկնել է Կիլիկիա ու մասնակցել Ադանայի ժողովի աշխատանքներին։ Հակված ենք կարծելու, որ այս ճամփորդութիւնը չի սահմանափակվել Կիլիկիայով։ Մործորեցին, հավանաբար, ուղևորվել է նաև Ավինիոն ու տեսակցել Հովհան ԻԲ պապի հետ։ Քիչ առաջ ասացինք, որ Թովմա Աբվինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկի թարգմանութեանը նա ձեռնարկել է, ինչպես ինքն է գրում, «հրամանապարհն Հոռոմա», իսկ այդպիսի հրաման Մործորեցի վարդապետը կարող էր ստանալ՝ անձամբ տեսակցած լինելով կաթոլիկ եկեղեցու վեհապետի հետ, հոռոմեական և հայկական եկեղեցիների միավորման հետ առնչվող տեսական ու գործնական հարցերի շուրջ բանակցելու համար։ Պետք չէ մոռանալ, որ 1317 թ. կաթոլիկ եկեղեցու առաջնորդները նախապատրաստվում էին ավելի աշխույժ քարոզչական աշխատանք ծավալելու արևելյան երկրներում, այնտեղ առաքելով դոմինիկյան մի խումբ կղերականների ու ստեղծելով եպիսկոպոսական նոր թեմ։

Այս փաստերի լույսի տակ Հովհաննես Մործորեցին ներկայանում է պատմութեան դատական ատյանին, որպես մի գործիչ, որ հայրենի երկրի ազատագրման ու բարգավաճման հեռանկարները շաղկապած լինելով եվրո-

93 Մատենադարան, ձեռ. № 1361, էջ 341ա։

94 Չաքարիա և Հովհաննես Մործորեցիների անունները բացակայում են ժողովականների ցուցակից, բայց նրանց մասին տեղեկութիւն է հաղորդում Հովհան Քոնեցին. «Եւ ի մէջ եպիսկոպոսաց, որք եկեալ էին այն ժողովն ևս եղև արհեսպիսկոպոսն Չաքարիա, որ էր իշխող եկեղեցւոյն սրբոյն Թաղէսի առաքելոյն... և ի մէջ նոցին էր և մեծ վարդապետն Յոհան Մործորեցին» (Կղեմէս Գալանոս, Միարանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոռոմայ աշխարհի, Հոռոմ, 1690, էջ 517—518)։ Համանման տեղեկութիւն գտնում ենք «Պատմիչ ժողովոցն Կիլիկիոյ» աղբյուրի մեջ. «Հինգերորդ ընդհանրական ժողով,—գրված է այնտեղ,— եղև ի մայրաքաղաքին Ատանայ Կիլիկիոյ... յամի տեսան ՌՅԺԷ-ին և ի թվ. Հայոց ՉԿԶ-ին, այսու պատճառաւ, զի տղէտք և կամապաշտք ոմանք միակեացք խոռվէին զպարզամիտս իբր թէ ժողովն Սոսյ իցեր հակառակ աւանդութեանց սրբոյն Լուսաւորչին... համագումարեցին ի քաղաքն Ատանայ, ընդ որս էր և մեծ արքեպիսկոպոսն Մեծին Հայաստանի Չաքարիայ... և վարդապետն հոչակատր Յոհան Մործորեցի» (Հ. Տաշյան, Մայր ցուցակ, էջ 115)։

95 Հ. Քյուրդյան, Երիզա և Եկեղեցաց զավառ, հտ. Ա, Վենետիկ, 1953, էջ 195—196, 241։



սլական երկրներից ակնկալվող ռազմական օգնության հետ, ընդառաջ էր ընդունում կաթոլիկ եկեղեցու գաղափարական և կազմակերպչական պահանջներին, հրաժարվել էր Հայոց եկեղեցու որոշ ծեսերից ու ավանդույթներին, ընդունել պապի գերիշխանությունը և այլն: Անհեռատես ու վնասակար այս քաղաքականության գործունյա պաշտպաններից մեկը դառնալով, Մործորեցի վարդապետը, սակայն, բնավ չէր մտածում լուծարքի ենթարկել Հայոց եկեղեցու հինավուրց կազմակերպությունը, դարձնելով այն սոսկ հոռմեական եկեղեցու կամազուրկ կցորդը: Նա շատագուց էր ավելի ճկուն ու զգուշավոր քաղաքականության: Այդ մասին որոշակի տվյալներ է ունեցել Մ. Չամչյանը: Անդրադառնալով Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Թրբելի և Ջաքարիա Մործորեցու սլաքարի դրվագներին, նա հայտնում է, որ Արտազի եպիսկոպոսը, հետևելով Հովհաննես Մործորեցու հորդորներին, ի վերջո համոզվել է, որ հնարավոր չէ ընդառաջել կաթոլիկ եկեղեցու բոլոր պահանջներին, ուստի որդեգրել է ավելի զգուշավոր մի գործելակերպ. «Ջայս թուղթ Որպէլի առեալ Ջաքարիայ,—կարդում ենք Չամչյանի մոտ,—թէպէտ և ինչ ոչ անսաց նմա, բայց ըստ խորհրդոյ Յովհաննու վարդապետի Մործորեցոյ՝ որ էր առ նմա՝ սկսաւ այնուհետե զգաստութեամբ վարիլ առ արտաքս, զգուշացեալ յՈրպէլէ և յայլոց. քանզի ետես և ինքն, թէ անհնարին իմն էր միահաղոյն յայտնի կատարել զամենայն զոր կամէր կաթողիկոսն»<sup>96</sup>:

1316—1325 թթ. գիտա-մանկավարժական աշխույժ գործունեությունից հետո Հովհաննես Մործորեցին կարծես շրվում է ասպարեզից: Ոմանք ենթադրել են, թե նա կնքել է իր մահկանացուն 1326 թվականին, հավանաբար ելնելով այն փաստից, որ նրա կողմից շարադրված հիշատակարանների մեջ նշված վերջին տարեթիվը 1325-ն է<sup>97</sup>: Հայտնվել են նաև այլ կարծիքներ<sup>98</sup>: Մործորեցու մահվան ճշգրիտ թվականն այսօր էլ անհայտ է մնում, բայց վերջերս գիտական շրջանառության մեջ դրված մի հիշատակարան հնարավորություն է ընձևում նոր լույս սփռել նրա կյանքի վերջին շրջանի վրա: Մործորեցու մեզ արդեն ծանոթ աշակերտներից Իսրայել բարունին 1337 թ. Արտազի գավառում, հավանաբար հենց Մործորի վանքում, ընդօրինակել է տվել արժեքավոր նյութերի մի ժողովածու, որի մեջ կենտրոնական տեղ է զբաղում Պետրոս Արագոնացու աշխատասիրությամբ հայացված «Գիրք դատաստանաց»-ը<sup>99</sup>: Չեռագրիս հիշատակարանում այս Իսրայելի մասին ասված է, որ «Սա սնեալ և վարժեալ եղև առ ոտս ամենապարկեշտ ծերունւոյն և մաքրամիտ բարունապետին՝ որ մականունն Մործորեցի, և որ դաստիարակեալ զսա յիրկեղն աստուծոյ և ի պաշտօն եկեղեցւոյ բազում աշխատութեամբ և խնամօք փոյթ ա-

96 Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 308:

97 Այս թվականին է մաքրագրվել ու շրջանառության մեջ դրվել Թ. Արվինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» աշխատության Լ. Մործորեցու թարգմանությունը:

98 Պատշաճ է այտակղ ծանոթանալ այս հարցի մասին Ա. Սրապյանի ուսումնասիրության մեջ առկա տողերին. «Ղ. Ալիշանը և Գ. Ջարպահանյանը (Հովհ. Նրզնկացուն) համարել են մահացած 1326 թվականին, Մ. Պոտուրյանն ու Ա. Չամչյանը՝ 1332-ին: Ա. Չոպանյանը՝ 1330-ին կամ 1340-ին և այլն: Լ. Քյուրտյանը հավանական է համարում 1325—1326 թվականները» (նշվ. աշխ., էջ 31):

99 «Գիրք դատաստանաց և կանոնաց թարգմանեալ ի լաթին լեզուէ ի հայ բարբառ նպատարութեամբ Ծրա Պետրոսի ի կարգէ Դամինիկոսի, միջնորդութեամբ Առաքել վարդապետի ի մերս դարմէ՝ նոցին դպրութեան հետեոզի» (Չամչյանի վանքի մատենագրան, ձեռ. № 251, էջ 290բ):

րարեալ վասն սորա, մինչև յարբունս կատարելութեան հասուցեալ, զոր ըստ վաստակոցն և աշխատութեան նորա տէր հատուցէ յերանաւէտ կեանսն»<sup>100</sup>:

Կասկած չի կարող լինել, որ «ամենապարկեշտ ծերունի» կոչված Մործորեցի բարունապետը այս հիշատակարանի գրութեան ժամանակ, այսինքն 1337-ին դեռ կենդանի էր, բայց համրում էր իր կյանքի վերջին օրերը. ըստ այդմ նա կյանքից հեռացած պետք է լինի հավանաբար 1338 թվականին:

4. Մործորի դպրոցը Հովհաննեսից հետո.— Հովհաննես Մործորեցուց հետո խամրում է նրա ծավալած գիտա-մանկավարժական աշխատանքի շնորհիվ համբավ ձեռք բերած ուսումնական հաստատությունը: Բայց շարունակում է իր գոյությունը ևս մի քանի տասնամյակ: Հավանաբար դեռևս Հովհաննես բարունապետի կենդանության օրոք Մործորի վանք էր տեղափոխվել Ֆրանցիսկյան միաբանության անդամ Ֆրա Պոնցիուս կոչված վարդապետը<sup>101</sup>, որ ճանաչված էր որպես իմաստուն մի մարդ՝ «յոյժ հմուտ հայոց գրոյն»: «Քաջ բարունապետի» համբավ ձեռք բերած եվրոպացի այս քարոզիչը Մործորի վանքում զբաղվել է գիտա-մանկավարժական աշխատանքով, թարգմանել է մի շարք երկեր, օգնական ունենալով Իսրայել վարդապետին:

Նրա թարգմանած գործերից մեզ հայտնի են հետևյալները.

Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Յովհաննու... արարեալ մեծ վարդապետին Նիկոլայոսի Լիււացոյ:

Նշանավոր աստվածաբան ու քարոզիչ, Ֆրանցիսկյան միաբանության անդամ Նիկողայոս Լյուրացին կամ Լիրան (մհ. 1340 թ.) գրավել է Մործորում գործող գրագետների սեեռուն ուշադրությունը: Մագումով հրեա այս աստվածաբանը գրել էր հին և նոր կտակարանի բոլոր գրքերի մեկնություններ՝ լայնորեն օգտագործելով հրեական գրականության տվյալները: Նրա գրվածքները մի քանի դար շարունակ կաթոլիկ աշխարհում ճանաչված էին որպես անգերազանցելի ձեռնարկներ: Եվ ահա 1341 թվականից մի քանի տարի առաջ, այսինքն հեղինակի կենդանության օրոք<sup>102</sup> Զաքարիա Կաթիսկոպոսի հանձնարարությամբ և Իսրայել վարդապետի աջակցությամբ Ֆրա Պոնցիուսը հայերեն է թարգմանում Լիրայի «Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Յովհաննու» ծավալուն աշխատությունը:

Այս թարգմանության ձեռագրերից մեզ հայտնի են երեքը. մեկը մեր մատենադարանի № 6903 ձեռագիրն է, արտագրված նորավանքում, Ղուկաս գրչի

<sup>100</sup> ԽԵՐՈՒՅ ՎՐԳ. ՔԵՂԻՂՅԱՆ, ՅՈՒՑԱԿ, էջ 579:

<sup>101</sup> Ֆրանցիսկյան այս վարդապետի անունը հայերեն ձեռագրերում տառադարձված ենք գտնում Պօնցիոս, Պօնցիուս, Պօնցի, Ապօնց այլազան ձևերով: Հավանաբար Bonifacius անվան համառոտությունն է, կամ էլ Boëtius-ի աղճատ ձևը: Պոնցիուսն ըստ երևույթին, Արապոնացի է եղել. այդպես ենք կարծում հաշվի առնելով այն փաստը, որ «Յովհաննու աւետարանի մեկնութեան» սրա կատարած թարգմանության ձեռագրերից մեկում, որ դարիս սկզբներին խիստ բայրաչված վիճակում պահվելիս է եղել Տաթևի վանքում, տվյալ է եղել թարգմանչի Արապոնացի լինելու մասին (Ս. ԵՂԱՆՅԱՆ, Տաթևի գրատան ձեռագրերը, «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 423):

<sup>102</sup> Մատենադարանի № 6903 ձեռագիրը ասացինք, որ ընդօրինակված է 1341 թ., Ղուկաս գրչի կողմից, նորավանքում: Այդ փաստից դժվար չէ հետևցնել, որ թարգմանությունը կատարվել է 1341-ից առնվազն 2—3 տարի առաջ: Այդքան, դուցե և ավելի ժամանակ էր հարկավոր թարգմանության օրինակներից մեկը Արտազի ունիթորական միջավայրից դուրս բերելու, Մյունխեն փոխադրելու և ընդօրինակելու համար:

կողմից 1341 թ.<sup>103</sup>, մյուս ձեռագիրը Մատենադարան է մուտք գործել վերջերս ու գրանցվել 10539 համարի տակ, իսկ վերջինը՝ Երուսաղեմի № 789 ձեռագիրն է, որ շնայած ուշ ժամանակի ընդօրինակություն է (1740 թ.), բայց արժեքավոր է ամբողջական ու լրիվ լինելով: Այս երեք ձեռագրերի մեջ առկա տվյալների համադրությամբ ստորև տալիս ենք քննարկվող բնագրի խորագիրը, հիշատակարանը և միջին մասերում եղած ընծայական պարբերությունը, որի մեջ կարևոր տվյալներ կան Զաքարիա եպիսկոպոսի և նրա ազգակիցների մասին

Ամբողջական խորագիրն է.

«Մեկնութիւն սրբոյ աւետարանին որ ըստ Յովհաննու, ի խնդրոյ և ի հարկեցուցիչ հրամանէ արհիական գլխոյն և մեծ դիտապետին տէր Զաքարիայի՝ սպասաւորի սուրբ առաքելոյն Քաղեսի, թարգմանեալ ի լատին գրոց ի մերս բարբառ, արարեալ մեծ վարդապետին Նիկոլայոսի Լիրացոյ, որ ի կարգէ սրբոյն Յրանչիսկոսի»<sup>104</sup>,

Թարգմանության մասին պահպանվել են այսպիսի հիշատակագրություններ.

ա. «Կատարեցաւ մեկնութիւն, որ ըստ աւետարանին Յոհանու ի վերայ բնաբանիս ի ձեռն վսեմախոհ վարդապետի Յրա Պօնցի և քերթելով քաջ հոտորի Իսրայէլի. որք ընթեռնուք և կամ օրինակէք յիշեցէք յաղօթս»:

բ. «Արդ, թարգմանեցաւ գիրքս այս ի լատին լեզուէ ի հայս հրամանաւ մեծ դիտապետին և արհիական գլխոյն, աթոռակալի սուրբ առաքելոյն Քաղեսի արժանաւոր եպիսկոպոսի տէր Զաքարիայի, զոր բազում ըզծիք և սիրայեղձ փափազանօք թարգմանեալ ետ զսա ի նեղ և ի դառն ժամանակի, ի լուսաւորութիւն Հայաստանեայցս եկեղեցոյ և խրախութիւն և ի վայելումն մանկանց Սիոնի, զոր թարգմանեաց քաջ բարունապետն Յրա Պօնցիուս կոչեցեալ, միջնորդելով վարդապետին Իսրայէլի»<sup>105</sup>:

Բուն մեկնությունը օժտված է նախադրությամբ, որի վերջում թարգմանիչ Յրա Պոնցիուսը կամ նրա հայ գործակից Իսրայել բարունին՝ Զաքարիա Մործորեցու գովքն է հյուսում, նրա անունն ստուգաբանելով «յիշող տեառն» կամ «օգնութիւն տեառն» բառերով: «Օգնութիւն տեառն,—գրում է նա,—վասն առատամիտ և մշտաձիր տրոցն, որ առ աղքատս և կարօտեալս, որք են անդամք Քրիստոսի և վասն պահպանութեան և խնամակալութեան իւրոցն հնազանդելոց». այստեղ մեծարվում է պարոնտեր Զաքարիան, շեշտվում նրա ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ ավատատեր լինելու հանգամանքը: Այնուհետև ներբողյան հիշեցնող այս հատվածի հեղինակը փորձում է որոշել իր մեկենասի բացառիկ տեղը հայ եկեղեցու պատմության մեջ, նրա գործունեու-

103 Ձեռագիրը մինչև առաջին աշխարհամարտի դժնդակ տարիները պահվելիս է եղել Գարշամբի Ս. Ստեփանոս նախավկայի վանքում՝ անաղարտ վիճակում, վերջում ունենալով հիշատակարան թարգմանության և ընդօրինակության հանգամանքների մասին: Ամբատ Տեր-Ավետիսյանը 1904 թ. նկարագրել է ձեռագիրը և արտագրել 424ա—424բ էջի վրա եղած հիշատակարանը: Ձեռագիրը հետագայում տարվել է Քավրիզ, զրկվել սկզբի ու վերջի թերթերից և այդպես թղկտված վիճակով բերվել Մատենադարան:

104 Խորագիրը տրվում է ըստ մատենադարանի № 10539 ձեռագրի:

105 Ս. Տեր-Ավետիսյան, Ձեռագիրը նախավկայի վանաց Գարշամբի Ս. Ստեփանոս, որ ի Գողթն (Յուցական այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածուում):

թյունն անմիջապես շաղկապելով Քաղեոս առաքյալի և Գրիգոր Լուսավորչի հետ: Լուսավորիչը՝ Քաղեոս առաքյալի «որդիացեալը»՝ «ընդարձակեալ տարածեաց» ճշմարիտ հավատը Հայաստանում, — գրում է նա, — իսկ Զաքարիան այդ «ճշմարիտ հավատի» (այսինքն կաթողիկ դավանանքի) պայծառացնողն է նոր ժամանակներում, ուստի որդին է հենց Գրիգոր Լուսավորչի<sup>106</sup>:

Այս փառաբանությունները ծլարձակում են պարարտ այն հողի վրա, որ ներբողյանի հեղինակը հակիրճ բնորոշել է այսպիսի տողերով. «Տէրս Զաքարիա զինքն նուստ և հնազանդ ունի և հրամանակատար յաջորդին Պետրոսի»<sup>107</sup>:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում № 10539 ձեռագրի մի մանրանկարը, որի արժեքն ավելի նշանակալից կլիներ, եթե տվյալներ լինեին պարզելու, որ այն արտագրված է թարգմանական սույն բնագրի նախօրինակից: Այստեղ, էջմիածնի մայր տաճարի ֆոնի վրա, նկարված է Քաղեոս առաքյալը՝ նստած դիրքով. մեկ ձեռքին զավազան, մյուսին՝ ավետարան. Ս. սեղանի մի կողմում Գր. Լուսավորիչն է, նույնպես նստած և զավազան ու ավետարան բռնած: Մի վեղարավոր նրա բոսիկ ոտքն է համբուրում, իսկ գահի հտնամասում կանգնած են երեք այլ հոգևորականներ. սեղանի առջև ծնրադիր աղոթում է կաթողիկոսական ղզեստավորում և կարմիր վեղար ունեցող մի կղերական, որ հավանաբար Զաքարիա արքեպիսկոպոսն է, նրա մոտ կանգնած են երկու վեղարավորներ: Նկարված է նաև լատինացի մի վարդապետ, որ երկրպագում է արքեպիսկոպոսին (սրա պատկերի վերին մասում գրված է «Պատկերս լատինացուց վարդապետին է, որ արարեալ է գիրքս»): Ըստ այդմ կարող է Ֆրա Պոնցիուսի նկարը լինել): Բացի այդ, զանգակատնից ներքև մի խուց է նկարված, որի մեջ՝ մի վարդապետ, կից ունենալով այսպիսի մակագրություն. «վարդապետ մի տեսի ի մէջ պատուհանին, նստում է և կարգում է»<sup>108</sup>:

Ֆրա Պոնցիուսի ջանքերով թարգմանված է նաև Լյուրացու մեկնություններից մեկ ուրիշը՝ «Մեկնութիւն քղրոյն Պօղոսի, որ առ Երաչեցիսն... Նիկոլայոսի Լիւրացոյ»: Այս աշխատութեան ընդարձակ խորագրի վերջում բառացի ասված է, որ թարգմանությունը կատարվել է «ի ձեռն վսեմախոհ վարդապետի Ֆրա Պօնցի, լադին լեզուէ ի հայս»<sup>109</sup>:

Պոնցիուսի աշխատասիրութեամբ թարգմանված մյուս երկը ֆրանցիսկյանների մեծ գաղափարախոս Բոնավենտուրայի (1221—1274) գրած սուրբ Ֆրանցիսկոսի վարքն է, «Մեծի կառղինաբին և անյախք վառղապետին սուրբ Եկեղեցոյն Հոռմա Բոնավենդուրէ վասն վառուց սրբոյն Ֆրանցիսկոսի»:

106 Բառացի ասված է այսպես. «Զոր և զճշմարտութիւն այսմ հաւատոյս որդիացեալն նմա (Քաղէոսի առաքելոյն) Լուսաւորիչն սուրբ Գրիգորիոս ընդարձակեալ տարածեաց, բնդ որս և զայն հաւատոյ ճշմարտութիւն և զամենայն բարեկարգութեան ուղղութիւն ի վերջին դարս և լետին ժամանակս տէրս մեր Զաքարիաս երկազան վաստակօք նորոգեալ պայծառացոյց: Եւ զի սուրբն Գրիգոր կոչի որդի սուրբ առաքելոյն Քաղէոսի՝ վասն հետեման նորին, նմանապէս և տէրս մեր Զաքարիաս առձայնի որդի սրբոյն Գրիգորի» (Երուսաղեմ, ձեռ. № 789, էջ 148):

107 Նույն տեղում, էջ 149:

108 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 10539, էջ 2 ր:

109 Մատենադարան, ձեռ. № 1412, էջ 2ա—75բ (նույնն է նաև սրանից ընդօրինակված № 1411 ձեռագիրը):

խորագրով: Դրա հիշատակարանում կարդում ենք. «Թվ. 22Ը (1339) թարգմանեցա[ւ] ձեռամբ Ապօնցի Ֆրա մնուրի»<sup>110</sup>:

Բացի մեկնողական երկերից, Ֆրա Պոնցիուսը թարգմանել է նաև ծիսական մատյաններ, որոնցից հայտնի է «Գիրք պատարագի» կոչվածը: 1381 թ. Բուլոնիայում իրականացվել է այս թարգմանության մի ընդօրինակություն, որի հիշատակարանում կարևոր տվյալներ կան գրանցված թարգմանչի մասին. «Որ էր թարգմանած ի լաթին գրոյն ի հայկաչգան բառս մեր, զոր բացատրեալ էր և մեկնեալ Ֆրա Պօնցիոսն՝ ի կարգէն սրբոյն Ֆրանցիսկոսի՝ իմաստուն վարդապետ և յոյժ հմուտ հայոց գրոյն»<sup>111</sup>:

Այսպիսով, Հովհաննես Մործորեցու, Ֆրա Պոնցիուսի և նրանց գործընկերների շանքերով Մործորի բարձրագույն դպրոցը XIV դարի առաջին հիսնամյակում գիտա-մանկավարժական աշխատանքների կարևոր միջավայր դարձավ: Հատկապես նշանակալից եղավ ուսումնա-գիտական այդ հաստատության դերը եվրոպական սքոլաստիկայի կարկառուն ներկայացուցիչների՝ Նիկողայոս Լյուրացու, Թովմա Աքվինացու, Բոնավենտուրայի և այլ հեղինակների կարևոր երկերի հայերեն թարգմանություններն իրականացնելու մարզում:

Դպրոցի մայրամուտն սկսվեց 1340-ական թվականներից. դոմինիկյան բարոզիչները, որ հաստատվել էին Քոնայում և ստեղծել իրենց բարձրագույն դպրոցը, շուտով կարողանում են իրենց շուրջ համախմբել կաթոլիկության հակված բոլոր հայ գործիչներին, որոնց թվում նաև ֆրանցիսկյանների ազդեցության տակ գտնվող ծործորեցիներին: Ֆրա Պոնցիուսից հետո այդ դպրոցը գրեթե դադարում է գիտա-մանկավարժական մտքի կենտրոն լինելուց: Մեծ հավանականությամբ Քոնա են տեղափոխվում Մործորի դպրոցի վարդապետները՝ Իսրայել բարունին և ուրիշներ, ինչպես և դպրոցի շուրջ համախմբված աշակերտների մեծ մասը: Որոշ ժամանակ Արտագի շրջանի հայ կաթոլիկների մշակութային գործունեության կենտրոն է դառնում Մակու գյուղաքաղաքը՝ հայ իշխանների նստոցը՝ Սուրբ Աստվածածնի անվան իր մենաստանով: Այստեղ՝ «ի մենաստանիս ի Մակու, ընդ հովանեալ սուրբ Աստուածածնի» XIV դարի 80-ական թվականներին գործում է «իմաստուն հոտոր» կոչված Կարապետ բարունապետը, օգնական ունենալով Մատթեոս անունով մի վարդապետի<sup>112</sup>: Մեկ տասնամյակ հետո՝ 1392 թ., նույն Մակու գյուղաքաղաքում որպես բարունապետ հիշատակվում է արդեն վերահիշյալ Մատթեոսը, իսկ 1406 թվականին՝ Մխիթարիչ բարունապետը<sup>113</sup>: Սրանց մանկավարժական և մատենագրական աշխատանքների մասին տեղեկությունները պակասում են: Հայտնի է, որ նույն այս տարիներին Մակվի անառիկ բերդում ապահով պահելու համար Սսից բերում են 50 լիտր ձեռագիր մատյաններ, բայտ երևույթին դրանց մեջ կային նաև միարարական շարժման հետ առնչվող գրքեր ու գիվանական փաստաթղթեր<sup>114</sup>:

110 Մատենադարան, ձեռ. № 1736, էջ 141ա:

111 M. A. Oudenrijn, Նշվ. աշխ., էջ 256—257:

112 Սրանց հանձնարարությամբ 1383 թ. այստեղ իրեն «սպասար բանի» կոչող Սարգիսը ընդօրինակում է Բարթոլոմեոս Մարաղացու Քարոզգիրքը (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2259, էջ 297բ, «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 545):

113 «ԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 61:

114 «Հայագատում», Ա, էջ 123:

Մակվի հայ կաթողիկոսների գիտա-մանկավարժական գործունեության մասին առկա տվյալներն ամբողջացնելու համար անհրաժեշտ է նշել, որ Մործորի վանքը որպես վանական հաստատություն գոյություն է ունեցել ընդհուպ մինչև XVII դարի վերջերը: Այլ առիթով նշել ենք արդեն, որ իրեն Մործորեցի էր կոչում Գրիգոր անունով կաթողիկոս այն վարդապետը, որ 1670-ական թվականներին թարգմանություններ է կատարել, տաղեր ու կրոնական երգեր հորինել: Մործորի անվան վերջին այս հիշատակությամբ էլ ավարտվում են մեր գիտելիքները միջնադարյան Հայաստանի մշակութային այս հաստատության մասին: Վանքի ավերակները այսօր էլ կանգուն են Մակվի շրջանի Բարոն գյուղից հարավ:

\* \* \*

Արտազի հայկական իշխանության ու նրա մշակութային կենտրոնի պատմությունը նվիրված այս ակնարկին վերջակետ դնելուց առաջ եզրափակիչ խոսքի կարիք է զգացվում:

Հայոց պատմության Արշակունյաց և մարզպանական ժամանակաշրջաններում կենտրոնական դիրք զբաղող Արտազի գավառում, երկարատև ընդմիջումից հետո, XIII դարի կեսերին վերականգնվում է հայկական կիսանկախ իշխանությունը: Արտազի հոգևոր և աշխարհիկ ավատատերերը, գլխավորությամբ Թադեոս առաքյալի նորաստեղծ եկեղեցական թեմի պարոնտերևպիսկոպոսների, կարողանում են ի շահ իրենց գերդաստանի օգտագործել մոնղոլների և Կիլիկյան հայկական թագավորության միջև կնքված դաշնագրով քրիստոնյա եկեղեցիների նկատմամբ մոնղոլների կողմից խոստացված բարյացակամ կեցվածքը: Ընդառաջելով կիլիկյան հայ արքունիքի և կաթողիկոսարանի եվրոպական կողմնորոշմանն ու լատինամետ քաղաքականությանը, Արտազի հայ իշխողները դառնում են հայ ժողովրդի ազատագրական իղձերի իրականացման առումով վնասակար ու անհեռատես այդ քաղաքականության կամակատարները Մեծ Հայքում, և քայլ առ քայլ զիջումներ կատարելով, ի վերջո դավաճանում են ազգային ավանդություններին և ընդունում կաթողիկոսական եկեղեցու դավանանքը:

Նրանց մշակութային կենտրոնը դարձած Մործորի վանքում, Հովհաննես Մործորեցի բարունապետի ու նրա հետևորդների շանքերով, դրվում են հայ ունիթորական գրականության հիմնաքարերը. լատիներենից հայերեն են թարգմանվում նիկողայոս Լյուրացու, Թովմա Աբվիհնացու, Բոնավենտուրայի և այլ հեղինակների մի շարք երկեր, ստեղծվում են ինքնուրույն աշխատություններ՝ ի պաշտպանություն կաթողիկոսական եկեղեցու դավանաբանական սկզբունքների:

Մեծ Հայքի աշխարհիկ ու հոգևոր տերերը, միասնական ճակատ ստեղծելով, անհաշտ պայքար են ծվալում ինչպես հայ ունիթորների, այնպես էլ Եվրոպայից Արևելք առաքվող կաթողիկոս քարոզիչների դեմ՝ ի դեմս ազգային հնամենի ավանդություններին կառչած հայոց եկեղեցու տեսնելով ազատագրական պայքարի դժվարին ճանապարհն ընտրած ժողովրդի համախմբմանը սատարող մի կազմակերպություն:

Արտազի հայ տերերի անհեռատես քաղաքականության դեմ ծավալված պայքարը, որ գլխավորում էին Սյունյաց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները, տասնամյակներ է տևում: Թադեոս առաքյալի մեծ թեմի առաջնորդական

պաշտոնը բռնազրավում է Արտազի կաթողիկ տերերի գերդաստանից. նրանց հոգևոր իշխանությունը սահմանափակվում է միայն Մակվի շրջակայքով, տարածվելով միայն կաթողիկ դավանանք ընդունած հայերի վրա: Օտար բռնակալների դեմ մղված անհավասար մարտերում ջլատվում է նաև Արտազի հայ իշխանների ռազմական ուժը: Ապավինելով Մակվի ամրություններին, նրանք հաջողությամբ վանում են շատ զորեղ թշնամիների ձեռնարկած գրոհներ (Իթիվս սրոց նաև Լանկ-Քամուրի հրոսակներին), բայց ի վերջո, կորցնելով իրենց տիրույթի ծայրագավառները, նրանք ամփոփվում են Բերդադաշտի տարածության մեջ, և կորցնում իրենց քաղաքական իշխանության վերջին պատվար Մակվի բերդը՝ 1326 թվականին:

Արտազի շրջանի կաթողիկ դարձած հայ բնակչությունը, կտրված ազգային ավանդություններից և հայրենի մշակույթի հետ ունեցած կապերից, արմատախիլ ծառի նման՝ թոշնում է ու շորանում: Այդ համայնքի խղճուկ մնացորդները XVII դարի վերջերին մահմեդականություն են ընդունում, մի ավելորդ անգամ հաստատելով այն հշմարտությունը, որ «ծառ արմատով է ծառ, սուն հիմամբ է սուն»:

Л. С. ХАЧИКЯН

## АРТАЗСКОЕ АРМЯНСКОЕ КНЯЖЕСТВО И ЦОРЦОРСКАЯ ШКОЛА

(Р е з ю м е)

В середине XIII в. в Артазской области Васпуракана восстанавливается монастырь апостола Фаддея (Тадеоса), создается новая армянская епархия, границы которой охватывают ряд районов Васпуракана и Персармении, а также столицу ильханства Тавриз. Армянскому феодальному роду, дававшему епископов для этой епархии, удается до 20-х годов XIV в. овладеть всем Артазом и, сосредоточив в своих руках как духовную, так и светскую власть над этой областью, играть видную роль в политической и культурной жизни Армении.

Автор статьи вводит в научный обиход новые материалы и на их основе показывает, что армянские епископы Артаза, в особенности архиепископ Закария (1298—1347 гг.), становятся в центральной Армении приверженцами политики сближения с латинской церковью, проводимой армянскими католикосами в Киликии и, шаг за шагом делая уступки католической церкви, в конечном итоге отступают от национальных традиций и становятся исполнителями воли латинских миссионеров, распространивших католичество в восточных странах.

В статье показано, что Артазское княжество просуществовало вплоть до 1426 года, когда Искандар Кара-коюнлу захватывает у армянских князей, уже принявших католичество, их крепость Маку.

Вторая часть статьи посвящена истории Цорцорского монастыря, ставшего культурным центром армянского Артазского княжества. Приведены данные, касающиеся научной деятельности Закария и Ованнеса

Цорцоречи, и показана роль Цорцорской школы в переводе на армянский язык целого ряда произведений выдающихся представителей европейской схоластики — Фомы Аквинского, Николая Лиры, Бонавентуры и др.

L. S. KHATCHIKIAN

## LA PRINCIPAUTÉ ARMÉNIENNE D'ARTAZ ET L'ÉCOLE DE TSORTSOR

### (R é s u m é)

Au milieu du XIII siècle le monastère de l'Apôtre Thaddée (Thadéos) de la région d'Artaz du Vaspourakan fut restauré et un nouveau diocèse fut créé, dont les frontières comprenaient un certain nombre de provinces du Vaspourakan et de l'Arménie Persane, ainsi que Tauris, la capitale de l'Ilkhanie. Dans les années 20 du XIV siècle la maison féodale arménienne d'où sortaient les évêques de ce diocèse, réussit à s'emparer de tout l'Artaz, à concentrer dans ses mains le pouvoir spirituel et laïc et à jouer un rôle important dans la vie politique et culturelle de l'Arménie.

L'auteur de l'article fait connaître au monde scientifique des documents nouveaux et s'y appuie pour montrer que les évêques arméniens d'Artaz et surtout l'archevêque Zakharie (1298—1347) deviennent en Arménie centrale les partisans de la politique de rapprochement avec l'Eglise latine que menaient les catholicos arméniens de Cilicie et en faisant graduellement des concessions à l'Eglise latine en arrivent enfin à renoncer aux traditions nationales et deviennent les exécuteurs de la volonté des missionnaires latins qui propageaient le catholicisme dans les pays orientaux.

L'article montre que la principauté d'Artaz exista jusqu'en 1426, quand Iskandar Kara-Kouyolou conquiert la forteresse de Makou des princes arméniens devenus déjà catholiques.

La seconde partie de l'article est consacrée à l'histoire du monastère de Tsortsor qui devint le centre culturel de la principauté arménienne d'Artaz. Des données concernant l'activité scientifique de Zakharie et de Hovhannes Tsortsoresi sont citées qui montrent le rôle de l'école de Tsortsor dans la traduction en arménien des ouvrages de représentants éminents de la scholastique européenne. Thomas d'Aquin, Nicolas de Lyra, Bonaventure, etc.



ՀՌԻՓՍԻՄԵ ՁԱՆՓՈՒԱԳՅԱՆ

ՎՈՒԳԱՅԻ ԱՓԻՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ Բոլզար քաղաքը՝ կառուցված Վոլգա և Կամա գետերի հատման վայրում, հանդիսանում էր համանուն թաթարական պետության մայրաքաղաքը: Այն գտնվում էր արևելքի և արևմուտքի տարանցիկ մայրուղիների խաչմերուկում և հայտնի էր որպես Արևելյան Եվրոպայի խոշորագույն առևտրական կենտրոններից մեկը: Նրա առավել բարգավաճման շրջանը եղել է XIII—XIV դարերը:

Բոլզար քաղաքը Արևելյան Եվրոպայի վաճառաշահ քաղաքներից էր: Այնտեղ կատարվում էին առևտրական մեծ գործարքներ, փոխանակվում Հեռավոր ու Մերձավոր Արևելքից և Արևմտյան Եվրոպայից բերված ապրանքները հյուսիսային թանկարժեք մորթիների հետ: Քաղաքի մեծահարուստ վաճառականները իրենց ձեռքում էին պահում այդ մորթիների (սկյուռ, կզաքիս, սամույր) շատ շահավետ առևտուրը<sup>1</sup>:

Համաձայն պատմական և հնագիտական տվյալների, այդ նշանավոր քաղաքի առևտրական գործարքներին մասնակցում էին նաև Հայաստանից եկած վաճառականներ: Ինչպես ցույց են տալիս հնագիտական նյութերի ուսումնասիրությունները, Բոլզար քաղաքի շուկայում հայ վաճառականները պատահական հյուրեր չէին: Նրանք վարում էին անընդմեջ և կազմակերպված ուռևտուր: Հայաստանից հյուսիս էին տանում զանազան գործվածքներ, գորգեր, մետաղի իրեր, զենքեր և դրանց փոխարեն Հայաստան էին բերում հյուսիսի հանրահոշակ մորթիները<sup>2</sup>:

Համաձայն միջնադարում գոյություն ունեցող սովորության, հեռավոր երկրներից եկած վաճառականներին չէր թույլատրվում իջևանել քաղաքի ներսում. նրանք կարող էին ապաստանել քաղաքի պարիսպներից դուրս կամ մոտակա գյուղերում: Տարիների ընթացքում այդ ժամանակավոր հանգրվանները վեր են ածվում առևտրականների մշտական բնակավայրերի:

Ահա այդպիսի մի իջևանի ընդարձակումով, առևտրական գաղութ-ավան է ստեղծվում հայ վաճառականների կողմից Բոլզար քաղաքի պարիսպներից դուրս: Այս ավանի հնագիտական պեղումները, որը կատարվեց Մոսկվայի հնագետների կողմից 1946—1948 թվականներին, հարուստ նյութ է տվել: Համաձայն պեղման արդյունքների, այդ ավանը մարդաբնակ է եղել դեռևս IX

<sup>1</sup> А. П. Смирнов, Волжские булгары, Труды Государственного исторического музея (ГИТ), вып. XIX, М., 1951.

<sup>2</sup> А. П. Смирнов, Армянская колония города Болгар, Материалы и исследования по археологии СССР (МИА), вып. 61, էջ 330—350.

դարում<sup>3</sup>: Այն գոյատևել է մինչև XV դարի կեսերը, իր ծաղկման շրջանն ապրելով XIII—XIV դարերում:

Հայկական գաղութի պեղումները վարող հնագետների ուշադրության կենտրոնում էին գտնվում «հունական դահլիճ» կոչված քարաշեն շենքի մնացորդները: Պարզվել է, որ այդ դահլիճը եղել է հայկական երկհարկանի եկեղեցի, կառուցված XIV դարում, նախկին փայտածածկ փոքրիկ եկեղեցու փոխարեն: Նրա շուրջը եղած դամբարաններից (պեղված են 113 դամբարան) դուրս եկած քիչ, բայց ուշագրավ նյութերը (գործվածքներ, զարդեր) ցույց են տալիս, որ ավանի բնակիչները իրենց կենցաղով ու կուլտուրայով կապված են եղել Հայաստանի հետ: Պեղված գանգերի մարդաբանական ուսումնասիրությունները պարզել են, որ դրանց մեծ մասը պատկանում են արմենոյիդ տիպին, այսինքն այդ վայրում թաղված են եղել հայեր:

Պեղումներից ստացված նյութերը միակը չեն, որ վկայում են Վուլգայի ափին գտնվող այդ նշանավոր քաղաքում հայ բնակչության գոյության մասին. նախկին Մեծ Բուլգար քաղաքի տերիտորիայի վրա ուսական Ուսպենսկի վանքի կառուցման կապակցությամբ դեռևս 1712 թ. երեց Միխայիլովը կազմում է այդ վայրերի հնությունների ցուցակը, ուր հիշատակում է նաև հայկական արձանագրություններ կրող տապանաքարեր: 1722 թ., երբ Պետրոս Մեծը այցելում է Բուլգար քաղաքի հնավայրը, կարգադրում է ի մի հավաքել տեղում գտնվող բոլոր արձանագիր քարերը (արաբատառ և հայերեն), հանել նրանց պատճենները, թարգմանել և ուսումնասիրել:

Հայկական արձանագրությունները, որ ուսերենի էր թարգմանել հայագրի Իվան Վասիլևը, առաջին անգամ հրատարակել է Ի. Ապեխինը իր ճանապարհորդական օրագրում<sup>4</sup>:

XIX դարի ընթացքում արդեն հայերեն այս արձանագրությունները, մի քանի նոր հայտնաբերվածների հետ միասին, ուսումնասիրվել և հրատարակվել են եվրոպական և ուսական գիտնականների կողմից: 1919 թ. Պետերբուրգի նյութական կուլտուրայի պատմության ուսական ակադեմիայի աշխատակից Բ. Վ. Միլլերը գործուղվում է Կազան և Բուլգար՝ տեղում եղած հայկական արձանագրությունների հաշվառման համար: Նա իր երկամսյա աշխատանքի արդյունքները շարադրում է «Об армянских надписях в Болгарах и Казани»<sup>5</sup> հոդվածում, որտեղ ի մի են բերված նաև մինչ այդ եղած հայերեն արձանագրությունների բոլոր հրատարակությունները. այստեղ նրշված են նաև այդ գործի բոլոր երախտավորների անունները:

Բուլգար քաղաքի շուրջը գտնված և գիտությանը հայտնի 7 հայկական արձանագրություններից, այժմ պահպանվել են միայն 4-ը (ավելի ճիշտ՝ 3-ը և մեկի կես մասը): Նրանցից մեկը, ամենից լավ պահպանվածը և ընթեռնելին, որը փորագրված է երկու մետր բարձրություն ունեցող քարի վրա (№ 3), այժմ գտնվում է Կազանի պետական համալսարանում, ուր տեղափոխվել է 1915 թ. Կազանի հնագետների և ազգագրագետների ընկերության ջանքերով:

<sup>3</sup> А. П. Смирнов, Армянская колония города Болгар, էջ 331:

<sup>4</sup> И. Лепехин, Дневные записи путешествия, СПб, 1771.

<sup>5</sup> «Известия Российской Академии Истории Материальной культуры» (ИРАИМК), 4. IV, Л., 1925, էջ 65—80:

Սրկու արձանագրություն գտնվում են Կազանի գավառագիտական թանգարանում (№№ 6, 7), իսկ շորրորդը՝ Բոլգար քաղաքի հնավայրում (№ 5):

Հայկական արձանագրությունների առաջին գիտական ուսումնասիրությունը կատարել է ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը, որին Վասիլևի ձեռքով կատարած արձանագրությունների արտագրությունն ու թարգմանությունը ուղարկել է կոմս Պատոցկին՝ արաբագետ Կլապրոտի խնդրանքով (այս վերջինս հրատարակել է Բոլգար քաղաքում գտնված 40-ից ավելի արաբական տապանաքարերի արձանագրություններ):

Սեն-Մարտենը<sup>6</sup> 1831 թ. հրատարակում է շորս հայկական արձանագրություն և նրանց ֆրանսերեն թարգմանությունները: Իր հոդվածի առաջաբանում գիտնականը հիշատակում է բնագիրն արտագրողի հայոց լեզվին ոչ հմուտ տիրապետելու հանգամանքը և թույլ տված մեծ սխալները: Արձանագրությունները բերվում են այնպես, ինչպես նրանք հրատարակված են ֆրանսիացի հայագետի կողմից:

№ 1. Թիվն ԹՃՁԶ (986—1537) հանգիստ ապավահարին  
իմ այրոյ քաղաք եմ պատրոնիկ և մարինոսինյ  
արոսի ո վայ գայ քաղաք իմ աստվածասերուկ:

Խիստ աղավաղված այս տառախմբերը Սեն-Մարտենը թարգմանում է ֆրանսերեն այսպես.

«Այս քարը դրված է այս հայտնի քաղաքում հանգուցյալ հայ նազարոսի և նրա կնոջ Մարինոսի վրա թվկ. 986—1536»:

Սեն-Մարտենը<sup>7</sup> նախ և առաջ նշում է այս թվագրության անհավանականությունը, քանի որ XVI դարում Բոլգար քաղաքն արդեն ավերված էր և գոյություն չուներ: Այս արձանագրությունն այժմ գոյություն չունի և մեզ հայտնի է միայն գրականությունից, ուստի ստուգել և ճշտել այն հնարավոր չէ, սակայն համեմատելով արձանագրության տարեթիվը մյուս արձանագրությունների տարեթվերի հետ, թերևս կարելի է ենթադրել, որ այս դեպքում էլ պետք է լինի էՃՁԶ, այսինքն՝ 786—1337:

Սեն-Մարտենի հրատարակած մյուս արձանագրությունն այսպիսի տեսք ունի<sup>8</sup>.

№ 2. Այս հանգիստապանս Յովանիսին  
Որդի Վարդանին թիվ ԵՃՄԷ

Նորից տարեթվի ընդօրինակման մեջ սխալ է կատարված, էՃՄԷ (1308)-ի փոխարեն կարդացված է՝ ԵՃՄԷ (1108), որ չէր կարող լինել: Առաջարկում ենք № 2 արձանագրությունը կարդալ.

<sup>6</sup> M. Saint-Martin, Note sur les Inscription arméniennes de Bulgharie, Journal Asiatique, 5. VIII, Paris, 1831, էջ 503—506.


<sup>7</sup> Նույն տեղում, էջ 504:

<sup>8</sup> Նույն տեղում:

ԱՅՍ ԶԱՆԳԻՍՏ [ՊԱՐՈՆ] ՅՈՎԱՆԻՍԻՆ  
ՈՐԳԻ ՎԱՐԳԱՆԻՆ Թ[ՎԻՆ] ԷՃԾԷ (1308):

Երրորդ արձանագրությունը այն տապանաքարն է (նկ. № 1), որն այժմ գտնվում է Կաղանի համալսարանում: Այս արձանագրությունը հետազայում հրատարակված է մի քանի անգամ: Սեն-Մարտենի ստացած ընդօրինակությունը անփույթ է կատարված, կոպիտ սխալներով. կրկնվում է տարեթիվի արտագրության սխալը՝ ՌՃՁԴ: Բարեբախտաբար Սեն-Մարտենը իր ձեռքի տակ ունեցել է նույնի ավելի բարեխիղճ մի պատճենը՝ կատարված գլխադրերով: Այդ պատճենը, որ նա ստացել էր արևելագետ Խ. Ֆրենից (Պետերբուրգ), հնարավորություն է տվել ճշտել տարեթիվերը ինչպես այս, նույնպես և վերը բերված արձանագրություններում:

Արձանագրության ճշգրտված տարեթիվն է՝ էՃՁԴ (1335):



նկ. № 1.


Այս արձանագրությունը, տարբեր ընդօրինակությունների հիման վրա, վերահրատարակված է 1838 թ. Մ. Բրոսսեի կողմից<sup>9</sup>: Այդ ընդօրինակություններից մեկը կատարված է 1836 թ. Կաֆտաննիկովի ձեռքով, իսկ մյուսը՝ 1819 թվականին՝ փոխգնդապետ Պոտտի: Այս պատճենները նույնպես զերծ չեն սխալներից, հատկապես այն մասերում, որտեղ հատուկ անուններ կան: Այդ սխալները Բրոսսեն ճշտել է միայն 1861 թվականին ավելի հաջող պատճեն ձեռք բերելու շնորհիվ, ուր սակայն, թվականը պատճենավորված է ոչ ճիշտ՝ «Թվ ՁՁԴ»<sup>10</sup>, մինչդեռ պետք է լինի «Թ էՃՁԴ» (նկ. № 2): Առաջարկում ենք հետևյալ ընթերցումը.

№ 3. ԱՅՍ Է ԶԱՆԳԻՍՏ Ա[ՍՏՈՒԱ.]ԾԱՅՍԻՐԻՆ Ե  
Ի ՈՂՈՐՄԱԾԻՆ ՊԱՐՈՆ ԱԻԹԻՆ ՈՐԳ  
ՈՅ ՊԱՐՈՆ ԹԵՆԵՐԻՆ ՈՐԲ ԿԱՐ  
ԳԱՅՔ ՄԵՂԱՅ Թ[ՈՂՈՒԹ]Ի[ԻՆ] ԽՆԴԻՆՏԷՔ  
Թ[ՎԻՆ] ԷՃՁԴ (1335):

(Տե՛ս նկ. № 1 և նկ. № 2)

<sup>9</sup> M. Brosset, Note sur les inscriptions arméniennes de Bulgarie, Bulletin Scientifique, tome III, 1838, Leipzig, էջ 19—20.

<sup>10</sup> М. Н. Броссе, Об армянских надписях в Болгарах, Известия Императорского Археологического общества, том II, СПб, 1861, էջ 182.



նկ. № 2

Սեն-Մարտենի հրատարակած շորրորդ արձանագրությունը բաղկացած է 5 տողից և շատ թերի է: Ահա այն.

№ 4. ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ....

..ՊԱՐ... ԵԱՎԱՔ

..ՈՐԴ — ՈՅ.. ԱՍԻՐԱՏԵԱ

ԱՐԴ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՄԵՂԱՅ

— ՈՂՈՒ ԽՆԻՐԵՅԷՔ ՍՄ...<sup>11</sup>

Բրոսսեն Ֆրենի արխիվում գտնվող և Կաֆտաննիկովի կողմից 1836 թ. սև մատիտով կատարված պատճենի միջոցով լրացնում է այս արձանագրությունը, ըստ որի արձանագրությունն ունի ոչ թե հինգ, այլ վեց տող: Իր հողվածում նա տալիս է միայն ֆրանսերեն թարգմանությունը՝ առանց հայերեն բնագրի. համաձայն որի ստացվում է. «Այս է հանգիստ... եվաֆ մահտեսի թոմաս Վարդ ուֆ կարգայֆ մեղաց թողութիւն խնդրեցէֆ յԱստուծոյ ամէն քվին...»<sup>12</sup>:

<sup>11</sup> Saint-Martin, նշ. աշխ., էջ 505.

<sup>12</sup> M. Brosset, Note sur les inscriptions arméniennes de Bulgarie, 20.

1. Ceci est la tombe

2. du baron... eval

3. ... du pèlerin Thomes

4. vart, vous, qui liser (ceci)

5. demander la rémission de mes péchés

6. a Dieu, Amen, Ceci fut écrit en l'an...

Այս արձանագրությունը այժմ չկա, ուստի ստուգել և ճշտել այն նույնպես հնարավոր չէ: Թերևս զուգակցելով Սեն-Մարտենի հայերեն բնագիրն ու Բրոսսեի թարգմանությունը, կարելի լինի առաջարկել հետևյալ ընթերցումը.


ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ [ԱՍՏՈՒԱՄԱ  
ՍԷՐ] ՊԱՐ[Ո]Ն ԱՎԱՔ  
[ԻՆ] ՈՐԳԻՈՅ... [ԱՄԻՐԱՏՆԱ]  
ԱՐԳ ՈՐՔ ԿԱՐԳԱՅՔ ՄԵՂԱՅ  
[Թ]ՈՂՈՒ[ԹԻԻՆ] ԽՆԴՐԵՑԷՔ  
[ՅԱՍՏՈՒԾՈՅ ԱՄԷՆ ԹՎԻՆ....]

Արձանագրությանս թվականը թեև չի պահպանվել, սակայն այն կարելի էլինի թվագրել 1321-ից հետո, եթե ընդունենք, որ հաջորդ № 5 արձանագրության մեջ հիշատակվող Ավագ Պարոնը նույնական է այս արձանագրության Պարոն Ավագ-ի հետ. հայրը դստեր գերեզմանի վրա տապանաքար է դրել և մեղաց թողություն է խնդրում:

1853 թ. պատմաբան Ն. Բերեզինը իր «Վուլգայի բուլգարներ» աշխատությունում հրատարակում է երկու հայկական արձանագրություն, որոնցից առաջինը կրկնություն էր (տե՛ս արձ. № 3), իսկ երկրորդը (տե՛ս արձ. № 5)<sup>13</sup> նորահայտ<sup>13</sup>: Այս երկու արձանագրություններն էլ, կատարելագործված եղանակով արտանդակարված, հրատարակում է Բրոսսեն 1861 թվականին<sup>14</sup>.

№ 5. ՅԱՐԿՍ ԱՅՍ ՈՒՆԵԼՈՎ ՉՊԱՏ  
ԻԱԿԱՆ ՄԱՐ[ՄԻՆ] ՍԱՌԱՅ ԽԱԹՈՒ  
ՆԻՆ ՓՈՒԵՑԱՎ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս ՈՎ ԿԱՐԳԷ  
Ք ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԻ[ԻՆ] ԽՆԴՐԵՔ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ  
ՀԱԻՐՆ ԱՎԱՔ ՊԱՐ[ՈՆԻՆ] Ի Թ[ՎԻՆ] ՉՀ (1321):

Այս բարն այժմ գտնվում է Բուլգար բաղաբի հնավայրի մոտ կառուցված Ուսպենսկի վանքի նորահասույց զանգակատան հիմքում և երևում է միայն կիսով չափ (նկ. № 3):



Նկ. № 3

<sup>13</sup> Н. Березин, Булгары на Волге, Казань, 1853, էջ 64—66.

<sup>14</sup> М. Н. Броссе, Об армянских надписях в Болгарах, էջ 183.

Մինչև այս հրատարակված հայկական արձանագրություն կրող տապանաքարերը գտնվել են ոչ իրենց սկզբնական տեղում, այլ Բոլգար քաղաքի տարրեր վայրերում և զլխավորապես Ուսպենսկի վանքի շրջակայքում, ուր կուտակված էին վանքի շինարարության համար պետրական քարերը:

1882 թ. ամռանը հայկական եկեղեցու շրջակայքում գտնվել են ևս երկու տապանաքարեր (տե՛ս արձ. № 6 և № 7): Այդ արձանագրությունները հրատարակել է Ս. Վիսոցկին<sup>15</sup> 1883 թվականին՝ Ք. Պատկանյանի թարգմանությամբ, տալով լուսանկարը և ուսերեն թարգմանությունը:

Վիսոցկու հրատարակած № 6 արձանագրության ընդօրինակությունը (տե՛ս նկ. № 4) թեև աղավաղված է, բայց այն Պատկանյանը բավական ճիշտ է վերծանել<sup>16</sup>, այդ է ցույց տալիս Ն. Ֆ. Կալինինի արխիվում գտնվող նույն արձանագրության մեկ այլ ընդօրինակություն (տե՛ս նկ. № 5): Համադրելով այդ երկու ընդօրինակությունները, առաջարկում ենք հետևյալ ընթերցումը.

№ 6. ԱՅՍ ՀԱՆԳ  
ԻՍՏ ՊԱՐՈՆ  
ԵԱՂՈՒԹԻՆ [ՄԵ]

Ղ[ԱՅ] ՔԱ[ԻՈՒԹԻՆ]  
Ա[ՍՏՈՒԱ.]Ծ ՅԱՒՈՒԻ  
ԳԱՏԱՍՏԱՆԻՆ

∴ Ա Կ Ա Գ  
Պ Պ Ա Ն  
Ա Ղ Բ Ի Ն Բ  
Ղ Դ Բ Ա Ս Ա  
Ա Ճ Յ Ա Ի Ո Ւ Ի  
Գ Ա Վ Ի Ս Վ Ա Վ

նկ. № 4

Ա Յ Ն Կ Ը Ե Գ  
Ի Ն Բ Պ Ա Ն  
Ի Ա Պ Ի Կ Ի Ն Դ  
Պ Ղ Դ Բ Ա Ս Ա  
Ա Ճ Յ Ա Ի Ո Ւ Ի  
Գ Ա Վ Ի Ս Վ Ա Վ

նկ. № 5

<sup>15</sup> *Высоцкий*, Новая археологическая находка в селе Болгарах, Известия общества археологов Казанского университета (ИОАКУ), том. VII, էջ 1—8.

<sup>16</sup> *Նույն տեղում*, էջ 2.

Это есть покон-  
ще господина  
Агоба (Якова)  
(помяни его)

Боже в день  
Суда...

Յոթերորդ արձանագրությունը բաղկացած է 3 տողից.

№ 7. ԱՅՄ Է ՀԱՆ

ԳԻՍՏ Յ[Ո]ՍԷՓԻ

Թ[ՎԻՆ] ԷՃԿԷ (1318)

ԱՅՄ Է  
ԳԻՍՏ Յ[Ո]ՍԷՓԻ

ԹԷԿ

Նկ. № 6

Պատկանյանը «Յովսէփ» անվան փոխարեն կարդացել է «յաւիտենական», իսկ թվականը վերձանել՝ ԹՎ[ԻՆ] ՇՀ (1121)<sup>17</sup>: Սակայն, տեղում կատարած մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թ տառին միաձուլված մասնիկը ոչ թե Վ պիտի կարդալ, այլ՝ է (7). այդ դեպքում, որքան և աղավաղված, հաջորդ հարյուրավորը չի կարող այլ բան լինել, քան՝ Ճ (100). տասնավորն ու միավորը՝ ԿԷ (67), տարակույս չեն առաջացնում, հետևապես տարեթիվը պետք է կարդալ ոչ թե ԹՎ[ԻՆ] ՇՀ (1121), այլ՝ Թ[ՎԻՆ] ԷՃԿԷ (1318):

Ըստ մեր ընթերցման, արձանագրությունը 200 տարով նորանում է և իր ժամանակով մոտենում Բուզար բաղարի հայկական մյուս չորս արձանագրություններին, որոնք 1308, 1321, 1335, 1337 թվականներից են:

Հայկական արձանագրություններ են գտնվել նաև Վոլգա և Կամա գետերի ափերին տեղավորված այլ հնավայրերում:

ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Կազանի մասնաճյուղի արխիվում պահված է հնագետ-ազգագրագետ Ն. Ֆ. Կալինինի արխիվը, որտեղ գտնվում են նաև երեք հայկական արձանագրությունների պատճեններ, արտադրված ոչ վարժ և հավանաբար հայերեն շիմացողի կողմից: Դրանցից մեկը, փնչպես արդեն նշել ենք, № 6 արձանագրության կրկնապատճենն է (տե՛ս նկ. № 5), իսկ մյուս երկուսը (տե՛ս արձ. №Ն 8 և 9) բերում ենք ստորև.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 2.

Это есть по-  
кой веч...

число 570 (1121).



Ռ-3

№ 8. [ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ] Ռ-Հ  
ԻԱՆ ՊԱՐՈՆԻ ՈՎ [ԿԱՐԳԱՅ]  
Ք ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹ [ԻԻՆ]  
ԽՆԴՐԵՑԷՔ [ՆՈՑԱՅ]  
ԱՄԷՆ

ԻԱՆՎՈՐՆԻ ՈՎԱԿ  
ՔՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹ  
ԽՆԴՐԷՑԷՔ ՈՑԱՅ

Ա

նկ. № 7

Թեև չի նշված տապանաքարիս գտնվելու վայրը, բայց հիմք ընդունելով Ն. Ֆ. Կալինինի հիշատակությունը Կամա գետի ափին Կրասնայա Պոլյանա գյուղի մոտ գտնված հայկական արձանագրություն ունեցող տապանաքարի մասին<sup>18</sup>, կարելի է ենթադրել, որ խոսքը հենց այս արձանագրության մասին է:

Բնագիրը չլինելու պատճառով ստուգել և տալ ճիշտ ընթերցումը հնարավոր չէ: Թերևս անունը կարելի լինի կարդալ «ՈՒՀԱՆ»: Կասկածելի է թվում նաև շորորդ տողի «[Ն]ՈՑԱՅ» բառը. տեղին կլինեք այն կարդալ՝ «ՅԱՍՏՈՒԾՈՅ»:

Հաջորդ (№ 9) արձանագրությունը հայտնաբերվել է Կամա գետի ափին գտնվող Կիրելևկայա գյուղի եկեղեցու բակում: Քարը ունեցել է անհավասարակող խորանարդի ձև և բովանդակել է. 6 տող արձանագրություն, 3-ր հարավային կողին, իսկ 3-ը՝ հյուսիսային: Ըստ Կալինինի արխիվում եղած ընդօրինակության, այն հետևյալ տեսքն ունի.

Հարավային կողին.

... ՏԱՐԱԺՄ

ԱՂԱԽԻՆՍ ԱՅ ՏՈՒՐՂԱՆ ՄԵԼԻՔՍ ԵՒ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՔՄ...

...ԹՈՂՈՄԵԶ ԱՌ—ԱՆՄԵԻԹԱՐ ԵՒ ՏԵՐՄՈՒԹԻ

Հյուսիսային կողին.

.....ՈՐՔ ԿԱՐԳԱՔ ԹՈՂՈՒԹՆ ՄԵՂԱՅ

.....ՄՆՈՂԱՅ ՍՈՐԱ ԳՐԻԳՈՐԱ ԵՒ.....

.....ՔՄ ԱՄ ԱՄԵՆ Ե...

<sup>18</sup> Н. Ф. Калинин, От Сюкиева к Камскому устью. Записки тетюшеского Музея, Казань, 1928, էջ 12—13.

Ինչպես գրում է Ա. Պ. Սմիրնովը, այս արձանագրությունը իր ժամանակին վերժանել և թարգմանել է Հ. Ա. Օրբելին, և հրատարակված է Ա. Պ. Սմիրնովի հայկական գաղութի մասին տպված հոդվածում<sup>19</sup>:

Օրբելու արխիվում պահպանվել է այս արձանագրության վերժանման մի փորձ (ոչ իր ձեռքով), որի հիման վրա էլ, ըստ երևույթին, նա կատարել է թարգմանությունը: Ահա այն.

[Թ]ՎԱ[ԿԱՆԻՆ] ՉԿԷ Ի ՏԱՐԱԺԱՄ ՀԱՍԱԿԻՆ ՅԱՆԿԱՐԾԱԿԻ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ  
ԱՂԱԽԻՆՍ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ՏՈՒՐՂԱՆ ՄԵԼԻՔՍ ԵՒ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ Ք[ՐԻՍՏՈ]Ս  
Ա[ՍՏՈՒԱ]Մ

ԹՈՂԱՆՎ ՄԵՋ ՍՈՒԳ ԱՆՄԵԻԹԱՐ ԵՒ ՏՐ[Տ]ՄՈՒԹԻ[ԻՆ]  
ԵՏ ԳՐԵԼ ԱՅՍ ՈՐՔ ԿԱՐԳԱՔ ԹՈՂՈՒԹԻ[ԻՆ] ՄԵՂԱՅ  
[ԽԵԳՐԵՑԷՔ] ԾՆՈՂԱՅ ՍՈՐԱ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ [ԿԵՆԱԿՑԻ]  
.....ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱՄ ԱՄԵՆ ԵՒ [ՇԻՆՈՂԱՅԳ]

Տապանաբարի բացահայտության պատճառով հնարավորություն չունենք ստուգելու վերժանման ստուգությունը: Կարծում ենք, սակայն, որ ավելի ճիշտ կլիներ, «ԹՈՂԱՆՎ ՄԵՋ ՍՈՒԳ»-ը կարդալ՝ «ԵՒ ԵԹՈՂ ՉՄԵՋ ՍՈՒԳ», «ՏՐՏՄՈՒԹԻՆ»-ը՝ «ՏՐՏՄՈՒԹԻՆ ՄԵՄ», «ԵՏ ԳՐԵԼ ԱՅՍ»-ը՝ «ԱՐԳ», «ԵՒ ՇԻՆՈՂԱՅԳ»-ը՝ «ԵՒ ԵՂԻՑԻ»:

Գոյություն ունեն մի շարք հիշատակություններ այն մասին, որ դեռևս XIX դարում Բուլղար քաղաքի շրջակա գյուղերի տների հիմքերում կարելի էր հանդիպել արձանագիր քարեր, որոնց թվում նաև հայերեն արձանագրություններ: Այժմ Վուլգա գետի ափին էլեկտրակայաններ կառուցելու և Կամա գետի հունի լայնացման կապակցությամբ, փոխվել է նաև տեղանքը. հին բնակավայրերից շատերը շկան կամ նրանց փոխարեն կառուցված են նորերը: Կատարված հետախուզական աշխատանքներն առայժմ չեն տվել որևէ նոր հայկական արձանագրություն:

Ն. Վիսոցկին իր վերը հիշատակած հոդվածում<sup>20</sup>, հրատարակում է ևս մի հայկական արձանագրության մնացորդ (նկ. № 8):

Այս արձանագիր տապանաբարը գտնված է Կաղանի Գերմանական Կուրտինա կոչված թաղամասում, որն ինչպես կարծում են, նախկինում եղել է հայկական գերեզմանատուն:

Հայերը Կաղան քաղաքն են տեղափոխվել XV դարի կեսերին, Բուլղար քաղաքի ավերումից հետո: Համաձայն եղած ուսումնասիրությունների<sup>21</sup>,

<sup>19</sup> А. П. Смирнов, Армянская колония города Болгар, МИА, 61, էջ 331:  
Հարավային կողմ.

I. «Лета 767 (1318) преждевременно сопричеслилась (к господу) преставившись  
II. раба божия Турган-Мелик и приставилась во Христе  
III. оставляя нам скорбь неутешную и владыка мути (или мури).  
Հյուսիսային կողմ.

I. ... дал написать (?) [это]. Вы кто прочтете, оставление грехов...

II. ... родителям ее Григорию...

III. ... Христос бог, Аминь, и устроителей сего...

<sup>20</sup> Н. Высоцкий, Новая археологическая находка в селе Болгарах. ЦОАКУ, 4. VII, էջ 3:

<sup>21</sup> Б. В. Миллер, Об армянских надписях в Болгарах и Казани, ИРАИМК, 4. IV, էջ 69:

այստեղ ևս նրանք բնակություն են հաստատել մի թաղամասում, որի մասին հիշատակություն պահպանվել է երկու «Արմյանսկայա» փողոցների անուններում: Շատ հավանական է, որ այդ թաղամասը հիմնողները եղել են ոչ միայն առևտրականներ, այլ նաև արհեստավորներ: Այդ թաղամասը, որտեղ ենթադրաբար ապրել են հայերը, հայտնի է որպես «մահուղագործների թաղամաս» (Суконная слобода): Թաղի բնակիչները ունեցել են նաև իրենց եկեղեցին: Կազանում գտնված տապանաքարի արձանագրությունը (№ 10) բաղկացած է 4 տողից, շատ թերի է և արտագրված է եղել անփույթ, որոշ տառեր նույնիսկ գլխիվայր: Թերևս առաջին տողի երեք նշանը «Ողորմի» բառի մնացորդն է (նկ. № 8): Երրորդ տողում եղած փակագիրը կարելի է ենթադրաբար բացել, որպես «ԱՄէն»:

Այս տապանաքարը այժմ գոյություն չունի, ուստի ստուգել և վերականգնել արձանագրությունը նույնպես հնարավոր չէ:

Հայկական արձանագրություններ կրող 10 տապանաքարերի առկայությունը Վոլգա գետի ափին, հետաքրքրական փաստ է հայ ժողովրդի առևտրական կապերի պարզաբանման և գաղթօջախների ուսումնասիրման համար: Բոլգար քաղաքի հայկական գաղութի պեղումներից հայտնաբերված ոչ շատ հարուստ, բայց արտահայտիչ նյութերը, սերտ կերպով կապում են այդ հեռավոր գաղութի բնակիչներին մայր Հայաստանի և հատկապես նրա երկու խոշոր քաղաքների՝ Անիի և Գլխի նի հետ<sup>22</sup>:

Այժմ տեսնենք ինչ է տալիս մեզ տապանաքարերի արձանագրությունների նախնական ուսումնասիրությունը:

10 արձանագրություններից 6-ը (№№ 1, 2, 3, 5, 7, 9) թվագրված են, և բոլորն էլ պատկանում են XIV դարին (1308, 1318, 1331, 1335, 1337):



Պեղածո հնագիտական նյութերը ցույց են տվել, որ ինչպես Բոլգար քաղաքը, այնպես և նրա հայկական գաղութը իրենց ծաղկման շրջանն են ապրել XIII—XIV դարերում:


Տապանաքարերը պատկանում են հենց այդ ժամանակին:

Արձանագրությունները հիշատակում են մի քանի անձնանուններ՝ Աւագ, Աւթին, Թեներ, Ամիրատին(“), Յովհաննէս, Մարինոս, Յովսէփ, Նազարոս, Վարդան, Սառա—Խաթուն, Տուրդան—Մելիք:

Այս անձնանունների մեծագույն մասը շատ տարածված հայկական անուններ են, որոնցից մի քանիսը բնորոշ XIII—XIV դարերի համար:

Այսպես. № 5 արձանագրության Ավագ Պարոն ձևով պարոնը, որպես անձնանվան մասնիկ, հանդիպում է հատկապես XIII—XVII դարերում: Սառա իգական անունը նույնպես շատ տարածված է XIII—XIV դարերում և հաճախ



նկ. № 8

<sup>22</sup> P. M. Джанполадян, О двух тханиях из Ани и Болгарах, Краткие сообщения Института археологии АН СССР (КСИА), вып. 132.

է հանդիպում հայկական գաղթօջախների վիճական արձանագրություններում (Սուրխաթ, Կամենեց):

№ 3 արձանագրության թեևներ անունը հայկական իգական հազվագյուտ անձնանուններից է, Աճառյանի անձնանունների բառարանում այս անունը թեևի ձևով հանդիպում է միայն մեկ անգամ՝ Անիի XV դարի մի շինարարական արձանագրության մեջ<sup>23</sup>:

Հնագրագիտական առումով հետաքրքրական են մի շարք տառերի գրության ձևերը. այսպես Հ, Պ, Ն, Չ, Չ (արձ. № 3): Այս վերջինս սովորական կանոնից դուրս, գրված է ոչ թե զլիսատառով, այլ ձևագրական ձևով:

Այս արձանագրությունների հետազոտում կատարվելիք մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզել հայկական այդ հեռավոր գաղթօջախի բնակչությանը վերաբերող մի շարք հարցեր:

Р. М. ДЖАНПОЛАДЯН

## АРМЯНСКИЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ ПОВОЛЖЬЯ

(Резюме)

На основании изучения литературы об армянских надгробных памятниках, обнаруженных в Болгаре и Казани, а также архивных материалов и уцелевших могильных плит автор статьи впервые дает научную расшифровку десяти армянских надписей. Выясняется, что их подавляющее большинство относится к первой половине XIV в. (1308, 1318, 1321, 1335 и 1337 гг.). Надписи содержат интересный материал для изучения истории армянских поселений этого края.

R. M. DJANPOLADIAN

## LES INSCRIPTIONS LAPIDAIRES ARMÉNIENNES DU BASSIN DE LA VOLGA

(Résumé)

L'étude de la littérature consacrée aux pierres tombales arméniennes découvertes à Bulgarie et à Kazan, des documents d'archives et des pierres tombales demeurées intactes a permis à l'auteur de l'article de réaliser pour la première fois le déchiffrement scientifique de dix inscriptions arméniennes. Il apparaît que la majorité de celles-ci remonte à la première moitié du XIV<sup>e</sup> siècle (1308, 1318, 1321, 1335, 1337). Les inscriptions apportent d'intéressants matériaux pour l'étude de l'histoire des colonies arméniennes de cette région.

<sup>23</sup> Հ. Աճառյան, Անձնանունների բառարան:

ՀԱԿՈՐ ՓԱՓԱԶՅԱՆ

ԶՐԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՎԱՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ  
ԵՎ ՇԱՀ ՍԱՖԻԻ 1638 Թ. ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Միջնադարյան Հայաստանի հողատիրության պատմությունը սերտորեն աղերավում է նույն ժամանակաշրջանի ջրատիրության իրավունքի հետ:

Թեև հողատիրության տարրեր ձևերի հետ միասին, քիչ թե շատ հետազոտված է նաև ջրատիրության հարցը<sup>1</sup>, սակայն դեռևս լիովին չեն ճշգրտված ջրի նկատմամբ ֆեոդալական սեփականության հիմնական ձևերը:

Հայկական սկզբնաղբյուրներին զուգահեռ XVI—XVIII դդ. պարսկերեն կալվածագրերը մեծ շափով նպաստում են պարզաբանելու ջրի սեփականության իրավունքի հետ առնչվող բազմաթիվ հարցեր: Այդ վավերագրերը առաջին հերթին գալիս են հաստատելու այն իրողությունը, որ թեև կալվածագրերում հատկապես նշվում էր, որ գյուղատիրոջ կամ մալիքի սեփականատիրական իրավունքը տարածվում էր գյուղի սահմաններում գտնվող բոլոր հանդերի, լեռների, դաշտերի, գետերի, ջրերի ու ջրանցքների և այլնի վրա, սակայն քիչ դեպքերում էր, որ գյուղատիրը հանդես էր գալիս նաև որպես իր մուլքը հանդիսացող գյուղի հանդերը ոռոգող ջրանցքների ու առուների իրավական սեփականատեր:

Գյուղատիրոջ ֆեոդալական սեփականատիրությունը իր մուլքը հանդիսացող գյուղի սահմաններում գտնվող բոլոր հարստությունների, այդ թվում նաև ջրային ռեսուրսների՝ գետերի, լճերի, ջրհորների և այլնի վրա հաստատվում էր միայն դրանց օգտագործողներից որոշյալ քանակի ռենտա գանձելու իրավունքով: Փաստորեն ջրերի նկատմամբ ֆեոդալական սեփականության իրավունքը խնդրո առարկա ժամանակաշրջանում արտահայտվում էր սովորական հողերի համեմատությամբ ջրարբի հողերից կրկնակի ռենտա գանձելու պրակտիկայով<sup>2</sup>: Սակայն դա սոսկ ֆեոդալական սեփականության իրավունքն էր միայն, որից անկախ ոռոգման սիստեմում գործում էին սեփականատիրության շատ ավելի որոշակի սկզբունքներ:

<sup>1</sup> Թադ. Ավդալբեկյան, Բահրան և մուլքը 17—18-րդ դարերում (Հայագիտական հետազոտություններ), Երևան, 1969, էջ 426, 429, Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17—18-րդ դդ. և էջմիածինը որպես խոշոր հողատեր, «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ» հ. 13, Երևան, 1940, էջ 177—179; Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1949, стр. 41—46, Ս. Մառխոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում, Երևան, 1959, էջ 130—145:

<sup>2</sup> А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII вв. Ереван, 1972, стр. 182—287.

Աղբյուրները միաբերան վկայում են, որ ջրի սեփականատիրության իրավունքը մեծ մասամբ վերապահված է եղել այն անձնավորությանը, որի նախաձեռնությամբ և միջոցներով ու ջանքերով հանվել է տվյալ ջրանցքը: 1722 թ. մի կալվածագրում, բսս. որի, Օշական գյուղի համայնքը էջմիածնին է վաճառում գյուղի առվի  $\frac{1}{3}$  մասը, ընդգծված է, որ «հիշյալ առվի վրա կատարված աշխատանքի և ծախքի իրավունքը պատկանում է նույն գյուղի ուսուցիչներին»<sup>3</sup>: Դա նշանակում էր, որ այդ ջրանցքի համայնքային սեփականությունը պայմանավորված էր այն բանով, որ այն կառուցված էր ուսուցիչների սեփական միջոցներով և համատեղ աշխատանքով:

Նույն սկզբունքով որևէ ջրանցք կարող էր պատկանել մասնավոր անհատի կամ կալվածատիրոջ, եթե վերջինս ծախսելով որոշ գումար նոր առու էր հանել տալիս: Այս մասին ևս աղբյուրներում բազմաթիվ վկայություններ կան:

Այսպես օրինակ, պահպանվել է Փիլիպպոս կաթողիկոսի (1633—1655) Շահ Աբբաս II-ին ներկայացրած 1650 թ. խնդրագիրը, որտեղ այլ հարցերի շարքին զեկուցված է նաև, որ մեծ ծախսերի գնով նրան հաջողվել է Արագածի հյուսիսային լանջերից դեպի արևմուտք հոսող ջրերի հունը փոխել և բերել խառնել Քասախ գետին: Շնորհիվ դրա, ավելացել են ոռոգման հնարավորությունները, ընդարձակվել է շրջակա գյուղերի ցանքատարածությունը և բարձրացել բերքատվությունը<sup>4</sup>:

Խոսելով այս խնդրագրի մասին, Սիմեոն կաթողիկոս Երևանցին հիշում է նույն թվականին շահ Աբբաս II-ին ներկայացված մի այլ խնդրագիր, որով Փիլիպպոս կաթողիկոսը ավելի մանրամասն զեկուցել է շահին, բողոքելով շրջակա գյուղերի բնակիչներից, որոնք շեն ուզում ճանաչել վանքի իրավունքները այդ ջրերի նկատմամբ: Շահն այս խնդրագրի վրա տվել է իր հրամանը, կարգադրելով, որ գետի ամբողջ ջուրը բաժանվի երկու հավասար մասերի, կեսը վանքին և մյուս կեսը՝ մերձակա այն գյուղերին, որոնց սահմաններով անցնում է գետը<sup>5</sup>:

Խնդրագրում Փիլիպպոս կաթողիկոսի բերած ջրի քանակը մոտավորապես նշված է 6—7 ջրաղացի ջրի շափ, սակայն Սիմեոն Երևանցին միշտ շեշտում է «որ է ինն ջրաղացի ջուր»: Կարևորը սակայն այն է, որ շահը, ելնելով ընթացիկ օրենքներից, հաստատել է ջրի ակունքներից հանվող առուների վրա թափված

3 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Թղթ. 1 գ, վավ. 289, حق السعی و اعانتی

نهر مزبور تعلق برعایای قریه مزبور ه دارد

4 «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտականներ», պրակ երկրորդ, կազմեց Հ. Գ. Փափազյան, Երևան, 1959, վավ. 39:

5 Սիմեոն Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 191—192, 213: Փիլիպպոս կաթողիկոսի այս խնդրագրին և շահի հրամանագրին Սիմեոն Երևանցին անդրադարձել է մի քանի անգամ, միշտ շեշտելով Քասախ գետի ջրերի նկատմամբ էջմիածնի ունեցած սեփականատիրական իրավունքները: Այլ բանի որ այս հույժ կարևոր փաստաթուղթը ինչ-որ պատճառներով անհետացած է եղել վանքի դիվանից, նա անհրաժեշտ է համարել մանրամասն պատմել այդ մասին, նկարագրելով նաև ջրի բաժանման արարողությունը և ավելացնելով, որ «այս կանոն յայնմ օրէ տարածեալ հոշակի յերկրոջս Երևանու և արձանանայ յամենեսին ի հայս և ի տաճիկս, և է այսպէս մինչև ցայսօր մինչ զի՝ եթէ կանանց և մանկանց երկրիս ևս հարցանիցես զօրպիսութիւնէ ջրոյս այսմիկ, պատասխանեն թէ՛ կէսն էջմիածնի է և կէսն երկրիս: Բայց շահաւոր և օգտակար ռազամս այս զոր գրէ Շահապասն, որպէս ասացար, ոչ գիտեմ առ խանն մնայ և ոչ տան Աթոռոյս, և այնպէս անհետանայ, թէ յԱթոռոջս կորնչի: Զի մեր ոչ տեսար, թէպէտ շատ որոնեցար և խնդրեցար» (նույն տեղում, էջ 192):

աշխատանքից ու կատարված ծախսերից բխող սեփականության իրավունքը: Բայց և այնպես, քանի որ գետը միշտ էլ հոսել է այդ գյուղերի սահմաններով և նրա ջրերից գյուղացիները օգտվել են իրենց հանած առուններով, ուստի ճշգրտված է միայն օգտագործվելիք ջրերի քանակը:

Թե որքան կայուն էին հիշյալ ջրերի նկատմամբ հաստատված էջմիածնի վանքի սեփականատիրական իրավունքները, կարելի է եզրակացնել այն փաստից, որ դրանք հետագայում ևս խստորեն պաշտպանվել են թե՛ տեղական խաների և թե՛ թուրք իշխողների կողմից: XVIII դարի 20-ական թվականներին, երբ նորից մոտակա գյուղերի ուսյաթները փորձել են անտեսել էջմիածնի իրավունքները, Երևանի Ռաջաբ փաշան ցանկանալով ընթացք տալ էջմիածնի բողոքին, դիմել է Շարիին, որը հիմնվելով շահ Աբրահամ II-ի հիշյալ հրամանագրի վրա, նորից հաստատել է, որ ջրի կեսն է միայն պատկանում գյուղերին, իսկ մյուս կեսը՝ վանքի սեփականությունն է. «Հիշյալ ջրանցքի ամբողջ ջուրը կիսվեց, կեսը տրվեց վանքին, իսկ մյուս կեսը՝ հիշյալ 20 գյուղերին և վեճը հարթվեց», — ասված է Շարի որոշման մեջ<sup>6</sup>, որը հաստատված է Ռաջաբ փաշայի հետևյալ մակագրությամբ. «Թող վարվեն ըստ Շարի որոշման և այսուհետ հիշյալ ջուրը օգտագործեն միայն կես առ կես, ոչ ավել լինի, ոչ պակաս»<sup>7</sup>:

Այն մասին, որ այս որոշումը առանձին երևույթ չէր և բխում էր հնուց անտի հաստատված օրենքներից, կարելի է եզրակացնել թեկուզ այն փաստից, որ 1732 թ., երբ մշեցի կամ խոշաբեցի Աբրահամ կաթողիկոսը Մեծամորի վերին հոսանքներից փորձում է մի նոր առու հանել, տեղական Շարի ատյանն ու թուրքական իշխանությունները, լսելով գյուղացիների բողոքը, որոշում են, որ այդ նոր առվի ջրի կեսը պետք է պատկանի էջմիածնին, իսկ մյուս կեսը՝ այն գյուղերին, որոնցով անցնելու է առուն<sup>8</sup>:

Ֆեոդալական հողատիրության տարրեր ձևերի առկայության պայմաններում, անձնական միջոցներով առուններ հանելու, ջրի նոր աղուներ հայտնաբերելու կամ հորատման ու քանքանների միջոցով ստորերկրյա ջրերից նոր քահրիզներ բանալու և այդպիսիք որպես սեփականություն օտարելու մասին բավական ուշադրավ փաստաթղթեր են պահպանվել: Դրանք առավելապես վերաբերում են XVI—XVIII դարերին և հետաքրքիր են հատկապես ջրի մեծ

6 Մատենագարան, Կթղկ. դիվան, թղթ. 1 գ, վավ. 304. حرق مزبورك صوبى جمله معرفتيله تنصيف اولنوب نصفى اوج كليسايه و نصفى اخرى يگر مى پاره قريهيه ويزيلوب نزاغلرى قطع اولندى

7 Նույն տեղում. «اعلام شرعيه سى موجبنجه عمل اولنوب بعد اليوم ما»  
مزبورى مناصفه اوزره استسقا ايذوب زياده و نقصان ايتدرلميه ديو

8 Նույն տեղում, թղթ. 1 գ. վավ. 339, 340, հմմտ. Ջամբո, էջ 200. «...և շարն վճո՛վ թէ ջուրդ այդ որքան և կայցե՛՛ երկու բաժին լիցի, մին բաժինն բերողին և միւսն այնց գեօղորէիցն՝ ընդ որովք անցանէ առուն և ջուրդ այդ»: Ուշադրավ է այս տեսակետից այն փաստը, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքի տարրեր խմբագրություններում հանդիպում ենք երկու հակադիր հողվածների: Մի դեպքում՝ «գեօք յորոց հոսին սահմանաց ոչ է, բայց առ որ հասանեն», իսկ մյուս դեպքում՝ «գեօք ուստի ակն ելանէ նոցա է և ոչ առ ուր հասանեն» (Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց, Վահան ծ. վարդապետ Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 327): Դժվար չէ նկատել, որ XVII դարին վերաբերող վերահիշյալ երկու դեպքերում էլ ջրի սեփականության իրավունքը բաժանված է աղուների տիրոջ կամ առուն հանողի և առվի ճանապարհին գտնվող գյուղերի միջև:

ու փոքր շափերով վաճառքի և օգտագործման սկզբունքների ու եղանակների մասին տվյալներով:

Յարդ կատարված ուսումնասիրությունները դեռևս հնարավորություն չեն տալիս որոշակի գաղափար կազմելու ջրաշափման բնդհանուր սկզբունքների վերաբերյալ, որքանով որ դրանք ըստ տեղի և ժամանակի բավական տարբեր են եղել: Դրանով հանդերձ մեր ձեռքի տակ եղած նյութերը թույլ են տալիս ասելու, որ ջրաշափումը կատարվել է և՛ ըստ ժամալի և՛ ըստ ժամանակի կամ հոսքի տևողության:

Ջրի շափի միավորները նույնպես առանձին շրջաններում տարբեր են եղել: Ջրի սեփականության տարբեր շափերի մասին որոշակի տեղեկություններ են տալիս հատկապես այն վավերագրերը, որոնք վերաբերում են այս կամ այն սեփականատիրոջ, որևէ առվի կամ ջրանցքի ջրի մի մասի նկատմամբ ունեցած սեփականատիրական իրավունքին: Այդպիսին է, օրինակ, Փիլիսոսյոս կաթողիկոսի վերոհիշյալ խնդրագրի առնչությամբ տրված շահ Աբրահա II-ի հրովարտակը, որով հաստատված են էջմիածնի իրավունքները Քասախ գետի ջրերի կես մասի նկատմամբ: Նույնպիսի սեփականության օտարման մասին է խոսում նաև 1722 թ. մեզ արդեն ծանոթ կալվածագիրը, ըստ որի, Օշականի համայնքը իր առվի  $\frac{1}{3}$  մասը վաճառում է էջմիածնին:

Նման դեպքերում մենք գործ ունենք մի ամբողջական միավորի որոշյալ մասի նկատմամբ ունեցած սեփականատիրական իրավունքի հետ: Տվյալ գետի կամ ջրանցքի ջրի առատանալու կամ նվազելու հետ միատեղ ավելանում կամ պակասում էր յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժինը, որը իրավական փաստաթղթերում, կալվածագրերում և հրովարտակներում պարսկերեն անվանվում էր «սահմ - سهم» (բաժին):

Շահ Քահանազ I-ի Մակվի Քաղեոս առաքյալի վանքին տված հիշրեթի 969 (1562) թ. հրովարտակում նշված է, որ «Ղարաքիլիսայի հանդին Աբրահայուն գյուղի գետի վեց բաժնից երեք բաժին ջրի իրավունք է տրված»<sup>9</sup> Ինչպես սույն փաստաթղթում, այնպես նաև ամենուրեք պարսկալեզու վավերագրերում և գրականության մեջ որևէ ջրից ոռոգման նպատակով օգտվելու իրավունքը, որ պարսկերեն բառացի կոչվում էր «ջրի իրավունք» («حق آب» - հակկարե») դիտվել է որպես սեփականություն կամ «մուլք» և որպես այդպիսին ժառանգվել է սերնդից սերունդ կամ ենթարկվել տարբեր կարգի օտարման<sup>10</sup>:

Ջրի սեփականության տարբեր ձևերի և կատեգորիաների մասին բավական արժեքավոր տեղեկություններ է տալիս Սիմեոն Երևանցին «Ձամբուի» 18-րդ գլխում, նպատակ ունենալով ծանոթացնել իր հետնորդներին վանքի ջրատիրական կարողությունների հետ: Այստեղ նա մանրամասն անդրադառնում է նաև Փիլիսոսյոս կաթողիկոսի վերոհիշյալ ձեռնարկումներին և ապա Օշականի, ինչպես նաև Երևանի Դարմաշի առվին և այլ կառուցած, գնած կամ վակֆ ստացած ջրանցքների ու ջրամբարների, ճշտելով նաև այդ ջրերի քանակն ու ոռոգման հնարավորությունները:

Այստեղ գծվար չէ նկատել, որ մեծաքանակ ջրերի շափի միավորը մեկ ջրաղացին բավարարելու շափով հոսող ջուրն էր: Այդպես էր հաշվված, օրի-

<sup>9</sup> «Հրովարտակներ», I, մամ. 16 حق آبه مزرعه مذکور (قرا . کلیسپاس) از رود خانه ارکوبین از ششسوم سه سهم مقرر است

<sup>10</sup> Տե՛ս «Կալվածագրեր», կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 109—125:



նակ, Փիլիպպոս կաթողիկոսի բերած ջուրը, որ պարսկերեն վավերագրերում նշված է 6—7, իսկ «Ջամբուում»՝ մինչև 9 ջրաղացի ջրի շափ:

Ինչպես «Ջամբուում», այնպես նաև հայերեն ու պարսկերեն դիվանական վավերագրերում ավելի հաճախ հանդիպում է բահով հաշվվող շափը՝ «մեկ բահ ջուր», «երկու բահ ջուր» և այլն: Դա նշանակում էր, որ հոսող ջրի տրամագիծը հավասար էր բահի բերանի լայնքին: Այս շափը բավական տարածված է եղել ոչ միայն Հայաստանում, այլև Ազրբեջանում և Իրանում<sup>11</sup>:

Ջրաշափման տարածված միավորներից էր նաև «թուխդը», որը փաստորեն յուրաքանչյուր բահրիզի ամբողջ ջրի  $\frac{1}{4}$  մասն էր: Ուստի մեկ թուխդ ջրի քանակը ամեն մի առանձին դեպքում սերտորեն պայմանավորված էր տվյալ բահրիզի ընդհանուր ջրաքանակով<sup>12</sup>:

Ուշագրավ են այս տեսակետից Ջաքարիա Ազուլեցու հաղորդած տեղեկությունները, որոնք հիմնականում վերաբերում են ազուլեցի Խոջենց Մեհրաբի որդի Թումանի նախաձեռնությամբ բացված աղբյուրի ջրերին: 1662 թ. հիշատակագրությունների մեջ նա արձանագրում է. «Ազուլիս Մնասեց կհաւի (պետք է լինի «կնաւ») — Լ. Փ.) լին անունն Գ(3) կհաւ կասին. այս կհաւիս Բ(2) կհաւն քօռացելայ, ջուրն ցամաքել, ահայ ազուլացի այր ոմն անունն Խօջինց Թուման, այս Թումանս այս կհաւիս մին կհաւն հանեց, մին մատն ջուր եկաւ, ձգեց յուր այգին, որ է թվին ՌՃԺԱ. (1111): Այս Թումանս իւր այգին կհավովն ծախեց սուրբ Թումայի առաջնորդ Պետրոս վարդապետին»<sup>13</sup>:

Մի այլ տեղ նույն անձնավորութեան ջանքերով բացված այլ աղբյուրից հոսող ջրերի քանակը նշելիս Ազուլեցին օգտագործում է «լուլա» (խողովակ) տերմինը, խոսքն անշուշտ որոշյալ տրամագծով խողովակի մասին է, որն ընդունված է եղել տվյալ վայրում, որպես ջրաշափման միավոր<sup>14</sup>:

Աղբյուրների համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ վերոհիշյալ շափերը վերաբերում են անընդհատ հոսող ջրերին: Այսինքն ջրի տվյալ քանակի հոսքը չէր սահմանափակված նաև ինչ-որ ժամանակով: Հոսքի տևողությամբ կամ ժամանակով չափվում էին այն ջրերը, որոնք հատկացված էին որոշակի հողատարածությունների կամ այգիների ոռոգման:

«Ջամբուի» նույն դիտում Սիմեոն Երևանցին թվարկում է նաև տարբերակունքներից կամ քահրիզներից զանազան ուղիներով ձեռք բերած ոռոգման իրավունքների մասին, որը նա անվանում է «չափաջուր»: Այդ ջրերի քանակը, սակայն, նա չափում է միայն հոսքի տևողությամբ՝ օրերով կամ շաբաթներով՝ «մէկ շաբաթէն ջուր», «երկու շաբաթէն ջուր» կամ «13 օրեն մէկ, մէկ աւուր ջուր» և այլն: Այդ նշանակում էր, որ տվյալ աղբյուրի կամ քահրիզի ջուրը, որքան որ կար, մեկ շաբաթ, երկու շաբաթ կամ 13 օրը մեկ, լրիվ 24 ժամ պետք է հոսեր դեպի վանքապատկան հանդերն ու այգիները: Թեև չէր բացառվում նաև այդ իրավունքի ժամանակավոր օտարումը այլ հողագործների ու այգեատերերի, մանավանդ, որ դրանք մեծ մասամբ վերաբերում են Թավրիզում, տարբեր առիթներով վակիֆ ստացած ջրերին: Այս ջրերը սովորաբար

11 «Ջամբու», էջ 154, 212, հմմտ. «Հրովարտականք», 11, վավ. 11, 26. տե՛ս նաև սույն հոդվածին աղբնիք հրատարակվող շահ Մաֆիի հրովարտակը:

12 «Կավվածագրեր», կազմեց Հար. Արքահամյան, Երևան, 1941, վավ. 9:

13 Զախարիա Ազուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 140—141:

14 Նույն տեղում, էջ 140:

հաշվվում էին շաբաթով, որը ժողովրդական լեզվով, աղբրեջաներեն կոչվում էր «հավթադի»<sup>15</sup>:

Սակայն ուսուցման իրավունքը հայերեն վավերագրերում ավելի հաճախ չափվում է «գլխով»: Արձանագրելով, որ այսինչ քահարիզից մեկ, երկու, շորս կամ ավելի գլուխ ջուր պատկանում է որևէ անհատ սեփականատիրոջ կամ կրոնական հաստատության, միաժամանակ անպայման նշվում էր, թե շաբաթվա որ օրերին է տեղի ունենալու ուսուցումը<sup>16</sup>: Սա, իհարկե, նույնպես կարելի է դիտել որպես ջրաշափման այնպիսի ձև, որի հիմքում ընկած է հոսքի տեղության որոշակի ժամանակով սահմանափակման սկզբունքը: Այստեղ նույնպես ուշադրավ է այն փաստը, որ այս ձևով չափվող ջրի օգտագործման իրավունքը ևս դիտվել է որպես սեփականություն և ենթարկվել տարբեր կարգի օտարման<sup>17</sup>:

Աղբյուրներից հոսող որոշակի տրամաշափով ջրերի կամ «կանաթների» (ծևֆ) ժամով կատարվող հաշվարկը առավելապես կիրառվում էր պտղատու, ինչպես նաև խաղողի այգիների ու բանջարանոցների ուսուցման ժամանակ:

Հիջրեթի 1090 (1679) թ. Օրդուբադի Շարի ատյանում կազմված մի ընդարձակ կալվածագրում մանրամասն խոսվում է այն մասին, որ վերոհիշյալ Խոջենց Մեհրաբի որդի Թումանը ունեցել է, անձնական միջոցներով հանած, մի այլ աղբյուր (կանաթ), որի ջրի ընդհանուր քանակը հաշվվում էր 80 ժամ: Այդ ջրով նա ուսուցում էր իր խաղողի և այլ պտղատու այգիները: Սկսած հիջրեթի 1082 (1671) թվականից, նա այդ այգիների մեծ մասը համապատասխան քանակի ջրով մաս առ մաս վաճառում է նախ ոմն ազուլեցի Կարախանի որդի Իսմիխանին, որն իր հերթին վերստին վաճառում է Խասսե-յի շարիֆի ղուլամ, հետագայում Ազուլիսի Քալանթար Իսախան-բեկի որդի Մուսա-բեկին: Վերջինս Թումանից գնում է ևս երկու տախտակ խաղողի այգի 24 ժամ ջրով, և այսպիսով, ըստ կալվածագրի վերջում կատարված հաշվարկի, հիշյալ 80 ժամ ջրի 62 ժամը, համապատասխան տարածությամբ այգիներով դառնում է Մուսա-բեկի սեփականությունը<sup>18</sup>:

Վերոհիշյալներով, իհարկե, շեն սահմանափակվում ջրի սեփականատիրության ձևերն ու օգտագործման ու բաշխման ժամանակ կիրառվող ջրաշափման սկզբունքները: Սույն համառոտ ակնարկով մենք փորձեցինք միայն վավերագրական սկզբնաղբյուրների ընդհանուր նյութերի հիման վրա թուցիկ կերպով ծանոթանալ XVI—XVIII դդ. ջրի սեփականության իրավական հիմունքներին և ջրաշափման ու օգտագործման առավել տարածված մի քանի ձևերի հետ:

Կատարված հպանցիկ հետազոտությունը, սակայն, դալիս է մի անգամ ևս հաստատելու այն իրողությունը, որ պատմողական սկզբնաղբյուրներին ղուլահեռ դիվանական փաստաթղթերը, իսկ առավել ևս պարսկերեն պաշտոնական վավերագրերը հսկայական փաստական նյութեր են պարունակում, որոնց ավելի հանգամանալից ու ամբողջական հետազոտությունը մեծ չափով կարող է նպաստել ֆեոդալական հողատիրության կարևոր խնդիրներից մեկի՝

15 «Կալվածագրեր», կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, վավ. 96:

16 Նույն տեղում, վավ. 86, 87, 88, 89, 91, 92, 93:

17 Նույն տեղում:

18 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 171:

ջրատիրության պատմության առավել լիակատար և համակողմանի ուսումնասիրությանը:

\* \* \*

Ձեռնարկելով Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերի մատենաշարային հրատարակությանը, բնագրագիտական աշխատանքների ընթացքում հաճախ առիթ ենք ունեցել անդրադառնալու նաև որոշ հայագետների անցյալում այս բնագավառում կատարած աշխատանքներին, ընդգծելով, հատկապես, այդ ուսումնասիրությունների շնորհիվ տարբեր մշակութային կենտրոններում կամ եկեղեցական հաստատություններում պահպանված պարսկերեն վավերագրերի մասին մեզ հասած տեղեկությունների նշանակությունը<sup>19</sup>:

Որքան ավելի ենք ծանոթանում նախահեղափոխական շրջանի հայագիտական գրականությանը, այնքան ավելի համոզվում ենք, որ Հայաստանի մեծ ու փոքր վանքերի դիվանական վավերագրերի ոչ մեծ մասն է մեզ հասել: Էլ չենք խոսում առանձին արևելահայ ազնվական ընտանիքների իրավունքներին վերաբերող դիվանական նյութերի մասին, որոնցից նույնպես հատուկ ենտ վավերագրեր են պահպանվել:

Նախասովետական ուսումնասիրողների մեծ մասը չի տիրապետել պարսկերենին և վավերագրերից օգտվել է միայն թարգմանչի միջնորդությամբ, նպատակ ունենալով սոսկ վերահասու լինել բովանդակությանն ու օգտագործել դրանք իրենց հետաքրքրող հարցերի լուսաբանման համար:

Ոմանք, սակայն, փորձել են տալ նաև իրենց ձեռքն անցած վավերագրերի թարգմանությունները: Այս բնագավառում առավել մեծ երախտիք ունեն Ս. Զալալյանցն ու Մ. Սմբատյանցը, որոնց կատարած աշխատանքներին, ինչպես արդեն ասվեց, հաճախ առիթ ենք ունեցել անդրադառնալու: Նշենք միայն, որ օտար, մեծ մասամբ ոչ այնքան գրագետ պարսկագետների միջնորդությամբ կատարված այդ հայերեն «թարգմանությունները» զգալի շափով հեռացած լինելով բնագրերից, չեն կարող բավարարել ներկայիս բնագրագիտության և աղբյուրագիտության պահանջները:

Բարեբախտաբար պահպանվել ու մեզ են հասել Ս. Զալալյանցի հրատարակած վավերագրերի խնամքով հանված պատճենները, որոնց մի մասը ընդգրկված է «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի արդեն լույս տեսած պրակներում<sup>20</sup>: Մյուսները ևս ժամանակագրական կարգով, նույն ձևով լույս կտեսնեն: Ավելի բարվոք վիճակում են գտնվում Մ. Սմբատյանցի «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի» աշխատության հավելվածում հրատարակված վավերագրերը, որոնց պարսկերեն բնագրերը պահպանվել են ներկայումս Մատենադարանի «Անհատական արխիվների» բաժնում գտնվող «Մելիք-Շահնազարյանների գործում»<sup>21</sup>:

1904 թ. լույս տեսած «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնշակա և շրջակայից նորա» աշխատության մեջ Մ. Սմբատյանցը հրատարակել է նույն

<sup>19</sup> Տե՛ս «Հրովարտակներ», I, էջ 12, 17:

<sup>20</sup> Տե՛ս «Հրովարտակներ», I, վավ. 3, 6, 18, 2-րդ 5, 7, 2, 3

<sup>21</sup> Մատենադարան, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 21, 23, 25, 27, 29, 31, 33, 35, 37, 39, 41, 43, 44, 47, 49, 51, 58, 126, 127:

վանքի դիվանում գտնվող մի բավական արժեքավոր վավերագիր, որի բնագիրը մեզ չի հասել, կամ ավելի ճիշտ, ցարդ մեզ չի հաջողվել գտնել այդ վանքի դիվանի հետքերը, որտեղ կարող է պահպանված լինել նաև հիշյալ վավերագիրը:

Ինչ-որ նկատառումներով, սակայն, Մ. Սմբատյանցը այս վավերագիրը հրատարակելիս ավելի մեծ խնամք է դրսևորել և փորձել է գիտական տեսք տալ այդ հրատարակությանը: Թեև խիստ անհաջող և համարյա անընթեռնելի, փորձ է արված ընթերցողին ներկայացնել վավերագրի լուսանկարը: Այստեղ է հայատառ պարսկերեն բնագիրը, աղբբեջանական արտասանության մեջ, նույնպես բավական մեծ աղավաղումներով: Այնուհետև հայերեն և ռուսերեն թարգմանություններն են, ինչպես նաև վավերագիրն ընթերցողի աղբբեջաններն բանավոր թարգմանության գրառումը, որը և հիմք է ծառայել հայերեն և ռուսերեն թարգմանություններին<sup>22</sup>:

Լուսանկարի ընդհանուր տեսքը հուշում էր, որ դա Սեֆյան շահերից մեկի հրովարտակն է, կնիքի վրա, թեև աղոտ, նշմարվում էր «Սահի» (صفی) անունը: Ինչպես կնիքի, այնպես նաև գրության ձևի ու այլ բնագրական հատկանիշների ուշադիր համեմատությունը շահ Սահիի (1629—1642) արդեն լույս տեսած հրովարտակների հետ, այլևս կասկած չէր թողնում ասելու, որ հրովարտակը տրված է շահ Սահիի կողմից հիշբեթի 1048 (1638) թվականին:

Հայատառ պարսկերեն բնագրի համեմատումը լուսանկարի քիչ թե շատ ընթեռնելի տողերի հետ, ինչպես նաև նման հրովարտակների վերծանության փորձված մեթոդների կիրառումը, նպաստեցին վերացնելու բնագրի բոլոր աղավաղումներն ու վերականգնելու հրովարտակի պարսկերեն ամբողջական բնագիրը:

Շահ Սահիի սույն հրովարտակն աղբբեջանական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն որպես Երնջակի Ս. Կարապետի վանքից ցարդ մեզ հայտնի միակ պարսկերեն պաշտոնական վավերագիրը, այլ ավելի մեծ է նրա արժեքը՝ որպես ջրի սեփականության, օգտագործման և ջրաշափման վերը շարադրված ձևերի մասին կարևոր տվյալներ պարունակող հավաստի սկզբնաղբբուր:

Ստորև տալիս ենք հրովարտակի վերականգնված պարսկերեն բնագիրն ու հայերեն թարգմանությունը:

هو

الملك لله

[مجر شاه صفی]

فرمان همایون شد آنکه چون درینولا عیسی فرطابیت که در معبد  
وانک اسرانیل واقع در النجق تومان نخچوان میباشد بدرگاه جهانپناه  
آمد به عرض رسانید که از قدیم الایام الی الآن معمول است که از قریه  
مارالی آر یک بیمل آب و از قریه ابره قونیس خمس آب بمعبد وانک

<sup>22</sup> Մ. Սմբատյանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանքից Երնջակայ և ջրշակայից նորա, Տփլիս, 1904, էջ 476—481:

اسرائیل مزبور جاری می‌شده الحال جمعی بخلاف شرع و حساب مانع می‌شوند و درین باب استمدعا حکم اشرف بعهدۀ عالیجاه بیگلربیگی چخور سعد و اهالی شرع انور نمود بنابرین مقرر فرمودیم که عالیجاه بیگلربیگی چخور سعد و حاکم آنجا بحضور اهالی شرع انور بحقیقت رسیده هر گاه نموده واقعی بوده باشد مقرر دارند که حصۀ معینۀ آب مزبوره را که از قدیم الایام الی الآن بوانک مزبور جاری می‌شده باشد بدستور معمول قدیم و نهج استمرار سنوات سابقه جاری بوده احدی از مردم آنجا بخلاف حق و حساب مانع و مزاحم نشوند و بمقتضای قانون شرع و حساب عملنمایند و نوعی باشد که بجماعت مزبور ستمی واقع نشود درین باب قدغن دانسته از فرموده تخلق نورزند

تحریراً فی شهر صفر سنه ۱۰۴۸

Նա է:

Իշխանութիւնն աստծունն է:

Շահ Սաֆիի կնիքը

Արքայական հրաման եղավ այն մասին, որ օրերս թուման-ե նախշևանի Ալնջակում<sup>23</sup> գտնվող Իսրայելի<sup>24</sup> աղոթավայրի և վանքի նսաչի վարդապետը եկավ Աշխարհի ապավենի դուռը և զեկուցեց այն մասին, թե հին ժամանակներից իվեր մինչև օրս ընդունված է եղել, որ Մարալիար<sup>25</sup> գյուղից մեկ բահ ջուր և Ապրակունիս գյուղի ջրի մեկ հինգերորդը հոսի դեպի հիշյալ Իսրայելի վանքն ու աղոթավայրը, իսկ այժմ ոմանք հակառակ Շարի և անիրավ կերպով, արգելք են հանդիսանում: Նա խնդրեց, որ այս մասին Չուխուր-Սա՛ղի բեկլարբեկին և Շարի երեւելիներին ուղղված սրբազան հրամանագիր հրատարակվի: Ուստի կարգադրեցինք, որ Չուխուր-Սա՛ղի բարձրաստիճան բեկլարբեկին և տեղի հաքիմը լուսավոր Շարի երեւելիների ներկայությամբ իրողությունը ստուգի և եթե ներկայացվածը համապատասխանում է իրականության, թող կարգադրեն, որ հիշյալ ջրի որոշյալ բաժինը, որ հին ժամանակներից իվեր առ այսօր հոսել է դեպի հիշյալ վանքը, հնուց ընդունված կարգով և անցած տարիների նման շարունակի հոսել, և տեղի մարդկանցից ոչ ոք ապօրինի և անիրավ արգելք չհանդիսանա ու անհանդստություն չպատճառի: Թող վարվեն Շարի օրենքների և արդարության սկզբունքներով և այնպես լինի, որ հիշյալ համայնքի նկատմամբ անարդարություն տեղի չունենա:

Այս ընդունել որպես խիստ կարգադրություն և հրամանին չհակառակել:

Գրվեց 1048 թ. սաֆար ամսին (1638 թ. հունիս 14—հուլիս 12):

<sup>23</sup> Երնջակ:

<sup>24</sup> Երնջակի Ս. Կարապետի վանքը տեղի մահմեդականները Իսրայել մարզարևի անունով կոչում էին «Իսրայել փելյամբար», ինչպես որ Գարաշամրի Ս. Սանփանոս Նախավկայի կամ Մաղարդա վանքը Գանիել մարզարևի անունով կոչվում էր «Գանիալ փելյամբար»:

<sup>25</sup> Գյուղն այժմ անվանվում է Բանանիար:

А. Д. ПАПАЗЯН

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ О ВОДОВЛАДЕНИИ  
И УКАЗ ШАХА САФИ ОТ 1638 года

(Р е з ю м е)

История землевладения в средневековой Армении тесно связана с вопросом о водовладении, который, однако, по сей день не стал предметом серьезного научного исследования ввиду недостаточного изучения соответствующих источников и в частности архивных документов, а также отсутствия поныне научных публикаций большей их части.

В статье делается попытка вкратце обрисовать некоторые особенности водовладения, водопользования и водоизмерения в XVI—XVIII вв. и показать роль архивных и, в частности, официальных персидских документов в деле освещения этих вопросов.

В приложении даются также обнаруженный в 1904 г. М. Смбалянцем и восстановленный автором персидский текст указа шаха Сафи от 1638 г., подтверждающего водовладельческие права монастыря св. Карапета в Ерынджаке, и его армянский перевод.

H. D. PAPAZIAN

LES DOCUMENTS D'ARCHIVES CONCERNANT LE DROIT DE  
PROPRIÉTÉ SUR L'EAU ET LE DÉCRET DE 1638 DE SHAH SAFI

(R é s u m é)

L'histoire de la propriété foncière en Arménie médiévale est étroitement liée au problème du droit de propriété sur l'eau, lequel, cependant, n'a pas fait jusqu'à présent l'objet d'une sérieuse analyse scientifique à cause de l'étude insuffisante des sources correspondantes, particulièrement des documents d'archives, et l'absence de publications scientifiques de la majorité de ces sources.

L'auteur de l'article esquisse brièvement quelques particularités du droit de propriété sur l'eau, du droit d'usage et de mesure de l'eau aux XVI—XVIII siècles et montre le rôle des documents d'archives et particulièrement des documents officiels persans dans l'éclaircissement de ces questions.

L'article comporte en appendice le texte persan, découvert en 1904 par M. Smbatians et reconstitué par l'auteur, du décret de 1638 de Shah Safi, confirmant les droits de propriété sur l'eau du monastère St. Karapet de Yerindjak, et sa traduction arménienne.

Я. Р. ДАШКЕВИЧ

## АРМЯНСКИЕ ОБЩЕСТВЕННЫЕ ПЕЧАТИ НА УКРАИНЕ (XVI—XVII вв.)

Как армянская, так и украинская сфрагистика периода позднего средневековья изучена слабо. Предпринимаемые в последнее время на Украине попытки систематического исследования печатей XV—XVIII вв. могут считаться только первым шагом на пути к обобщению огромного, сохранившегося до нашего времени, сфрагистического материала.

Почти совершенно нетронутой областью изучения являются армянские печати, употреблявшиеся в XVI—XVIII вв. в многочисленных армянских колониях купеческо-ремесленного типа, существовавших в городах Крыма, Правобережья, Западной Украины. Исследование различных видов печатей как армянских общественно-культурных учреждений (советов старейшин отдельных общин, братств), так и отдельных лиц (купцов, церковных сановников) становится в настоящее время актуальным в связи с необходимостью активизировать изучение культурных взаимоотношений Украины со странами Востока вообще, а также в связи с более углубленным изучением дружественных связей армянского и украинского народов, в частности.

Значение печатей как своеобразного и, вместе с этим, очень ценного исторического источника общепризнано. Одновременно все более очевидным становится и тот факт, что роль печатей — как источника особого вида, объединяющего в себе органически не только признаки письменного источника (эпиграфические данные печатей), источника символического (эмблематические данные печатей) и иконографического типов, но также и источника, позволяющего судить об уровне производственного развития (печать как изделие ювелирного искусства) — в источниковедении отдельных периодов средневековья различна. Если в источниковедении раннего средневековья печать, во многих случаях отделенная от документа, способна играть роль самостоятельного источника, в источниковедении позднего средневековья, когда печать почти неотделима от письменного источника (юридического акта), она переходит в ранг вспомогательного источника. Удельный вес сфрагистического материала в источниковедении позднего средневековья уменьшается, а основные выводы, получаемые из анализа печатей, сдвигаются заметно в сторону данных историко-культурного и историко-юридического плана.

Армянские печати позднего средневековья, употреблявшиеся на Украине в XVI—XVIII вв., почти полностью относятся к рангу вспомогательного источника. Только единичные из них (на что будет обращено особое внимание) могут раскрыть совершенно неизвестные по другим источникам стороны жизни армянских переселенцев. С другой стороны, роль их для изучения культуры, быта, нравов, юридических институтов, существовавших в армянских колониях, несомненно велика — подробное изучение печатей позволяет раскрыть определенные культурно-исторические процессы, которые при изучении сфрагистического материала становятся особенно рельефными и четко уловимыми.

Миграционные движения армян связаны, в первую очередь, с теми преследованиями, которым подвергалось армянское население как в своей закавказской метрополии (начиная с XI в. — приход турок-сельджуков), так и в тех местах, куда эмигрировало значительное количество армян (Киликия в Малой Азии, Крым, Молдавия, Западная Украина). Древнейшие сведения об армянской колонии в Киеве относятся к XI—XII вв., примерно в это же время возникают экономически мощные колонии в Крыму. В Галицко-Волынском княжестве армяне появились, по-видимому, в XIII в. В XIV в. существовали армянские колонии в таких крупных центрах, как Киев, Львов, Владимир, Луцк, Каменец, Сучава, Серет, Белгород (Аккерман), Сурож (Солдея), Сурхат (Старый Крым), Херсонес. Армяне сумели создать в этих и в ряде других городов (в более позднее время) свои общины, пользовавшиеся определенной автономией в юридическом (собственная более или менее ограниченная судебно-административная организация), религиозном (специфическая церковная организация, подчиненная армянским католикосам в Сисе и Эчмиадзине) и культурном (отдельные школы) отношениях. Армянские колонии на Украине, которые сыграли значительную роль в развитии экономических и культурных связей Украины с Востоком, на протяжении ряда столетий существовали в виде отдельного национального организма, яростно охранявшего свои самобытные духовные традиции.

Эта самобытность армянской культуры на Украине нашла свое отражение также в очень специфической и, казалось бы, довольно узкой области — в области создания и употребления печатей.

В соответствии с поставленной перед собой задачей, автор настоящей статьи пытается сообщить в наиболее сжатой форме как фактический материал о некоторых категориях армянских печатей, так и разрешить отдельные связанные с ним частные вопросы (эмблематика печатей, их правовое значение, связь между печатью и документом в свете данных дипломатики, значение армянских печатей как исторического источника). Данная статья ограничивается тремя категориями печатей, условно названных общественными, а именно печатями органов самоуправления, братств и школ. Вне пределов статьи остаются, таким образом, печати армянских горожан и духовных лиц.



Литература, посвященная истории средневековых армянских колоний на Украине, довольно значительна. Она насчитывает несколько сот научных работ определенной ценности, тем не менее армянским общественным печатям посвящены только отдельные и, по существу, случайные упоминания. Известный исследователь прошлого армянских колоний на Украине, армянский историк С. Баронч (1814—1892) вскользь упомянул только об одной печати — о печати станиславской общины XVII в.<sup>1</sup> Современный польский историк М. Закжевская-Дубасова упоминает о печати замойской общины XVI в. и рассматривает некоторые вопросы, связанные с изготовлением документов, удостоверяющих печатью<sup>2</sup>.

Армянские печати из Украины до сих пор очень редко (и то, в большинстве случаев, в неудовлетворительном виде) репродуцировались из оригинальных оттисков. Стоит, однако, упомянуть, что изображение одной армянской печати (каменецкой общины) появилось еще в 70-х гг. XVII в. на плане Каменца-Подольского, изданном в Кракове. Гравер К. Томашевский, возможно, каменецкий армянин, изобразил в левом верхнем углу плана герб Подольского воеводства в окружении печатей трех существовавших в Каменце отдельных юрисдикций: украинской, польской и армянской<sup>3</sup>. Репродукцию печати, даже для XVII в., нельзя считать вполне удачной — гравер исказил армянскую легенду печати. В связи с переизданием гравюры К. Томашевского несколько слов печати каменецкой армянской общины посвятили русский историк-краевед М. Городецкий (1846—1893)<sup>4</sup> и украинский историк, видный знаток прошлого Подолии Е. Сецинский (1859—1937)<sup>5</sup>. В 1928 г. польский историк Ч. Хованец (ум. 1967) репродуцировал рисунок печати станиславской общины, к сожалению, очень несовершенный, изготовленный на основании плохо сохранившегося оттиска (рис. 5)<sup>6</sup>.

<sup>1</sup> S. Barącz, *Pamiętki miasta Stanisławowa*, Lwów, 1858, s. 35.

<sup>2</sup> M. Zakrzewska-Dubasowa, *Organizacja gminy ormiańskiej w Zamościu w XVI—XVII w.*, „Rocznik Lubelski”, t. 3, 1960, s. 73, 75; *ibid.*, *Ormianie zamojscy i ich rola w wymianie handlowej i kulturalnej między Polska a Wschodem*, Lublin, 1965, s. 145, 154, 158, 161.

<sup>3</sup> Гравюра считается сейчас большой редкостью. Экземпляр ее находится в кабинете искусств Львовской государственной научной библиотеки Академии наук УССР. Плохие репродукции гравюры (вместе со схематическим изображением печатей) см.: K. Gorski, *Wojna Rzeczypospolitej Polskiej z Turcją w latach 1672 i 1673-im.*, „Biblioteka Warszawska”, ser. 5, 1890, t. 1, zesz. 2, s. 170—171; „Подолия. Историческое описание», изд. П. Н. Батюшковым, СПб., 1891, стр. 14—15; Е. Сецинский, *Город Каменец-Подольский. Историческое описание*, К., 1895, стр. 40—41; I. П. Крип'якевич, *Богдан Хмельницький*, Київ, 1954, вкладной лист между стр. 144—145.

<sup>4</sup> М. И. Городецкий, *Общий вид города Каменец-Подольска во второй половине XVII в. и в настоящее время*, кн. *Подолия...*, с. 56.

<sup>5</sup> Е. Сецинский, *цит. соч.*, с. 40.

<sup>6</sup> Cz. Chowaniec, *Ormianie w Stanisławowie w XVII i XVIII w.*, Stanisławów, 1928, s. [64].

Этим и исчерпываются, насколько нам известно, упоминания в литературе об армянских общественных печатах на Украине.

В настоящее время главной базой изучения армянских общественных печатей из Украины является оригинальный и копийный документальный материал XVI—XVIII вв., удостоверенный печатями, который хранится в Центральном государственном историческом архиве УССР во Львове и в рукописном отделе Львовской государственной научной библиотеки Академии наук УССР. Оттиски армянских печатей в сургуче и бумаге находятся на документах, в основном, четырех архивных фондов: львовского армяно-польского суда XVI—XVIII вв.<sup>7</sup>, львовского армяно-католического архиепископства XVII—XVIII вв.<sup>8</sup> и львовского армяно-католического архикафедрального собора XVII—XVIII вв.<sup>9</sup>. Сфрагистические материалы этих фондов положены в основу настоящей статьи. Изучение других архивных и библиотечных фондов Украины дало отрицательные результаты, что, конечно, не исключает возможности дальнейших случайных находок. Часть документальных материалов армянских общин Львова и Станислава в XVIII—XX вв. попала также в другие коллекции (в первую очередь необходимо иметь в виду рукописные отделы Библиотеки Национального института им. Оссолинских во Вроцлаве, Библиотеки Национального музея — отделения Чарторьских — в Кракове, Библиотек мхитаристов в Вене и Венеции), которые только частично изучались со сфрагистической точки зрения. Предпринятые нами поиски сфрагистического материала во Вроцлаве и Кракове дали скудные результаты. Архивные материалы других армянских общин, существовавших в Крыму, а также в Киеве, Луцке, Язловце и других городах почти полностью погибли<sup>10</sup> и особых надежд на обнаружение принципиально нового сфрагистического материала, особенно XIII—XV вв., нет. Поиски оригинальных матриц армянских печатей, предпринятые в украинских музеях и архивах, не принесли никаких результатов. Таким образом, основной базой исследования остаются оттиски печатей XVI—XVIII вв., обнаруженные в львовских коллекциях.

Архивный материал использовался также в другой плоскости. В качестве вспомогательного источника привлекались упоминания о печатах, сохранившиеся в документах XVI—XVIII вв. Очень важными для оценки роли печатей как юридического института, определения их названий являются упоминания печатей в дипломатических формулах документов (в корроборационном отделе так называемого контекста<sup>11</sup>

<sup>7</sup> Центральный государственный исторический архив УССР во Львове (в дальнейшем—ЦГИА УССР во Львове), ф. 52, оп. 3, т. 513—555.

<sup>8</sup> Там же, ф. 475.

<sup>9</sup> Львовская государственная научная библиотека Академии наук УССР (в дальнейшем—ЛГНБ АН УССР), отд. рукописей, ф. Оссолинских.

<sup>10</sup> В Центральном государственном историческом архиве УССР в Киеве хранятся остатки архива каменецкой армянской общины—сфрагистический материал в ней отсутствует. Остатки архива замойской армянской общины находятся в Государственном воеводском архиве в Люблине—в этом фонде также нет оттисков печатей.

<sup>11</sup> Термин «контекст» употребляется здесь в дипломатическом смысле, т. е. для обозначения основной части документа, следующей после вступительного протокола.

документа), которые и привлечены нами для исследования. Удалось обнаружить также имеющие отношение к употреблению и хранению печатей упоминания в средневековых законодательных актах украинских армян. Весь этот разнообразный материал разрешает с определенной полнотой осветить также историко-культурные и историко-юридические вопросы, связанные с историей употребления армянских печатей на Украине.

\* \* \*

Несомненно, что уже в первые десятилетия существования армянских колоний на Украине печать вошла в практику армянского общественного, а в дальнейшем и частного делопроизводства, хотя и изображения древнейших печатей не дошли до наших времен. Самые ранние упоминания об армянских печатях относятся к XIV в. К древнейшим известным армянским документам, составленным на Украине, привешивались вислые, по-видимому, восковые печати. К составленной в 1398 г. в Каменце дарственной грамоте Синана, передававшего построенную им же церковь в пользование местной армянской общины, была прикреплена вислая печать, от которой в то время, когда грамота попала в орбиту научных исследований, остался только кусочек шнура<sup>12</sup>. По-видимому, подобного вида печать была прикреплена также к дарственной грамоте Акоба, сына Шахиншаха (передававшего построенную им же церковь львовской армянской общине), составленной во Львове в 1363 г., оригинал которой, однако, также не сохранился до наших дней. Грамоты не имели корроборационных формул<sup>13</sup>.

Довольно рано, по-видимому, в местном армянском делопроизводстве наметился отход от восточных традиций, согласно которым печать обычно заменяла подпись — т. е. печать являлась более важным элементом документа, чем подпись. В первой половине XVI в. совершенно точно определяется влияние западной делопроизводственной традиции,

<sup>12</sup> Грамота находилась до второй мировой войны в рукописном отделе Национальной библиотеки в Варшаве и погибла во время войны. Факсимиле грамоты (вместе с фрагментом шнура) опубликовано дважды, см. *F. Müller, Zwei armenische Inschriften aus Galizien und die Gründungsurkunde der armenischen Kirche in Kameneck-Podolsk*, „Sitzungsberichte der philosophisch-historischen Klasse der Kais. Akademie der Wissenschaften“, Bd. 135, Wien, 1897, Taf. II; Ղ. Ալիշան, *Կամեննից: Տարեգրք Տալոց Ընկառանի և Ռուսնիոյ հաստատելոյ յաւերածովք, Վենետիկ, 1896, էջ 133*.

<sup>13</sup> Грамота в первой половине XIX в. хранилась в архиве львовского армяно-католического капитула. Публикацию оригинального армянского текста грамоты см.: Մ. Բժշկեանց, *Ճանապարհորդութիւն 'ի Ընկառան և յայլ կողմանս բնակեալս 'ի հայկազանց սերբոց 'ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 104—105*. В публикации М. Бжшкянца, а также в публикациях латинского, польского и немецкого переводов этой грамоты наличие печати не упоминается. Однако в записанном в рукописи ЛГНБ АН УССР, ф. Осеслинских, № II 1722, с. 5, польском переводе, выполненном на основании оригинала грамоты в первой половине XVIII в., отмечается наличие печати при оригинале. В дальнейшем печать, конечно, была утеряна.



Армянские общественные печати на Украине.

в соответствии с которой печать употреблялась наряду с подписью для удостоверения подлинности документа или даже наличие печати не являлось обязательным, а подпись сохраняла преобладающее — по отношению к печати — значение.

Двойственность культурной традиции — восточной в оформлении печати (восточная эмблематика, армянский шрифт легенд) и западной в ее употреблении — определяется в армянской сфрагистике на Украине вплоть до первой половины XVII в., т. е. до того момента, когда западное влияние окончательно взяло верх также в оформлении печатей.

Գ. Ավետիքյանը, խոսելով Ստեփանոս Սյունեցուն վերագրված մի շարականի («Սրբութիւն սրբոց...») մասին, գտնում է, որ այն պատկանում է X դարի գործիչ Ստեփանոս Մոկացուն, միաժամանակ ավելացնելով հետևյալ միտքը. «...յարմարի ևս այլոց հանգամանաց ժամանակին. զի յայսմ դարու զօրացան պապիկեան աղանդաւորք՝ արհամարօղք խաչի, եկեղեցւոյ և ամենայն սրբազան պաշտամանց ընդդէմ որոց վարդապետք ժամանակին զինեցան բազում օրինակաւ»<sup>16</sup>: Պետք է նկատել, որ X դարում ոչ թե պավլիկյաններն էին զորացել, այլ թոնդրակեցիները: Միաժամանակ պետք է ավելացնել, որ Գ. Ավետիքյանի դիտողությունը ճիշտ կլիներ նաև Ստեփանոս Սյունեցու տաղերի կապակցությամբ, երբ, իրոք, ծավալվում էր պավլիկյան շարժումը:

Իսկ, որ Ստեփանոս Սյունեցին ևս գտնվում էր նման պայքարի մեջ, դա վկայվում է նրա երկերի միջով անցնող համապատասխան հայացքներով և հատկապես իր մի գրվածքի բովանդակությամբ, որի խորագիրն է. «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի... ասացեալ ի զիմաց հերետիկոսաց»<sup>17</sup>:

Ըստ երևույթին Սյունիքում էլ նա ստիպված էր պայքարել աղանդավորական տրամադրությունների դեմ. «Եւ սրբեաց ճիւղաբարոյ երկիրն Սիւնեաց յամենայն պղծութենէ, և լուսաւորեաց զնոսա գիտութեամբ աստուածային օրինացն» — ասվում է նրա կենսագրության մեջ<sup>18</sup>:

Մատնացուլց արվող պարագան ուշագրավ է առհասարակ թե՛ Ստեփանոս Սյունեցու և թե՛ ուրիշների գրած համապատասխան ստեղծագործությունների կապակցությամբ: Ուստի անհարկի չէր լինի նշել մի բանի օժանդակ փաստ: Դեռևս V դարի համար վկայված է, որ ժամանակի զույգ կաթողիկոսների մոտ

16 Գ. Ավետիքյան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1815, էջ 515:

17 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ..., Բ, 1924, էջ 1059: Տե՛ս նաև Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 841, թերթ 40ր:

18 «Գիրք որ կոչի Այսմաւորք», Կ. Պոլիս, 1730, էջ 668 (2ՃԿԸ):

են գալիս Անտիոքի Ավշին գյուղի աղանդավորները և հայտարարում, թե «ոչ գուլ զՄարիամ աստուածածին, և ոչ զխաչն աստուածոյ խաչ, այլ զողոց պատժարան»: Նրանց և նրանց նմանների դեմ պայքարելու նպատակով է ստեղծված Գավիթ Անհաղթի անունով շրջանառության մեջ գրված հռչակավոր ներքողը՝ «Ի սուրբ խաչն» («Քարձրացուցէք զտէր աստուած...»)<sup>19</sup>: Այստեղ էլ մարտական ոգին ցցուն է՝ ի դեմս խաչի գրվատման. «...թագաւորաց յաղթանակ, իշխանաց յոյս քաջութեան, քրիստոսասէր զօրաց յառաջապահեստ, ախոյանաց քաջալերութիւն... անզգամաց զգաստութիւն, ստահակաց խրատ, քնդ վայրապարաց նահանջ...»<sup>20</sup>:

Համանման հիմք ունեն նաև Քեոզորոս Քոթենավորի ներքողները՝ «Ի սուրբ խաչն» և «Ի սուրբ կոյսն»: Ուշագրավ է դրանց նախորդող «Ղնդղէմ Մայրազոմեցոյն» մեղադրականը, ուր հեղինակը նկատի ունի իր ժամանակի աղանդավորներին, մանիքեցիներին, ուստի և պավլիկյաններին, որոնց հետ ունեցած կապի մեջ իրոք մեղադրվել է Հովհան Մայրազոմեցին: Վերջին փաստը համընկնում է Ստեփանոս Սյունեցու գործած ժամանակին և աշխարհագրական կողմերին<sup>21</sup>:

Այդ պայքարը նոր ձևով շարունակվեց թոնդրակեցիների կողմից, որոնք նույնպես ժխտում էին Քրիստոսի, խաչի, աստվածամոր պաշտամունքը: Նրանք էին, որ խորտակեցին Մանանաղյաց գավառի հռչակավոր խաչքարը, ինչպես նաև մյուս խաչքարերը<sup>22</sup> «ուր և դիպող ժամ հանդիպէր նոցա»<sup>23</sup>:

Եվ եթե աստիճանաբար ծնվում էին եկեղեցուն, խաչին ու աստվածամորը նվիրված զանազան ներքողներ, շարականներ, տաղեր, ապա դրանց մեջ համարյա միշտ էլ առկա էր նաև իր ժամանակի աղանդավորների դեմ մղվող պայքարի ոգին: Կարելի է ենթադրել, որ խաչքարերի ստեղծման սկզբնական շրջանի պատմությունն էլ իր շարժառիթներով, թեկուզ և մասամբ, կապված է եղել այդ պայքարի հետ: Նշված պայքարի արձագանքները այսօր հաճախ դժվար է նկատել, որովհետև ընդունված սովորության համաձայն համապատասխան մտքերը փոխաբերաբար էին ձևակերպվում և ընդհանրացումների եղանակով էին գրսևորվում<sup>24</sup>:

Առհասարակ Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերը մեծարժեք ստեղծագործություններ են՝ ինչպես իրենց գրական տեսակի, տաղաչափական առանձնահատկությունների, արվեստի, լեզվի, ոճի, այնպես էլ զաղափարական բովանդակության առումով: Նրանք պակաս նշանակալից չեն նաև իրենց ունեցած երաժշտական եղանակներով, որոնցից այսօր մեզ են հասել խաղային

19 «Մատենագրութիւնք նախնեաց» (Կորիւն, Մամբրէ, Գաւիթ), Վենետիկ, 1833, էջ 99—119:

20 Նույն տեղում, էջ 117—118:

21 «Մատենագրութիւնք նախնեաց» (Յովհանու Իմաստասիրի). այս գրքի վերջին մասումն են գտնվում Քեոզորոս Քոթենավորի նշված երկերը: Տե՛ս նաև «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1957, № 6, էջ 96:

22 Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Երևան, 1963, էջ 125—133:

23 Նույն տեղում, էջ 128:

24 Առհասարակ պիտի նկատել, որ այս կարևոր հարցը մինչև օրս մասնագետների կողմից լուրջ քննության առարկա չի դարձել: Նրանցից յուրաքանչյուրը իրեն հետաքրքրող առանձին փաստերի կապակցությամբ է միայն, այն էլ երբեմն, փորձել մոտենալ նրան, մինչդեռ մեր մատենագրության հարուստ ու բազմակողմանի նյութերում նման վիճակում լուծված են մնում մեր անցյալի իրականության համապատասխան արձագանքները:

ճոխ, բայց լուռ վկաները: Ինչ խոսք, մեծ երաժիշտը, որ հիմնեց հայոց շարականոցային կարգերը, հենց ինքն էլ ստեղծած կլիներ իր տաղերի եղանակները:

Քննվող տաղերը ձևագրերում, երաժշտական առումով ունեն մի քանի ուրիշ հատկանիշներ ևս: Այսպես, առաջին տաղը բաժանված է 3 մասի՝ որպեսզի երգը երգվի տարբեր եղանակներով: Նրանցից 2-րդի դիմաց նշված է «Այլ ազգ. Անառատ տանաբին ձայն», ուր նկատի է առնված, հավանաբար, Ն. Շնորհալու նույնասկիզբ տաղը («Անարատ տաճար և առագաստ լուսոյ»)՝<sup>25</sup>: Իսկ երրորդի դիմաց՝ «Այլ ազգ. Հոսեալ հրեղին[աց]», ուր, ըստ երևույթին, նկատի է առնված նույնասկիզբ մի հին ու անանուն տաղ<sup>26</sup>: Բացի դրանից, նորահայտ երկու տաղերին էլ կցված են մեկական ուրիշ երգեր որպես «փոխ»-եր, որոնցից առաջինն սկսվում է «Նոր խորհուրդ կենաց բերումն» (№ 3503, 228ա-բ), իսկ երկրորդը՝ «Այսաւր ցրնձա, նշան յաղթող, փայտ Փրկուիբեան...» (№ 3503, 235բ—237ա) տողով: Դրանք երկուսն էլ տարբեր շափով ու տարբեր կառուցվածքով ստեղծված ավարտուն, ամբողջական այլ երգեր են: Ո՞վքեր են վերջիններիս հեղինակները, դժվար է ասել: Ճիշտ է, երկուսից էլ առանձին տողեր են առնված Հայկազյան բառգրքում<sup>27</sup> և նշված նորից Ստեփանոս Սյունեցու անունով, սակայն հայտնի չէ, թե ինչպիսիք են եղել նրանց հիմքերը: Արդյոք այդ տաղերն առանձին-առանձին են հանդիպել նրանց՝ Ստեփանոս Սյունեցու անվան որոշակի նշումով, թե՛ նրանց օգտագործած ձևագրերում էլ այդ տաղերը կցված են մեզ հետաքրքրող նորահայտ տաղերին՝ որպես փոխեր: Եթե նրանք էլ փոխի գերով են հանդիպում, ինչպես մեր օգտագործած ձևագրում, ապա դա հիմք չի տալիս դրանց վստահաբար կապել Ստեփանոս Սյունեցու անվան հետ, որովհետև փոխերը սովորաբար ուրիշ գործեր են և ձևագրերում մեխանիկորեն են մուծվում հիմնական տաղերի հեղինակների անվան տակ՝ առաջացնելով թյուրիմացություններ:

Հավանաբար այդպիսիք են և քննվող փոխերը: Միաժամանակ նկատենք, որ մեզ ծանոթ ձևագրում առկա են մի քանի օժանդակ տվյալներ ևս այդ փոխերը Ստեփանոս Սյունեցուն վերագրելու համար, որոնք սակայն խիստ անբավարար են: Ուստի մենք առայժմ բավարարվում ենք այդ փոխերի վրա ուշադրություն հրավիրելով: Տպագրության ենք հանձնում միայն նորահայտ երկու տաղերը. առաջինը՝ մեզ հայտնի երեք, իսկ երկրորդը՝ մեկ ձևագրի հիման վրա՝ կցելով փոքրիկ բառարան՝ առաջին տաղի որոշ բառերի բացատրության համար:

25 Ն. Շնորհալի, Բանք շափաւ, Վենետիկ, 1928, էջ 444—447:

26 Պահպանված է № 9053 (թերթ 44ա—45ա) և այլ ձևագրերում:

27 Առաջինից «Սրորէապահակ» բառի բացատրության ժամանակ մեջ են բերված հետևյալ տողերը. «Սրորէապահակ դրախտին՝ Բացումն ամբացեալ ցանգոյն», իսկ երկրորդից՝ «Մովահերձիկ և առաջնորդ Իսրաէլի» կիսատողը՝ «Մովահերձիկ» բառի բացատրության մեջ:

Տպագրվող տաղերի մասին տե՛ս «Սովետական Հայաստան», 1961, հունվար 29 («Միջնադարյան նորահայտ երգեր»):

## ՍՏԵՓԱՆՈՍ ԱՅՈՒՆԵՑԻ

## 1. Ի Սիւնեաց Եպիսկոպոսէ Ստեփանոսէ ի սուրբ խաչն

- Սկիզբն անըսկըզբան սկըզբնաւորեալ խորհրդոյ սկիզբն.  
 Անեղինաշէն տունկ բարձրունոյ ստեղծեալ ուղէշ.  
 Անվայրենափակ միջնածաղիկ սահման կենաց.  
 Էն միատեսակ երկուց ներհակ բազմաշաւիղ:
- 5 Նոյինասաստին նորոգ կենաց պատճառ ցուցար,  
 Աբրահամինափորձ սարեկաճիւղ ծառ ծաղկեցար:  
 Ղաբանու և Յակորայ հաւտ երամից խայտախարիր,  
 Զուրց աւազանին գեղաշիտակ տունկ կիպարի:  
 Ամաղէկամարտ սուր ի ձեռինն Մովսիսի,
- 10 Զնոյն առ փարաւոն հերձինապտոյտ ոահ ապարին:  
 Բրաբրոն բազմարինակ, նիշ ի ճակատ անդրանկա դրացն,  
 Համ համազարդեալ լոյս երեսաց մեզ գուշակեաց.  
 Շաւիղինաշնորհ ուղղեալ ի մայր կիրանանու:  
 Ըիղ կառակերտեալ ամբարձաթռիչ ամպրոպային.
- 15 Քիրամի նուէր խնդիր յումեմնէ իմաստնոյ:  
 Ծով ոահինախոտվ, նաւակառոյց ծուփ միջնալեաց,  
 Խաղայր դարձ նոյն ի դարձ, զերասանակ ջուրցըն կապտէր.  
 Պետ իմաստութեան կաղմեալ ընդ ծով ասպարիսին.  
 Փառք կայ ի յաջմէ Սիոնի սկիզբն ի Սինայէ.
- 20 Սէիր թերայիան գետավրտակ ելումն ի լոյս.

## Աղբյուրներ

A = Զեռ. № 3503, թերթ 226ա—228ա, ժամանակ 1394 թ.:

B = Փարիզի ազգ. Մատ., ձեռ. № 79, թերթ 385ա—385բ, ժամանակ՝ 1241 թ.:

C = Զեռ. № 7785, թերթ 436ա—438ա, ժամանակ՝ XIV դ.:

## Խորագիր

A Սունեաց փխ. Սիւնեաց: B Խորագիր չիբ. թերթ է ընկել: C Տաղ սրբոյ խաչին կենարարին Քրիստոսի աստուծոյ:

## Բնագիր

- 1 B 1—5-րդ տողերը չիբ:  
 4 A բազմաշաւիղ:  
 6 A Աբրահամինափորձ սարեկաճուղ: B Պահպանված մասը՝ 6-րդ տողի կեսից. «...կա-  
 ճուղ ծառ ծաղկեցար»: C սարեկաճուղ:  
 7 A «Ղաբանու» բառի դիմաց լուսանցքում ուղղման նշանով «Ղա»-ի փոխարեն ցույց է  
 տրված «Բա». այս ուղղումը («Բարանու») ճիշտ չէ: B Յակորա: երամեց:  
 9 A Ամաղէկամարտ: Մովսէսի: B ձեռինն:  
 10 A փարաւովն: C հերձինապոյտ:  
 11 B ճակատն: C ճակատս:  
 13 A Շաւիղինաշնորհ: AB ուղեալ:  
 14 B ձեղ:  
 15 CA նուէր: A յումեմն: C Քիրամին: խնդիր յումմէ իմն իմաստնոյ:  
 17 B 17—22-րդ տողերը չիբ:  
 18 A Պէտ:  
 19 A կա: սիովնի:

- Անց Սողոմոնեան շրնշին փայտին հնաց ճարտարին.  
 Սարգին և սաւաին նոճ մայրենի խիտ յանտառէ:  
 Լրումն աւձինաշարժ զէն յահեկին աջաւորեալ.  
 Գէտ ինքն ի լերինն դաշտական՝ ի դէմ Փառանոյ:  
 25 Անվարժ յաւանակ, կառք քառանիւթ սրովբէասպաս.  
 Ենթակայէ սա ենթակայումն ամբարձունի,  
 Միշտ բազկատարած Քրիստոս ի սմա տեսաւորի.  
 Սովաւ ևհար զպատերազմ, յաղթեաց մահու զաւրեղապէս,  
 Գերագոյն զրտաւ հայրապետաց աշ ընդ աշմէ:  
 30 Քահանայից պարծանք, ցուպ ի ձեռին խորհրդական.  
 Սովաւ պանծալի պայծառանայ կաթուղիկէ:  
 Սա պրսակ շնորհաց արքունական նըշանադրոշմ.  
 Սա դաստիարակ դաւանողաց յերրորդութիւնն.  
 Սա հրահանգապետ մաքրեցելոց շրով և հոգով.  
 35 Սա պրսակ փառաց շնորհողին շնորհ երկրրպագուացս:  
 Սա է ամբութիւն, պարիսպ՝ ընդդէմ ճակատողաց.  
 Սա միացելոց ի մի մարմին՝ պրսակ ի գլուխ.  
 Սա ճարտար բրժիշկ է նեղելոց և վտանգելոց:  
 Սա է ախոյեան թագաւորաց և իշխանաց.  
 40 Սովաւ զաւրանան ազատագունդք ախեղերաց:  
 Սա անպարտելի սուսեր ընդդէմ զաւրավարաց.  
 Սա գալոց ընդ ամպրս երկնից՝ կարապետ յառաջընթաց.  
 Սա նաւահանգիստ քրիստոսագունդ նորածնելոց.  
 Սա հրաժարելոց հոգւոցն ընդ ամպս է առաջնորդ:  
 45 Սա է ահարկու յահեղ աւուրն ապրստամբիցն.  
 Ի սմա երկրրպագեն խաշեցելոցն խաշողքն ըզնա՝  
 Ի խոր խաւար խորին յահեղ փառաց խաշեցելոցն.  
 Թագ արքայէ նոցն արփայլենից զրելոցն ի կեանս,

21 A Սողոմոնեան: Նախապես՝ «հնար» ուղղված՝ «հնաց»:

22 A Սարգին:

24 A ինքն: AB լերին: A Փառանու: B Փառանոյ: C դաշտանակ Փառանոյ:

25 B 25—26-րդ տողերը չիբ: C և կառք աննիւթ սրովբէասպաս:

26 A էնթակայէ: էնթակայումն: C ենթակունակ բարձրարեմի:

28 C էհար ըզպատերազմ:

29 B գտաւ:

30 B խորհրդական:

31 A պանծալին: B կաթողիկէ:

32 B պսակ: նշանադրոշմ:

34 BC մաքրեցելոյ: B հոգով:

35 B 35—38-րդ տողերը չիբ:

36 A Սայ:

40 A ախեղերաց:

42 AC գալոց է: A երկնից չիբ: BC ամպս: և կարապետ փխ. կարապետ յառաջընթաց:

43 B նորայծնելոց:

44 A «ընդ ամպս»-ի փոխարեն «լերիկինս», որի վրա ուղղման նշան և լուսանցրում՝ «ընդ ամպս»: B հոգոցն:

45 B յաղեղ: ապաստամբիցն:

46 A խաշեցելոցն: B երգրպագեն: BC ի սմա փխ. ըզնա:

48 A սոյն: C արփայլենից:

- Ահեղակերպ փայլմամբ հուր կիզանող խրնդիր վրիժուց,  
 50 Դրպրութիւնք՝ հրաշից դրունք, բացարձակ բանին քակտումն.  
 Երկուց վիմատիպ բանին տասնեան տառ սլատգամաց:  
 Սուր ի սրովբէին ձեռին, դատող ազգին հրէից.  
 Ի քեզ ապաւինիմք երկրրպագութս խաշեցելոյն.  
 Էին էացելոցս զքեզ փառատրեմք յանմահ ի կեանսն:  
 55 Այժմ և յանապազ ձայնիւ երգով զՔրիստոս գովել՝  
 Ընդ հար և հոգւոյն ի յանվախճան յաւիտենին:

## 2. Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի տաղ սուրբ խաչին

- Սրբբոյ խաչին զաւրութիւն վաղագոյն տեսեալ,  
 Մարգարէից սրբբոց գուշակեալ:  
 Աւհրնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,  
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:  
 5 Տունկ անմահութեան երևեալ պատուական խաչին,  
 Փրկող մեզ յայտնեալ ի թունից աւձին:  
 Աւհրնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,  
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:  
 Երկնաւոր սանդուղք ցուցաւ խաչն հողանիւթ բնութեանս,  
 10 Բարձրանալ սովաւ ի յերկինս:  
 Աւհրնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,  
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:  
 Փառաց աթոռ անեղին երևեալ յերկրի,  
 Սրբբոյ խաչին բարձեալ ըզտէրբն տերանց:  
 15 Աւհրնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,  
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:  
 Այսաւր ըզտանս կատարեմք լուսազարդ խաչին,  
 Որ եղև, ը՛, մեզ փրկութիւն:  
 Աւհրնեալ է խաչն հրաշալի փառաբ,  
 20 Տերունոյն արեամբքն ներկեալ.

49 B խնդիր վրիժուց: C կիզանաղ:

50—51 BC տողերը չիք:

52 BC Սրբութիւնք (C Սրբութիւնք) սրբբոց սուրբ խաչ, դատող ազգին հրէից:

53 B երկրպագութս:

54 A քև փխ. զքեզ: փառատրիլ: B փառատրեմք: BC յանմ ի կեանս:

55 B 55—56-րդ տողերը չիք: C Այժմ և հանապազ Քրիստոս արհնեալ միշտ յաւիտեան:

56 A յանվախճան: C և փխ. ի: Վերջում որպես փոխ AC օրինակներում՝ «նոր խորհուրդ կենաց բերումն...» տաղը:

Աղբյուր՝ Ձեռ. № 3503, թերթ 234բ—235բ:

Խորագիր—Ստեփանոսի:

3 Ձեռագրում՝ «ընծայող»: Ուղղում ենք ըստ վերջին տան կրկնակի:

7 Այս և հաջորդ չորս տների կրկնակները գրված են կրճատ ձևով. լրացնում ենք ըստ առաջին տան կրկնակի:

9 Ձեռագրում՝ սանդուղք:

19—20-րդ տողերը նոր կրկնակի տպավորություն են թողնում: Իրանք երգի տներից չեն, որովհետև դուրս են ծայրակապի հաշվից:

- Աւրհընեա՛լ է փայտն՝ բնծայող լուսոյն,  
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:  
 Ներգործեցեր յաշխարհի զգիտութիւն լուսոյ,  
 Որ եղեր, բ՛, մեզ ճանապարհ կենաց:
- 25 Աւրհընեա՛լ ես, խաչ, պարգևող լուսոյ,  
 Ի քէն ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:  
 Ո՛վ փայտ կենաց, որ կանգնեալ ի տեղոջ բարձու,  
 Բարձեր ըզբարձաւոյն յանցանաց մերոց:
- 30 Աւրհընեա՛լ ես, խա՛չ, պարգևող լուսոյ,  
 Ի քէն ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:  
 Սըրբեալ ըզմեզ մաքրեսցես ի մեղաց մերոց,  
 Որ եղեր սեղան սըրբարար հըրոյն:  
 Աւրհընեա՛լ ես, խաչ, բնծայող լուսոյ,  
 Ի քէն ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:

## Բ Ա Ռ Ա Ր Ա Ն\*

- Աբրահամինափորձ — Աբրահամին փորձող. նկատի ունի աստծու կողմից Աբրահամի հավատարմության փորձելը (Ծնունդք, ԻԲ):
- Ամաղէկամարտ — Ամաղեկի կամ ամաղեկացիների դեմ մարտնչող. նկատի ունի Մովսէս Մարգարեի զավազանը, որով ընթացք էր տրվում Ամաղեկի (ամաղեկացիների) դեմ մղվող ճակատամարտին՝ հօգուտ իսրայելացիների (Նւր, Ժէ):
- Անէղինաշէն — Անէղի՝ աստծու ստեղծած, աստվածաշէն:
- Անվայրենափակ — Անվայրափակ, անպարագիր, անսահման:
- Աջաւորեալ — Աջ կողմում տեղ գտած:
- Արփայենից — Արփային, արփենի, արեզակնային, եթերային:
- Կառակերտեալ — «Կառք» և «կերտել» բառերից՝ կառաստեղծման իմաստով:
- Շափղինաշնորհ — «Շափղ» և «շնորհել» բառերից. ճանապարհ շնորհող, ուղի նվիրող, ուղեցույց-առաջնորդ:
- Սարեկանիւղ — Սարեկ — անծանոթ տունկ. ոստալից, երկճյուղ(°): Հիշված է աստվածաշնչում «սարեկ» ձևով (Ծնունդք, ԻԲ, 13):
- Սէիր — Լեռ Հուդա երկրի մոտ (Յեսու, ԺԵ, 10):
- Փառան — Անապատի անուն (Ծնունդք, ԻԱ, 21 և այլուր). նաև լեռան անուն (Բ օրէնք, ԼԳ, 2):

25 Այստեղից կրկնակը մասամբ փոխվում է:

30 Տողը սղված է. լրացնում ենք ըստ 26-րդ տողի:

33 Կրկնակը մասամբ փոփոխված է:

34 Տողը սղված է. լրացնում ենք ըստ 26-րդ տողի:

\* Սույն բառացանկի մեջ տրված են միայն Հայկազյան բառգրքից բացակայող բառերը:



A. Յ. ՄՆԱՇԱԿԱՆԻ

## НОВООТКРЫТЫЕ ТАГИ СТЕПАНОСА СЮНЕЦИ

(Р е з ю м е)

Литературное и научное наследие видного писателя и переводчика VII—VIII вв. Степаноса Сюнеци еще досконально не изучено. Публикация двух его новооткрытых тагов (гимнов), посвященных святому кресту, дает возможность, с одной стороны, составить более полное представление о творчестве этого выдающегося деятеля раннего средневековья, а с другой—уяснить закономерности становления и развития жанра тага, занимавшего важное место в средневековой армянской поэзии.

A. CH. MNATSAKIAN

LES TAGHS DERNIÈREMENT DÉCOUVERTS DE  
STEPANOS SOUNETSI

(R é s u m é)

L'héritage littéraire et scientifique de l'écrivain et traducteur éminent des VII—VIII siècle Stepanos Siounetsi n'a pas encore fait l'objet d'une étude approfondie. La publication de deux de ses taghs (hymnes) nouvellement découverts consacrés à la Sainte Croix, permet d'une part de se former une idée plus complète de l'oeuvre de cette personnalité éminente du Moyen Age et, d'autre part, d'éclaircir les règles de l'apparition et de l'évolution du genre du tagh qui a occupé une place de choix dans la poésie arménienne médiévale.

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՇՄԻՉՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՊԱՍԱՔԱԼՅԱՆԻ «ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ» ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 3080 ձեռագրում ընդօրինակված է առաջին հայացքից մի անհայտ հեղինակի երաժշտագիտական գործը, որը սակայն, իրականում, պատկանում է կեսարացի Գրիգոր դպիր Գապասաքալյանի (1740—1808) գրչին: Այն, լրացնելով մեր տեսարանի ու նրա ժառանգության մասին առկա տվյալները, նաև շահեկան նորույթ է բերում իր հետ: Ձեռագիրը (125 թերթ. թուղթ՝ 19,4×14,5. միասյուն նոտրգիր) մի կազմի մեջ ներփակում է երեք տարբեր միավորներ, արտագրված տարբեր ժամանակ ու տարբեր գրիչների կողմից: Դրանք են՝ 1. Սիրուն զրոսարան, յօտարէն փոխեաց ի հայ Գր. Պոլսեցի (էջ 2ա—33բ), 2. Բժշկարան, յորում պարունակին անուանք ընտիր և օգտակար դեղօրէից... (էջ 38ա—94բ) և 3. Համառօտութիւն երաժշտականի գիտութեան հարց և պատասխանատուութեանց, շարադրեցեալ յումեմնէ բանասիրէ ի փառս ամենակալին աստուծոյ և յօգուտ ազգիս արամեանս (էջ 96ա—124բ):

«Սիրուն զրոսարանը» արտագրված է բոլորովին նոր թղթի վրա: Ավելի հին է «Բժշկարանի» թուղթը, և առավել հին ու իր շափսերով ևս փոքր-ինչ տարբեր՝ մեզ հետաքրքրող «Համառօտութիւն երաժշտականի» թուղթը: Թվական և հիշատակարան ունի միայն «Սիրուն զրոսարանը»: Պարզվում է, որ թարգմանության նախազաղափար օրինակը գրված է եղել 1827 թվականին, իսկ արտագրությունը կատարվել է 1851-ին<sup>1</sup>: Ակնհերև է, որ վերջին թվականը ցույց է տալիս նաև վերոհիշյալ երեք աշխատությունները մի կազմի մեջ ամփոփելու մոտավոր ժամանակը:

Ամփոփելով Գապասաքալյանի ժառանգության մասին հայտնի բոլոր տվյալները, այժմ կարելի է ասել, որ նա հեղինակ է երաժշտագիտական շորս աշխատության: Դրանցից իր կենդանության օրոք հրատարակվել են առաջինը («Գրքոյկ որ կոչի նուագարան», Կ. Պոլիս, 1794) և երրորդը («Գիրք երաժշտական», Կ. Պոլիս, 1803)<sup>2</sup>: Չորրորդ աշխատության ձեռագիրը, որ հե-

<sup>1</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3080, էջ 2ա (գրչագրին ու նրա բովանդակած երաժշտագիտական աշխատությանն ընդհանուր առմամբ ծանոթ են եղել Սպ. Մելիքյանը (տե՛ս նրա «Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վրա», Թիֆլիս, 1914, էջ 26) և Բ. Աթաբեկյանը (համառ. նրա «Գրիգոր Գապասաքալյանը և խաղաբանությունը» հոդվածը. «Բանբեր Մատենադարանի», 1960, № 5, էջ 165):

<sup>2</sup> «Գիրք երաժշտականին» կից հրատարակված «նուագարան երաժշտականը» թեև ինքնուրույն միավոր է, սակայն երաժշտա-տեսական հատուկ բաժին չունի և փոքրիկ երգարան է պարզապես: Նույնը պիտի ասել նաև դարձյալ 1803-ին տպագրված «Գրքոյկս կոչեցեալ երգարան» հատորի վերաբերյալ, որովհետև որս երաժշտա-տեսական բաժինը զբաղեցնում է 160 էջանոց մատյանի երկու թերթը միայն, հետապնդելով երաժշտության մասին մեկ ընդհանուր ծանոթություն տալու նպատակը («Ցաղագս երաժշտութեան թէ՛ զինչ է»):

դինակի մասին տեղեկություն չի պարունակել, անցյալ դարի վերջերին պահվել է Կեսարիայի ս. Գանիելի վանքի մատենադարանում: Տրդտ. եպ. Պալլյանը ժամանակին նկարագրել ու հատվածաբար ներկայացրել է այն գիտական հասարակայնությունը<sup>3</sup>: Նա բարձրացրել է նաև աշխատության հեղինակային պատկանելության հարցը, և քիչ անց հանգել համոզման, որ դա Գր. Գապասաբալյանի գործն է, հանդիսանում է նրա «Գիրք երաժշտականի» բովանդակության ընդարձակ շարադրանքը, որ կատարվել է համաձայն նախապես տրված խոստման՝ շուրջ 1805-ին<sup>4</sup>: Յավոք, Կեսարիայի ս. Գանիել վանքի մատենադարանի հայկական 85 ձեռագրերի հետ միասին (որոնք նկարագրած է եղել Տրդ. Պալլյանը)<sup>5</sup>, առաջին աշխարհամարտի ժամանակ անդարձ կորել է նաև Գր. Գապասաբալյանի այդ երկը: Իսկ նրա երկրորդ աշխատությունը ընթերցողի ուշադրությունը հանձնվող այս հարցարանն է (կատեխիզիս) «Համառոտություն երաժշտականի գիտության» խորագրով:

Համեմատությունը ցույց է տալիս, որ այն ունենալով շարադրության լոկ իրեն հատուկ նպատակային թեքումը, միևնույն ժամանակ լեզվով, մտածելակերպով, բովանդակությամբ, նյութի ընդգրկմամբ ու դասակարգման սկզբունքով մի կողմից հետադա մշակումն է «Գրքոյկ որ կոչի նուագարանի» երաժշտատեսական բաժնի, և մյուս կողմից՝ անմիջական նախապատրաստումը «Գիրք երաժշտականի», ուստի գրված պետք է լինի 1794-ի և 1803-ի միջոցին, հավանաբար 1799—1800 թվականներին:

«Գրքոյկ որ կոչի նուագարան» աշխատության մեջ, որ Գապասաբալյանի երաժշտագիտական առաջին երկասիրությունն է<sup>6</sup>, հեղինակը օգտվելով Աստվածաշնչից, Գավիթ Անհաղթի «Սահմանքից», նրա միջնադարյան մեկնություններից, Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գրքից» ու գրչագրերում պահպանված մի քանի փոքր հոդվածներից՝ խոսում է երաժշտության ծագման, նրա ներգործության ուժի և աշխարհիկ ու եկեղեցական ստորաբաժանումների մասին, շոշափում է ձայների տեսակների, ձայնեղանակների առաջացման ու նվագարանների ստեղծման խնդիրները, վերջապես բարձրացնում է հայ երաժրշտության ձայնեղանակների, շափակչությունների և խաղաղությունների հարցերը<sup>7</sup>: Աշխատությունը զերծ չէ թերություններից<sup>8</sup>: Նրա խաղաբանական մասի ան-

3 Տրդ. Պալլյան, Հայկական երաժշտության նորագյուտ դասագիրք մը, «Հանդես ամսօրյա», 1895, № 3, էջ 65, № 4, էջ 123:

4 «Հանդես ամսօրյա», 1896, № 12, էջ 353:

5 Ս. Քոլանջյան, Մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1966, № 9—10, էջ 90:

6 Առաջարանի մեջ հեղինակը խնդրում է «անբասիր առնել զմերն համբակություն... զի առաջին պտուղ մեր է, որպէս թէ ի նոր տնկոյ՝ նոր ծաղիկ և նորահաս պտուղ» («Գրքոյկ որ կոչի նուագարան», էջ 6—7):

7 Երաժշտության տեսաբանը այստեղ (ինչպես իր մյուս աշխատություններում) փորձ է կատարում դուրս բերել խաղաղության արվեստը ճշմարտամային վիճակից, օգտվելով գլխավորապես բյուզանդական նեմադրության սկզբունքներից, և նրա համար, որ՝ հեղինակի խոսքերով ասած՝ հայ դպիրները «բարեկուր ձայնի ոգեալ վերերգեցեն. յետս կացեալ ի միախորի կոչեցեալն երաժշտականէ արհեստէ աշխողեաց» (էջ 6), որ ուշագրավ գիտադրություն է, ինչպես նկատեց Ա. Ալլոյլյանը (տե՛ս նրա՝ «Պատմություն հայ Կեսարիո», հատ. Բ, Գաճիքի, 1937, էջ 1583):

8 Թե՛ խաղաղության, և թե՛ ընդհանրապես տեսության հարցերում հեղինակը, շնայած օրինակելի ջանասիրությամբ ձգտում է հարաբերակցել հայ երաժշտության փաստերը պարսկա-արաբական և բյուզանդական երաժշտարվեստների համապատասխան երևույթների հետ, բայց ոչ բավականաչափ հստակ կողմնորոշմամբ:

կատարութիւնը զգացել է հեղինակն ինքը և «Գրքոյկի» հիշատակարանում տեղեկացրել, որ «եթէ տէր հրամայեսցէ իւր տիեզերածաւալ և ամենակարօղ զօրութեամբն, ի լրումն հասուցանելոյ ձեռնամուխ լեալ եմք»<sup>9</sup>: Բայց խնդիրը միայն դրա մեջ չէ: «Գրքոյկի» երաժշտա-տեսական բաժնի բովանդակութիւնը շարադրված է անկարգ-անսխտեմ:

Երաժշտագիտական իր մյուս աշխատութիւններում Գապասաքալյանը հիմնականում պահպանեց տեսական խնդիրների նույն միակցութիւնը, բայց ավելի մշակեց այն, ընդլայնեց, խորացրեց, առավ գիտական համակարգի տակ, իսկ ամբողջական գրվածքներին հաղորդեց նպատակային նոր թեքումներ: Դա երևում է, մասնավորապէս, Գապասաքալյանի հրատարակվող երկից ևս:

Աշխատութեան առաջին երեք գլուխներում հեղինակը ընթերցողի առաջ պարզում է իր ժամանակի ու միջավայրի երաժշտա-գեղագիտական ըմբռնումները: Խոսում է երաժշտական արվեստի ծագման շուրջ, այն կապելով հին հրեական և հին հունական մի քանի (իրական թե առասպելական) երգիչ-բանաստեղծների գործունեութեանը. անդրադառնում է երաժշտութեան ներգործութեան ուժի խնդրին, վերջապէս բարձրացնում է աշխարհիկ ու հոգևոր երգարվեստի և առարկայական իրականութեան հարաբերութեան անկյունաքարային հարցը, արտահայտելով արվեստի փիլիսոփայութեան բնագավառում հայ եկեղեցու ուշ միջնադարյան դիրքորոշումը (և աշխարհիկ երգ-երաժշտութեան հանդեպ նրա որդեգրած նոր, հանդուրժողական վերաբերմունքը):

Աշխատութեան մյուս գլուխները նվիրված են զուտ տեսական հարցերի՝ հայոց ութ-ձայնի համակարգին, շափակչույթային դրութեանը և խաղաղութեանը:

Ութ-ձայնի համակարգի առնչութեամբ բարձրացվող խնդիրներից մի-երկուսը առանձնապէս ուշադրավ են: Կարևոր պարագա է, որ Գապասաքալյանը զանազանում է ձայնեղանակների լրիվ անվանակոչութիւնները («առաջին ձայն», «երկրորդ ձայն» և այլն)՝ որպէս «անուանք ձայնից»՝ դրանց դրութեան լոկ կրճատ կարծեցյալ ձևերից («աձ», «բձ» և այլն), վերջիններս համարելով «նշանագիծք ձայնից», այսինքն՝ յուրատեսակ խաղանշաններ<sup>10</sup>: Այնուհետև, հեղինակն առանձին գլուխ է նվիրում այսպէս կոչված «հին» ձայնեղանակների խնդրին (թեպետև դրա լուծումը նա որոնում է շատ հեռուններում<sup>11</sup>). և

<sup>9</sup> «Գրքոյկի որ կոչի նուագարան», էջ 423:

<sup>10</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Կոմիտասը և հայկական խաղերի վերծանութեան խնդիրը» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 39—41):

<sup>11</sup> Մասնավորապէս՝ միջնադարյան մատենագրութեան այն հատակոտորներում, ուր, երաժշտական ձայների ու ձայնեղանակների ծագումնաբանութեան կապակցութեամբ, խոսվում է առասպելական երաժիշտների՝ հնադույն ժամանակներին վերաբերող գործունեութեան մասին (ձեռագրական այդ հատակոտորների նշանակութիւնը բացահայտված է մեր «Քննական տեսութեան հայոց հին և միջնադարյան երաժշտութեան պատմութեան» հոդվածում (տե՛ս ԳԱ «Լրաբեր», 1970, № 10, էջ 23—29, և 1971, № 1, էջ 53—55): Տակալին XIV դարում ունեցել ենք տեսարաններ, որոնք ձգտել են՝ հայկական ութ-ձայնի իրենց ժամանակակից պատկերը համեմատութեան մեջ դնել՝ նույն ութ-ձայնի վաղ միջնադարյան դրութեան հետ (հմմտ. մեր «Ներդաշնակութեան հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում» հոդվածը, «Բանբեր Մատենագրանի», № 8, 1967, էջ 103—104):

բացատրում է, որ ինչպես արևելյան ու բյուզանդական հիմնական եղանակները, նույնպես և հայկականները՝ «ի բազում կերպս տրամաբաժանին»<sup>12</sup>:

Չափ ու կշռույթի վերաբերյալ իր ասելիքները շարադրելիս Գապասաբալյանը օգտագործել է XVII—XVIII դարերում հրատարակված մի քանի քերականական աշխատություններ<sup>13</sup>: Եվ հավատարմաբար (անգամ համեցած բոլոր հունարանություններով) վերարտադրելով դրանց համապատասխան մասերը, մանավանդ Հովհաննես Հոլովի աշխատության շորրորդ «հատորի» բովանդակությունը (չնչին տարբերություններով ու փոքր հավելումներով)<sup>14</sup>, դատողությունների առանցք է դարձրել «տառ-վանկ-ոտք-տաղ» (ստիքոս) աստիճանավորությունը:

Գապասաբալյանը որոշակի գաղափար է ունեցել նաև զուտ երաժշտական (դրական խոսքերից անկախ կշռույթաձևերի մասին, ձևեր՝ որոնք հայոց մասնագիտացված երգարվեստում կիրառվել են նույնիսկ V դարում, ու հետագահետ զարգանալով, տեսության մեջ ևս ուրույն մեկնաբանություն ստացել X—XV հարյուրամյակներում: Բայց դրանց շուրջ հեղինակը «Համառօտութեան» էջերում չի տարածվում: Այլ բավարարվում է հատուկ նշում կատարելով այն մասին, որ դրական միևնույն խոսքը երաժշտա-չափական տարբեր մեկնաբանություններ, ու չափական միևնույն սրբման էլ՝ ներքին կշռույթային տարբեր ձևավորումներ կարող են ստանալ (տե՛ս 142 և 143 հարցերը): Չափ ու կշռույթի խնդիրներին վերաբերող իր դատողություններում Գապասաբալյանը որպես ելակետ է ընդունում տաղաչափական ոտքի տեսակները (իրենց բաղկացուցիչներով) ու դրանց համապատասխանող «ձայնադրական եղանակները» (հրց. 124), որոնք արտաբերվում են ամանակով, և մի քանի անգամ ընդգծում՝ «որ յայտ է, թէ ամանակն է գաղտնի գիտութեամբ» (հրց. 116):

«Համառօտութեան» մեջ խազերի մասին առկա նյութի մեծ մասը վերաբերում է հեղինակի առաջարկած ձայնադրության նոր համակարգին, որը նա ձգտում է ստեղծել հայկական, բյուզանդական և արևելյան երաժշտության տարբերի համադրումով: Բուն խնդիրը՝ խաղանշաններին բարձրության ու ձայնամիջոցային ճշգրիտ արժեքներ հատկացնելու միտումն է, որ թեև այն-

12 Գեոևս վաղ միջնադարում հայկական ձայնեղանակներից յուրաքանչյուրի նշումը հավասարապես տարածվել է ոչ միայն տվյալ ձայնեղանակի ուղորտին պատկանող մեղեդիական տարբեր տիպերի (կամ կաղապարների), այլև համապատասխան «դարձվածք» եղանակների վրա: Զարգացած ավատատիրության շրջանում աննախընթաց կերպով բազմանում են հայոց ութ-ձայնի համակարգով ենթադրվող տիպական եղանակները, որ և գիտակցում են ժամանակի մտածողները (օրինակ՝ Առ. Սյունեցին): Այնպես որ, խոր միջնադարից մինչև մեր օրերը հասնող փաստերի, ասույթների ու տեսական դրույթների մի շարք ենք ստանում, որ գալիս է ապացուցելու, թե հայկական ութ-ձայնը ևս, իրականում, ներկայացրել է բազմաձայն, հարուստ մի համակարգ:

13 Այդ թվում՝ Ոսկան վարդապետի «Քերականութեան գիրքը» (Ամստերդամ, 1666), Խաչատուր Էրզրումեցու «Գիրք քերականութեանը» (Ալիկոնա, 1696), Սիմեոն Ջուլայեցու «Գիրք որ կոչի քերականութիւնը» (Կ. Պոլիս, 1725), Կղեմես Գալանոսի Երկասիրությունը (Clemente Galano, Grammaticae et Logicae Institutiones Linguae Literalis Armenicae, Romae, 1645) և հատկապես Հովհաննես վրդ. Հոլովի քերականությունը («Զտութիւն հայկարանութեան կամ քերականութիւն Հայկական», Հոտմ, 1674):

14 Հմմտ.՝ «Ցաղագս շափարանութեան տառից» (էջ 192), «Ցաղագս վանկաշափութեան» (էջ 193), «Ցաղագս սահմանի և բաժանման ոտից» (էջ 195) և «Ցաղագս սահմանի և բաժանման տաղի» (էջ 197):

պես էլ դուրս չի գալիս փորձի շրջանակներից, սակայն ունի պատմա-մշակութային որոշակի նշանակութիւն<sup>15</sup>:

Ավելի կարևոր են հեղինակի հատուկենտ այն դիտողութիւնները, որոնք փաստորեն պատկանում են խաղաղութիւն հին արվեստին: Ասենք՝ խաղանշանների «սրածե», «թրածե», «ճղածե», «օղածե», «կտցածե» ու «գրածե» լինելու մասին դիտողութիւնը (հրց. 148). դրանց (խաղերի) «չաղազս պերճագարդութեան եղանակի» հորինված լինելու վերաբերյալ ասույթը<sup>16</sup>. իսկ զուտ ելևէջի հարթութիւն վրա՝ խաղերի պաշտոնը տվյալ եղանակը «ի շեշտածայնն, ի բթածայնն, ի պարոյկածայնն [և] ի յոլորակածայնն» «տրամաբաշխելու» մեջ տեսնելու միտումը (հրց. 151) և այլն:

Տեսական այս հարցերի քննութիւն մակարդակը պայմանավորված է հայկական երաժշտագիտութիւն ու ժիջնագարի ընդհանուր վիճակով, նրան հատուկ դանդաղ զարթոնքի հակումով ու նաև սրբուստիկ մտածողութիւն ուշացած որոշ դրսևորումներով, որոնք Գապասարայանի գրչի տակ ստանում են ինքնատիպ շեշտեր: Եվ սակայն, աշխատութիւն վերոհիշյալ հատվածներից յուրաքանչյուրում հեղինակը առաջադրում է նաև շահեկան մտքեր, և որ կարևորն է, ողջ շարադրութիւնը հանգեցնում է կշռութային առումով միեկնույն հայտարարի տակ բերվելու ընդունակ ոտանավորները որպես շափանմուշ (էտալոն) վերցված մեկ ձայնեղանակի զուգորդութիւններ երգելու փորձի հաստատմանը: Ուշագիտ ընթերցողը հրատարակվող աշխատութիւն մեջ կգտնի մտքեր և այն մասին, որ տաղաշափական միեկնույն ձևով հորինված ոտանավորները հնարավոր է երգել տարբեր ձայնեղանակներում, և այն մասին, որ միեկնույն ձայնեղանակի հիմա վրա, դիմելով տարբեր կշռութիւնների, կարելի է մարմնավորել մեղեդիական տարբեր կերպարներ: Հիմնական շեշտը, սակայն, դրված է տաղաշափական նույն ձևով հորինված և կշռութային առումով միեկնույն հայտարարի տակ դրվելու ընդունակ ոտանավորները մեկ ձայնեղանակի օգնութիւն հնչեցնելու հնարավորութիւն վրա, որը հայկական ու ժիջնագարի պայմաններում իրացվել է միակողմանիորեն և շափազանցորեն:

Հրատարակվող ընագիրը տպագրութիւն պատրաստելիս կանոնավորել ենք ուղղագրութիւնը և կետագրութիւնը, բացել ենք հասարակումները, փակագծերի մեջ առել Աստվածաշնչից արված վկայակոչումների տեղիները, շտկել ընդօրինակող գրչի թույլ տված ակնհայտ վրիպակներն ու մասնագիտական աղճատումները, և դրվածքն օժտել անհրաժեշտ ծանոթագրութիւններով:

<sup>15</sup> Գապասարայանի այդ միտումը ցույց է տալիս, որ խաղանշանները հնում չեն ունեցել ելևէջի ճշգրտված բաշխեր արտահայտելու զորութիւնը: Նրա ջանքերը հստակ մատնանշում են խաղաղութիւն հին արվեստի ապրած սուր ճգնաժամը, մինչդեռ, նույն ժամանակաշրջանում կամ ավելի վաղ ոչ մի տեղ չենք հանդիպում «խաղերի բանալի» կորստյան մասին արտունջների: Տեղին է այստեղ նշել, որ Գապասարայանը խաղանշանների մասին իր գրվածքներով փաստորեն հիմքն է դրել արդի հայ խաղագիտութիւն, ինչպես նշել ենք նաև ուրիշ առիթով («Քննական տեսութիւն հայոց հին ու ժիջնագարի երաժշտութիւն պատմութիւն», ԳԱ «Լրարեր», 1971, № 9, էջ 40):

<sup>16</sup> Որը պետք է հասկանալ՝ մեղեդիական զարգարանների համար (դրանք ուղղագծելու կամ նշելու նպատակով) հորինված լինելու իմաստով:

էջ 96ա ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՅ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆՑ՝ ՇԱՐԱԳՐԵՑՅԵԱԼ ՅՈՒՄԵՄՆԷ ԲԱՆԱՍԻՐԷ Ի ՓԱՌՍ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՅՕԳՈՒՏ ԱԶԳԻՍ ԱՐԱՄԵԱՆՍ

Ազգաբարոյքիւն ինչ առ բարեւէր վերժանողս. օգնեա Սուրբ Հոգի:

Երաժշտականութեան ներհմտութիւն ըզձալի իմն գիտութիւն գոյով ի մէջ ընդհանուր գիտութեանցն ծանօթութեանց, զանազանիւր պանծայ մականունութեամբք՝ որ յաղագս փառաբանելոյն զաստուած, երբեմն կոչի երգ աստուածային, երբեմն երգ եղանակաց և ցնծութեան, և երբեմն յորչորչի երգ հրեշտակաց և հրեղինաց: Յիրաւի, է երգ հրեղինականն զօրութեանց, որպէս լուաւ կայծակնամաքուրն Եսայիաս զեռահուսեակ սրբասացութեան զձայն, որք նուագէին ի դէմ ամենասուրբ երրորդութեան անբաժանելութեան՝ սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ տէր զօրութեանց (Եսայ. 2, 3): Արդ՝ որպէս տեսանի նշոյլն նոյնոյ յայտնապէս ըսբանշելարուեստ վայելչաձայնն բանականացն ասեմ, և ի ձայնէ ոչ բանականացն, որ ըստ յարմարագոյնն արհեստի: Եւ քանզի թարց 96բ գիտութեանց որոյ ոչ որ կարէ գոլ զերահոշակ երգեցող և բանիբուն երաժիշտ, և ըստ արհեստի մակացութեան յօրինող երգոց: Նաև առանց սոյն հմտալի գիտութեան ոչ իւրք երբեք կարեն լինել հոշակահամբաւ բանաստեղծ և ներհուն հմուտ ի գիտութեանս խաղասացողութեան, զորոց ցանկալի տեղեկութեանցն բարեձայնութեանց հանապազ քաղցրաձայնեալ բարեբանի բարձրեալն աստուած, որպէս տան փառս վեցթեան սրորէքն սոյն երաժշտականն երգաբանութեամբ, ըստ սրբոյ աստուածաբանն աւետարանչի Յոհաննու (Յայտ. 6, 13): Եւ մեք ընդ նոսին երգակցեալ փառաւորեսցուք զտուողն աստուած բարութեանց, որում վայել է պատիւ և փառս մատուցանել, հանդերձ երաժշտական եղանակաւ, յաւիտեանս յաւիտենից անխափան:

Յաղագս երաժշտական գիտութեան թէ զինչ է

- [1] Հրց.— Զին՞չ է երաժշտութիւն:  
Պտ.— է գիտութիւն, որ ուսուցանէ զկերպն եղանակաւ երգելոյ:
- [2] Հրց.— Քանի՞ք են մասունք երաժշտութեան:  
Պտ.— Երեք, որպէս նուագական, եղանակական, և սրնգական<sup>2</sup>:
- 97ա [3]||Հրց.— Ի քանի՞ս բաժանի նուագականն:  
Պտ.— Յերիս, որպէս ի ձայնն, ի փշումն և ի բաղխումն:
- [4] Հրց.— Զին՞չ է բաժանումն ի ձայն:  
Պտ.— է աջն, զոր միշտ երգեմք ձայնիւ հնչմանց, որպիսի է տաղն, մեղեդին և շարականն:
- [5] Հրց.— Զին՞չ է բաժանումն ի փշումն:  
Պտ.— է աջն, որ փշեն զեղէգնափողն, զսրինգն և զայլ երաժշտական գործիսն:
- [6] Հրց.— Զին՞չ է բաժանումն ի բաղխումն:  
Պտ.— է աջն, որ զսաղմոսարանն, զքնարն, զծնծղայն և զայլն հարկանեն ձեռօք և քաղցրանուագ ձայն արձակել տան:
- [7] Հրց.— Զին՞չ յարմարութիւն ունին այս երիսս բաժանմանց:  
Պտ.— Զի որպէս ասի, թէ բաղխումն պատկանի կարողութեան հօր

աստուծոյ, ձայնն իմաստութեան որդւոյն, և փշուճն կենդանա-  
կան բարութեան հոգւոյն աստուծոյ:

[8] Հրց.— Այս երից բաժանմանց նուագերգութեանց որո՞վ փառաբա-  
նի ձայնիւ արարիչն բնութեանց:

Պտ.— Հանապազ փառաբանի ձայնիւ հնչմանց, որպէս ետես մար-  
գարէն Եսայի, և վկայէ Դիոնէսիոս Արխսպազացին, որ Յա-  
ղազս աստուածայնոյ քահանայապետութեան կարգի:

97բ [9]||Հրց.— Եղեգնափողիւ և սրնգաւն միթէ ոչ՞ փառաբանի փառաւո-  
րեալն:

Պտ.— Այո, փառաբանի, որպէս վկայէ աստուածաբան աւետարա-  
նիչն Յոհաննէս, որ ի յերկնից լուաւ զհարկանողս բնարաց  
(Յայտ. Ե, 8):

[10] Հրց.— Ուրեմն սաղմոսարանաւ, բնարիւ և այլ գործեօք ևս բարե-  
բանի բարձրեալն:

Պտ.— Ըստ բարւոյն ասեալ՝ բնդ համայն գործեօքն երգոց երգա-  
ձայնեալ բարեբանի. բայց ըստ շար կողմն կոյս՝ ոչ, որպէս  
պատուիրէ հոգին աստուծոյ ի ձեռն Ամովսայ մարգարէին:

[11] Հրց.— Արդեօք ունի՞ս վկայութիւն ի սուրբ գրոցն, թէ է այնպէս:

Պտ.— Այո, որպէս ասի (I Մնաց. ԺԵ, ԺԶ), թէ ի նմին ժամանակի  
նորոգեցաւ յերգս օրհնութեան ի փող և ի բնար և ի սրինդ, և  
օրհնէին զաստուած յերկինս, և յաջողեաց նոցա:

[12] Հրց.— Ի քանի՞ս առնանի ի կերպս երաժշտութիւն:

Պտ.— Յերիս, որպէս անհամեստ, համեստ և բարի<sup>3</sup>:

[13] Հրց.— Զին՞չ է անհամեստն:

98ա Պտ.— Է շար և շարժիչ տոփական իրաց, զսմանէ ասաց աստուած՝  
ի բաց արա յինէն զձայնս երգոց քոց՝ և ըզ||նուագս սրնգաց  
քոց ևս ոչ լուայց (Ամովս. Ե, 23):

[14] Հրց.— Զին՞չ է համեստն:

Պտ.— Է հասարակօրէն ասացեալն երգ, որ ի գով և ի պարսաւն  
յօրինեալ՝ թարց առասպելեաց:

[15] Հրց.— Զին՞չ է բարին:

Պտ.— Է աստուածայինն երգ, և միշտ ցանկալի, որով հանապազ  
զեռահիւսեակ սրբասացութեան նուագն մատուցանեն վեց-  
թեան սրորէքն ամենասուրբ երրորդութեան՝ անբաժանելու-  
թեան հօր և որդւոյ և սրբոյ հոգւոյն:

### Յաղագս զովութեան երաժշտութեան

[16] Հրց.— Գովելիի՞ է երաժշտութիւն, թէ ոչ:

Պտ.— Այո, գովելի է. որպէս երեք մանկունքն ի հնոցի հրոյն Բա-  
բիլոնի օրհնէին և գովէին զաստուած երաժշտական եղանա-  
կաւ և ձայնիւ հնչմանաց, ասելով. Օրհնեալ ևս տէր աստուած  
հարցն մերոց և այլն (Դան. Գ, 51—52):

[17] Հրց.— Այլ ինչ ազգութիւն ունի՞ս երաժշտութիւնն, թէ ոչ:

Պտ.— Այո, յոյժ ազգու է երաժշտական նուագն, զի նովաւ դեր բն-  
կրրկին. ուստի յայսն Սաւուղայ հալածիր տասնաղեաց  
բնարան Դաւթի (I Թագ. ԺԶ, 23):



98բ [18] Հրց.— Ուրեմն պարտիմք յամենայն ժամ գովարանական ձայնիւ  
|| երգոց բարերանել զաստուած:

Պտ.— Այո, պարտիմք հանապազ բարերանել զաստուած ընդ ամե-  
նայն սրբովք, երաժշտական եղանակաւ և երգօք հոգևորօք,  
զի է մեզ օրէն յաւիտենական, որպէս ասի (Թուոց. Ժ, 8):

Յաղագս քէ ուսաի գտաւ երաժշտութիւնն:

[19] Հրց.— Ո՞վ եգիտ զերաժշտութեան երգ:

Պտ.— Որդին Ղամէքայ Յօբայն, որ էր հովիտ խաշանց, եգիտ զերգս  
և զքնարս (Մենդ. Գ, 21):

[20] Հրց.— Յորո՞ւմ ժամանակի նորոգեցաւ երաժշտութիւնն:

Պտ.— Ի հնումն ժամանակի, որպէս ասի (1 Մնացորդաց Բ. զլուխ և  
54 համարն) [և] որպէս ի վերն ասացաւ:

[21] Հրց.— Ի ժամանակի Թագաւորութեան յումմէ՞ հնարեցաւ երգըն  
բարերանութեան:

Պտ.— Նախապէս ի Դաւիթ աստուածահայր անուանեցեալ մարգա-  
րէէն, որ ներկեալ շնորհօք հոգւոյն սրբոյ առերգել զերգս  
հոգևոր նուագարանաց:

[22] Հրց.— Յօրինեա՞ց մարգարէն զգործի օրհնութեան:

Պտ.— Այո, որպէս ինքն վկայելով հաստատէ, թէ ձեռք իմ արարին  
զսաղմոսարան, և մատունք իմ կազմեցին զգործի օրհնու-  
թեան:

[23] Հրց.— Զի՞նչ էր գործի օրհնութեան:

99ա || Պտ.— Էր նախապէս եօթնադեցայ քնարն, որբստ եօթնար-  
փեան շնորհացն հոգւոյն, որով յաւուրս եօթ անգամ երգա-  
ձայնեալ օրհնէր զաստուած, բստ այնմ թէ՛ եօթն անգամ  
յաւուր օրհնեցից զքեզ (տէր) [Սաղմ. ՃԺԸ, 164]:

[24] Հրց.— Ասյա զի՞նչ է տասնադեցայ քնարն:

Պտ.— Տասնադեցայ քնարն յետոյ յարմարեաց բստ տասն պատուի-  
րանացն աստուծոյ, որով միշտ զհոգին սուրբ հնչեցուցանէր.  
զի ի ձեռն հոգւոյն սրբոյ կոչեցաւ սաղմոսարան, որ է զա-  
նուն:

[25] Հրց.— Գո՞յր այլևս երգող ի Դաւթայ:

Պտ.— Այո, գոյր. որպէս ասի (1 Մնաց. ԺԵ, 19) թէ՛ Աման, Ասափ  
և Եթան էին զլուխ երգչացն և երգէին տաւղօք պղնձեօք:

[26] Հրց.— Այլևս գո՞յր ի նմին ժամանակի:

Պտ.— Այո, որպէս ի նոյնն (ԺԵ, 20) թէ՛ Զաբարիաս, Ոզիէլ, Սեմի-  
րամօթ, Եղիէլ, Անանիաս, Եղիար, Մասիաս՝ քնարօք նուա-  
գէին:

[27] Հրց.— Գոյի՞ն այլևս, թէ ոչ:

Պտ.— Այո, [որպէս] դարձեալ ի նոյնն [ԺԵ, 21], թէ Մատթիաս,  
Եղիփաղէաս, Մակեղիաս, Աբեղղօմ, էէլ, Ոզիաս՝ սրնգօք  
նուագէին:

[28] Հրց.— Գո՞յր այլ ևս գտող արհեստիս գիտութիւն:

99բ || Պտ.— Այո, որպիսի է զերահոշակ բանաստեղծն Հոմերոս, որ  
գտաւ զքերթողութեան արհեստ զօրութեամբ երաժշտութեան:

[29] Հրց.— Դեռևս կա՞ն գտանողք:

Պտ.— Այո, կան. որպիսի է քաջն Որփէոս՝ բանաստեղծն Քրակիոյ և հռչակահամբաւ նուագածու, որ ընդարմացուցեալ նուաճէր զգազանս ամեհիս քաղցրաձայն նուագերգութեամբն:

Յաղագս թէ վասն էր ուր են ձայնքն

[30] Հրց.— Է՞ր վասն ութն են ձայնքն մեր:

Պտ.— Ութն են ըստ ութից ձայնաւոր գրոցն, և ըստ ութն կանոնացն Դաւթի, նաև ութ ձայնական գործեացն:

[31] Հրց.— Եօթ են ձայնաւորքս, [իսկ] դու ասես ութն:

Պտ.— Ոչ. այլ է ութն ըստ ութիցն եղանակաց, որպէս ասէ Դաւիթ Անյաղթն:

[32] Հրց.— Ո՞րք են ձայնական գործիքն:

Պտ.— Են սոքա. խոշափողն (1), մակալեղուն (2), լեղուն (3), բերանն (4), ատամունքն (5), շրթունքն (6), և օդն (7), որ ի մարդն (8):

[33] Հրց.— Ի՞նչ զօրութիւն ունին սոքա յեղանակս:

Պտ.— Ունին զօրութիւնս բազումս. է և համանգամայն գործի եղանակաց, որ ընդ ձայնաւոր գրոցն:

[34] Հրց.— Ո՞չք են ձայնաւորքն:

100ա || Պտ.— Են այսոքիկ. ա՛. ե՛. է՛. ը՛. ի՛. ո՛. ո՛ւ. և օ՛:

[35] Հրց.— Զի՞նչ է զօրութիւն սոցին գիտութեանս:

Պտ.— Են հիմն և իբր թէ գործի համայնիցն երգոց և ընդհանուր եղանակաց:

[36] Հրց.— Ո՞րպէս լինիլ կարեն հիմն և գործի:

Պտ.— Այնպէս, որ թարց սոցա ամենևին ձայնաւոր եղանակքն ոչ կարեն երգիլ:

[37] Հրց.— Ուրեմն ութից ձայնաւոր գրոցն զգիտութեանց պա՞րտ է իմաստասիրել:

Պտ.— Այո, վասն զի ամենայն երգք և եղանակք սոքօք բացակատարէ զիրոցն զձայնս, և ունին փակեալ չիրեանս գաղտնի գիտութիւն երաժշտական:

[38] Հրց.— Քանի՞ք են հիմունք ձայնից:

Պտ.— Չորս, որպէս աձ., բձ., գձ., դձ.:

[39] Հրց.— Քանի՞ք են կողմունք ձայնից:

Պտ.— Չորս, որպէս ակ., բկ., գկ., դկ.:

[40] Հրց.— Գո՞ն այլևս ձայն, թէ ոչ:

Պտ.— Այո, գոն այլևս երկու ստեղի, որ բկ-ին և դկ-ին, բայց բաժանումն բազում:

[41] Հրց.— Յորո՞ց գտան շորս բուն ձայնքն:

Պտ.— Աձ., ի ձեռն Սիներգէսի երաժշտի, ի հիւսնականէ գտաւ յարհեստէ:

100բ [42] || Հրց.— Երկրորդ ձայնն՝ բձ.:

Պտ.— Բձ.՝ յեղբօրէն իւրմէ Փոկեղեղէսի երաժշտի, որ ի ձայնէն դարբնականէ:

[43] Հրց.— Երրորդ ձայնն՝ գձ.:

- Պատ.— Յեղբորէն սոցա՝ Սոփեկղիղէսի երաժշտի, որ ի հոսանացն գետոց:
- [44] Հրց.— Չորրորդ ձայնն՝ դձ.:
- Պատ.— Դձ.՝ ի քեռորդոյն սոցայ՝ ի Փիպիանոսէ, որ ի ձայնէ յաղորեացն:
- [45] Հրց.— Ո՞չք էին բաժանողը զկողմունս:
- Պատ.— Քինոսփենէս երաժիշտն, զկողմն աձ. ին, որ [է] աղ., Աքիլեւս՝ զկողմն բձ. ին, որ է բղ., և դձ. ին, որ է գղ., Եւնիմէոս՝ զկողմն դձ. ին, որ է գղ.:
- [46] Հրց.— Զերկու բստեղիսն ո՞չք էին արարողը:
- Պատ.— Թէոփիլեանք երաժիշտքն, որպէս վկայէ սուրբն Գրիգոր ի Գիրս հարցմանց\*:

### Յաղագս հին ձայնիցն

- [47] Հրց.— Զի՞նչ են հին ձայնքն:
- Պատ.— Են այնք, որք լեալ իսկ են իբր ենթակայ նոր ձայնիցն:
- [48] Հրց.— Ո՞չք էին գտողը զհին ձայնս:
- 101ա Պատ.— Սիներգէս երաժիշտն՝ մի հիւանակս ի մի փայտէ հնշմանն գտաւ զլիդիոսն<sup>2</sup>, որ է աձ.:
- [49] Հրց.— Երկրորդն ո՞վ եգիտ:
- Պատ.— Եղբայր սորա՝ Փոկեղեղէս, ի դարբնականէ և յերկաթոյ կռելոց [եգիտ] զգեւտերոսն, որ է բձ.
- [50] Հրց.— Երրորդն:
- Պատ.— Եղբայր սոցայ՝ Սոփեկղիղէս, օրինակեալ ի գետոց խաղացմանց և յորձանացն հոսմանց, եգիտ զերաժշտականն տրեփաոսն, որ է դձ.:
- [51] Հրց.— Չորրորդն:
- Պատ.— Քեռորդին սոցայ՝ Փիպիանոս, գոլով բաշահմուտ երաժիշտ, ի յաղօրեացն դարձմանէ ի ձայնից եգիտ զաւտարտոսն, որ է դձ.:
- [52] Հրց.— Ո՞վ երեր գտոսա ի կարգն:
- Պատ.— Արքեղայոս երաժիշտն, որ գտաւ որոշարար և եղ ի շարն և ի կարգ այսու ձայնից, որպէս ասեն սուրբն Գրիգոր և Դաւիթ Անյաղթն:
- [53] Հրց.— Ո՞վ էր բաժանողն ձայնից:
- Պատ.— Ստեփաննոս փիլիսոփայն՝ գոլով զերավսեմ երաժիշտ, որ բաժանեաց զձայնս գոյից ի մասունս իդ, որք են՝ բառաշե՛լ, գոշե՛լ, բշե՛լ և այլն:
- [54] Հրց.— Գո՞ն այլ ևս, թէ ոչ:

\* Նպատակահարմար է այտեղ կեթ նշել, որ սույն և հաջորդ գլուխների բովանդակութիւնը Գաղատաքայլանք իբրք քաղել է իր մատնանշած աղբյուրից: Հմմտ. Գր. Տարեացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 639—640: Թերևս ավելորդ չէ հիշել նաև, որ բննարկվող հարցերը, զարգացած ավատաաիրութիւն շրջանում, տակավին Տաթևացուց էլ առաջ ընդհանուր առմամբ շոշափել է Վարդան Արեւելցին (աւ՛ս նրա՝ Լուծմունք ի ս. Գրոց, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 750, էջ 113ա—115ա, և կամ՝ № 2544, էջ 161ա—164ա):

101բ

|| Պտ.— Այո, գոն, որպիսի է Սարգիսնոս Թեղբացի, Զեղէոս երա-  
ժիշտքն, և երգիչքն Սիներգէս, Փսկեղեղէս, Պիտանաս և  
այլն, զորս տեսցես ի Մեծի երաժշտութեան և ի Գիրս հարց-  
մանց:

### Յաղագս հաղորդակցութեան ձայնիցն

[55] Հրց.— Զի՞նչ է հաղորդակցութիւն ձայնիցն:

Պտ.— է այն, որ ի ժամանակի երգնցմանն, որպէս փոխ առեալ  
երևին ի միմեանց զձայնս:

[56] Հրց.— Ո՞րպէս առնուն փոխ յիրերաց:

Պտ.— Այսպէս. աձ—գկ., բձ—գկ., դձ—բկ., դձ—ակ:  
Կողմն առաջնոյն՝ տայ շորրորդին՝ մասնապէս,  
եւ երկրորդին՝ ընդ երրորդին՝ լրապէս,  
եւ երրորդին՝ ընդ երկրորդին՝ փոխապէս,  
Զորսն առաջնոյն՝ տալով լինի՝ իբր հանդէս:

### Յաղագս անուանց ուր ձայնից

[57] Հրց.— Զի՞նչ են անուանք ութից ձայնից:

Պտ.— Չորս բուն ձայնից անուանքն են սորա. առաջին ձայն, երկ-  
րորդ ձայն, երրորդ ձայն և շորրորդ ձայն:

[58] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ են նշանագիծք նոցա:

Պտ.— Են այսու կերպիւ. աձ., բձ., գձ., դձ.:

[59] Հրց.— Զի՞նչ են անուանք շորից կողմանցն:

102ա Պտ.— Են սորա. առաջին կողմ, երկրորդ կողմ, որ և ասի աւագ  
կողմ, || երրորդ կողմ, որ և ասի վառ, շորրորդ կողմ, որ և  
ասի վերջ ձայն:

[60] Հրց.— Ո՞րպէս են նշանագիծք սոցա:

Պտ.— Են այսպէս. ակ., բկ., գկ., դկ.:

[61] Հրց.— Գո՞ն ստորաբաժանումն սոցա, թէ ոչ:

Պտ.— Այո, գոն, զի որպէս ձայնն ութ է, բայց ի յոգունս տարալու-  
ծանի ի ձայնս:

### Յաղագս բաժանման ձայնից

[62] Հրց.— Ի քանի՞ս տրամաբաժանին ձայնքն:

Պտ.— Ի բազում կերպս:

[63] Հրց.— Ո՞րպէս ի բազում կերպս տրամաբաժանին, ութն գուրով:

Պտ.— Որպէս տրամաբաժանին շորս հօղսունքն, և վերափշին այլ և  
այլ հօղսունք ի նոցանէն, նոյնպէս ձայնքն այլ և այլ ունին  
բաժանմունք:

[64] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ են բաժանմունքն:

Պտ.— Են այսու կերպիւ. աձ, բձ, գձ, դձ և այլն, տես ի Մեծի երաժըշ-  
տականութեան:

[65] Հրց.— Գիտե՞ս սոցա մեկնողական անուանքն:

Պտ.— Այո, գիտեմ. առաջինն չիւր ձայնէն ի վեր ասի յիւսէյնի<sup>6</sup>. երկրորդն շորս ձայն ի վեր ասի թիզ սէկեա՛հ. երրորդն մի [ձայն ի վեր] ասի նեա, շորրորդն երեք [ձայն ի վեր], որ և ասի կերդանիէ: Սոցա այլ և այլ կերպն ևս լինի:

102բ [66] || Հրց.— Ուրեմն ելանե՞ն ի նոցանէ բազում կերպիւ ձայնք, ըստ եղանակի ձայնադրութեան:

Պտ.— Այո, որպէս ելանի յունաց և յայլազգեաց բուն ձայնիցն բազում կերպիւ ձայնք և եղանակք, նոյնպէս և ի սոցանէն:

### Յաղագս հեզման ձայնից

[67] Հրց.— Զի՞նչ է հեզումն ձայնից:

Պտ.— է այն, որ ի ձեռն նորին՝ վերելութիւն և ստորիջելութիւն շափի ձայնից, իբր քանակաւ:

[68] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ շափին ձայնք:

Պտ.— Ըսկիզբն առնու ի մի ձայնէն, և յառաջ երթայ ի բաղդատեցեալն, կամ ի կարգի եղեալն ի ձայն:

[69] Հրց.— Ո՞րպիսի եղանակաւ հեզին ձայնքն:

Պտ.— Ըստ ալում եղանակի.  $\hat{ա}^{\wedge}$ ,  $\check{բ}$ ,  $\check{ակ}$ ,  $\check{ղ}$ ,  $\hat{գ}^{\wedge}$ ,  $\hat{դ}^{\wedge}$ ,  $\hat{ա}^{\wedge}$ ,  $\hat{բ}^{\wedge}$ ,  $\hat{ղ}^{\wedge}$ ,  $\check{ղ}$ ,  $\check{ղ}$ ,  $\check{բ}$ ,  $\check{ակ}$ ,  $\hat{գ}^{\wedge}$ ,  $\hat{ա}^{\wedge}$ ,  $\hat{բ}^{\wedge}$ ,  $\hat{ղ}^{\wedge}$ ,  $\hat{ղ}^{\wedge}$ ,  $\check{ակ}$ ,  $\check{ղ}$ ,  $\check{ղ}$ ,  $\check{բ}$ ,  $\hat{ա}^{\wedge}$ ,  $\hat{բ}^{\wedge}$ ,  $\hat{ղ}^{\wedge}$ ,  $\hat{ղ}^{\wedge}$ ,  $\hat{ա}^{\wedge}$ ,  $\check{բ}$ ,  $\check{ակ}$ ,  $\check{ղ}$ ,  $\check{ղ}$ ,  $\check{բ}$ ,  $\check{ակ}$ ,  $\hat{գ}^{\wedge}$ ,  $\hat{ա}^{\wedge}$ ,  $\check{բ}$ ,  $\hat{ա}^{\wedge}$   $\check{բ}$ ?

[70] Հրց.— Ունի՞ն եղանակք ինչ հեզելոյ՞:

Պտ.— Այո, ունին. որպիսի է տրամաբանականին:

[71] Հրց.— Ո՞յք են նոքա և ո՞րպիսի անուամբք:

Պտ.— Ըն սոքա և ալստ անուամբք. օրհնեաց<sup>7</sup>ք, գովեսց<sup>8</sup>ք, բարձր արասց<sup>9</sup>ք, անլէլո<sup>10</sup>իա, լաւիակն, գովեսցէք, օրհնեցէք, ըզանէք.

103ա

### || Յաղագս դարձման ձայնից

[72] Հրց.— Զի՞նչ է դարձումն ձայնից:

Պտ.— է այլ իմն կերպ ձևափոխիլն երգոց. որպէս կէս ձայնին<sup>9</sup> արտելուզեալ վերադառնայ ելումն հազագի, որոյ իսկ ասի նիմ փէրտէ<sup>10</sup>:

[73] Հրց.— Ունի՞ն ութն ձայնք զնոյնն:

Պտ.— Այո, ունին, և այլ աւելի, որպէս յայտ է ի փէրտէլսն:

[74] Հրց.— Ո՞րպիսի ձևակերպութեամբ են նորա:

Պտ.— Են այլ և այլ ձևակերպութեամբ. ձայնքն այլայլեալ, ձերն ընկրկեալ:

[75] Հրց.— Ունի՞ն զօրութիւն ինչ երաժշտականութեանս գիտութեան:

Պտ.— Ունին զօրութիւնս բազումս, զի են որպէս թէ համ, և շէշնի արհեստիցս գիտութեան:

[76] Հրց.— Ո՞չք են նորա:

Պտ.— Են նորա եղեալ ի Մեծի երաժշտականութեան, զորս անդ լրապէս ուսցիս:

Յաղագս [թէ] ուստի և յումմէ գտաւ գիրն հայոցս

[77] Հրց.— Ուստի՞ գտաւ գիրն հայոց:

Պտ.— Թոսն նոյի յԱրփաքսաղայ և յորդին Սեմայ ի Սոփեր լերինն, որ զկնի ջրհեղեղին:

[78] Հրց.— Յառաջ քան զջրհեղեղն կա՞յր գիր:

Պտ.— Այո, կայր, որ արարեալ և սկսեալ էր յԾնովքայ, որպէս ասէ մեկնիչն, թէ զԾնովքայ ասի գիր արարեալ:

103բ [79] || Հրց.— Արդեօք ի ջրհեղեղին ո՞րպէս պահեցաւ:

Պտ.— Կանգնեաց ասէ երկուս սիւնս խէցի և պղնձի, զրեաց յերկուսինն և մարգարեացաւ անցանելն երկրի ջրով և հրով վասն մեղացն. ի ջրոյն՝ պղնձինն, և ի հրոյ՝ աղիւսինն մնա[սցի]:

[80] Հրց.— Ապա ասի, թէ մարգարէն Մովսէս արար գիր վասն իսրայէլացւոցն:

Պտ.— Այո, շնորհօքն աստուծոյ արար գիր նոցա ի վերա նոր լեզուին, և նովին գրովն ետ աստուած գտախտակս քարեղէնս, զոր ընթեռնուլ կարէին:

[81] Հրց.— Ո՞վ եգիտ զգիրն յունաց:

Պտ.— Կիկրոփս, որ է Կաղմոս. և այն սերմանեաց ըզգպրութիւն ի յոյնս:

[82] Հրց.— Ուրեմն ի նոյն ժամանակի գի՞րն է նարդեանս:

Պտ.— Ոչ, այլ յետոյ եգիտ սուրբն Մեսրոպ, յուսացեալ յաղօթս, խնդրեաց յաստուծոյ:

[83] Հրց.— Ո՞ւմ աշակերտն էր սուրբն Մեսրոպ:

Պտ.— Մեծին Ներսեսի, որ էր հայր սրբոյն Սահակայ Պարթևի հայրապետին:

[84] Հրց.— Ո՞չք էին եղանակադիր շարականացն, տաղից և մեղեդեաց:

Պտ.— Սուրբն Սահակ և մեծն Մեսրոպ յոգնաշխատ հայրապետքն մեր:

|| Յաղագս չափարանութեան տառից

[85] Հրց.— Զի՞նչ է տառաշարութիւն:

Պտ.— է ճանաչումն նոցա, որ ի ձեռն քաջահայտ ենթադատութեան:

- [86] Հրց.— Քանի՞ք են տառք հայկազնեայցս:  
Պտ.— Երեսուն և վեց, որպէս յայտ է. այբն առաջին և քէն վերջին.  
բայց՝ և, օ, ֆ են յետահար:
- [87] Հրց.— Ի քանի՞ս անշատի գիրն մեր հայոցս:  
Պտ.— Նախապէս յերկուս. ի ձայնաւոր և ի բաղաձայն:
- [88] Հրց.— Ո՞րք են ձայնաւորք և բաղաձայնքն:  
Պտ.— Են սորա. ա՛, ե՛, է՛, ը՛, ի՛, ո՛, ո՛ւ, օ՛: Եւ զատ ի սոցանէն, են  
բաղաձայնք:
- [89] Հրց.— Ի քանի՞ս անշատին ձայնաւորք:  
Պտ.— Յերիս, որպէս յերկար, ի սուղ և յերկամանակ:
- [90] Հրց.— Քանի՞ք են երկարք:  
Պտ.— Երկու, որպէս է՛, օ՛, որք թարց հեզայ արտելանեն ի բերա-  
նոյ մարդոյն:
- [91] Հրց.— Քանի՞ք են սուղք:  
Պտ.— Երեք, ե՞, ո՞, լ՞, որք իբր հեզենայ զոլով արտահնչին, որպէս  
յայտ է:
- [92] Հրց.— Քանի՞ք են երկամանակք:  
Պտ.— Երեք. ա՛, ը՛, ի՛, որք երբեմն ձկտին և երբեմն ամփոփին,  
որպէս երկար և սուղ առնեն ամանակսն:
- 104բ [93] ՝Հրց.— Ի քանի՞ս տրամաբաժանին բաղաձայնք:  
Պտ.— Յերիս. որպէս ի կիսաձայն, յանձայն և ի կրկնակս:
- [94] Հրց.— Ո՞չք են կիսաձայնք և քանի՞:  
Պտ.— Են երկոտասաներին սորա. գ, ժ, խ, հ, դ, յ, շ, ո, ս, վ, բ, ֆ:
- [95] Հրց.— Ո՞չք են անձայնքն և քանի՞:  
Պտ.— Են մետասաներին սորա բ, գ, դ, թ, կ, մ, ն, պ, տ, փ, ք:
- [96] Հրց.— Ո՞րք կրկնակք և քանի՞:  
Պտ.— Են եօթներին սորա. լ, ժ, ձ, ճ, շ, ջ, ց:
- [97] Հրց.— Վասն է՞ր բաժանին յերիս տեսակս ձայնաւորքն, ընդ  
բաղաձայնիք:  
Պտ.— Վասն այն, զի ընդհանուր եղանակք են երեք տեսակ, որպէս  
նուրբ, որ է բարակ, ստուարք, որ է հաստ, և միջակք, որ է  
երկոցունցն հաւասար. որպիսի է գիլն, բամբն և միջակն  
աղիցն և թէլից, որ առ նուազարանս:
- [98] Հրց.— Առ ին՞չ պիտոյութիւն ունի իմացումն գրոց:  
Պտ.— Են սկիզբն և նիւթ ընդհանուր գիտութեանցն և մանաւանդ  
արհեստիս:
- [99] Հրց.— Արհեստիս գիտութիւն միթէ գրո՞վ իմացուի:  
Պտ.— Այո, նախապէս գրով, երկրորդ վանկօք, ոտիք և տաղից  
չափաբերութեամբն. մանաւանդապէս զօրութեանցն գրոց  
պարտ է լեալ վերահասու:

105ա

||Յաղագս վանկաչափութեան

[100] Հրց.— Զի՞նչ է վանկն:

Պտ.— է երկու, երիւք կամ ալլ աւելի գրովք բաղկացեալ բառ իմն:

[101] Հրց.— Ո՞րպիսի ինչ է զօրութիւն նորա:

Պտ.— է շափող զոտս, որ ի ներտաղականին:

[102] Հրց.— Ի քանի՞ս տրամատիւն վանկքն:

Պտ.— Յերիս. որպէս յերկարն, ի սուղն և ի հասարակն:

[103] Հրց.— Երկարն քանի՞ և որպիսի՞ կերպիւ լինին:

Պտ.— Երեք. որոց առաջինն ունի ի մի երկար ձայնաւորացն. երկրորդն՝ յերկձայնից, և երրորդն՝ զկնի ձայնաւորացն ունի կիսաձայնս, որք ըստ կարգի են սապէս. Պօ՛ — դէ՛, մա՛ր — կո՛ս և այլն. օ՛, է՛. յ, յ, ա, ա, բ, ս:

[104] Հրց.— Այս վերոյ ասացեալքդ բնութեամբ էին երկար, թէ՞ դրութեամբ:

Պտ.— Բնութեամբ են երկար նոյն երեք կերպն:

[105] Հրց.— Գո՞ն դրութեամբ երկար, թէ՞ ոչ:

Պտ.— Այո, գոն, որք ևս են ըստ երկից:

[106] Հրց.— Ո՞չք են նոքա և ո՞րպէս:

Պտ.— Որոց առաջինն, զկնի ձայնաւորացն երկարից, ունի կիսաձայն. երկրորդն՝ զկնի երկձայնիցն ունի մի կամ երկու կիսաձայն. երրորդն՝ յետ կիսաձայնեց ունի կամ բաղաձայն, կամ կրկնակբ որգոն. օ՛րս, տէ՛ր. ս, բ:

105բ

Այրս, այս. յ, յ, բ, ս, ս: Ա՛րդ. դ: Ա՛ն, ա՛նք. ո, ո, ջ: Են այս երեքն կրկնակբ:

[107] Հրց.— Ի քանի՞ս տրամաբաժանի սուղն:

Պտ.— Յերիս, որոյ առաջինն ունելով ի վախճանի մի ի սուղ ձայնաւորացն. երկրորդն՝ ի միջակաց. երրորդն՝ յետ ձայնաւորացն, անձայն, որգոն. կն՛, ցո՛. սը՛, նր՛. մակ, յօդ, որք են յայտնի:

[108] Հրց.— Ի քանի՞ս տրամատի հասարակն:

Պտ.— Յերկուս՝ ի սուղ և յերկարն. զորս և զայլ մնացեալս տեսցես ի բուն տեղն:

[109] Հրց.— Ան ինչ՞ հարկաւորութիւն ունի վանկաշափութիւն յարհեստս:

Պտ.— է կարի իմն կարևոր և պիտանացու արհեստագէտ և բանիրուն երաժշտացն, որք ներհմտութեամբ զրոցն արտաշնչութեանց կարեն երգել զհանուր բզլափաբերականն զտաղերգութիւն:

### Յաղագս պարզ և բարդ ոտիցն

[110] Հրց.— Զի՞նչ է պարզ ոտքն:

Պտ.— է բաղկացումն զրոցն, որ ի նոցուն վանկից:

[111] Հրց.— Զի՞նչ է բարդ ոտքն:

Պտ.— է կապակցումն բազում զրոցն, որ ի պարզ ոտից:

[112] Հրց.— Պարզ ոտից վանկն ո՞րպէս է և քանի՞:

106ա || Պտ.— է երկար և աղօտ. երկարն՝ երկամանակ և աղօտն՝ եզամանակ:

[113] Հրց.— Զի՞նչ է երկամանակն:



Պատ.— Է, որ ունի լինքեան առժաժկեալ երկանգամ շքնասպառութիւն, զոր գիտեն ներհմտացեալքն:

[114] Հրց.— Զի՞նչ է եղամանակն:

Պատ.— Է, որ ունի շնչավերջութիւն մու, գաղտնափակ գիտութեամբ. զոր շնչոյ զօրութեան տան արտաքարշել ներհմաստքն յարհեստիս:

[115] Հրց.— Ո՞րպէս արտելանի գրոցն ձայն ի հմտացելոցն:

Պատ.— Իւրաքանչիւր գրոցն ձայն առ լինքեանս ունին փակեալ, բայց ձայնաւորացն այլ աւելի. զնոսա որոշելով արտաքարշէ վարժասէր երաժիշտն:

[116] Հրց.— Արդեօք ունի՞ն հնար կամ այլ ևս գլխաւորաբար գաղտնի գիտութիւն յեղանակի սոյն ոտիցն:

Պատ.— Ունին. վասն զի ընդհանուր ձայնք և եղանակք ելնեջութեամբ ձայնի կարեն լինիլ. նոյնն, միշտ է ընդ ամանակաւ, որ յայտ է, թէ ամանակն է գաղտնի գիտութեամբ:

[117] Հրց.— Գո՞ն ևս այլ հնարագիտութիւն ի վանկաշափութեան գիտութիւն, թէ ոչ:

Պատ.— Այո, գոն այլ ևս հնարս բազումս, բայց է ի Մեծի երաժշտականութեան:

106բ

|| Յաղագս անուան և բաժանման ոտից

[118] Հրց.— Նախապէս զի՞նչ են ոտքն:

Պատ.— Են գիտ կամ հնարումն քերթողաց, որով եղանակ ոտիցն իմանի ըստ անուանն:

[119] Հրց.— Ի քանի՞ս անշատին ոտքն:

Պատ.— Ի շորս. որպէս յերկավանկ, յեռավանկ, ի քառավանկ և ի հնգավանկ, որք ըստ շորիցն տարբրց:

[120] Հրց.— Ի քանի՞ս տրամատի երկավանկն:

Պատ.— Ի շորս, որ ըստ շորիցն բուն ձայնից, որգոն. համբոյր, մեծասար, մեծավերջ և անգայտ:

[121] Հրց.— Ի քանի՞ս անշատի եռավանկն:

Պատ.— Ի յութն, որ ըստ ութիցն ձայնից, որք են. ստեղ, վերջատանջ, քողաքորք, քողադօտ, հաւեղ, աւարտեղ, ներգե, սոնք:

[122] Հրց.— Ի քանի՞ս անշատին քառավանկն:

Պատ.— Ի վեշտասան, որ ըստ վեշտասան հողմոցն, որք յաւելեալ իսկ են ի բուն շորս հողմոցն՝ երիս երիս, և են սոքա. երկհամբոյր, երկանգայտ, երկմեծասար և այլք:

[123] Հրց.— Ի քանի՞ս անշատի հնգավանկն:

Պատ.— Ի մի, ըստ նշանակութեան ընդհանուր ձայնիցն, որք ըստ եղանակին մի են, բայց կերպն-զանազանին. և է մեծավերջ քողաքորք:

107ա [124] || Հրց.— Զի՞նչ է ձայնադրական եղանակացն անուանք:

Պատ.— Են այսոքիկք եղանակք, որպէս. երկամանակ, եռամանակ, քառամանակ, հնգամանակ, վեցամանակ, եօթամանակ և ութամանակ:

[125] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ եղանակ դնեն սորա երգոցն:

Պտ.— Այսու կերպիւ. *կր-գո՞վ, կր-գեմ՞ք, գո-վե-լով*. առաջինն երկու շնչահատումն առնէ. երկրորդն՝ չորս, երրորդն՝ հինգ, որք են գիրագոյն հնարագրտութեամբ:

[126] Հրց.— Զի՞նչ է հնարն սոցա բնական:

Պտ.— Են շափ և քանակ ընդհանրիցն եղանակաց, զի ամենայն երգք և եղանակք ի ձեռն սորօք արտայօրինեալ վերերգին, և է՝ լի գաղտնափակ գիտութեամբ:

### Յաղագս տաղի և շափաբերութեան

[127] Հրց.— Զի՞նչ է տաղն, և զի՞նչ շափն նորին:

Պտ.— է բան, բաղկացեալ բացորոշեալ սեռիւ, թուով և դասակարգութեամբ ոտից շարագուգեալ:

[128] Հրց.— Զի՞նչ է նիւթ տաղին:

Պտ.— է տառն, վանկն, ոտքն և տողքն:

[129] Հրց.— Զի՞նչ է ոտքն:

Պտ.— է մասունք տաղի, բաղկացեալ ի վանկից շափեցելոց:

[130] Հրց.— Զի՞նչ է տողն:

Պտ.— է անդամք տաղի, բաղկացեալ յոտիցն շափեցելոց:

107բ [131] || Հրց.— Տաղն ի քանի՞ս անշատի ի տեսակս:

Պտ.— Ի յութն տեսակս, որք են. վեցաշափ, հնգաշափ, անուշ<sup>11</sup>, ասրլէփէական, ֆալէվշէական, սաֆիգական, անափէստական, համպական և ոչ գոյ այլ աւելի:

[132] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ արտելանի ի սոցանէ իւրեանցն ազդուութիւն կամ գիտութիւն:

Պտ.— Որպէս կենդանիքդ զուղևորութեան զճանապարհ երբեմն մանր գնացիւք, երբեմն քայլիւք, երբեմն մեղմն ճեմելով, և երբեմն յոյժ արշաւելով զընթացս աւարտեն զիւրեանց, այնպէս և սորա:

[133] Հրց.— Առ ո՞րպիսի ոտիւք բաղկացեալ են սորա:

Պտ.— Ըստ կարգի դրութեան սոյնպիսի. 6 ոտիւք, 5 ոտիւք, 3, 4, 5, 5, 4, 6, բայց են այլ և այլ եղանակադիր յօրինմամբ:

[134] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ լինին վանկն, ոտքն, և տողն սեռօրէն առեալ:

Պտ.— Այսու կերպիւ. *Այս է կր-գո-րան*,

*Ո՛ր-րոյս ձալ-նա-րան*:

Սոցա առաջինքն են պարզ ոտք, և են համբոյր: Յետին երկուքն՝ ստեղք: Են երկու տող, յորոց վերակրկնութեանցն արտայօրինին տաղք, է և հնգոտնեայ ոտանաւոր:

[135] Հրց.— Ո՞րպէս յօրինին տաղք ի դիրին եղանակի:

108ա || Պտ.— Զափմամբ գրոցն, որպէս զտաղականն շափեն զբան ալլազգն,  
որ ի ձեռն վէզնին, այսու կերպիւ.

մէֆաիւլուն, մէֆաիւլուն, ֆաիւլուն<sup>12</sup>. սոցա վերջականքն  
երկու, և առաջինքն միագիր վարին, որպէս լայտ է: ~

Յաղագս բաժանման տեսակացն տաղից

[136] Հրց.— Զի՞նչ է տեսակաց բաժանումն տաղից:

Պտ.— Են այնք, որք ընդ տեսակօք իւրեանց պարունակեն զերկու-  
տասանն ոտս:

[137] Հրց.— Ապա ո՞րպիսի կերպիւ կարեն լինիլ այնպէս:

Պտ.— Զի ութն տրամարաշխի ի նոյն շափս, որ ընդ քանակու-  
թեամբ երաժշտականին:

[138] Հրց.— Ուրեմն երաժշտականն շափ և քանա՞կ ո՞նի գիտութիւն:

Պտ.— Այո, որպէս ասէ Ներգինացին, թէ երաժշտութիւն շափով և  
քանակիւ գոչանա գիտութիւն, և աստուածաշունչ գիրն, թէ  
թիւ երաժշտացն ի զուարթութեան և այլն (Սիրար. ԼԲ, 8):

[139] Հրց.— Ապա ուրեմն ութից յեղանակաց այլ ո՞չ գոյ աւելի եղա-  
նակք:

Պտ.— Ոչ գոյ. որպէս ասէ Դաւիթ Անյաղթն\*, թէ մակբառակն<sup>13</sup>  
ութ եղանակ է, որ մինչև ցայս վայր էին եղանակք ձայնից,  
և այլ աւելի թէ գոն, են մասունք սոցայ:

108բ [140] || Հրց.— Զի՞նչ է վեցաշափ տեսակն տաղից:

Պտ.— է այն, որ ունի զոտս վեց, որոյ հինգերորդն ստեղ և վեցե-  
րորդն համբոյր, որգոն.

Զօրք երկնանլին զուարթնոց, դաւսըք հրեշտանկաց վերնոց:

Եւ ունին եղանակ ըստ ամօնակացն:

[141] Հրց.— Զի՞նչ է հնգաշափն:

Պտ.— է այն, որ ունի զոտս հինգ, որոյ առաջի շորս ոտքն են  
ստեղք, և յետին մինն է համբոյր, որգոն.

Այսօր որդիք Սիւօնի, նրդին ձայնիւ ցըն-ձայնի:

[142] Հրց.— Սորա այլ կերպիւ ևս կարեն լինիլ, թէ ոչ:

Պտ.— Այո, կարեն բազում կերպիւ լինիլ, բայց ի ձեռն բանիրուն  
երգեցողաց:

[143] Հրց.— Ո՞րքան արտելանի ի սոցանէ գիտութիւնս ձայնադրական:

Պտ.— Ելանի ձայնադրականս գիտութիւնս անբաւս, որպէս ասի,  
թէ նորանուագ երգոց վերջառումն ոչ գոյ, և ոչ լինի իսկ:

\* Այստեղ էլ պէտք է նշել հետևյալը. տվյալ դեպքում Գապասարայանը օգտվում է ոչ թե ուղղակի Անհաղթից, այլ նրա «Սահմանքի» երաժշտատեսական հատվածի միջնադարյան մի մեկնությունից, որ տարբեր բաներ են (տե՛ս Դավիթ Աճեաղը, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960, էջ 126. և հմմտ. մեր «Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում» հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», 1967, № 8, էջ 100—105):

[144] Հրց.— Ո՞րպիսի են յետամնացելոցն տեսակաց զգիտութիւն:

Պտ.— Զորս տեսցես ի բուն տեղի երաժշտականութեան, ըստ երկոտասաներեան ոտիցն, զորս արտադատեալ իսկ են երկոտասաներեան ժամու տունջեան, և անտի կրկնաբարգելով վերաբերեալ են ի վերայ Ի՞՞ ժամուցն<sup>14</sup>:

[145] Հրց.— Տառն, վանկն, ոտքն, և տողն ընդհանրապէս ևս ասեալ ի՞նչ ուսուցանեն երգչացն:

109ա || Պտ.— Ուսուցանեն և բացայայտեն եղանակացն զթիւս, զհանգամանս, զշափս և զքանակս, զբաժանմունս, զվերինս, զներքինս, զելեկէշութիւնս, զկողմնական յայտնածածուկ զգիտութիւնս և զայլս:

[146] Հրց.— Սոքա ի՞նչ ուսուցանեն յերաժշտականութեանս:

Պտ.— Զայն, որպէս ուսանիմք քերթողութեան զգիտութիւն, որով կարեմք ճշգրտորէն խօսիլ և անսխալ շարագրել, նոյնպէս սոքօք ևս իբր քաջահմուտ երգեցող, կարեմք բազում կերպիւ ձայնափոխ առնել զերգս երգոցն և ընդհանրից եղանակաց:

### Յաղագս խազիցն քէ զինչ է

[147] Հրց.— Զի՞նչ է խազն երգեցողութեան:

Պտ.— է զիժ իմն երաժշտական, որ ի ձեռն արհեստաւոր գործեաց յօրինմամբ ձեացուցեալ յաղագս օրհնեղականն երգոց:

[148] Հրց.— Ո՞րպիսի ձեակերպութեամբ են յօրինեցեալ:

Պտ.— Են ալլ և ալլ ձեակերպութեամբ, որպէս թէ սրածե, թրածե, ճղածե, օղածե, կտցածե, գրածե և այլն:

[149] Հրց.— Վասն է՞ր արտայօրինեալ են:

Պտ.— Յաղագս պերճազարգութեան եղանակի, և մանաւանդ վասն փառաբանութեան աստուծոյ, որ ի ձեռն յոգնահանձար միշնորդի:

109բ [150] || Հրց.— Ուստի՞ հնարեցեալք են:

Պտ.— Ի հնոյ երգչացն փիլիսոփայից, կամ յիմաստնոց, մանաւանդ ի սրբոց հարցն են պարզեցեալ և ի կարգն իրաց եղեալ:

[151] Հրց.— Ալլ ինչ զօրութիւն գո՞ն ի սոսա:

Պտ.— Այո, գոն. զի որ ընդդիմաբաժանեալ զներդաշնակաւոր քաղցրանուագ եղանակն արամաբաշխէ ի շեշտածայնն, ի բթածայնն, ի պարոյկածայնն, ի յոլորակածայնն և այլն:

[152] Հրց.— Ուրեմն յոյժ կարեոր է և ցանկալի խազիցն զգովելի գիտութիւն:

Պտ.— Այո, միշտ է կարեոր և պիտանացու հանրիցն երաժշտաց. մանաւանդ նրբահանձար բարեսիրացն՝ և ոչ երգչանմանիցն:

### Յաղագս բացայայտութեան խազից

[153] Հրց.— Զի՞նչ է բացայայտութիւն խազիցն:

Պտ.— է այն, որով բացայայտի քանիօնութիւն նոցա:

[154] Հրց.— Քանի՞ք են ներհայտցս խազք, որով լինին եղանակք:

Պտ.— Իննևտասն. տասն վերելեակ և բարձր ձայնիւ, ինն ըստորիջեալք և ստոր ձայնիւ<sup>15</sup>:

[155] Հրց.— Ունի՞ն մարմին և անմարմին:

Պտ.— Այո, գոն մարմին, անմարմին, և ոչ մարմին անմարմին:

110ա [156] || Հրց.— Զի՞նչ է մարմին և անմարմին ասացեալն:

Պտ.— Մարմինն մարմնացուցանէ, զասացուածս եղանակաց, և անմարմինն ոչ:

[157] Հրց.— Քանի՞ մարմին գոն, և քանի՞ անմարմին:

Պտ.— Իննևտասն խազիցն ինն մարմին է, հինգն անմարմին, և մնացելոց ոմանս է զառկապող ելուզումքն շնչոյ և աչն:

### Յաղագս անուանց խազիցն

[158] Հրց.— Զի՞նչ են անուանք խազիցն:

Պտ.— Են այնք, որով իւրաքանչիւրոցն անուանք յայտնի երևին:

[159] Հրց.— Գիտե՞ս զանուանս նոցա, ըստ գաղափարացն:

Պտ.— Են այսպէս. Մ երկար, / սար, / թուր. Պ ոլորակ, Մ փերնախաղ, յ ծունկ, յ ծ ծնկներ, / բնկորճ, Մ պէկորճ, ✓ զարկ<sup>16</sup>:

[160] Հրց.— Գիտե՞ս զստորինսն անուանց խազից:

Պտ.— Ետքա ևս են սոչնպէս. ✓ փուշ, ✓ երկփուշ, Մ պարոյկ, / խունճ, Մ ներքնախաղ, / խոսրովալին, ≈ խում, զ զակորճ, ը ըէյրէ:

[161] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ ձայն ունին ստքա:

Պտ.— Իւրաքանչիւրքն ըստ հազագի ելուզմանն շնչոյն, որ ըստ ձևոյն նկատմանց:

110բ [162] || Հրց.— Զի՞նչ է մեծամեծ խազքն երաժշտական<sup>17</sup>:

Պտ.— Են որք եղեալ լինին յետ և յառաջ խազիցն, իբր ստորակէտ, միջակէտ և վերջակէտ վարելով:

[163] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ ձայն ունին:

Պտ.— Ունին յրնդ իւրեան գաղտնափակ երաժշտական գիտութեան ձայն. բայց ներհիմաստնոցն են յայտնի կրկեցելոցն:

[164] Հրց.— Եթէ որ կամիցի հմտանալ յերաժշտականութեան և լինիլ բանիբուն երաժիշտ, որ ըստ ծիսոյ գերազանց հմտութեան, որո՞վ կարէ գոլ այնպէս:

Պտ.— Պարտ է ի սոսա գոլ հմուտ համանգամայն, որպէս. ի տառաչափութեան, ի վանկաչափութեան, յտիցն գիտութեան, ի տողիցն հմտութեան, ի տաղիցն բաժանման, որ ըստ իւրոցն իսկական շափարհրութեան, մանաւանդ բերթողութեան ընդհանուր տեղեկութեան, ի խազիցն զօրութեան, ձայնիցն իմաստութեան, փէրտէյիցն՝ ստոր և վեր և նիմ ձայնիցն արտահրնչութեան, ի բուն ձայնի երիցն ցեղից քաջայայտ ընդելական իսկութեան, կշորդական քանա-

կին վէզնի հանրականն մակացութեան և այլոցն (որպէս ի վերն), որովք զօրէ առնուլ զբաղցրանուագ երաժշտականն եղանակաց զհամն, իբր զգոյզն ի յոգունց:

[165] Հրց.— Սոցա տեսութիւն եղեալ է և յայտնի. բայց զշարն փերտէիցն ո՞րպէս իմանամք:

Մ11ա Պտ.— Իմացութք ալստ կերպիւ. որ ընդ խաղիւքն ձայնից:

- |   |    |           |   |
|---|----|-----------|---|
| 1. Եէկեան  կամ  <sup>15</sup> մեղմ փէնճուկէան . . . . .                   | ~  | . . . . . | ~ |
| 2. Մեղմ չիւսէլնի կամ աշիրան . . . . .                                     | /  | . . . . . | / |
| 3. Մեղմ սէկեա՛. կամ արագ . . . . .  | ~  | . . . . . | ր |
| 4. Ռաստ, որ ի տեղի եէկեանի՛ և է զլախ փերտէիցն,<br>որ ըստ երգչաց . . . . . | ~  | . . . . . | ~ |
| 5. Տիւկեան . . . . .  | )  | . . . . . | ✓ |
| 6. Սէկեան . . . . .   | o  | . . . . . | ~ |
| 7. Չարկեան . . . . .  | ^  | . . . . . | ~ |
| 8. Փէնճուկեան, որ պատասխանէ՛ 1-ին . . . . .                               | ~  | . . . . . | ~ |
| 9. Յիւսէլնի՛ 2-ին . . . . .   | ~  | . . . . . | ) |
| 10. Սէկեան կամ էվիճ՛ 3-ին . . . . .                                       | ւլ | . . . . . | ~ |
| 11. Թիզ ռաստ, կամ կէրտանիէ՛ 4-ին . . . . .                                | ✓  | . . . . . | լ |
| 12. Թիզ տիւկեան, կամ մունայէր՛ 5-ին . . . . .                             | ~  | . . . . . | ~ |
| 13. Թիզ սէկեան՛ 6-ին . . . . .  | ~  | . . . . . | ~ |
| 14. Թիզ չարկեան՛ 7-ին . . . . .   | ւ  | . . . . . | ւ |
| 15. Թիզ փէնճուկեան՛ 8-ին . . . . .  | o  | . . . . . | ✓ |
| 16. Թիզ չիւսէլնի՛ 9-ին <sup>16</sup> . . . . .                            | o  | . . . . . | ✓ |

Թէ կամենաս՝ գոլ երաժիշտ՝ բանիրուն,

Թիւն փերտէից՝ որ ըստ խաղիցն՝ լեր ներհուն:

111բ [166] || Հրց.— Գո՞ն ալլ ևս փերտէյք, թէ ոչ:

Պտ.— Ալո, գոն ալլ ևս. նևա, թիբ նևա, աճէմ, կէվէշթ, բահավի, և ալլ ներմն և թիզն<sup>20</sup>:

[167] Հրց.— Գո՞ն ալլ ևս խաղք, թէ միայն են սորա:

Պտ.— Ոչ. ալլ՝ գոն ևս մեծամեծ խաղք, որք, որպէս ասացաւ, յետ և յառաջ սոցա լինին եղեալ: Բայց այսորիկք խաղք, են իբր սկիզբն և հիմունք հանրիցն խաղից և եղանակաց:

[168] Հրց.— Որո՞վ եղանակաւ կարեմք իմանալ փերտէյիցն զձայն:

Պտ.— Սոյն ութիւք եղանակօքն կարեմք լեալ վերահասու փերտէիցն ընդհանրից:

Օրհնեսցուք

աճ

Բարձր արարէք  
աւ

Գրեցէք

աւելուիւ  
գէ

գէ

Օրհնեսցուք

Պարտեալ  
հմ

Ստեփան  
հմ

հմ

ժեսոգիսե

[169] Հրց.— Ո՞րպիսի սկսուածոցն եղանակաւ երգին սոքա:

Պտ.— Սոքա են հիմն փերտէլիցն և համայն փերտէլքն ցուցանին ներ սոցուն, և սկսին ի վերին կուսէն<sup>21</sup>:

112ա [170] || Հրց.— Նոյն ի վերոյ ասացեալ վեշտասան փերտէլիցն գո՞ն, նաև կարելի՞ է գոլ այլ ևս փերտէ:

Պտ.— Ոչ. այլ՝ է և եթ վեշտասան փերտէ, յորոց քաջայայտ հնարագիտութեանցն շարակազմին եղանակք համայնք:

[171] Հրց.— Ապա ասի, թէ այլազգեաց եղանակն վեշտասանէն այլ ևս գոյ աւելի եղանակ:

Պտ.— Թէ նոցա, թէ յունաց և թէ մերում, ոչ է կարելի գոլ այլ աւելի աստիճան ձայնիցն հանրից:

[172] Հրց.— Ապա ի՞նչ է ժԲ ձայնն, Զ աւազէն, [Ի]Պ շէօպէյն և ԽԸ թերգիպն այլազգեաց<sup>22</sup>:

Պտ.— Են նոքա ևս ի միջի վեշտասանիցն փերտէլից. զի են նոքա եղանակք և ոչ փերտէ. քանզի այլ է եղանակն, և այլ փերտէյն:

[173] Հրց.— Զի՞նչ [է] եղանակն և զի՞նչ՝ փերտէյն:

Պտ.— Եղանակն է այն, որ ի մէջ փերտէլիցն լինի. և փերտէյն է

այն, որովք եղանակք արտայօրինեալ երգին բազմազան կերպիւ և անուամբ:

[174] Հրց.— Ո՞րպիսի ձեակերպութեամբ յօրինին եղանակք և որովք նիւթովք մարմնաւորին ասութիւնք:

Պտ.— Ի ձեռն վեշտասանիցն փէրտէյից, և ոտիցն բացայայտ գրութեամբ, որ ըստ ութիցն եղանակաց և ձայնից:

[175] Հրց.— Ոտքն ի՞նչ օգուտ ունին եղանակացն:

112բ || Պտ.— Կշռադատեալ շափեն զեղանակա, որով ոչ պակաս և ոչ աւելի երգին երգք համայնք:

[176] Հրց.— Կարե՞ս դիւրագոյն իմն կերպիւ ցուցանել զայն:

Պտ.— Այո, կարելի է. ոտիցն ամանակօք մի ձայնն բազում կերպիւ կարէ լինիլ, ևս բազում հնարիւք երգիլ:

[177] Հրց.— Ո՞րպիսի հնարիւք և ո՞րպիսի ոտիւք երգի դիւրագոյն ոճով և եղանակաւ:

Պտ.— Հնգավանկ ոտիցն, ութներին ամանակօք, այսու կերպիւ և այսու գրութեամբ, բազմազան եղանակաւ:

Ա՛րի՛ ն՛րգևոցն՛ք,

Զա՛յնի՛ ցը՛նծա՛սցն՛ք,

Ն՛րգով՛ զան՛ազան՛,

Նո՛ր կ՛րգ ձա՛յնևոցն՛ք:

Ա՛հա՛ կ՛րգարան՛,

Մ՛երո՞յս ձա՛յնարան՛,

Ո՛ր մի՛շտ նսն՛ագէ՛,

Զա՛յն զա՛րման՛ազան՛:

Ընդ՛ քեզ՛ զն՛չևոցն՛ք,

Զա՛յնի՛ ճր՛հնևոցն՛ք,

Ը՛զպարզե՛տան՛,

Յա՛ւէ՛ա զո՛վևոցն՛ք:

Ա՛հա՛ կ՛րգարան՛ ծա՛ղկա՛լի՛:

[178] Հրց.— Սոյն սա երգս խազի՞ցն զօրութեամբ երգի, թէ ոտիցն:

Պտ.— Ոչ. այլ՝ ձայնիցն զօրութեամբ, որ ի ձեռն ամանակաւ ոտին:

[179] Հրց.— Ուրեմն ի ձեռն ձայնիցն ևս յօրինին եղանակք:

Պտ.— Այո, ձայնից զօրութեամբն ևս, ոտից զօրութեամբն, մանաւանդ խազիցն միջնորդութեամբ, որ ի ձեռն ձայնից, և ոտիցն կշռադատութեանց:

113ա [180] || Հրց.— Սոյն մեծավերջ քողարորբ ոտիւք կարելի՞ է այլ իմն եղանակ երգաձայնել:

Պտ.— Այո, կարելի է. բայց պարտ է լեալ վերահասու նորին գաղտնի ելուէջականն գիտութեան:

[181] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ գոյ ի նմա գաղտնի գիտութիւն ելուիջման. և թէ ո՞չ է կարելի բացայայտել զնա:

Պտ.— Ահա դիցուք եղանակ իմն, որ փոքր ինչ ցուցանէ զդիւրալուրն նորա, զոր առնէ ձայնականն գործիք, որ ըստ աղօտին՝ մու, և ըստ երկարին՝ երկ տևումն գործէ շնչոյն հագագի ելմանն ամանակի, այսպէս:



Իսկ մեծ Մարիամ,  
1 2 2 1 2

Մաղաղենացին,  
1 2 2 1 2

Նկեալ ի խրնկել,  
1 2 2 1 2

Չտէրունեան մարմին,  
1 2 2 1 2

Ըղճընշտակն նրստեալ,  
1 2 2 1 2

Ի վերա վիմին,  
1 2 2 1 2

Եւ ձայնէր նոցա,  
1 2 2 1 2

Չի լալք զկենդանին:  
1 2 2 1 2

Առ սուղն և աղօտն ըստ մի ելուզմանն շնչոյն որպիսի եղանակաւ եթէ կամիս, և երթ ընդ երկարն, որ ընդ մի միոյ ելուզմանն արտահանէ զձայն, ըստ տեղութեան ամանակի ձայնին՝ և որ զկնի:

[182] Հրց.— Չայնիցն ո՞րպիսի կերպիւ երգին երգք:

Պտ.— Պարտ է իմաստասիրել զձայնիցն եղանակաց ըզշարն, որ ի ներքոյ փէրտէյիցն հանրից:

[183] Հրց.— Ո՞րպէս վերաբերին նորա ի փէրտէյան:

113ր Պտ.— Այսպէս. աձ—օրճնեցաք—նեա.

գոփեցէք—բձ—չիւսէյնի.

օրճնեցէք—գձ—սէկեան կամ էփիճ.

բզաէք—գձ—թիղ սասա. կամ կէրտանիէ, մաճառ.

բարձր արարէք—ակ—սէկեան [կամ էփիճ].

ալէլուիա—զկ—չիւսէյնի.

չախտեան—զկ—նեա.

գոփեցաք—բկ—շարկեան.

բարձր արարէք—ակ—սէկեան.

ալէլուիա—զկ—տիւկեան.

չախտեան—զկ—սասա.

գոփեցաք—բկ—մեղմ սէկեան կամ արազ.

բարձր արարէք—ակ—մեղմ չիւսէյնի կամ աշիրան.

բզաէք—գձ—արազ և ալլն, ըստ կարգի դարձնալ ելանէ մինչև ի թիղ չիւսէյնին, որ ի նմանէն ալլ ոչ գոյ բարձր փէրտէ և եղանակ:

[184] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ լինին եղանակք ի ձեռն ձայնից:

Պտ.— Այսու կերպիւ, կարի դիւրագոյն եղանակաւ, որ ի ձեռն վերին փէրտէից:

դձ, ակ, դձ, ակ, դձ, ակ, դկ, դձ, դձ:  
 Իսկ մեծ Մարիամ մազդազենացին,  
 ան, րձ, դկ, րկ, ակ, դկ, [դկ], դկ, րկ:  
 Կացեալ արտաքոյ սուրբ գերեզմանին,  
 ակ, դձ, ան, րկ, ակ, դկ, դկ, րձ, դկ:  
 Աղի արտասուօք ողբալը գլենդանին,  
 րձ, դկ, րկ, ան, րկ, ակ, դկ, դկ, րկ:  
 Եւ տեսեալ զհրեշտակն ի գերեզմանին:

[185] Հրց.— Ո՞րպիսի գունով եղանակեալ երգի սա:

Պտ.— Պէտտէնիկեար եղանակին է եղեալ, բայց ի բազում տրամաբաշխի ի յեղանակ:

114ա [186] || Հրց.— Խազիցն հնարագիտութեամբ ո՞րպիսի կերպիւ երգին եղանակը:

Պտ.— դձ. դս շր ակ ստ րե րկրա րա անց  
 դձ. քա ղցրձաձալ ն եալ ե րգե րգե մք  
 րկ. ձեգ հրե շտակա պե րք տք  
 դձ. ե ղե հրե շտա կա րգ գտ ղա ղա ղա րք:

Բարունի պանծալիք՝ և գերագոյն գոյիցս,  
 Անտեսին տեսողք՝ և մերձաւորք արիւոյն:  
 Պարտիս ներկրկիլ՝ հմտութեամբ խազից,  
 Թէ ըստոր և բաց ասացես ձայնից:

[187] Հրց.— Ոտիւք, ձայնիւք և խազիւք երգին ընդհանուր երգք և եղանակք. բայց ո՞չ է կարելի, թէ դիրաւուր եղանակաւ ցուցանիցես ըստ իմիք գերգս նոցին:

Պտ.— Կարելի է, բայց դարձեալ պարտիս գիտել զներկրթումն ոտից, ձայնից և խազիցն:

[188] Հրց.— Թարց ներհմտութեանցն նոցին, եթէ կարելի է, խնդրի բացայայտելդ դուն ինչ ի յոգունց:

Պտ.— Անվարժիցն համբակաց ամենայն ինչ երեկ դժուարին. բայց ներկրթելոցդ իբր երգչաց, լիցի բացայայտ ըստ ընդել դիտմանն երգոց

114բ || Կայր կոյսն՝ ի յայրին, կայր և՛ զուարճանայր. Կամէր՝ ծընանիլ. կեանս ազգի մարդկան:

Ահա սոյն երգոց եղեալն ձայնաւորաց լեր մտադիր, որով սուղն, երկարն և երկամանակն որոշելով երգեա ընդ որով և խնդրիցի ձայնիւ:

[189] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ երգին աղօտովն, երկարաւ և երկամանակաւ ըստ դիրին երգոցն:

Պատ.— Տե՛ս բզդիրագոյն եղանակադրութիւն սորա, և ըստ կանոնադրութեան առ և երգեա սոյնպէս:

Ի վերն եղեալ տաղիս սկզբնադիրն, այսինքն կէնն, է ի բաղաձայնիցն, և է անձայն. այբն է ի ձայնաւորացն, և է երկամանակ. յի և բէ, են ի բաղաձայնից կիսաձայն. զօրութեամբ կիսաձայնիցն, դուն ինչ կարեն արտահանել ընդհանրից երգոցն ձայն: Նաև ոն է ձայնաւորացն աղօտ. նուն է անձայն. ին է ի ձայնաւորացն երկամանակ, և այլ մնացեալքն են յայտնի: Է և հնգօտնեայ ոտանաւոր (այս է. Կայր կոյսն՝ ի յայրին) և ոտք մի, որոյ վերակրկնումն լինի տող մի, և յերկրորդ վերակրկնութեանցն, այսինքն 4 ոտիցն արտելեալ բաղադրի տաղ իմն, որպէս եղեալ իսկ է ի վերն:

115ա [190] || Հրց.— Եթէ է կարելի, դիր այն վերոյ եղեալ տաղի եղանակն, որով ըստ ծիսոյն իմանամք զեղանակադրութիւն:

Պատ.— Է կարելի, բայց նախապէս պարտ է ներհմտանալ ընդհանուր խրատուցն եղելոց:

[191] Հրց.— Եթէ [հետամուտ] իցէ որ, նոյն հանուր խրատուցն վերահասու [լինիլ], ո՞րպէս լինիլ կարէ վերահասու:

Պատ.— Վերահասու լեալ կարող է նորօք գիտելովն ի ձեռն խաղիցն հնարիք:

[192] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ նոյն հնարն խաղից, որով վերերգին եղանակը:

Պատ.— Լեր նախ ձայնիցն ստոր և վերելութեանցն վերահասու, և թիւ համարոցն, որով կարողասցիս ըստ արարողութեան ձայնի վերերգել:

[193] Հրց.— Վերահասու եղեալ երգչացն բանիբունից, ո՞րպիսի շնչասպառականն եղանակի արտայօրինես բանս երաժշտականս:

Պատ.— Նրկատեմք նախապէս ոտքն քերթողական որով և առնեմք ըստ երկարին՝ երկ ելումն շնչոյ հազագին, և աղօտին՝ մի, որ ըստ առմանն հրնագոյն և ուղղացոյց երգեցողացն վսեմազննից:

115բ [194] || Հրց.— Ո՞ր ոտիցն եղանակաւ արտայօրինի վերասացեալ Կայր կոյսն, որ ի Շնորհալոյն<sup>23</sup>:

Պատ.— Ըստ դիրագոյն ոճոյ եղանակին առնեմք, որպէս թէ ի ցոյց ինչ համբակացն խակավարժից, ըզհնգավանկն մեծավերջ քողարբը, այսու կերպիւ:

Կայր կոյսն՝ ի յայրին, կայր եւ՝ զարձանայր:

Վամէր՝ ծրնանիլ, զկեանս անդի մարդկան.

Երգեալ յորում եղանակի եթէ կամիցիս, բայց սուղն դիր ի տեղի միոյ շնչավերջութեան, և երկարն երկուց շնչավերջութեանց կամ միոյ սաստկաձայնութեան:

[195] Հրց.— Յազագս ոտիցն ասի, թէ է և նմանի ուսուլիցն երգողութեան. ապա նոյնն ո՞րպիսի կերպիւ բացայայտի առ մեզ:

Պտ.— Բացայայտի նոյնն, կարի իսկ դիւրագոյն կերպիւ. առ զձայնն եղանակաց, յորում եթէ կամիցիս, և ի նոյնն եղանակի ասա իբր տիւմ, դէք. բայց իմա զկերպն:

[196] Հրց.— Ուրեմն այլ ուրիշ կերպ ունի՞ր ոտքն քերթողեան, որ վերաբերի երգեցողութեան:

116ա || Պտ.— Այո, ունի կերպս բազումս, որպէս ունի երգեցողութեան ի հնարս, որոյ ոմանս զկայ առեալ և ոմանս շուտափոյթ բնթերցեալ լրացուցանեն զեղանակն ձայնից:

[197] Հրց.— Նոյն զկայ և շուտափոյթ առումն ձեռա՞մք լինին, թէ՞ ձայնիւ երգին:

Պտ.— Լինին ձեռամք, բայց ոչ է ի մերս արարողութիւնն այն. այլ՝ ձայնն ի տեղի ձեռացն ի գործ արկեալ ձայնադրեմք:

[198] Հրց.— Ո՞րպիսի կերպիւ լինի ձայնն ի տեղի ձեռաց. զի այլ է գործ ձայնի և ձեռացն:

Պտ.— Որպէս ձեռոյ աջ զնես ի տեղի երկ շնչառութեան, և ձախո՞մու, այնպէս զելումն հազագի շնչոյդ յարմարեցս ի նոսին, որով լրացս զեղանակն սկսեցեալ:

[199] Հրց.— Նոյնն փոքր ինչ դժուարին երեւցաւ առ մերն վարժութիւն:

Պտ.— Ոչ է դժուարին, այլ որպէս յայտ յանդիման տեսանի այսու ձեռով:

Կա՞լր կո՞ւ, ո՞ւ, ու՞յան, ի, ի, ի՛ յալր ի, ի, ին՛,

դիր սկիզբն ած-էն, և սկսեալ երեք անգամ կու առնլով և այլն, որպէս եղեալ են ըստ հնարիցն իւրոց:

116բ [200] || Հրց.— Այլ ուրիշ ոտիցն միջնորդութեամբ ո՞չ լինին երգեցեալ սոյն երգս:

Պտ.— Լինիլ կարելի է, բայց սլարտ է նկատել ըստ ընտրութեան գործոյ նոցին:

[201] Հրց.— Զգործս նոցա ո՞վ կարէ շինիլ հմուտ, և առնել ի բանի որպէս սլարտ է:

Պտ.— Բանիրուն երաժիշտքն և հմտացեալքն ընդհանուր տեղեկութեանցն երգեցողութեանց:

[202] Հրց.— Ո՞րպէս գիտեն բաշավարժ երաժիշտք զնոյնս:

Պտ.— Այսպէս ասելով գիտեն, թէ մեծավերջ-անգայտն, որ է գոլով ըստ եղանակին հնգամանակ, կամ թէ մեծասար-անգայտն, որ է օ, փ, օ, օ, կատարեն ըզնոյնն բնթացք:

[203] Հրց.— Զնոսա ևս մի ըստ միոջէ բացայայտեալ ցուցանիցես աստ, միթէ ո՞չ է կարելի:

Պտ.— Այո կարելի է, և յոյժ դիւրագոյն, բայց երկարանան. զնոսա

յայտ առնեմք ի բուն տեղն, որ առ Մեծի երաժշտականութեան:

[204] Հրց.— Ըստ խազիցն ո՞րպէս երգեմք վերոյ եղևալ տաղն:

Պտ.— Ըստ խազիցն ևս երգի, գիտելով զթիւ համարոյ նոցին ըստ իւրոցն ձայնաձգութեանց:

117ա [205] || Հրց.— Եթէ խազիցն միջնորդութեամբ երգեսցի, հա՞րկ է ի ձեռն ոտից եղանակել, թէ ոչ:

Պտ.— Այո, հարկ է ասացաւ, ի յտից ո՞րն եթէ յարմարեսցի, որպէս այս երգս լինի:

րկ Կա շ ր կո լան՝ ի յայրի Վ  
Կա շ ր կո զաւրճա Վ նայր.  
Կամէ՛ ր՝ ծընա Վ Նիլ,  
Ջկեանս ա Վ զգի Վ մարդկա Վ ռուս:

Ահա յարմարեսցո զոտս, և իմա զղօրութիւնս խազից, որով և երգեա ըստ մագամի էվիճ ասացելոցն, որ յայտ է հմտասիրաց. սկիզբն սէկեահէն՝ վերջն ևս ի նէրմն սէկեահն:

[206] Հրց.— Կարելի՞ է այլ կերպիւ ևս եղանակաւ երգել զսոյն տաղս, թէ ոչ:

Պտ.— Այո, կարելի է, եթէ յորում եղանակի և կամեսցի երգոց:

[207] Հրց.— Որո՞վ լինի նոյնն:

Պտ.— Ի ձեռն ձայնիցն և հմտավարժութեամբ խազից:

[208] Հրց.— Ուրեմն նախ պարտ է գիտել զձայնըս և յետոյ զխազս:

Պտ.— Այո, պարտ իսկ է նախապէս գիտել զձայնիցն ընդհանուր տեղեկութեանց (որպէս ասացեալ է), և ապա զխազիցն իսկական ներհմտութեանց:

117բ [209] || Հրց.— Դիր ուրեմն այլով եղանակաւ ևս նոյն վերոյ ասացեալ երգն:

Պտ.— զկ կայր կո լան՝ ի յայրի Վ  
[... | կա շ ր կո զաւրճանայր.  
աձ կա Վ մէ՛ Վ ր՝ ծը նա Վ Նիլ,  
րկ Ջկե՛անս ա Վ զգի Վ մարդկա Վ ռուս:

Ահա գկ-էն հինգ ձայն վեր, որ լինի աճէմ, ըստ փերտէիցն, որոյ առաջին ոտքն լինի ի շնչասպառութեան դարձեալ նոյնպէս. երկրորդն՝ նեա, երրորդն՝ արագ և չորրորդն՝ մեղմ սկսուածոյն:

[210] Հրց.— Ջի՞նչ է եղանակական անուն սորա:

Պտ.— է բձ-էն կէս ձայն բարձր, որպէս յայտ է ի շարակնոցի, որ

եղեալ կան այսու ձայնի<sup>24</sup>, այսինքն ստուգութեամբն, և որ նշանան, որք են և ասին աճէմ. բայց այս է աճէմ-աշիրան: [211] Հրց.— Սոյն վերոյ եղեալ տաղս կարելի՞ է ի յեղանակս բազումս վերերգել:

Պտ.— Այո, գիտելով զկարգագրութիւն կանոնացն, որք ընդ առաջ եղան, որովք լինի ի յոգունս վերերգել ի յեղանակս ի ձեռն իազից:

### Յետամնացեալն տաղից

Կոյսըն՝ ծրնանէր, կեանս ազ՝գի մարդկան.  
Զէա՝կիցըն հօր, զկենսա՝տու փրկիչն:

118ա [212] || Հրց.— Արդեօք կարելի՞ է միով ոտամբ և միով ձայնիս երգել զեղանակս բազումս:

Պտ.— Այո, կարելի է, բայց բազդատեցմամբ ոտիցն, որ ըստ բազազանութեանցն, որպիսի են սորա:

Աււ — Բարբառ աւետեաց ձայնիս, (կրկնէ)

Գարբիէլ գոչէր սրբուհուն:

Առ քեզ առաքիմ մաքուր, (կրկնէ)

Պատրաստեալ տեղի տէրունոյն:

Յար — Ես ձայն զառիժուն ասեմ,

Որ գոչէր ի քառաթևին:

Ի քառաթևին գոչէր, (կրկնէ)

Ձայն առնէր ի սանդարամետսն: (կրկնէ)

Յար — Սէր յառաւօտէ, (կրկնէ)

Ճեմեալ իւր անձուկ ծագմամբ:

Մագման արևելք, (կրկնէ)

Անուն այն արուսեկին:

Ած — Տուի ես խնկալի, (կրկնէ)

Այն հոտըն որ ի քէն բուրեաց,

Ըզհոգիս կու վառէ,

Տիրամայր ի մայր մըտանէ:

Վրդ — Գոհար վարդըն վառ առեալ, (կրկնէ)

Ի վեհից վարսիցն արփենից: (կրկնէ)

Ի վերայ վարսիցն սլըղսլըջէր,

Մաղիկ ծովային սլըղսլըջէր:

Լու — Ի յելս արևու արև, (կրկնէ)

Մագեցաւ մեզ յարեմտից:

Ջամպն արեգական ծածկոյթ, (կրկնէ)

Պետրոսէն հօտէն հալածեաց:

118բ || Յոհ — Ի յօրովայնէ ընտրեալ, (կրկնէ)

Ճրգնութեամբ փրկչին հետեւեալ: (կրկնէ)

Դու ոսկիբերան Յոհան, (կրկնէ)

Ի մարմնի հրեշտակ երկնաւոր: (կրկնէ)

- Մար — Ահա են պարծանք ազգի մարդկան,  
Քրիստոնեից միշտ պահապան,  
Մինաս յաղթող վրկայն,  
Երմոգինէս նորին նրման: (կրկնէ)
- Հայր — Ով սուրբ հայրապետք ընտրեալք, (կրկնէ)  
Ի մարմնի հրեշտակք երկնաւորք:  
Որք վաճառեցիք ըզկենցաղս,  
Գրնելով զանգին մարգարիտս:
- Սար — Յառաջ անեղ տեսողէ, (կրկնէ)  
Յարարչէն ընտրեալ սուրբ Սարգիս, (կրկնէ)  
Եւ Մարտիրոս վրկայք զօրականք: (կրկնէ)
- Ի տաղիցն բաժանմանց, առ զանափէստականն, որ ունի  
չինքեան առժաժկեալ խառն ստեղծօք և ընդ համբոյր վեր-  
ջատանջօք, այսու օրինակաւ և ձայնիւ:

Ն՛ր-զե՛մք զե՛ր-զը՛ս, հը՛նա՛րի՛ք տա՛ղիցն:

Սա է գիտութիւն գլխաւոր և երաժշտականն ներհմտութիւն:  
[213] Հրց.— Կարելի՞ է լինիլ այլ ևս երգ, որ ընդ միով ձայնիւ և  
ոտիւք վերերգեսցին:

Պտ.— Այո, կարի յոյժ դիւրագոյն է և միշտ կարելի, որպիսի սոյն  
սա մեղեդիսս:

- 119ա || Ծնն — Կոյս անապական և անխախտ ծնողութիւն:  
Ծնն — Նոր ծաղիկ, այսօր բղխէ յարմատոյն Յեսսեայ Քրիստոս:  
Ծնն — Եւ որդի Դաւթի ծնանի զորդին Աստուծոյ Քրիստոս:  
Ծնն — Անեղն եղանի այսօր մարդ ճշմարտասպէս Քրիստոս:  
Ծնն — Ի լոյս անմատոյց բնակեալն խանձարրօք պատի Քրեյրի-  
րի-րէ-րիստոս<sup>25</sup>:
- Ած — Ծընար ըզկենաց պըտուղն մեզ ի փրկութիւն:  
Ած — Նոճի նոճ յեռից սափոր եղեզնաշէն տընկոյն:  
Ծնն — Նոր փրկիչ ծնաւ ձեզ օծեալ ի քաղաք Դաւթի:  
Ծաղ — Նորոգին երկիր այսօր գալըստեամբ փրկչին Քրիստոսի:  
Յար — Այսօր տէրն յարեաւ:  
Կանայք զի՞ լայք զկենդանին Քրիստոս:  
Յար — Աւետիս միշտ աւետեաց հրնշումն՝  
Տէրն մեր յարեաւ Քրեյրիստոս:  
Յար — Երգ նոր աւետեաց բարբառ այսօր  
մեզ հրնշեաց Քրիստոս:  
Բեր զասքլէփէական զոտս, յոր կան առ սեղմեալ համբոյրն, մե-  
ծասարավերջն, անդայտն, զստեղն և երկար վանկն, այսպէս:

Ն՛ր-զե՛ն-ցը՛ք, նը՛-կա՛տ-մա՛մք՝ մի՛շտ տա՛ղ-իցն աե՛սա՛-կօ՛ք:

119բ [214] || Հրց.— Որո՞վ եղանակաւ կարէ լինիլ վերահասու երաժիշտ որ,  
եթէ կամիցի զերգս յոգունս վերերգել:

Պտ.— Ի ձեռն տեսակացն բաժանմանց տաղից, որով և գիտիցէ

- զհնարն ոտից, որպիսի են և երգին միով ձայնիւ սոյն երգք՝
- Յար — Ի կոյս վիմէն յարեաւ աչսօր,  
Եւ ըզգերեալսն ի գերողէն ազատեաց Քրէրիստոս:
- Մնն — Լուաւ Եւա ըզձայն աւետեաց,  
Թէ դուստրըն ըս ծընաւ զէմմանուէլն Քրիստոս:
- Մնն — Նոր եղեմ բանաւոր տրնկոյն,  
Նոր Ազամըն ի քէն հընոյն նորոգողն Քրիստոս:
- Մնն — Աչսօր ծընար ըզբանն անմարմին ի հօրէ՝  
Սիրեցեալըն զանդրանիկ զՔրիստոս:
- Փոխ — Աչսօր նորահրաշ ցընծան ժողովեալ՝  
Առաքեալքըն ի փոխումըն տիրամօր (օր օր):
- Տե՛ս և գիտ զանուշ տեսակն տաղից, յորում կան ծածկեալ  
յոտից համբոյրն, ստեղն, մեծասարավերջն և անգայան,  
այսպէս:

Այս է՝ գիտութիւնն նըւաւ-զանց:

[215] Հրց.— Այլևս կարի բազումս կարելի՞ է երգաձայնել միով ոտամբ  
կամ ձայնիւ:

- 120ա || Պտ.— Այո, քանի որ եթէ խնդրիցի, մարթ է եղանակել միով ձայ-  
նիւ, որպիսի են սորա:
- Տն — Քրիստոս փառաց թագաւորն,  
Աչսօր եկեալ յընծայումն,  
Կատարելով նա զօրէնս,  
Քառասնօրեայ գալստեամբ:
- Մղ — Աստ երբայեցուց մանկունքն  
Զերգ ըզբրօրէիցն ասեալ,  
Հեթանոսական դասուց,  
Տօնակից վեհիցն եղեալ:
- Յար — Նըստեալ կանայքն ողբային,  
Առ գերեզման անմահին,  
Երևելով հրեշտակին,  
Ձայն աւետեաց լըսէին:
- Համ — Սոսկալի ահիւ պակեան,  
Հոյք հոգեղինաց դասուցն,  
Տեսեալ մերունակ կերպիւ,  
Ըզտէրն համբարձեալ յերկինս:
- Հոգ — Գոհութիւն Հոգւոյն Սրբոյ,  
Որ էջ յառաքեալսն աչսօր,  
Հրաշիւք հրազինեաց զնոսա,  
Յայլ և այլ լեզուս խօսեալ:
- Վար — Լեառըն ցընծա դու թափօր  
Յարփիահրաշս տօնի,  
Քան ըզՍինա բարձրացար,  
Զաստուած փառօք ընկալար:



- Փոխ — Այսօր պարողին զերկինս,  
 Կոյսն յերկրի աթոռ կազմի,  
 Բանիւ բարձողին զաշխարհս,  
 Հանգիստ կոյսըն պատրաստի:
- Խաչ — Այսօր ի ձեռն խաչին,  
 Եւ պատուական նըշանին,  
 Տացուք պատիւ Յիսուսին,  
 Ազատողին համայնից:
- Վար — Այսօր գոշմամբ առիւծին,  
 Ի քառաթև սուրբ խաչին,  
 Երկրբպագեմբ նըշանին,  
 Այն վարագայ սուրբ Խաչին:
- 120բ || Գիւտ — Այսօր խաչափայտըն սուրբ,  
 Յայտնեալ ձեռամբ Յուդայի,  
 Որ էր նա եղբօր որդի,  
 Սրբոյն նախավրկայի:
- Եկեղ — Նոր դրախտին եկեղեցւոյ,  
 Ծառ կենաց տընկեալ ի մէջ,  
 Զոր ոչ քրովբէիւք փակեալ,  
 Այլ՝ դու եղէր հուպ ի մէնջ:
- Յոհ — Սա յանապատէ քարոզն,  
 Գաւթից աստուծոյ վրկայ,  
 Զոր ես մըկրտեմ ասէ,  
 Է բարձող մեղաց մարդկան:
- Ստե — Ի խաչին տընկեալ որթոյն,  
 Ողկոյզ վաղահաս խայծեալ,  
 Քարամբրբ ճըմլեալ գինի,  
 Յոյժ ուրախարար սիրով:
- Առ — Այսօր ցընծացէք եղբարք,  
 Պարակից եղեալ վերնոցն,  
 զՊետրոս և զՊօղոս գովել,  
 Յօրս յիշատակի նոցին:
- Գրի — Զայն բարձեալ յերկինս առ քեզ,  
 Այսօր մեք յերկրէ գոշեմք,  
 Սուրբ հայրբղ Գրիգորիոս,  
 Մեղօք տառապեալ որդիքս:
- Առ — Պաղատիմք առ ձեզ բնտրեալք,  
 Գետք առգանօղք հոգւոյն,  
 Զպասքեալ ժողովուրդքս ձեր,  
 Արբուցէք ի շրոյն կենաց:
- Մար — Այսօր մանկունք Սիօնի,  
 Բերկրեալ ցընծան գուարճալի,  
 Յիշատակաւ ձեր տօնի,  
 Սուրբ մարգարէք բաղձալիք:
- Հայր — Ի մեծ հանգիսի աւուրս,  
 Առ քեզ պաղատիմք Յիսուս,

- Հզհայրապետն Յակոբ,  
 Առ քեզ բարեխօս ընկալ:  
 121ա || Մար — Այսօր նորահրաշ տօնիս,  
 Յնծամբ ընդ վկայից գործս,  
 Խրնդամբ ձայն առնեմք մանկունք,  
 Միմեանց ծափս հարկանելով:  
 Հոբի — Այսօր բանայ սերորէն,  
 Զդուռն դրախտին զեղեմէն,  
 Եւ մըտանէ Հոբիսիմէն,  
 Որ զմեզ փրկեաց ի շարէն:  
 Հրշ — Զօրք երկնային զուարթնոց,  
 Գասք հրեշտակաց անմարմնոց,  
 Իշխանութիւնք աթոռոց,  
 Եւ տէրութիւնք վերնոց:  
 Յոհ — Ի հանդէս քո սուրբ տօնի,  
 Յնծամբ և մեք հրճուալի,  
 Ո՛վ տէր Յոհան գովելի,  
 Ոսկերերան հրաշալի:  
 Մար — Պարծանք հանդիսից խըմբից,  
 Եւ զլուխ վրկայից սրբոց,  
 Արագ օգնական մարդկան,  
 Մարգիս յաղթօղ վրկայ մեծ:  
 Մար — Ի յասպարիսի մարտին,  
 Կրցորդ հանդիսի խըմբից,  
 Լեալ քեզ Մարտիրոս որդին,  
 Գեղեցկատիպ պատանին:  
 Մեծահրշ — Ի մեծի աւուր տօնիս,  
 Յիսներեկի պենտէկոստիս,  
 Յճրուսաղէմ քաղաքի,  
 Ի նըշանաւոր տեղին:  
 Թաղէ — Բանն որ ի հօրէ ծագեալ,  
 [և]  
 Բար — Ծագմամբ առաքեաց յաշխարհ,  
 Բաշխօղ պարզեացն ձրբից,  
 Ի վերուստ հեղեալ շնորհացն:  
 121բ || Բեր զհնգաշափ տեսակն և յարմարեցո ի սոսա. զի յոր  
 կան առ գանձեալ ոտս հինգ, որպէս՝ ստեղն, համբոյրն և  
 ալլն, որ է այսու ձայնադրութեամբ:

Մած-կեան՝ կան հղա-նանիք, ներ-սոնն՝ սա սուղ եւ եր-կա-րից:

[216] Հրց.— Գո՞ն ալլ ևս, կամ թէ լինի՞ն յարմար յօրինումն երգոց ընդ  
 իրեարս:

Պտ.— Այո, գոն, և ելանեն յանբաւ նման՝ աննմանքն, որպիսի են  
 և սոքա:

- Մնն — Մոզք յարեւելից,  
 Ընծայարերք եղին,  
 Զոսկին և զկրնդրուկն,  
 Եւ զպատուական զրմուսն:
- Յար — Կանանցրն կանխեալ,  
 Ի գերեզմանն եկին,  
 Զիւզս անուշս բերին,  
 Ի յօծանել ըզտէրն:
- Համ — Այսօր անդրանիկ,  
 Հօր միածին որդին,  
 Յերկինս սրլանա,  
 Աղամային կերպիւ:
- Մեծա — Նրւագեմք հոգւոյն,  
 Նուագս վայելուշս,  
 Վայելուշ բանիւ,  
 Զարարչութիւնն նախ ասեմք:
- Հոգ — Սուրբ գալստեամբ բո,  
 Նոր ծաղկեցաւ երկիր,  
 Վարդ անուշահոտ,  
 Եւ մանուշակ բրբրում:
- Փոխ — Այսօր Գարրիէլ,  
 Հրեշտակապետն եկեալ,  
 Բերեալ զբրարիտն,  
 Պրսակ յաղթօղ կուսին:
- Ած — Պար բոլորեցէք,  
 Եկեղեցւոյ մանկունք,  
 Յօրհնել քաղցր երգով,  
 Զճիւն օրհնութեան սուրբ կոյս:
- 122ա || Առ — Արեգակն արդար,  
 Որ ի հօրէ ծագեալ,  
 Զառաքեալսրն բո,  
 Անճառ շնորհօք լրցեալ:
- Առ — Պետրոս և Պօղոս,  
 Քրիստոնէից պարծանք,  
 Մեծ է ձեր հանդէս,  
 Այսօր ի Հոռմ քաղաք:
- Գրի — Սրորէից ձայնին  
 Եղանակեմք այսօր,  
 Ի յիշատակի  
 Լուսաւորչին մերոյ:  
 — Ի հանդէս տօնի բո,  
 Բախացեալ ցրնծամբ,  
 Հայր և վարդապետ,  
 Սուրբ հայրապետ ընտրեալ:  
 — Նոր ծառոյն կենաց,  
 Յանմահական դրախտէն,

- Ծաղիկ վաղահաս,  
Փրթթեալ բուրմամբ անոյշ:  
Կու — Կենդանի վրկայք,  
Կոյսք իմաստունք և սուրբք,  
Մարք մեր հոգեորք,  
Ծընողք յորդիս լուսոյ:  
Վահ — Յաղթող զօրութեամբ,  
Վերնականաւ լրցեալ,  
Քաջն ի գօրականս,  
Երանելին Վահան:  
Հայր — Բարունք պանծալիք,  
Որդոց մարդկան տաժողք,  
Ո՛վ սուրբդ Իսահակ,  
Եւ վարդապետ Մեսրոպ:  
Հրշ — Գովեստ բերկրանաց,  
Քաղցրաձայնեալ երգեմք,  
Ձեզ հրեշտակապետք,  
Եւ հրեշտակաց գումարք:  
Պահ — Անդ ի մէջ դրախտին,  
Երեք անձինք կային,  
Աղամ եւ Եւա,  
Եւ պատուիրանքն տեառն:  
Միւս — Հայր ամենակալ,  
Որ առաքեցեր,  
Ըզմիածին որդիդ,  
Ի փրկութիւն մարդկան:  
122բ || Բեր գսաֆիրական տեսակն և ընդ նմին յարմարեալ երգե  
զսոյն երգս ևս, որք են հինգ ոտիւք, սոյնպէս:

ՆՐ-ւ-ա-ւ-գեմք ըզ-նՐ-ւ-աղս, ա-ղօտ եւ սՐ-դիւք:

[217] Հրց.— Եթէ որ շիցէ վերահասու ոտիցն կամ տաղից գիտութեանց,  
որո՞վ կարիցէ երգել զսոյն երգս:

Պտ.— Թէ ոչ կարէ լինիլ հմուտ ընդհանուր տեղեկութեանցն գի-  
տութեանցս, զոնէ վերահասու լեալ երգովն եղանակեացէ  
զհանուր բոս իւր տեսակին: Որպէս ահա զոն երգք ոմանք,  
որոց են որպէս հմտացեալ. այսինքն ի յառաջին տեսակին՝  
Բարբառ աւետեացն, Ես ձայն զառիւծուն և այլն, ընդ  
որովք վերերգեսցեն ձայնիւք: Եւ այլն այսու խրատով կա-  
րեն եղանակել. զԿոյս անապականն՝ յերկրորդէն, զ՛Ի կոյս  
վիմէնն՝ յերրորդէն, զՔրիստոս փառաց թագաւորն՝ շոր-  
րորդէն, կամ զԱյսօր ի ձեռն խաչին, կամ զԱյսօր ցնծա-  
ցէքն, զԱյսօր անդրանիկն, զԱյսօր Գաբրիէլն՝ հինգերորդէն  
առնլով երգեսցեն միով ձայնիւ և երգով:

Ծնն—Յանեղական լուսոյն,  
 Անժամանակեալ լոյսն անվայրամիակ,  
 Ի ընդ պարագրի՛ Մարիամ,  
 Աւետիս, անտիս, անտիս քես տիրամայր:  
 Ծնն—է՛ ին անոյ՛ անոյ՛ ձևին,  
 Անոյն իւր ան, ընդ անմէ՛ հօր,  
 Հօր ընդ անմէ՛, լուսոյն փառաց:  
 Յար—Կաթողիկէ՛ կկկողնցի՛,  
 Աւրախ լեր բերկրեալ,  
 Տէրն մեր յարեալ,  
 Քես մեծ անտիս:

Սոյն երիսն է ի սրբոյն Գրիգորէ Նարեկացոյն նուագեալ<sup>26</sup>, որոց առաջինն է ի հնգավանկ եղանակին, երկրորդն և երրորդն են սաֆիքականն եղանակի, և յօրինեալ ըստ ծիսոյ երգոցն, որ յայտ է:

[218] Հրց.— Միթէ ո՞չ է կարելի տաղերգութիւնքն ևս երգեսցի միով ձայնիւ և միով ոտիւք:

Պտ.— Այո կարելի է զի մինն՝ երկու, երեք և այլ աւելի ձայնիւ եղանակաւ երգել, որպիսի են սորա:

Յար — Գոչէր հրեշտակն առ վիմին,  
 Վասն յարութեան Յիսուսին,  
 Կանայք դուք զի՞ զարհուրիք,  
 Լալով խնդրէք զկենդանին:

Ած — Խընկին ծառին՝ նըման ևս,  
 Պըտուղ դու քաղ՝ ցրահամ ևս,  
 Զբարի պըտուղ՝ բերեալ ևս,  
 Աստուածածին՝ մեղայ քեզ:

Ած — Առաջնաճաշակ պըտողոյն,  
 Մահուանն առաջին մարդոյն,  
 Եղեր անիծից լուծիչ,  
 Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ած — Բարձօղ եղեր՝ անմահին,  
 Եւ բնակարան՝ հօր բանին,  
 Ծընար զորդին միածին,  
 Մայր լուսոյ աստուածածին:

Մաղ — Այսօր ցընժան՝ արարածք,  
 Խրախճանապէս՝ օրհնութեամբ,  
 Երկինք և երկիր՝ պար առեալ,  
 Մափրս ծափի՛ հարկանեն:

Յար — Քրիստոս խաչեալ՝ ի փայտի,  
 Յճրուսաղէմ՝ քաղաքի,

- Եղաւ ի նոր՝ տապանի,  
 Զոր էր փորեալ՝ ի վիմի:  
 123բ || Հրշ — Զօրք երկնային՝ զբարթնոց,  
 Գասք հրեշտակաց՝ անմարմնոց,  
 Իշխանութիւնք՝ աթոռոց,  
 Եւ տէրութիւն՝ նրք վերնոց:  
 Ստփ — Նրստեալն յառնէր՝ ցուցանել,  
 Վերին հրեղի՝ նացն դասուց,  
 Տեսէք զհողե՝ դէն բնութիւն,  
 Վասն իմ շարշարեալ մարմնով:  
 Առ — Պաղատիմք առ՝ ձեզ բնտրեալք,  
 Գետք առոգա՝ նողք հողոց,  
 Զպասքեալ ժողովուրդըս ձեր,  
 Արբուցէք ի ջրոյն կենաց:  
 Աշխ — Ուրախ հարսն լեր՝ ի յերկրէ,  
 Բերկրեալ դշխոյ՝ յաշխարհէ,  
 Այսօր ցընծա՝ և պարէ,  
 Քրիստոս բզբեզ՝ պրսակէ:  
 Հայր — Աստանօր վը՛տակ հոսեալ,  
 Ով տէր սուրբ Յա՛կոբ բնտրեալ:  
 Զորդիս քո գե՛րի վարեալ,  
 Զտօնքս հանդի՛սի ցրուեալ:  
 Խաշ — Աստուածածին՝ սրբուհին,  
 Ամէնօրհնեալ՝ տիրուհին,  
 Կայր առ խաշին՝ Յիսուսի,  
 Եւ արտասուէր՝ տրտմալի:  
 Խաշ — Յովսէփ Արե՛մաթացին,  
 Առ Պիղատոս՝ Պոնտացին,  
 Խնդրէր բզնազովբացին,  
 Զգատապարտեալն ի խաշին:  
 Շող — Նախ միածին՝ աստուածըն բան,  
 Իջեալ յերկնից՝ առնանման,  
 Ուսն ի ձեռին՝ ոսկէնման,  
 Սաստիկ տեսիլն՝ ահեղական:  
 Յար — Յայնժամ սիրով՝ տիրական,  
 Լրցեալ կանանց՝ խնդութեամբ,  
 Գան առ Պետրոս՝ Յովհաննէսն,  
 Եւ սիրեցեա՛լըն Յոհան:

Ահա սոյն սա տաղերգութիւնքն բնդ մեծավերջ ոտիւք վե-  
 րերգին բստ իւրն յարմար յերիւրման, կարի յոյժ դիւրագոյն  
 ձևօք. նաև յայտ է նախեղեալ տաղիցն երգօք:

124ա [219] || Հրց. — Արդեօք գտանի՞ն այլ ևս տաղերգութիւնք, որ երգեսցին  
 բնդ միոյ եղանակաւ:

Պտ. — Այո, գտանին քանի ինչ ձևք, զորս դիցուք բստ կարգի յար-  
 մարութեան:

- Մնն — Տունկ անմահութեան,  
 Բողբոջեցար սուրբ կոյս,  
 Մաղկարար ծընար,  
 Զանմահ պրտուղն Յիսուս:
- Առ — Այսօր Գարբիէլ  
 Հրեշտակապետն եկեալ,  
 Բերեալ զբրաբիոն,  
 Պրսակ յաղթօղ կուսին:
- Յար — Կանանցըն կանխեալ,  
 Եկին ի գերեզման,  
 Զիւղս անոյշս բերին,  
 Ի յօժանել բղտէրն:
- Համ — Այսօր անդրանիկ  
 Հօր միաժին որդին,  
 Յերկինս սրլանայ  
 Աղամային կերպի:
- Հոգ — Այսօր սուրբ հոգին  
 Աստուած եկեալ յաշխարհս,  
 Յաշխարհս հնչեաց  
 Ըզձայն որոտման մեծի:
- Մար — Բանաւոր ծառոց  
 Երեկցան ծաղիկք,  
 Երփնազարդ գունով,  
 Անուշահոտ բուրմամբ:
- Եզբթի — Տէրըն կատարիչ,  
 Հին օրինաց ուխտին,  
 Ըզգաորն կերեալ,  
 Ընդ բաղարջի հացին:
- Առ — Նոր լոյս յարփենոյն  
 Վառեալ որդիքն որոտման,  
 Որդոց Սիօնի  
 Մազեն աւետարանաւ:
- Առ — Յակորոս բնտրեալ  
 Վրկայ որդի Յովսեփայ,  
 Ըստ մարմնոյ փրկչի  
 Մերոյն մեսիայ:
- 124բ || Առ — Պետրոս Պօղոս,  
 Քրիստոնէից պարծանք,  
 Մեծ է ձեր հանդէս,  
 Այսօր ի Հռոմ բաղաք:
- Տաղք այլ իմն կերպի
- Յար — Դասքըն հրէական,  
 Էին պահապան  
 Սուրբ գերեզմանին,

- Յոր եղաւ՝ մարմինն աննման:  
 Յար — Տեսեալ Մարիամ  
 Զտէրըն ի պարտիզին,  
 Ողբալով ձայնէր  
 Պարտիզպան՝ ո՞ւր է իմ որդին:  
 Յար — Յայն առաւօտին,  
 Միաշարաթին,  
 Լուսափայլ հրեշտակն  
 էր նստեալ՝ ի վերա վիմին:  
 Եզրթի — Աստուածն ամէնի,  
 Միածինն որդի,  
 Կամաւ հօր հոգւոյն  
 Ճըշմարտի՝ յերկիր խոնարհի:  
 Ուր — Լըցան բանքն այսօր,  
 Սուրբ մարգարէիցն,  
 Ածեալ կացուցին,  
 Զտէրըն յատեա՛նըն Պիղատոսին:  
 Յար — Ո՞վ պարտիզապան,  
 Ասա՛ ո՞ւր տարան,  
 ԶՅիսուս կենդանին,  
 Որ կարծեմ՝ թէ դու ես նրման:  
 Հայր — Անճառ միածին,  
 Հօրն երկնաւորին,  
 Ընտրեալ ի յերկրէ  
 Սուրբ Յակոբ՝ քրորէ մարմնաւոր:  
 Ած — Անճառին խորան,  
 Բանին բնակարան,  
 Գովեալ Մարիամ  
 Սրբուհի՛ դու վարդ անթառամ:  
 Ած — Արև լուսատու,  
 Տաճար աստուծոյ,  
 Բանին բարունակ  
 Մարիամ՝ անթառամ վարդոյ:

Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

1. Գապասարայանի ինքնագիր օրինակում, անտարակույս, աշխատութեան խորագիրն ավարտվել է այստեղ: Հաջորդ խոսքերը («շարագրեցեալ յումեմնէ բանասիրէ» և այլն), ավելացրել է գաղափարող գրիչը, տեղեկութիւն շուննալով աշխատութեան հեղինակի մասին:

2. Հաշվի առնելով «նուազականի» մասին հեղինակի տված հետազա բացատրութիւնը (տե՛ս բնագրի 3—6-րդ հարց-պատասխանները), կարող ենք հաստատել, որ այստեղ, Գապասարայանը, թեև ոչ հստակ, տարբերում է մանողիկ երաժշտութեան երեք հիմնական կողմերը՝ ելեկտրային, կշռայթային և զարդուլորումային: Սրա օգտին են խոսում նաև հետևյալ փաստերը: «Եղանակ» բառի երաժշտական առաջին նշանակութիւնը գրաբարում եղել է՝ ρυθμός և μέτρον (տե՛ս նոր բառգիրք Հայկազեան լեզուի): «Սրինգ» խոսքից հնուց ի վեր ունեցել ենք մի բայ, «սրնգել»՝ «հանել զձայն սրնգի» առաջնային իմաստով (տե՛ս հիշյալ բառգիրքը): Եվ միջնա-



դարյան մանրուսման ճախ դարդուրված զձ մի եղանակ, ինչպես նկատել է դեռևս Ս. Ամատունին, կոչված է եղել «սրինգ» (տե՛ս նրա՝ «Հայոց Բառ ու Քան»)։

3. Այս հարցը հայ երաժշտական գեղագիտության մեջ հին պատմություն ունի։ Վաղ միջնադարում Դավիթ Քերականը փաստորեն նույնպես երկուսի բաժանելով երաժշտական արվեստը, եկեղեցական երգը համարել է ոչ միայն «հոգևոր», այլև «բարի», «կայուն» և «հասարակաց», ի հակադրություն աշխարհիկ (հեթանոսական) երգի, որն իմաստասերը անվանել է «չար» կամ «միջակ» (նայած տեսակին) և «անցական» ու «առանձին» (տե՛ս մեր «էջեր հայկական վաղ միջնադարյան երաժշտական գեղագիտությունից» հոդվածը, Հայկ. ՄՄՀ ԳԱ-ի «Տեղեկագիր» (հաս. դիտ.), Երևան, 1961, № 2)։ Զարգացած ավատատիրության շրջանում զգալի մեղմանում է աշխարհիկ երաժշտության նկատմամբ հնում ցուցաբերված այս վերաբերմունքը։ Հովհաննես Պլուզ Երզնկացին պատշաճ է համարում երաժշտությունը բաժանել «աստվածային» ու «մարդկային» տեսակների, վերջինիս տակ հասկանալով ավատապետական ազնվականությանը ծառայող գուսանների երգը, որ կատարվում է «ի ժողովս խրախուսեան և յուրախական հանդեսան» (տե՛ս մեր «էջեր միջնադարի հայկական երաժշտական գեղագիտությունից» հոդվածը, «էջմիածին», 1963, № 11)։ Հայկական ուշ միջնադարը հիմնականում ժառանգում է Երզնկացու սույն դրույթը (ինչպես և Դավիթ Քերականի մտքերը՝ Երզնկացու միջնորդությամբ), ու ելնելով նոր իրադրությունից, բնդլայնում և մեղմացնում է այդ դրույթն այնպես, որ «աստվածային» հետ միասին ընդունելի համարվի նաև «մարդկային» աշխարհիկ արվեստը՝ ամբողջությամբ առած՝ պայմանով, որ վերջինս «պարկեշտ» կամ «համեստ» լինի բարոյագիտական ներգործության տեսակետից։ Այս գաղափարը, որ շատ հստակ արտահայտել է տակավին Խաչատուր Էրզրումեցին (տե՛ս մեր «Խաչատուր Էրզրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսարան» հոդվածը, «Լրաբեր» 1966 № 11), յուրովի ամբողջական տեսության է վերածել Գր. Գաղասարալյանը և նույնությամբ կրկնել իր հետագա գործերում ևս (հմմտ. «Գիրք երաժշտական», Կ. Պոլիս, 1803, էջ 11—12)։

4. Հին հունական լիդիական կոչված ձայնեղանակն է հիշատակվում այստեղ, որպես աձ.։ Մնացած երեք՝ բձ. դձ. և դձ. ձայնեղանակների անունները՝ հունական դասական թվականներ են. համապատասխանաբար՝ դեւտերոս = δευτερος, տախտոս = τριτος և տետարտոս = τεταρτος։

5. Մի քանի անգամ պատահող այս արտահայտությամբ («ի Մեծի երաժշտականութեան») հեղինակն անկասկած ակնարկում է իր մեկ այլ աշխատությունը, որ է՝ ամենայն հավանականությամբ՝ Տրդ. եպ. Պալյանի նկարագրածը (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1895 № 3, էջ 65 և № 4, էջ 123)։ Այդպես է, քանի որ «Գիրք երաժշտականի» էջերում ևս հեղինակը ընթերցողին դեպի իր շորթորդ աշխատությունը հղելու առիթներ է ստեղծում (տե՛ս, ասենք՝ էջ 31, «Յաղագս մէթոտոսի երաժշտականութեան» գլուխը), այն համարելով ամենածավալունը, ուր հարցերը լուսաբանվում են առավել հանգամանորեն։ Եվ ավստո, որ հիշտ այդ աշխատությունն է անգարձ կորնու։

6. Մերձարևելյան երաժշտարվեստի հիմնական հնչյունաշարի աստիճաններն է հիշատակում հեղինակը, գործածելով ուշ միջնադարում ընդհանրացած տաճկական անվանումները։ Ստորև բերում ենք այդ հնչյունաշարի լրիվ կազմը, վերձանությամբ հանդերձ (օգտվելով ձայնաստիճանները լատինական տառերով նշելու՝ երաժշտության տեսության մեջ ընդունված սկզբունքից)։

1. Եէկեան՝ մեղմ փէնճուկեան . . . . .	d <sup>1</sup>
2. Մեղմ յիւսէյնի կամ աշիրան . . . . .	e <sup>1</sup>
3. Մեղմ սէկեան՝ կամ արայ . . . . .	(—)fis <sup>1</sup>
4. Ռասա . . . . .	g <sup>1</sup>
5. Տիւկեան . . . . .	a <sup>1</sup>
6. Սէկեան . . . . .	(—)h <sup>1</sup>
7. Չարկեան . . . . .	c <sup>2</sup>
8. Փէնճուկեան՝ կամ նեա . . . . .	d <sup>2</sup>
9. Յիւսէյնի . . . . .	e <sup>2</sup>
10. Սէկեան՝ կամ էվիճ . . . . .	(—)fis <sup>2</sup>
11. Թիզ ասաա կամ կէրտանի . . . . .	g <sup>2</sup>
12. Թիզ տիւկեան՝ կամ մուհայէր . . . . .	a <sup>2</sup>
13. Թիզ սէկեան . . . . .	(—)h <sup>2</sup>
14. Թիզ շարկեան . . . . .	c <sup>3</sup>
15. Թիզ փէնճուկեան . . . . .	d <sup>3</sup>
16. Թիզ յիւսէյնի . . . . .	e <sup>3</sup>

Սրանք բնուզիղ (դիատոնիկ) հնչյունաշարի աստիճաններն են: Գոյութիւն ունեն նաև շուրջ նույնքան ձևափոխված կամ ածանցված աստիճաններ (դրանցից Գաղասարգսյանը հիշատակում է լսել մի-երկուսը՝ շորիզան (=dis<sup>1</sup>), անկւ-աշիրան (=eis<sup>1</sup>), կէվէշը (= (+)fis<sup>1</sup>), պուսէլիք (=his<sup>1</sup>), անկւ (= eis<sup>2</sup>), մահուռ (= (+)fis<sup>2</sup>). որով հիմնականում լրանում է մերձարևելյան երգ-երաժշտութիւն մեջ օգտագործված ձայնաստիճանների միակցութիւնը: Վերջինս ներկայացնում է երաժշտական յուրահատուկ հնչակարգ: Նրանում, ի տարբերութիւն եվրոպական լավ հավասարեցված հնչակարգի, eis-ը և his-ը հավասար չեն, համապատասխանաբար, ի-ին ու e-ին: Եվ ընդհանրապես, այստեղ բարձրացման միջոցով ձևափոխված (կամ ածանցված) աստիճանները՝ էնհարմոնիկորեն իրենց հավասարեցվածներ կամ իջեցման միջոցով ստացվող համապատասխաններ չունեն: Բացի դրանից, այստեղ կան և աստիճաններ, որոնք իրենց բարձրութիւնը պարզապես չեն համընկնում լավ հավասարեցված հնչակարգի համապատասխան աստիճանների հետ, լինելով մի փոքր ցած (—), կամ մի փոքր բարձր (+):

7. Ձայնեղանակների հեզման (այսինքն՝ դրանց էջելների յուրացման) այս ձևը ենթադրում է վերը բերված հիմնական հնչյունաշարը վարժ պատկերացնել, դեպի վեր ած-բծ-դծ-դծ, ու դեպի վար՝ ազ-զզ- դզ-բզ հաջորդութիւններով, հետևյալ կերպ.

դ<sup>1</sup> ա<sup>1</sup> բ<sup>1</sup> գ<sup>1</sup> դ<sup>1</sup> ա<sup>1</sup> բ<sup>1</sup> գ<sup>1</sup> դ<sup>1</sup> ա<sup>1</sup> բ<sup>1</sup> գ<sup>1</sup> դ<sup>1</sup> ա<sup>1</sup> բ<sup>1</sup> գ<sup>1</sup> դ<sup>1</sup>

բ<sup>4</sup> դ<sup>4</sup> գ<sup>4</sup> ա<sup>4</sup> բ<sup>4</sup> դ<sup>4</sup> գ<sup>4</sup> ա<sup>4</sup> բ<sup>4</sup> դ<sup>4</sup> գ<sup>4</sup> ա<sup>4</sup> բ<sup>4</sup> դ<sup>4</sup> գ<sup>4</sup> ա<sup>4</sup> բ<sup>4</sup>

Գիտարկվող օրինակում, ուր «ձայն» և «կողմ» նշումները տարբերվում են նաև դրանց վրայից դրվող «բենկործ» և «փուշ» խաղերով, առաջին «ած»-ն համապատասխանում է d<sup>2</sup>-ին:

8. Աշխատութիւն մեջ, նայած կապակցութիւն, հեղինակը մի քանի իմաստով է գործածում «եղանակ» բառը: Առհասարակ «կերպի» նշանակութիւնով, «մեղեդիի» կամ «ելևէջի» նշանակութիւնով, և «կշռույթի» իմաստով, որպիսին է պարագան այստեղ, 70-րդ հարցում, ուր խոսքը վերաբերում է ութ ձայնեղանակներին: Ընդհանուր առմամբ այդ են վկայում նաև հաջորդ (71-րդ) հարցի պատասխանում առաջ բերված ութ պայմանական խոսքերի խաղավորումները:

9. Ընդհանրապես «ձայն» բառը կիրառելով «ձայնեղանակի» (глас) իմաստով, այստեղ ու մի-երկու այլ դեպքերում հեղինակն այն գործածում է «ձայնաստիճանի» նշանակութիւնով ևս:

10. Ողջ աշխատութիւն մեջ հեղինակը գործածել է ընդհանուր արևելյան (մերձարևելյան) երաժշտական մի շարք տերմիններ, որոնք մեկտեղելով այստեղ, բերում ենք այրբնական կարգով, իրենց նշանակութիւնով հանդերձ:

Ավազէ—հնչյուն, ձայն, եղանակ, շափանմուշ եղանակի տեսակ:

Դէք—արևելյան երաժշտութիւն շափակշռութիւն համակարգին հատուկ երկու զլխավոր զարկերից մեկը՝ մեթն զարկ:

Թէրգիպ—համադրում, կանոն, շափանմուշ եղանակի տեսակ:

Թիզ—սուր, բարձր:

Ղանուն—բանոն:

Մագամ—տիպական մեղեդի, շափանմուշ եղանակ, 12 «դասական» առաջնային ձայնեղանակների ընդհանուր անվանակոչութիւնը:

Նէրմ—մեղմ, ցած:

Նիմ—կես, կիսաձայն, կես ձայն:

Շէօպէ—մագամներից ընձուզած շափանմուշ երկրորդային եղանակների ընդհանուր անվանումը:

Չէշնի—համ, ճաշակ:

Վէզն—կշիռ, շափ:

Տիւմ—շափակշռութիւն համակարգին հատուկ երկու զլխավոր զարկերից մյուսը՝ ծանր զարկ:

Ուսուլ—շափակշռութիւն տիպական բանաձև:

Փէրտէ—մատնատեղ (լարային կամ իթահար նվագարանի կոթի վրա):

Նիմ փէրտէ—կիսաձայնի կամ ածանցյալ աստիճանի մատնատեղը, կես ձայն, կես աստիճան:

11. Ուսանաժորի տեսակներին վերաբերող երկու-երեք ածականներից, որոնք զործածված են այստեղ, «անուշը» պիտի բացատրել հայերենով, այդ խոսքի ուղիղ, բառարանային իմաստով: «Ասրելփեհականը» ծագում է մ. թ. ա. VII դարում ապրած հույն բնաբերգու Asclépiade-ի *անուշից* (տես Petit Larousse, Dictionnaire Encyclopedique, Paris, 1966): «Սաֆիդականը» դարձյալ զոյացել է հին հույն բանաստեղծուհի (և երաժիշտ) Սապֆոյի *անուշից* (Σαπφώ—տես Փ. Брокгауз և И. Ефрон, Энциклопедический словарь, XXVIII, СПб, 1900, էջ 391, նաև Westphal u. Gleditsch, Allgemeine Theorie der Griechischen Metrik, Leipzig, 1809): Ուշ միջնադարում ընդհանրացած «Ֆալվելական» խոսքի ծագումը չկարողացանք պարզել: Բայց կարևորն այն է, որ աշխատության մեջ բացատրվում է տաղի ինչպես սույն, այնպես էլ մյուս բոլոր տեսակների շափակչությունային-շեշտադրական կազմությունը:

12. Արաբական դասական տաղաչափության մեջ ընդունված՝ շափակչությունային-շեշտադրական տիպական բանաձևեր:

13. Բնագրում՝ «մակեռակն», որ ակնհայտ վրիպակ է:

14. Տաղաչափական ոտքերի տեսակների, նույնիսկ երաժշտական կշռությունների ծագումը օրվա ժամերի հետ կապելը հինավուրց գաղափար է, որն անցյալում այլևայլ կերպ է հիմնավորվել: Ըստ Քամբուրի Հարությունի հաղորդած տվյալների, օրինակ, դա բացատրվում է նրանով, որ օրվա տարբեր ժամերին մարդու սիրտը տարբեր կշռությամբ է բարախում (տես Тамбурист Арутин, Руководство по Восточной музыке, աշխատությունը Ն. Քանձիզյանի, Երևան, 1968, էջ 107, այսուհետև՝ Тамбурист):

15. Մեղեդիական վերընթաց ու վարընթաց բայեր ցուցանող («վերելիակ» և «ստորիջիակ») նշանների, ինչպես և հաջորդ՝ 155-րդ հարցում բարձրացվող՝ աստիճանական ու թռիչքաձև շարժումներ և նախորդ հնչյունի կրկնությունը արտահայտող («մարմին», «անմարմին» և «ոչ մարմին անմարմին») նշանների կիրառության մասին դրույթները փոխառնելով բյուզանդական նեմագրությունից, Քապասարալյանը ձգտում է արմատավորել դրանք նաև հայկական խաղաղություն մեջ:

16. Արանք «վերելիակ» կոչված նշաններն են:

17. Այս «մեծամեծ խաղը» կոչված նշանները, որոնց պաշտոնն է՝ կարգավորել մեղեդիի ուժային (դինամիկ) և կշռությունային նրբերանգավորումն ու կատարողական արտահայտչականությունը, նույնպես բյուզանդական նեմագրության իրավություններից են, և դրանց ղգալի մասի զորությունը մութ է ցայծմ (հմմտ.՝ E. Wellesz, A History of Byzantine Music and Hymnography, Երկրորդ հրատ., էջ 297):

18. Բնագրում «եղեկահ» և «մեղմ փեխնուկահ», որոնք նույն ձայնաստիճանն են ներկայացնում, համապատասխանելով եվրոպական ձ-ին, առանձին են համարակալված: Դա գաղափարող զրչի կողմից թույլ տրված մի թյուրիմացություն է, որով բնագրում խառնվել են ձայնաստիճանների թվահամարները: Այդ մասին կարելի է դատել թեկուզ նրանից, որ հիշյալ թյուրիմացության պատճառով խնդրո առարկա ձայնաստիճանների («փեխնուկահ») թվաբանակը ձևագրում բարձրացել է 17-ի (և սկսած «փեխնուկահից»՝ ութնյակային ցած ձայները համարակալվել են 2—10) այն դեպքում, երբ աշխատության մեջ պարզ խոսվում է «վեշտասան փեխտեից» շուրջ:

19. Խաղաղություն այս սկզբունքը, որ ձգտել է ներմուծել Քապասարալյանը, դարձյալ ենթադրում է առկա հնչյունաշարի միևնույն աստիճանը տարբեր նշանով արտահայտել, նայած ելևէջային ինչպիսի կապակցության մեջ է հանդիպում. վերընթաց, թե՛ վարընթաց: Ըստ այդմ էլ՝ ողջ հնչյունաշարը դեպի վեր հաստատագրվում է «վերելիակ», իսկ վերից վար՝ «ստորին» կամ «ստորիջիակ» խաղերի օգնությամբ: Եվ որովհետև առաջիններն ընդամենը 10-ն են, երկրորդները՝ 9-ը (մինչ ձայնաստիճանների թվաբանակն է 16), հեղինակը մի ամբողջ շարք կետավոր «բաշ»-եր է օգտագործում թե՛ դեպի վեր, և թե՛ դեպի վար ընթացող շարքերի մեջ:

20. Փոքր-ինչ մշուշապատ է, և կամ աղճատված է սույն պատասխանը: «Նէրմն» և «թիզն» ասածը՝ հիմնական հնչյունաշարի աստիճանների ութնյակային (օկտավային) ցած ու բարձր կրկնություններն են: «Նեան» նոր աստիճան չէ, այլ՝ «փեխնուկահի» (ձ2) մի ուրիշ անվանումը: «Աճէմ» ու «կէվէշթ» հնչյունները ձևափոխված (ածանցյալ) աստիճաններ են, ինչպես նշել ենք: Իսկ «Բահավին» ոչ թե ձայնաստիճանի, այլ շափանմուշ եղանակի անուն է, որպիսիք են նաև աշխատության մեջ ուրիշ առիթներով հիշատակվող հետևյալ չորս անվանակոչումները. «Պլատնիկակար» (հրց. 185), «էվիճ» (հրց. 205) և «Աճէմ» ու «Աճէմ-աշիրան» (հրց. 210): Սույն եղանակների ելևէջային ընդհանուր շրջագծերը տես Тамбурист, գլ. А:

21. Այստեղ ճախարակածն բերված սույն վարժութիւնը հնչեցնելու գործնական կերպի մասին (սկսելով «ի վերին կուսէն») հիշտ դադափար են տալիս 183-րդ հարց ու պատասխանը (տե՛ս):

22. Արևելյան երաժշտութիւն տիպական առաջնային (մազամ կոչված) ու երկրորդային (ավազէ, շէօպէ և քէրգիպ անվանվող) եղանակների համակարգի մասին է այստեղ խոսքը: Այն՝ իր հին, այսպես ասենք՝ դասական ձևի մեջ ներկայացրել է 12 մազամ, 6 ավազէ ու 24 շէօպէ միայն (տե՛ս Тамбурнест, էջ 135, ծանոթ. № 18): Հետագայում սակայն, և հատկապես ուշ միջնադարում, մեղեդիական հարստութիւնների անընդհատ կուտակման պայմաններում, հիշյալ համակարգը տարբեր փոփոխութիւնների է ենթարկվել, որոնցից մեկն էլ՝ Գապասաքալյանի այստեղ հիշատակածն է: Ի դեպ, ավազէների թվաքանակը սխալմամբ է (7) է նշված: Շփոթն, անշուշտ, առաջացել է ավազէ խոսքի առաջին նշանակութիւնից, որ է՝ երաժշտական հնչյուն (որակից և՛ 7 ավազէ, այսինքն 7 հիմնական հնչյուն արտահայտութիւնը):

23. Այս երգը, որ Գապասաքալյանը հատկացնում է Շնորհալուծ, իրականում պատկանում է Սրիկ Կոստանդի գրչին (հմմտ.՝ Մատենադարան, ձեռ. № 8188, էջ 63բ):

24. Խոսքը փաստորեն բկ. (ԱՅԼՄ) ու բկ. դարձվածք (ԱՅԼՄ-աշիրան) եզանակների մասին է:

25. Այստեղ (և մի-երկու նման դեպքերում) «Քրիստոս» անվան մեջ մուծվել են մեր կեղծ կոչած այն վանկերը, որոնք վեպալիզացիաներում ծառայում են որպես ձայնի հատուկ հենարաններ (տե՛ս մեր «Հիմնական դրույթներ խաղաղրութիւն արվեստի վերաբերյալ» հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 145):

26. Առաջ բերված տաղերից երրորդի (Հարութիւն՝ «Կաթողիկէ կկեղեցի») հնդինակը մեզ անհայտ է: Երկրորդը (Մենդյան՝ «էին աչոյ») իրոք Գր. Նարեկացու ստեղծագործութիւնն է, որ հանրահայտ իսկ է: Իսկ առաջինը («Յանեղական լուսոյն») պատկանում է Հովհաննես Պլուզ Երզնկացու գրչին, ինչպես ցույց են տալիս մեր Մատենադարանի ձեռագրերը (հմմտ. Ա. Մրապլյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 238—39 և 279—80):

Н. К. ТАГМИЗЯН

## НЕИЗДАНЫЙ «КАТЕХИЗИС МУЗЫКАЛЬНОЙ НАУКИ» Г. ГАПАСАКАЛЯНА

(Р е з ю м е)

գործ Մելանաուրի, ի թուարերութեան Արեթական տոմարի ՌՃԻԹ (1670)\*, ի քստոյգ և յընտիր օրինակէ, զի գաղափար սորին էր ի դրանէ ամենասրբունէոյ Աստուածածնի եկեղեցւոյն ի Բջնի կառուցելոյ, ի ձեռանէ ստուգեցեալ Մովսիսէ արի և քաջ փիլիսոփայէ և իմաստախոհ՝ եպիսկոպոսէ, ի յաշխարհիս յԱրարատեան, ի քաղաքիս Երևան, ի գիւղն Բջնի, բնդ հովանեաւ ամենասրբոյ Աստուածածնին, ի յառաջնորդութեան սուրբ աթոռոյս Գաթի արհի և պանծալի եպիսկոպոսի և իմաստութեան ցանկացողի, ի հայրապետութեան հայոց տեառն... շնորհազարդ և լուսանկար սուրբ Աթոռոյն էջմիածնի... (Տիշատակարանը կշարունակվի մոտ յօթը սյունակով, որ, սակայն, պատմական հատկանշական դեպքեր չեն արձանագրված):

6

Հ Մ Ա Յ Ի Է

Փէ—XVII

Գրիչ (հետին)՝ Ովանէս: Ստացող՝ Գուլնազար:

Թերք՝ 1: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 40×9 սմ: Գրութիւն՝ միասյուն:

Գիր՝ նոտրգիր: Փամանակ՝ անհայտ, հովանարար Փէ դարու: Մանրանկար՝ Ս. Պետրոս, Պողոս, Աստվածածին, Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես, Գարրիել հրեշտակապետ, Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Շնորհալի:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. Մաղթանք Սուրբ Աստուածածնի. եւ արդ ի վերայ այս բանեայց... (Նարեկեն):

բ. Աւետարան բժշկութեան:

գ. Մաղթանք առ իննեակ դասս:

դ. Հաւատով խոստովանիմ Ս. Ներսիսի Շնորհալոյ:

Աստնցմէ «Մաղթանք առ իննեակ դասս» ամբողջութեամբ կրնգորինակենք ստորև:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

— Սուրբ առաքեալդ Պետրոս, բարեխօս առ տէր մեր Յիսուս Քրիստոս, զի ողորմեացի իւրում ծառայի Գուլնազարի, և փրկեացէ յամենայն փորձանաց երեւելեաց և յաներևոյթ թշնամույ. մեղաց փրկեա, ի մեղաց ազատեա, և սպանեացէ մինչև ի կէտ կողման իւրոյ անխռով խաղաղութեամբ և անսայթարելի կենօք, մինչև ի խորին ծերութիւն, զարմօք և զաւակօք, որդւովք և դստերօք, և ամենայն զոյական իրօք ծաղկեացուցէ (անունը սրբված և վրային գրված) ծառայն աստուծոյ Ովանէսին:

— Քրիստոս ամենակալ իբրև արդարացուցանել կամեցաւ, և ոչ կամեցաւ խոտել զիւր ստեղծուածն, իբրև հաւն շարշարեալ՝ ողորմեցաւ. նոյն ողորմութեամբ ողորմեա ծառայիս... Ովանէսին:

\* Բնագրում՝ ՌՃԻԹ (1730), որ ակնբախ վրիպակ է, բանի որ նիկողոս Մելանավորը վախճանվել է 1693 թվականին. եմբ.:

## Մաղբանք առ իննեակ դասս

Արդ, պաղատիմք առ հոգեղէնս, մեր որ տկարս և հողեղէնս,  
 Որք սպասաւորք էք աստուծոյ՝ մարութք բնութեամբ և կայանով,  
 Սուրբ պաշտօնեօք և սպասաւորք, հզօր բանին իւր կատարողք,  
 Իցս երիս իննեակ դասուք երբեակ և մի աստուածութեան,  
 Որդոց մարդկան նախախնամող և յերկնայինս վերաբերողք,  
 Մանաւանդ մեզ ծանուցեալք, զի երկրայնոցս էք մերձաւորք:  
 Սուրբ Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետք բարձրելոյն,  
 Որք աստուծոյ կայք առաջի՝ մաղթել զմերն փրկութիւն,  
 Ընկալարուք, վեհք ի տնկոց, զրնծայս բանի աղքատանաց,  
 Իբրև ծովու կաթիլ մի ջրոյ, կամ եթերին նշոյլ ինչ հրոյ,  
 Զոր անմահից ատուր տօնի մահկանութեացս ձեզ բնծայի,  
 Անմարմնական հոգեղինաց՝ մարմնաւորքս և հողեղէնքս,  
 Բարեբախտից և երջանկաց՝ թշուառականս և թարմատարս,  
 Եւ յաննիազ ձերում բարեաց փոխադրեցէք մեզ բզպիտոյս,  
 Զաստուածային և զհոգևոր զառ ի վերուստ շնորհաց զեղումն,  
 Մաղթելն ընդ մեր բարերարին, զոր և առնէք ի սկզբանէ,  
 Զգործս ձեռաց քոց ասելով, անտես ի քէն ոչ առնելով:  
 Զնոյն պաղատանս ի յայսմ ատուր խնդրեմք ի ձէնչ առաւելով՝  
 Յաղագս մերոյս եկեղեցւոյ և ընդհանուր սուրբ հաւատոյ,  
 Երկրպագութեացս ընդ ձեզ հոգւով ամենասուրբ Երրորդութեան,  
 Խաղաղական շնորհել զկեանս ի կրկնակի մեր ներհակաց,  
 Նաև զմերս անարժանից զպաղատանս այս աղօթից:  
 Զեր բուրվառօք իմանալեօք, խնկարկեսչիք մեծ արքային,  
 Ուստի զլրումն մաղթանաց յառատաձիր պարգևողէն,  
 Բարեխօսութեամբ սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի,  
 Ողորմեա, Տէր, ծառայիս քո Ովանէսին:

Բ. ՖԻԼԱԳԵԼՖԻՈ ԶԱՅԵՐԵՆ ՉԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(Free Library, Phila., Pa., USA)

Գրատանս մեջ կան հայերեն տաս ձեազիրներ, որոնք կկրեն 115—124  
 թվահամարները և հնատիպ գիրք մը: Ստորև կտանք ատոնց համառոտ նկար-  
 ղազրութիւնները:

1 (118)

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԺԳ—XVI

Թերթ՝ 302: Նյութ՝ մազաղաթ: Մեծութիւն՝ 18×13×6,5 սմ:  
 Գրութիւն՝ երկայուն: Գիր՝ զեղեցիկ բոլորգիր, առողանութեան նշաններով:  
 Տող՝ 20: Մանրանկար՝ 3 հատ ավետարաններուն սկիզբը. Մատթէոս՝ 14բ,  
 Մարկոս՝ 103բ, Հովհաննէս՝ 243բ, ունի նաև խորաններ, կիսախորաններ ու  
 լուսանցազարդեր՝ ամեն երկու էջի վրա մեկ հատ, կարմիր ու կապույտ գույնի-

րով, վարպետ արվեստավորի մը գործ: Պահպանակ՝ մազադաթյա, 1-ական  
թերթ սկզբին և վերջին: Կազմ՝ կաշեպատ տախտակ, զարդարուն. առաջին  
փեղկի վրա խաչելության գրոշմատիպ: Հանգամանք՝ լավ: Հիշատակաբան՝  
չունի:

## ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

- ա. Թուղթ Եւսերի առ Կարպիանոս:
- բ. Համարարբառ կանոնատախտակներ:
- գ. Համաձայնութիւն աւետարանչաց:
- դ. Չորս Աւետարաններ:

2 (119)

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Հ ա յ ա տ ա ո թ ու ը բ ր ք Ե ր Ե ն)

[Ատանա]

ԺԷ—XVII

Ստացող՝ Խէրանշայ աղա և ամուսին իւր՝ Անա խաթուն:

Թերթ՝ 169: Նյութ՝ թուղթ: Մեծուրջուն՝ 18×11,8×3,5 սմ: Գիր՝ բուրգիր, սկզբնատառք՝ կարմիր: Տող՝ 36: Մանրանկար՝ 1ա (Զիավոր մը խաչ ի ձեռին և աջ ձեռքին երկար նիզակ, որով կսպանն ուրիշ ձիավոր մը, ավելի փոքր շափով քան առաջինը. ձիավորի խաչի կողքին գրված է կարմիր մելանով՝ «Պարոն Խէրանշէն է գալլազգիսն կոտորէ»), 1բ (խորանազարդ համարարբառ կանոնատախտակ), 2ա (Զիավոր մը՝ աջ ձեռքին խաչ և ձախին՝ նիզակ մը, կսպանն վիշապը, մտար կա հետևյալ արձանագրութիւնը՝ «Սուրբ Սարգիսն է՝ գերեաց գերէհան»: Զիուն ետին կերևին երկու գեմքեր, որոնց համար կարմիր մելանով գրված է՝ «գերիքն»), 3բ (Մատթէոս ավետարանիչ), 43ա (Մեծ խաչ մը՝ գազաթին Քրիստոս, գրված՝ «Գալլաստեան սուրբ խաչն զՔրիստոսի ի գլուխն ունի», Քրիստոսի աջին՝ «արեգակն», իսկ ձախին՝ «լուսինն»: Խաչին շորս անկյունները շորս հրեշտակներ փողեր կհնչեցնեն՝ «Փողն հնչէ»: Խաչին ստորոտը երկու անձեր, այր մը և կին մը՝ «Խէրանշայ աղէն է և ամուսինն իւր՝ Անա խաթուն, ստացող սուրբ աւետարանիս»), 81բ (Մարկոս ավետարանիչ), 84բ (Ղուկաս ավետարանիչ), 85բ (Տեառնընդառաջ՝ Մարիամ, Հիսուս Քրիստոս, Աննա, Սիմեոն Ծերունի և ետին Հովսեփ՝ տատրակներ ձեռքին. պատկերին վրա գրված է՝ «Սուրբ Տեառնընդառաջն է»), 128բ (Հովհաննես ավետարանիչ), 156բ (Հոգեգալուստ, տակը գրված՝ «Գան գլուխք ամբն»), 164բ և 165ա (Հին Կտակարանի 8 մարգարեներու տպածո պատկերներ, որոնք փակցված են հետագային և վրային անճաշակ գույներով անցած): Կազմ՝ կաշեպատ տախտակ, երկու երեսներն ալ ոսկեզօծ շրջանակ, մեջը խաչ մը, վրան խաչելութիւն: Հանգամանք՝ լավ: Հիշատակաբան՝ չունի (ըստ Muhammad Simsar-ի ձեռագիրս պետք է գրված ըլլա Ատանա, Կիլիկիա):

Մանր. Ձեռագրիս մանրանկարները հնագույն ուրիշ ձեռագրե մը առնրված և փակցված են հոս, հետևաբար «Խէրանշայ» և անոր ամուսին «Անա խաթուն» հնագույն ձեռագրի ստացողներ պետք է նկատել: Ձեռագրիս կազ-

մի առաջին փեղկի աստառի ներքևում կա սեփականատիրոջ անունը՝  
M. Louise Stowell.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 1բ. Համարարբան կանոնատախտակ (հին ձևազրե):  
բ. 2ա. Նախադրութիւն Մատթէոսի աւետարանին (հին ձևազրե):  
գ. 2բ—3ա. Աւետարան Մատթէոսի. Ա, 1—10 (հին ձևազրե):  
դ. 4ա—մինչև վերջ՝ Աւետարան Մատթէոսի (հայատառ թուրքերեն. մինչև է գլխի 23 համարը գրված է նաև հայերեն բնագիրը թուրքերենին հանդիպակաց, պարբերաբար, մեյ մը աջին և մեյ մը՝ ձախին, իսկ անկե ետքը շարունակված է միայն թուրքերենով):

3 (122)

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ւ

Ակներ

Ձ[Ժ]Զ—1267

Գրիչ՝ Յոհանէս: Հետին կազմող՝ Մատթէոս եպոս. (1654):  
Թերթ՝ 92: Նյութ՝ թուղթ: Մեծուրյուն՝ 13×9×3 սմ: Կրուրյուն՝ երկայուն:  
Գիր՝ բոլորգիր, խորագրերն՝ կարմիր: Տող՝ 27: Կազմ՝ կաշեպատ տախտակ, մաշված: Հիշատակարան՝ ունի:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 2ա—56ա. Ճաշոց: Կսկսի. «Յունուարի Զ. Մնունդ Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և այս կանոն կատարի. Մաղմոս կցուրդ. Տէր հովուեսցէ զիս...», կվերջանայ. «Յիշատակ Պետրոսի և Պաւղոսի յիւր ամիսն զիտ. Սուրբ առաքելոցն Յակովբայ և Յովհաննու»:

բ. 56բ—67բ. Մաշտոց: Կրովանդակե «Կանոն հաղորդ տալոյ» և «Կանոն Զամենայն վախճանեալսն ի Քրիստոս»:

գ. 68բ—77ա. Տօնացոյց: Շատ համառոտ. «Աւետարանացոյց և ժամակարգութիւն կարգեալ ըստ սրբոյ Լուսաւորչին արոոոյ, զոր ընկալեալ սրբոյն Սահակայ և հասուցին առ մեզ նախնիքն մեր»: Այս բաժինը կրովանդակե Աստվածահայտնության ճրագալույցեն մինչև Խաչի տոնը:

դ. 77ա—78ա. «Ռաւանութիւն սուրբ Երեւոյութեան, զոր ասացին սուրբ ժողովն որ ի Նիկիա, և ընկալան ուղղափառ եկեղեցիք հայոց»: Հաւատամք, Քարոզ, Աղօթք. «Փառք քեզ անսահման անուն և անզուգական անձնաւորութիւն...»:

ե. 78բ—92ա. «Կանովն ջուր արհնելոյ յաւուր Յայտնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», «Աւրհնութիւն ջրոյ, զոր ասացեալ է տեառն Բարսղի արեւայիսկոպոսի Կեսաբու Կապաղովկեցոյ: Աղոթք», «Քաղոց Ժ, Շողակաքին, զոր ետես սուրբ... (ցեցը կերած է) զոր ի հիմնարկութիւն եկեղեցոյ»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

56ա (գրչի). Քրիստոս Աստուած, ողորմեա գրողի սորա Յոհանէսի և թող զմեզս նորա, և որ բոլորով սրտի ցաւակցաբար խնդրէ, և զնորայն, ամէն: Արդ աղաչեմ, ով սուրբ հարք և եղբայրք՝ մանկունք նոր Սիովնի, ոյք

հանդիպիր յայսմ գծի, ոչ մեղադրել մանրութիւն գրի սորա և խոշորութիւն և հատորութիւն, զի վասն անճարակութեան արարի և իմ սիրտս զայս ուզեաց և այս էր կար մեր: Այլ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զեղկելի գրիչ Յոհանէս և զծնողսն իմ, ևս առաւել զհարազատ եղբայրիկն իմ զԿոստանդին վանական քահանայ, որ ի տղա հասակի փոխեցաւ ի Քրիստոս և եթող ինձ սուգ անմխիթար, զի ոչ հանդիպեցաք միմեանց վերջին ողջունիւ. որոյ ողորմեացի նմա տէր Յիսուս Քրիստոս և թողցէ զյանցանս յիշողաց և յիշեցելոցս: Եւ նմա փառք շաւտեանս. ամէն:

67բ (գրչի). Յամի եւթն հարիւրերորդի... (տասնավոր արտահայտող բառք ջնջված) սկսեալ վեցերորդի թուարեթեան Հայոց տումարի\*) գրեցաւ ժամագրկունքս վասն ճանապարհի և անճարակութեան, աշխարհիս Կիլիկեաց, ի գաւառիս Յախուտ, ի հռչակաւոր և սուրբ մենաստանիս Ակներ, բնդ հովանեաւ սրբուհոյ Տիրամար Աստուածածնի և սուրբ առաքելոցն [տեառնեղ]բարն Յակորայ և կենսակիր նշանիս սուրբ Կոստանդեա և այլ աստուածունակ սրբոց, որ հաւաքեալ կան ի սմա: Ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ քրիստոսասիրի և ուղղափառի, որոյ տէր Աստուած տացէ նմա և որդւոց իւրոց և ետնի և Թորոսի երկար ժամանակ խաղաղութեամբ վարել զթագաւորութիւն իւրեանց. ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և ի հայրութիւն սուրբ ուխտիս՝ հոգելից ծերունոյ, ճգնազգեաց և քրիստոսասեր անձին Հայր Մխիթարայ և նորին հայրազատին՝ բարեշնորհ երաժշտին Վարդանայ. գրեցաւ սակաւագիծ մատեանս ձեռամբ յոգնամեղ և եղկելի անձին Յոհանէսի վշտալից և տգէտ գրչի, զոր բազում վշտաւք եմ ձեռնամուխ եղեալ ի սա:

78ա (գրչի). Արգ, ես եղկելիս և յոգնամեղս Յոհանէս՝ գրող սորա, խնդրեմ... ոչ դատապարտել զմեզ, այլ յերես անգեալ աղաչեմ որպէս շան սովեցելոյ, տաք զփշրանս աղաւթից ձեր՝ խնդրելով ի տեառնէ զթողութիւն մեղաց և եղբօր Կոստանդեա:

78բ (ստորին լուսանցքում, գրչի). Զինչ յաւրինակն գտի, զայն գրեցի... (հաջորդ տողն անընթեանելի):

79ա (ստորին լուսանցքում, գրչի). Աւրինակն ծուռ էր, ես կրկին գրեցի և ինն տող զայրն միաճղի, զի տեղս վճարեցաւ, թէ դժար թուի, դու շրջէ զթուղթս յետ և ի նշանացն սկսիր և կարդա և մի մեղադրեր:

92բ (վերջին կազմողի). Զվերջին կազմող սուրբ Աւետարանիս զՄաթէոս եպիսկոպոսն յիշեցէք առ Քրիստոս, որ կրկին նորոգեցի: ԹՃԳ (1654)... (հիշատակարանը կշարունակվի՝ ննջեցյալներու անուններ հիշելով):

4 (123)

ՆԵՐՍԻՍԻ ԾՆՈՐՀԱԼԻՈՅ ԲԱՆՔ ՉԱՓԱԻ («ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ»)

Համչէն, Ս. Խաչիկ ԿՕՐ անապատ

ՁԷ—1528

Գրիչ՝ Կարապետ երէց: Ստացող՝ Տէր Յոհանէս և Տէր Յովսէփ:

\*) Գրչութեան թվականի տասնավոր արտահայտող բառք կարող է լինել միայն «տասներորդի», այսինքն ԶԺԶ (1267), ավելի քարձք թիվ լինել չի կարող, քանի որ ձեռագիրս գրված է Հեթում Ա-ի (1226—1270) և Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221—1267) ժամանակ: ԽՄԲ.:

Թերթ՝ 260, դատարկ՝ 1—2, 256: Նյութ՝ մագաղաթ: Մեծություն՝  $14,7 \times 11,2 \times 5,9$  սմ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր, խորագրերը՝ կարմիր: Տող՝ 23: Մանրանկար՝ 3ա, 63ա, 107բ կպարունակեն կարմիր, կապույտ և կանաչ գույներով նկարներ: Պահպանակ՝ մագաղաթյա, սկզբում 2 թերթ, իսկ վերջավորությամբ՝ 1: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ:

Մանր. Կազմի առաջին փեղկի աստառի վրա կա Henry White-ի պատկանած ըլլալու պիտակ մը: Կա նաև արձանագրություն մը, ըստ որում ձեռագիրս John Frederick Lewis-ի կողմն նվիրված է ձեռագրատան 1937-ին:

#### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ա. 1—60. Տեառն ներսիսի նուէր մաղթանաց ներշնչական տաղիւ տվողին բանից, ըզնումն աղաթից ներանձնական հոգոց, զարբուցելոյ մտաւ ի բմբուրեանէ կրից, յիշատակաւ անցելումն իրի ներկայի և ապագայի. յողբումս հեծուրեան սրաի. խաւս բնդ աստուծոյ. *Յիսուս Որդի Հօր միածին...*

բ. 60—62. Յիշատակարան երգողի բանիս. *Ի վեցհարիւր թուական...*

գ. 63—107. Տեառն ներսիսի Բան հաւատոյ ոտանաւոր տաղիւ շափոյ. *Խոստովանիմ Աստուած ըզՀայր...*

դ. 108—133. Շարագրութիւն Հոմերական վիպասանութեամբ սակս Հայկազանցն սեռի և Արշակունեացն զարմի՝ ի սկզբանցն մինչև ի վախճան. առ ասացեալ ներսէսի եղբար կաթողիկոսի Հայոց տեառն Գրիգորիսի յիւրականն նախնիս ի համբակութեան ելով տիս. *Պարտական է հօր որդի...*

ե. 134—158. Պատմութիւն ազգիս Հայոց. գրեալ բանիւ յոտին շափոց.

զ. 158—189. Բան բարառնական, տաղիւ շափեալ հոմերական, խաւսեալ բանի ողբերգական. վասն Նդեսեայ մեծի առման, ի բուականի հինգ հարիւրի և իննսուն բնդ երեկի, Բասն և երեք դեկտեմբերի, յերեւոյ ժամու յար շարաթի. *Ողբացէք եկեղեցիք...*

է. 190—194. Առ սուրբ հրեշտակսն և հրեշտակապետսն Միքայէլ և Գաբրիէլ և առ ամենայն հրարուն և երկնային սուրբ զաւուրեան. *Այլ պաղատիմք հոգեղէնսդ...*

ը. 195—197. Աղաթս հասարակաց ամենայն հաւատացելոց, զոր պարտին աղաթել յամենայն ժամ. *Հաւատով խոստովանիմ... (24 համար):*

թ. 198—209. Ներբողական կենսատու սուրբ Խաչին, առ ի սրբոյ հաւելն մեռմէ Կարէ Անյաղթ փիլիսոփայէ. ասացաւ ոտանաւոր շափով աստանաւ եղաւ. *Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր միաբան...*

ժ. 209—225. Գովեստ ներբողական պատմագրարար Յաղագս վարուց մեծի հայրապետին տեառն ներսէսի Հայոց կաթողիկոսի.

ժա. 225բ—226. Զաւուրիւն յոտանաւոր բանիցս.

ժբ. 227—229. Սուրբ և իմաստուն վարդապետին Յոհաննիսի եզնկացոյն արաբեալ այլաշափ տաղս ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Ապլոցի՝ ըստ նախագիծ տաղից տանց. *Յամենահրաշ գործ արարչին...*

ժգ. 229բ—249. Նորին դարձեալ Յաղագս երկնի. *Այն որ յառաջ քեզ ճանեցան...*

ժդ. 251—260. Տեառն ներսէսի ասն Հանելով ասացեալ սուրբ գրոցն:



ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

60 (նախագաղափար).

Ձառ ի բարի գործքս տարտամ  
 Եւ ի շարեաց տեսակ փարթամ,  
 Յիշեա զգրող սորին զՎահրամ,  
 Որ աղաւթիս բզսա բղձամար:

250 (գրչի). Փառք համագոյ, անբաժանելի և միասնական սուրբ Երրորդութեան՝ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, յայժմ...: Գծագրեցաւ գիրքս, որ կոչի Յիսուս Որդի, զոր ասացեալ է սուրբն Ներսէս Կլայեցիին, զոր բացայայտեալ է ի սուրբ մարգարէիցն և սուրբ յԱւետարանէն բանս աղաւթական առ սուրբ Երրորդութիւն, հառաչանաւք արտասուեալոր ի խորոց սրտէ խաւար ընդ ամենասուրբ Երրորդութեան, ձայնաւոր զոր ուսանին մանկունք եկեղեցւոյ որչափ և կարեն, զի յոյժ գեղեցիկ խրատք են բանք սորին ուսումնակցաց և մտաց բացաւղ գրոց, և հոգոյ ճաշ և կերակուր ի սնունդս ուսումնականաց ամէն: Գրեցաւ գիրքս այս ձեռամբ անիմաց և անարհեստ գրչի Կարապետ երիցո՝ ի ժամանակս ծերութեան, ի խնդրոյ սիրասնունդ կուսակրան կրաւնաւոր որդոցն իմոց՝ Տէր Յոհաննիսին և Տէր Յովսէփին, զոր տէր Աստուած վայելել տացէ բարի կենաւք, ամէն: Յիշատակ ինձ և կողակցին իմոց՝ Շահիւլիմին և մանկական տիաւք հանգուցելոց ի Քրիստոս որդւոյն իմոյ՝ Ստեփանոսին և կրաւնաւոր եղբարն իմոյ՝ Աստուածատուր արեղին և ծնաւդացն իմոց՝ Տէր Յովսէփին և Ընդստակէսին և Եղիսարեթին, և որդոցն իմոց ամուսնացելոց՝ Վարդան երիցու և Յակոբին, որ ի գգուանաց Ղուպաթ կոչեցին: Գրեցաւ ի թվին 22է (1528) ամին, ի ձուկն կենդանակերպի յունիսի լինն, ի յանապատս Սուրբ Խաչիկ հարն և սուրբ Վարդանացն նշխարաց, որ աստ եղեալ են ի պարծանք և ի պահպանութիւն գաւառիս Համաշինոյ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սիովնի, ի սուլթանութեան Սուլայմանին և փաշայութեան Տրապիզնոյ Սքանդար փաշային, և բերդորէից մերոց աղայութեան Դարվէշալին և Սիմինաւսին և յեպիսկոպոսութեան Տէր Մարտին: Ով սուրբ ընթերցողք և եղանակողք տառիս, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր, և աստուած զձեզ յիշէ յիւր միւս անգամ սուրբ գալուստն: Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս:

5 (115)

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Սանահին

ՋՅԳ—1504

Գրիչ՝ Մկրտիչ:

Թերք՝ 290: Նյութ՝ թուղթ: Մեծութիւն՝ 24,5×18×6,1 սմ: Գրութիւն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկար-տերունական 7 (Հիսուս կուսուցանե տաճարին մեջ, Հարուցյալ փրկիչը, Մուտք Երուսաղեմ, Ոտնալվա, Գարրիել հրեշտակապետ, Հարուցյալ փրկիչը և Հոգեգալուստ), ավետարանիչ՝ 4 (յուրաքանչյուր Ավետարանի սկզբում՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննէս), կիսախորան՝ 4 (Ավետարանների սկզբում), լուսանցազարդեր և

զարգագրեր. չուրաքանչյուր Ավետարան կսկսի մեծադիր զարգագրով մը, որուն կհաջորդեն գունավոր ծաղկազիր սկզբի երկու տողերը: Մանրանկարները իրենց արվեստով կզիջեն կիսախորաններուն ու լուսանցազարդերուն. անշուշտ երկու տարրեր ծաղկողներ մասնակցած են: Գույները՝ կարմիր, կանաչ, կապույտ, դեղին, մանիշակագույն, սև և ճերմակ. ոսկի գործածված չէ: Պահպանակ՝ շորս թերթ մազաղաթ, երկու սկիզբը և երկու վերջավորութեան, մասն հնագույն երկաթագիր Ավետարանի մը. կրովանդակե Մատթեոս, Թ, 38—ԺԲ, 15: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հանգամանք՝ լավ. կարգ մը թերթեր իրենց մաշած անկյուններուն վրա կկրեն նորոգման նշաններ, սմանց ալ վերի լուսանցքները խոնավութեան պատճառով մաշած: Հիշատակարան՝ ունի:

#### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

- ա. Աւետարան ըստ Մատթէոսի:
- բ. Աւետարան ըստ Մարկոսի (շունի՝ ԺԶ, 9—12):
- գ. Աւետարան ըստ Ղուկասու:
- դ. Աւետարան ըստ Յովհաննու (ունի՝ «Իւր կնոջն շնացելոյ»):

#### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

285ա—289ա (Հետագայի). Տէր Յարութիւն արեղայիս եղբայր Անդրիասի դուստրն Խանփէր ու Թիվնայ, որ Աստուած տուեց, եղև թվին ՌՄԽԳ (1793) սեպտեմբերի 30, սուրբ Գէվորգայ շարաթ օրն:

(Գրչի). ...Եւ ետու գրել հալալ արդեանց իմոյ, ես պարոն Մելիտոնս՝ թոռն Խուլթուղի: Եւ ետու գրել յիշատակ ինձ և ծնաւդացն իմոց և ամենայն ազակականացն, հարն իմոյ՝ Խաշատուր քահանային, որ սրախոխ մահուամբ կատարեցաւ ի ձեռն անարինաց, և մարն իմոյ՝ Թամսիկին...

Արդ, եղև կատարումն սուրբ Աւետարանիս ի թվականութեան Հայկազեան տումարի ԶԾԳ (1504), ի դառն և ի շար ժամանակի, որով նեղիմք ի ջանարինաց՝ ի բռնակալութեան աշխարհիս Հայոց և Պարսից, զոր եկն և եհաս ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց: Եղև աւերումն աշխարհիս, և փոխեցան աշխարհէ աշխարհ և տեղաց ի տեղ: Եւ այլք ի ամուրս և ի ծերպրս վիմաց բնակէին. և էր սով սաստիկ, որ ոչ վաստակել կարէին, և ոչ զսերմանածն ժողովել: Եւ եկն ազգն այն, որ զնեւին գուշակն ունէր, որոյ անուն Սաֆի կոչիր. էառ զտունն Աղուանից, և կոտորեաց մինչև մերձ Կասպիական, և անդի դարձաւ ի Հուլաւ և առաւ զԳավրէժ, և ասիաթշահն փախստական արար, և զերկիրն ընդ իշխանութեամբ էած, և զհարկապահանջութիւն ի վերայ եղեալ, և զազգս Հայկազան այնու մաշեաց և փախստական արար մինչև Հիւսիսական լերինն՝ ընդ իշխանութիւն վրացն: Եւ զմահմետականն ի սուր սուսերի մաշեաց, և զայլն յինքն դարձոյց, և շատ երկիր և աշխարհ անբնակ արար: Եւ էր վշտի ազգս ամենայն և տարակուսի կայր, և ոչ գիտէին թէ զինչ լինէին: Եւ երանի տային մեռելոցն և ասէին բլրոց, թէ՛ ծածկեցէր զմեզ, և լերանց, թէ՛ անկերուք ի վերայ մեր: Զի ոչ կարեմք գրով արկանել զազէտ լալոյ և տարակուսանք քրիստոնէից, թէ զինչ լինիցին: Զյոյսն ի Աստուած կալով և և նեղութեանց համբերելով, և զարքունական հրաման ի միտ բերելով, թէ՛ ով համբերեացէ, ի սպառ նա կեցցէ, միւսն թէ՛ զով սիրէ Տէր, խրատէ, տանջէ

ւամենայն որդիս, զոր ընդունի: Եւ ի հայրապետութեան տեառն ներսիսէ աթոռակալէ, մեր սուրբ Լուսաւորչէ ի Սուրբ Էջմիածինն:

Արդ, ի յայս և սոյն ժամանակի եղև յաւարտումն սուրբ Աւետարանիս ի դուռն մարս լուսոյ Սուրբ Աստուածածնիս Սանահնոյ և հրաշափառ Սուրբ Կաթաղիկիս, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Տէր Բարսեղ կրանաւորին: Եւ զիս զանարժան գրիչ Մկրտիչ սուտանուն. Բարսեղ եպիսկոպոսն, և զեղբայրն իմ՝ Գրիգոր կրանաւորն, որ տարածան մահուամբ առ Քրիստոս փոխեցաւ և մեծ կզկիծ եթողեր. նորին ազգովս կատարեցի զԱւետարանս, որ արտասուս չէր թողուլ զաշուերս, որ ստոյնն գրէի: Ընդ նմին յիշեցէք և զհամարէն եղբարքս զմիաբան սուրբ ուխտիս՝ զՏէր Արիստակէս վարդապետն և զՏէր Մանուէլ մահապսին, և զձեռնասուն և զնորարոյրոջ կրանաւորն մեր զԱւետիսն, որ բազում աշխատութեամբ ծառայեաց մեզ:

6 (116)

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(Հայերեն և հայատառ թուրքերեն)

ԺԷ—XVII

Գրիչ և քաղմանիչ՝ Ազարիա տիրացու և Գասպար՝ որդիք Խօճայ Յօհաննանի:

Թերք՝ 414: Նյուր՝ թուղթ: Մեծուքյուն՝ 21,2×16×7,1 սմ: Գրուքյուն՝ երկայուն: Գիր՝ նոտրգիր: Տող՝ 26: Պահպանակ՝ թուղթ, երկու թերթ սկիզբը և հինգ՝ վերջը: Կազմ՝ կաշեպատ տախտակ, զույգ կապեր կփակեն մատյանը: Հանգամանք՝ գերազանց: Մանրանկար-Ավետում՝ 1բ, Մոզերու երկրպագություն՝ 2ա, Տեառնընդառաջ՝ 3բ, Մկրտություն՝ 4ա, Քրիստոս աշակերտներուն մեջ՝ 5բ, Ղազարու հարությունը՝ 6ա, Մուտք երուսաղեմ՝ 7բ, Վերջին ընթրիք՝ 8ա, Ոսնալվա՝ 9բ, Մատնություն՝ 10բ, Քրիստոս կկրե իր խաշափայտը՝ 11բ, Խաշերություն՝ 12ա, Հարություն՝ 13բ, Քրիստոս կօրհնե սուրբ կույսը՝ 14ա, Հոգեգալուստ՝ 15բ, Վերջին դատաստան՝ 16ա, Մատթեոս՝ 30բ, Մարկոս՝ 136բ, Ղուկաս՝ 206բ, Հովհաննես՝ 324բ: Խորաններ՝ 17բ—28ա, հարուստ և զեղեցիկ, ոսկյա խորքով և կարմիր, ճերմակ, գորշ, կապույտ գույներով, թռչնային և բուսական նկարներով, ինչպես սիրամարգ, արաղաղ, արագիլ և ձուկ: Կիսախորաններ՝ 31ա, 137ա, 207ա, 325ա, խորաններու պես զեղեցիկ ու հարուստ: Լուսանցազարդեր՝ 208 հատ, որոնցմե 76-ը մանրանկար, բազմազան ու գունազեղ, Մատթեոսի Աւետարանի աշակերդյան լուսանցքին 12 դեմքեր՝ շրջանակներու մեջ առնված զույգ առ զույգ, կնիքկայացնեն Իսրայելի 12 ցեղերը, գաղաթին Մարիամ՝ Հիսուս մանուկը գրկին: Միայն Մատթեոսի Ավետարանն ունի թվով 31 լուսանցազարդ, մեծով մասամբ տերունական պատկերներ. Հովսեփ՝ 35բ, Հովհաննես Մկրտիչ՝ 36բ, Հիսուս և փարիսեցի՝ 43բ, Հիսուս և բորոտ՝ 52ա, Հիսուս և Մատթեոս՝ 55բ, Հիսուս և իշխան՝ 57ա, Հիսուս և կույրը երկու՝ 57բ, 96բ, Հիսուս քաղկատարած՝ 64բ, Հիսուս և դիվահար՝ 67ա, Հիսուս և քանանացի կին մը՝ 80ա, Հիսուս և ծնրազիր այր մի՝ 85բ, Հիսուս թզենու մոտ՝ 98բ, Հիսուս երեք աշակերտներու հետ՝ 121ա, Հուզա կախված ծառեն՝ 126ա, Հովսեփ Արեմաթացի՝ 131ա:

Մյուս Ավետարաններուն բովանդակածը նույնպես նմանօրինակ զարդանկարներ են: Զարդագրեր՝ թռչնագիր և ամեն համարի սկիզբը ոսկեառա: Հիշատակարան՝ ունի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կրովանդակե Զորս Ավետարանները՝ հայատառ թուրքերեն թարգմանությամբ հանդերձ:

7 (117)

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՌԺԲ — 1563

Թերթ՝ 298: Նյութ՝ մագաղաթ: Մեծուրյուն՝  $12,1 \times 8,2 \times 4$  սմ: Գրուրյուն՝ երկսյուն: Գիր՝ մանր բոլորգիր: Տող՝ 23: Պահպանակ՝ մագաղաթյա, երկու սկիզբը, երկու վերջը: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հանգամանք՝ շատ լավ: Հիշատակարան՝ չունի: Մանրանկար՝ չորս ավետարանիչներ, խորաններ, կիսախորաններ, լուսանցազարդեր և զարդագրեր: Մատյանիս համարարրառային կանոնները բովանդակող սկզբի թերթերը պատրաստված են նուրբ և գեղեցիկ մանրանկարներով և լուսանցազարդերով, կենդանական և բուսական նկարներով, վառ գունավորումներով: Ընդհանրապես ոսկի հատակով և ծաղկային ոճ գործածված է լուսանցքի զարդերուն համար: Հայտնի կերևին թռչուն, աքաղաղ, սիրամարգ, գազան, արմավենի: 14-րդ թերթի երկրորդ էջը կներկայացնե Մատթեոս ավետարանիչի մանրանկարը, հրեշտակ մը կողքին: Մատթեոս կապույտ պարեգոտով և կարմիր, ոսկեզօծ շուրջառով, նստած է գահույքի վրա՝ ոտքերը դրած պատվանդանին. ետին ոսկի խորք, տուն մը երեք բարձր կարմիր տանիքներով և աշտարակ մը: 15-րդ թերթի առաջին էջը Մատթեոսի Ավետարանի սկիզբն է՝ զարդարված ծաղկավոր կիսախորանով մը, ոսկի, կարմիր, կապույտ, ճերմակ և կանաչ երիզներով: Լուսանցքին տասը դեմքեր՝ ձեռքերնին մագաղաթներ. վերը Մարիամ Աստվածածին՝ գիրկը մանուկ Հիսուսը: «Գիրք ծննդեան»-ի «Գ» տառը Գարբիել հրեշտակապետն է, փողը բերանին և Ավետարանը ձեռքին: Մնացյալ վեց տառերը թռչնագիր են, շատ նուրբ և գեղեցիկ, կապույտ, կանաչ գունոց ներդաշնակությամբ: Մատենիս ամեն զլխագիր ոսկեգիր է, ամեն զլխի առաջին գիրը մանրանկար մը՝ նույն ներդաշնակությամբ: Լուսանցազարդերեն 46-ը ծաղկային են, 6-ը՝ թռչնային, 1-ը՝ հասկ, 1-ը՝ թղենի և 1-ը՝ տաճարի մուտք, բոլորն ալ կապույտ, ոսկի, կանաչ, կարմիր, ճերմակ, նարնջի գույներով և ներդաշնակությամբ: Նույն լուսանցազարդերը մեծ համեմատությամբ կրկնված են մյուս երեք Ավետարաններուն մեջ ալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանս կրովանդակե Զորս Ավետարանները՝ իրենց ցանկերով, նախադրություններով և համարարրառ կանոններով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ձեռագրիս հիշատակարանը չէ պահպանված: Հովհաննու Ավետարանի նախադրության վերջավորությանը (238բ) կա նախադասություն մը. «Աւրհնութիւն՝ որ կարգայ, գովութիւն՝ որ լսէ, փառք տուողին և յիշատակ գրչիս. ամէն»: Կազմի երկրորդ փեղկի ներքին մասին կեղրոնը մեղանով, ավելի խոշոր քան բուն գրչությունը, հավանաբար գրչին ձեռքով, գրված է՝ «ՌԺԲ» (1563), որ ձեռագրիս գրչության թվականը կենթադրվի:

8(121)

Մ Ա Ն Ր Ո Ի Ս Մ Ո Ի Ն Ք

Գրագարկ, Երուսաղեմ

ՉԿԳ—1314

Գրիչ՝ Ստեփանոս (Գրագարկ), Ստեփանոս և Կարապետ դպիր (Երուսաղեմ): Սաացող՝ Կիրակոս քհն. (Երուսաղեմ):

Թերք՝ 227: Նյութ՝ մագաղաթ: Մեծուրյուն՝ 11,5×8,2×5,3 սմ: Գրուրյուն՝ միասյուն: Գիր՝ բուրգիր: Տող՝ 16: Մանրանկար՝ չունի. կան մեջ ընդ մեջ թռչնային կարմիր գույներով պարզ լուսանցազարդեր: Պահպանակ՝ չունի: Կազմ՝ կաշեպատ տախտակ, մաշած: Հանգամանք՝ գոհացուցիչ, սակայն սկզբին և վերջավորութենեն որոշ թերթեր կպակսին:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա—16բ. Ձեռագրիս առաջին էջը կսկսի Բարեկենդանի կյուրակեի կանոնագրուի սաղմոսի «զեզ քրիստոս գովէ եկեղեցի փրկեալ քո սուրբ» համարով: Հետևաբար տասնյակ մը թերթեր սկզբին կպակսին: Ապա՝ «Թագաւոր յաիաեան»:

17ա—35բ. «Ալէլուր»:

35ա—44բ. «Առաւօտու երգեր»: 42բ-ի ստորին լուսանցքին տարբեր գրչի մը կողմն ավելցված է «Ոչ են բանք և ոչ են խօսք» սաղմոսը:

44բ—67ա. Հարց ապաշխարութեան:

68ա—99ա. Ճաշու ժամամուտը կարգաւ:

99բ—108ա. Մեսեղիք ճաշու (պահոց և յարութեան):

109ա—142բ. Ալէլուր ճաշու կարգաւ:

142բ—143ա. Սրբասացութիւնք:

144ա—150բ. Պատարագ: Կսկսի «Սուրբ Աստուած»-են և կվերջանա «Էցաք ի բարութեանց քոց, Տէր»-ով:

150բ—159ա. Խոնարհեցո աղուհացից:

159ա—161բ. Խոնարհեցուք հասարակաց:

161բ—179ա. Աւագ մեսեղիք աղուհացից և մեսեղիք տօնից:

181ա—198բ. Մեսեղիք ծննդեան (յարութեան, մարտիրոսաց, ապաշխարութեան):

198բ—218բ. Ուղղեցիք կարգաւ ի փառս Աստուծոյ:

218բ—219ա. «Սուրբ Աստուած» և «Վասն ի վերուստ»:

Մանր. Կհաշորգի գրչի հիշատակարանը (219բ), ապա՝ ա) Աւետարան բժշկութեան, բ) Ընթերցուածք յԱռակաց, գ) Ընթերցուածք յԵսայեայ, դ) Ընթերցուածք ի Գաղատացւոց թղթոյն, ե) Ընթերցուածք ի Գործոց Առաքելոց, զ) Ընթերցուածք յԵսայայ, է) Ընթերցուածք ի Կաթողիկեայ թղթոյն Պետրոսի:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

219բ. Փառք ամենասուրբ երրորդութեան յաւիտեանս յաւիտենից. ամէն: Գրեցաւ եղանակաւոր տառիկս որ կոչի Մանրուսումն, ի թվին Հայոց ՉԿԳ (1314), ի թագաւորութեան Աւշիհի և ի հայրապետութեան Տէր Կոստանդինի: Բայց եղև սկիզբն սորա որ ի ուխտն Գրազարկ՝ ձեռամբ եղբար ումեմն Ստեփանոս անուն, և ոչ աւարտեալ: Իսկ զմնացորդ սորա աւարտեցի ևս անարժան և վերջին սուտանուն գրչակ Ստեփանոս յերկ(այսպես), ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ի վանս որ կոչի Սուրբ Հրեշտակապետք, ի խնդրոյ հոգևոր եղբար մերոյ՝ պատուական քահանայի Կիրակոսի: Արդ, աղաչեմ զամենեան, որք աւգտիք ի սմանէ՝ ուսմամբ կամ արինակելով, յիշեսջիք ի մեղաց թողութին զյառաջասացեալ եղբայրն Կիրակոս և զծնողս նորա, և զեղբայրս և զուսուցիչ և զամենայն անգայինս՝ զկենդանիս և զհանգուցեալս, և զեղկելի աշխատողքս Բ(2) Ստեփանոս: Եւ Աստուած որ առատ է ի տուրս ողորմութեան, յիշողաց և յիշելեացս [առ]հասարակ ողորմեսցի. և նմա փառք յաւիտեանս: Այլ թէպէտև խոշորագիծ է, սակայն ի ճշգրիտ և յուղ[ղ]ակի արինակէ գրեցաւ, որպէս և երևի:

Մանր. Ձեռագրիս վերջին թերթին վրա շատ կարճ հիշատակարանի մը մեջ կհիշվի նաև Կարապետ դպիր մը՝ որպես գրիչ: Հավանաբար հավելյալ նյութերու գրիչն է:

9(Բ24)

Հ Մ Ա 3 Ի 1

Կ. Պօլիս

ՌՄԿԵ—1816

Գրիչ՝ Աբրահամ Գամելվանեան Խաուձորեցի: Սաացող՝ Կարապետ՝ որդի վանեցի Մախսուտ Գարասեֆերեանի, հետագայի ստացող՝ Պետրոս՝ որդի Մարիամի:

Թերթ՝ 1 (փաթեթ): Նյութ՝ թուղթ: Մեծուրյուն՝ 462×8 սմ: Գուրյուն՝ միասյուն: Գիր՝ մաքուր նոտրգիր: Հանգամանք՝ սկզբեն մաս մը կպակսի, քնդհանրապես հինցած, ծակծկած և շատ տեղեր նորոգված: Հիշատակարան՝ ունի:

Մանրանկար՝ Խաչելություն, Մատթեոս ավետարանիչ, Մարկոս ավետարանիչ, Ղուկաս ավետարանիչ, Հովհաննես ավետարանիչ, Սուրբ Սարգիս և որդին՝ Մարտիրոս, Սուրբ Գեորգ: Ասոնցմե զատ կան յոթ կանաչորակ և սակեզօծ բոլորակներ՝ առնված զույգ շրջագծերու մեջ, հինգուկես սմ տրամագիծով, իրարու տակ գրված և մեջը գրված:

- ա. Այս բոլորակն զմարդու զաղանդն խափանէ...  
 բ. Այս բոլորակն սէր առնէ...  
 գ. Այս պոլորակն զանձնունդն ծնունդաւոր առնէ...  
 դ. Անուամբ Աստուծոյ այս զմտամտլոր մարդն մտածական առնէ...  
 ե. Այս՝ ինչ խնդիրք ունիս ու աւագ կամ թագաւոր կամ դատաւորաց բով  
 մտանես անահ...  
 զ. Այս ի բազուկդ կապէ՝ ամենայն բանդ յաշողի...  
 է. Այս բոլորակն ի վրայ պահես, զինչ որ յուսաս՝ կատարի Աստուծոյ  
 հրամանով...  
 Եվս ութերորդ բոլորակ մը՝ Հովհաննես ավետարանչին մանրանկարեն  
 ետք. «Այս բոլորակն զթշնամին խափանէ...»

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹՅՈՒՆ

- ա. Ներսիսի Շնորհալիւ «Հավատով խոստովանիմ» աղոթքը, որ թերի  
 մասին պատճառով կսկսի «զի ի ճննդենէ սուրբ աւագանին» բառերով:  
 բ. «Մախան զօրաւոր ընդդէմ արհաւիրաց գիշերայնոց՝ ասացեալ սրբոյն  
 Գրիգորի նարեկացուն. Ընկալ քաղցրութեամբ...»:  
 գ. Գրիգորի նարեկացի «Որդի Աստուծոյ կենդանոյ օրհնեալ...»:  
 դ. «Աղօթք վասն կապանաց դիւաց և կախարդաց. Թագաւոր հզօր, ապա-  
 լէն ծարաւելոց, փրկիչ նեղելոց...»:  
 ե. «Թշկութեան Աւետարան ըստ Մատթէոսի» (Թ, 27—34):  
 զ. «Աղօթք սրբոյն Գէորգայ լիցի պահապան ծառայիս Աստուծոյ...»:  
 է. «Աղօթք սրբոյն Փոկասու եպիսկոպոսի. Սուրբն Փոկաս խնդրեաց  
 յԱստուծոյ...»:  
 բ. «Գիր վասն զլիսացաւի և նուզլայի»:  
 թ. «Գիր վասն աղամացաւի... Յիշեալ զսուրբ հրեշտակապետն Անթի-  
 պայ...»:  
 ժ. «Գիր վասն պահպանութեան...»—անձնական աղոթք մը՝ ստացող Կա-  
 րապետի կողմէ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- ա («Որդի Աստուծոյ կենդանոյ օրհնեալ» աղոթքեն ետք). Այս Հմայիլս  
 Վանեցի Կարապետին է, թիւ ՌՄԿԵ (1816):  
 բ («Թագաւոր հզօր» աղոթքեն ետք). Եւ լիցի պահապան ծառային Աս-  
 տուծոյ Կարապետին... (Նման հիշատակումներ կան նաև մյուս աղոթքներուն  
 վերջավորութեանց):  
 գ (Աջակողմյան լուսանցքին, մեկ տողի վրա գրված). Կախարդութիւնք  
 զշար ակն և զշար լեզու և ամենայն կախարդութիւնք կապեսցի ի դէմ ծառա-  
 յիս Աստուծոյ Կարապետին: (Կարմրիվ). Արդ եղիցի խափանումն Աստուծոյ  
 զօրութեամբ ամենայն կապք և կախարդութիւնք... ի դէմ ծառայիս Աստուծոյ  
 (Կարապետի անունը ջնշված և գրված՝ «Մարինամին որդին Պետրոսին»):

դ (Հմայիլիս վերջավորության). Թվին ՌՄԿԵ (1816) գեկտեմբերի ամսեան ժՁ (16) օրին աւարտեցաւ այս ծաղկաւէտ Հմայիլս ձեռամբ Խաւուձորեցի Գամելիւանեան մահտեսի Աբրահամին: Վասն որոյ, հարբ և եղբարբ, ով որ զայս Հմայիլս բնթեոնու, միօվ Հայր մերիւ յիշեցէք զպատրաստական ծառայս ձեր, որ և դուք յիշեցողքդ յիշեալ լինիք առաջի անմահ գառին Աստուծոյ:

և (Կարմիր մելանով). Թվին ՌՄԿԵ (1816) գեկտեմբերի ամսեան ժՁ (16) Ըստանպօլ ձեռամբ անարժան մահտեսի Աբրահամին գրեցաւ այս: Այս Հմայիլս վանեցի Կարասաֆարենց Մախսուտի որդի Կարապետին է. Աստուած բարեաւ և խաղաղութեամբ վայելում տայէ. ամէն:

10 (120)

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

ժՁ—XVI

Թերք՝ 222: Նյութ՝ մագաղաթ: Մեծություն՝  $11,2 \times 8 \times 5$  սմ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ մանր բոլորգիր: Տող՝ 20: Մանրակար՝ շորս, ունի հարուստ լուսանցազարդեր: Պահպանակ՝ թղթյա երկու: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հանգամանք՝ թերթերը թեև լավ վիճակի մեջ են, սակայն գիրերը տամկացած և սրբված են, շատ հաճախ անբնթեոնելի: Հիշատակարան՝ չունի:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

Զեռագիրս ժամագրքի վերածված Սաղմոսագիրք մըն է: Գրինակ մը կարելի է տալ ըստ հետևյալին. 22բ թերթին կեսին կսկսի մաղթանք՝ «Քրիստոս է իմ Աստուած, և փառաւոր առնեմ զսա...», ապա՝ «Բարեխօսութեամբ սերոյ Աստուածածնին և վասն սուրբ խաչի քո պատուականի, Տէր, բնկալ...», հետո՝ քարոզ. «Վասն ի վերուսա...», աղոթք. «Տէր տուրնչեան...», մաղթանք. «Սաղմոսիւք և օրհնութեամբ...», և ապա՝ «Հայր մեր...»: Նույն շարադրանքը Գուրդա Խ-ի վերջավորության:

150-րդ սաղմոսն վերջ կկարդանք. «Այս սաղմոս ինքնագիր Գաւրայ է արաքս քոնց... Փոքր էի ես ի եղբարս և կրտսեր՝ ի տան հօր իմոյ...»: Այսպես յոթը համար կշարունակվի: Ապա՝ «Աղօթք Մանասէի քազաւորին. Տէր ամենակալ...», «Աղօթք տեառն Ներսէսի Հայոց կարողիկոսի ասացեալ. Հաւատով խոստովանիմ...»: Զեռագիրս կավարտի «Աղբիւր անմահութեան» համարի «ապաշխարութեամբ ույ» բառերով: Մնացյալը կպակսի:

11

Ճ Ա Շ Ո Ւ Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Զեռագրատանս մեջ ի պահ է գրված նաև հայերեն տպագրյալ ճաշու Ավետարան մը. Աւետարան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի: Տպագրեցեալ ի տպարանի Յօհաննիսի և Յակոբոյ: Ի քովն Հայոց 1218 (1769) մայիսի Գ. (4), Իսթանպոլ Կ. Պոլիս: Ունի հետևյալ հիշատակարանք. «Յիշատակ հանգուցեալ մահտեսի Արազելի և կենդանի մահտեսի էլմասին ի դուռն Սուրբ Լուսաւորիչ»:



Ավետարանս արժաթապատ է: Առաջին փեղկի վրա փորագրված է խաչելության և տասներկու առաքյալներու պատկերները, իսկ երկրորդ փեղկի վրա՝ Քրիստոսի հարությունը:

Գ. ՄՈՆՐԵԱԼԻ MC GILL ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Մոնրեալի Mc Gill համալսարանի կեդրոնական մատենադարանի ձեռագրատան մեջ պահված են երկու հայերեն ձեռագիրներ, զորս տեսնելու և ուսումնասիրելու առիթը ունեցանք համալսարանին մեջ կրոնագիտության ուսանող պրն. Հարություն Փալանճյանի միջոցաւ: Հարկ է մեր շնորհակալությունը հայտնել նաև Mrs. E. Lewis-ի՝ ձեռագրատան տեսչուհիին, որուն արտոնությամբը կարելի եղավ ցուցակագրել ձեռագիրները և այդ ցուցակագրումը հրատարակել: Mrs. Lewis-ի մոտ պահված թղթակցութիւնն մը հայտնի կըլլա, որ ցարդ ձեռագիրները պրն. Փալանճյանն զատ ոչ ոք չէր տեսած և թե միայն անոնց xerox-ով օրինակված էջերը տրամադրված են հայտնի հայերենագետ Dr. Michael Stone-ի:

1 (2)

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

ԺԷ—XVI

Հետին կազմող՝ Յակոբ տիրացու Շահինեան (1813):

Թերք՝ 158: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 14,5×10×4,5 սմ: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոսրգիր: Մանրանկար՝ շունի, միայն զլիսագրերը՝ թռչնագիր կարմիրով և կապույտով: Հանգամանք՝ գոհացուցիչ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

1. Աղօթք, Քարոզք, Տեսիլք

ա. 1—7ա. Սկզբին պակասավոր. կրովանդակն՝ Խրատ ապաշխարութեան:

բ. 7բ—15ա. Տեսիլ սերոյն Գրիգորի Հայոց սուրբ Լուսաւորչին՝ Հարցմունք և պատասխանք հրեշտակապետին Վասն հոգոցն արդարոց և մեղաւորաց:

գ. 15բ—28ա. Տեսիլ Աստուածածնին ի լեառն Չիթենեաց, զոր յայտնեաց նմա հրեշտակապետն վասն մեղաւորաց, քէ որպէս տանջեն:

դ. 28բ—31ա. Քարոզ վասն գալստեան Քրիստոսի և դատաստանի նորա:

ե. 32բ—39բ. Քարոզ վասն գալստեան Քրիստոսի: Այս է պատմութիւն վասն գալստեանն Քրիստոսի. յաւուր ուրբաքուն երկինք և երկիր շարժի, տէրունական խաչն երեկ ի կողմն յարեւելից...

զ. 40—46ա. Քարոզ վասն ողորմութեան: Որպէս ասէ Դաւիթ մարգարէն. Երանի որ խորհի զաղբատն և զտնանկն...

է. 46—54բ. Քարոզ վասն նինուէացոց: Յայնժամ նինուէացիքն բազում շարիս գործեցին...

ը. 55—68բ. Այս է պատմութիւն նախաստեղծին, քանի ստեղծ տէր Աստուած զԱդամ և զԵւա մեծապէս փառօք և եղ ի մէջ դրախտին:

թ. 68բ—74 բ. Այս է պատմութիւն Կայենայ և Աբենայ:

ժ. 74բ—79ա. Վասն անտեացն Սէրայ: *Եւ քաղցրացաւ Տէր ի վերայ Աղամայ...*

ժա. 79ա—86ա. Քարոզ վասն աղօթից Գրիգորի ասացեալ: *Այսպէս ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. Արթուն կացէք...*

ժբ. 96ա—91ա. Ովհաննու Մանդակունեցուն ասացեալ վասն անշահ մեղացն և հայնոյողաց: *Երկերուք, երկերուք, զարհուրեցէք և սասանեցէք...*

ժդ. 91ա—92ա. Աղօթ պահպանութեան ի Առաքել վարդապետէ (ծայրակապ՝ «Տէր Առաքեալ ասե»)։ *Տէր և փրկիչ Յիսուս Աստուած, շօր ճառագայթ և լոյս փառաց...*

ժդ. 92ա—93բ. Գարձեալ ոտանաւոր նոյն տէր Առաքելէն (ծայրակապ՝ «Տէր Առաքեալ»)։ *Տարփմամք ձայնիւ հառաչանաց, Առ թեզ գոշեմք Յիսուս Աստուած...*

## 2. Մանկութեան Աւետարան\*

ա. 94—98. Յաղագս հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ՝ գնալ նոցա փախստական յեգիպտոս, յանօրէն ամբարշտէն Հերովդեայ, զի մի սպանցէ գմանուկն:

բ. 99—108բ. Յաղագս վասն Յիսուսի խորտակելոյ զկոոց պատկերն Ապոդոնի և զմեհեանս դիացն և բազմութիւն մարդկան, որ մեռած և յարութիւն որ եղև իսկ: *Եւ Յուսուս յարուցեալ գնաց անդր և եմուտ տաճարն կոոց...*

գ. 108բ—117ա. Յաղագս զարձեալ վասն հրեշտակին դառնալոյ Յովսեփայ՝ գնալ նոցա յերկիրն Իսրայէլի և բնակել նոցա յաշխարհին Գալիլեացոց ի Բաղաֆն Նազարէք:

դ. 117բ—125ա. Յաղագս վասն ելանելոյ նոցա յեգիպտոսէ և գալ ի կողմանս հարաւոյ յաշխարհս Արարիոյ, և տղայութիւն զոր առնէր Յիսուս և մահուան, որ եղև յարութիւն մեռելոց: *Մեկնում. Յերկիրն Ասորոց ի քաղաք մի որում անուն էր Շահապրաւ, և Յիսուս էր ամաց հինգ և ամսոց երեք:*

ե. 125ա—127ա. Յաղագս վասն փախելոյ նոցա անտի և գնալ նոցա յերկիրն Ասորեստանեայ, ի Բաղաֆ մի որ կոչի Մարթամ և Յիսուս էր ամաց վեց:

զ. 127ա—129բ. Յաղագս վասն երբալոյ նոցա յերկիրն Փանանու և տղայութիւն, զոր առնէր Յիսուս, և մահուան, որ եղև յարութիւն մեռելոյն զոր արար:

է. 129բ—136ա. Յաղագս վասն գնալոյ նոցա յերկիրն Իսրայէլի և զորձ տղայութեան զոր առնէր Յիսուս, և տալ գնա յուսումն դպրութեան, և մահուանն, որ եղև իսկ յարութիւն որդոյ բազաւորին:

ը. 129բ—141բ. Յաղագս վասն գնալոյ նոցա ի Բաղաֆն Տապարեայ, տալ գնա ի արուեստ ներկութեան, և տղայութիւն զոր առնէր Յիսուս, և սփանջելեացն զոր արար Յիսուս:

թ. 142—149ա. Յաղագս վասն երբալոյ նոցա յԱրեմաթեայ Բաղաֆի, և տղայութիւն զոր առնէր Յիսուս և մահուան որ եղև իսկ, յարութիւն արար Յիսուս:

ժ. 149ա—158. Յաղագս վասն երկմտելոյ նոցա գնալ Արտեան յերինն, և տղայութիւն զոր առնէր Յիսուս ընդ մանկունսն:

\* Համեմատել James M. R. The Apocryphal New Testament, p. 83.

## 2 (3)

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Զէյթում

ՌՃԾ—1701

Գրիչ՝ Խաչատուր և Յարութիւն գպիրք:

Քերք՝ 295, շարված՝ 234 և 236, մատենեն անշատված և պատահաբար զետեղված նշյալ թերթերուն տեղը. թերթ 115-ը, որ կրովանդակի «Նախադրութիւնք Մարկոսի Աւետարանի», պետք էր զետեղվեր թերթ 89-են անմիջապէս առաջ: Նշուր՝ ողորկ մագաղաթ: Մեծութիւն՝  $11 \times 8 \times 5$  սմ: Գուրջուն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր և առաջնակարգ զեղադրութեամբ: Տող՝ 23: Մանրանկար—Մատթեոս՝ 4բ, Մարկոս՝ 89բ, Ղուկաս՝ 148բ, Հովհաննէս և Պրոխորոն՝ 237բ, կիսախորան՝ 5ա, 90ա, 149ա, 238ա, կարմիր, կապույտ, դեղին, կանաչ և գորշ գույներով, լուսանցազարդերը՝ առատ, սակայն միագույն բաց-կարմրավ, երբեմն կապտիվ լեցված, հայկական հարազատ գծերով և ոճով: Սկզբնատառերը կարմրավ են և յուրաքանչյուր Ավետարանի առաջին գլխի առաջին համարը՝ գլխագիր երկաթագիր: Պահպանակ՝ երկու թերթ, մեկ սկիզբը, մեկ վերջը, վերջինս կիսով պատռած: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Հանգամանք՝ լավ: Հիշատակարան՝ ունի:

Մանր. Ձեռագրիս մեջ ներդրված են թղթյա երկու ձեռագիր պատասիկներ՝ Ժամագրքի մը ինկած,  $10 \times 6,5$  սմ չափով, 19 տող ամեն մեկ էջի վրա, և կրովանդակի ներսես Շնորհալվո «Առաւօտ լուսոյ» երգի «Խորհրդոց գիտող» համարեն մինչև վերջ և սկիզբն «Դատեա, Տէր» կանոնագլխի: Կավարտի «մինչև յամպս, ալիլուիա, ալիլուիա»-ով: Հոս զեղեցիկ լուսանցքի զարդ մը գծված է՝ ոսկի, կապույտ և կարմիր գույներով: Զափազանց զեղեցիկ է կանոնագլխի թռչնագիր «Դ» տառը, առաջին տողը կարմիր, իսկ երկրորդը՝ սև և խաղաղարյալ:

## ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. 1ա—87ա. Աւետարան ըստ Մատթեոսի (ցանկով և նախադրութեամբ):  
բ. 87բ—142բ. Աւետարան ըստ Մարկոսի (ցանկով և նախադրութեամբ):  
գ. 143ա—232ա. Աւետարան ըստ Ղուկասու (ցանկով և նախադրութեամբ):  
դ. 232բ—295բ. Աւետարան ըստ Յովհաննու (ցանկով և նախադրութեամբ):

Յուրաքանչյուր ավետարանիչ հատկանշված է այսպես.

3ա. «Մատթէոս թարգմանի՝ Երգ կենաց»:

115բ. «Իսկ Մարկոսի ասի առիւծ.

Զի ի սգաճեմէ շէ գծուծ,

Երազ յորս յայսն բմբունէ բուծ,

Սոյն հարթ արար ըզբանս իւր խրժուծ»:

146բ. «Ղուկասու՝ յարութիւնն»:

«Այլ թէ զՂուկաս եզն գրեցին,

Զի, որպէս նա, հերկէ զգետին՝

Կրկին անխոնճ վասն պտղին,

Սոյնպէս երկարէ բանքս սմին»:

237ա. «Իսկ Յովհաննէս արծուանման,  
Քոնաւ մտօր անհասական՝  
Առ ի պատմել բանիւ մարդկան  
Զանճառն էիցս հանրական»:

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

37ա. Ողորմեա և ինձ՝ ի կատարածի աւուր ահեղ դատաստանի, Խաչատուր դպրի, որ է գործով թերի և զազրացեալ մեղաց միջի: Ողորմեա, տէր Յիսուս, և ծնողաց իմոց և ազգականաց:

115բ. Մեղապարտ գրչի՝ տրուպ Յարութիւն դպրի տուր ողորմի:

232ա. Փառաւորեալ և անճառելի ահեղանուն, ով տէր իմ Յիսուս Քրիստոս, Աստուած ճշմարիտ, մի ամաչեցէ ի սոսկալի ատեան քո զԽաչատուր մեղաւր լցեալ տարտամ ոգի, այլ ըստ մեծի ողորմութեան քո դասեցես յաշակողմեան քում, և զծնաւորս իմ՝ զՅովհաննէս վարդապետն և զմայրն իմ՝ զՎարդէն, և զորդեակ իմ՝ զպատանին Վահան, և զեղբայրս՝ զՆազարէթ վարդապետն, և զամենայն արեան մերձաւորս, և հաւասար ամենայն քրիստոնէից. ամէն: Հայր [մեր]:

295 բ. Գրեցաւ սուրբ Աւետարանս սա ձեռամբ հող և փոշի Խաչատուր մեղօր ի լի, թվին ՌՃԾ (1701), ի Զէթուն, ընդ հովանեաւ ընդ եկեղեցեացն որ աստ կան՝ յազնականութիւն ամենայն քրիստոնէիցն. ամէն:

3. ARZUMANIAN  
(США)

### ОПИСАНИЯ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ

(Р е з ю м е)

Автор описывает 6 армянских рукописей хранилища Пристонского университета, 10 рукописей и одну старопечатную книгу, хранящихся в Библиотеке Фри в Филадельфии в США, а также 2 рукописи университета Мак Джилл в Монреале.

REV. Z. ARZUMANIAN  
(EUA)

### DESCRIPTIONS DE MANUSCRITS ARMÉNIENS

(R é s u m é)

L'auteur décrit 6 manuscrits arméniens de la bibliothèque de l'Université de Priston et 10 manuscrits et 1 incunable de la Bibliothèque Free de Philadelphie aux EUA, ainsi que 2 manuscrits de l'Université Mac Gill de Montréal.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔՅՈՒՐՏՅԱՆ (ԱՄՆ)

ՀԱՄԱՌՈՏ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԶԱԳԻՐՆԵՐՈՒ  
ՔՅՈՒՐՏՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՅԻ Ի ՈՒԻԶԻԴԱ. ԿԱՆԶԱՍ. ԱՄՆ\*

20

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ժԲ Պ.)

Թերթ՝ 66: Մեծ՝  $6 \frac{3}{4} \times 10 \times \frac{3}{4}$  ( $4 \frac{3}{4} \times 7$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ անցման բնափր բուրդափր, միասյուն: Տող՝ 21: Մանր՝ Մկրտություն, Ավետուած, Ընծայում, կիսախորան, լուսանցազարդ (թռչուն), զարգազիր, բուրբն ալ բնափր և գրչության ժամանակակից՝ կարմրազիր հունարեն մակագրությամբ: Ղուկասու մանրանկար մը (բնափր, բայց խոնավութենե փշացած) փակցուած է Ընծայման մանրանկարին կոնակը: Կազմ՝ ինծի հասած անկազմ. այժմ շագանակագույն կաշեպատ խավաքարտով կազմված: Հան՝ պակասաշոր, խոնավութենե և գործածութենե արատավորված, այժմ բավարար: Պար. Մատթեոս (վերջեն քանի մը տող միայն), Մարկոս (10-րդ թերթը հնագույն վերանորոգության առեն ամբողջացած շահեկան գրչությամբ), Ղուկաս (վերջավորությունը թափված, 36—41 թերթերը 1374-ի վերակազմության առեն ամբողջացված պարզ բուրդափրով): Հովհաննու Ավետարանը ամբողջությամբ կը պակսի: Ման. Գնված 1944-ին Նյու-Յորք, հրեա հնավաճառ մը: Երեք մանրանկարները, ուսումնասիրությամբ մը, հրատարակած էմ. տե՛ս «Journal of Royal Asiatic Society», London, 1942, № 3—4 («An Important Armenian Ms. with Greek Miniatures»), նաև՝ «Kansas Magazin», 1948, «Շոգակաթ» (Կ. Պալլոս), 1952, հոկտ., նոյ. և դեկտ.:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

1ա Տէր Աստուած, ողորմեա Կոզմայի մեղապարտ կրանաւորի և անպիտան գրչի՝ ի յաւուրն քո դատաստանի, և իւր ծնողացն Պետրոսի և Մաւրիայի. ամէն, ամէն:

33ա Քրիստոս Աստուած, ողորմեա Կոզմայի մեղապարտ կրանաւորի և գծողի կենսատու տառի քո, և ծնողաց իւրոց՝ յաւուր դատաստանի քո. ամէն,

\* Հ. Քյուրտյանի հավաքածոյի № № 1—19 ձեռագրերի նկարագրութիւնը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 409—422: Ձեռագրերի շարքերը տրված է մատնաշարով (մեկ մատնաշարը=2,54, սմ.):

ամէն: Ընդ նոսին և Պապա Սիմեոնի Ուոհայեցոյ և ծնողաց իւրոց՝ Կիրակոս քահանայի. ամէն, ամէն: (Ներքեր, գրչեն, սև մելանով երկու տող հունարեն):

Յան. Կողմա գրիչ այս ձեռագրիս մեջ կուտայ ծնողաց անունը՝ Պետրոս և Մարիա, այլուստ անծանոթ: Իր գրչեն ցարդ ծանոթ են իմ հովաքմանս N 2, Ս. Ղազարի N 88, Մատենադարանի N 7734 ձեռագիրներն ու Կ. Պոլսո սպարիարքարանի մեկ Ավետարանը:

### Հետազայի

33ր Յիշեցէք ի Քրիստոս զվերջին ստացող սուրբ Աւետարանիս՝ զքրիստոսասէր և զհաւատարիմ տանուաւոր զխրազ Աւետիսն և ծնօղս իւր՝ զՊետրոսն և զԴաւլարն, և զկողակիցն իւր՝ Գուրգանէն, և զորդին՝ զՍաֆարն, և զեղբարն՝ զբաշատուրն... Եւ արդ, գնեցի զսուրբ Աւետարանս ի գերութենէն Բաղեշոյ, զի Կարմիր Կղակն զ[ե]րեցոյց և թալանեց, և քուրթն իւր թալանեց և սպանեց ի մեծ թվին ԶԿԲ (1513)...

34ա Փառք... գրեցի զյիշատակարանս յաստուածարնակ սուրբ ուխտս որ [կ]ոչի Սուրբ Վարդան, ի հայրապետութեան տեառն Զաֆարիայի, ի թուականիս հայոց ԹՃԵ (1456): Արդ... ստացող սուրբ Աւետարանիս՝ զհաւատարիմ Սաղաթէլ քահանայն և զԳրիգորն, զկողակիցն իւր՝ զԴաւառն, և զորդին՝ զբազմայշարշար Ստեփանոս զվանաց տնտերէսն, և զուր կողայկիցն՝ զԲաղդադ խարուն, զքուրն՝ Մարգարիտն, և Մելիսէր՝ որդին տնտեսին, և զուսարն՝ Եղիսայրեղն, և զամենայն արեան մերձաւորս... (հիշատակութեանս գրիչը ինքզինք շանվաներ):

40ր Թվականիս ՊԻԳ (1374) կազմեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անարուեստ կազմողի Կարապետ...

Ես Սաղաթէլ երէց, որ գնեցի սուրբ Աւետարանս ի հալալ արդեանց՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ Գրիգոր քահանային և մարն իմ՝ Զոչ Թիկին... (հիշատակարանը կը շարունակվի հանգավոր):

22\*

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

(1568 ք.)

Թերթ՝ 357: Մեծ.  $3 \frac{1}{4} \times 5 \frac{1}{4} \times 2 \frac{3}{4}$  ( $2 \frac{1}{4} \times 4$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ մանր, ոչ բնաիր բոլորգիր, խազագրչալ, միասյուն: Տող՝ 22: Մանր.՝ «Յովակիմ և Աննա» բոլորէջյան մանրանկար մը, սկզբնական, կիսախորան և լուսանցազարդ՝ սկզբնական և վերանորոգող: Պահ.՝ մազաղաթ, երկաթագիր, սկիզբը՝ երկսյուն թերթի մեկ սյունին յոթ տողեր երկուքի ծալված, վերջնալ՝ մեկ ու կես սյունի յոթ տողեր երկուքի ծալված, մասն Ավետարանի: Կազմ՝ ծակոտկեն, ճնշազարդ շագանակագույն կաշեպատ տախտակ, թերթապահ կազմամասը պոկված կորսված, կոնակի վերի և Ա. կողքին վարի մասի կաշին պոկված, ներսեն մետաքսյա կարմիր լաթով պատված. ապահովաբար սկզբնական կազմը չէ, այլ՝ ժէ դարեն: Հան.՝ բավարար, սակայն գործածութենե.

\* N 21 ձեռագրի նկարագրությունը հեղինակի կողմից բաց է թողնված. ԽՄԲ.:

աղտոտված, եզրահատման հետեանքով լուսանցազարդերը վնասված, վերանորոգման ժամանակ պակասող մասերն ամբողջացված: Պար.՝ Շարակնոց: Ման.՝ Գնած եմ 1954-ին Կ. Պոլիս, հրեա հնավաճառե մը:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

349բ Փառք... Մարտի[ր]ուս միայն անուամբ սարկաւազիս հասանելի յաւարտ սուրբ երգարանիս, ի թվին Ռժէ (1568), յունիս ԻԸ (28), ի քաղաքն Աերաստիայ, բնդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Լուսաուրչին, և սրբոց Քառասուն վկային... (Գրչեն հիշատակութիւնն նաև՝ 295բ, 345բ, 352ա):

Ման. Մարտիրոս սարկավազ գրչեն ինծի ծանոթ են. Ճաշոց՝ 1555-են, Ոսկեփորիկ՝ 1571-են, Ավետարան՝ 1576-են, Ոսկեփորիկ՝ 1583-են և Աւետարան՝ 1593-են:

Հետագայի

355ա (Բոլորգիր) Գարձեալ... զվերջին ստացող Շարակնոցիս զՄուրաան և կողակիցն՝ Ճանփաշան, և զորդին՝ զՊարոնն, և զՏէր Պարոնն, որ գնեցին զգիրքս և գրին յիշատակ... Եւ զմիւս եղբայրն, որ [առ] Աստուած գնաց՝ զՎարդանն, Աստուած ողորմի. և յ[իշ]եցէք զԱպիրշումն և զԳոհարն, և Մանուկն...

Չա (Լատիներեն) «Շարական և երգ եկեղեցական, հայերէն»: (Ներքեր շեղագրով) Յիշատակ է ի Սուրբ Հոգի եկեղեցոյ Ամսղերտամու ջնչին ծառայէ Ստեփան Գարբիէլեանէ. հոգ[ւոյ] առաջին. թվին... (Թվականը ջնջված և մատիտով գրված՝ «1620», սակայն Գարբիելյանի սույն հիշատակագրութիւնը հավանաբար ժԸ դարեն վաղ չէ):

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ

(ԺԿ դ.)

Թերթ՝ 305: Մեծ.՝  $3 \frac{7}{8} \times 5 \frac{1}{4} \times 2 \frac{1}{2}$  ( $2 \frac{1}{2} \times 4$ ): Նյութ՝ բնտիր մագաղաթ (1—230), տեղական թուղթ (231—240), տեղական տարբեր թուղթ (241—305): Գիր՝ միասյուն, վարժ և գեղեցիկ բոլորգիր, ձայնագրյալ (1—230), տարբեր ոչ նուրբ բոլորգիր (231—240), տարբեր և բնտիր բոլորգիր, ձայնագրյալ (241—305): Տող՝ 23: Մանր.՝ լուսանցազարդ և դարգագիր, սովորական, մարած: Պահ.՝ երկաթագիր մագաղաթի պատառիկ մը սկիզբը և պատառիկ մը վերջը, անհայտ պարունակութեամբ: Կազմ՝ գրոշմազարդ կաշեպատ տախտակ, թերթապահ մասը, ճարմանդներն ու կաշեփոկերը պոկված կորսված, կոնակը վերեն ու վարեն վնասված: Հան.՝ սկզբնաթերթը կիսով պատուված, վարի անկյունը մաշած, վերջեն պակասա-

վոր: Պար.՝ Շարակնոց: Ման. գնած եմ հինգ ուրիշ ձեռագիրներու հետ 1930-ին Փարիզ, հնավաճառ Հակոբ Ինճյուճյանե:

### Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

#### Գրչի

60ա Զմեղաւոր ստուերս՝ զՅովանէս զրիշ, աղաչեմ...

#### Հեաագայի

9ա (Բոլորգիր, հազիվ նշմարելի)... գնեցի զՇարակնոցս... ԶՃԼԱ (1482)...

249 (Բոլորգիր)... վերբստին նորոգել և կազմել ի մեծ թվականիս հայոց ՌԾԳ (1604) ձեռամբ մեղաւոր և անպիտան ծառայիւ Աստուծոյ Յակոբ սուտանուն արեղայիս...

24

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1315 p.)

Թերթ՝ 177: Մեծ՝  $12\frac{3}{4} \times 9 \times 1\frac{1}{2}$  ( $6\frac{3}{4} \times 10$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ երկայուն, անկանոն խոշոր բոլորգիր: Տող՝ 23 (նորոգյալ մասերը՝ 25): Մանր.՝ Մարկոսի կիսախորանը «Ա» զարդագրով և լուսանցազարդով՝ դունազեղ, սուկեզիծ, արժեքավոր (սկզբնական), Հովհաննու կիսախորանը՝ լուսանցազարդով և զարդագրով (վերանորոգող): Ուրիշ ոչ մեկ ծաղկում: Կազմ՝ ինծի հասած անկազմ. այժմ՝ անդրոշմ կաշեսպատ խավաքարտ: Հան. ինծի հասած վատ վիճակի մեջ, այժմ բավարար. սկզբն և մեջն պակաս թերթեր՝ նորոգողներե ամբողջացյալ: Պար.՝ Զորս Ավետարաններ: Ման. գնված 1947-ին Կ. Պոլիս, հնավաճառ Եղվարդ Ալյանարե:

### Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

#### Գրչի

77բ ԶԱտեփանոս գրող սուրբ Աւետարանիս յիշեսչիք, և Տէր ձեզ և մեզ ողորմեսցի. ամէն (նման՝ թերթ 137ա):

176ա Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թու[ին հ]ա[յոց] ԶԿԳ (1315), ի մայրաքաղաքս Մելիտենի, ի հայրապետութեան Կոստանդեա, ի թագաւորութեան Աւշի, ընդ հովանեաւ [Սուրբ Աստուած]ածնի, ձեռամբ մեղաւոր... (թափված) և աստուածաշէն քաղաքս Մելիտենի... (փճացած) սուտերի մաշեցին. մնացեալքս գերի վարեցին... ականշաց մերոց լսեցար. ո՛ աշաց մերոց, որ տեսար զաւերումն քաղաքիս:

Արդ... մեղաց թողութիւն խնդրեցէք Ատեփանոս գծողիս՝ փոխեցեալն ի Քրիստոս, և աստուածասէր քահանային, և տուր ընդ նմին և զՎահրամ սուտանուն քահանայ, որ զպակասութիւն ելից և կազմեաց...



## Հետագայի

36ա (Մանրագիր) Յայսմ դառն ժամանակիս, որում իսառ (էսա) Միլիֆ Յումարաց Յաշեխ Քամուրն զմայրաքաղաքն զհայոց Սիս և տարաւ զկաթ[ո-  
ղիկոսն], զթագ[աւորն], զպատրիազն և այլ բազում իշխանք ի Հալապ, ի  
թվ[իւն] ՊԻԴ (1375), յապրիլ Ի (20):

36բ (Տարբեր գրչե) Զվերչին կազմողս և զծաղկողս և գրողս սորա...  
զՍիմեոն դպիրս, և զհոգևոր հայրն իմ՝ զԱռիստակէս վարդապետն... և զնէր-  
սէս երեցն և զեղբայրն՝ զԱսլի պարոնն, որ գնեց զսա...

Յիշեցէք ի Քրիստոս զպարոն Առաքելն, և զպարոն Խնդրածն, և զպարոն  
Վարէգոյնն, և զպարոն Կասօն, և զպարոն Յոհանն, զպարոն Կիրակոսն, և  
զկանայսն՝ զՄարթայն, և զՄինայն. և զՇամամ խաթունն... Գրեցաւ զիրս ի  
թվ[իւն] հայոց ՊԶԱ (1422), մարտի Իէ (27)...

(Այլ ձեռքով ավելացված) Պարոն Յակոբն և զՄարթայ խաթունն, և Յո-  
հանէս երեց յիշեցէք...

137բ (Անկանոն բոլորգրով) Աստուած ողորմի Տէր Սա[ր]գսիւն և իւր  
հաւրողբար մեղսեսի նորոքէս... որ ազատեր Աւետար[անս] ի անաւրինաց  
ձեռաց...

25

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ԺԱ Պ.)

Թերթ՝ 93: Մեծ՝  $10 \times 13$  ( $7\frac{1}{2} \times 10$ ): Նյութ՝ դեղնած հաստ մագաղաթ:  
Գիր՝ երկսյուն, խոշոր երկաթագիր: Տող՝ 19—21: Մանր՝ ձեռագրիս իմ բա-  
ժինն ունի միայն լուսանցազարդ՝ մանիշակագույն և բաց-վարդագույն շորս  
վարդյակներով զարդարուն բոլորակներ: Կազմ՝ գրոշմված խաչազարդով,  
կլորագլուխ զարդագամերու միաշար խորանի, խաչի և այլ ձևավորումներով  
մուգ-շագանակագույն կաշեպատ տախտակ, հավանաբար ժե դարեն: Հան՝  
վերակազմութեան ատեն եզրահատված և լուսանցքները նեղցած, Մարկոսի և  
Ղուկասի, բոլորէջյան շորս ավետարանիչներուն մանրանկարները, ինչպես և  
խորանազարդերը պոկված և վաճառված վաշինգտոնի Սմիթսոնյան հաստա-  
տութեան Ֆրիեր Արթ Գալերիի, ուր այժմ ցուցադրված կը պահվին: Պար՝  
Չորս Ավետարաններ. իմ բաժինը՝ Մատթեոս և Հովհաննես: Յան՝ Չեռագիրս  
1896-ին, հայկական ջարդերեն վերջ, ուրիշ ձեռագիրներու հետ Պետրոս ար-  
քեպիսկոպոսի կողմն դպրոցաշինութեան նպատակով կը վաճառվի Փարիզ,  
հնավաճառ Ինճյուճյան եղբայրներու: 1936-ին արդեն կը գտնվեր Նյու-Յորք  
հնավաճառ Գրիգոր Մինասյանի քով, որ մասամբ ծախսեր էր Ֆրիեր Արթ Գա-  
լերիի: Իմ բաժինը գնված է Մինասյանի ժառանգներեն:

26

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1307 Բ.)

Թերթ՝ 238: Մեծ՝  $8\frac{1}{2} \times 11\frac{1}{2} \times 3$  ( $6\frac{1}{4} \times 8\frac{3}{4}$ ): Նյութ՝ տեղական հաստ  
թուղթ, դեղնորակ, անփայլ: Գիր՝ երկսյուն, բոլորգիր: Տող՝ 23: Մանր՝ կիսա-

խորան, լուսանցազարդ և զարդագիր, բուսածե և շահեկան. ծաղկող՝ Մխիթար վրդ. Սասնեցի կամ Կրմանեցի: Պահ.՝ սկիզբը և վերջը՝ մեկական թերթ երկաթագիր մագաղաթ, մասն նոր կտակարանի: Կազմ՝ գրոշմագարդ կաշեպատ տախտակ, Ա. փեղկին վրա. վատորակ արծաթյա խաշ մը՝ հայերեն անիմաստ գրերով: Ներսեն աստառված է հովազներով և փասյաններով զարդարուն տպածո գեղեցիկ լաթով: Կազմը վերանորոգել տված եմ իր հին կաշվով, սակայն կոնակի կաշին նորոգված է: Հան.՝ լավ և կատարյալ: Պար.՝ Չորս Ավետարաններ: Ծան. Գնած եմ ուրիշ ձեռագիրներու հետ նյու-Յորքի Կոլումբիա համալսարանի դասախոս պրոֆ. Ռիֆսոզի աչրին: Ձեռագիրս իր նկարագարդումներով ներկայացուցած եմ «Հասկ» պարբերականի մեջ (1949, էջ 231—235): Այն Վասպուրականի N 82 գրչագիրն է՝ նկարագրված Ե. Լալայանի կողմն (տե՛ս «Յուզակ ձեռագրաց Վասպուրականի», Թիֆլիս, 1915):

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

### Գրչի

68ա Ես Մխ[իթար] պիտականուն վարդապետ՝ գրեցի զսուրբ Աւետարանս իմով ձեռամբ, և վաճառեցի զսայ ընդ աշխատանաց իմոց Սաեփաննոս քահանայի՝ յիշատակ նորին և ծնաւոցայ իւրոց, և բարեխաւս առ որդին միածին: Ա[յ]լ յլում խաւսը և կամ դատաստան ընդ նմա ոչ գոյ բնաւ:

238ր Յանկ ելեալ կատարեցաւ աստուածախաւս և սուրբ Աւետարանս... հայկազեան տոհմիս տումարի 252-երորդի (1307) յանապատիս Մեծովիա վանք առձայնելոյ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, յառաջնորդութիւն սրբազան և պատուական հայրապետիս տեառն Սարգսի, ձեռամբ անարժան և պիտականուն Մխիթար վարդապետի, ի ստացումն մերոյ հարազատի՝ ումեմն Աւետիս քահանայի և կուսակրան արեղայի...

Ծան. Մխիթար վրդ. Սասնեցիէ ծանոթ են գրչագիրներ 1305-են (կը գտնվեր Մշո Առաքելոց վանքը. այժմ անհայտ), 1308-են՝ նարեկ, 1313-են և 1318-են՝ Ավետարաններ (այժմ կորսված) և Մատենագարանի N 952 ժողովածուն՝ 1321-են:

### Երկրորդ ստացողի

110ր Ես Սաեփաննոս քահանայ... ստացա զսուրբ Աւետարանս... և ծնողաց իմոց՝ Ղազարայ հաւր իմոյ և մայր իմոյ... (տեղը պարաս) և եղբարց իմոց՝ Թորոսի և Պարոնշայի:

27

ԿԱՆՈՆԳԻՐՔ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՈԿՐԱՏԱՅ

(ժե—ժՁ դդ.)

Թերթ՝ 178: Մեծ.՝  $5\frac{7}{8} \times 8 \times 1\frac{3}{4}$  ( $4\frac{1}{4} \times 6\frac{1}{4}$ ): Նյութ՝ եվրոպական ջրանիշյալ թուղթ: Գիր՝ Կանոնգիրը երկսյուն բոլորգիր, մնացյալը՝ բոլորգիր և նոտրգիր. հավանաբար նոտրգիր թերթերը վերանորոգողի ամբողջացում են:

Տող` 24: Կազմ` ինծի հասած անկազմ. այժմ վերակազմված կաշեպատ խա-  
վաքարտով: Հան.` խոնավություն տեսած, սկզբին և վերջին պակասավոր.  
Կանոնգրքի մասը բավարար, իսկ Սոկրատի մասին պրակներուն ոմանց ստու-  
րին մասը գրչութեան հետ պատուված կորսված: Պար.` Կանոնգրք և Պատ-  
մութիւն Սոկրատայ: Ման. Սիրելի մայրս 1921-ին ութ ուրիշ ձեռագիրներու  
հետ Կ. Պոլսեն է ուղարկած ինծի:

28

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1230 p.)

Թերթ` 199: Մեծ.`  $6\frac{1}{2} \times 10 \times 2$  ( $4\frac{1}{2} \times 7\frac{1}{4}$ ): Նյութ` տեղական հաստ  
թուղթ, ժամանակե թուխացած: Գիր` երկսյուն, բոլորգիր: Տող` 19: Մանր.`  
կիսախորան և լուսանցազարդ, հնադրոշմ և կարմրագիծ: Կազմ` ինծի հասած  
միայն Ա կողքով, այժմ խնամքով վերակազմված: Հան.` սկզբին և վերջին  
պակասավոր, Հովհաննու Ավետարանեն պրակ մը մնացած, այն ալ խոնավու-  
թենե արատավոր, թիչ ինչ գունաթափ, վերակազմութենե հետո բավարար:  
Պար.` Չորս Ավետարաններ, համարաբրայալ: Մանր. Գնած եմ 1946-ին  
Հալեպ:

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

## Գրչի

129 Քունն խիստ կու շարշարէ և աւերէ:

148 Զրագմամեղս դՅո[վ]հ[աննէս] յիշեսչիք: Յայսմ ամի մեծ ահ կա  
խորոզմառին յամենայն արարածս, զի այժմ առ զԽլաք և զամենայն սրով  
մաշեաց զգաւան: Այժմ աւելի են գերիքն յաշխարհի, քան զազատքն, և նա  
փքա իբրև զվիշապ և գոչէ իբրև զառիւծ: Ել սուլտանն Հոռոմոց աշխարհա-  
խումբ ժողովով բնդդէմ նորա, և ամենայն սիրտ բեկեալ և զարհասն առաջի  
ունի: Երանի որ ոչ է ի ժամս յայս:

180 Յուլիս ամսոյ Թ (9), յաւուր երեքշաբթի պահոցն Այլակերպու-  
թեանն, բնդ Զ (6) ժամն և բնդ Թ (9)-ի մէջ շարժ եղև լաւ Փառք Աստուծոյ:

382 Ի թու[ին] հայոց ՈՂԹ (1230), յամիս աւգոստոս ԻԵ (25) աւրն, յա-  
ւուր կիրակէի եկն առ մեզ Սարգիս հայրն և երեք մեզ վատ զրոյց, որ եկեալ  
Առն քաղաւորին թագուհի ի Կիպռաւա ի Սելեկիա, որ տեսնայր զիր  
դուստրն, որ էր Հերում քաղաւորին թագուհի, և տարան զթագուհին ի Սելե-  
կիա, և անդ ետես զմայրն իւր, և խաբեց զթագաւորին հայրն զպարոն Կոս-  
տանդին, և մտաւ ի Սելեկիա, և մոտեց հետ իր մայրն, և զպարոնն հանին  
քաշնաւք բերդէն: Այս այսպէս գործեցաւ, և ենք յահի և յերկեղի. այլ յառաջ-  
կայն Աստուծոյ է գիտելի: Եւ Հոռոմոց սուլտանն և Մելէք յեալին երեք որդի  
բազում զարաւք, և խորագմառն քաղում խուժադուժ ամբոխի դէմ իրերաց  
են գումարեալ, որ պատերազմին. այլ զոր լինելոց է` Աստուծոյ է գիտելի,  
այլ արածքս ամենայն են ի վտանգի:

## Հետագայի

148 (կուսանցքին, անկանոն գրչությամբ և մասամբ եզրահատեալ, շահեկան ներկարարական պայմանագրություն) [Յ]անուն հա[ւ]ր և որդոյ [և] սուրբ հոգոյ: Ես Թորո[ւ] ներկարար[ս] Կրակոյս, որ գրեալ եմ, զե[ր]էց նուշիրի կինն Ազա[ւ], որ ներկէ [զ]իր տունն՝ զինչ որ պիտի, ...ս շեմ առեալ. ու այլ ով լինի ու [ա]նու, նա ինք[ն զ]իմէ ու Քրիստոս ու Աստուծոյ. [ի]մն ձեռաց զիր, Թորոս:

(Նուշնի ներքեում, նստրածե գրով, գունաթափ և հազիվ նշմարելի) Ես Յովանես ներկարարս վկայ եմ, թող... (անընթեռնելի) Նշիրուն ներկն զհին... (անընթեռնելի), մասն Յուզայի և այլ խաշահան[ուաց]... (անընթեռնելի):

29

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1292 p.)

Թերք՝ 274: Մեծ՝  $9 \frac{1}{2} \times 12 \frac{3}{4} \times 3 (6 \times 8 \frac{3}{4})$ : Նյութ՝ տեղական հաստ թուղթ: Գիր՝ երկայուն, կանոնավոր բոլորգիր: Տող՝ 21: Մանր՝ կիսախորան և լուսանցազարդ, կարմրագիծ, հնադրոշմ, ճաշակավոր: Պահ՝ մեկական թերթ սկիզբը և վերջը անգիր հաստ մազաղաթ: Կազմ՝ խաշածե դրոշմյալ հյուսկենագիծ կաշեպատ տախտակ, թերթապահ մասով և երկրաշափական գծաձևերով գունատիպ բամբակյա կազմաստառով: Ա կողքին, խաշադրոշմին մեջտեղը, հավասարաթև արծաթյա խաշ, որուն կենտրոնը այժմ պարսպ գոհարակալ, ավելի ներքև՝ հավասարաթև ուրիշ խաշ մը: Հան՝ բավարար, սակայն վարի արտաքին անկյունները թերթաշրջումե փշացած, որոնցմե առավել վատերը տոկուն թղթիկներով այժմ վերանորոգված: Վերակազմության ժամանակ սկիզբեն և վերջեն ավելցված են երկուական թերթ բարակ և ոչ ողորկ թուղթ: Կազմափակիչ երեք փոկերը ընկած: Պար՝ Չորս Ավետարաններ, համարար-բառյալ:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

269ա ...եւ ես յոգնամեղ [և] փցունս ի գրչաց Սիմ[է]ոն նուստ քահանա... կատարեցի... ի թուականիս հայոց ՉԽԱ (1292), ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի, և ի թագաւորութեան Հեթմոյ, ի մայրաքաղաքս Արեւել, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգեայ և մար լուսոյ Աստուածածնի...

Ծանոթ. Սիմեոն քհ. բազմարդյուն գրիչ եղած է. իրմե բացի սույն ձեռագրե, ծանոթ են ևս 5 Ավետարան՝ 1286-են (կալայան, Յուզակ, № 58): 1297-են (Անդ, № 65), 1304-են (Անդ, № 78), 1305-են (Մատենադարան, №№ 2744, 4189):

Հետագայի

270բ (Միասյուն, բոլորգիր) Զվերջին ստացաւ սուրբ տառիս՝ Գարպիէլ (Գարբիէլ) վարդապետին և եղբար նորին՝ Աւետիսին, կողակցուն՝ Թովային, դստեր՝ Սիմին, Նուպարին, ծնաւոցս՝ Տէր Վարդանին, կողակցուն՝ Զուլային, եղիսին, Ալմաբին, Մէլֆօնին, Վալարին, Ասպատուրին, Յովանին, կողակցուն՝ Խազգուլին, Մինասին, կողակցուն՝ Մարգարտին: (Նույնը դարձյալ կրկնված, ապա)... Ետուր բզսա ի դունն Լմա Սուրբ Գէորգայ անապատին:

(Տարբեր բոլորգրով, երկսյուն) Զվերջին ստացաւ սուրբ տառիս՝ գեանէսն և կողակիցն Շայհումին, և հարն՝ Կակոսին, կողակցուն՝ Վար խաթունին, և եղբարցն՝ Աղիշին, Մարտիրոսին, Աղիշի կող[ա]կցուն՝ Գաւգալին, Աբրահամին, Վազարին, և կողակցուն՝ Բահրոյին, և ըստացաւ Խանէսին և իւր որդոցն... (երկու տող բաց է թողնված) և դստերացն՝ Յամանին, Զույարին, Խանաղին, և հարեղբար որդոցն՝ Պետրոսին, Պաւղոսին, Տէր Վարդանին և կող[ա]կցոյն՝ Շամամին և որդոցն՝ Միրաբին, Զաբարին, և փորր որդոյն՝ Տէր Վարդանին և կողակցուն՝ Գաւգալին...

(Կը շարունակվի նույն անուններուն կրկնութեամբ, ապա) Կազմեցաւ սուրբ Աւետարանս ի դունն Հոգոց վանից Սուրբ Աստուածածնին, ձեռամբ մեղաւոր Աւագ սարկաւազի...

30

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(ՓԶ դ.)

Թերթ՝ 126: Մեծ՝  $10\frac{1}{2} \times 7\frac{1}{4} \times 1$  ( $5 \times 7\frac{1}{2}$ ): Նյութ՝ տեղական հաստ թուղթ: Գիր՝ երկսյուն, լավ բոլորգիր: Տող՝ 23: Մանր՝ խորաններ, լուսանցազարդեր և դարդազրեր, սովորական, բայց վարժ և շահեկան: Կազմ՝ ինծի հասած է անկազմ, այժմ կազմված շիկափոկեպատ խավաքարտով: Հան՝ սկզբն և վերջն պակասավոր, տեղ-տեղ ստորին լուսանցքներուն ցեց դիպած: Պար՝ Զորս Ավետարաններ: Ման՝ Գնված 1947-ին Կ. Պոլիս, գրավաճառ Զարդարյան:

31

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի

(ՓԷ դ.)

Թերթ՝ 72: Մեծ՝  $6 \times 8\frac{1}{4} \times 3\frac{3}{4}$  ( $3\frac{1}{2} \times 5$ ): Նյութ՝ տեղական բնաթիթ թուղթ: Գիր՝ բոլորգիր, երկսյուն, շրջանակված՝ ոսկի, կարմիր և կապույտ: Տող՝ 24: Մանր՝ կիսախորան, լուսանցազարդեր և դարդազրեր, գունազեղ և ոսկի, տեղ-տեղ ամբողջացված, իսկ տեղ-տեղ՝ ոչ: Կազմ՝ ինծի հասած անկազմ, 1956-ին վերակազմված կաշեպատ խավաքարտով: Հան՝ այժմ բավարար. թերթ 61-ը տարբեր գրչութեամբ՝ հարմարեցված գրչագրին: Պար՝ Աւետարան

ըստ Մատթեոսի: Մանր. Գնված 1947-ին Կ. Պոլիս, գրավաճառ Զարդարյանի:

### Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

#### Գրչի

71ա (Սկզբից թերի) ...[զԴալ]իքն և զԱստուածատուրն, և զքրեւերքն իւր՝ զՄանուշակն և զՄարիամն...

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս-զստացող աստուածախաւս տառիս՝ զԱւետիքն...

Դարձեալ... զտառապեալ, մեղաւք լցեալ, անպիտան գրչիս՝ Պետրոս երէցս Զուղայեցիս...

#### Հետագայի

71բ Դարձեալ յիշեցէք ըստացող սուրբ Աւետարանիս՝ ըզխօճայ Հայրապետին, զհայրն՝ Փիլոնադարն, և զմայրն իւր՝ Խիալն, և կնոջն իւր՝ Աղասուրանն, և եղբարց՝ Սաֆարն և Հախնազարն, Շահանդուխտն յիշեցէք ի Քրիստոս: Եւ բնծայեաց Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցոյն: Գրեցաւ թվին ՌՃ և Ժէ (1668), ի մայիս ԺԸ (18), ամէն:

32

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1477 p.)

Թերք՝ 273: ՄԵԾ.՝  $7 \times 10 \times 2$  ( $4^{3/4} \times 7^{3/4}$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ երկսյուն, լավ բոլորգիր: Տող՝ 21: Մանր.՝ բոլորէջյան մանրանկարներ, կիսախորաններ, լուսանցազարդեր և զարդագրեր: Նախապես ունեցած է և համարարբառ կանոններով խորաններ, որոնք, բոլորէջյան մանրանկարներուն հետ միասին, անշատված են վերջին ստացողին և զատ-զատ վաճառված, որմե ինքս գնեցի մնացյալ մասը: Այժմ կմնան բոլորէջյան մանրանկարները և Մարկոսի, Ղուկասի, Հովհաննու կիսախորանները—ընտիր գործ մանրանկարիչ Ստեփանոս եպս. Առնշեցիի (տե՛ս իր մասին իմ աշխատությունը՝ «Հասկ», 1951, էջ 235—240 և 1952, էջ 15—17, վեց նկարներով: Իրմե մեզ հայտնի են. էջմիածնի նոր հավաքման Ավետարանը՝ 1477-են, նոր Զուղայի № 335 Շարակնոցը՝ 1476-են, Սաղեմի հավաքման № 1657 Շարակնոցը՝ 1485-են, Մատենադարանի հավաքման № 1071 Մաշտոցը՝ 1494-են, № 4266 Ավետարանը՝ 1496-են, և № 6352 Ավետարանը՝ 1497-են): Կազմ՝ ինծի-հասած անկազմ. այժմ կազմված շագանակագույն կաշեպատ տախտակով: Վերակազմության ժամանակ 12 պարապ թուղթ դրած եմ սկիզբը, այն հույսով, որ օր մը պակասող համարարբառ կանոնները, մանրանկարներն ու Մատթեոսի կիսախորանը վերստին կարելի կըլլա ձեռագրին միացնել: Ինձմե առաջ վերակազմողը թերթեղերները ծաղկած է գունով և վերին մասի կոնակին քով թողած վեց տողանոց խաշոր նտարգրով հիշատակագրություն մը, որմե

կկարդացվի միայն՝ «Սբ. Աւետարանս»: Հան.՝ Այժմ բավարար, սակայն սկիզբը և վերջը կպակսի: Պար.՝ Չորս Աւետարաններ: Մանր. Գնած եմ նյութորք գորգավաճառ Հակոբ Պարոնյանե՛ ուրիշ ձեռագրաց հետ:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

96ա ...Ողորմեա ստացողի սուրբ Աւետարանիս՝ Շմառն բարեմիտ կրանաւորի...

143ա Համբարձմանն կարգա զսայ, և զանարժան գծողս՝ զՎերանէս, յիշեալ:

Մաղկողի

98բ (Մարկոսի մանրանկարին մեջ՝ գրակալ ձկան գլխուն տակ) Մաղկող սորա զՍտեփանոս եպիսկոպոս յիշեցէք ի Տէր:

98բ (Ստորին լուսանցքին) Ով եղբայրք, աղաչեմ զձեզ, որ անմեղադիր լինեք ծաղկիս, զի ժամանակս դառն էր, և ամենայն սէր ցամաքեալ էր, և ամենայն ինչ նուազեալ էր, և պարտութիւն էր պղտորեալ, և ամենայն աշխարհս խախտեալ կային տարակուսեալ: Եւ թուականն էր ԶԻԶ (1477):

204բ (Հովհաննու մանրանկարին ստորին լուսանցքին) ...Մաղկող սորա՝ Ստեփանոս եպիսկոպոս Յառընջեցի յիշեցէք ի Քրիստոս...

33

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1597 թ.)

Թերք՝ 307: Մեծ.՝  $9 \frac{3}{4} \times 7 \frac{1}{2} \times 3 (5 \times 6 \frac{1}{2})$ : Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ երկսյուն, բոլորգիր: Տող՝ 22: Մանր.՝ նկարներ, խորաններ, լուսանցազարդեր և զարդագրեր, առատ: Կազմ՝ խաչադրոշմ շաղանակազուն կաշեպատ տախտակ, ներսեն տպածո լաթով աստառված: Հան.՝ բավարար, տեղ-տեղ ցեցակերության փոքրիկ անցքեր: Հիմար ձեռք մը մանրանկարներուն բոլոր դեմքերը սև մելանով շրջագծած, բան մը, որ մեր ձեռագրաց մեջ երբեմն կը տեսնանք: Տնօրինական նկարներուն և խորաններուն ոմանք իրար փակված և բաժանման ատեն ներկը պոկված: Կազմին ստորին աջ անկյունը քիչ ինչ կոտրած և տախտակին հետ կաշին ալ կոտրված. կոնակը վերեն ու վարեն վնասված, Բ փեղկին արանքը ճաթած: Պար.՝ Չորս Ավետարաններ: Ման.՝ Գնված նյութ-Յորք Հակոբ Պարոնյանե՛ ուրիշ ձեռագրաց հետ:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

27ա Գրեցաւ, նկարեցաւ և կազմեցաւ ձեռամբ Զաքարի Աւանց[տ]յ, ի Ռ և ի ԽԶ (1597) թվին, յիշատակ պարոն Շաղաաքին: (Նման հիշատակություններ կան և ուրիշ թերթերու վրա):

160ա Զստացող սուրբ Աւետարանիս՝ զպարոն Շաղաւարն և զճնաւորն իւր՝ զԱղիւշիբէկն և զԳարանէն, և զկողակիցն իւր՝ զԳաստագուլ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք և ինձ մեղաւարտ զըծողիս Զաբարի Աւանցոյ և իմ ճնաւդացն՝ Տէր Յովանիսին և Ուլուխաթունին: (Վան նաև Զաբարա Ավանցու բեւեռած և ծածկագրութիւնները):

302բ Փառք... (Երկար, հանգավորյալ, որուն վերջը) Եւ գրեցաւ սա ի թվաբերութեանս հայոց Ռ և ԽԶ (1597) ամին, ի յերկիրս Վասպուրականի, ի գեաւդայրադարս որ կոչի Աւանց, ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորի Լուսաւորչին և Սուրբ Յովհաննէս Մկրտչին, ի հայրապետութեան տեառն Մելիսէք կաթողիկոսի, և մերոյ աթոռակալի սուրբ ուխտիս Վարագա՝ Ստեփաննոս փիլիսոփայ արքեպիսկոպոսի, և թագաւորութեան Խոնդրարին, որ պատերազմէր ընդ ֆոանգ ազգին, և տեղապահութեան Վանայ Մուգտաֆայ փաշին, որ է յոյժ խաղաղչարար... (ստացողը և հիշատակված ազգականները հիշելի վերջ) եղբար Սարգրսին և կողակց/ին՝ Թուրանաին, և որդոցն՝ Ղարիպչանին, Ամիրչանին, Միրիչանին, Ախիչանին և Գիլաֆին, դստերացն՝ Շաղաղին և Խէրիաթունին, Ղարիպչանին և կողակցին՝ Գուլաղին, և որդոցն՝ Սուլբանխոչին և Յովանիսին, և դստերն՝ Վարդխաթունին, Ղարիպչանի եղբորն՝ Ախիչանին և կողակցին՝ Մարգարտին և որդոցն՝ Սարգսին և Խղարին, Ղարիպչանի միւս եղբարն՝ Գիլաֆին, և փոխոցելոցն առ Քրիստոս՝ Միրիչանին և Ամիրչանին, ամէն:

Գարձեալ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք պարոն Շաղաւարին, և դստերացն՝ Թուրանղին, և կողակցին՝ Զիրաֆին, միւս դստեր՝ Հոփսիմին, և կողակցին՝ Աւետիսին, և միւս դստերն՝ Յամանին և կողակցին՝ Խաչատուրին, և միւս դստերն՝ Նաէֆին և կողակցին՝ պարոն Գորգին, և միւս դստերն՝ Մրուարին և կողակցին՝ Ղազարին, և միւս դստերացն՝ Երարին, և Շայումին, և փոխեցելոյն առ Քրիստոս՝ Բէկուն, և Շաղաւարի եղբոր՝ Մուրաղին, և Մուրաղի որդոցն՝ Աղշիբէկին, Ընկիբէկին, Ամիրբէկին, և Իսիրբէկին, Արայբէկին, Թումայբէկին, Յակոբին, և Աստուածատուրին, և դստ[ե]րացն՝ Գարիանին և Թուր[ե]լանղին: Գարձեալ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք ընէս Շաղաւարին, և հոգևոր հօր՝ Տէր Մխիթարին, և հոգևոր մար՝ Զանփաշին, և Տէր Մխիթարի եղբարցն՝ Մուրաղին և պարոն Գորգին, և Մուրաղի որդոցն՝ Աղաշանին, Կարապետին և Խերապետին, և պարոն Գորգի որդոցն՝ Միրիչանին, Տէր Մրխիթարին, և Մխլամին, և Ղրշոնց ամենայն...

Գարձեալ յիշեցէք զառաջի յիշեցեալսն զաստուածասէր տանուտէր զպարոն Շաղաւարն, որ ետ այլ բաժին Գ (3) ոսկի, և պղինձ մի խարիսի հացխանով, շուրջառ մի անդերձով, Ոսկիփոր մի, Մաշտոց մի, և զսուրբ Աւետարանս՝ յիշատակ բարի հոգոյ իւրոյ և ճնաւդաց իւրոց...

Եւ արդ, ես յամենայնի թըշառականս և անարժանս, զծողս, նրկարողս և և կազմողս սուրբ Աւետարանիս, զսուտ անուն Զաբարա Աւանցիս... և զճնաւդսն իմ՝ զՏէր Յովաննէս քահան[ա]յն, որ անմայր պահեաց զիս և զմայրն իմ՝ զՈւլուխաթուն, և զկենակիցն իմ՝ զՄահմուդխաթուն, և զդեռաբոյս որդին իմ՝ զԿարապետն և զդուստրն իմ՝ զԱման, և զեղբարն իմ՝ զԱղշիբէկն, և զկողակիցն՝ զՆուրաբն, որ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս, որ բազ[ո]ւմ անկամ արտասուօր գրէի զսուրբ Աւետարանս, և հօրեղբայրն իմ՝ զԽղարն, և զաշակերտրն իմ՝ զՏէր Մարտիրոսն և զԿիրակոս սարկօագն, որ աշխատեցան ի կոկել թղթիս: Յիշեցէք և զբոյրն իմ՝ զՆուրաբն, որ ի նորա



տուն գրեցի զսուրբ Աւետարանս, և զհոգևոր մայրն իմ՝ զԲնախառնէն, որ բազում երախտիք ունի ի վերայ ինձ...

Դարձեալ չիշեցէք... զՏէր Գրիգոր փիլիսոփայն, որ մականունն Ղարաղրգենց կոչի, որ եղև միշնորդ սուրբ Աւետարանիս...

Ման. Գրիշ նկարող, ծաղկող և կազմող Զաքար Ավանցի մեծահամբավ վաստակավոր մըն է, որուն մասին գրելու փորձ մը ըրած է Մեսրոպ եպս. 1921—1922-ին՝ իր «Զաքարա նկարչի ձեռագիրը» հոդվածով («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի») շատ անբավարար նյութերով, քանի որ իրեն միայն երկու ձեռագիր ծանոթ է և երրորդի մը համար միայն ակնարկութիւն կրնէ:

Զաքարիա Ավանցիի բազմաթիվ ձեռագիրներ հասած են մեր օրերը, որոնցմէ ինծի ծանոթ են.

- ա. Ավետարան, 1577 թ. (Լալայան, Յուցակ, № 287)
- բ. Ավետարան, 1594 թ. (Մատենադարան, № 5507)
- գ. Ավետարան, 1595 թ. (Մատենադարան, № 6503)
- դ. Ավետարան, 1597 թ. (Քյուրտյան հավաքածու, № 33)
- զ. Ավետարան, 1599 թ. (Անհայտ)
- է. Հատակոտոր, 1599 թ. (Բրիտ. թնգ., № 98)
- ը. Մաշտոց, 1599 թ. (1 թերթ իմ հավաքման մեջ)
- թ. Ավետարան, 1599—1600 թ. (Մատենադարան, № 5794)
- ժ. Ավետարան, 1600 թ. (Մատենադարան, № 2804)
- ժա. Ավետարան, 1601 թ. (Մատենադարան, № 10220)
- ժբ. Ավետարան, 1603 թ. (Մատենադարան, № 4101)
- ժգ. Մաշտոց, 1608 թ. (Փարիզի Ա.գ.գ. թնգ., № 59)
- ժդ. Ավետարան, 1614 թ. (Անհայտ)
- ժե. Ավետարան, անթվ. (էջմիածնի նոր հավաքածու, № 47)

Զաքարիա այս ձեռագիրներուն մեջ կամ իր աշակերտներուն գործակցած է, կամ հին ձեռագրեր վերանորոգած, կամ լոկ ծաղկած ու կազմած, կամ միայնակ՝ գրած, մանրանկարած ու կազմած, ինչպես իմ այս № 33 ձեռագիրն է:

† 34

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1428 p.)

Թերթ՝ 344: Մեծ.՝  $5 \frac{1}{4} \times 6 \frac{1}{2}$  ( $3 \frac{3}{4} \times 4 \frac{3}{4}$ ): Նյութ՝ տեղական փայլուն և դյուրաբեկ թուղթ: Գիր՝ երկայուն, բոլորգիր: Տող՝ 18: Մանր.՝ մանրանկար, խորան, լուսանցազարդ և զարդագիր: Մատթեոսի նկարը կը պակսի, մյուսները իրարու համանման, գունավոր, ծաղկունները հաջող: Կազմ՝ ինծի հասած կազմով, սակայն քայքայված. վերակազմել տված եմ՝ պահպանելով նախկին գրոշմազարդ կաշին ու մեղրագույն մետաքսյա կազմաստառը: Հան.՝ սկիզբը պակասավոր, վերջը խոնավութենէ փտած ու փշացած, տեղ-տեղ ցեցակեր, նախկին վերակազմութեանց ընթացքին եզրահատված մինչև լուսանցազարդերը: Պար.՝ Չորս Ավետարաններ: Ման.՝ Գնված գորգավաճառ Հակոբ Պա-

բոնյանն՝ ուրիշ ձեռագրաց հետ: Չեռագիրս Ազուլյաց Սբ. Քովմայի վանուց  
գրչագրերեն է՝ նկարագրված Մեսրոպ Վրդ. Մաքսուտյանն («Արարատ»,  
1911, էջ 567, № 23) և Երվանդ Լալայանն («Գողթն», № 10):

### Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

#### Գրչի

342բ Փառք... (բավական տեղ թուղթը մոխրացած. կօզտվիմ Մեսրոպ  
Մաքսուտյանն)... Յանգ ելեալ աւարտեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ յոգ-  
նամեղ և փցուն գրչէ Եղիայի, որ անուամբ կոչիմ արեղայ և ոչ գործով, աշ-  
խարհաւ յԱզվանից, և տեղեալ Գիգակեցի-Հաւրուղեցի: Գրեցաւ սուրբ մա-  
տեանս ի յանապատիս որ կոչի Ճգնաւորի Քար, բնդ հովանեալ Սուրբ Աս-  
տուածածնիս, որ է մատ ի քաղաքս Եղեգիս. ընկերակից մեր Տէր Սարգիս  
կուսակրան և ճգնազգաց...

Գարձեալ աղաչեմ զձեզ զծնօղս իմ բստ մարմնոյ զհայրն իմ՝ զՄեսաւր և  
զեղբայրն իմ՝ զՋէսաւր... զվարպետն իմ՝ զՏէր յԱրանաւ... ի թվիս հայոց  
ՊՂԷ (1428):

#### Հետագայի

1ա (Բոլորգրով) Շնորհարն Քրիստոսի ևս յԱզուլեցի Խարուն... ևս կո-  
ղակցի... Գրիգորի և Սահակին. ստացա զսուրբ գանձս և եզի ի Սուրբ Սիոնս,  
որ կոչի Սուրբ Յովաննէս՝ յիշատակ ինձ և որդոյն իմոյ Կարապետին և ծնօ-  
ղաց իմոց:

344ա (Անկանոն հին բոլորգրով, փշացած) Փառք... Ես Ընդստակէսս  
զնեցի զԱւետարանս հալալ... Ալեքսան... Մարտիրոսն... ամուսին... Շի-  
րազն...

344ա (Անվարժ նոսրգրով, փշացած)... Ես Տէր վլաս վկայ եմ, Ոհանէս  
արեղէս:

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1314 p.)

Թերթ՝ 22: Մեծ՝  $6 \times 9$  ( $4\frac{1}{4} \times 7\frac{1}{8}$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝  
երկսյուն, բոլորգիր: Տող՝ 20: Մանր՝ լուսանցազարդ և զարդագիր, բալա-  
զույն, միագիծ, հնադրոշմ, սովորական: Պահ՝ վերջը երկուրի ծալված երկա-  
թագիր Ավետարանի մը մագաղաթյա մեկ թերթը: Կազմ՝ կիսալաթ խավա-  
քարտ: Հան՝ շատ անխնամ պահված Ավետարանի մը վերջին 22 թերթերն  
են, հին թղթիկներով նորոգության ենթարկված, եզրահատումներն անկաճն  
և վատ: Չեռագրիս մեջ կա մասնաշափ մը կանոնատախտակի թերթեղերը՝  
կարմրագիծ խորանի մասնիկով: Պար՝ Հովհաննու Ավետարանեն մասը մը  
և հիշատակարանը: Մանր. Գնված Կ. Պոլիս, Եղվարդ Ալչանաքի:

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

## Գրչի

18բ (Երկար, հանգավորյալ հիշատակարան մը՝ «ԿԱՐԱՊԵՏԷ» տնկապետով, որուն խիստ կարևոր մասը կուտամ հոս)։

Ես՝ Կարապետ անարժան  
 Եւ փժուն գրիչ անպիտան,  
 Գրեցի մեղուցեալ ձեռաւք ի լման՝  
 Զլուսազարդ փառաւոր զանձս անմահական,  
 Ընդ հովանեաւ Սուրբ Քառասնիցն,  
 Որ է ի Յաղն որ կոչի Քակունկան,  
 Ի Յվականիս ԶԿԳ (1314) գրեցան,  
 Ի մայրաքաղաքն Եզնկան։  
 Զոր յայսմ ամի եղեն հերձուածք և շատ բան,  
 Ընդ ուղղափառ հաւատոցն քրիստոսայդաւան։  
 Տունկ ծաղկեալք հաւատովք որ անմահացան,  
 Յարիական ազգէն՝ կրանաւորք Գ (3) ընդրեցան,  
 Եւ մարմնոյ քաջութեամբ զմահ յանձինսրն կալան՝  
 Ի շար ծնրնդոցն իսմայելական։  
 Զոր հասան ի վերա զաւրաւք միաբան,  
 Սուսերաւք և բրաւք որդիք շարեացն որոտման,  
 Եւ շարեաց հարուածովք տանջեցին զանազան,  
 Եւ զանգամքն ի միմեանց ի բաց ընկալան։

(Ակնարկութիւնը Երզնկայի մեջ 1314 Յվականի մարտի 16-ին թուրքերու կողմէ նահատակված երեք ֆրանչեսքյան կրօնավորներու մասին է։ Հիշատակարանը կշարունակվի)։

Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղուցեալ և անպիտան գրչի Կարապետ իրիցու, ի Յվին ԶԿԳ (1314), ի հայրապետութեան հայոց Կոստանդնայ հերձուածողի, և յառաջնորդութեան մերոյ Տէր Սարգսի...

## Հետագայի

16բ (Բոլորգիր) Ի Յվին հայոց ԶԶԸ (1329) ստացա զսուրբ Աւետարանս, ևս մեղուցեալ ծառայս Աստուծոյ Շարեւս՝ յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, և զաւակաց և ազգականաց, որ կենա ի գեղիս ժամատեղն...

18ա (Նոսրանման բոլորգրով)... Ողորմեա ստացողի Աւետարանիս Շարեւին և Նորշահին, և որդեկաց նորա՝ Իվանէի, Ֆոանկշայի, Տաւնաղայի, Մուրաղի, Ամիրշայի, և գեոարոյս պատանեկացն՝ Սեթին և Յակոբին, հեղ և համեստ հարսներն՝ զԳուհարբաղքն, զԱւզոցն, զՄուլբան...

19բ (Խոշոր և անկանոն բոլորգրով) Ես Վարդանս ևտուի զյիշատակս ի Յոհաննես երեցս՝ ինձ և իմ կողակցին՝ Մամոցին և իմ [դ]ստերն՝ Շարեւին, և որդոյ իմոյ՝ Սիմեունի, և քեր իմոյ՝ Մաւեմ տիկնայ, և Մկրտչիս, և Սիմեոնիս, և Ապրկիս։

Տէր Ստեփանոսս վկայ էմ։ Ես Աւեսս վկայ էմ։ Ես Մողբես վկայ էմ։

19բ (Մանր բոլորգրով) Զնուսատ ոգի զՏէր Աբրահամ՝ զԷրուսաղէմա եպիսկոպոսն, յիշեցէք յաղաթս ձեր... զի հաւս հանդիպեցա զատկին և զսուրբ ուխդայտեղիին տեսայ:

(Այս Տեր Աբրահամը գուցե Մարցինն ըլլա, որ նվիրակութեամբ 1444-ին Գավրեթ և 1445-ին ալ Արղնի գտնված է):

36

Մ Ա Շ Տ Ո Յ

(ժէ դ.)

Թերթ՝ 168: Մեծ՝  $6 \times 8 \frac{1}{2} \times 1 \frac{1}{2}$  ( $3 \frac{1}{2} \times 5$ ): Նյութ՝ թուղթ: Գիր՝ միասյուն, բնտիր բոլորգիր: Տող՝ 19: Մանր՝ կիսախորան, լուսանցազարդ և զարդագիր, սովորական, բայց վարժ ձեռքով: Կազմ՝ անկազմ ինծի հասած, վերակազմել տված եմ կաշեպատ խավաքարտով իտալացի կազմարարի մը: Հան՝ սկզբեն և վերջեն պակասավոր. քանի մը թերթերու ստորին լուսանցքներու վրա կարմիր մատիտով անիմաստ գրություններ: Պար՝ Մաշտոց: Ծան՝ գնված Կ. Պոլիս:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Կնփաղոշմ

1ա (Ստորին լուսանցքին, հավկթածե, կենտրոնը՝ «1888», մնացյալը՝ անընթեռնելի):

37

Ա Ս Տ Ո Ի Ա Մ Ա Շ Ո Ի Ն Զ

(1638 ք.)

Թերթ՝ 556: Մեծ՝  $7 \frac{1}{2} \times 10 \times 4 \frac{1}{2}$  ( $5 \frac{1}{2} \times 7 \frac{1}{2}$ ): Նյութ՝ նուրբ մազաղաթ: Գիր՝ երկսյուն, մանր և բնտիր բոլորգիր: Տող՝ 45: Մանր՝ մանրանկար, խորան, լուսանցազարդ և զարդագիր, շրջագծված միայն բալագույն ներկով, բնտիր աշխատանք Զաքար Ավանցի կամ Լմնեցի վարպետ մանրանկարչի աշակերտ Հակոբ սարկավագ Զուղաչեցու, որ, դժբախտաբար, ստացողներու նյութական անկարողութեան պատճառով ավարտին չէ հասուցված և զունազարդումն ու ոսկեզօծումը չէ կատարված: Կազմ՝ ինծի հասած է անկազմ, աչժմ կաշեպատ խավաքարտով կազմված: Հան՝ բավարար, միայն տեղ-տեղ վերի արտաքին անկյան մոտ թանաքակեր և կարգ մը թերթերու անկյունները գալարված: Պար՝ Հին և Նոր Կտակարաններ ամբողջութեամբ, ունի և Եզրաս: Ծան՝ գնված Նյու-Յորք գորգավաճառ Հակոբ Պարույրյանի՝ ուրիշ ձեռագրաց հետ:

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

## Գրչի

562թ Ի թվին ՌԶէ (1638) գրեցաւ գիրքս այս: (Տող մը պարագ): Զմեղաւորս՝ Յակոբ սարկաւազս յիշեցէք ի մեղաց թողութիւն, և տէր Յիսուս Քրիստոս զձեր սխալանսն թողցէ, և որոց ամէն ասեալ:

Գրեցաւ յանրարի ժամանակ, յարինակէ սուրբ վարդապետին Գէորգեայ: Զժառանգողսդ աղաչեմ խնամար վաստակել ի սմա, զի ծանր ոտապանար գրեցի զսա, և որ խնամէ՝ ինքն խնամի յԱստուծոյ, ամէն:

## Հետագա ստացողի

267ա Յամի Ռ-երորդի Ռ-եր)որդի յիսներորդի և ի շորրորդի (1654) թուաշահութեան Արամեանս ազին, և հայրապետութեան գերամբարձ Աթոռոյն էջմիածնայ Տեան Փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի, և ի թագաւորութեան Պարսից Երկրորդ Շահ Ապասին, և յառաջնորդութեան գաւառիս Գողթնեաց տեանն խաչատրոյ արքեպիսկոպոսի և քաջ վարդապետի... Վարդան այր քրիստոսասէր և բարեպաշտ, որ էր գաւառաւ Գողթնացի և տեղեալ Ազուլեցի, որպէս սովորութիւն է վաճառականաց յամենայն տեղիս շրջել վասն շահուց և օգտակար վաճառաց... պատահեցաւ ի Շօշ քաղաք, որ է արքայանիստ Պարսից թագաւորութեանն, յորում վայրի և եզիտ զմեծ մարգարիտս գայս... զի վաճառէին. որ էր գրեալ ի բազում ամաց իրրն հնգետասանից և մնացեալ անկազմ և աներանգ՝ ի շրաւորութենէ ստացողացն: Եւ բորբոքեալ ի սէր և ի ցանկութիւն աստուածային մատենիս այս, որ ասի Աստուածաշունչ... յիշել ի Քրիստոս պապն՝ զԲունեարն, զԺնօղսն սորա՝ զհայրն զԹանդրիվէրմիշն և զմայրն՝ զԳուլխանտանն, և զինքն՝ զՎարդանն, և զկենակիցն իւր՝ զԲէկին, և զորդիսն իւր՝ զդեռարոյս և զնորահասակ մանուկն զԳրիգոր, որ և նա ևս յորդորեաց զհայր իւր՝ ստանալ զաստուածախնս տառս, քայց ոչ ժամանեաց տեսանել, զի զկնի միում ամի հանգեալ ի Քրիստոս ի Կոստանդնուպօլիս, նա[և] զԱստուածատուրն և զԱլէքսիանոսն, և զգոտերսն Վարդանին՝ զՀամինն և զԱրգիլիանն և զԱնքառամն... (կը տրվի ազգականաց անուններու երկար շարք մը): Գարձեալ մեք Թանդրիվէրմիշի որդիք՝ Վարդան և Պօղոս, հանգերձ ամենայն զարմովք մերովք, շնորհօքն Աստուծոյ ստացար զսուրբ մատեանս, որ ասի Աստուածաշունչ, և ընծայեցար սուրբ առաքելոյն Թումային, որ է աթոռ Գողթն գաւառի... Յիշատակարանիս Անդրէաս զժողի յիշել ընդ սոցին, աղաչեմ:

196ա (Բալագոյն բոլորգրով) ԶՎարդան այր քրիստոսասէր՝ ստացող սուրբ կտակիս, հանգերձ ծնողօք, և ամենայն ընտանեօք յիշեցէք, ով հանդիպողք: Թուին ՌՃԲ (1653):

38

Ճ Ա Շ Ո Յ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

(ԺԳ Գ.)

Թերք՝ 276: Մեծ՝  $6 \times 8 \frac{3}{4} \times 2 \frac{1}{2}$  ( $4 \frac{1}{4} \times 6 \frac{3}{8}$ ): Նյութ՝ թավշանման բնտիր մազաղաթ: Գիր՝ երկայուն, մաքուր բոլորգիր: Տող՝ 29: Մանր՝ կիսախո-

րան, լուսանցազարդ, զարդագիր՝ մարած շաղանակագույն մելանով շրջա-  
 գծված, սակայն գեղեցիկ ու նուրբ ոճով: Կազմ՝ սև կաշեպատ տախտակ, ժՌ՝  
 դարու վերակազմություն: Հան.՝ սկզբին պակասավոր, վերակազմության  
 ատեն եզրահաստված, թղթիկներով կոպտորեն վերանորոգված, վերջին շորս  
 թերթերը՝ մկնակեր: Պառ.՝ Սկիզբը՝ Ճաշոց, ապա նույն գրչությամբ՝ Գիրք  
 Գործոց Առաքելոց: Մանր.՝ Գնած եմ 11 ուրիշ ձեռագիրներու հետ 1949-ին,  
 Ֆրեզնո, տիկին Եսթեր Սիմոնյանի:

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

### Գրչի

746բ Զաստուածային շնորհաբն լի՝  
 Զստացողն այսմ մատենի,  
 Զորդին վեհին Կոստանդէի,  
 Զեղբայր Հեքմոյ քաջ արքայի,  
 ԶՏէր Յոհաննէս անուն բարի,  
 Նաև զբարունքն պանծալի,  
 Աստուածայնոց հետևողի,  
 Փրկչին մերոյ սուրբ և բարի:  
 Արդ, աղաչեմ զեղբարսդ յոգի,  
 Եւ պաղատիմ աղերսալի,  
 Երկրպագեմ սրբոցդ գնդի՝  
 Որք հանգիպիք այսմ տառի...

157բ (Դարձյալ հանգավոր հիշատակարան Հովհաննէս արքայեղբոր):

275բ (Շաղանակագույն գունաթափ մելանով). Զստացող սուրբ տառիս՝  
 զարթուն այցելուն զՅոհաննէս եպիսկոպոս արքայեղբայր, հանգերձ ծնողիւք  
 իւր, յիշեցէք ի Տէր, վայելող[ք]:

### Հետազայի

154 (Նոտրդիր) Յիշատակ է Ակրնցի Առաքել սարկաւազին հոգոյն՝ ի  
 դուն Սրբոյն Յովհաննու Կարապետին (Հավանաբար՝ Մշո) թվին ՌՃՀԹ  
 (1723)...

39

### Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

(1624 ք.)

Թերթ՝ 198: Մեծ.՝  $5 \frac{1}{4} \times 7 \frac{7}{8} \times 1 \frac{1}{2}$  ( $3 \frac{1}{4} \times 5 \frac{5}{8}$ ): Նյութ՝ տեղական թուղթ:  
 Գիր՝ միասյուն, վարժ նոտրդիր, համառոտագրյալ: Տող՝ 21: Կազմ՝ սկզբնա-  
 կան, դրոշմազարդ շաղանակագույն կաշեպատ տախտակ, թղթապահ մասով,  
 ներսին աստառված բամբակյա լաթով: Պահ.՝ սկիզբը երկու թերթ թուղթ,  
 տոմարագիտական: Հան.՝ շատ լավ, միայն վերջին երկու թերթ փրցված հան-  
 ված, հավանաբար գլխավոր հիշատակարանը: Պառ.՝ Բառզիրք, Աշխարհա-

ցույց, Պատմութիւն ներսիսի հայրապետի: Ծան.՝ Գնված նյութ-Յորք, պարսիկ հնավաճառն մը:

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

### Գրչի

96բ Տէր հանէ զմեզ ի դուրին,  
Յարքայութիւն հօրն վերին,  
Առաջնորդէ ի մաւտ գրախտին՝  
ԶՍիմոն սուտանուն երէց մեղօք իլին:  
Դու ասա՛ ամէն: Ասացի՛ եղև և եղիցի:

194ա Քրիստոս Աստուած, քո սուրբ և բնորեալ հայրապետին ներսիսի բարեխաւսութեամբն ողորմեա ինձ՝ մեղօք Տէր Սիմոնիս, որ գրեցի յիշատակ հոգոյ իմոյ: Դարձեալ յիշեցէք զհայրն իմ՝ հանգուցեալ առ Քրիստոս Աղազարն, և զմայր իմ՝ Բէկումն, հանգուցեալ առ Քրիստոս, եղբարքն իմ՝ Զինի, Աղաթրաբէն, Պարոնդաղն, Յովանն, և բվերքն իմ՝ Փառայսէրն, Ասաներքն, Խուրին, Նունիկն, Ընայրեկն: Դարձեալ յիշեցէք զպապն իմ՝ Աղայրաբէն, և կողակիցն իւր՝ Գուլարքն, և զորդիքն իւր՝ Աղազարն, Մանսուրն, և զգուստրն իւր՝ Խանրէկի, Նփիսմէրն: Դարձեալ յիշեցէք եղկելի գրող սորա զՏէր Սիմոնն և զկողակիցն իւր՝ Գուլգուլի, և զորդիքն իւր՝ Խաւշ[ա]յրաբէն, Գրիգորն, հանգուցեալ առ Քրիստոս՝ Խանփարվարն: Ով օր յիշի, յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուածոյ: Թվական ՌՀԳ (1624) գրեցաւ:

40

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՅ ԵՒ ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

(1605 p.)

Թերթ՝ 278: Մեծ.՝  $5 \frac{1}{2} \times 8 \times 3$  ( $3 \frac{1}{2} \times 5 \frac{3}{4}$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ միասյուն, բոլորգիր: Տող՝ 25 (Ա մասի), 19 (Բ մասի): Կազմ՝ դրոշմազարդ շազանակազույն կաշեպատ տախտակ, թխագույն մետաքսն լաթով աստառված, սկզբնական: Պահ.՝ սկիզբը մագաղաթյա երկաթագիր Ավետարանն առնված թերթ մը (արտաքին լուսանցամասը վերեն վար կտրված հանված), երկտակված և հարմարեցված ձեռագրիս, ետևը՝ լատիներեն մագաղաթյա հին ձեռագրն հանված ուրիշ թերթ մը՝ նորեն հարմարեցված: Հան.՝ սկզբն պակասավոր, 1—3 թերթերը մասամբ միջատակեր, 231—232 թերթերը կազմեն անշատ, ինչ-որ հեղուկե քանի մը թերթեր իրարու կպած և բաժանման ատեն գրչութիւնն եղծված. ձեռագրին մեջն ալ քանի մը թերթեր պատռված հանված: Կազմին կոնակը ճեղքված, թերթապահ կազմամասն ու երեք կաշեփոկերը պոկված: Պար.՝ Ա. Մեկնութիւն աղօթից և պահոց: Բ. ժամակարգութիւն: Ծան.՝ Գնված 1925-ին նյութ-Յորք գրավաճառ Գարբիել Գարբիլյանն՝ երկրորդ ձեռագրի մը հետ:

## Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

## Գրիգոր գրչի

190բ Զստացաւոյ գրոցս զՏէր Յովնանէս կաթողիկոսն, որ է պարծանք ամենայն ազգիս հայոց, և ետ գրել յիշատակ իւր ամենայն ննչեցելոցն, և իւր ծնա[ւ]ղացն. ամէն:

234բ Փառք... և ետ կարողութիւն տկար անձին իմոյ՝ գրել և աւարտել զսուրբ մատենագիրս, որ կոչի Մեկնիշ վասն աղաւթից և պահոց: Արդ գրեցաւ սա ի թուարեութեանս հայոց ի ՌՄԴ (1605), ի յերկիրն Կիլիկիոյ, որ կոչի Ատանայ, ի դուռն Սուրբ Աստուածածնին և Սուրբ Ստեփանոսի, և այլ սրբոցն որք աստ կան... Զստացող մատենագիրս ըզսրբազան և առաքինի գործով լցեալ... Տէր Յովնանէս կաթողիկոսն, որ է պարծանք ամենայն ազգիս հայոց, որ ետ գրել զսայ յիշատակ իւր և իւր ծնողաց... Գարձեալ յիշեցէք զգրծող սորա զԳրիգոր էրէցն..

## Բաղասար գրչի

275բ Փառք... Կարգ ժամայտեղացրն զեղեց[կա]գուն [յ]արմարեալ... աստուածա[յ]ին տառից զարդարողի՝ Ալիֆսանոս սարկաւագի, և որ ի կրթութիւն և յուսումն ջերմեռանդ և փափաքանաւ ի սրասու կայի, ի խնդրոյ որ եղև հարկ տեառն մերո[յ] հոգևորի և ան[յ]ախտ փիլիսոփայի, վերատեսուչ տանս Կիլիկիոյ, որ և Սիս [յ]որչորչի, տեառն Տէր Յովնանէս կաթողիկոսի՝ վասն գծայգրութեան այսմ տառիս, որ եղև իսկ ձեռամբ փրծուն գրչի Բաղասարի դպրի... Աղաչեմ [յ]իշել ի տէր զպատուական հոգևոր հայր իմ և զուսուցիչս իմ զԱլիֆսիանոս քաշ քարտուղարին, որ բազում աշխատելով զիս այսչափ շնորհի արժանի արար...

41

ՅԱՌԱՋԱԲԱՆՔ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ՊԱՐԶԱՏՈՄԱՐ

(1588 p.)

Թերք՝ 198: Մեծ՝  $6 \times 8 \times 1 \frac{3}{4}$  ( $4 \frac{1}{4} \times 6 \frac{1}{4}$ ): Նյութ՝ Պարզատոմարի մասը տեղական հաստ թուղթ, մնացյալը՝ եվրոպական, ջրանիշյալ: Գիր՝ միասյուն, նոտրգիր: Տող՝ 26—32: Կազմ՝ դրոշմազարդ շազանակագույն կաշեպատ տախտակ, ներսեն աստառված տպածո լաթով, ունի թերթապահ մաս, սակայն կաշեփոկերը կը պակսին: Հան՝ շատ լավ: Պար՝ Յառաջաբանք, Նախադրութիւնք, Պարզատոմար (կսկսի ՌԼԷ—1588 թվականով): Ման՝ Գնված 12 ուրիշ ձեռագրաց հետ 1949-ին տիկին Սիմոնյանե, Յրեզնո, Կալիֆորնիա:

42

ԼՈՒԾՄՈՒՆՔ ՆԱՐԵԿԱՅ

(ԺԳ Պ.)

Թերք՝ 118: Մեծ՝  $6 \times 8 \times 1$  ( $3 \frac{1}{8} \times 5 \frac{1}{8}$ ): Նյութ՝ ջրանիշյալ եվրոպական թուղթ: Գիր՝ երկսյուն, ոչ ընտիր բոլորգիր: Տող՝ 25: Կազմ՝ դրոշմազարդ,



շագանակագույն կաշեպատ տախտակ, ունի թերթապահ կազմամաս. Ա փեղկին կաշին ծակոտկեն, կերևա թե արծաթ դարդ ունեցած է. կաշեփոկերը պոկված են. կազմաստառի համար օգտագործված է թուղթ: Հան.՝ բավարար, սակայն տիտղոսաթերթը կը պակսի: Ձեռագիրս ունեցած է սկզբնամաս մը՝ 265 թերթ, որ այժմ չիք. առկա մասը կսկսի ՄԿԶ (266) թերթահամարով, որ նշանակված կերևա գրչեն. հավանաբար ժէ դարուն լուծմունքի մասը բաժանված է նարեկեն: Պար.՝ լուծմունք նարեկայ: Մանր.՝ Ձեռագիրս կերևա թե ժամանակին պատկաներ է Տրդատ վրդ. Պալյանի, որմե մատիտագիր վկայություն կա: Գնած հմ Կ. Պոլիս 1957-ին գրավաճառ Պետրոս նշանյանե:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Ստացողի

117ր Փառք... Արդ, ես մահտեսի եուսուֆի որդի հաճի Մուր[ա]տս առ[ի] զայս նարեկս... Աստուած ողորմի ասացէք կողակցին իմոյ մահտեսի Մալէկին հոգոյն...

...Ետու զայս նարեկի լուծմունքս յիշատակ Սուրբ Սարգիս եկեղեցոյ...

43

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

(Ժէ դ.)

Թերթ՝ 205: Մեծ.՝  $6 \times 8 \frac{1}{4} \times 1 \frac{1}{4}$  ( $4 \times 5 \frac{3}{4}$ ): Նյութ՝ տարբեր տեսակի ջրանիշյալ եվրոպական թուղթ: Գիր՝ բոլորգիր և նոտրգիր, զանազան գրչությամբ: Տող՝ 22—27: Մանր.՝ սկիզբը հատ մը վարժ գծված գունավոր կիսախորան: Պահ.՝ սկիզբը երկուքի ծալված մագաղաթ, երկսյուն ընտիր բոլորգիր գրչությամբ, վարի մասեն և լայնքեն պատուած փրցված: Նույնը նաև հաւր: Հան.՝ բավարար, սակայն սկզբեն մեկ-երկու հավանաբար պարապ թերթեր կտրված հանված: Պար.՝ Ջանազան նյութեր՝ լուծմունք, աշխարհագրություն, պատմություն: Ման.՝ Գնված Կ. Պոլիս, Թորոս Աղատյանե:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Հետագայի

92ա Յիշատակ եղաւ գիրքս այս ի Կեսարիոյ ժող[ո]վրդենէն, ի դուն Սուրբ Սարգիս եկեղեցոյն, թվին ՌՃԿԹ (1713) ամին: (Նույնը բանի մը տեղ կրկնված):

44

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ի

(Ժէ դ.)

Թերթ՝ 145: Մեծ.՝  $6 \times 8 \frac{3}{8} \times 1 \frac{1}{4}$  ( $3 \frac{1}{2} \times 5 \frac{1}{2}$ ): Նյութ՝ ջրանիշյալ եվրոպական թուղթ: Գիր՝ միասյուն, նոտրգիր: Տող՝ 22—26: Մանր.՝ կիսախորան

և լուսանցազարդ, երկգույն, սոսկորական: Կազմ՝ սկզբնական, գրոշմազարդ շագանակագույն կաշեպատ խավաքարտ, կոնակը ճաթած, որպես կազմաստան օգտագործված է երկսյուն խոշոր բոլորգրով գրված թղթյա ձեռագրի թերթամասեր: Հան.՝ բավարար, սակայն քանի մը թերթեր, ըստ երևույթին պարապ, կտրված հանված: Պար.՝ Երեմեայ Զէլէպի Քէօմիւրճեանի Պատմութիւնք Սապէթ հրեայի, Տիմօյ առնաւուտի, Փարէզ մանկան և Վենայի (Քէօմիւրճեանի փոփոխակ): Պատմութիւն Մովսիսի Խորենացույ (մինչև «Յաղագս մահուան Արտաշէսի»): Ման.՝ Գնված Կ. Պոլիս Թորոս Ազատյանի:

### Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

1ա (Մանր բոլորգրով). Թուին ՌՃ և ԻԹ (1680) ամին, մարտի ամսոյ ի ԺԵ (15)-ն եհաս տետրս ի Ստամպուլու ի յիս:

28ա (Ձեռագրին առաջին մասին գրչութեամբ, որ անտարակույս Քեոմյուրճյանինն է). Ողջութեամբ վայելես, ճանրմ Տէր Թումայ:

Մանր. Այս Տեր Թուման (վարդապետ), հավանաբար Քեոմյուրճյանի օրագրութեան մեջ հիշվածն է, 1658-ին իբր Պոլսո պատրիարք, և այլն: Տե՛ս Մեսրոպ արքեպս. նշանյանի հրատարակությունը, Երուսաղեմ, 1939, էջ 276—291:

45

### Խ Ո Ր Հ Ր Գ Ա Տ Ե Տ Ր

(Ժէ դ.)

Թերթ՝ 21: Մեծ.՝  $6 \frac{1}{4} \times 8 \frac{1}{4}$  ( $4 \times 6$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ միասյուն, կանոնավոր բոլորգիր: Տող՝ 21: Մանր.՝ գունավոր երկու կիսախորաններ, վարժ, սակայն՝ սովորական: Կազմ՝ ինծի հասած անկազմ. սև կաշեպատ խավաքարտով կազմել տված եմ: Հան.՝ սկզբի թերթին վերին լուսանցքը, գունավոր կիսախորանին վերին մասը հեղուկով արատավորված և փճացած: Պար.՝ Խորհրդատետր, սովորական: Ման.՝ Ինծի նվիրված 1937-ին ի նոր Ջուղա:

### Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Գրչի

13բ Ով սուրբ պատարագիչ, յիշեա ներսէս գրիչս:

21ա Փառք... Յիշատակ է սուրբ Խորհրդատետրս պարոն Քալանթար Բէկրաշ-բէկին...

46

### Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

(1607 p.)

Թերթ՝ 292: Մեծ.՝  $10 \frac{3}{4} \times 7 \frac{1}{4} \times 3$  ( $5 \times 7 \frac{1}{2}$ ): Նյութ՝ տեղական թուղթ: Գիր՝ երկսյուն, բոլորգիր: Տող՝ 21: Մանր.՝ մանրանկար, խորան, լուսանցա-

